Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1919
YEREVAN STATE UNIVERSITY

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Г. А. Петросян

ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С РОССИЕЙ (1918 -1920 гг.)

Ереван
Издательство ЕГУ
2011

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. Հ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ (1918 - 1920 թթ.)

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2011

ՀՏԴ 941(479.25):327
ԳՄԴ 63.3(2Հ)+66.4
Պ 505

Տպագրված է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ

Գրախոսներ ՀՀ ԱԳՆ փոխնախարար, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., արտակարգ և լիազոր դեսպան ***Ա. Ջ. Կիրակոսյան***
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. ***Է. Ա. Ջոհրաբյան***
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., արտակարգ և լիազոր դեսպան ***Վ. Ա. Բայբուրդյան***

Պետրոսյան Գ. Հ.
Պ 505 Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.) / Գ. Հ. Պետրոսյան.- ԵՊՀ.- Եր.: ԵՊՀ հրատ., 2011. 416 էջ

Գրքում հանգամանքն ներկայացվում և ամբողջացվում է Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության երկամյա հարաբերությունները՝ որպես նրա արտաքին քաղաքականության ու դիվանագիտության մի առանձին փուլ: Գիտականորեն լուսաբանվում է Ռուսաստանի հակամարտող պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների հաստատման գործընթացը, պատմական անհրաժեշտությունն ու պատճառները: Քննության են առնվում նաև այդ հարաբերությունների հաստատման դժվարությունները, քաղաքական և զաղափարական իրարամերժ մոտեցումները, որոնք պայմանավորված էին ինչպես պատմական բարդ ժամանակաշրջանով, այնպես էլ Ռուսաստանում և Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով:

Նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, դիվանագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանների համար: Կարող է օգտակար լինել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներին:

ՀՏԴ 941(479.25):327
ԳՄԴ 63.3(2Հ)+66.4

ISBN 978-5-8084-1387-0

© Գ.Հ. Պետրոսյան, 2011
© ԵՊՀ հրատ., 2011

Պետրոսյան Գեղամ Հարությունի

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան

Պրոֆ. Գ. Պետրոսյանը Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում վարում է մասնագիտական դասընթացներ: Հրատարակել է չորս մենագրություն և շուրջ չորս տասնյակ գիտական հոդված, որոնցում հայ պատմագրության մեջ առաջին անգամ քննել է 1918 – 1920 թթ. Ուկրաինայի, Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների պատմությունը: Դրանցից հիշատակության արժանի են հատկապես «Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918 – 1920 թթ.)» (Եր., 2002), «Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս – նոյեմբեր)» (Եր., 2004, 2010, Դոնի Ռոստով, 2005), «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 – 1920 թթ.)» (Եր., 2006) աշխատությունները:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց բազմադարյան տարեգրության մեջ իր ուրույն ու ծանրակշիռ տեղն ունի պետականության պատմությունը: Ինչպես հայ, այնպես էլ յուրաքանչյուր ժողովրդի կյանքում պետականության առկայությունը ազգի գոյատևման ու համակողմանի քաղաքակրթական զարգացման գլխավոր նախապայմանն է: Ի նկատի ունենալով ուշ միջնադարի և նոր դարաշրջանի փուլերը՝ որոշ ուսումնասիրողներ, հատկապես վերջին տարիներին՝ թուրք-ադրբեջանական պատմաբաններ, առ այսօր շարունակում են շրջանառել այն թյուր կարծիքը, թե հայ ժողովուրդը դարեր շարունակ պետականություն չի ունեցել: Մոռացության է տրվում կամ միտումնավոր շրջանցվում է այն իրողությունը, որ այդ ժամանակաշրջանում՝ 12-18-րդ դարերում, հայոց պետականությունը հանդես է եկել զանազան դրսևորումներով՝ իշխանությունների, մելիքությունների, սղնախների, կիսանկախ համայնքների տեսքով, պետականության գործառույթները յուրահատուկ ձևով իր վրա վերցնելու Հայաստանյայց առաքելական եկեղեցու ազգանվեր գործունեությամբ: Ուստի կարելի է վստահաբար ասել, որ համահայկական պետականության բացակայության պայմաններում իսկ պետականության անթեղված շղթան մշտապես եղել է, որն էլ ապահովել է ազգի շարունակականությունը մինչև նորագույն ժամանակներ:

Կեղծարարությունը ներառում է նաև հայոց նորագույն ժամանակաշրջանի սկիզբն ազդարարող 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության պատմությունը, որին այսօր

պետական մակարդակով լծվել են հատկապես ադրբեջանական քաղաքագետներն ու պատմաբանները: Վերջերս նրանց կողմից հրապարակ հանված մի շինծու ու զավեշտական պատմության համաձայն՝ 1918 թ. մայիսի վերջին՝ Անդրկովկասյան սեյմի լուծարումից հետո, երբ կյանքի են կոչվել երկրամասի անկախ երեք հանրապետությունները, Թիֆլիսում Հայոց ազգային խորհրդի անդամները սեյմի թուրք-թաթարական (ադրբեջանական) խմբակցությանը «խնդրել են»՝ իրենց հանձնել իբր ադրբեջանական Երևան քաղաքը՝ այսպես կոչված «Արևմտյան Ադրբեջանի» վաչաքաղաքական ու տնտեսական կենտրոնը: Եվ ադբեջանցիները «մեծահոգաբար» հայերին են զիջել «իրենց» քաղաքը: Շարունակելով անհեթեթության հասնող այս կեղծարարությունը՝ նույն հեղինակները կասածի տակ են առնում նաև Հայաստանի առաջին Հանրապետության լիարժեք պետականության իրողությունը, խեղաթյուրում նրա պատմության բազմաթիվ դրվագներ:

Քանի որ ամեն մի պետականության կարևորագույն ցուցիչներից է միջազգային ասպարեզում նրա ունեցած կարգավիճակը, այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների առկայությունը և այլն, ուստի կեղծարարությունն ընդգրկում է նաև Առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության ոլորտը: Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը, ինչպես նաև խնդրի ուսումնասիրվածության անբավարար մակարդակը՝ պատմաբան-միջազգայնագետ, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանը 1918-1920 թթ. հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն մի բնագավառին վերաբերող հերթական ծանրակշիռ աշխատությունն է դրել գիտական հասարակայնության սեղանին: Այն ներառում է Հայաստանի Հանրապետության և 1917 թ. հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում Ռուսաստանի

տարածքում ձևավորված պետական կազմավորումների փոխհարաբերություններին՝ խնդրի ամենալայն ու ամբողջական ընդգրկումով:

Մենագրության առաջին բաժնում աղբյուրագիտական ու տպագիր գրականության հարուստ հենքի վրա հետազոտողը ներկայացնում է Հայոց նորանկախ պետականության կայացման դժվարին ուղին: Նա ոչ միայն չի կրկնում բազմաթիվ ուսումնասիրողների այն թյուր մոտեցումը, թե հանրապետության ղեկավարությունն իր արտաքին քաղաքական դոկտրինի մեջ հավուր պատշաճի չի կարևորել Ռուսաստանի տարածքում ստեղծված կազմավորումների հետ հարաբերությունների հաստատման նշանակությունը, այլ, ընդհակառակը, արմատապես վերանայելով «քաղաքացիություն ստացած» այդ տեսակետը, փաստական հարուստ նյութի քննությամբ ապացուցում է, որ նույնիսկ 1918 թ., երբ թուրքերի կողմից ռազմակալված էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի մի զգալի հատվածը, իսկ Ռուսաստանի տարածքը տրոհված էր բազմաթիվ կազմավորումների՝ բռնկված քաղաքացիական կռիվներով ու աշխարհագրորեն լիովին կտրված Հայաստանից, Հովհաննես Քաջազնունու կառավարությունը հրամայական էր համարում Ռուսաստանի հետ հարաբերությունների հաստատումն ու ամրապնդումը, փորձում էր այդ բնագավառում հասնել հաջողությունների: Ուշագրավ է, որ Գ. Պետրոսյանը մատնանշում է այդ հացում հետազոտողների վրիպման պատճառը՝ 1918 և 1919-1920 թթ. Ռուսաստանում տիրող ռազմաքաղաքական իրադրութունների միջև առկա էական տարբերությունները նկատելու անկարողությունը:

Շրջանառություն հանված հարուստ արխիվային նյութից հետևում է, որ Հայաստանի ղեկավարությունը հիմնականում ճիշտ է պատկերացրել Ռուսատանում տիրող բարդ աշխար-

հաքաղաքական իրադրությունը, ձգտել է ներռուսաստանյան քաղաքական զարգացումների հարցում հնարավորինս պահպանել չեզոքություն և նույնիսկ այդ մասին 1919 թ. գարնանը պետական մակարդակով որոշում ընդունել: Աշխատության ամենամեծ արժանիքներից մեկն այն է, որ նյութի խոր և բազմակողմանի վերլուծության հիման վրա բացահայտվում է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև նրա շուրջ ինչպես տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում շատ արագ փոփոխվող իրադրության հետնախորքը: Բանն այն է, որ նման բարդ պայմաններում իսկ Հայաստանի արտաքին գերատեսչությունը, չունենալով անհրաժեշտ փորձ, կարողացել է որոշակի հարաբերություններ հաստատել արտաքին աշխարհի, այդ թվում՝ ռուսաստանյան կազմավորումների հետ, կամ գոնե քայլեր է կատարել վերջիններիս հետ դիվանագիտական ու տնտեսական կապեր ստեղծելու ուղղությամբ:

Ռուսաստանյան կազմավորումների, այդ թվում՝ Խորհրդային Ռուսաստանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու գործընթացը հաճախ ծախողվել է մի շարք պատճառներով: Դրանց մեջ, ինչպես հստակ նշում է հեղինակը, հատուկ տեղ է զբաղեցրել թե՛ Հայաստանում ապրող շուրջ 10 հազար ռուսների և թե՛ Ռուսաստանի տարբեր կազմավորումների կառավարական շրջաններում Հայաստանի և հայերի նկատմամբ բարոյահոգեբանական բարդույթի առկայությունը: Ռուսների մեծ մասը հոգեբանորեն չի կարողացել հաշտվել այն իրողության հետ, որ առաջին դեպքում՝ իրենք ապրելու են մի հանրապետության մեջ, որի բնակչությունը մի քանի տարի առաջ որպես ազգային փոքրամասնություն եղել է իրենց կայսրության կազմում, երկրորդ դեպքում՝ Ռուսաստանը ներկայացնող պետական կազմավորումները պիտի հարաբերվեն արդեն Հայոց ազգային անկախ պետակա-

նության հետ: Պատահական չէ, որ նույնիսկ Դենիկինի Կամավորական բանակը, որի վերաբերյալ հայ ուսումնասիրողների մի մասի շրջանում այն սխալ կարծիքն է ձևավորվել, թե ունեցել է ընդգծված հայաստանամետ դիրքորոշում, իրականում չի էլ ցանկացել ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը և վերջինիս օժանդակել է միայն մի նպատակով՝ տարածաշրջանում ռուսական գերիշխանությունը վերահաստատելու համար:

Աշխատության վերնագիրը թեև հուշում է, որ խնդիրը վերաբերում է հայ-ռուսական հարաբերություններին, սակայն իրականում այդ հիմնահարցը քննության է առնված ամբողջ տարածաշրջանային գործընթացների հոլովույթում: Օրինակ՝ Գ. Պետրոսյանը, փաստորեն, 1918-1920 թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը առաջին անգամ ներկայացնում է ոչ մեկուսի և ցույց տալիս, թե դրանք որքանով են շաղկապված ներռուսական, հայ-վրացական, Հայաստան-Արևմուտք, իսկ 1920 թ.՝ նաև Խորհրդային Ռուսաստան-Խորհրդային Ադրբեջան-քեմալական Թուրքիա հարաբերությունների բարդ թնջուկի հետ: Այդ տեսանկյունից խիստ հաջողված է մենագրության երկրորդ գլուխը:

Գ. Պետրոսյանը հանգամանորեն անդրադառնում է հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությանը, հայ-վրացական պատերազմում Կամավորական բանակի երկդիմի վերաբերմունքին, ՀՀ արտաքին կողմնորոշման փոփոխությանը՝ պայմանավորված պատերազմում հաղթանակած Համաձայնության երկրներից հնարավոր տարածքային ակնկալութիւններով: Խոսելով Փարիզի վեհաժողովում հայկական պատվիրակությունների առաջադրած ծրագրերի մասին՝ հեղինակը մատնանշում է, որ հայ գործիչների մի մասը Հայաստանի համար պահանջել է միայն իրատեսական սահմանն-

ը և ոչ բոլորն են հակված եղել շարունակելու «Մեծ Հայաստանի» արդարացի, բայց անիրագործելի պահանջը:

Միանգամայն նորույթ է պրոֆ. Գ. Պետրոսյանի աշխատության երրորդ գլուխը, որն ամբողջացնում է հետազոտողի կատարած նախորդ տարիների մեծ աշխատանքը՝ Հայաստանի Հանրապետության – Սիբիրի, Հեռավոր Արևելքի և Ռուսաստանի հարավի պետական կազմավորումների միջպետական հարաբերությունների լուսաբանման իմաստով:

Աշխատության գաղափարական ողնաշարը կազմում է այն կարևոր դրույթը, որ Հայոց նորագույն պատմության առաջին ու փառահեղ էջը կազմող 1918-1920 թթ. հանրապետության կենսագործունեության հիմքում, հակառակ ժամանակաշրջանի բարդ ու հակասական բնույթին, ընկած է եղել պետականության կայացման ու զարգացման հրամայականը, պետականություն, որը, իր բոլոր թեր ու դեմ կողմերով հանդերձ, հզոր ազդակ է հանդիսացել խորհրդային տարիներին ևս պետական մտածողության պահպանման և երրորդ նորանկախ հանրապետության հռչակման ու հզորացման համար:

Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

ԽՍՀՄ փլուզումը, խորհրդային ամբողջատիրության խորտակումը և Հայաստանի անկախության հռչակումը նոր խնդիրներ առաջադրեցին հայ պատմաբաններին: Ամբողջատիրական համակարգի վերացումով պատմական գիտությունն ու հատկապես հայագիտությունը ձերբազատվեցին գաղափարական կապանքներից, և հայ պատմաբանների համար լայն հնարավորություն ընձեռվեց պատմության լուսաբանումը քաղաքական ոլորտից տեղափոխել գիտական հարթություն, հայ ժողովրդի պատմությունը ներկայացնել առանց խեղաթյուրումների՝ ինչպես եղել է: Այս առումով հույժ արդիական է Հայաստանի առաջին Հանրապետության ամբողջական ու համակողմանի պատմության, մասնավորապես նրա միջազգային դրության և արտաքին քաղաքականության ու դիվանագիտության նորովի ներկայացնելը, քանի որ խորհրդային տարիներին ամենից ավելի այդ շրջանն է աղավաղումների ու կեղծիքի թիրախ դարձել: Չնայած Առաջին հանրապետության պատմության մասին գրվել են մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ, հրատարակվել են փաստաթղթեր և նյութեր, սակայն հետազոտողների տեսադաշտից դուրս են մնացել բազմաթիվ հիմնախնդիրներ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մի կարևոր բնագավառ՝ նրա հարաբերությունները Ռուսական նախկին կայսրության ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ:

Այդ շրջանով զբաղվող խորհրդային պատմաբանները փորձում էին հնարավորինս սևացնել Առաջին հանրապետության գործունեությունը և հիմնավորել նրա անխուսափելի անկումն ու խորհրդային կարգերի հաստատման անհրաժեշտությունը: Առաջին հանրապետությունը ներկայացվում էր որպես միջազգային իմպերիալիզմի գործակալ, իսկ Կամավորական բանակի հետ կապը դիտվում էր Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղված քայլ: Առաջին հանրապետության համար չափազանց դժվարին ու բարդ ռազմաքաղաքական դրությունը, նրա արտաքին քաղաքականության ու դիվանագիտության ճշմարիտ, անկողմնակալ պատմությունը ներկայացվել են խեղաթյուրված, միակողմանի ու ոչ անաչառ՝ պատմական գործընթացները խցկելով նախապես մշակված կաղապարների մեջ: Հայաստանի Հանրապետությունը ի դեմս դաշնակցականների հրամցվում էր որպես հակաժողովրդական, իմպերիալիզմի գործակալների, բախտախնդիրների ու հայ ժողովրդին ոխերիմ թշնամի պետություն, որն ի սկզբանե իբր դատապարտված էր կործանման: Անտեսվում էր այն պատմական իրողությունը, որ դարավոր մաքառումներից հետո հայ ժողովուրդը կերտում էր իր պետականությունը, որը, թշնամիներով շրջափակված, կենաց ու մահու կռիվ էր մղում՝ ձգտելով դուրս գալ ծանր կացությունից: Եթե խորհրդահայ պատմաբաններն անաչառ քննեին Առաջին հանրապետության կայացման գործընթացները, անպայմանորեն կնկատեին, որ այն Ռուսական նախկին կայսրության ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ կապեր ու հարաբերություններ էր հաստատում օգնության ակնկալիքով:

Անկախ Հայաստանի Հանրապետության համար ավելի քան կենսական նշանակություն ունեին հարաբերությունները հոկտեմբերյան հեղաշրջումից հետո երկփեղկված Ռուսաստանի հետ: Ավելին, դրանք անհրաժեշտ էին առաջին հերթին Թուրքիայի, Համաձայնության պետությունների, Ադրբեջանի ու Վրաստանի հետ քաղաքական բարդ իրավիճակով պայմանավորված: Քաղաքացիական արյունալի պատերազմ մղող երկու ուժերի հետ հարաբերությունների արդյունավետ տարբերակ և ուղիներ գտնելու հարցն ինքնին բարդ էր և ոչ միանշանակ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաջ գիտակցում էր, որ Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների գերագույն նպատակը Ռուսական կայսրության վերականգնումն էր մինչև Առաջին աշխարհամարտը եղած սահմաններում: Իսկ դա տրամագծորեն հակասում էր Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախության գաղափարին: Գեներալ Ա. Դենիկինը ուզում էր վերադառնալ Անդրկովկաս, իսկ Անգլիան ձգտում էր Ռուսաստանը արտամղել տարածաշրջանից:

Բանն այն է, որ գտնվելով հարևանների թշնամական շրջափակման մեջ ու անընդհատ ենթարկվելով նրանց զավթողական նկրտումներին՝ Հայաստանի Հանրապետությունը փորձում էր ամեն կերպ ճեղքել շրջափակումը և իր անվտանգության ապահովման համար Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելով՝ նրանցից ստանալ ռազմատնտեսական օգնություն: Կամավորական բանակի հետ կապը նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման կարևոր գործոն էր. այն անուղղակիորեն զսպող դեր էր կատարում հարևանների ոտնձգություններից: Բացի այդ, Ռուսաստանի հարավի և Սիբիրի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ կապերի ու հարաբերությունների հաստատման գործում կարևոր դեր է խաղացել անշուշտ այն իրողությունը, որ նշված տարածքներում ապաստան էին գտել մեծաթիվ հայ գաղթականներ, որոնք ստեղծել էին իրենց համայնքներն ու ազգային միությունները և հայցում էին ռու-

սական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը: Հայաստանի Հանրապետության իշխանությունները, հասկանալի է, մտահոգված էին մեր ժողովրդի այդ հատվածի ճակատագրով, որին կարևոր տեղ էր տրվում կառավարության արտաքին քաղաքական հարաբերություններում:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայ դատի գործնական լուծման խնդիր էր առաջացել: Հայաստանի Հանրապետության իշխանությունները վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքների և թուրքական ագրեսիայի պայմաններում ստիպված էին օգտագործել գեներալ Ա. Դենիկինի հակասությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ՝ կանխելու հարևանների՝ Հայաստանից տարածքներ շորթելու փորձերը:

Այս հիմնախնդրի վերաբերյալ մենք հրատարակել ենք մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ: ***Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների ամբողջական պատմությունը ներկայացնելու նպատակով տույն աշխատության մեջ, արխիվային նոր վավերագրեր և նյութեր շրջանառության մեջ դնելով, փորձել ենք ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հարաբերությունների շարադրանքի ընդհանուր համատեքստում լուսաբանել նաև առնչությունները խորհրդային Ռուսաստանի հետ:*** Արխիվային վավերագրերի և նյութերի առատությունը հնարավորություն է ընձեռել մեզ լուսաբանելու և ամբողջացնելու Ռուսաստանի հակամարտող պետական միավորումների հետ Հայաստանի Հանրապետության երկամյա հարաբերությունները՝ որպես նրա արտաքին քաղաքականության ու դիվանագիտության մի ինքնուրույն բնագավառ: Գիտականորեն լուսաբանվում է ոչ միայն Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների հաստատման գործընթացը, այլև նրա պատմական անհրաժեշտությունն ու պատճառները: Բացահայտվում են կարևոր նոր փաստեր: Համակողմանի վերլուծությամբ նորովի է մեկնաբանվում շատ խնդիրներ՝ մեկընդմիշտ մերժելով խորհրդահայ պատմագրության մեջ իշխող մի շարք ելակետային կանխադրույթներ և կարծրատիպեր:

Հետևաբար, Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները նրա կառավարության գործունեության կարևոր բաղկացուցիչ մասն էին, առանց որի ճիշտ լուսաբանման Առաջին հանրապետության պատմության քննությունը չի կարող ամբողջական լինել:

Խորհրդային պատմագրության մեջ իշխող էր նաև այն սխալ տեսակետը, թե Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը իբր Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություն հաստատելու փորձեր չի ձեռնարկել: Սակայն ճշմարտությունը միանգամայն այլ է: Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս-նոյեմբեր) Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություն հաստատելու հանրապետության դիվանագիտական ջանքերը հաջողություն չունեցան: Իսկ հանրապետության գոյության երկրորդ շրջանում (1918 թ. դեկտեմբեր – 1920 թ. ապրիլ) քաղաքական նոր պայմաններում Հայաստանի իշխանությունները ձեռնպահ մնացին Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելուց: Եթե Մեծ Բրիտանիան չէր հանդուրժում իր «բարեկամ» Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ Հայաստանի Հանրապետության բարեկամությունը, ապա իր պոտենցիալ թշնամու՝ Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու փորձերը կարող էին անկանխատեսելի հետևանքներ ունենալ նորանկախ երկրի համար:

Գոյություն ուներ նաև մեկ այլ կարևոր հանգամանք.

1918 թ. հոկտեմբերի 30-ին՝ Մուդրոսի զինադադարի ստորագրումից անմիջապես հետո, քեմալական Թուրքիան բարեկամական հարաբերությունների մեջ էր մտել Խորհրդային Ռուսաստանի հետ գաղտնի կամ բացահայտ դաշինքներով, որն առաջին հերթին ոտնահարում էր Հայաստանի և հայության շահերը: Խորհրդա-թուրքական մերձեցման փաստը Հայաստանի Հանրապետության կառավարությունում զգուշության և անվստահության մթնոլորտ էր առաջացրել Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ: Անշուշտ, խորհրդա-թուրքական մերձեցման պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, մեղմ ասած, բարյացակամ չէր:

Ժամանակին խորհրդային պատմագիտության մեջ իշխում էր նաև այն սխալ տեսակետը, թե իբր Հայաստանի Հանրապետությունը Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարող իմպերիալիստական ուժերից էր: Այդ տեսակետը հիմք չուներ, քանի որ Հայաստանի Հանրապետությունը երբեք չի պայքարել Խորհրդային Ռուսաստանի դեմ, թեև ուներ հակաբոլշևիկյան տրամադրվածություն:

Հայաստանի Հանրապետությունը կապեր ու հարաբերություններ հաստատեց ռուսական նախկին կայսրության ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ, սակայն ոչ այն նպատակով, որ միասնական ճակատով պայքարեն խորհրդային իշխանության դեմ: Ճիշտ է, Հայաստանի Հանրապետության քաղաքական ղեկավար ուժերի համար բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սակայն նրանք ձգտում էին Ռուսաստանի հետ բարեկամական, բնականոն հարաբերություններ հաստատել՝ անկախ նրա քաղաքական կառուցվածքից:

Ավելորդ է անգամ անդրադառնալ այն խնդրին, որ Հայաստանի Հանրապետությունը չի մասնակցել Խորհրդային

Ռուսաստանի դեմ մղվող պայքարին: Դեռ 1919 թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության խորհուրդը (խորհրդարանը) որոշում էր ընդունել պահպանել չեզոքություն՝ չմիջամտել ոչ բոլշևիկների և ոչ էլ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի միջև մղվող պայքարին[1]: Որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն այդպիսի դիրքորոշում ուներ Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, հաստատվում է բազմաթիվ փաստերով: Այսպես, օրինակ, Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Յասսիում (1918 թ. նոյեմբեր)[2] Ռուսաստանի հակաբոլշևիկյան ուժերի և Համաձայնության պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվեց խորհրդակցություն՝ խորհրդային իշխանության դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու նպատակով: Այդ խորհրդակցությանը հրավիրվել էր նաև Հայաստանի Հանրապետությունը, որը հրաժարվեց մասնակցելուց: Հրաժարվեց նաև մասնակցել Մարմարա ծովի՝ Իշխանաց կղզիներում (1919 թ. փետրվար)[3], Վարշավայում (1919 թ. դեկտեմբեր)[4] և Եկատերինոդարում (1918 թ. նոյեմբեր, 1919 թ. դեկտեմբեր) հրավիրված վեհաժողովներին, որովհետև օրակարգում քննարկվում էին բոլշևիզմի դեմ միասնական ճակատ ստեղծելու և միասնական Ռուսաստանի վերակերտման հարցերը:

Այս հիմնահարցին սույն աշխատանքում անդրադարձել ենք մանրամասնությամբ, քանի որ դրա ուսումնասիրությունն ու գիտական քննությունն ունեն ոչ միայն զուտ պատմագիտական, այլև գործնական ու արդիական կարևոր նշա-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.120, թ.117[8]: Արխիվային վավերագրերից այս և հետագա բոլոր մեջբերումները տրվում են առանց որևէ խմբագրական միջամտության:
[2] Տես նույն տեղը, գ. 73, մաս I, թ. 118, ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 199:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 80, գ. 193, մաս I, թ. 47, 50:
[4] Տես նույն տեղը, գ. 440, թ. 2, 105, ֆ. 276, ց. 1, գ. 196, թ. 121:

նակություն: Մարդկությունն իր առաջընթացի հարցերը լուծելիս գլխավորապես հաշվի է առնում պատմության քաղաքական դասերը: Մեր ներկա՝ Երրորդ հանրապետության կայացման գործընթացը պահանջում է անպայման հաշվի առնել Հայաստանի առաջին Հանրապետության պատմության դասերը, նրա փորձը, քանի որ դրանք ներկայիս արտաքին քաղաքական գործընթացների առումով ունեն շատ ընդհանրություններ: Հարևանների զավթողական, խիստ անբարյացակամ, թշնամական վերաբերմունքի և միջազգային անբարենպաստ պայմանների հետևանքով Առաջին հանրապետությունը կանգնեց իրոք դժվարին, գրեթե անելանելի խնդիրների առջև, որոնք Հայաստանի Հանրապետության իշխանություններից պահանջեցին վարել ճկուն և շրջահայաց արտաքին քաղաքականություն ու դիվանագիտություն: Ցավոք, մեր ներկա հանրապետությունն էլ է գործնականում գտնվում գրեթե նույն իրավիճակում: Հարևաններից երկուսը տնտեսապես շրջափակել են նրան՝ հանրապետությունում ստեղծելով սոցիալ-քաղաքական ծանր կացություն, ինչը նույնպես պահանջում է ձևավորել արտաքին քաղաքականության հստակ հայեցակարգ և վարել արտաքին ճկուն քաղաքականություն: Կասկածից վեր է, որ Առաջին հանրապետության արտաքին քաղաքականության ու դիվանագիտության պատմական փորձի գիտական սույն ուսումնասիրությունը գործնական ու կիրառական կարևոր նշանակություն ունի, կարող է օգտաշատ և ուսանելի լինել հանրապետության արդի արտաքին քաղաքականության հայեցակարգը մշակելիս:

Մերօրյա դեպքերն ու իրադարձությունները մեկ անգամ ևս հաստատում են, որ պատմությունը կարծես թե կրկնվում է: Հայաստանի նորանկախ հանրապետությունն այսօր գործ ունի նույն երկրների, հակառակորդների ու «բարեկամների»

հետ և դարձյալ օրակարգում են արտաքին քաղաքական, դիվանագիտական նույն դժվարություններն ու խնդիրները: Ըստ էության փոխվել է միայն ժամանակը:

Ժամանակագրական առումով հետազոտությունն ընդգրկում է շուրջ երկու տարվա պատմություն՝ 1918թ. հունիսից մինչև 1920թ. ապրիլը, այսինքն՝ Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումից մինչև Կամավորական բանակի պարտությունը:

Խորհրդային բանակի հաղթանակով և Անդրկովկաս մուտքով նոր ժամանակներ սկսվեցին այդ ժողովուրդների համար: Փակվեց Հայաստանի Հանրապետության պատմության կարևոր էջը: Գալիս էր պատմական նոր ժամանակաշրջան, որը պահանջում էր արտաքին քաղաքական նոր կողմնորոշում, նոր մոտեցումներ: Բնականաբար պահանջվում էր փոխել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական ուղղվածությունը, այսինքն՝ բանակցություններ սկսել Խորհրդային Ռուսաստանի հետ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ /1918 թ. հունիս - նոյեմբեր/

1. Հովհաննես Քաջազնունու կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական դրությունը

1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասյան Սեյմը հայտարարեց, որ Անդրկովկասն անջատվում է Ռուսաստանից և կազմում է անկախ պետություն: Նրա մեջ մտան Անդրկովկասի երեք ժողովուրդները՝ հայերը, վրացիները և թաթարները (ադրբեջանցիները): Մայիսի 26-ին գումարվեց Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստը: Այն ընդունեց Սեյմը լուծարելու վրաց մենշևիկյան խմբակցության առաջարկը: Նույն օրը՝ երեկոյան, վրացական ազգային խորհուրդը հռչակեց Վրաստանի անկախությունը: Մայիսի 27-ին Թիֆլիսում Սեյմի մահմեդական պատգամավորների արտակարգ նիստը որոշեց ստանձնել Ադրբեջանի կառավարումը: Հաջորդ օրը Ադրբեջանի ժամանակավոր ազգային խորհուրդը հռչակեց Ադրբեջանի անկախությունը: Անդրկովկասյան թաթարների կառավարող մարմինը որպես ժամանակավոր մայրաքաղաք ընտրեց Գյանջան (Գանձակ), քանի որ Բաքուն բոլշևիկների

ձեռքում էր՝ Ստեփան Շահումյանի* գլխավորությամբ:

Մայիսի 30-ին մամուլում հրապարակվեց Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի հայտարարությունը, որտեղ ազդարարվում է, որ խորհուրդը ստանձնում է հայկական գավառների միակ և գերագույն իշխանությունը (տեքստը կազմել էր Նիկոլ Աղբալյանը*):

Արևելյան Հայաստանում վերականգնվեց հայկական պետականությունը, ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը: Այն ծնունդ առավ ներքին ու արտաքին չափազանց ծանր պայմաններում: Նորաստեղծ հանրապետության առջև ծառացած ու անհապաղ լուծում պահանջող խնդիրները բազմաթիվ էին: Դրանք վերաբերում էին երկրի թե՛ ներքին կյանքին, թե՛ արտաքին քաղաքականությանը: Երկիրը անելանելի վիճակից դուրս բերելու համար անհրաժեշտ էր քաղաքական կամք, վիթխարի ջանքեր ու հետևողական աշխատանք:

Հայաստանի Առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին* 1918թ. հունիսին կազմել էր մի ծրագիր-հայտագիր, որում ներկայացնում էր իր գլխավորած ժամանակավոր կառավարության[1] քաղաքականու-

---

* Աստղանիշով անձնանունների վերաբերյալ տրվում են տեղեկություններ, որոնք զետեղված են գրքի վերջում՝ այբբենական կարգով:

[1] 1918 թ. հունիսի 7-ին Հայոց Ազգային (կենտրոնական) խորհուրդը Հայաստանի Հանրապետության վարչապետ ընտրեց Հովհաննես Քաջազնունուն: Նրան հանձնարարվեց ձևավորել կառավարության կազմը: Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը կուսակցական տասներկու անդամների թիվը եռապատկեց, ապա դրան ավելացնելով երկու հայ, վեց մահմեդական, մեկական ռուս և եզդի անկուսակցական պատգամավորներ (ընդամենը քառասունվեց)՝ կազմավորվեց ժամանակավոր օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Հայաստանի խորհրդի (խորհրդարան): Հուլիսի 24-ին Երևանում հրապարակվեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ ժամանակավոր կառավարության կազմը. վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան*, ներքին գործերի նախարար՝ Ա. Մանուկյան*, ֆինանսների նախարար՝ Խ. Կարծիկյան*, զինվորական նախարար՝ գեներալ Հ. Հախվերդյան*: Ա. Խատիսյանի բացակայության պատճառով արտաքին գործերի նախարարի պաշտոնը ժամանակավորապես վարելու էր վարչապետը: Արդարադատության նախարարությունը ժա-

թյան ուղղությունները: 1918 թ. օգոստոսի 1-ին Երևանում գումարվեց Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) անդրանիկ նիստը: Երկու օր անց խորհրդի նիստում վարչապետը ներկայացրեց ժամանակավոր կառավարության ծրագիրը: Նա իր ելույթում նշեց. «Բացառիկ պայմանների մեջ է գործի անցել իմ կազմած կառաւարութիւնը: Նա կոչուած է իրականացնելու գործադիր իշխանութիւնը մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակաւին դուրս չէ եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ոչ մի հենարան անցյալում, նա չի հաջորդում նախկին կառավարութեան՝ շարունակելու արդէն իր ընթացքի մեջ դրուած պետական աշխատանքը. նա նոյնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան՝ կարիքներին յարմարեցրած շարունակելու պատրաստի ապարատներ: Նա հարկադրված է սկսել ամէն բան սկզբից. ***անձեւ քարսի և ավերակների կոյտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին»***[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Հ. Քաջազնունին հանրապետության առջև ծառացած խնդիրները բաժանում էր երկու խմբի՝ ներքին և արտաքին: Վարչապետը բավական իրատեսորեն ներկայացնում է երկրի ներքին ծայրահեղ ծանր կացությունը, որից էլ բխելու էր իր արտաքին քաղաքականությունը:

Հ. Քաջազնունու հակիրճ բնութագրմամբ երկրում դրությունը հուսահատական էր: Ազգաբնակչության կեսից ավելին կազմում էին փախստականներ և գաղթականներ՝ անտուն, մերկ ու քաղցած:

Գյուղերը քանդված ու ավերված էին, գյուղատնտեսա-

մանակավորապես ղեկավարելու էր Խ. Կարճիկյանը: Տե՛ս «Հորիզոն», լրագիր, Թիֆլիս, 9 հունիսի 1918 թ., ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2:

[1] ***Բաբայան Ա.***, էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 15:

կան աշխատանքները՝ կազմալուծված: Հացի բացակայության և մյուս կենսամթերքների խիստ սակավության պատճառով գյուղացիները կերել էին իրենց սերմացուն, և հերթը հասել էր լծկան անասուններին: Տիրում էր սով բառի բուն իմաստով, որի հետևանքով մեծ տարածում էին ստացել տարափոխիկ հիվանդությունները, մասնավորապես՝ բծավոր տիֆը, իսկ դեղորյաք չկար, և դեղատները դատարկ էին:

Արտաքին աշխարհի հետ կապը կտրված էր, որովհետև միակ երկաթուղային գծին տիրել էին թուրքական զորքերը, ապրանքների ներմուծումը դադարել էր, որովհետև կտրված էր կապը թե՛ Ռուսաստանի, թե՛ Պարսկաստանի ու Եվրոպայի հետ: Այս պատճառով զգացվում էր ամենաանհրաժեշտ ապրանքների սուր պակաս: Երկրում տիրում էր կատարյալ քաոս և անիշխանություն: Պետք էր ամեն ինչ սկսել սկզբից, ավերակների վրա կառուցել նոր պետական շենք[1]: Նշենք, որ այդ ամենը հիմնականում թուրքերի ասպատակությունների հետևանքն էր:

1918 թ. դեկտեմբերի 7 -ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը* Թուրքիայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ֆ. Թախթաջյանին ուղղած գաղտնի նամակ-հրահանգում գրում էր. «Նրանք (թուրքերը- Գ.Պ.) տարել են բառիս բուն նշանակությամբ ամեն ինչ, լինի այդ ինչը պետական, հասարակական, թե մասնավոր: Նրանք տարել են ամբողջ հացը, անասունները, պատրաստի վառելիքը, պահեստների և խանութների ապրանքները, երկաթուղու սիմաֆորները, լապտերները, հեռագրաթելերը, շատ տեղերում հեռագրասյուները եւն եւն. մի խոսքով տարել են այն ամենը, ինչ որ որևէ արժեք ներկայացնում է մեր ժողովրդի կամ պետության համար:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 48 - 50:

4. Գաղթականների վիճակը ուղղակի հուսահատական է. նրանց մի մասը չի կարող վերադառնալ երկիր, որովհետև թուրքերը դեռ այնտեղ են, և նրանց սարսափը մեծ է. այդ գաղթականներն են Տաճկահայաստանցիք, Ղարսեցիք և էջմիածնի, Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի և Ախալքալաքի որոշ մասերից եկած ժողովուրդը: Գաղթականների մյուս մասը, որ կարողացել է վերադառնալ և վերադարձել է իր բնակավայրը, դատապարտված է սովամահ կամ ցրտահար լինելու, որովհետև ինչպես հիշատակել եմ վերևը, թուրքերը տարել են ապրուստի և վառելիքի բոլոր պաշարները և ավերել են նրանց բնակարանները:

5. Հաղորդակցութեան դժվարությունները Անդրկովկասի սահմաններում անօրինակ չափեր են ընդունել. Բագու գնալը մեզ համար սխրագործություն է համարվում. Գանձակ գնալ նույնպես չենք կարող առանց մեր կյանքը ռիսկի ենթարկելու: Ղարաբաղից կտրված ենք գրեթե մի տարուց ի վեր, Թիֆլիս գնալ-գալը կարելի է 5 - 6 ձևականություն կատարելու պայմանով, սակայն 3 - 4 շաբաթը հազիվ մի գնացք է գնում գալիս Թիֆլիս-Երևան: Հաղորդակցության այս դժվարությունները ուղղակի անհնարին կացություն են ստեղծում մեզ համար ոչ միայն տնտեսական գործառնությունների տեսակետից, այլև այն տեսակետից, որ գաղթականությունը և պատերազմական մեր գերիները չեն կարողանում օր առաջ իրենց տեղերը վերադառնալ:

6. Հայաստանի պարենավորման վիճակը սարսափելի է: Հաց չեն կարողանում ստանալ ոչ Վրաստանից և ոչ մանավանդ Ադրբեջանից, ուր հացի հսկայական պաշարներ կան, որովհետև վրացիք և ադրբեջանցիք թույլ չեն տալիս գնումներ կատարել և արտահանել: Հաց չենք կարողանում ստանալ և Հյուսիսային Կովկասից կամ Ուկրաինայից, ուր գնումներ կատարելու հնարավորություն կա, որովհետև նախ հաղորդակցությունն է խիստ դժվարին, երկրորդ ռուսական դրամներ դժվարությամբ ենք ձարում, իսկ մեր Անդրկովկասյան բոնաները այնտեղ չեն վերցնում և երրորդ վրացիք տրանզիտի մեծ դժվարություններ են հարուցանում»[1]:

Հանրապետության ներքաղաքական ու տնտեսական աղետալի վիճակը շարունակվեց մինչև տարվա վերջը. «Հայաստանը ամեն կողմից շրջապատված է թշնամիներով, և մենք բոլորովին կտրված ենք արտաքին աշխարհից, - գրում է Սիմոն Վրացյանը*:- Սովն ու համաճարակը, հիվանդությունները շարունակում են իշխել մեր երկրում. տկարները մեռնում են և ուժեղները տկարանում են մեռնելու համար: Եթե այսպես վեց ամիս էլ շարունակվի, Հայաստանի ժողովրդի մեծ մասը կկոտորվի»[2]: Աշխարհից կտրված, անօգնական և թշնամիներով շրջապատված Հայաստանը մի քանի ամսվա ընթացքում՝ մինչև հոկտեմբեր, սպառեց հացի իր աղքատիկ պաշարը: «Կառավարության հավաքած ցորենը սպառվեց, - գրում է բժիշկ Արտաշես Բաբայանը. - և սովը իր անողոք ճանկերը խրեց հայ գյուղացու կրծքին: Մեռան հազարներով, տասնյակ հազարներով»[3]:

1918 թվականից երկրի տարածքում մոլեգնում էր բծավոր տիֆի համաճարակը, որը մարդկային հազարավոր կյանքեր խլեց: Երևանում և էջմիածնում օրեր էին լինում, որ միայն մահացողների թիվը մի քանի հարյուրից անցնում էր[4]: Ծանր վիճակ էր տիրում նաև բանակում. «Զինվորական հիվանդանոցները բերնե բերան լիքն էին, և հիվանդապահ-

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 553, թ. 13-14, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 102-103; ***Զոհրաբյան Է.***, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր - 1920 թ. ապրիլ), Երևան, 2002, էջ13-14:

[2] ***Վրացյան Ս.***, Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962, էջ 274:

[3] ***Բաբայան Ա.***, էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959, էջ 19:

[4] Տե՛ս ***Զոհրաբյան Է.***, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000, էջ 117:

ներն ավելի շատ դիակներ կրելով էին զբաղվում, քան հիվանդներին խնամելով: Իսկ այն, ինչ կատարվում էր այդ ժամանակ Սարդարապատում, Ղամարլուում և Իգդիրի շրջանում և գաղթականական բարակներում՝ վեր է ամեն երևակայությունից: Հարյուրավոր դռներ այս շրջաններում ընդմիշտ փակ մնացին, որովհետև նրանց բոլոր բնակիչները մեռել էին: Մեռելների թիվը այնքան շատ էր և նրանց տերերն այնքան ուժասպառ, որ թաղման գործողություններն էլ չէին կարողանում կատարել: Դիակները օրերով անթաղ մնալով նեխում էին և նոր համաճարակների աղետ պատրաստում: Սովահար շրջաններում կենդանի, շուն, կատու չմնաց, և մարդիկ ձեռնամերձ եղան անասունների լեշերին և մինչև իսկ մարդկային դիակներին[1]», - գրում է Արշակ Ջամալյանը: Մինչև 1919 թ. ամառը, ըստ ներքին գործերի նախարարության տվյալների, Հայաստանի Հանրապետությունը բծավոր տիֆի համաճարակի և սովի պատճառով կորցրեց շուրջ 192 հազար մարդկային կյանք[2]:

Հասկանալի է, թե այս ամենի հետևանքով ինչպիսի ծանր բարոյահոգեբանական մթնոլորտ էր տիրում երկրում: Ներքին պառակտվածությունը որդի պես կրծում էր ազգի միասնական ոգին, թուլացնում դիմադրողականությունը, զրկում հանուն պետական ընդհանուր շահի դատելու կարողությունից: Նման պայմաններում չափազանց դժվար էր պետականության կայացումը:

Դարեր շարունակ պետականությունից զրկված հայ ժողովուրդը հնարավորություն էր ստացել վերակերտելու իր անկախությունը, սակայն հանրապետության յուրաքանչյուր հատված ուներ զանազան տեղական խմբավորումներ,

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 72:
[2] Տե՛ս նույն տեղը:

որոնք բոլոր խնդիրներին մոտենում էին հոգուտ իրենց և սեփական շահը շարունակ առաջին գիծ մղում. «Այս բոլոր Երեւանցիները, Վանեցիները, Սասունցիները, Ղարաբաղցիները, Շատախցիները, Նուխեցիները, Արէշցիները եւն. եւն մի այնպիսի սումբուր էին առաջացնում մեր պետական-հասարակական գործերում, որ դժուար է նոյնիսկ պատկերացնել, - գրում է Արշակ Ջամալյանը: – Երևանցիք դժգոհ էին Հայաստանի ղեկավարներից, որոնք բոլորն էլ դրսեցիներ լինելով՝ գործեր են կատարում իրենց քաղաքում՝ առանց տեղացիների պատշաճ մասնակցութեան: Այդ պատճառով էլ նրանք խռոված երեխաների պէս կողմնակի դիտողի դեր էին կատարում Հայաստանի իրադարձութիւնների մեջ: Վանեցիք կարծում էին, թէ կառավարութիւնը բոլոր խնդիրներից վեր պիտի դասի «Վանայ քաղաքի» եւ շրջանի վերագրաւումը, որպէսզի գաղթական ժողովուրդը ազատուի իր զրկալից կեանքից: Ղարաբաղցիք ընդհակառակը պնդում էին, որ առաջին հերթին Ղարաբաղի ազատագրութիւնը պիտի լինի կառավարութեան հոգածութեան խնդիրը, որովհետև Ղարաբաղը Հայաստանի ողնաշարն է հանդիսանում:

Սասունցիք մի ուրոյն աշիրէթի պէս ապրում էին իրենց համար, չէին թոյլ տալիս, որ որեւէ մէկը իրենց ներքին գործերին միջամտի, ինչպես որ իրենք էլ չէին միջամտում ուրիշի գործերին, և կառավարական ոչ մի կարգադրութիւն իրենց համար պարտադիր չէին համարում, մինչև որ այդ կարգադրութիւնը չգար իրենց աչքում աշիրաթապետի հանգամանք առած «**Ռուբէն Փաշայի***» անունով: Արէշցիք չէին կարողանում հասկանալ, թե Հայաստանի կառավարութիւնը ինչպես կարող է որևէ այլ գործով զբաղուել, երբ նա դեռ չի սպանել վերջին թուրքին մեր երկրում: Չէ՞ որ այդ թուրքերը կամ նրանց ազգակիցները ոչնչացրել էին Արէշի և Նուխու 40 000 հայ ժողովուրդը: Եւ այդ պատճառով էլ, այն, ինչ որ կառավա-

րութիւնը չէր անում, նրանք իրենք էին ուզում անել ...

Այսպէս և մնացած բոլոր տեղացիները: Բոլորն էլ իրենց առանձին ակնկալութիւններն ունէին Հայաստանի կառավարութիւնից եւ շատ դէպքերում իրենց պահաջների բաւարարումով էին պայմանաւորում այդ կառավարութեանը տալիք օգնութիւնը:

Էլ չեմ խոսում առանձին անհատների կամ փոքրիկ խմբակների մասին, որոնք Ռուսաստանից, Եւրոպայից, Ամերիկայից, Պոլսից, Թիֆլիսից, Բագուից մեծ մասամբ հարկադրաբար գալով մեր երկիրը՝ բերել էին իրենց հետ բազմաթիւ ծրագիրներ, խորհուրդներ, քննադատութիւններ: Սրանցից ամէն մէկը իր բաժին բազմազանութիւնն էր մտցնում մեր իրականութեան մեջ՝ ցանկանալով Հայաստանի գործերը ձեւել եւ կարել համաձայն իր տեսածի ու լսածի: Չեմ խօսում նաև արտասահմանի հայութեան պէս-պէս վերաբերմունքների մասին դէպի Հանրապետությունն ու նրա գործերը, որոնք, ի հարկէ, առանց ազդեցութեան չէին մնում մեր պետական շինարարութեան համար»[1]:

Ահա թե որքան ճշմարիտ է ներկայացնում հանրապետությունում իշխող բարոյահոգեբանական մթնոլորտը Ա. Ջամալյանը:

Դրությունն ավելի էր բարդանում այն առումով, որ հանրապետության ազգաբնակչության մոտ 30%-ը մահմեդական էր, որոնք մշտապես խոչընդոտներ էին հարուցում և սպառնալիք էին նորակազմ պետության գոյության համար: Ինչպես վկայում է Հ. Քաջազունին. «Հայաստանի մահմեդական ազգաբնակչութիւնը, խրախուսւած Թիւրքիայի ու Ադրբեյջանի կողմից, հակապետական ընթացք է բռնած

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 70 - 71:

եղել»[1]: Հայաստանի «...մահմեդական ազգաբնակչութեան մեծամասնութիւնը ե՛ւ դրսի թելադրանքների ե՛ւ ներքին տրամադրութիւնների ազդեցութեամբ՝ բացարձակապէս չէր ճանաչում մեր իշխանութիւնը եւ չէր ուզում որեւէ գործ ունենալ պետութեան հետ,- գրում է Ա. Ջամալյանը: -Իսկ փոքրամասնութիւնը, որ տեղ տեղ, իր ուժի տկարութեան պատճառով չէր կարող բացարձակապէս դէմ գնալ մեր իշխանութեանը՝ թէեւ երեւոյթապես ճանաչում էր նրան, բայց որեւէ ձեւով աջակից եւ նեցուկ լինել նրան չէր կամենում»[2]: Ավելին, ոչ միայն չէին ճանաչում հայոց իշխանությունը, այլև զինված գործողությունների էին դիմում:

Հայաստանի Հանրապետությունում ռուսները թեև քանակով քիչ էին՝ մոտ 10 հազար, սակայն ազդեցիկ ուժ էին թե՛ պետական մարմիններում և թե՛ բանակում: Նրանք բաժանված էին երկու խմբի՝ գյուղացիներ, որոնք մշտական բնակություն էին հաստատել Հայաստանում ցարական կառավարության վերաբնակեցման քաղաքականության հետևանքով, և պետական պաշտոնյաներ ու ծառայողներ՝ գլխավորապես ռազմական, դատական և հաղորդատվության բնագավառներում: Սակավ բացառությամբ թե՛ առաջինները և թե՛ երկրորդները, որոնք ռուսական տիրապետության ժամանակ արտոնյալ դիրք ունեին Հայաստանում, «շատ վատ էին տրամադրուած մեր պետականութեան հանդէպ: Անկախ այն բանից, որ նրանք հոգեբանօրէն չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ ռուսի երէկուայ հպատակը այսօր տէր ու տիրական է դարձել իր երկրում՝ նրանց դիւրը չէր գալիս մեր պետութեան ձգտումը՝ հաւասարեցնել հայ գիւղա-

[1] *Քաջազունի Յուլի.*, Հ. 3. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923, էջ 36:
[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 69:

ցու եւ ռուս գիւղացու վիճակը հողաբաժանման խնդրում և հայոց լեզուն պետական լեզու դարձնել հանրային բոլոր գործերում: Առաջինը դիւր չէր գալիս ռուս գիւղացիներին, որովհետեւ խախտում էր նրանց առանձնաշնորհեալ դիրքը, իսկ երկրորդը դիւր չէր գալիս մասնաւորապես ռուս պաշտօնեաներին, որովհետև դժուարացնում էր նրանց պաշտօնավարութիւնը Հայաստանում: Այսպիսով՝ յանձին ռուս ազգաբնակչութեան՝ ընդհանուր առմամբ մենք ունէինք մեր պետականութեանը առնուազն անբարեացակամ մի տարր»[1]: Կարծում ենք՝ հարկ չկա փաստեր բերելու, որ անկախացման առաջին ամիսներին երկրում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը նույնպես իր քայքայիչ ու ծանր կնիքը դրեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական գործունեության վրա:

Երկիրը ստեղծված ծանրագույն կացությունից դուրս բերելու վճռական հրամայականը նոր ձևավորվող պետական համակարգի արդյունավետ գործունեությունն էր, սակայն լարված էին հարաբերությունները. դեռևս բացակայում էր պետական համակարգի տարբեր թևերի ներդաշնակ, փոխկապակցված աշխատանքը. տարաձայնություններ կային օրենսդիր մարմնի՝ Հայաստանի խորհրդի (խորհրդարան), գործադիր մարմնի՝ կառավարության և գերակա քաղաքական ուժի՝ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության միջև:

Այդ կապակցությամբ Հանրապետության վարչապետ Հ. Քաջազնունին հետագայում գրում է. «Գործնականօրէն՝ մեր կուսակցութիւնը ձգտում էր իրան ենթարկել, իր հսկողութեան տակ առնել թե՛ օրենսդիր մարմինը, թե՛ կառավարութիւնը:

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 68:

Իշխանութեան անհանդուրժելի երկվութիւն էր առաջ եկել. հրապարակում՝ Խորհրդարանն ու իր կառավարութիւնը, ստուերի մեջ՝ կուսակցութիւնն ու իր օրգանները:

Հասկանալի է, որ այդ երկու կարգի իշխանութիւնները՝ պաշտօնականն ու անպաշտօնը, կարող էին միայն խանգարել ու կաշկանդել մեկը միւսին. ձեւական պահանջները թոյլ չէին տալիս, որ կուսակցութիւնը ազատ ու արագօրեն շարժուի, իր կամքը լրիւ արտահայտի, իսկ կուսակցութեան միջամտիւնը թոյլ չէր տալիս, որ կառավարութիւնը իր գիտցածն անի, իր գիծը տանի»[1]:

Ըստ երևույթին նման վիճակն անխուսափելի էր. ժողովրդավարական քաղաքական-պետական համակարգի ձևավորումը դյուրին խնդիր չէր: Վարչապետը ճիշտ էր պատկերացնում դրա լուծումը. իշխանության գլուխ անցած կուսակցությունը չպետք է մենիշխանություն հաստատի, այլ պետք է ասպարեզը թողնի խորհրդարանին և կառավարությանը:

Սակայն Հ. Քաջազնունուն չհաջողվեց իրականացնել իր տեսակետը և հաղթահարել կուսակցության ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում: Հետևանքը եղավ այն, որ նրան մեկուսացրին պետական կառավարման գործընթացից: Այդ առիթով Ռուբեն Տեր Մինասյանը գրում է. «Քաջազնունու ...բացակայությունը- ըստ էութեան հեռացումը – կը նշանակէր դաշնակցութեան ազդեցութեան ուժեղացումը»[2]: Ավելին, նա հեռացվեց անգամ երկրից. 1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի խորհուրդը ընդունեց օրենք՝ մինիստր-նախագահ Հ. Քաջազնունուն Եվրոպա և Ամերիկա գործուղելու մասին՝ Հայաստանի Հանրապետությանը հաց,

[1] ***Քաջազնունի Յուվ.***, Հ. 3. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 32, տե՛ս նաև ***Գալոյան Գ.***, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 37:

[2] ***Ռուբէն***, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, Թեհրան, 1982, էջ 278:

պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ հայթայթելու համար[1]: Սակայն անգլիական հրամանատարության կողմից մուտքի արտոնությունը միտումնավոր ձգձգելու պատճառով Հ. Քաջազնունին կարողացավ Ամերիկա մեկնել միայն 1919 թ. մայիսի 29 -ին:

Հանրապետությունում ստեղծված ներքին և արտաքին քաղաքական բարդ իրադրությունը ժողովրդի մեծամասնության շրջանում անվստահության մթնոլորտ էր ձևավորել անկախ Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Արևելահայերի մեծ մասի համար անկախությունը անհասկանալի, արհամարհելի և անբովանդակ խոսք էր. «Ռուսահայ գյուղացին և քաղքենի մանր բուրժուան, - գրում է Ա. Ջամալյանը, - որոնք վերջին տարիների վերիվայրումներից շատ էին տուժել եւ տնտեսապես ծանր վիճակի մեջ էին գտնուում՝ երազում էին Ռուսաստանի վերադարձի մասին, որ իր հետ պիտի բերեր էժան հաց, շաքար, կերպասեղեն եւ կեանքը նորից դարձներ այնքան դիւրալի, ինչպես առաջ...»[2]: Գրիգոր Չալխուշյանի* հավաստմամբ՝ անկախացման առաջին ամիսներին Հայաստանում ոչ ոք չէր հավատում, որ անկախությունը մնայուն է: Ժամանակի հարց էր թվում նրա գոյությունը, որովհետև պետությունը խարխուլ էր: Արևելահայերը հավատացած էին, որ վերջիվերջո ռուսը պիտի գա և տիրի իրենց նահանգին, իսկ արևմտահայերի համար Հայաստանը Անատոլիան էր[3]: Հայաստանի խորհրդի առանձին անդամներ նույնիսկ չէին ընդունում անկախ Հայաստանի գոյությունը, պահանջում էին երկրի վերամիավորումը Ռուսաստանին: Օրինակ՝ 1918 թ. օգոստոսի 6 -ին Հայաստանի խորհրդի չորրորդ նիստում պատգամավոր Ս. Մամիկոնյանը*, դիմելով խորհրդարանականներին, հարցնում է. «Արդեո՞ք հենց Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը ինքնին մի կատաստրոֆա չէ»[1]: Դեմ արտահայտվելով երկրի անկախությանը՝ Ս. Մամիկոնյանը պահանջում է «վերականգնել միությունը Ռուսաստանի հետ»[2]:

Կարծում ենք՝ պատահական չէր, որ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում Հայաստանի խորհուրդը և կառավարությունը նպատակահարմար չհամարեցին պաշտոնապես ընդունել երկրի անկախության հռչակագիրը, իսկ դա, ըստ Ս.Վրացյանի, նաև առիթ տվեց «մտածելու մեր կասկածոտ հարեւաններին.- եւ ոչ միայն հարեւաններին (նկատի ուներ նաև Ռուսաստանին- Գ.Պ.), որ հայերը կողմնակից չեն անկախութեան»[3]: Բնականաբար, հանրապետության արտաքին անկայուն, անորոշ, բարդ վիճակն էլ իր բացասական ազդեցությունը ունեցավ երկրի ներքին կյանքի վրա՝ այն ավելի ծանրացնելով:

* * *

Ինչպես հայտնի է, ցանկացած պետության արտաքին քաղաքականություն նրա ներքին քաղաքականության շարունակությունն է, ներքին կացության արտացոլումը և կոչված է լուծելու իր առջև ծառացած խնդիրները, միջազգային նպաստավոր պայմանները օգտագործելու ի շահ իր երկրի: Այս առիթով Հ. Քաջազնունին նշում էր. «...*Ես կիետևեմ մի գերակա սկզբունքի՝ հաստատել բարիդրացիական հարա-*

[1] Տե՛ս *Պետրոսյան Գ.*, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), Երևան, 2004, էջ 16:
[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 69:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 26:

[1] «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, սեպտեմբեր - հոկտեմբեր, էջ 98:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 80:
[3] *Վրացյան Ս.*, Խարխափումներ Յ.Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գրքի առթիվ, Պոսթըն, 1924, էջ 64:

բերություններ հարևան պետությունների հետ, բոլոր հնարավոր միջոցներով խուսափելով նրանց հետ ընդհարումից: Դա թելադրված է այն հանգամանքով, որ մեր ժողովրդին, մեր երկրին անհրաժեշտ է հանգիստ, անհրաժեշտ է խաղաղություն, թեկուզ և անկայուն: Մենք հյուծված ենք, ուժասպառ և ի վերջո կազմալույծ: Մենք ընդունակ չենք ուժերի հետագա լարման, մենք չենք դիմանա նոր փորձությունների: Արտաքին իրավիճակի ցանկացած նոր բարդացում սպառնում է մեզ անխուսափելի և վերջնական կործանմամբ: Մենք ջախջախված, պարտված կողմ ենք: Մենք դա պետք է հստակ գիտակցենք, միշտ հիշենք և քաջություն ունենանք համապատասխան եզրակացություններ անելու:

Այս պահին մենք կարող ենք ունենալ մեկ նպատակ՝ փրկել հայ ժողովրդի բեկորները և հերոսական փորձ անել դեռևս մեր ձեռքին մնացած փոքր տարածքի վրա պետություն հիմնել:

Այս գիտակցությունը պետք է դառնա մեր ներկայիս արտաքին քաղաքականության անկյունաքարը»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Իսկապես, հայ ժողովրդի այս փրկված հատվածը գերմարդկային ճիգերով փորձում էր ոտքի կանգնել, իրեն բաժին ընկած այդ փոքր տարածքի վրա պետություն հիմնել: Իսկ դրա համար նրան օդի պես անհրաժեշտ էր խաղաղություն, այլապես չէր դիմանա նոր փորձություններին, որ սպասվում էին հարևան պետություններից, որոնք խիստ անբարյացակամ ու թշնամական վերաբերմունք էին դրսևորում հայ ժողովրդի՝ օրհասական վիճակում գտնվող այս հատվածի նկատմամբ: Ուրեմն նորաստեղծ հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն էր, որն այնքան էլ դյուրին չէր: Ընդ որում, առավել մեծ վտանգ էր ներկայացնում թուրքական ագրեսիան. նրանք դեռ չէին հրաժարվել պանթուրանական ռազմավարական ծրագրի իրականացման ճանապարհին լուրջ խոչընդոտ Հայաստանը պատմական ասպարեզից վերացնելու գաղափարից:

Հայտագրից ակնհայտ է դառնում, որ արտաքին հարաբերությունների ասպարեզում Հայաստանի Հանրապետության համար հրատապ ու առաջնահերթ խնդիրը Թուրքիայի նկատմամբ վարելիք քաղաքականությունն էր: Հ. Քաջազնունին իրավացիորեն գտնում էր, որ բոլոր հնարավոր միջոցները պետք է գործադրվեն Թուրքիայի հետ հաշտության եզրեր գտնելու համար: Վարչապետը ականատեսն էր Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ Թուրքիայի վարած քաղաքականության. «...*Մենք հիմքեր չունենք բարեկամական զգացմունքներ տածելու Թուրքիայի նկատմամբ նրա ոչ անցյալի և ոչ էլ ներկա գործունեության համար*»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Նա՝ իբրև պետական-քաղաքական գործիչ, թերևս ամենասթափ ու ճշմարիտ գնահատական է տալիս թուրքական քաղաքականությանը. «...Թուրքիան Անդրկովկասում ևս, ինչպես Արևելյան Անատոլիայում, ձգտում է քաղաքականապես ոչնչացնել հայկական տարրը և խոչընդոտել հայկական պետության կայացմանը»[2]:

Սակայն Հայոց մեծ եղեռնից հետո արյունաքամ հայ ժողովուրդը արդյոք ի վիճակի՞ էր այլ ուղի ընտրելու, այսինքն՝ պայքարի մեջ մտնելու Թուրքիայի դեմ: Այս էր խնդիրը, և իրատես վարչապետը գտնում էր, որ ի վիճակի չէր: Նրա կարծիքով, եթե դեռևս ինչ-որ մի հնարավորություն կար

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 6-7:

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 7:
[2] Նույն տեղը:

փրկելու հայ ժողովրդի բեկորները, ապա այդ հնարավորությունը պետք է փնտրել Թուրքիայի հետ ցանկացած գնով համաձայնության գալու մեջ. «Դա նշանակում է, որ մեր պահանջներն ու բողոքները չպետք է հանգեցնեն բախման: Այսպիսին պետք է լինի մեր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ»[1]:

Այլընտրանք չկար. նման մոտեցումը թելադրում էր երկրի օրհասական ու մահաբեր վիճակը:

1918 թ. հունիսի 3-ի պարտավորագրով և հունիսի 4-ի պայմանագրով (Բաթում) Թուրքիան Հայաստանի Հանրապետության համար գծել էր մի շրջանակ, որը հաղթահարելու և արտաքին աշխարհ դուրս գալու համար պահանջվում էին ուժ, ժամանակ ու գերմարդկային վիթխարի ջանքեր: Առաջինը ճանաչելով Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ թուրքական իշխանությունները, հունիսի վերջին մամուլի էջերում «ողջունելով Հայկական Հարցի վերջնական լուծումը», հայտնում էին, որ «...իրենք ստեղծել են Հայաստանը և այդպիսով Հայկական հարցի վերջնական լուծումը համարում են փակված»[2]:

Հայկական հարցը տասնամյակներ շարունակ կանգնած էր Թուրքիայի կոկորդին, և խոշոր պետությունները շահարկում էին այն՝ միջամտելու Թուրքիայի ներքին գործերին, այնտեղ հաստատելու իրենց ազդեցությունը: Թուրքիան բնականաբար ձգտում էր որքան հնարավոր է շուտ ազատվել այդ մեծ «գլխացավանքից»: Դրա համար նա ընտրեց հայությանն ու Հայաստանը պատմական ասպարեզից ջնջելու եղանակը: Այնպես որ, փարիսեցիություն էր հայտարարել, թե լուծել է Հայկական հարցը, այն դեպքում, երբ թուրքը նպաստավոր պահի պատրաստ էր կուլ տալու հայության

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 11:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116-117:

վերջին բեկորն անգամ: Բաթումի պայմանագիրը մի հերթական քայլ էր այդ ճանապարհին:

Փոքր տարածքի վրա կծկված Հայաստանի Հանրապետությունը ավելի շատ նման էր ընդարձակ բանտի, քան թե անկախ պետության: Թուրքիան երկիրը շրջապատել ու այն մեկուսացրել էր արտաքին աշխարհից. «Հայաստանը մնացել էր մենակ, չորս կողմից շրջապատված թշնամի կամ անբարյացակամ ուժերով, առանց որևէ արտաքին նեցուկի և օգնության»[1], - գրում է Հ. Քաջազնունին: Եվ ահա, խախտելով Բաթումի հաշտության պայմանագիրը, թուրքերն առանց որևէ առիթի ու առանց նախազգուշացման հուլիսի 7 - 9 -ը կանոնավոր ռազմական գործողություններ սկսեցին Սարդարապատի և Էջմիածնի հայկական զորամասերի դեմ և գրավեցին Խաթունարխ, Չոբանքեարա, Նեջիրլու գյուղերը[2]: 1918 թ. հունիս - օգոստոս և հետագա ամիսներին Հայաստանի Հանրապետության տարածքի կեսից ավելին լցված էր թուրքական զորքով, «մնացեալ մասը խճողուած ու խռովայոյզ վիճակի մէջ էր: Հայ ժողովուրդը ապրում էր գերագոյն տագնապի օրեր: Մտաւորականութիւնը կծկւել ու խեղճացել էր: Հոգեկան հաւասարակշռութիւնն ու կորովը պահած գործիչները մատների վրայ էին համրվում»[3]: Թուրքերը գտնվում էին Երևանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա և կարող էին շարժվել դեպի Երևան՝ վերջնական հարված հասցնելով երկրին: Ճիշտ է, նրանց դեմ կանգնած էր հայկական հուսալի մի զորամաս՝ թէ՛ թվով ու թէ՛ ներքին կազմակերպվածությամբ ու «դիսցիպլինով» համեմատաբար ուժեղ զորք, «սակայն վերջինս,- գրում է Ա. Ջամալյա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 48:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, նոյեմբեր, №11, էջ 119:
[3] ***Վրացյան Մ.***, Խարխափումներ Յ.Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գրքի առթիվ, էջ 156-157:

նը,- ռազմամթերքի սաստիկ պակաս էր զգում և այդ պատճառով երկարատև կռի դիմանալ չէր կարող»[1]:

* * *

Թուրքական շրջափակումից դուրս գալու համար հանրապետության ղեկավարությունը փորձում էր օգտվել այն հակասություններից, որոնք կային Թուրքիայի և նրա դաշնակիցների, առաջին հերթին՝ Գերմանիայի միջև Անդրկովկասի հարցում: Գերմանիան չէր ցանկանում Թուրքիայի չափից ավելի ուժեղացումն Անդրկովկասում և հակված էր պահպանելու Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները: Նկատի ունենալով դաշնակիցների միջև եղած այդ հակասությունը՝ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ձգտում էր հասնել Գերմանիայի բարյացակամ վերաբերմունքին: Բաթումի բանակցություններին մասնակցած Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Օ. ֆոն Լոսովի հետ 1918 թվականի հունիսի 3-ին Բեռլին մեկնեցին Թիֆլիսի Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդի ներկայացուցիչներ Համազասպ Օհանջանյանն* ու Արշակ Զուրաբյանը (փոքր-ինչ անց հանդես եկան Հայաստանի Հանրապետության անունից)[2]: Մասամբ նրանց ջանքերի շնորհիվ էր, որ որոշվեց հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում հրավիրել Քառյակ միության պետությունների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) խորհրդաժողով (հրավիրվեցին նաև Անդրկովկասի հանրապետությունները), որը պետք է լուծեր Թուրքիայի և Անդրկովկասի պետությունների միջև առկա բոլոր

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 22, թ. 6, գ. 37, թ. 19:
[2] Տե՛ս *Ավետիսյան Հ.*, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 259:

խնդիրները[1]: 1918 թ. հունիսի 13-ին Կոստանդնուպոլիս մեկնեց Հայաստանի Հանրապետության խաղարարար պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի* գլխավորությամբ (պատվիրակության անդամներ էին Ալեքսանդր Խատիսյանը և Միքայել Պապաջանյանը* (Պապաջանով): Խորհրդաժողովը ժամանակին չկայացավ՝ Քառյակ միության երկրների ռազմական անհաջողությունների պատճառով: Խորհրդաժողովն անընդհատ հետաձգվում էր: Շուրջ չորսուկես ամիս (մինչև նոյեմբերի 1-ը) մնալով Գերմանիայում և Կոստանդնուպոլսում՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի բարձրաստիճան գործիչների հետ: Հաջողվեց նշված պետությունների կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ որոշ նպաստավոր վերաբերմունք ստեղծել:

Սակայն Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները անկայուն, անորոշ ու հակասական էին անմիջական հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ՝ վերջիններիս միանգամայն տարբեր քաղաքական նպատակների, կողմնորոշումների ու տարածքային վեճերի պատճառով: Երեք պետությունների միջև կային սահմանային շատ կնճռոտ վեճեր, հնուց եկող փոխադարձ անվստահություն, կասկած ու երկյուղ, և ապա՝ արմատական տարբերություն արտաքին կողմնորոշման հարցում: Ադրբեջանը անվերապահորեն, իսկ Վրաստանը աննշան վերապահումներով ձգտում էին մերձենալ Թուրքիայի հետ՝ Ռուսաստանի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու համար, մինչդեռ Հայաստանը Թուրքիայի գերիշխանությունը Անդրկովկասում համա-

[1] Տե՛ս *Խատիսյան Ա.*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 94:

ռում էր ոչ միայն վտանգավոր, այլև պարզապես լուրջ սպառնալիք իր գոյության համար[1]:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից Կովկասյան թաթարները (ադրբեջանցիները) ամբողջովին հակված էին իրենց ցեղակից և կրոնակից Թուրքիայի կողմը, երբ «1917 թվականի վերջերին՝ ռուսական զորքերը լքեցին Կովկասյան ճակատը, և տաճկական բանակը սկսեց իր հաղթական արշավանքը դեպի հյուսիս, թաթարները՝ համարյա առանց քողարկելու՝ անցան Թուրքիայի կողմը,- գրում է Հ. Քաջազնունին: -Նրանք ոչ միայն չէին ուզում շարունակել պատերազմը Թուրքիայի դեմ, այլ անում էին ամեն իրանց ձեռքից եկածը, որպեսզի Թուրքիան օր առաջ տիրապետի Անդրկովկասին»[2]: Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո «Ադրբեջանը (Անդրկովկասյան Թաթարստանը), հենվելով թուրքական բանակի ներկայության վրա,- շարունակում է Հ. Քաջազնունին,- նեղում էր Հայաստանի արևելյան (մասամբ էլ հյուսիսային) սահմաններին ու սպառնում էր սրի քաշել այդ կողմերի հայ ազգաբնակչությանը»[3]: Ոչ միայն սպառնում էր, այլև հենց նույն ժամանակաշրջանում սրի էր քաշում տասնյակ հազարավոր հայերի[4]:

Վրաստանի անկախության հռչակումից հետո վրաց կառավարությունը հստակ արտահայտեց իր արտաքին քաղաքական դիրքորոշումը հարևան երկրների և Ռուսաստանի նկատմամբ:

Բաթումի պայմանագրի կնքումից հետո Վրաստանը սպառնում էր Հայաստանի Հանրապետությանը և պահանջում վերջ տալ ռուսական քաղաքական կողմնորոշմանը: Դա ինքնին նշանակում էր հրաժարվել հայկական տարածքներից, որդեգրել գերմանա-թուրքական կողմնորոշում և նրանց միջոցով ընդունել Անդրկովկասում Վրաստանի գերիշխանությունը:

Վրացիների համար թուրքական կամ ադրբեջանական վտանգ չկար, որ սպառնար նրանց ֆիզիկական գոյությանը և հարկադրեր փրկության ուղիներ որոնելու. վրացիների համար պայմաններն այնպես էին դասավորվել, որ նրանք դրսի օգնության ոչ մի սուր, հրամայական կարիք չունեին[1]:

Հայաստանի ժամանակավոր կառավարության հայտագրում Հ. Քաջազնունին նշում է, որ «Վրաստանը արդեն արել է իր ընտրությունը. նա բացահայտորեն տրվել է Գերմանիային: Նա կարող է դա անել առանց ռիսկի, քանի որ Գերմանիան հիմնավորվել էր նրա տարածքում և պաշտպանում էր նրա սահմանները. Վրաստանին հասնելու համար Թուրքիան պետք է անցնի գերմանական զինվորի դիակի վրայով, քայլ, որին նա հեշտությամբ չի դիմի: Մեր իրավիճակը այլ է: Մեր տարածքում դեռևս ոչ մի գերմանական զինվոր, ոչ մի գերմանական դրոշ չկա և կարելի է հուսալ, որ երբեք էլ չի լինի: Գերմանացիներին հետաքրքրում են Բաթում-Բաքու և Փոթի-Բաքու երկաթուղագծերը, բայց ոչ Երևանի նահանգը: Հնարավոր է, որ Գերմանիայի և Թուրքիայի միջև համաձայնությունը կկայանա հենց Հայաստանի հաշվին, և Թուրքերը կշարունակեն տիրել Հայաստանի հողերը: Դրա համար էլ մեր մերձեցումը Գերմանիայի հետ պետք է ընթանա այնպես, որ չառաջացնի Թուրքիայի զայրույթը»[2]:

Օգտվելով արտաքին նպաստավոր պայմաններից՝ 1918 թ. հունիսի առաջին կեսին Նոյ ժորդանիան և Նոյ Ռա-

---

[1] Տե՛ս *Քաջազնունի Հ.*, Բաց նամակ Z -ին, Թուրքիա ? թե Ռուսաստան, Երևան, 1990, էջ 15:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 40:
[3] Նույն տեղում, թ. 48:
[4] Տե՛ս «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918 - 1920 թթ.», կազմ. *Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան,* Երևան, 2003, էջ 89:

[1] Տե՛ս *Դարբինեան Ռ.*, Ռուսական վտանգը, Երևան, 1991, էջ 74:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 13:

միշվիլին Վրաստանի Ազգային խորհրդի և կառավարության անունից Թիֆլիս հրավիրեցին Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի ներկայացուցիչներ Ավ. Ահարոնյանին, Հ. Քաջազնունուն, Ալ. Խատիսյանին, Խ. Կարճիկյանին և Հ. Հախվերդյանին (Հախվերդովին) Հայաստանի և Վրաստանի միջև Բորչալուի գավառը էթնիկական սկզբունքով բաժանելու հարցը քննարկելու նպատակով[1]: Դիմավորելով հայ պատվիրակներին՝ Ի. Ծերեթելին Վրաստանի Ազգային խորհրդի անունից հայտարարեց, որ Վրաստանի սահմանների մեջ են մտնելու Ախալքալակի, Ղազախի ու Բորչալուի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը. «...հայ-վրացական խառը բնակչությամբ բոլոր վիճելի տարածքները պետք է անցնեն Վրաստանին: Ռուսական հեղափոխական դեմոկրատիայի երբեմնի առաջնորդը բերում էր հետևյալ պատճառաբանությունը. հայերը Բաթումի համաձայնությունից հետո չեն կարող քիչ թե շատ կենսունակ պետություն ձևավորել, - գրում է իր հուշերում Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար, գեներալ Ա. Ի. Դենիկինը*,- և նրանց համար շահավետ է հզորացնել Վրաստանը, որպեսզի Կովկասում քրիստոնյա ուժեղ պետություն լինի, որը գերմանացիների օգնությամբ կպաշտպանի և՛ իրեն, և՛ հայերին»[2]: Խ. Կարճիկյանը վրդովված բողոքեց Ի. Ծերեթելու հայտարարության դեմ՝ նշելով, որ նրա առաջարկը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու ծրագիր, և այդ առաջարկը հակառակ է Ն. Ժորդանիայի և Ն. Ռամիշվիլու Հայոց ազգային խորհրդում արած այն հավաստիացումներին, որ հիշյալ տարածքները պատկանում են հայերին[1]: Անշուշտ չէր կարող պատահել, որ Ի. Ծերեթելին տեղյակ չլիներ այդ հավաստիացումներին: Նա առանց քողարկելու արտահայտում էր Վրաստանի իրական նպատակները՝ զավթել հայկական տարածքները՝ իր թիկունքում ունենալով Գերմանիայի աջակցությունը: Ավելին, նա մեկ այլ առիթով Թիֆլիսում հայտարարել էր. «Ինչ Հայաստանի մասին եք մտածում: Աւելի լաւ չէ՞ր լինի, որ մի մեծ Վրաստան ստեղծուեր և հայերը նրա թևի տակ ապրէին»[2]:

Վրաստանն իր ներքին և արտաքին քաղաքական վիճակը ավելի բարելավեց՝ ընդունելով Գերմանիայի իրական հովանավորությունը: 1918 թ. մայիսի 28-ին Փոթիում Գերմանիայի և Վրաստանի միջև կնքվեց ժամանակավոր զաղտնի համաձայնություն՝ իրենց հետագա հարաբերությունները որոշելու մասին: Գերմանական կայսերական կառավարության կողմից համաձայնագիրը ստորագրեց զորավար Օ. ֆոն Լոսովը, իսկ վրացական կառավարության կողմից՝ արտաքին գործերի նախարար Ակակի Չխենկելին[3]:

Ըստ այդ համաձայնագրի՝ Գերմանիան մեծ զորախումբ է ուղարկում Թիֆլիս՝ երկրի ներքին կարգուկանոնը պահպանելու և վրացական զորքերի հետ նրա սահմանների անվտանգությունը ապահովելու: Վրաստանի կառավարությունը թույլ էր տալիս, որ պատերազմի ողջ ընթացքում Գերմանիան և Ավստրիան օգտվեն Վրաստանի տարածքում գործող երկաթուղային ցանցից՝ զորքեր և ռազմական հանդերձանք փոխադրելու համար: Այդ նպատակով Թիֆլիսում Գերմանիայի ղեկավարությամբ կազմվելու էր զինվորական

---

[1] Տե՛ս *Մելքոնյան Ա.*, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 285-289:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 295, թ. 31, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 18, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 27, ֆ. 276, ց. 1, գ. 96, թ. 125-126:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1957, N2, փետրվար, էջ 1-2:
[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 43:
[3] Տե՛ս «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1938, №1, էջ 84, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1935, փետրվար, №4, էջ 103:

հանձնախումբ, որը Վրացական կառավարության հետ համախորհուրդ՝ պետք է կանոնավորեր երկաթուղու հաղորդակցությունը: Երկաթուղային կայարանները և ռազմական նշանակություն ունեցող օբյեկտները հսկելու էին գերմանական պահակային զինվորները[1]: Փոթիի նավահանգիստը 60 տարով օգտագործման էր հանձնվելու Գերմանիային: Գերմանիան ստորագրեց նաև համաձայնություն, որով Վրաստանին տրամադրում էր 50 միլիոն ռուբլի վարկ[2]: Հուլիսի 24 -ին Վրաստանի Ազգային խորհուրդը գաղտնի ուրվագծեց Գերմանիայի և Վրաստանի համագործակցությունը ռազմական, տնտեսական, առևտրային, ֆինանսական և այլ բնագավառներում[3]:

Վրաց - գերմանական համաձայնագիրը նոր որակ ու նպաստավոր ընթացք հաղորդեց նաև Գերմանիայի դաշնակիցներ Թուրքիայի և Վրաստանի փոխհարաբերություններին: Այդ կապակցությամբ բնութագրական է Կովկասյան ճակատի թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշայի պատվին «Վրացական ակումբի» շենքում կազմակերպված խնջույքում Վրաստանի ռազմական նախարար Գեորգաձեի արտասանած բաժակաճառը, որով նա մաղթեց «հաջողություններ թուրքական քաջարի զորքերին և նրանց դաշնակիցներին»: Պատասխան խոսքում Խալիլ փաշան նշեց, որ Թուրքիան Վրաստանի նկատմամբ լավագույն զգացումներով է լցված, և եթե արտաքին թշնամին սպառնա Վրաստանի անկախությանը, ապա նրանք պետք է միասին պայքարեն նրա դեմ[4]:

[1] Տե՛ս «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1938, №1, էջ 84:
[2] Տե՛ս Российский государственный военный архив (այսուհետև՝ РГ ВА), ф. 39720, оп. 1, д. 49, л. 5:
[3] Տե՛ս РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 49, л. 1-4:
[4] Տե՛ս նույն տեղում, л. 2:

Վրաց-գերմանական և թուրքական դաշինքն իր սուր ծայրով ամենից առաջ ուղղված էր Հայաստանի Հանրապետության դեմ. Վրաստանն ու Թուրքիան ձգտում էին իրագործել իրենց զավթողական նկրտումները: Այդ դաշինքն ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ: Եվ պատահական չէր, որ այդ օրերին Վրացական մամուլը ևս չէր թաքցնում Վրաստանի հակառուսական դիրքորոշումը: Այդ քաղաքականությունը դրսևորվեց Վրաստանում բնակվող ռուսների հանդեպ: Վրաստանի կառավարությունը, ելնելով քաղաքական շարժառիթներից, ձերբակալեց Ռուսաստանի նախկին բարձրաստիճան զինվորական ու քաղաքական «կասկածելի» մի խումբ գործիչների: Այսպես, գեներալներ Ռուբենաուի, Զունկովսկու, Դուրնովի և այլոց ձերբակալությունից հետո «Сакартвелосъ Республика» պաշտոնաթերթը 1918 թ. հուլիսի 8 -ի համարում հայտարարեց, թե իբր «...ներքին գործերի նախարարը Թիֆլիսում հայտնաբերել է Վրաստանի անկախության դեմ պայքարող կազմակերպություն, որը նպատակ ուներ ...Վրաստանում վերականգնելու ինքնակալական կարգեր»: Այդ կազմակեպության մեջ իբրև թե մտնում էին «ռուս սպաներ, պաշտոնյաներ, բոլշևիկներ և այլ շրջանակների ներկայացուցիչներ: Գործունեության միջոցներից պետք է լինեին մի շարք հաստատությունների պայթեցումը, ահաբեկչական գործողություններ և այլն»[1]:

Նույն թերթը 1918 թ. օգոստոսի 18 -ի համարում, քննադատելով հայերի ռուսական կողմնորոշումը, հայտարարում էր, որ Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները լարված կմնան այնքան ժամանակ, քանի դեռ հայ ժողովրդի ղեկավարները կտրուկ չեն հայտարարել, որ իրենց կողմնորոշումը և քաղաքականությունը արմատապես փոխվել են[2]:

[1] „Сакартвелосъ Республика", Тифлис, 8 июля, 1918:
[2] Տե՛ս նույն տեղում, 18 августа, 1918:

Արխիվային վավերագրերն ու նյութերը համոզիչ կերպով հաստատում են, որ Անդրկովկասի երեք ժողովուրդների անկախացումից հետո միանգամայն բարենպաստ իրադրություն էր ստեղծվել Վրաստանի և Ադրբեջանի համար: Հստակ էր նաև նրանց արտաքին քաղաքականության ուղղվածությունը: Գերմանիան պաշտպանում էր Վրաստանի, իսկ Թուրքիան՝ Ադրբեջանի շահերը, և երկուսն էլ՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության: Հայ ժողովրդի քաղաքական դրությունը արմատապես տարբեր էր թաթար և վրաց ժողովուրդների վիճակից այն պատմական պահից ի վեր, երբ ռուսները սկսեցին հեռանալ Անդրկովկասի սահմաններից:

Հայտնվելով մեկուսացման ու շրջափակման մեջ՝ Հայաստանի Հանրապետությունը իր հայացքը դարձյալ ուղղեց դեպի Ռուսաստան, իսկ Ռուսաստանում քաղաքական իրադրությունը երերուն էր, խառն ու տակավին անկանխատեսելի: Ռուսաստանը գալարվում էր քաղաքացիական պատերազմի հորձանուտի մեջ, և հակամարտող երեք ուժերից (խորհրդային, կամավորական և կոլչակյան) որևէ մեկի վերջնական հաղթանակը դեռևս անկանխատեսելի էր:

2. Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու պատմական անհրաժեշտությունը

1918 թ. ամռանը Հայաստանն ամբողջողվին մեկուսացված էր արտաքին աշխարհից, վտանգված էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Այդ իրավիճակում որևէ համաձայնություն թուրք - թաթար հարևանների հետ անհնարին էր, որովհետև նրանք չէին կամենում «հաշտուել ոչ միայն հայ ազգի քաղաքական, այլ եւ ֆիզիկական գոյութեան հետ: Հայութիւնը ստիպուած էր անընդհատ եւ անհաշտ կռիւ մղել թրքութեան դէմ, այլապէս նրան սպասում էր բնաջնջումն:

Իր սեփական ոյժերով միայն նա անկարող էր ապահովել իր գոյութիւնը, այնքան անհաւասար էր կռիւը:

Այդպիսի պայմաններում նա բնազդօրէն պիտի կառչէր ամէն մի արտաքին ոյժի, որ կարող էր օգնել նրան կասեցնելու համար թուրք-տաճկական վտանգը:

Թուրքին զսպողը պատմականօրէն եղել է ռուսը: Եւ շատ բնական է, որ թուրքի դէմ մղուող իր օրհասական պայքարի մէջ հայը շարունակէր օգնութեան որոշ յոյսեր տածել ռուսի հանդէպ, չնայելով, որ վերջինս հեռու էր»[1]: Հայ ժողովրդի ինքնապաշտպանության բնազդը տանում էր դեպի Ռուսաստան: Հայաստանի անկախության առաջին ամիսներին երկրի համար ստեղծված ներքին և արտաքին ծայրաստիճան աննպաստ պայմաններում հայ քաղաքական և հասարակական լայն շրջաններում գերակայում էր Ռուսաստանի հետ բարեկամական, բնականոն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մտայնությունը՝ անկախ նրա պետական-քաղաքական կառուցվածքից: Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատար Ա. Ի.Դենիկինն իր հու-

[1] *Դարբինեան Ռ.*, Ռուսական վտանգը, Երևան, էջ 75:

շերում գրում է, «Այդ պայմաններում Հայոց ազգային խորհրդի և կառավարության ...բոլոր ջանքերը ուղղված էին հայ ժողովրդի բեկորների ֆիզիկական գոյության պահպանմանը: ...Կառավարությունը (Հայաստանի - Գ.Պ.) ամենուր հուսահատ դիմումներ էր ուղարկում և փրկարար «կողմնորոշում» որոնում: ...Այդ պահին իշխում էր Ռուսաստանի հետ միջպետական կապեր հաստատելու անհրաժեշտության գիտակցությունը: Կարևոր չէր Ռուսաստանի քաղաքական կարգը, անգամ եթե այն լիներ խորհրդային, միայն թե նա ուժեղ լիներ և կարողանար փրկել հայ ժողովրդին: Բայց այդպիսի Ռուսաստան այն ժամանակ գոյություն չուներ»[1]: Հիրավի, տվյալ ժամանակահատվածում՝ 1918 թ. ամռանը, չկար միասնական հզոր Ռուսաստան: Այն ցնցվում էր ներքին քաղաքական հակամարտություններից. մի կողմում Խորհրդային Ռուսաստանն էր, մյուս կողմում՝ նրա հարավում ու արևելքում, գեներալ Ա.Դենիկինի ու ծովակալ Ա. Կոլչակի ղեկավարությամբ գործող հակախորհրդային ուժերը, որոնք ստեղծել էին ոչ խորհրդային պետական կազմավորումներ: Այդ պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կանգնած էր երկընտրանքի առաջ. դեպի ու՞ր գնալ, ո՞ր Ռուսաստանի հետ կապեր հաստատել: Մինչ այդ՝ ապրիլին, Թուրքիայի պահանջով Անդրկովկասի հակախորհրդային քաղաքական ուժերը երկրամասն անջատել էին Ռուսաստանից: Փաստորեն Հայաստանի Հանրապետությունն էլ կտրվել էր Ռուսաստանից: Տվյալ պատմական պահին Թուրքիան խեղդում էր Հայաստանի Հանրապետությանը՝ սպառնալով բնաջնջել ամբողջ հայությանը: Այդ օրհասական վիճակում Հայաստանի Հանրապետության միակ հույսը Ռուսաստանն էր՝ անկախ այն բանից, թե դա որ Ռուսաստանը կլինի:

[1] Государственный архив Российской Федерации (այսուհետև՝ ГА РФ), ф. 5827, оп. 1, д. 241, л. 6, ***Деникин А.И.***, Очерки русской смуты, Москва, 1991, с. 140 - 141, ***Деникин А.И.***, *Очерки русской смуты: Белое движение и борьба добровольческой армии, Май-октябрь, 1918 (Воспоминания, Мемуары) - с. 85,„* Вопросы Истории", N 3, 1992, с. 94 – 95:

Հանրապետության նորակազմ կառավարության շրջանակներում նույնիսկ հնչում էր Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի հետ վերամիավորելու պահանջ: Այդ մասին է վկայում 1918 թ. հոկտեմբերի 24 -ի Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցություն» քարոզչական բաժնի № 28 ամփոփագիրը, որում ասված է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի (ԱԳՆ)[1] օգնական Գևորգ Մելիք – Ղարագոզյանը* (Կարակոզով) հայտարարել է, թե «Հայաստանի քաղաքականությունը բարենպաստ է Ռուսաստանի հանդեպ: Այն հնարավոր է դարձնում մինչև անգամ Ռուսաստանի հետ Հայաստանի վերամիավորումը: Եթե անգամ այս կամ այն արտաքին գործոնների ազդեցության տակ Հայաստանի կառավարությունը ստիպված լինի

[1] 1918 թ. հունիսի 9-ին վարչապետ Հ. Քաջազնունին Ա. Խատիսյանին նշանակեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, որի մասին հուլիսի 24-ին պաշտոնապես հրապարակվեց Երևանում: Ա. Խատիսյանի բացակայության պատճառով (հունիսի 13-ից մինչև նոյեմբերի 1-ը որպես Հայաստանի Հանրապետության խաղաղարար պատվիրակության անդամ գտնվում էր Կոստանդնուպոլսում) արտաքին գործերի նախարարի պաշտոնը ժամանակավորապես վարում էր վարչապետ Հ. Քաջազնունին: Մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը (նոր կոալիցիոն կառավարության ձևավորումը) արտաքին գործերի նախարարությունը իր սաղմնային դիվանով միախառնված էր Նախարար Նախագահի գործառույթների հետ: Հուլիսի 24-ից արտաքին գործերի նախարարության թարգմանի գործառույթը միաժամանակ իրականացնում էր Հայկական կորպուսի թարգման Արմենակ Սահակյանը: Փաստորեն, որպես առանձին հաստատություն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն գոյություն չուներ:

1918 թ. նոյեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության խորհուրդը (խորհրդարանը) Սիրեկան Տիգրանյանին հաստատեց արտաքին գործերի նախարար: Վերջինս նոյեմբերի 16-ին նախարարի օգնական նշանակեց Գևորգ Մելիք-Ղարագոզյանին, իսկ 1919 թ. փետրվարի 28-ին նախարարության ընդհանուր (գլխավոր) քարտուղար՝ Ալեքսանդր Տեր-Հակոբյանին: Ս. Տիգրանյանը լայն գործունեություն ծավալեց արտաքին գործերի նախարարության կայացման գործում:

այլ բնույթի պաշտոնական հայտարարություններ անելու, ապա ...դրանք պետք է դիտել որպես հարկադրված քայլեր»[1]: «...Տեր Կարապետովի[2] կարծիքով, - նշվում է նույն ամփոփագրում, - Հայաստանի վերամիավորումը հնարավոր կդառնա այդ ուղղությամբ ռուսական պետական իշխանությունների ակտիվ և իրական քայլեր ձեռնարկելու դեպքում: Հայաստանը զրկված է այդ ուղիով ինքնուրույն քայլեր կատարելու հնարավորությունից»[3]: Այսինքն՝ վերամիավորման առաջարկը պետք է գար Ռուսաստանից:

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Զամալյանը 1918 թ. օգոստոսի 8 -ի նամակում՝ ուղղված Մոսկվայի Հայոց ազգային կոմիտեին և Հայաստանի Ապահովության խորհրդին, գրում է. «Ռուսներն ընդհանրապես դէպի մեզ բարեկամաբար են տրամադրուած, բայց նրանք քաղաքական կշիռ չունեն Անդրկովկասում: Մեր ու նրանց մէջ տարաձայնություններ չեն եղել և չկան»[4]: Քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում Ռուսաստանը Անդրկովկասում ակտիվ դիվանագիտական գործունեություն չէր վարում. «***Ռուսաստանի համար այնքան էլ արժէք չէր Հայաստանը, որ մտածէր նրա փրկութեան համար. նա զբաղուած էր իւր ներքին գործերով***»[5] (ընդգծումը մերն է- Գ.Պ.),- գրում է Ռուբեն Տեր- Մինասյանը: Երկրի այդպիսի բարդ քաղաքական պայմաններում դաշ-

[1] Նկատի ունի 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում Հայաստանի Հանրապետության խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Խատիսյանի ստորագրած պարտավորագիրը:
[2] Կադետական կուսակցության Անդրկովկասյան կոմիտեի ներկայացուցիչ:
[3] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 132, л. 86, ***Деникин А.И.***, Очерки русской смуты, Москва, 1991, с. 146, ***Деникин А.И.***, *Очерки русской смуты; Белое движение и борьба добровольческой Армии, Май-октябрь, 1918 (Воспоминания, Мемуары) - с. 91-92:*
[4] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 22, թ. 7, գ. 37, թ. 19:
[5] ***Ռուբեն,*** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր է, Թեհրան, 1982, էջ 137:

նակցության պաշտոնական «Զանգ» թերթը 1918 թ. դեկտեմբերի 8 -ի՝ «Ռուսաստանն ու Հայաստանը» խմբագրականում հետևյալ կերպ է արտահայտվում հայ - ռուսական հարաբերությունների մասին. «Մեր յարաբերութիւնը դեպի Ռուսաստանը պայմանաւորուում է քաղաքական այն կացութեամբ, որ առաջ եկաւ մեզնից անկախ և մեր կամքին հակառակ: Մենք չէինք ուզում բաժանուել Ռուսաստանից, բայց մեզ բաժանեցին: Մենք նպատակ չունէինք անկախութիւն յայտարարելու, բայց մեզ ստիպեցին: Դողալով մեր ժողովրդի ֆիզիկական գոյութեան վրայ՝ մենք արինք այնպիսի քայլեր, որ ուրիշ դէպքում չէինք անի: Ամենից քիչ սուբյեկտիւ հանգամանքները դեր կատարեցին Հայաստանի Հանրապետութիւնն ստեղծելիս: Եւ նոյն դրութիւնը, դժբախտաբար, մնում է և այսօր: Մեր աշխարհագրական դիրքը, քաղաքական պայմանները վճռական նշանակութիւն ունեն մեր ընթացքը որոշելիս: Ոչ թե մենք պիտի վճռենք մեր քաղաքական ճակատագիրը, այլ մեզնից դուրս գտնուող և մեր կամեցողութեանը չենթարկուող ուժերը»[1]:

Այնուհետև «Զանգ»-ը ավելացնում է, թե անկախությունը իդեալ չէ, ինչպես իդեալ չէ և ուրիշ որևէ քաղաքական ձև, որ գերագույն նպատակը հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և նրա սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորությունների առավելագույնս ապահովումն է: «Կլինի Հայաստանը անկախ, թէ նա կլինի ռուսական մի շտատ,- շարունակում է «Զանգ»-ը,- հայ դեմոկրատիան երբէք չի մոռանայ քաղաքակրթական այն բարձր աւանդները, որ նա ստացել է Ռուսաստանի ազատասէր մասից: Վերջին մի դարի հայոց պատմութիւնը և ներկայ յեղափոխական շարժման ընթացքին հայ դեմոկրատիայի բռնած

[1] «Զանգ», լրագիր, Երևան, 8 դեկտեմբերի 1918թ., ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 48, թ. 1 - 4:

ընթացքը մի բան միայն կարող են վկայել, որ մեծ Ռուսաստանն ու փոքրիկ Հայաստանը կապված են իրար հետ շատ ամուր կապերով և աշխարհի բախտը որոշող ուժերին կմնայ վճռել, թէ այսուհետև որոնք են լինելու այդ կապերը՝ միայն կուլտուրական, թէ և՛ քաղաքական և՛ պետական»[1]:

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական դիրքորոշումը հայ - ռուսական հարաբերությունների վերաբերյալ ներկայացված է Հ. Քաջազնունու կազմած ժամանակավոր կառավարության ծրագրում. «Ռուսաստանի հեռանալը Անդրկովկասից ուղղակի դժբախտություն է Հայաստանի համար: Դա մեզ համար ցանկալի չէր և եթե Ռուսաստանը երբևէ վերադառնա Անդրկովկաս, կստանա մեր աջակցությունը: ***Սակայն մեր ընթացիկ քաղաքականությունը չի կարող կառուցվել ռուսական կողմնորոշման վրա:*** Ներկա պահին Ռուսաստանը մեզ ոչնչով օգնել չի կարող (խոսքը տեղում իրական օգնության և ոչ թե Կոստանդնուպոլսի խորհրդաժողովում դիվանագիտական աջակցության մասին է): Այդ պատճառով ես կարծում եմ, որ ***Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել:***

Դա կուժեղացնի թուրքերի կասկածամտությունը, և նրանք չեն վարանի դիմելու համապատասխան միջոցների Ռուսաստանի հետ մեր համագործակցությունը խափանելու համար: ...Ռուսական կողմնորոշումը քաղաքական ուղղություն է, որը կարող է անհրաժեշտ լինել ապագայում, սակայն այժմ այն կարող է հանգեցնել նոր բարդացումների...»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Ի դեպ, Հ. Քաջազնունին բավականին սթափ է գնահատում ստեղծված իրավիճակը: Թուրքն ակնդետ հետևում էր Հայաստանի Հանրապետության քաղաքական քայլերին և

[1] Նույն տեղը:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 12:

ամեն ինչ կաներ՝ խափանելու Ռուսաստանի հետ նրա մերձեցումը, կանգ չառնելով և ոչ մի միջոցի առաջ: Այնպես որ, Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները, իրոք, կարող էին կործանարար լինել: Սակայն դա չէր նշանակում, թե ընդհանրապես մերժվում էր ռուսական գործոնի դերը հայ ժողովրդի կյանքում: Պարզապես այդ պահին պահանջվում էր զգուշավոր քաղաքականություն: «Այսպիսին է քաղաքականությունը, որը ես մտադիր եմ վարելու,- եզրափակում է Հ.Քաջազնունին: -***Այն թելադրված է այսօրվա իրավիճակից: Եթե իրավիճակը փոխվի, իսկ դա մեր օրերում կարող է պատահել ամեն րոպե, և քաղաքական ուղու կտրուկ շրջադարձի կարիք զգացվի, այդժամ ես իմ տեղը կզիջեմ այլոց, որոնք ավելի լավ կգնահատեն ստեղծված իրադրությունը և երկիրը կտանեն նոր ճանապարհով...***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

1918 թ. օգոստոսի 3 -ին Հայաստանի խորհրդի երկրորդ նիստում Հ. Քաջազնունին ներկայացրեց կառավարության ծրագիրը՝ երկրի ներքին և արտաքին ասպարեզներում վարելիք քաղաքականությունը[2], սակայն կառավարության պաշտոնական դիրքորոշումը հայ - ռուսական հարաբերությունների վերաբերյալ չհրապարակեց, մի հանգամանք, որը հարուցեց խորհրդարանականներ Ա. Խոնդկարյանի*, Ա. Մելիքյանի* և Ս. Մամիկոնյանի* դժգոհությունը: 1918 թ. օգոստոսի 5-ին Հայաստանի խորհրդի երրորդ նիստում կառավարության ծրագրի քննարկման ժամանակ Ա. Խոնդկարյանը զարմանք հայտնեց. «որ ոչ մի խօսք չի ասուած Ռուսաստանի հետ ունենալիք յարաբերութեան մասին: Արդեօք այդ բացատրում է նրանով, որ կառավարութիւնը Ռուսաստանի

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 15:
[2] Տե՛ս «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, հուլիս-օգոստոս, էջ 119-123:

հարցը համարում է լուծուած խնդիր, թէ՞ ուրիշ նկատումներ կան: Յամենայն դէպս, սոց.-յեղափոխական ֆրակցիան աշխատելու է վերականգնել միացեալ յեղափոխական ճակատը Ռուսաստանի հետ եւ կովկասեան դէմոկրատիան դաշնակցական կապերով կապել Ռուսաստանի ռամկավար հանրապետութեան հետ»[1]: Բոլշևիկ Ա. Մելիքյանը, դեմ արտահայտվելով Հայաստանի Հանրապետության անկախությանը, առաջարկեց «Վերականգնել կապը Ռուսաստանի հետ, անկախ այն բանից, թէ ինչ կուսակցութիւն է կանգնած Ռուսաստանում իշխանութեան գլուխը»[2]: Բանն այն է, որ Հայաստանի խորհրդում հայ - ռուսական հարաբերությունների մասին կառավարության ծրագրի հրապարակումը հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Այն կարող էր առիթ տալ Թուրքիային ռազմական նոր գործողություններ սկսել Հայաստանի Հանրապետության դեմ: Դեռևս 1918 թ. հունիսի 3 -ին Բաթումում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանը Թուրքիայի ճնշման ներքո ստորագրել էր մի փաստաթուղթ և ստանձնել որոշակի պարտավորություն. «Հայաստանի հաշտության պատվիրակությունը, Ձերդ գերազանցության հետ անձնական բանակցությունների հիման վրա և Օսմանյան կայսրության ու Հայաստանի միջև հաշտության և բարեկամության պայմանագրի կնքման կապակցությամբ պատիվ ունի հավաստիացնելու հետևյալը. ***Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է պատերազմի ամբողջ ընթացքում չպահպանել և ոչ մի դիվանագիտական կապեր այն պետությունների հետ, որոնք գտնվում են պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության հետ***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ինչպես երևում է այդ փաստաթղթից, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր մի կողմից՝ պատերազմի ողջ ընթացքում կապեր չունենալ Համաձայնության պետությունների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ, մյուս կողմից՝ հանրային կարծիքին ներկայացնել այդ փաստաթուղթը, ինչը նշանակում էր փորձության ենթարկել Հայաստանի Հանրապետության կառավարության վարկը, որովհետև «Ռուսահայերը,- գրում է Ա. Ձամալյանը, - երազում էին ռուսական տիրապետության վերադարձի մասին»[2]:

Իսկ ի՞նչ նկատի ուներ Հ. Քաջազնունին, երբ ծրագրում նշում էր, թե «ներկա պահին Ռուսաստանը մեզ ոչնչով օգնել չի կարող»: Բանն այն է, որ Ռուսաստանը այդ ժամանակ համակված էր քաղաքացիական պատերազմով, և խորհրդային, կամավորական ու Կոլչակի* հակամարտ ուժերից որևէ մեկի վերջնական հաղթանակը դժվար էր կանխատեսել: Հյուսիսային Կովկասի և Դոնի հանրապետության հայ զինվորականների կոմիսար Սիրաք Գրիգորյանը 1918 թ. հուլիսի 21 -ին Թիֆլիսի Հայոց ազգային (Կենտրոնական) խորհրդին ուղղված նամակում գրում է. «Այժմ ամբողջ Ռուսաստանը ներկայացնում է մի հսկայական քաղաքացիական կռվի վայր, ուր առաջ են եկել բազմաթիվ ֆրոնտներ և ազգաբնակչությունը բաժանված զանազան խմբերի՝ իրար կոտորում են: Թե այս ընդհանուր քաոսից ինչպիսի իշխանություն առաջ կգա, կպարզվի շատ մոտ ապագայում»[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 80, «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 92-93, տե՛ս նաև Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 46:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 80, «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 96:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 32, թ. 6 (գործավարական թարգմանություն ֆրանսերենից):
[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, հունիս, 1924, էջ 78:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 51:

* * *

Արտաքին աշխարհից լրիվ կտրված Հայաստանի Հանրապետությունը, հարկադրաբար խախտելով 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում ստորագրած պարտավորագիրը և հունիսի 4-ի պայմանագրի կետերը, խիստ գաղտնի և զգուշորեն փորձում էր ուղիներ որոնել ***հարաբերություններ հաստատելու Ռուսաստանի թե խորհրդային և թե ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ՝ անտեսելով այդ երկրում ընթացող քաղաքացիական արյունալի պատերազմը.*** Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու մի շարք լուրջ դրդապատճառները և անհապաղ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրները երկրի անկախացման առաջին ամիսներին այնքան ծանրակշիռ ու բազմազան էին, որ չէին կարող անուշադրության կամ անտարբերության մատնվել Հայաստանի խորհրդի և կառավարության կողմից:

1. Կարևոր էր այն, որ ապավինելով Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքին՝ Հայաստանի Հանրապետության նորակազմ կառավարությունը փորձում էր ճանաչել տալ սեփական պետության անկախությունը և ապահովել ինչպես խորհրդային, այնպես էլ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ բարեկամական հարաբերությունները:

2. Հույսեր էին տածում, թե Ռուսաստանը որևէ կերպ կթեթևացնի Ադրբեջանի ու Վրաստանի ճնշումներն ու թշնամանքը:

3. Կչեզոքացնի Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետությանը մշտապես սպառնացող վտանգը:

4. Շրջափակման մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունը ակնկալում էր Ռուսաստանից ներկրել հացահատիկ, զենք, զինամթերք և կենսականորեն անհրաժեշտ

այլ ապրանքներ:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտահոգված էր Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից, գերմանական ու ավստրո-հունգարական գերությունից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաներին ու զինվորներին, որոնք կուտակվել էին Ռուսաստանի հարավում՝ հայրենիք տեղափոխելու ուղիներ որոնելով:

6. Կարևորվում էր նաև Խորհրդային Ռուսաստանի և հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի և Հյուսիսային Կովկասի հայ համայնքներին օժանդակելու խնդիրը, ինչպես նաև օգտագործելու նրանց մտավոր ուժը և նյութական միջոցները հայրենիքի համար: Հայաստանի Հանրապետության և Կուբանի երկրամասի, Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» միջև ապրանքափոխանակություն իրականացնելը անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներից էր: Հայաստանի կառավարությունը նախատեսում էր Եկատերինոդար ուղարկել հայկական կոնյակ, սպիրտ, բամբակ, կաշի և այլ ապրանքներ, իսկ Եկատերինոդարից ստանալ հաց, սննդամթերք, զենք և այլ անհրաժեշտ ապրանքներ:

7. Ռուսաստանի հետ կապերի հաստատման կարևոր պատճառներից մեկը, անշուշտ, գաղթականության՝ հրատապ և հիմնավոր լուծում պահանջող խնդիրն էր:

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական սպանդից փրկված հայ ժողովրդի մի հատվածը հարկադրված թողել էր իր հայրենիքը և հաստատվել մերձակա ու հեռավոր երկրներում, այդ թվում՝ նաև Ռուսաստանում: Խորհրդային Ռոսաստանի տարբեր շրջաններում կուտակվել էին շուրջ 30 հազար հայ գաղթականներ[1]: Իսկ միայն

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 458:

Ռուսաստանի հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի երկրամասերի և Հյուսիսային Կովկասի մի շարք բնակավայրերում հանգրվանել էին 100 հազարից ավելի հայ գաղթականներ ու մի քանի հազար նախկին ռազմագերիներ[1], որոնք գտնվում էին միանգամայն ծանր ու անօգնական վիճակում: Այդ ողբերգական իրավիճակի ականատես Ռուբեն Դարբինյանը իր հուշերում գրում է, թե Արևմտյան Հայաստանից Առաջին աշխարհամարտի տարիներին հարավային Ռուսաստան և Հյուսիսային Կովկաս գաղթած հայերը այնքան շատ էին, որ ամենուր լսվում էր մայրենի լեզուն. «***երբէմն կթվէր, թէ կը գտնուէիր ոչ թէ Ռուսաստանի, այլ Հայաստանի մեջ***»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Եթե 1917 թվականին Հյուսիսային Կովկասում հայ գաղթականների թիվը 70 հազար էր[3], ապա 1919 թ. հունվարին այն կազմեց շուրջ 100 հազար[4]:

«Հորիզոն» պարբերականը, անդրադառնալով գաղթականության ծանր ու ողբերգական վիճակին, տեղեկացնում է, որ միայն Եկատերինոդարում ապաստանած շուրջ 8 հազար, Վլադիկավկազում՝ 10 հազար և Արմավիրում՝ 18 հազար հայ գաղթականներ անօթևան են և անօգնական, մնացել են ամբողջովին բաց երկնքի տակ, և ամեն օր սովից ու հիվանդություններից մահանում են տասնյակ մարդիկ[5]: Դոնի

[1] Տե՛ս Архив внешней политики Российской Федерации (այսուհետև՝ АВП РФ), ф. 148, оп. 3, номер папка №2, д. 14, л. 3, 4, 5, ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 73, մաս I, թ. 129, ֆ. 198, g. 1, գ. 12, թ. 5, ֆ. 205, g. 1, գ. 544, թ. 3, գ. 555, մաս I, թ. 144, ֆ. 200, g. 1, գ. 498, թ. 23, «Աշխատավոր», 20 մայիսի 1919 թ., Թիֆլիս, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, թիվ 10, օգոստոս, էջ 79, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, թիվ 11, սեպտեմբեր, էջ 133:
[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1960, թիվ 8, օգոստոս, էջ 25-26:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 498, թ. 23:
[4] Տե՛ս ***Հակոբյան Հ.***, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Երևան, 2002, էջ 214:
[5] Տե՛ս «Հորիզոն» լրագիր, 21, 25 օգոստոսի 1918 թ., Թիֆլիս, նույնը, 4, 13, 24, 29 սեպտեմբերի, 1918 թ. Թիֆլիս:

և Հյուսիսային Կովկասի հայ զինվորականների կոմիսար Ս. Գրիգորյանը, Կիևից Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Ջամոյանը[1] և այդ շրջանների հայ ազգային կազմակերպությունների մի շարք ներկայացուցիչներ տագնապով դիմում են Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել գաղթականներին, ռազմագերիներին օգնելու և նրանց՝ հայրենիք վերադարձնելու համար: Ս. Գրիգորյանը 1918 թ. հունիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին ուղղված նամակում տեղեկացնում է, որ «Չափից դուրս վատ վիճակի մէջ են գտնուում գաղթականները: Շէնքերի բացակայութիւն, հացի, ջրի պակասը, լաւ կազմակերպողներ չլինելը և մանաւանդ տեղական իշխանութիւնների և ռուս ժողովրդի անբարեհաճ վերաբերմունքը ստեղծում են սոսկալի ծանր վիճակ հայ գաղթականների համար: Շատ յաճախ հազարաւոր մարդիկ թափուած են մնում որևէ երկրոդական կայարանում, ուր ոչ հաց է գտնուում, ոչ ջուր և տեղական իշխանութիւնը չի թողնում նրանց գնալու իրենց նշանակուած տեղը: ...Կան սովամահութեան դէպքեր: Դրանց մի մասը մինչև օրս թափուած են մնում... կայարաններում:

Սոսկալի պրովոկացիա է սկսված գաղթականների դէմ: Հալածում են, անուանելով նրանց աւտօնօմիստներ և ռուսներին Կովկասում թալանողներ, կոտորողներ և նրանց այնտեղից դուրս վռնդողներ:

Տեղական հայ կոմիտեները անկարող են գաղթականական գործը կառավարել, չունեն լաւ ոյժեր և կազմակերպողներ:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 73, մաս I, թ. 128-129, գ. 210, թ. 8, «Աշխատավոր» լրագիր, 20 մայիսի 1919 թ., Թիֆլիս:

Հարկաւոր է միջոցներ ձեռք առնել, քանի ուշ չէ»[1]:

Ծանր էր ու աղետալի հայ գաղթականների ու ռազմագերիների վիճակը հատկապես այն վայրերում, որտեղ չկային ազգային կազմակերպություններ կամ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ:

Բազմաթիվ վավերագրերը և նյութերը հաստատում են Հայաստանի Հանրապետության գոյության առաջին ամիսներին Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի և կառավարության՝ Ռուսաստանի հակամետ քաղաքական կողմնորոշում հետապնդող պետական կազմավորումների հանդեպ տարվող գաղտնի ու զգուշավոր քաղաքականության մասին:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 40-42, 48-49, «Հորիզոն» լրագիր, 21 օգոստոսի 1918 թ., Թիֆլիս:

3. Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության փորձերը

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի անկախության առաջին ամիսներին երկրի համար ստեղծված ներքին և արտաքին ծայրաստիճան աննպաստ պայմաններում Հայաստանի Հանրապետությունը, հարկադրաբար խախտելով 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում ստորագրած պարտավորագիրը և հունիսի 4-ի պայմանագրի կետերը, խիստ գաղտնի և զգուշորեն փորձում էր ուղիներ որոնել հարաբերություններ հաստատելու Ռուսաստանի թե՛ խորհրդային և թե՛ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ:

Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր ճանաչվել Խորհրդային Ռուսաստանի կողմից իբրև անկախ պետություն, ապահովել երկու երկրների բարեկամական հարաբերությունները և օգտագործել նրանց հնարավորությունները մի շարք հրատապ խնդիրներ լուծելու համար: Այդ կապակցությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «...երկութիւն չպիտի համարել այն երեւոյթը, որ երբ Դենիկինի և Կոլչակի մօտ փորձ կը լինէին բարեկամութեան, նոյն փորձերը միաժամանակ կը կատարուէին բոլշեւիկների հետ: Սա բխում էր ժամանակի իրականութիւնից. Լենինը նոյնքան հաւանականութիւն ունէր Ռոսիոյ տէրը դառնալու, որքան Կոլչակ կամ Դենիկին: Իսկ մեր նպատակը լինելով, որքան այսօրուան օգուտը, նոյնքան և վաղուանը հետապնդել, բնականօրեն պիտի փորձէինք հեռաւոր Մոսկովեան Լենինների հետ մի լեզու գտնել եւ ապահովել, Ռուսաստանի կողմից, մեր այսօրվան և վաղուան անկախութիւնը[1]»:

Այդ նպատակով երկրի անկախացման սկզբնական

[1] *Ռուբէն*, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 262:

շրջանում Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային երկրամասեր ու քաղաքաներ էին գաղտնի գործուղվում հայկական տարբեր պատվիրակություններ ու սուրհանդակներ՝ Հայաստանի Հանրապետությանն առնչվող բազմաթիվ խնդիրներ լուծելու նպատակով:

Իրողություն է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժերի համար բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սակայն նրանք ուղիներ էին որոնում Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական, բնականոն հարաբերություններ հաստատելու:

Հայաստանի անկախացման առաջին օրերին Մոսկվայում էին գտնվում Ռուբեն Դարբինյանը* (Արտաշես Չիլինգարյան), Սարգիս Հակոբյանը (Լիպարիտ Նազարյան) և բժիշկ Հակոբ Զավրիևը* (Մոսկվայում էր դեռևս 1918 թ. մայիսի 27-ից[1]), որոնք փորձում էին կանոնավոր հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ, իրավաբանորեն՝ de jure, ճանաչել տալ Հայաստանի Հանրապետությունը՝ իբրև անկախ պետություն, և օգտագործել նրա հնարավորությունները բազմաչարչար հայ ժողովրդին օգնելու համար: Սակայն Ռուսաստանի խորհրդային իշխանությունների հետ անմիջական կապեր հաստատելու հնարավորությունները սահմանափակ էին, և բանակցությունները շոշափելի դրական արդյունք չտվեցին: Այդ կապակցությամբ պատվիրակության անդամ Ս. Հակոբյանը գրում է. «Թիւրքերը մեկ կողմէն երկաթէ օղակի մէջ կառնէին Հայաստանը, իսկ միւս կողմէն զարհուրելի հարուած մը կը պատրաստէին Բագուի դէմ: Հայաստանը դուրսէն օգնութիւն ստանալու ոչ մէկ յոյս ունէր, մինչ գիշատիչ դրացիները իր ծաւտուած մարմինը անդամատելու ծրագիրներ կորոճային:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 35, թ. 15:

Այս պայմաններու մէջ նայուածքը ակամայ պիտի ուղղուէր նորէն դեպի Մոսկվա:

Խորհրդային իշխանութեան հետ կանոնաւոր յարաբերութիւններ մշակելու մեր առաջին փորձին ձախողումը չյուսահատեցուց: Նկատի ունենալով, որ հայ ազդեցիկ կոմունիստներէն Սահակ Տէր-Գաբրիէլեան իր շատ մը կուսակիցներու պէս անտարբեր չէր հայութեան սպառնացող վտանգին հանդէպ ու, միևնոյն ատէն, բաւական մօտ էր Լենինին, խնդրեցինք, որ ջանայ յաջողեցնել մեր այնքան փափագած խորհրդակցութիւնը: Տէր-Գաբրիէլեանի դիմումին վրա Լենին կը հաւանի կազմել երկու կուսակցութեանց ներկայացուցիչներէն յանձնախումբ մը և ինքը կանչանէ անոր երեք բոլշևիկ անդամները, այն է՝ Կամենև (իբրև յանձնախումբի նախագահ), Աւանեսով և Տէր-Գաբրիէլեան: Դաշնակցութեան կողմէն ընտրուեցան՝ Զաւրեան, Չիլինգարեան և ես:

Առաջին նիստը նշանակուած էր օգոստոսի 27 -ին Աւանէսովի մօտ: Որոշուած ժամին մենք երեքս գնացինք հոն, երկար սպասեցինք, բայց բոլշևիկներէն ոչ ոք չեկաւ: Նոյն գիշերը Զաւրեան և ես ձերբակալուեցանք... Ամիսներ յետո, երբ արդէն ելած էի բանտէն, կարևոր բոլշևիկ մը վրդովումով կը պատմէր ինձի, թէ Աւանէսովը և իր արբանեակները յաջողած էին ոչ միայն անգամ մը ևս վիժեցնել խորհրդակցութիւնը, այլ և մեզ ձերբակալելու արտօնութիւնը ստանալ:

Մեր դէմ գործ դրուած այս բացառիկ միջոցի ձևական առիթը հետևեալն էր. երբ անգլիացիները 1918 -ի ամառը Բագուի մէջ ձերբակալեցին Ս. Շահումեանը և իր ընկերները, Մոսկվայի մէջ կարգ մը բոլշևիկներ պահանջեցին իբրև պատանդ առնել հոն գտնուող ծանօթ մենշևիկները, էսերները և դաշնակցականները, վասնզի այդ կուսակցութեանց ներկայացուցիչներէն կազմուած Բագուի կառավարութիւնը կը նպաստէր եղեր անգլիացիներուն: Այս պահանջը փութաց

կատարել միայն «հայկական կոմիսարիատը» ու ձերբակալել տեղաւ դաշնակցականները[1]:

Մենք մնացինք բանտը մինչև 1919 թ. մարտ ամիսը, միշտ գնդակահարման սպառնալիքի տակ: Ապա մէկ ամբողջ տարի ալ պահեցին մեզ Մոսկվայի մէջ ու միայն 1920-ի գարնան իրաւունք տուին մեկնելու արտասահման: Դժբախտաբար այդ իրաւունքէն կարողացայ օգտուել միայն ես, իսկ հէք Զաւրեանը, որը կաշխատէր հիւանդանոցի մը մեջ, վարակվեցաւ բծաւոր տիֆէ ու մեռաւ»[2]:

Խորհրդային իշխանության ներկայացուցիչների և Հայաստանի Հանրապետության պատվիրակների միջև բանակցություններ էին ընթանում նաև Բեռլինում: 1918 թ. օգոստոսի 19 -ին Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդին և կառավարությանը ուղղված նամակում հայկական պատվիրակության ղեկավար Հ. Օհանջանյանը գրում է, որ «...անկախությանը (Հայաստանի Հանրապետության- Գ.Պ.) հակառակ է Ռուսաստանը»[3]: Նույն խնդրով 1918 թ. հոկտեմբերի 1 -ին Հ. Օհանջանյանը և Գ. Ջամոյանը Բեռլինում հանդիպում ունեցան խորհրդային դիվանագետ Ադոլֆ Իոֆֆեի հետ*, որը նույնպես ավարտվեց անարդյունք. «...Մենք Ձեզ՝ հայերիդ, - ասում է Իոֆֆեն, - փրկում ենք կոտորածից և ոչնչանալուց և հիմա սպասում ենք, որ դուք խոսք չեք բարձրացնի անկախության մասին, ոչ էլ զանազան դրամներ կպահանջեք մեզնից, իբրև մի առանձին մարմին: Երբ ես

[1] Շաբաթներ անց հայտնի դարձավ, որ խորհրդային իշխանությունը հանիրավի ձերբակալել էր Հակոբ Զավրիևին, Սարգիս Հակոբյանին (Լիպարիտ Նազարյանին) և շատ ուրիշ հայ ազգայնականների: ՀՅԴ կուսակցությունը որևէ առնչություն չուներ Բաքվի կոմունայի անկման և 26 կոմիսարների ձերբակալման հետ: Հայկական գործերի կոմիսարի տեղակալ, բանաստեղծ Վահան Տերյանի միջամտությունից հետո միայն նրանք մեկ տարի անց ազատվեցին բանտից: Մանրամասն տե՛ս՝ ***Յովհաննիսյան Ռիչարդ***, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, էջ 432-437:

[2] Տե՛ս «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, № 8-9, 1928 օգոստոս-սեպտեմբեր, էջ 233:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 135, թ. 6:

նրան ասացի, - գրում է Հ. Օհանջանյանը, - որ ստացել եմ առաջարկություն արտաքին գործոց նախարարությունից բողոքելու այն բանի դեմ, որ Ռուս[աստանը] մեր անկախությունը չի ընդունում – ուղղակի կատաղեց և փրփուրը բերանին սկսեց ճառախոսել, որ մենք իրենց օգնելու փոխարեն՝ Հայաստանը փրկել տաճիկների կոտորածից, մտածում ենք անկախության մասին և մտածում ենք մեր դասակարգային մանր բուրժուական շահերը ապահովել հայ բանվորության և աշխատ[ավոր] գյուղացիության հանդեպ և այլն և այլն: Սկսվեց երկուս և կես ժամվա տաք վիճաբանություն, որից կարելի է գալ այն եզրակացության, որ այդ հաստագլուխներին ոչինչ չի կարելի հասկացնել և նրանք անկախություն ընդունելու մասին, առանց դրսի ազդեցության, չեն էլ մտածի երբեք: ...Դուրս եկանք ոչինչ չը ստացած և նույնիսկ մի բան էլ մենք պարտք մնացինք, որ խանգարում ենք իոֆֆեներին փրկել Հայաստանը Տաճկաստանի ճանկերից»[1]: Այդ բանակցությունները նույնպես չտվեցին դրական արդյունք. Խորհրդային Ռուսաստանը չճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և փաստորեն մերժեց նրա հետ հարաբերություններ հաստատելու փորձը, որ ձեռնարկել էր հայկական կողմը:

Վերը բերված վավերագրերը և նյութերը հերքում են խորհրդային շրջանի մի շարք հեղինակների այն կարծիքը, թե Խորհրդային Ռուսաստանի հետ մերձենալու համար Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը գործնական քայլեր չի կատարել:

Ավելին, նրանք Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էին որպես միջազգային իմպերիալիզմի գործա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 73, տե՛ս նաև 1918 թ. հոկտեմբերի 13 -ին Կիևից Գ. Ջամոյանի նամակը՝ ուղղված Թիֆլիս՝ Արշակ Ջամալյանին, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 68:

կալ, իսկ Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ ունեցած կապը դիտում էին Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարի տեսանկյունից: Ավելորդ է անգամ անդրադառնալ այն խնդրին, որ Հայաստանի Հանրապետությունը չի մասնակցել Խորհրդային Ռուսաստանի դեմ մղվող պայքարին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեռ անկախության առաջին օրերին որոշում էր ընդունել պահպանել չեզոքություն բոլշևիկների և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների միջև մղվող պայքարում[1]: Որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդպիսի դիրքորոշում ուներ խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, հաստատված է բազմաթիվ փաստերով: Այսպես, օրինակ, 1918 թ. նոյեմբերի վերջին Երևանում գնդապետ Լեսլին հանձնեց գեներալ Ա. Դրագոմիրովի նոյեմբերի 8-ի պաշտոնական նամակը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին:

Այս նամակում գեներալ Ա. Դրագոմիրովը Հայաստանի Հանրապետությունից պահանջում էր պատվիրակություն ուղարկել Ռումինիայի Յասսի քաղաքում նոյեմբերի 16 -ին կայանալիք խորհրդակցությանը մասնակցելու համար, որտեղ քննարկվելու էր «... Ռուսաստանի շահերի պաշտպանությունը»[2] հարցը: Հայաստանի կառավարությունը այս դեպքում ևս ցուցաբերեց խիստ զգուշավորություն: Անհրաժեշտ էր նախ՝ հստակեցնել հրավիրվող խորհրդակցությունում քննարկվելիք հարցերի նպատակը և ապա Հայաստանի Հանրապետության մասնակցության նպատակահարմարությունը:

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 120, թ. 117:
[2] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 199.

Մինչև Յասսիի խորհրդակցությանը մասնակցելու հրավեր ստանալը նման առաջարկություն էր արել Կուբանի երկրամասի կառավարության նախագահ Լ. Բիչը: Ուկրաինայի Կենտրոնական ռադային կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի անդամ կապիտան Աշոտ Տոնյանցը 1918 թ. հոկտեմբերի 13 -ին Գ. Ջամոյանի հանձնարարականով Երևան մեկնելիս[1] հոկտեմբերի 20 -ին Եկատերինոդարում հանդիպում է Կուբանի երկրամասի կառավարության նախագահ Լ. Բիչին, քննարկում 1918 թ. նոյեմբերին Ռուսաստանի հարավի և ինքնավար մարզերի ապագա կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության մասնակցության հարցը: 1918 թ. նոյեմբերի 7 -ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված պաշտոնական գրության մեջ Ա. Տոնյանցը գրում է. «Պարոն Բիչը իմանալով այն մասին, որ ես ուղևորվում եմ Երևան, խնդրեց հայտնել Հայաստանի կառավարությանը, որ Կուբանը չափազանց կցանկանար տեսնել Հայաստանի ներկայացուցչին Ռուսաստանի հարավի ինքնավար մասերի ներկայացուցիչների ապագա կոնֆերանսում: Այդ կոնֆերանսի անհրաժեշտության և նրա խնդիրների մասին, պարոն Բիչի ասելով, տեղեկացված են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունները»[2]:

Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Ա. Ջամալյանի միջոցով պարզում է, որ հրավիրվող կոնֆերանսի գլխավոր նպատակն էր «*ծավալել պայքար բոլշևիզմի դեմ*»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չհամարեց պատվի-

[1] Տե՛ս *Պետրոսյան Գ.*, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918 – 1920 թթ.), Երևան, 2002, էջ 34:
[2] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 154, թ. 10:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 154, թ. 38, g. 2, գ. 24, թ. 5, ֆ. 276, g. 1, գ. 10, թ. 57:

ռակություն գործուղել Եկատերինոդար, որովհետև դա չէր բխում հանրապետության արտաքին քաղաքական շահերից, ավելին՝ բուն Հայաստանի Հանրապետությունում բոլշևիզմը թույլ էր և սպառնալիք չէր երկրի անվտանգությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնպահ մնաց նաև Յասսիում հրավիրվող խորհրդակցությանը Հայաստանի պատվիրակության մասնակցության հարցում: Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Յասսիում հրավիրվեց խորհրդակցություն Ռուսաստանի հակախորհրդային ուժերի և Համաձայնության պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում պետք է քննարկվեր խորհրդային իշխանության դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու հարցը, ու հստակեցվեին պայքարի հետագա ուղիները[1]:

Յասսիի խորհրդակցությանը մասնակցում էին Ռուսական նախկին կայսրության անվանի պետական, քաղաքական գործիչներ Պ. Միլյուկովը, Ի. Նովիկովը, Ն. Ներատովը, Ա. Գուչկովը, Ն. Խոմյակովը, Ա. Տիտովը, Ս. Տրետյակովը, Վ. Շուլգինը, Մոսկվայի և Կիևի նախկին քաղաքագլուխներ Ռուդնևը և Դեմչենկոն, թվով 50 մարդ[2]:

Յասսիի խորհրդակցությունում քննարկվող հարցերի և այդ խորհրդակցությանը Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցության անհրաժեշտությանն է անդրադառնում Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Ջամոյանը: 1918 թ. նոյեմբերի 14-ին արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին ուղղված նամակ-զեկույցում նա գրում է. «...Ներկայումս Յասսի քաղաքը դարձել է Համաձայնության երկրների դիվանագիտական գործունեության կենտրոն:

[1] Տե՛ս *Милюков П.В.*, Воспоминания, Москва,1991, с.7:
[2] Տե՛ս РГА СПИ, ф. 71, оп. 34, д. 1839, л. 156:

Յասսիում կայացան մի շարք խորհրդաժողովներ, որոնց մասնակցում էին ռուս հայտնի հասարակական գործիչներ, ինչպես նաև Կամավորական բանակի ներկայացուցիչներ: Վերջիններիս Համաձայնության երկրները խոստացել են մեծ օգնություն ցուցաբերել: Համաձայնության երկրները որոշել են վերականգնել Ռուսաստանը իր նախկին սահմաններում՝ բացառությամբ Լեհաստանի և Ֆինլանդիայի: Ռուսաստանի պետական կառավարման վերջնական ձևը կորոշի դեմոկրատական սկզբունքներով ընտրված Սահմանադիր ժողովը: Ռուսաստանից բոլշևիզմի վտարման համար Համաձայնության երկրները որոշել են նրա տարածքում ձևավորված բոլոր բանակներից ստեղծել Կամավորական բանակի հրամանատարությամբ գործող մեկ ճակատ:

Հստակորեն զգացվում է, որ Ռուսաստանից բոլշևիզմի վտարումից հետո դեմոկրատիայի և միապետության միջև համառ պայքարը կշարունակվի և այն չի սահմանափակվի հրապարակախոսությամբ, քանի որ երկու կողմերն էլ ունեն իրական ուժեր՝ տարբեր բանակներ, ջոկատներ և այլն: Երևում է, որ Ռուսաստանի պետական կյանքում ցնցումները դեռ երկար կշարունակվեն: Ներկայումս Յասսիում լուծում է ստանում Ռուսաստանի վերածնման հարցը, և դրա հետ կապված որոշվում է նաև Անդրկովկասի ճակատագիրը: Ահա թե ինչու մեր շահերի պաշտպանության և Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշումը ճշտելու համար մենք Յասսիում պետք է անպայման լիազոր ներկայացուցիչներ ունենանք:

...Ավարտելով իմ զեկույցը, խնդրում եմ շտապ պատվիրակություն ուղարկել Ուկրաինա՝ Յասսի այցելելու իրավունքներով, եթե մինչ այդ դիվանագիտական խորհրդակցության կենտրոնը չտեղափոխվի մեկ այլ վայր»[1]:

Գ. Ջամոյանի նամակ-զեկույցից հստակ երևում է, որ

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 52, թթ. 58 - 59:

հրավիրվող խորհրդակցությունում լուծվելու էր հակախորհրդային ուժերի ընդհանուր ճակատի ստեղծման խնդիրը, որին ակտիվ աջակցելու էին Համաձայնության պետությունները և իրականացվելու էր «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը. Կայսրությունից անջատված Անդրկովկասի անկախ հանրապետությունները վերամիավորվելու էին Ռուսաստանին: Այնուհետև իր զեկույցում Գ. Ջամոյանը տեղեկացնում է նոյեմբերի 12-ին Եկատերինոդարից վերադարձած Պ. Միլյուկովի հետ իր հանդիպման ու զրույցի մասին, որի ընթացքում Պ. Միլյուկովը ասել էր. «Այս պատերազմում հայ ժողովուրդը ապացուցեց, որ Անդրկովկասի ազգություններից միակն է, որ պետական գիտակցություն և կայուն ոգի ունի: Պետք է վերականգնվեն 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ եղած Ռուսաստանի սահմանները: Ցանկալի է վերականգնել միացյալ Անդրկովկասը, որպեսզի հայերը ազդեն Անդրկովկասի մյուս բաղկացուցիչ մասերի՝ Վրաստանի և Ադրբեջանի վրա: Վերջին իրադարձությունները ապացուցեցին, որ վրացիներին և մահմեդականներին վստահել չի կարելի: Ինքնավար, միացյալ Անդրկովկասի ստեղծումը հայերի համար նպաստավոր է նաև այն պատճառով, որ այդ դեպքում Թիֆլիսը կլինի հայերի անմիջական ազդեցության ներքո: Վրաստանի նկատմամբ Կամավորական բանակի վերաբերմունքը խիստ բացասական է: Վրացական պետությունը ստեղծվել է գերմանական քաղաքականության կողմից և պետք է լուծարվի:

Կոնգրեսում Ռուսաստանը պետք է հանդես գա միացյալ պատվիրակությամբ և բոլոր միջոցներով պետք է խոչընդոտի Ռուսաստանի առանձնացած մասերին իրենց ներկայացուցիչներն ունենալու հարցում: Եվս մեկ անգամ հայտարարում եմ,- ասում էր Միլյուկովը,- որ Հայաստանի նվիրվածությունը Ռուսաստանին երբեք չի մոռացվի և ես անձամբ ամենուր կպաշտպանեմ հայ ժողովրդի շահերը»[1]:

Գ. Ջամոյանը 1919 թ. հունվարի 23-ին Ս. Տիգրանյանին ուղղված նամակ-զեկույցում տեղեկացնում է, որ առանց անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունների մասնակցության՝ ռուս պատգամավորությունը, Յասսիի խորհրդակցությունում 1918 թ. նոյեմբերի 18-ին քննելով Կովկասի հարցը, հայտնել է հետևյալ կարծիքը. «Առանձին տեղ է բռնում հայկական հարցը, որի մէջ Ռուսաստանը չի կարող իւր ձայնն չունենալ (Միլյուկովի կարծիքը): Պատգամաւորութիւնը անհրաժեշտ է գտել բացասական վերաբերմունք ցոյց տալ դէպի Վրաստանի պահանջները և հարց չբարձրացնել հայերին Ռուսաստանին միացնելու մասին»[2]:

Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց նաև մասնակցել Մարմարա ծովի՝ Իշխանաց կղզիներում (1919 թ. փետրվար)[3], Վարշավայում (1919 թ. դեկտեմբեր)[4] և Եկատերինոդարում (1918 թ. նոյեմբեր, 1919 թ. դեկտեմբեր) հրավիրված վեհաժողովներին, որովհետև օրակարգում քննարկվում էին բոլշևիզմի դեմ միասնական ճակատի ստեղծման և միասնական Ռուսաստանի վերակերտման հարցերը:

Այսպիսով, արխիվային բազմաթիվ վավերագրերը և նյութերը հաստատում են, որ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում թեև Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու կառավարության դիվանագիտական ջանքերը, ցավոք, հաջողություն չունեցան, այդուհանդերձ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ելնելով երկրի արտաքին քաղաքական շահերից, չմասնակցեց խորհրդային Ռուսաստանի դեմ մղվող պայքարին:

---

[1] Նույն տեղում, թ. 59:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս 1, թթ. 118-119, 148, *Պետրոսյան Գ.*, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), Երևան, 2004, էջ 85:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 80, գ. 193, մաս I, թ. 47-50:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 440, թ. 2, 105, ֆ. 276, ց. 1, գ. 196, թ. 121:

4. Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու առաջին քայլերը: Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչը Երևանում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը լուրջ ջանքեր գործադրեց՝ Կուբանում հակախորհրդային երկրամասային կառավարության և Ռուսաստանի հարավի նոր ձևավորված զինված ուժերի հրամանատարության հետ կապեր հաստատելու համար՝ ակնկալելով նրանց աջակցությունը հայ ռազմագերիներին և գաղթականներին հայրենիք տեղափոխելու, հացի, սննդամթերքի, ռազմամթերքի և այլ խնդիրների լուծման գործում:

Դեռևս 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման օրերին Պետրոգրադից փախուստի դիմած և Նովոչերկասկում հաստատված գեներալ Միխայիլ Ալեքսեևը* անմիջապես կազմակերպեց հակախորհրդային ուղղվածության զինված ուժեր, որ պաշտոնապես կոչվեց Կամավորական բանակ, որին ակտիվորեն աջակցեց Դոնի զինվորական կառավարության ղեկավար, ատաման Կալեդինը՝ միասնական ուժերով բոլշևիկներին հարվածելու համար[1]: Կամավորական բանակը բոլշևիզմի դեմ պայքարի հավաքատեղի ընտրեց Դոնը, որտեղից հարձակվելու էր Կուբանի խորհրդային իշխանության վրա: 1918 թ. հունիսին Կուբանի դեմ Կամավորական բանակի սկսած 2-րդ արշավանքն ավարտվեց հաղթանակով. օգոստոսի 3-ին գրավեցին Եկատերինոդարը, որը դարձավ հակախորհրդային Կամավորական բանակի հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» մայրաքաղաքը[1], ինչպես նաև Կամավորական բանակի քաղաքական, տնտեսական, ռազմական ու դիվանագիտական գործունեության կենտրոնը: Օգոստոսի 18-ին գեներալ Մ. Ալեքսեևը հաստատեց Վ. Շուլգինի* կազմած «Հատուկ խորհրդակցության» կանոնադրությունը:

«Հատուկ խորհրդակցության» նպատակն էր ամբողջությամբ վերականգնել Ռուսաստանից անջատված անկախ պետական կազմավորումների նախկին կարգավիճակը, պետական միասնական կառավարումը և տեղական մարմինների գործունեության ենթակայությունը Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցությանը»[2]: «Հատուկ խորհրդակցության» նախագահ, գեներալ Մ. Ալեքսեևի տեղակալներ նշանակվեցին գեներալներ Ա. Դենիկինը, Ա. Դրագոմիրովը*, Ա. Լուկոմսկին*: Փաստորեն Ռուսաստանի հարավում ստեղծվեց Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցությունը»՝ որպես նրա քաղաքական մարմին: Վերջինս կատարում էր թե՛ օրենսդիր մարմնի, թե՛ գործադիր իշխանության գործառույթներ՝ ներառելով արտաքին և ներքին գործերի, արդարադատության, ֆինանսների, ճանապարհաշինության, առևտրի ու արդյունաբերության և այլ նախարարություններ[3]: 1918 թ. հոկտեմբերի 8-ին մահացավ գեներալ Մ. Ալեքսեևը: Դրանից հետո՝ հոկտեմբերի 11-ին, Ա. Դենիկինը վերակազմավորեց Կամավորական բանակը և ընդունեց գլխավոր հրամանատարի պաշտոնը՝ իր ձեռքում կենտրոնացնելով ռազմական և վարչաքաղաքացիական իշխանությունը: «Հատուկ խորհրդակցության» նախագահ նշանակվեց գեներալ Ա. Դրագոմիրովը՝ ենթակայությամբ գլխավոր

[1] Տե՛ս *Трукан Г. А.*, Антибольшевистские правительства России, Москва, 2000, с. 124:

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 19, л. 2:
[2] *Трукан Г. А.*, указ. раб., с. 132:
[3] Նույն տեղում, с. 134-137:

հրամանատար Ա. Դենիկինի: Դոնի, Կուբանի երկրամասերի քաղաքացիական և ռազմական իշխանությունները կենտրոնացնելով իր ձեռքում՝ գեներալ Ա.Դենիկինը ձգտում էր միասնական ճակատով պայքար ծավալել խորհրդային իշխանության դեմ: 1918 թ. դեկտեմբերի 26-ին նա հռչակվեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար[1], իսկ 1919 թ. հունվարի 1-ին Կամավորական բանակի հրամանատարությունը հանձնվեց գեներալ Պ. Վրանգելին*:

Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» գլխավոր նպատակը հակախորհրդային ուժերի միավորումն էր, իսկ քաղաքական կարգախոսը՝ «Անբաժանելի միացյալ Ռուսաստանի» վերականգնումը 1914 թ. օգոստոսի 1-ի սահմաններով:

Գեներալ Ա. Դրագոմիրովը 1918 թ. դեկտեմբերի վերջին ներկայացնում է «Հատուկ խորհրդակցության» գործունեության ծրագիրը.

1. Մշակել Կամավորական բանակի ազդեցության տակ գտնվող տարածքներում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերականգնմանը վերաբերող հարցերը:

2. Ընդունել վերոհիշյալ տարածքների կառավարմանն ու Ռուսական կայսրության վերականգնմանն օժանդակող ժամանակավոր օրենքներ:

3. Գնահատելով նախկին Ռուսական կայսրության բոլոր նահանգներում տիրող իրավիճակը և նրանց կառավարությունների ու քաղաքական կուսակցությունների հետ հարաբերություններ հաստատելով՝ կազմակերպել մեծ Ռուսաստանի վերականգնմանն ուղղված համատեղ աշխատանքներ:

4. Հարաբերություններ հաստատել Համաձայնության երկրների ներկայացուցիչների հետ և մշակել Կամավորական բանակի հիմնական նպատակների իրագործմանը նպաստող գործողությունների ծրագիր:

5. Պետության կառուցման գործընթացի մեջ ներգրավել հայտնի պետական գործիչների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, առևտրի, արդյունաբերության և ֆինանսների ոլորտների ներկայացուցիչների[1]:

«Հատուկ խորհրդակցության» կազմում բաժնի պետեր նշանակվեցին նախկին Ռուսական կայսրության արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովը՝ դիվանագիտության բնագավառ, Գ. Գեյմանը՝ ֆինանսական, Վ. Լեբեդևը՝ առևտրի, արդյունաբերության և մատակարարման, Է. Շուբերսկին՝ ճանապարհների և հաղորդակցության, գեներալ Ա. Մակարենկոն՝ արդարադատության, գեներալ Ա. Լուկոմսկին՝ ռազմածովային, Վ. Ստեպանովը՝ պետական վերահսկողության: Հրավիրեցին նաև պետական, քաղաքական մի շարք անվանի գործիչների՝ Վ. Մակլակովին (Լոնդոնում ժամանակավոր կառավարության նախկին դեսպան), Ա. Իզվոլսկուն (նախկին դեսպան Փարիզում), Ա. Նեստորովին, Վ. Շուլգինին, Մ. Վինավերին, Ն. Աստրովին, Պ. Նովգորոդցևին, Գ. Տրուբեցկոյին, Պ. Միլյուկովին* և շատ ուրիշների[2]:

1918 թ. նոյեմբերին Համաձայնության պետությունները սկսեցին հովանավորել գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակը, որը լուրջ սպառնալիք դարձավ բոլշևիկների համար[3]:

Կուբանի երկրամասի կառավարության և Կամավորա-

[1] ***Волков С.*** Белое движение, Энциклопедия гражданской войны - СПб, Москва, "Нева", 2003, с. 158:

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 198:
[2] Տե՛ս նույն տեղը:
[3] Трукан Г. А., указ. раб., с. 138:

կան բանակի գլխավոր հրամանատարության ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» միջև գոյություն ունեին ներքին տարաձայնություններ: Չնայած Կուբանի երկրամասի զինված ուժերը գտնվում էին գեներալ Ա. Դենիկինի ընդհանուր հրամանատարության տակ և համատեղ պայքարում էին բոլշևիզմի դեմ, սակայն Կուբանի երկրամասի կոզակությունը ձգտում էր անկախության[1]: Այդ առիթով ճիշտ է Ռուբեն Դարբինյանը՝ գրելով, թե «Կուբանցիք «ուկրայնական օրիենտացիա» ունէին և կը ձգտեն անկախութեան: Զոր. Դենիկինը, որ ռուս կայսերապաշտ մըն է և իրականի մէջ կը ձգտէր վերակագնել ցարական Ռուսաստանը ամբողջութեամբ, անհաշտ թշնամի էր Կուբանի նախագահի անկախութեան գաղափարին, բնականաբար: Ու թէև Կուբանի զորքը ենթակայ էր Զոր. Դենիկինի ընդհանուր հրամանատարութեան և Կամաւորական բանակի հետ միասին կկռվեր բոլշևիկներուն դէմ, բայց խուլ հակամարտություն կար Կուբանի և Զոր. Դենիկինի միջև: Կուբանը, թէև առերես բարեկամ էր անոր, բայց փաստօրեն սապոթաժի կենթարկեր անոր բոլոր ձեռնարկները»[2]:

* * *

Կուբանի երկրամասի կառավարության և Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարութանը կից «Հատուկ խորհրդակցության» վերաբերմունքը Անդրկովկասի անկախ հանրապետությունների նկատմամբ միանշանակ չէր: Առաջինը պաշտպանում էր Ֆեդերատիվ Ռուսաստանի տեսակետը և իր մերձավոր խնդիրն էր համա-

[1] Տե՛ս Россия антибольшевистская, из белогвардейских и эмигрантских архивов, Москва, 1995:
[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1960, հուլիս, էջ 37 - 38:

ռում Կովկասի բոլոր պետությունների միությունը, այդ թվում՝ նաև Ադրբեջանի՝ բոլշևիզմի դեմ միասնական ճակատ ստեղծելու համար[1]: Մինչդեռ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» դեմ էր Ռուսաստանի մասնատմանը և նպատակ ուներ միավորելու նրա բոլոր անջատված մասերը: Կամավորական բանակի հրամանատարությունը Ռուսաստանի պետական բոլոր նոր կազմավորումները դասակարգում էր՝ միայն ըստ միացյալ Ռուսաստանի գաղափարի նկատմամբ նրանց դրական կամ բացասական վերաբերմունքի և ռուսական պետության միավորմանը սատարելու հնարավորության ու կարողության: 1918 թ. նոյեմբերի 29 -ին Կուբանի երկրամասում Հայաստանի Հանրապետության տեղեկատվական բյուրոյի պետ Ա. Մալխազովի զեկույցում նշվում է. «Այդ տեսակետից Հայաստանը դիտվում է որպես անկասկած բարեկամական կազմավորում, որն առաջին իսկ հնարավորության դեպքում կգնա դեպի վերամիավորում, Վրաստանը, ի դեմս նրա կառավարության, համարվում է, անկասկած, թշնամական կազմավորում, իսկ Ադրբեջանը պետական միավոր չի համարվում, հաշվի առնելով պետական կազմավորման համար պատմական և ազգագրական հիմնավորման բացակայությունը, և այն համարվում է ավելի եկեղեցական, քան թե քաղաքական միասնություն»[2]:

Կամավորական բանակի վերաբերմունքը Անդրկովկասի նորաստեղծ անկախ հանրապետությունների նկատմամբ հստակ արտահայտվեց 1918 թ. նոյեմբերի 1 -ին գեներալ Ա. Դենիկինի ճառում, որը նա արտասանեց Կուբանի երկրամասային ռադայի հանդիսավոր նիստում[3]:

Ինչպես վերը նշվեց, Կամավորական բանակը չէր ըն-

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 12, թ. 16, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 203:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Отдельный оттискъ изъ N 63 газеты "Россия", 1918:

դունում ռուսական նախկին կայսրության կազմից անջատված անկախ պետությունների գոյությունը: Այդ խնդրի վերաբերյալ Գ. Չալխուշյանը վկայում է. «Կամավորական բանակը չէր ճանաչում սկզբունքով Հայաստանի Հանրապետությունը, դա պարզ էր բոլորիս համար: «Միասնական և անբաժանելի Ռուսաստանի» գաղափարը չէր կարող մարսել փոքր, անկախ հանրապետությունների գոյությունը երկրի նախկին սահմաններում: ...Չկար ոչ մի տարակուսանք, որ Կամավորական բանակը ցանկանում էր կենդանացնել հին, մեռած ցարական ռեժիմը և նրա կողքին չէին կարող բսնել, ապրել, զարգանալ մի նոր թոյլ, երիտասարդ հանրապետության ծիլերը»[1]: Այս առնչությամբ Կամավորական բանակը անբարյացակամորեն ընդունեց Հայաստանի Հանրապետության անկախության մասին Ռ. Բերբերյանի հոդվածները, որոնք 1918 թ. հուլիսի սկզբին հրապարակվեցին «Դոնսկայա Ռեչ» թերթում: Ռ. Բերբերյանն այդ իրողության վերաբերյալ գրում է. «Մի օր խմբագրատուն է գալիս զօրավար Դենիկինի աշխատակից, զինուորական դատախազ զօրավար Ռոմանովսկին եւ երկար խօսակցութիւն է ունենում խմբագրի եւ Բերբերեանի հետ: Ռուս զօրավարը հայտնում է նրանց, որ Կամաւորական բանակի գլխաւոր նշանաբանն է «Մէկ, մեծ եւ անբաժան Ռուսաստան» եւ յանձնարարում է զգոյշ լինել եւ թերթի մեջ շատ մեծ տեղ չտալ անկախութիւնների յայտարարման, օրինակ, ինչպէս վերջերս եղած է, Հայաստանի վերաբերեալ»[2]: Ռ. Բերբերյանը բացատրում է, որ թերթը պարտավոր է արձագանքել կատարված պատմական փաստերին: Հայաստանի Հանրապետության անկախությունը մի այդպիսի փաստ է: Ինչպե՞ս կարող է խմբագրությունը չտեղեկացնել այդ մասին տեղի հայությանը, մանավանդ որ այդ ազատությունը ձեռք է բերել հերոսական պայքարի շնորհիվ[1]: Գեներալ Ռոմանովսկին պատասխանում է. «Իմ մէջ կայ եւ զինուորականը եւ օրէնքի մարդը: Իբրև զինուորական ես ամենամանրամասն տեղեկութիւններ ունեմ, թե ինչպիսի *եզակի քաջութիւն* են ցոյց տուել հայ կամաւորական գնդերը Սարդարապատ եւ Ղարաքիլիսէ կոչուած վայրերում: Արտակարգ ոգեւորութեամբ, անտեսելով զոհողութիւնները՝ ջարդել ու յաղթել են գերազանցօրէն իրենցից շատ լավ զինուած թուրք զօրքերին... Իմ մէջ զինուորականը ասում է. ով իր քաջութեամբ եւ արիւնով ձեռք բերեց իր ազգի յաղթութիւնը, նա իրաւունք ունի իր ազգի անկախութեան: Բայց իբրեւ օրենքի մարդ, պէտք է ասեմ, որ առանց ռուս պետութեան հետ համաձայնութեան գալու, դուք չէք կարող միակողմանի որոշումներ տալ:

Խօսակցութեան վերջին, զօրավարը խնդրում է, որ այլազգիների անկախութեան հարցում, թերթը այսուհետեւ գործածէ հանգիստ լեզու եւ չգայթակղեցնող շեշտ ու դիրք»[2]: Հարկ չկա ապացուցելու, որ Կամավորական բանակը չէր ընդունում ռուսական նախկին կայսրության կազմից անջատված անկախ պետությունների գոյությունը, չէր ճանաչում նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այնուամենայնիվ, արտաքին աշխարհից ամբողջովին մեկուսացված նորանկախ Հայաստանի Հանրապետությունը փորձում էր ուղիներ որոնել Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու:

Կուսակցական ու պետական գործիչ Սիմոն Վրացյանը 1918 թ. հունիսի վերջին հատուկ առաքելությամբ Թիֆլիսից մեկնում է Ռուսաստանի տարբեր շրջաններ և մինչև հոկ-

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 295, թ. 30:
[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, հոկտեմբեր, էջ 87, նույնը, 1952, դեկտեմբեր, էջ 15:

[1] Տես նույն տեղը:
[2] Նույն տեղը:

տեմբերի վերջը լայն գործունեություն է ծավալում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետ կապ ստեղծելու համար, որը «...կարող էր անմիջական օգնություն հասցնել Հայաստանին»[1]: Նա բազմաթիվ հանդիպումներ է ունենում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հրամանատարական կազմի հետ և առանձնապես ջերմ ընդունելության է արժանանում գեներալ Մ. Ալեքսեևի կողմից, որի «վերաբերմունքը եղել է դեպի հայերը չափազանց բարեկամական»[2]: Սակայն Կամավորական բանակի հետ կապերի հաստատումը պայմանավորված էր բազմաթիվ դժվարությունների հաղթահարման հետ: 1919 թ. հոկտեմբերի 19 -ին Հ. 3. Դաշնակցության Կենտրոնական կոմիտեին ուղղված նամակում Ս. Վրացյանը գրում է. «Ազգային Խորհրդի որոշումով գնացել էի Կամաւորական Բանակի մօտ: Եղայ Սոչի, Եկատերինոդար, Ռոստով, Նոր Նախիջևան: Ամէն տեղ ընդունելութիւնը շատ լաւ էր, Կամաւորական բանակի մէջ ջերմ հետաքրքրութիւն կայ դէպի Հայաստանն ու հայերը և գործնական հնարաւորութիւններ չկան: Նախ՝ Հայաստանի և Կամաւորական բանակի միջեւ ընկած է թշնամի Վրաստանը, որ թոյլ չի տար իր հողի վրայով որեւէ օգնութիւն հասցնել Հայաստանին: Երկրորդ՝ Կամաւորական բանակը ինքն ալ այնքան կազմակերպուած եւ ուժեղ չէ, որ ընդունակ լինի իր կամքը պարտադրելու: Բուն Կամաւորական բանակի եւ կազակներու յարաբերութիւններն ալ շատ լաւ չեն: Երկուսի վերաբերումն էլ մեր հանդէպ շատ լաւ է: Կամաւորական բանակէն խոստացան մեզ հասցնել որոշ քանակութեամբ փամփուշտ: Կազակներէն էլ կըստանանք ալիւր, եթե փոխադրութեան միջոց ապահովենք, որ անկարելիութեան չափ դժուար է»[1]:

Կամավորական բանակի հրամանատար գեներալ Մ. Ալեքսեևը խոստանում է Կուբանից Հայաստանի Հանրապետություն ուղարկել մեկ միլիոն ռուբլու հաց, Ուկրաինայից՝ մեկ միլիոնի և 100 հազար ռուբլու շաքար, պայմանով, որ «հայերը մի ֆունտ անգամ չտան դրանցից վրացիներին»[2]: Վրացիները թույլ չէին տալիս այդ ապրանքները Հայաստան տեղափոխել: Այնուամենայնիվ, մեծ դժվարություններով Հայաստանի Հանրապետությունը որոշ օգնություն ստացավ Կամավորական բանակից[3]:

Ինչպես փաստում են արխիվային վավերագրերը և նյութերը, Ռուսաստանի հարավից հաց, սննդամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ Հայաստանի Հանրապետություն առաքելու համար հարկավոր էր հաղթահարել լուրջ խոչընդոտներ: Գ. Չալխուշյանը, որին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանձնարարել էր Կուբանում հացահատիկ գնելու գործը, գրում է. «Հայաստանին պետք էր հաց: Մենք ցանկանում էինք գնել դրամով: Հացի պահեստը պատկանում էր Ղուբանի (Կուբանի - Գ.Պ.) կառավարությանը, փոխադրական միջոցները և արտահանելու իրավունքը կախված էին Կամավորական բանակից: Ղուբանի կառավարությունը մեզ ասում էր. «Հայերդ վրացիների թշնամիներն եք, իսկ վրացիները մեր բարեկամներն են, եթե մի մասը կհանձնեք Վրաստանին, մենք Ձեզ կվաճառենք հաց», իսկ զորավար Դրագոմիրովը մեզ ասում էր՝ «Վրացիները Կամավորական բանակի թշնամիներն են, մենք վախենում ենք, որ դուք հացի մի մասը կհանձնեք նրանց: ...Կառավարությունը

[1] Տե՛ս *Վրացյան Ս.*, Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, Ե հատոր, Բէյրութ, 1966, էջ 14:
[2] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 21:

[1] Տե՛ս *Վրացյան Ս.*, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 266:
[2] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 21:
[3] Տե՛ս *Վրացյան Ս.*, Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, Ե. հատոր, 1966, էջ 24:

(Հայաստանի- Գ.Պ.) ուղարկեց հատուկ պատգամավորություն, որը կորցրեց իր ժամանակը, Հայաստանի դրամը և հաջողություն չունեցավ»[1]: Այդ գործընթացին խանգարեց նաև ռուս-վրացական հարաբերությունների սրումը, որի հետևանքով Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցությունը» արգելեց հացի և այլ ապրանքների առաքումը Վրաստան, որից տուժեց նաև Հայաստանի Հանրապետությունը[2]: Բայց և այնպես, Կամավորական բանակը հաց էր վաճառում Հայաստանին, իսկ Վրաստանը պահանջում էր իր մասը, հակառակ դեպքում բաց չէր թողնում[3]:

1918 թ. սեպտեմբերի 25-26 -ին Եկատերինոդարում տեղի ունեցավ հանդիպում Կուբանի երկրամասի կառավարության, Կամավորական բանակի ու Վրաստանի կառավարության արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորու գլխավորած պատվիրակության միջև[4]: Բանակցություններն ընթանում էին լարված մթնոլորտում: Գեներալ Մ. Ալեքսեևը վրաց պատվիրակությունից վերջնագրով պահանջեց, որ վրացական զորքը անհապաղ դուրս բերվեն սևծովյան ափերից: Այնուհետև Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցությունը» Վրաստանին մաքսային և պարենային պատերազմ հայտարարեց[5]:

Հոկտեմբերին գեներալ Ա. Դենիկինը ստանձնեց Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը, Եկատերինոդար ժամանեցին հայ-

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 295, թ. 18, 30:
[2] Տես ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 12:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 27:
[4] Տես Документы, матерьялы по внешней политике, Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 391-414. "Борьба" газета, Тифлис, 11 октября 1918 г.:
[5] Տես РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 44, л. 13, ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 186, Архив русской революции, т. 5-6, Москва, 1991, с. 104-105:

կական պատվիրակություններ, սուրհանդակներ Ուկրաինայից, Վրաստանից և այլ վայրերից՝ սովյալ Հայաստանի Հանրապետությանը հաց, սննդամթերք և այլ ապրանքներ առաքելու խնդրով: Այդ նպատակով Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Ջամոյանը ևս Կիևից Եկատերինոդար գործուղեց Ս. Սիրինին, գնդապետ Կորիտինին և կապիտան Ա. Տոնյանցին: Ա. Ջամալյանի հանձնարարականով Թիֆլիսից Եկատերինոդար մեկնեցին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Լ. Թումանովը, Ա. Բարակոզյանը և Ա. Մալխազովը: Ա. Ջամալյանի խնդրանքով Եկատերինոդար ժամանեցին նաև Անդրկովկասի ռուսական Ազգային խորհրդի ներկայացուցիչները՝ Մ. Ավդիևի գլխավորությամբ՝ նպատակ ունենալով միջնորդ հանդիսանալ Կուբանի երկրամասի կառավարության և Կամավորական բանակի ու Հայաստանի Հանրապետության միջև՝ ապրանքափոխանակություն իրագործելու համար: Եկատերինոդար հասած հայկական պատվիրակությունները տեղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Նիկոլայ Սաթունյանի առաջարկով ստեղծեցին ժամանակավոր կոլեգիալ մարմին՝ Հայաստանի Հանրապետությանը հաց, սննդամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ առաքելու նպատակով: Ն. Սաթունյանի առաջարկով Ա. Մալխազովը և Ս. Սիրինը 1918 թ. նոյեմբերի 4 -ին այդ մասին գրավոր տեղեկացրին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ.Քաջազնունուն. «Արշակ Մալխազովը և ես (Ս. Սիրին- Գ.Պ.) դիմում ենք Ձեզ տեղեկացնելու, որ Եկատերինոդարում ստեղծվել է ժամանակավոր կոլեգիալ մարմին՝ Հայաստանի Հանրապետության բնակչությանը հաց մատակարարելու խնդրով: Կուբանի երկրամասի կառավարությունը և

Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը Հայաստանի Հանրապետությանը հաց տալու խնդրանքին վերաբերվել են բարյացակամորեն և սկզբունքորեն պատրաստակամություն են հայտնել թույլատրել նրա արտահանումը: Սակայն ինչպես հայտնի է, հացը տեղ հասցնելու ճանապարհին կային լուրջ խոչընդոտներ, հատկապես Վրաստանով անցնելիս: Կամավորական բանակի ղեկավարությունը կտրուկ դեմ էր, որ հաց տրվի վրացիներին: Նա որպես պարտադիր պայման դնում էր երաշխիքների ստացումը Վրաստանից, գերմանացիներից և թուրքերից, որ հացը «...այլ պետքերի համար չի օգտագործվի, բացի Հայաստանի պահանջներից»[1]: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցության» և Հայաստանի Հանրապետության միջև ապրանքափոխանակություն սկսելու մասին: Այդ կապակցությամբ զեկուցագրում նշվում է. «Մենք նպատակահարմար ենք գտնում անմիջապես սկսել ապրանքափոխանակումից և դրանով իսկ ճանապարհ հարթել հետագա պարենային գործարքների համար: Դրա համար անհրաժեշտ է Երիվանից Եկատերինոդար ուղարկել բամբակ, կաշի, սպիրտ, կոնյակ և այլն: Ապրանքափոխանակության իրականացման գործում մեծ է Անդրկովկասյան ռուսական Ազգային խորհրդի միջնորդական առաքելությունը»[2]: Չնայած ձեռնարկված միջոցներին՝ Հայաստանի Հանրապետություն էր հասնում հացի, սննդամթերքի և այլ ապրանքների փոքր խմբաքանակ: Վրաստանը Կուբանից առաքած ապրանքի մի մասը վերցնում կամ ամբողջովին բռնագրավում էր: 1918 թ. նոյեմբերի վերջին հաջողվեց Վրաստանով՝ տարանցիկ ճանապարհով, Կուբանի

[1] ՀԱԱ, ֆ. 43, g. 1, գ. 100, թ. 16:
[2] Նույն տեղում, թ. 17:

երկրամասից Հայաստանի Հանրապետություն փոխադրել 100.000 փութ հացահատիկ, որ աննշան քանակություն էր երկրի ծով կարիքները բավարարելու համար[1]:

* * *

Հարկ է նշել, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցության» և Հայաստանի Հանրապետության միջև ամենից առաջ հաստատվեցին ռազմական բնույթի կապեր: Կովկասյան ռազմաճակատի փլուզումից հետո բազմաթիվ ռուս սպաներ և զինվորներ ծառայության անցան հայկական բանակում[2]: «Հայաստանում, - գրում է գեներալ Ա. Դենիկինը, - ռուսների նկատմամբ ավելի լավ էին վերաբերվում, քան նոր կազմավորված մյուս հանրապետություններում: Մտավորականությամբ և տեխնիկական ուժերով աղքատ երկիրը օգտվում էր ռուսական մասնագետների ծառայությունից և մասնավորապես ռուս սպաներին ներգրավում էր իր բանակի շարքերը»[3]: Հակառակ դրան՝ վրացական կառավարությունը ոչ միայն բռնագրավել էր Կովկասյան ռազմաճակատի համարյա ողջ միլիարդանոց ունեցվածքը, զինվորական ու երկրամասային կառավարչությունների մեծաքանակ վարկերն ու կանխիկ գումարները և անհրաժեշտ չէր համարել ռուսական այդ ժառանգության արդար բաժանումը, այլև ամենևին չէր հոգացել ռուս քաղաքացիական բնակչությանը անվտանգ Ռուսաստան տեղափոխելու մասին[4]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, g. 1, գ. 553, թ. 14, ֆ. 4033, g. 2, գ. 963, թ. 103:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 2, գ. 56, թ. 13, ֆ. 276, g. 1, գ. 116, թ. 127:
[3] ***Деникин А.И.***, Очерки русской смуты, Москва, 1991, с. 146-147, ***Деникин А.И.***, Очерки русской смуты: Белое движение и борьба добровольческой армии. Май-октябрь 1918 (Воспоминания. Мемуары), с.91.
[4] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 136, л. 86:

Ռուսական զորամասերը Կովկասյան ռազմաճակատից զանգվածաբար սկսեցին հեռանալ 1918 թ. հունվարի սկզբներին: Անդրկովկասի տարածքով անցնելիս նրանք ստիպված էին հաղթահարել վրացիների և կովկասյան թաթարների կողմից հարուցած կատաղի դիմադրությունը, որը հաճախ վերածվում էր իսկական ճակատամարտի. վրացիներն ու թաթարները ցանկանում էին տիրանալ հեռացող զորամասերի զենքին ու զինամթերքին[1]:

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Հր. Սիմոնյանն իրավացիորեն նկատում է. «Ռուսներին զինաթափելու և նրանց զենքերը խլելու նպատակով մուսավաթականները և վրաց մենշևիկները մտան արյունալի գործարքների մեջ: Փակելով երկրամասի հաղորդակցության կարևոր գծերը՝ կովկասյան թաթարները պաշարում էին գնացքները, զինաթափում և հաճախ էլ կոտորում տուն վերադարձող ռուս զինվորներին»[2]: Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանն ուղղված գաղտնի զեկուցագրով տեղեկացնում է, որ «***Վրացիները ռուսների նկատմամբ իրենց վայրագություններով գերազանցեցին բարբարոս թուրքերին***»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հայերը ռուսական զինվորների նկատմամբ ցուցաբերեցին ու պահպանեցին ավանդական բարեկամական վերաբերմունքը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը օգտագործեց բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ռուս զինվորները ապահով հայրենիք վերադառնան: Երևանի Ազգային խորհրդի Հատուկ կոմիտեի անդամ Ար. Աստվածատրյանը գրում է. «...բուն Հայաստանում եղած ռուս

[1] Տե՛ս ***Семен С.***, Правда о Шамхоре 7-12 января 1918 г., Тифлис, 1927:
[2] ***Սիմոնյան Հր.***, Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Բ, Երևան, 1996, էջ 4:
[3] ՀԱԱ, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 48:

զինվորներին պարենով կամ դրամով բավարարելուց հետո, հայոց կառավարությունը բարոյապես հարկադրվեցավ Թիֆլիսում գտնված հազարավոր զինվորներին էլ նպաստ և ճանապարհածախս տալ՝ սպառելով իր վերջին կոպեկները այդ գործի վրա»[1]: Այնուհետև Ար. Աստվածատրյանը շարունակում է. «...ես անձնապես պիտի վկայեմ, որ Հայաստանի կառավարությունը մարդկային վերաբերմունք ցույց տվեց ոչ միայն դեպի ռուս զինվորականները, այլև դեպի ռուս պաշտոնյաները, որոնց թիվը քիչ չէր Երևանում: Վերջը, երբ այդ ռուս պաշտոնյաները դիմեցին մեր իշխանության, խնդրելով հնարավորություն տալ իրենց հայրենիք (Ռուսաստան) վերադառնալու, նրանց տրամադրվեց հատուկ գնացք՝ հոգալով նրանց բոլոր ծախքերը: Յիշում եմ, թե նրանք երախտագիտական զգացմունքով հեռացան Երևանից: «Մենք ռուսներս, երբեք չենք մոռանալ այդ ջերմ վերաբերմունքը, որ ցույց տրվեց մեզ Հայաստանում»,- բաժանման ժամին ասում էր ինձ Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ, իսկ Հանրապետութեան օրերին ռուս Ազգային խորհրդի նախագահ Զորինը»[2]:

* * *

Հայտնի է նաև, որ բազմաթիվ հայ սպաներ ծանոթ չէին հայրենիքին, չգիտեին մայրենի լեզուն, ժողովրդի հոգեբանությունը և հայոց պատմությունը. «Այս հասկացողութեամբ՝ հայ սպայութիւնը, երբ ինքզինք գտաւ. - գրում է Վահե Արծրունին, - իր մայրենի հողի վրա, ազգային պետութեան ծա-

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, հոկտեմբեր, № 12, էջ 130 - 131, 1959 մայիս, № 5, էջ 68 - 69:
[2] Նույն տեղը:

ռայութեան մէջ՝ անծանօթ էր տեղական լեզուին, ուստի չկրցաւ ընել այն, ինչ որ հայ ժողովուրդը կը սիրէր սպասել եւ, թերեւս այն, ինչ որ ինքն ալ կենթադրէր, թէ պիտի կրնար իրագործել»[1]: Հայ սպաները կրթություն էին ստացել ռուսական կայսրության զինվորական դպրոցներում ու ակադեմիաներում, զինվորների մեծ մասը ծառայել և վարժվել էր ռուսական բանակում, դաստիարակվել ռուսական ոգով և իրենց տրամադրությունները հայկական բանակում արտահայտում էր հօգուտ Կամավորական բանակի: Այդ մասին Գ.Չալխուշյանը գրում է. «Զորավարներ Նազարբեկով, Սիլիկով, Գամազով, Հովսեփյան, Փիրումյան, Հովհաննես Հախվերդով, գնդապետ Վեքիլով լավ գիտեին հին ցարական բանակը... սակայն կապված չէին սերտ կապերով հայ զինվորների հետ: Հասարակ սպաները, որ պիտի լինեին միջնորդ զորավարների և զինվորների մեջ, ռուս Կամավորական բանակի զինվորներ էին... որ ծանոթ չէին բնավ հայկական տագնապին և հայ իրականության, չէին հավատում Հանրապետության հաստատ լինելուն, երազում էին վերադառնալ Ռուսաստան համոզված լինելով, որ նորից կհաստատվեն հին կարգերը»[2]:

Հայաստանի Հանրապետության բանակը կազմված էր ռուսական բանակի սկզբունքներով և կառավարվում էր ռուսական զինվորական կանոնագրքով[3]: Եվ ամենևին պատահական չէր, որ Հայկական բանակը համարվում էր Կամավորական բանակի մի մասը: «Զինուորական նախարարութիւնը, - գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը, - պարզ մանրանկարն էր ռուս զինուորական նախարարութեան, իսկ բանակը իր

[1] *Արծրունի Վահէ*, Տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Երևան, 2002, էջ 376:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 53:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 33:

ոգուով, իր վարժութեամբ եւ գործելակերպով, նոյնն էր ինչ ռուսական որեւէ զօրաբաժին: Ի զուր չէ, որ հայկական բանակը կը համարէին Դենիկինի բանակի մի մասը. նմանութիւնը մեծ էր թէ կազմակերպութեան, թէ ձգտումների մէջ: ... Զինուորական բաժինների գլուխ կը գտնուէին մասնագէտ զօրավարներ, որոնք բազմամեայ փորձառութիւն ունէին ռուսական ծառայութեան մէջ, նրանցից ոմանք յայտնի էին նոյնիսկ ռուսական բանակում: Երբ չէին գտնւում հայ ծագումով ղեկավարներ, ռուս ղեկավարներ էին գործում, որոնց թիւը 400 -ի կը հասնէր, չհաշուած հասարակ պաշտօնեաներն ու զինուորները (որոնք փոքրաթիւ էին համեմատած ռուս ծագումով բարձր պաշտօնեաների): Այդպիսով Հայաստանի բանակը կազմակերպուած էր զինուորական մասնագիտական տուեալների վրայ. նա ունէր իր արժանիքները գիտական տեսակետից, բայց ունէր իր թերութիւնները ոգու և ազգային տեսակետից»[1]: 1918 թ. (ամիսը և օրը չեն հիշատակվում) «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված գաղտնի զեկուցագրում կոմս Բիլինբրիչը[2] գրում է. «Հայկական բանակը, որտեղ մեծ թիվ են կազմում ռուս սպաները, շատ լավ է տրամադրված: ***Բոլորովին չեն ճանաչում խորհրդարանի և կառավարության*** (Հայաստանի- Գ.Պ.) ***իշխանությունը և առիթի դեպքում կարող են հեղաշրջում կատարել***»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Գեներալ Ա. Դենիկինը հայկական բանակը համարում էր Անդրկովկասում Կամավորական բանակի պահեստի ուժը: Եվ ամենևին պատահական չէր այն փաստը, որ գնդապետ Շատիլովը 1918 թ. սեպտեմբերի վերջերին Կամավո-

[1] *Ռուբէն*, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, Թեհրան, 1982, էջ 332 - 333:
[2] Հայաստանի Հանրապետությունում՝ Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչ Լեսլիի ծածկանունն է:
[3] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 33:

ական բանակի հանձնարարականով Եկատերինոդարից եկավ Թիֆլիս՝ նախկին ցարական բանակի սպաներին և զինվորներին հավաքագրելու՝ Կամավորական բանակում ծառայելու համար, իսկ հայ ռազմագերիների և Կամավորական բանակում ծառայող հայ սպաների ու զինվորների նկատմամբ հակառակ վերաբերմունք դրսևորվեց: Ցանկացողներին նա առաջարկեց ու թույլատրեց իրենց զենքով ու ճանապարհի սնունդով մեկնել Հայաստանի Հանրապետություն և ծառայել միայն հայկական բանակում[1]:

Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը Երևանի ռուսական Ազգային խորհրդի գործուն աջակցությամբ Երևանում ստեղծեց հետախուզական գաղտնի խումբ՝ իր գործակալներով, որն անմիջական կապի մեջ էր Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության», Թիֆլիսում Անդրկովկասի Ռուսական ազգային խորհրդի հետ[2]: Այդ խմբի քաղաքական կարգախոսը «Միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերականգնում էր[3]: Խումբը կանոնավոր տեղեկություններ էր հաղորդում Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը» հայկական բանակի, հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական դրության մասին[4]: Հանրապետության ներքին գործերի նախարարությունը կոնկրետ փաստեր ուներ ռուսական հետախուզական խմբի գոյության ու գործունեության մասին[5], սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը դրսևորում էր զսպվածություն նախ այն պատճառով, որ մի

[1] Տե՛ս РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 49, л. 4, Тифлисский Листок, 25 сентября 1918, ՀԱԱ. ֆ. 200, g. 1, գ. 291, մաս II, թ. 220:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 439, оп. 1, д. 35, л. 2:
[3] Տե՛ս Российский государственный архив социально-политической истории (այսուհետև՝ РГА СПИ), ф. 71, оп. 35, д. 195, л. 188:
[4] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 33:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 376, g. 1, գ. 1, թ. 13:

կողմից՝ տվյալ պահին այն վտանգ չէր ներկայացնում երկրի անկախությանը, իսկ մյուս կողմից՝ չխաթարելու համար նորնոր ձևավորվող հայ-ռուսական հարաբերությունները:

Հայկական բանակում ձևավորված դրական տրամադրվածությունը դեպի Կամավորական բանակը լայն հնարավորություն ստեղծեց Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու հարցում: Այդ ուղղությամբ ձեռնարկվեցին գործնական քայլեր: Հայկական բանակի շտաբի պետի օգնական փոխգնդապետ Վլասևը իր դիմումի համաձայն զինվորական նախարար Հ. Հախվերդյանի 1918 թ. հոկտեմբերի 1 -ի № 21 հրամանով ազատվեց զբաղեցրած պաշտոնից և գործուղվեց Եկատերինոդար՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» հետ կապ հաստատելու նպատակով[1]: Փոխգնդապետ Վլասևի այցը Եկատերինոդար կրում էր կիսապաշտոնական և գաղտնի բնույթ, որովհետև իր ուժը պահպանում էր Բաթումում Հայաստանի Հանրապետության խաղաղարար պատվիրակության 1918 թ. հունիսի 3-ին Թուրքիայի նկատմամբ ստանձնած պարտավորությունը, ուժի մեջ էր հունիսի 4 -ի հայտնի պայմանագիրը: Ահա թե ինչու Հայաստանի Հանրապետության կառավարության և զինվորական նախարարության կողմից Վլասևին համապատասխան հավատարմագիր կամ վկայական չտրվեց:

1918 թ. հոկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության շտաբի գրասենյակը փոխգնդապետ Վլասևին ծառայողական բնույթի գրավոր հանձնարարականով այնուամենայնիվ գործուղեց Հյուսիսային Կովկաս: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, g. 1, գ. 41, թ. 23:

տության զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանը Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանին ուղղված նամակում տեղեկացնում է. «Սույն նամակ ներկայացնողը՝ Հյուսիսային Կովկաս մեկնող փոխգնդապետ Վլասևը, ծառայողական բնույթի հանձնարարություն ունի, ուստի խնդրում եմ Ձեզ իրենից փաթեթ ստանալու դեպքում դրանք ուղարկել Երիվան...»[1]: Նամակից ակնհայտ է դառնում, որ Վլասևը Կամավորական բանակի կապը հայկական բանակի հետ պետք է իրականացներ Ա. Ջամալյանի միջոցով: Իր առաքելության վերաբերյալ Ա. Ջամալյանին ուղղված 1918 թ. հոկտեմբերի 25-ի № 3 նամակում փոխգնդապետ Վլասևը գրում է. «***Ինձ տրված հանձնարարությունը Կամավորական բանակի հետ կապ հաստատելու ուղղությամբ ես կատարեցի*** ... Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարության կողմից հայ ժողովրդի նկատմամբ վերաբերմունքը շատ բարյացակամ է, ինչի լավագույն ապացույցն է այն ողջույնը, որով հայկական կառավարության միջոցով հայ ժողովրդին դիմել էր Կամավորական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Դենիկինը: Այդ ողջույնի տեքստը ինձ փոխանցված է և ես այն ուղարկում եմ մի խնդրանքով, որ քանի դեռ ստացված չէ բնօրինակը, այն չհրապարակել: Հայկական կառավարությանն ուղղված ողջույնի տեքստը[2] կփոխանցի այդ նպատակի համար հատուկ գործուղված Կամավորական բանակի սպա»[3]: (ընդգծումը մերն է- Գ.Պ.) 1918 թ. դեկտեմբերի 13-ին վարչապետ Հ. Քաջազնունին Հայաստանի խորհրդի նիստում հրապարակեց գեներալ Ա. Դենիկինի ողջույնը՝ ուղղված հայ

[1] ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 6, թ. 56:
[2] Ո՛չ Հայաստանի Հանրապետության և ո՛չ Ռուսաստանի Դաշնության արխիվներում մեզ չհաջողվեց գտնել գեներալ Ա. Դենիկինի և Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) փոխադարձ ողջույնի տեքստերը:
[3] ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 52, թ. 54

ժողովրդին: Հայաստանի խորհուրդը որոշեց «...փոխադարձ ողջույն ուղարկել Ռուսաստանին ի դեմս գեներալ Ա. Դենիկինի»[1]:

Փոխգնդապետ Վլասևը Եկատերինոդարում գործում էր որպես Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցությանը» կից հայկական բանակի ներկայացուցիչ[2]:

Փոխգնդապետ Վլասևն իր գործունեությունը ծավալում էր մի քանի ուղղություններով: Նրան նաև հանձնարարված էր Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության միջոցով հայտնաբերել Ռուսաստանի հարավում կուտակված նախկին ցարական բանակի այն հայ սպաներին և զինվորներին, որոնք վերադարձել էին գերմանական և ավստրո-հունգարական գերությունից, և ուղիներ փնտրել՝ նրանց հայրենիք տեղափոխելու: Վլասևը պետք է հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ուղարկեր Հայաստան: Այդ խնդրով փոխգնդապետ Վլասևը, դիմելով Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարին, գրում էր. «Այժմյան պայմաններում հայերի հետ կապերը ամրապնդելու նպատակով առաջարկում եմ դիմել հետևյալ քայլերին.

1. կազմակերպել և Բաթումի վրայով Հայաստան ուղարկել ինքնուրույն գործողություններ իրականացնելու ունակ ջոկատ,

2. հաց, յուղ, օճառ և այլ մթերքներ, ինչպես նաև զինամթերք ուղարկել Հայաստան,

3. համակողմանի օգնություն ցուցաբերել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին,

[1] «Ձանգ» լրագիր, Երևան, 5 դեկտեմբերի, 1919:
[2] Տե՛ս ՊԳ ԲԱ, ֆ. 39720, օп. 1, д. 62, л. 3, «Вопросы Истории», N 2, 1994, с. 105:

4. Գերմանիայից և Ավստրիայից ժամանած հայ ռազմագերիներին անհապաղ ուղարկել հայրենիք»[1]:

Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցությունը» դրականորեն ընդունեց փոխգնդապետ Վլասևի առաքելությունը Եկատերինոդար և խոստացավ օժանդակել իրականացնելու նրա առաջադրած խնդիրները: 1918 թ. նոյեմբերի 23 -ին Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովի հրամանով առաջին խումբ հայ գաղթականները հնարավորություն ստացան Նովորոսիյսկից, Անապայից մինչև Բաթում-Երևան մեկնել անվճար. ճանապարհի համար յուրաքանչյուր անձի տրամադրվեց 5 փութ ալյուր[2]:

Հանրապետությունում տիրող սովը մեղմելու նպատակով Ա. Ջամալյանը փորձեց փոխգնդապետ Վլասևի միջոցով Ռուսաստանի հարավից Հայաստան ներկրել հացահատիկ և այլ անհրաժեշտ ապրանքներ:

Նույն մտահոգությամբ հայկական բանակին անհրաժեշտ հաց ու զինամթերք մատակարարելու նպատակով Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանը (Հախվերդովը) 1918 թ. նոյեմբերի 30 -ին նամակով դիմեց Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» շտաբի պետ գեներալ Ի. Ռոմանովսկուն. «Երկարատև պատերազմից քայքայված և փախստականներով լեցուն Հայաստանը պարենի, առանձնապես հացի մեծ կարիք ունի:

Պարենային ճգնաժամը սուր արտահայտություն է գտել նաև բանակի շրջանում ...մտահոգվելով զորքը պարենով ապահովելու հարցով, խնդրում եմ գլխավոր հրամանատարի թույլտվությունը՝ աջակցելու Նովոռոսիյսկից Փոթի կամ

[1] Տես РГ ВА, ф. 39720, д. 62, л. 3, ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 3:
[2] Տես ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 10:

Բաթում հացի փոխադրման և Վրաստանի տարածքով ազատ ելքի հարցում:

Իմ խնդրանքի կատարումով մեծ օգուտ կտաք հայկական զորքերին, որոնք մեծ կարիք ունեն ոչ միայն պարենի, այլև մատակարարման բոլոր ապրանքների՝ արտաքին աշխարհից գրեթե լրիվ մեկուսացված լինելու պատճառով»[1]:

Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովը 1918 թ. նոյեմբերի 21 -ի № 747 գրությամբ նշում է, որ «գլխավոր հրամանատարությունը չի փոխում իր վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ, քանի դեռ նրա կառավարությունը չի հրաժարվել իր ձգտումներից Սոչիի երկրամասի նկատմամբ: Չթույլատրել հացի ներկրումը, արգելել ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետ»[2]: Չնայած Կամավորական բանակը թույլատրում էր Հայաստանի Հանրապետություն ապրանքներ առաքել, սակայն Վրաստանը և Ադրբեջանը, կասկածելով Եկատերինոդարի և Երևանի միջև գաղտնի կապի առկայությունը, ամեն կերպ խոչընդոտում էին հաղորդակցման իրականացմանը: Երևան ուղարկվող բեռները շատ հաճախ վրացական սահմանից կրկին վերադարձվում էին Կուբան կամ էլ թալանվում և առգրավվում Վրաստանի և Ադրբեջանի հյուսիսային սահմաններում: Գեներալ Ա. Դենիկինը, համոզվելով, որ Հայաստանի Հանրապետություն ուղարկվող հացի և այլ ապրանքների չնչին մասն է տեղ հասնում, դեկտեմբերի սկզբին արգելեց հետագա առաքումները:

Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարությունը և «Հատուկ խորհրդակցությունը», ինչպես վերը նշվեց, դրական վերաբերվեցին փոխգնդապետ Վլասևի առաքելությանը:

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 61 - 62:
[2] Նույն տեղում, д. 33, л. 12:

* * *

1918 թ. նոյեմբերին որպես Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչ Երևան գործուղվեց գնդապետ Լեսլին[1]:

Նոյեմբերի 6 -ին Գլխավոր շտաբի ռազմածովային նավատորմի բաժնի պետ գեներալ Ա. Լուկոմսկին գնդապետին վկայական է հանձնում, որով Լեսլին օժտվում է հայկական բանակում Կամավորական բանակի զինվորական ներկայացուցչի լիազորություններով[2], իսկ նոյեմբերի 8 -ին «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովը հանձնում է մեկ այլ վկայական, որով իրավունք է վերապահում նրան «քաղաքական բոլոր հարցերով հարաբերությունների մեջ մտնելու Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչների հետ»[3]: Գնդապետը միաժամանակ զինվորական ծառայության էր անցնելու հայկական բանակի գլխավոր շտաբում[4] և գաղտնի գործող ռուսական հետախուզական խմբում (ծածկանունը՝ Юрий граф Бисенбрихъ)[5]:

Գնդապետ Լեսլին գործուղվեց Երևան այն ժամանակ, երբ ավարտվել էր Առաջին աշխարհամարտը, տարածաշրջանում հիմնովին փոխվել էր քաղաքական իրադրությունը: Նոր աշխարհաքաղաքական պայմաններում «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» ծրագրով Երևան գործուղված գնդապետ Լեսլին սառը ընդունելություն գտավ հայկական պաշտոնական շրջաններում: Նա Երևանում «հանդիպել էր չափազանց սառը ընդունելության, - գրում է գեներալ Ա. Դենիկինը: -Հայ դիվանագետները նրան ուղղակի հասկացրել էին, որ ավելի լավ է առանց խաղաքարտերը բացելու սպասել, քանի որ հայտնի չէ, թե ով է ավելի ուժեղ, ով է իրական Ռուսաստանը՝ դո՞ւք, Կոլչա՞կը, թե՞ բոլշևիկները»[1]: Այդ մասին գնդապետ Լեսլին 1919 թ. մարտի 2 -ին գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված նամակում գրում է. «1918 թ. նոյեմբերին ինձ գործուղեցիք Հայաստան՝ որպես Կամավորական բանակի քաղաքական և ռազմական հարցերով ներկայացուցիչ: Դրա հետ մեկտեղ ես պետք է ծառայության անցնեի Հայաստանի գլխավոր շտաբում: Եկատերինոդարից մեկնելուց առաջ գնդապետ Վլասևը (հետագայում պարզվեց, որ նա Հայաստանի ռազմական նախարարության հետախույզ է) տեղեկացրեց, որ իբր ինձ ուղարկում են մի երկիր, ուր ոչ միայն ողջ ժողովուրդը, այլև կառավարությունը անհամբերությամբ սպասում են մեզ և ցանկանում են ամուր կապեր հաստատել Կամավորական բանակի հետ:

Երևան ժամանելու առաջին իսկ պահից ես հասկացա, որ Եկատերինոդարում ստացված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Ճիշտ է, ժողովուրդը և բանակը որոշակիորեն կողնորոշված են դեպի Կամավորական բանակը, բայց առաջինը քաղցած և հյուծված է, իսկ երկրորդը երկրում ոչ մի դեր չի խաղում, քանի որ ավելի քիչ ռազմական և ֆինանսական միջոցներ ունի, քան ներքին գործերի նախարարությունը»[2]:

1918 թ. նոյեմբերի վերջին Երևանում գնդապետ Լեսլին իր վկայականների հետ հանձնեց նաև գեներալ Ա. Դրագոմիրովի

---

[1] Գնդապետ Լեսլին Հայաստանի Հանրապետությունից հեռացել է 1919 թ. հունվարի 9-ին Բրիտանական զինվորական հրամանատարության պահանջով: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 130:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 7:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 6, Вопросы Истории, N 2, 1994, с. 10, ***Деникин А.***, Очерки русской смуты, Вооруженные силы юга России, Распад Российской империи, Октябрь 1918-январь 1919 (Воспоминания. Мемуары), Минск, 2002, с. 319 - 320.

[4] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68:

[5] Տե՛ս РГА СПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 203:

---

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 27, Вопросы Истории, N 2, 1994, с. 105. ***Деникин А.***, Очерки русской смуты, Вооруженные силы юга России, Распад Российской империи, Октябрь 1918-январь 1919 (Воспоминания. Мемуары), Минск, 2002, с. 320, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах. - Книга 3/Т. 4, т. 5. Вооруженные силы Юга России.- Москва, 2003, с. 252:

[2] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68:

նոյեմբերի 8 -ի պաշտոնական նամակը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին: Դա առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որը, ներկայացնելով «Հատուկ խորհրդակցության» նպատակը և վերջինիս կազմում ընդգրկված տարբեր բնագավառների անվանի անձանց ազգանունները, Հայաստանի Հանրապետությանը առաջարկվում էր դաշնակցել Կամավորական բանակի հետ: «...Նպատակ ունենալով միավորել ռուսական հողերը,- ասվում էր նամակում,- Կամավորական բանակը կոչ է անում «Անբաժանելի, միասնական Ռուսաստան» ճանաչող նախկին ռուսական կայսրության բոլոր նահանգներին համախմբվել իր շուրջը՝ բոլշևիկների դեմ համատեղ պայքարելու:

Կամավորական բանակը առաջարկում է Հայաստանի Հանրապետությանը դաշնակցել իր հետ: Նման դաշինքներ կնքվել են Դոնի, Կուբանի, Թերեքի, Ղրիմի և Անդրկասպյան մարզերի հետ»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Նկատի ունենալով հայության ռուսական անվարան կողմնորոշումը, ինչպես նաև թուրքերից պաշտպանվելու համար Հայաստանի Հանրապետության ձգտումը՝ կապվելու Ռուսաստանի հարավի հետ, անկախ նրա հասարակական-քաղաքական կառուցվածքից, Կամավորական բանակի ղեկավարությունը և նրա «Հատուկ խորհրդակցությունը» համոզված էին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ չէր լինի այդ դաշինքին: Ուստի առաջարկվում էր դաշնակցել Կամավորական բանակի հետ: Սակայն այդ դաշինքի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող էր անցանկալի հետևանքներ ունենալ արտաքին աշխարհից կտրված երկրի համար: Հակառուսական դիրքորոշում որդեգրած Վրաստանի համար անընդունելի էր Եկատերինոդար - Երևան հարաբերությունների հաստատումը, այն դեպքում, երբ Ռուսաստանի հարավի հետ միակ կապը Հայաստանի Հանրապետությունը իրականացնում էր Վրաստանի տարածքով: Սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության համար գոյություն ուներ նաև մեկ այլ մտահոգիչ հանգամանք: Դեռևս 1918 թ. հոկտեմբերի 29 -ի № 1442 նամակով Ա. Ձամալյանը Թիֆլիսից արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին տեղեկացնում էր. «...Գեներալ Դենիկինը արդեն պատրաստություններ է տեսնում այդ քաղաքին (նկատի ունի Բաթումը- Գ.Պ.) տիրանալու: ...Այս քանի օրն ինձ հետևյալ առաջարկը պետք է անեն (նկատի ունի Կամավորական բանակի ներկայացուցչին- Գ.Պ.). - ***եթե գեներալ Դենիկինը Բաթումը գրավելիս դժվարությունների հանդիպե վրացիների կողմից, արդյոք Դենիկինը կարո՞ղ է հուսալ, որ հայերը վրաց սահմանազլխին այնպես կպահեն իրենց, որ Վրաստանը չկարողանա իր բոլոր զինվորական ուժերը կենտրոնացնել գեներալ Դենիկինի դեմ»*** (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Այնուհետև Ա. Ձամալյանը նամակում արտահայտում է իր դիրքորոշումը այդ հարցում՝ նշելով, որ «...մենք միանգամայն հեռու ենք գտնվում մեր հարևաններին թիկունքից հարվածելու մտադրությունից, այդ պարզ է ինձ համար:

Սակայն ինչ պատասխան պետք է տալ, եթե այդպիսի մի առաջարկ լինի ինձ, որպեսզի ռուս զորականությունը մեր դեմ ևս չգրգռվի, որ նրանց հաջողության դեպքում կարող էր ծանր հետևանքներ ունենալ մեզ համար: Խնդրում եմ այս մասին ևս որոշ հրահանգներ տալ»[1]:

Ճիշտ է, Բաթումի վրա Կամավորական բանակի հարձակումը ձգձգվեց, և նրա ներկայացուցիչները որևէ առաջարկություն չարեցին, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության համար խիստ մտահոգիչ և զգաստացնող հանգամանք էր նման առաջարկության գաղափարն անգամ, որին երբեք տուրք չտվեցին երկրի իշխանությունները: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 198:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 66, թթ. 95 - 96:

նը, հակառակ Կամավորական բանակի պահանջներին, պաշտոնական ներկայացուցիչ չգործուղեց Եկատերինոդար, այլ փորձեց օգտագործել հնարավոր բոլոր դիվանագիտական հնարքները նրա հետ հարաբերությունները իրականացնելու գլխավորապես տնտեսական, առևտրական ոլորտներում:

Այսպիսով, արխիվային բազմաթիվ վավերագրերը և նյութերը հաստատում են, որ անկախացման առաջին ամիսներին՝ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ կրում էր կիսապաշտոնական, գաղտնի բնույթ: Բերված փաստերը հավաստում են, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մի շարք լուրջ դրդապատճառներից ելնելով, մի կողմից ձգտել է հարաբերություններ հաստատել Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, իսկ մյուս կողմից նրանց նկատմամբ դրսևորել է խիստ զգուշավորություն, որի հետևանքով այդ հարաբերությունները կրել են գաղտնի բնույթ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը խուսափում էր Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ որևէ քաղաքական դաշինք կնքելուց և փորձում էր հարաբերությունները սահմանափակել առևտրատնտեսական շրջանակներով՝ հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ ներկրելու ծանր վիճակում գտնվող Հայաստանի համար, ինչպես նաև հայ ռազմագերիներին և գաղթականներին հայրենիք տեղափոխել:

Արխիվային վավերագրերը ու նյութերը հավաստում են, որ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս-նոյեմբեր) վարչապետ Հովհաննես Քաջազնունու կառավարությունը երկրի ներքին ու արտաքին ծանր պայմաններում վարեց ճկուն, զգուշավոր, հավասարակշռված ու շրջահայաց արտաքին քաղաքականություն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ (1918 թ. դեկտեմբեր - 1919 թ. հուլիս)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ: ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

1. Արևմտյան կողմնորոշումը. Փարիզի խաղաղության վեհաժողովում հանրապետության պատվիրակության ռազմավարական հիմնական խնդիրները

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո աշխարհում ստեղծվեց քաղաքական նոր իրավիճակ: Հաղթող պետությունների՝ Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումների հիման վրա ձևավորվեց միջազգային հարաբերությունների վերսալ-վաշինգտոնյան նոր համակարգը, որտեղ յուրաքանչյուր պետություն ձգտում էր իր կայուն տեղ գրավել և պաշտպանել իր արտաքին քաղաքական շահերը: Փարիզի խաղաղության վեհաժողովում սպասվում էր համառ և անզիջում դիվանագիտական պայքար, քանի որ կողմերից ոչ մեկը չէր պատրաստվում առանց մարտի տարածքներ զիջել, քանի որ տնտեսական և ստրատեգիական հսկայական օգուտներ կարող էին բերել այդ երկրներին:

Պատերազմի տարիներին կողմնորոշվելով դեպի Հա-

մածայնության խմբավորումը և ակտիվորեն մասնակցելով մարտական գործողություններին՝ հայ ժողովրդը հաղթանակի դեպքում հույս ուներ լուծելու իր չարչրկված հարցերը: Պատերազմի ավարտից հետո Հայաստանի Հանրապետությունը պետք է ճիշտ կողմնորոշվեր ստեղծված քաղաքական նոր իրավիճակում: ***Հայաստանի Հանրապետությունը, բնականաբար, դրսևորեց արևմտյան կողմնորոշում՝ ակնկալելով, որ Համածայնության պետությունները ծեռք բերած հաղթանակում ըստ արժանվույն կգնահատեն հայ ժողովրդի ներդրումը և հաշվի առնելով նրա կրած մեծ զոհողությունները, տարածքային կորուստները՝ կցուցաբերեն բարի կամք և կաշխատեն լուծել նրա առաջ ծառացած բազում կենսական խնդիրների գոնե մի մասը***: Այս առումով Հայաստանի Հանրապետությունը մեծ ակնկալիքներ ուներ Փարիզի խաղաղության վեհաժողովից, որին, սակայն, Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես հրավիրված չէր:

Համածայնության պետությունների ղեկավարները որոշել էին, որ վեհաժողովի աշխատանքներին մասնակցելու են միայն պատերազմում հաղթանակած երկրները և այն պետությունները, որոնք խզել էին հարաբերությունները Կենտրոնական տերությունների հետ: Արտահայտելով դաշնակիցների դիրքորոշումը հայերի մասնակցության հարցին՝ Վուդրո Վիլսոնը նշել էր, որ «Հաշտության վեհաժողովի պատվիրակների մեջ ամեն տեղ ես ամենուրեք առավել անկեղծ և անմիջական համակրանք եմ տեսնում հայերի հանդեպ», բայց, ցավոք, «տեխնիկապես շատ դժվար է ներկայացուցչություն հատկացնել քաղաքական միավորների, որոնք դեռևս չեն ընդունվել պետությունների ընտանիք»[1]: Այնուհետև Վ.Վիլսոնը ավելացնում է, որ ինքը այնպիսի ակտիվ աշխատանք կծավալի Հայ դատի լուծման համար, որը համարժեք կլինի խաղաղության վեհաժողովի աշխատանքներին հայկական պատվիրակների մասնակցությանը[1]: Սակայն այդպիսի մոտեցումը, անկախ Վ. Վիլսոնի հավաստիացումներից, վիրավորական էր և անընդունելի հայերի համար, «...որոնք չէին կարողանում հասկանալ, թե ինչ հիման վրա չեխերը, լեհերը և արաբները տեղ պետք է ստանային, մինչդեռ մի ժողովրդի, որը զոհաբերել էր իր կեսից ավելին, մերժվում էր տեղ շնորհել Հաշտության վեհաժողովում»[2]:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունը որոշեց պատվիրակություն ուղարկել Փարիզ, որտեղ արդեն գտնվում էր Արևմտահայ ազգային պատվիրակությունը՝ եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի* գլխավորությամբ: 1918 թ. դեկտեմբերին գեներալ Բագրատունին Բաքվից հեռագիր հղեց վարչապետ Հ. Քաջազնունուն՝ տեղեկացնելով, որ Լոզանից Հ. Օհանջանյանը խնդրել է հեռագրել Հայաստանի կառավարությանը, որ «Համածայնության երկրները հայերին ընդունում են որպես կռվող կողմ և իրավունք են տալիս մասնակցելու խաղարարար վեհաժողովին: ...Ուղարկեցեք պատգամավորներ մանդատներով և անհրաժեշտ հրահանգներով»[3]: «Ժողովուրդ» լրագիրը դեկտեմբերի 11-ին հրապարակում է հեռագրի բովանդակությունը և ինչ-ինչ դրդապատճառներից ելնելով՝ ավելացնում, թե «Դաշնակիցները ճանաչել են Հայաստանի անկախությունը» արտահայտությունը, որը բացակայում է հեռագրի տեքստում: Իրականում հայերը ոչ միայն չեն ընդունվել իբրև կռվող կողմ, այլև

[1] *Յովհաննիսյան Ռ.*, Հայաստանի Հանրապետություն: Առաջին տարին, 1918-1919, Հատոր I, Երևան, 2005, էջ 280:

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] Նույն տեղը:
[3] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 962, թ. 108, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 36,37,45,46:

պաշտոնապես իրավունք չեն ստացել մասնակցելու խաղաղության վեհաժողովին: Այդ մասին են վկայում 1919 թ. մարտի 21-ի և հուլիսի 28-ի՝ Ա. Ահարոնյանի նամակ-զեկույցները՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին. «Մենք կռվող կողմ չենք տակավին: Տարաբախտաբար այդ համոզումը արդյունք է թյուրիմացության անշուշտ»[1], «Դեռ մենք չճանաչվեցինք իբրև անկախ պետություն՝ հակառակ մեր զոհերի և մեր թափված ճիգերին»[2]:

1918 թ. դեկտեմբերի 3-ին Հայաստանի խորհրդի[3] և կառավարության[4] փակ նիստերում քննարկվեց Փարիզում

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 151:
[2] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 290, թ. 16:
[3] Տե՛ս *«Զանգ»*, լրագիր, Երևան, 15 դեկտեմբերի, 1918 թ.:
[4] 1918 թ. աշնանը Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) մեծամասնության և կառավարության միջև առաջացել էին խորը հակասություններ, բանավեճեր և տարաձայնություններ հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության շուրջ: Հայաստանի խորհրդում (խորհրդարանում) քննադատության թիրախ էր դարձել կառավարությունը: Ստեղծված ճգնաժամային պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր կարող արդյունավետ աշխատել և իրականացնել իր առջև ծառացած գործառույթները: Անհրաժեշտ էր կազմել նոր կառավարություն կոալիցիոն սկզբունքով:
1918 թ. հոկտեմբերի 31-ին հայ հեղափոխական դաշնակցության և հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների խորհրդակցությունը քննարկեց կառավարություն կազմելու մասին հարցը. ընդունված որոշման նախագիծը ներկայացրեց Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) դատին: Ըստ նախագծի՝ նախարարները ընտրվելու էին երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ. այս հիման վրա վարչապետը կազմելու էր նոր կաբինետ:
Նոյեմբերի 4-ին Հայաստանի խորհրդի նիստում ընդունվեց կառավարության հրաժարականը և հանձնարարվեց Հ. Քաջազնունուն կրկին ստանձնել վարչապետի պաշտոնը և կազմել նոր կոալիցիոն կառավարություն (նախարարական պորտֆելները բաժանվեցին դաշնակցականների և ժողովրդականների միջև):
1. Արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյան ՀՅԴ կուսակցություն
2. Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյան ՀՅԴ կուսակցություն
3. Զինվորական նախարար Գեներալ Հովհաննես Հախվերդյան անկուսակցական
4. Ֆինանսների նախարար Արտաշես Էնֆիաճյան Հայ ժողովրդական կուսակցություն
5. Արդարադատության նախարար Սամսոն Հարությունյան Հայ ժողովրդական կուսակցություն
6. Լուսավորության նախարար Միքայել Աթաբեգյան Հայ ժողովրդական կուսակցություն

հրավիրվելիք խաղաղության վեհաժողովին Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցության անհրաժեշտության և նրա իրավասությունների հարցը: Դեկտեմբերի 5-ին Նախարարների խորհուրդը հաստատեց Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմը՝ Ա. Ահարոնյանի նախագահությամբ (անդամներ՝ Հ. Օհանջանյան և Մ. Պապաջանյան)[1], իսկ դեկտեմբերի 7-ին վարչապետ Հ. Քաջազնունին հավանություն տվեց Փարիզ մեկնող պատվիրակության գործունեության հիմնական դրույթներին (1. Նախկին ռուսահայ և տաճկահայ նահանգներից կազմվելու էր պետություն՝ միացյալ Հայաստան: 2. Հայաստանի մեջ մտնելու են ա/ բոլոր հողամասերը մեր ծրագրած ՊԵՐԵԴԵԼԻ-ի սահմաններում. բ/ Տաճկաստանից՝ հայկական վեց վիլայեթները առանց ոչ հայաբնակ ծայրագավառներից բաց սեփական ելքով դեպի ծով:

3. Հայաստանը ունենալու է ներքին ինքնավարություն և ինքնուրույնություն՝ քաղաքական ու ռազմական: Արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ Հայաստանի անկախությունը սահմանափակվելու է այն չափ միայն. որչափ դա անհրաժեշտ կլինի ապահովություն, հովանավորություն և աջակցություն ձեռք բերելու համար: 4. Հայաստանի մշտական չեզոքությունը ապահովվելու է միջազգային երաշխիքներով: 5. Հայաստանի անկախութեան ապահովումը պետք է որո-

7. Պարենավորման նախարար Լևոն Ղուլյան Հայ ժողովրդական կուսակցություն
8. Հանրային խնամատարության նախարար Խաչատուր Կարճիկյան ՀՅԴ կուսակցություն
Ա. Էնֆինջյանի*, Մ. Աթաբեկյանի և Լ. Ղուլյանի բացակայության պատճառով Հ. Քաջազնունին հանձնարարեց այդ պաշտոնները ժամանակավորապես վարեն Խ. Կարճիկյանը (Ֆինանսների), Ս. Հարությունյանը (Լուսավորության) և Ա. Մանուկյանը (Պարենավորման): Որոշ ժամանակ անց Հայ ժողովրդական կուսակցության անդամները հեռացան կառավարությունից:
[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 105, թ. 80, ֆ. 206, g. 1, գ. 2, թ. 109: Հ. Օհանջանյանը գտնվում էր Բեռլինում և պատվիրակությանը պետք է միանար Փարիզում:

նել մի կամ մի քանի պետությունների դիվանագիտական և ռազմական պաշտպանութեան մեջ. գերադասելի է մեկ պետութեան հովանավորությունը: Մեծ պետությունների շարքում նախընտրելի է այն մեկի հովանավորությունը, որն իր աշխարհագրական դիրքի և քաղաքական տենդենցների որպիսութեամբ ազատ է տերիտորիալ ձգտումներից և մեր երկրի ներքին քաղաքական կեանքին միջամտելու հակումներից: 6. Հայաստանը կարող է կապվել հարևան պետությունների հետ դաշնակցական /ֆեդերատիվ կամ կոնֆեդերատիվ/ կապերով: Եթե դաշնակցութեան մեջ չմտնի մեծ պետություններից որևէ մեկը, չեզոքութեան և հովանավորվելու պայմանները մնում են իրենց ուժի մեջ: 7. Աշխատել, որ համաձայնութեան պետությունները և միացեալ նահանգները ուղարկեն իրենց դիվանագիտական ներկայացուցիչներին Երևան և ընդունեն մեր ներկայացուցիչներին իրենց մոտ,- առանց սպասելու, որ Հայաստանի միջազգային դրությունը վերջնականապես որոշվի: 8. Այժմ նեթ պարտավորեցնել Թուրքիային դատարկել Անդրկովկասը մինչև 1914 թվի սահմանները, հանձնելով Հայաստանին իրեն պատկանող հողերը՝ բոլոր ամրություններով և ռազմամթերքներով, երկաթուղային, փոստահեռագրային և այլ պետական ու հանրային շարժական ու անշարժ բոլոր ստացվածքով: 9. Աշխատել, որ մեր բարեկամ մեծ պետություններից մեկի զորքը մտնի Տաճկա-Հայաստան մինչև մեր սեփական զինական ուժերի կազմակերպելը և հնարավորություն տա տաճկահայ փախստականներին վերադառնալ իրենց տեղերը: 10. Գրավված վայրերում թուրք զորքի և պաշտոնեաների կատարած ոճիրները և պատճառած վնասները ստուգելու համար հատուկ քննիչ հանձնաժողովներ կազմել համաձայնութեան պետությունների ներկայացուցիչներից: Թուրք կառավարութեանը պատասխանատու անել ոճիրների համար, իսկ թուրքական գանձարանը պարտավորվելու է վճարել պատճառած նյութական վնասները: 11. Տաճկահայաստանում կատարված բարբարոսությունների համար պատասխանատու անել իթթիհատական կառավարութեան անդամներին և երկրի բարձրաստիճան պաշտոնեաներին: Տարագրված տաճկահայերի վերադարձի և հայրենիքում տնտեսությունը վերականգնելու ծախքերը դնել Թուրքիայի վրա. վերադարձը և տեղավորումը կատարվելու է Հայաստանի և Համաձայնութեան պետությունների հսկողութեան տակ: 12. Օտարահպատակ հայերին արտոնություն տալ՝ որոշ ժամանակամիջոցում թողնել իրենց նախկին հպատակությունը և ընդունել Հայաստանի հպատակությունը՝ առանց սովորական ձևականությունների, պարզ հայտարարության միջոցով: 13. Աշխատել այժմ նեթ ֆինանսական օգնություն ստանալ Համաձայնութեան պետություններից: 14. Իրավունք ստանալ օտար երկրներում գտնվող հայկական առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունները անարգել Հայաստան փոխադրելու: 15. Պատվիրակությունը կոլլեգեալ մարմին է, բաղկացած երեք լիազոր պատվիրակներից: Մինիստր նախագահ Հովհաննես Քաջազնունի, Երևան, 7 դեկտեմբեր 1918 թ.)[1], որով հրահանգվում էր խաղաղության վեհաժողովին ներկայացնել ու պաշտպանել «միացյալ և անկախ Հայաստանի» գաղափարը: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին՝ առավոտյան ժամը 9-ին, Երևանի հասարակությունը նվագախմբի ուղեկցությամբ ճանապարհեց Փարիզ մեկնող Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանին[2]: Պատվիրակության հետ Եվրոպա մեկնեցին նաև արևմտահայության ներկայացուցիչներ Տ. Թերզիբաշյանը և Վ. Փափազյանը: Հայաստանի Հանրապե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 1 – 2:
[2] Տե՛ս *«Ազատ»* լրագիր, Երևան, 15 դեկտեմբերի, 1918:

տության պատվիրակությանը հանձնարարվեց նաև համագործակցել Պողոս Նուբար փաշայի գլխավորած Արևմտահայ Ազգային պատվիրակության հետ և միասնաբար պաշտպանել Հայ դատը[1]: Ի դեպ, թե՛ Հայաստանի Հանրապետության և թե՛ սփյուռքի քաղաքական գործիչներից շատերը գտնում էին, որ Փարիզի խաղաղության վեհաժողովին պետք է ներկայացնել հայ ժողովրդի պահանջները ***Մեծ Հայաստանի ստեղծման մասին:*** Այդ մոտեցումը քննադատության արժանացավ Հ. Քաջազնունու կողմից: Երևանում հայ երիտասարդությանը կարդացած «Հայաստանի անկախությունը և մեր ապագա սահմանները» դասախոսության մեջ նա պաշտպանեց չափավոր տեսակետ՝ նշելով, որ արտերկրի հայ գործիչների «...***պահանջները անիրականալի ու անգամ վնասակար են մեր ապագայի տեսակետից: Եթե մենք ընդունենք Մեծ Հայաստանի սահմանները, այն ժամանակ մեր երկրի բնակչությունը ամբողջովին պիտի դառնա սահմանապահ զորք՝ պաշտպանելու համար պետության սահմանները***»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Այստեղ նկատելի է, որ վարչապետը սին հույսեր չէր փայփայում, թե Փարիզի խաղաղության վեհաժողովը կարող էր բավարարել Մեծ Հայաստանի ստեղծման՝ հայ ժողովրդի պահանջը: Նա գտնում էր, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Փարիզի խաղաղության վեհաժողովում ընդամենը պետք է պահանջի Ռուսահայաստան և Թուրքահայաստանից Բայազետ, Ալաշկերտ, Բասեն տարածքները, ելք դեպի Սև ծով[3]:

Հարցի քննարկումը բուռն տարաձայնությունների տեղիք տվեց: Դա անխուսափելի էր՝ պայմանավորված միջազգային նոր իրադրությամբ և տարածաշրջանում կատարված քաղաքական փոփոխություններով: Այնքան սուր էին քննարկումները, որ, ինչպես նշում է հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը, քիչ էր մնում՝ տեղի ունենար «չափազանց ամուր դաշնակցություն կուսակցության պառակտում»[1]: Գնդապետ Մ. Զինկևիչը 1918 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ռազմածովային բաժնի պետին ուղղված N 00429 գաղտնի զեկուցագրով տեղեկացնում է, որ թուրքական վտանգը վերացնելուց հետո տարածաշրջանում Անգլիայի ազդեցության հետևանքով տեղի ունեցած քաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխությունները ազդել են նաև Հայաստանի Հանրապետության ղեկավարների տրամադրության վրա: Կուսակցությունների դիրքորոշումների բազմազանության պատճառը հետևյալ հանգամանքներն են.

«1. Ազգայնականների երազանքները Հայաստանի անկախության, ֆեդերացիայի, կոնֆեդերացիայի կամ ինքնավարության մասին:

2. Թուրքահայաստանի միավորման հնարավորությունը Ռուսահայաստանին՝ Սև կամ Միջերկրական ծովեր ելք ունենալով:

3. Ռուսաստանի և նրա մոտալուտ վերականգնման նկատմամբ հավատի կորուստը և, որ նրանց հատկապես վախեցնում է, հին կարգերի վերականգնման հնարավորությունը, որի դեպքում կկրկնվեն 1914-1915 թթ. բռնությունները:

4. Կովկասում անգլիացիների և ֆրանսիացիների բոլորովին չհստակեցված վարքագիծը, որի ետևում հայերը տեսնում են Ռուսաստանի հետ նրանց հաշվի չնստելու հնարավորությունը:

Այս բոլոր գործոնները (Հայաստանի- Գ.Պ.) քաղաքա-

---

[1] Տե՛ս ***Հակոբյան Ա.***, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 108:
[2] ***«Հայրենիք»*** ամսագիր, Բոստոն, 1952, N7, հուլիս, էջ 3:
[3] Տե՛ս ***Վրացեան Ս.*** Կեանքի ուղիներով, Դէմքեր, Դէպքեր, Ապրումներ, Ե հատոր, 1966, էջ 44:

[1] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 37, ՀԱԱ, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 32.

կան գործիչների շրջանում բուռն քննարկումների առարկա են դարձել և ընկել կուսակցությունների ու կառավարության ընդունած որոշումների հիմքում»[1]:

Գնդապետ Լեսլին 1918 թ. դեկտեմբերին «Հատուկ խորհրդակցությանը» ուղղած գաղտնի զեկուցագրով տեղեկացնում է, որ Հայաստանի խորհրդում իշխող կուսակցությունը դաշնակցությունն է: Այն բաժանված է երկու թևի՝ հին դաշնակցականների, որոնք չափավոր են և ընդունում են Ռուսաստանի հետ համագործակցելու անհրաժեշտությունը: Երկրորդը երիտասարդ, նոր դաշնակցականներն են, որոնք առավել «...ծայրահեղական են և համապատասխանում են մեր բոլշևիկներին: Հին դաշնակցականներից կարելի է նշել Հ. Քաջազնունուն (վարչապետ), Դրոյին* (ազգային հերոս, զորաջոկատի հրամանատար), Արամ Փաշային* (ներքին գործերի նախարար, ունի իրական իշխանություն): Երկրորդ թևից՝ կարելի է նշել Թորոսյանին* (նախկին նահանգային կոմիսար, ուսուցիչ)»[2]:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում Հայաստանի Հանրապետության իշխանությունները դրսևորեցին արևմտյան կողմնորոշում՝ ակնկալելով, որ Համաձայնության պետությունները պատերազմում հաղթանակելու գործում կգնահատեն հայ ժողովրդի ներդրումը և հաշվի կառնեն նրա կրած մեծ զոհողությունները, տարածքային կորուստները, կցուցաբերեն բարի կամք և կաշխատեն լուծել հայության միասնական արդար պահանջը՝ ստեղծել միացյալ ու անկախ Հայաստան: Թեև Հայաստանի Հանրապետությունը Փարիզի խաղաղության վեհաժողովին հրավիրած չէր, սակայն որոշեց իր պատվիրակությունը ուղարկել Փարիզ, որտեղ արդեն գտնվում էր Արևմտահայ Ազգային պատվիրակությունը:

[1] ԳԱՐՓ, ֆ. 446, օп. 1, д. 9, л. 36, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 31.
[2] ԳԱՐՓ, ֆ. 446, օп. 1, д. 9, л. 27, 32, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 22, 27.

2. Հանրապետության դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ

Հայաստանի Հանրապետության գոյության երկրորդ շրջանում (1918 թ. դեկտեմբեր - 1920 թ. ապրիլ)՝ քաղաքական նոր պայմաններում, Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցը խիստ տարակարծությունների տեղիք տվեց: Հանրապետության քաղաքական ուժերի համար բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սակայն այն ձգտում էր բարիդրացիական, բնականոն հարաբերություններ հաստատել ոչ միայն ոչ խորհրդային պետական կազմավորումների, այլև Խորհրդային Ռուսաստանի հետ՝ անկախ նրանց քաղաքական կառուցվածքից: Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի անկախացման առաջին ամիսներին Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության դիվանագիտական ջանքերը հաջողություն չունեցան: Քաղաքական նոր պայմաններում Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերի բախման պայմաններում պաշտոնական Երևանը ձեռնպահ մնաց Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելուց, քանի որ այն կարող էր խիստ բացասական հետևանքներ ունենալ հանրապետության համար:

Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը նշում է. «ժողովրդի, հատկապես հասարակ մարդկանց մեջ Ռուսաստանի և ռուսական ամեն ինչի նկատմամբ ձգտումը պահպանվել է նախկին ուժով»[1]: Սակայն այդպես չէր քաղաքական ու կառավարական շրջանակներում. այստեղ տվյալ հարցի հանդեպ դրսևորվում էին

[1] ԳԱՐՓ, ֆ. 446, օп. 1, д. 9, л. 36, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 31.

տարբեր, հաճախ իրարամերժ մոտեցումներ: Այդ մասին գեներալ Ա. Դենիկինը իր հուշերում գրում է. «...չնկատվեց նախկին համերաշխությունը»[1] Ռուսաստանի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի խնդրում, այն դեպքում, երբ «թուրք-գերմանական հարձակման ընթացքում Հայաստանի կառավարող շրջանակներում ռուսական կողմնորոշումը միաձայն էր: Այն պահպանվել էր նաև անգլիական բռնազավթման առաջին շրջանում»[2]: Այնուհետև, շարունակում է գեներալը, «Կառավարող դաշնակցություն կուսակցության անդամների ձայները բաժանվեցին: Մի մասը պաշտպանում էր Ռուսաստանի հարավի կազմում Հայաստանի երկու մասերի ինքնավարության կամ նրա հետ համադաշնության գաղափարը»[3]: Դաշնակցություն կուսակցության՝ ռուսական դիրքորոշում ունեցող այդ թևը միաժամանակ «...զգուշանում է,- գրում է գնդապետ Մ. Զինկևիչը,- Ռուսաստանում միապետության վերականգնումից և հատկապես նրա սահմանադրական տարբերակից, կարծելով, որ այդ դեպքում կաճի «ռուսական ազգայնամոլությունը»:[4] «Մյուս մասը,- գրում է գեներալ Ա. Դենիկինը, - պահանջում էր «Միացյալ և անկախ Հայաստան» Կիլիկիայի հետ միասին՝ ելք ունենալով դեպի Սև և Միջերկրական ծովեր: Հայ «ժողովրդական կուսակցությունը» (լիբերալներ) արտահայտվեց Ռուսաստանին միանալու օգտին: Նրան միացան սոցիալիստ-հեղափոխականները, իսկ վրացիների հետ սերտ կապեր ունեցող սոցիալ-դեմոկրատները պաշտպանում էին Ռուսաստանից անջատվելու գաղափարը՝ ան-

[1] "Вопросы истории", N 2, 1994, л. 103, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 248.
[2] "Вопросы истории", N 2, 1994, с. 103, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 247.
[3] "Вопросы истории", N 2, 1994, с. 103, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 248.
[4] ՀԱԱ, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 32, ГАРФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 37:

կախ երկրի հետագա ճակատագրից»[1]:

Ինչպես նկատում ենք, Ռուսաստանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքական շրջաններում կային իրարամերժ մոտեցումներ: Իրականում ո՞րն էր Հայաստանի Հանրապետության ու նրա ղեկավարության վերաբերմունքը: Ունենալով մեծ ակնկալիքներ Փարիզի խաղաղության վեհաժողովից՝ Հայաստանի Հանրապետությունը կողմնորոշվեց դեպի Արևմուտք, սակայն չէր ցանկանում հարաբերությունները խզել Ռուսաստանի հետ, այլ ձգտում էր ստանալ նրա բարյացակամ վերաբերմունքն ու աջակցությունը իր առջև ծառացած ծայրահեղ բարդ խնդիրները լուծելու գործում: Այդ առնչությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «...***մեր նպատակն է ապահովել մեր անկախութիւնը եւ որոշ յենարան գտնել Ռուսիոյ մէջ***»[2] (ընդգծումը մերն է,- *Գ.Պ*): Այնուհետև նա նշում է. «ո՞ր Ռուսաստանի հետ խօսել եւ որի՞ բարեկամութիւնը ապահովել: ***Այդ ժամանակ կային երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի, Լենինի: Երեքն ալ համահաւասար ուժեղ, երեքն ալ նոյնքան հաւանականութիւններ ունէին որ տէրը պիտի դառնան ամբողջական Ռուսաստանի, բայց երեքն ալ միմեանց թշնամի: Երեք Ռուսաստանների հանդէպ, մեր վերաբերմունքը և սպասելիքները եղած են նոյնատեսակ, առանց գերադասելու մէկին կամ միւսին, առանց նրանց ներքին պայքարին մասնակցելու կամ պայմանաւորելու օժանդակելու մէկին միւսին դէմ***»[3] (ընդգծումը մերն է,- *Գ.Պ*): Պատմական այդ պահին հայ դիվանագիտությունը իր ջանքերն ուղղել էր դեպի Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումները, կոնկրետ՝ հարավի հակախորհրդային ուժերը՝ Ա.Դենիկինի իշխանությունը,

[1] "Вопросы истории", N 2, 1994, л. 103, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 248.
[2] ***Ռուբէն***, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 262:
[3] Նույն տեղում, էջ 257:

և փորձում էր ստանալ նրա աջակցությունը: Սակայն Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը», հավատարիմ իրենց «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրին, Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ պետության գոյությունը դիտում էին իբրև ժամանակավոր երևույթ, մինչև վերջնական հաղթանակը բոլշևիզմի՝ խորհրդային իշխանության դեմ: Այդ հանգամանքը ստիպում էր Հայաստանի կառավարությանը ծայրահեղ զգուշություն ցուցաբերել Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» նկատմամբ: 1918 թ. դեկտեմբերի 14-ին գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված գաղտնի զեկուցագրով գնդապետ Լեսլին տեղեկացնում էր, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարները «երազում են Հայաստանի ինքնուրույնության մասին և վախենում են մեզանից (Կամավորական բանակից- Գ.Պ.), որովհետև մենք սպառնում ենք նրանց (Հայաստանի- Գ.Պ.) անկախությանը: ...Մեզ այստեղ (Երևանում- Գ.Պ.) ուշադրությամբ հետևում են և համարյա ի վիճակի չենք աշխատելու: Ռուսներին և Ռուսաստանին համակրողներ շատ կան, սակայն նրանք կազմակերպված չեն և վախենում են դաշնակցականներից, հատկապես Արամ փաշայից՝ ներքին գործերի նախարարից»[1]:

Բոլոր դեպքերում հայ դիվանագիտությունը ձգտում էր պարզել, թե գեներալ Ա. Դենիկինի իշխանությունն ինչպես է վերաբերվում Հայաստանի Հանրապետության անկախությանը: Այդ նպատակով 1918 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության կառավարությունը եվրոպական պատվիրակության ռուսաստանյան առաքելության նախկին անդամ Միքայել Արզումանովին հանձնարարեց մեկնել Եկատերինոդար՝ պարզելու Ռուսաստանի հարավի ղեկավար շրջանների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության և Հայկական հարցի մասին: Դեկտեմբերի 16-ին, մինչև Եկատերինոդար մեկնելու հնարավորությունը պարզելը և հայկական պատվիրակության կազմը համալրելը, Մ. Արզումանովը Ա. Ահարոնյանի հանձնարարությամբ Թիֆլիսում նույն խնդրի շուրջ հանդիպումներ ունեցավ գեներալ Ա. Դենիկինի՝ Անդրկովկասում լեգալ և անլեգալ ներկայացուցիչների հետ: Դեկտեմբերի 19-ին Մ. Արզումանովի և նրա մարտական ընկեր (Սարիղամիշի և Օլթիի ճակատամարտերից), Կամավորական բանակի անլեգալ ներկայացուցիչ գեներալ Տետրուևի հանդիպման ժամանակ վերջինս հաղորդեց. «Ռուսաստանը ամեն գնով պետք է վերականգնվի 1914 թ. սահմաններում, բացի Լեհաստանից և Ֆինլանդիայից: Մենք հաշվի չենք նստի անգլիացիների և ֆրանսիացիների տարբեր պլանների հետ, այլ պետք է ստեղծենք միասնական Ռուսաստան:

...Ինչ վերաբերում է հայերին, ապա մենք հարցը լուծել ենք, որ նրանք ստանալու են լիիրավ ինքնավարություն Ռուսաստանի սահմաններում, իսկ թուրքահայերը կարող են անկախություն ստանալ, մենք այդ տարածքների նկատմամբ չենք հավակնում: Սակայն եթե վերջինները ցանկանան, մենք կարող ենք նրանց միացնել Ռուսահայաստանի հետ և միավորված Հայաստանը, որպես ինքնավար միավոր, կմտնի Ռուսաստանյան պետության կազմի մեջ»[1]: Նկատի ունենալով անկախության հարցում հայկական քաղաքական շրջանների վճռականությունը՝ թե՛ գեներալ Ա. Դենիկինը և թե՛ նրա ներկայացուցիչները հավաստիացնում էին, որ իրենց կամքը չեն թելադրելու: Գնդապետ Լեսլին Երևանում 1919 թ. հունվարի 12-ին՝ պաշտոնական ճաշկերույթի ժամանակ, որին ներկա էր նաև անգլիական գնդապետ Կ. Թեմպերլեյը, փորձում

[1] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 27, оп. 2, д. 39, л. 32, ՀԱԱ, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 22:

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 80-81:

էր հավաստիացնել և երաշխիքներ տալ, որ. «Ռուսաստանի վերականգնումը չպետք է հասկանալ միայն այն մտքով, թե վերաշինվելու է նախկին շենքը իր առաջվա միությամբ և ամբողջությամբ: Հայաստանը կարող է չմտնել Ռուսիայի մեջ, այլ կլինեն երկու առանձին պետություններ իրար բարեկամ, իրար աջակից»[1]: Բնավ չի կարելի պնդել, որ Կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարները երբևէ դրսևորեցին կամք ու ցանկություն՝ ճանաչելու Հայաստանի Հանրապետության անկախությունը: Ահա թե ինչու Ռուսաստանի հարավի կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ իր հարաբերություններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը դրսևորեց խիստ զգուշավորություն՝ հանդես գալով որպես անկախ հանրապետություն, քանի որ Կամավորական բանակի գլխավոր քաղաքական նպատակը «միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերականգնումն էր 1914 թ. սահմաններում: Ինչևէ, չունենալով գաղափարների ընդհանրություն Ռուսաստանի հարավի և Սիբիրի (ծովակալ Ա. Կոլչակ) ոչ խորհրդային պետական կազմավորումների քաղաքական ծրագրերի հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձգտում էր ճանաչվել իբրև անկախ պետություն, ապահովել երկու երկրների բարեկամական հարաբերությունները և օգտագործել նրանց հնարավորությունները մի շարք հրատապ խնդիրների լուծման համար:

Ռուսաստանի հետ կապերը պահպանելու մի շարք լուրջ դրդապատճառներ և հրատապ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ կային նաև հանրապետության գոյության այս երկրորդ շրջանում:

[1] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063, տես նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 24, ց. 2, գ. 65, թ. 2:

3. Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ

Ռուսաստանի հարավի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները պահպանվեցին մինչև բրիտանական զորամասերի՝ Անդրկովկասում հայտնվելու առաջին ամիսները: Քաղաքական նոր պայմաններում այդ հարաբերությունները նոր ընթացք ստացան: Եթե հանրապետության գոյության առաջին շրջանում դրանք կրում էին գաղտնի, կիսապաշտոնական բնույթ, ապա Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանի Հանրապետությունն ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքական կապերը: Նոյեմբերին ուժը կորցրել էին 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում ստորագրած պարտավորագիրը և հունիսի 4-ի հայտնի պայմանագիրը: Սակայն կարճ ժամանակ անց ծագեց նոր լուրջ խոչընդոտ, որի հետևանքով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հարաբերությունները նորից մտան գաղտնի, կիսապաշտոնական փուլ: Ավելին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկադրված էր ժամանակավորապես սառեցնել հարաբերությունները Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ: ***Դա պայմանավորված էր համաձայնության պետությունների՝ ի դեմս Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակից Ռուսաստանի հարավի ղեկավարության միջև Անդրկովկասում ծնունդ առած անհամաձայնություններով և նրանց վարած՝ հակասություններով լի, իրարամերժ, հակադիր քաղաքականությամբ: Իրողությունն այն էր, որ Անդրկովկասում բախվեցին նախկին դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերը, որը Հայաստանի Հանրապետության կառավարությանը դրեց բարդ և անգամ անելա-***

նելի վիճակի մեջ: Այս պայմաններում Ռուսաստանի հարավի հետ կապերը կարգավորելու համար Հայաստանի Հանրապետության իշխանություններից պահանջվեց ժամանակ, մեծ ջանքեր ու քաղաքական ճկունություն:

Բրիտանական հրամանատարության զորամասերը 1918 թ. նոյեմբերի վերջերից մաս-մաս սկսեցին մուտք գործել տարածաշրջան՝ փոխարինելով հեռացող թուրքական զորքերին, որոնք պարտություն էին կրել Առաջին աշխարհամարտում: Թուրքիայի պարտությունը պատերազմում նշանակում էր Օսմանյան կայսրության փաստական կապիտուլյացիա Համաձայնության պետությունների առջև: Նոյեմբերի 11-ին իր պարտությունը ընդունեց նաև Գերմանիան[1]: Համաձայն հոկտեմբերի 30-ին Մուդրոս նավահանգստում կնքված զինադադարի 11-րդ հոդվածի՝ թուրքական զորքերը պետք է հեռանային Անդրկովկասի ողջ տարածքից[2]:

Մուդրոսի զինադադարն ուժեղացնում էր Մեծ Բրիտանիայի դիրքերը Սև ծովում, Անդրկովկասում և ամբողջ Մերձավոր Արևելքում: Նոյեմբերի 11-ին համաձայնություն էր ձեռք բերվել (Կոմպյենի (Ֆրանսիա) անտառում՝ մարշալ Ֆոշի վագոնում) դաշնակից պետությունների և գերմանա-թուրքական համադաշնության միջև, համաձայն որի՝ վերջիններս իրենց զորքերը Ռուսաստանի տարածքներից պիտի դուրս բերեին միայն Համաձայնության պետությունների սահմանած ժամկետում, երբ նրանք կհասցնեին իրենց զորքերը մտցնել այդ տարածքները[3]: Մեծ Բրիտանիայի կառավարության 1918 թ. դեկտեմբերի 11-ի որոշումով անգլիական զորամասերը Կովկասում պետք է ապահովեին թուրքերի կողմից զինադադարի

[1] Տե՛ս *Բայբուրդյան Վ.*, Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 255:
[2] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), 1972, էջ 538:
[3] Տե՛ս *Գալոյան Գ.*, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 50:

պայմանների կատարումը[1]: 1918 թ. դեկտեմբերին Բաթումի նավահանգստով Սալոնիկից Անդրկովկաս ժամանեց շուրջ 30-35 հազար անգլիական զինվոր: Նախատեսվում էր մինչև 1919 թ. հունվարի կեսերը անգլիական զորքի քանակը հասցնել 100 հազարի: 15 հազար անգլիական զինվոր հանգրվանել էր Բաթումում, նույնքան էլ՝ Թիֆլիսում[2]:

Բրիտանական զինվորական հրամանատարությունը գեներալ Ա. Դենիկինին տեղեկացրեց Մեծ Բրիտանիայի կառավարության նպատակների մասին՝ ա) ստիպել գերմանացիներին և թուրքերին՝ անհապաղ ազատելու հաշտության պայմանագրով Թուրքիային չպատկանող տարածքները, բ) պահպանել կարգ ու կանոն Անդրկովկասում[3]: Գեներալ Ջ. Ուոքերը 1919 թ. հունվարին Ա. Դենիկինի ներկայացուցիչ գեներալ Էրդելիին հայտնեց, որ անգլիական զինվորական հրամանատարության նպատակն է մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշման ընդունումը Անդրկովկասում ապահովել ու պահպանել կարգ ու կանոն և աջակցել Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի կառավարություններին տարածաշրջանում կայունություն հաստատելու հարցում: Գեներալ Ջ. Ուոքերը Էրդելիին ներկայացրեց Անդրկովկասի հետագա ճակատագրի վերաբերյալ նախագիծ՝ կազմված երեք կետից.

«1. Ինքնավարության իրավունքով միացումը Ռուսաստանին 1914 թ. սահմաններով:

2. Ձևավորված պետությունների անկախության ճանաչում՝ նրանց լրիվ անջատումով Ռուսաստանից:

[1] Տե՛ս *Մախմուրյան Գ.*, Անգլիական վարչակարգը Անդրկովկասում և Հայաստանի կառավարությունը (1918 թ. դեկտեմբեր - 1919թ. օգոստոս), «Լրաբեր հասարակական գիտությունների», հանդես, Երևան, 2001, մայիս-օգոստոս, 2(604), էջ 63:
[2] Տե՛ս РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 51, л. 24:
[3] Տե՛ս Революция и гражданская война в описаниях белогвардейцев, էջ 90, Տե՛ս "Вопросы истории", N 1, 1994, էջ 126, *Деникин А.*, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 202:

3. Կովկասի Միացյալ Նահանգների ձևավորումը.

ա) որպես Ռուսաստանից անկախ ինքնուրույն կառուցվածք, կամ՝

բ) Ռուսաստանի հարավի հետ ֆեդերացիայի մեջ՝ ինքնավարության իրավունքով»[1]:

Կարևոր է նկատել, որ քողարկվելով խաղաղարարի առաքելությամբ՝ Անգլիան թաքցնում էր իր իրական նպատակը՝ հաստատվել Անդրկովկասում: Տարածաշրջանում նրա բոլոր քայլերը ուղղված էին դրան:

Դեռ 1917 թ. դեկտեմբերի 23-ին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը բաժանվել էր ազդեցության ոլորտների: Մեծ Բրիտանիան տնօրինելու էր Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Թուրքեստանը, Ֆրանսիայի վերահսկողության ոլորտի մեջ էին մտնելու Բեսարաբիան, Ուկրաինան, Ղրիմը և Դոնբասը[2]:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Մեծ Բրիտանիան անմիջապես ձեռնամուխ եղավ Կովկասը Ռուսաստանից վերջնականապես մեկուսացնելու և իր ազդեցությունը հաստատելու Անդրկովկասում: Անդրկովկասը մեծ նշանակություն ուներ Անգլիայի համար՝ որպես ռազմավարական կարևոր դիրք ունեցող տարածաշրջան, որը պետք է դառնար բոլշևիկների դեպի Մերձավոր Արևելք առաջխաղացումը կանխող արգելապատնեշ: Մեծ Բրիտանիայի մյուս հետաքրքրությունը անշուշտ նավթն էր[3]:

Անդրկովկասում հաստատվելու և իր ռազմավարությունը իրականացնելու համար Մեծ Բրիտանիան, բնականաբար, պետք է հաղթահարեր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը և հասներ այն բանին, որ Անդրկովկասն այլևս չմտներ նրա կազմի մեջ: Եվ պատահական չէր գեներալ Զ. Ուոքերի հայտարարությունը. «***Անգլիացիները չեն կարող թույլ տալ Ռուսաստանի հետ Անդրկովկասի վերամիավորվելուն ուղղված որևէ քարոզչություն***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Դա անգլիական գեներալը պատճառաբանում էր այս կերպ. «Խաղաղության վեհաժողովը Անդրկովկասի պետական կառուցվածքի հարցի լուծումը դեռևս չի տվել»[2]: Այս ամենը լույս է սփռում այն հարցի վրա, թե ինչու բրիտանական զինվորական հրամանատարությունն ամեն կերպ խոչընդոտում էր, որ Հայաստանի Հանրապետությունը հարաբերություններ չունենա գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ: Առաջին հայացքից թվում է անհասկանալի, թե այդ դեպքում ինչու Համաձայնության պետությունները և առաջին հերթին Մեծ Բրիտանիան ստանձնել էին պարտավորություն՝ ամեն կերպ օգնելու գեներալ Ա. Դենիկինին: ***Իհարկե, նպատակն այն չէր, որ վերջինիս միջոցով վերականգնվեր Ռուսական կայսրությունն իր նախկին սահմաններով, այլ այն, որ գեներալ Ա. Դենիկինը տապալեր խորհրդային իշխանությունը***: Մեծ Բրիտանիան Անդրկովկասում այնպիսի խորամանկ քաղաքականություն էր վարում, որ շփոթության մեջ էր գցում անգամ գեներալ Ա. Դենիկինին: Ուշագրավն այն էր, սակայն, որ Համաձայնության պետությունները գեներալ Ա. Դենիկինին անվերապահորեն օգնելու պարտավորություն էին ստանձնել: Հայերին թվում էր, թե «դաշնակից»

[1] Նույն տեղում, էջ 204:
[2] Տե՛ս РГ АСПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 151:
[3] Տե՛ս ***Ллойд Джордж Д.***, Правда о мирных договорах, т.1, Москва, 1957, էջ 274-276, 279-280, ***Черчилль У.***, Мировой кризис, Москва, 1932, էջ157:

[1] Революция и гражданская война в описаниях белогвардейцев, էջ 90. տե՛ս "Вопросы истории", N1, 1994, էջ 126, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 204.
[2] Նույն տեղը:

Մեծ Բրիտանիայի զինվորների ներկայությունն Անդրկովկասում կապահովի կայուն խաղաղություն, ազգամիջյան հակամարտությունները և տարածքային վեճերը արդարացի լուծում կստանան: Հայերը համոզված էին, որ Առաջին աշխարհամարտում թափած արյունը զուր չի կորչելու. մոտեցել է հատուցման երկար սպասված ժամը, և Համաձայնության պետությունների կառավարությունները կկենսագործեն իրենց խոստումները: Բրիտանական զորամասերի մուտքը տարածաշրջան (մինչև 1919 թ. առաջին ամիսները) ոգևորություն և մեծ հույսերի պատրանք ստեղծեց անգամ Հայաստանի Հանրապետության առանձին ղեկավարների և քաղաքական գործիչների շրջանում: Ա. Ջամալյանը 1918 թ. նոյեմբերի 26-ին շտապեց Թիֆլիսից հեռագրել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, թե «Համաձայնության երկրների զորամասերը ժամանել են Բաթում, անհրաժեշտ է շտապ ուղարկել ներկայացուցիչներ մի շարք խնդիրների, մասնավորապես գաղթականության հարցը կարգավորելու համար»[1]: Սակայն նույն Ա. Ջամալյանը նոյեմբերի 15-ին Ս. Տիգրանյանին ուղղած գաղտնի գրությամբ հայտնում էր նաև իր հիասթափությունը. «Տպաւորութիւնն այն է, որ անգլիացիք այս անգամ էլ մեզ հետ վատ խաղ պիտի խաղան: Այս տպաւորութիւնները հաստատւում են այն տեղեկութիւններով, որ ստացւում են Պարսկաստանից: Վերաբերմունքը դէպի մեզ այնտեղի անգլիացիների կողմից շատ վատ է»[2]: Այս զգուշացումը չսթափեցրեց հայ պետական, քաղաքական այն գործիչներին, որոնք ոգևորվել էին անգլիական զորքերի ներկայությամբ:

Ս. Տիգրանյանը 1919 թ. հունվարի 13-ի N 50 գաղտնի

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 66, թ. 118:
[2] Նույն տեղում, թ. 114:

գրությամբ Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին տեղեկացնում է. «Անգլիան հավան ու հովանի է և խրախուսում է Անդրկովկասյան անկախ պետությունների գործերը. Գեներալը (Ջ. Ֆորեստյե-Ուոքերը- Գ.Պ.) մինչև անգամ հետաքրքրվեց իմանալ, արդյոք ճիշտ է, որ Հայաստանի կառավարությունը համաձայնության է եկել գեներալ Ա. Դենիկինի հետ («Կամավորական զորաբանակ»): Ես իհարկե հանգստացրի անգլիացի գեներալին, որ թեև մենք լավագույն հարաբերություններ ունենք կամավորական զորաբանակի հետ, բայց ոչ մի համաձայնություն չունենք նրա հետ»[1]: Հայաստանի Հանրապետության նկատմամբ բրիտանական զինվորական հրամանատարության «ջերմ» վերաբերմունքի մասին հուսադրող և լավատեսական լուրեր էին ստացվում Թիֆլիսից՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և զինվորական ներկայացուցիչներից: 1919 թ. հունվարի 22-ին արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին ուղղված զեկույց-նամակում Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ, գեներալ Միքայել Արեշովը* տեղեկացնում է. «Բաթումում հայերի նկատմամբ անգլիական հրամանատարության սպաների և զինվորների վերաբերմունքը չափազանց ջերմ է: Բոլոր պաշտոնական հանդիպումներում անգլիական հրամանատարները հայտարարել են, որ ճանաչում են մեր ժողովրդին, նրան համարում են իրենց դաշնակիցը և հայերի համար կանեն իրենցից կախված ամեն ինչ»[2]: Անգամ Հ. Քաջազնունին Հայաստանի խորհրդի 1919 թ.

[1] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 23, ց. 2, գ. 65, թ. 1:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 89, գ. 993, թ. 2, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 76-77:

փետրվարի 11-ի նիստում հայտարարեց. «Գեներալ Ուոքերը նշանակել է իբրև իր ներկայացուցիչ Երևանում մի բարձրաստիճան սպա՝ գեներալ Վ. Ասսերը: Դա մի նոր ապացույց է բրիտանական բանակի ուշադիր և բարյացակամ վերաբերմունքի՝ դեպի մեզ»[1]: Իսկ Կամավորական բանակի հետախուզական վարչությունը նույն թվականի հունվարի կեսերին շտապել էր հաղորդել գեներալ Ա. Դենիկինին, որ «Անգլիացիների և Հայաստանի միջև հաստատվել են ամենալավ հարաբերությունները»[2]: Սակայն այդ ամենը ընդամենը խաբկանք էր. «Ենգ էին ու սուտ,- գրում է Գ. Չալխուշյանը,- մեր մեծ դաշնակիցների շողոքորթ հավաստիացումները, թե մենք փոքր դաշնակիցներ ենք «nos petits alliés»: Ամեն ինչ սուտ էր, սուտ: Ամեն ինչ ենգ, պատրանք»[3]: Հայերին թվում էր, թե «այլևս ետևում մնացին տառապանքն ու զրկանքը, կոտորածն ու սովը, թվում էր, թե բազմաչարչար հայ ժողովուրդը «դաշնակիցների» հովանու տակ վերջապես ձեռք կբերի երանելի խաղաղություն, ազատ զարգացման ու նաև ազգային խնդիրների լուծման հնարավորություն: ...Սակայն էյֆորիան, ինչպես ընդունված է ասել, կարճ տևեց»[4]: 1918 թ. դեկտեմբեր - 1919 թ. առաջին ամիսների դեպքերը համոզեցին Հայաստանի Հանրապետության պետական ու քաղաքական գործիչներին, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն Անդրկովկասում հետապնդում է միայն սեփական շահերը: Նա չէր ընդունում Կամավորական բանակի առաջխաղացումն իր ազդեցության ոլորտի տարածքներում և առիթը բաց չէր «...*թողնում ընդգծելու իրենց հակակրությունը միացեալ Ռուսաստանի գաղափարին*»[1] (ընդգծումը մերն է-Գ.Պ.): Ձգտում էր Անդրկովկասը զերծ պահել դենիկինյան ազդեցությունից և ամբողջությամբ անջատել Ռուսաստանից:

Այդ մասին Երևանից 1919 թ. հունվարի 23-ի գաղտնի զեկուցագրում՝ ուղղված Կամավորական բանակի ռազմածովային նավատորմի բաժնի պետին, գրում էր նաև գնդապետ Մ. Զինկևիչը: «Անգլիացիները Կովկասում վարում են իրենց ինքնուրույն քաղաքականությունը և բոլորովին չեն հիշատակում Կովկասը Ռուսաստանին պատկանելու հանգամանքը: ...Անգլիան ձգտում է Կովկասը անջատել Ռուսաստանից: Այդ հանգամանքը խթանում է հակառուսական շրջանակների գործունեությունը»[2]: Ա. Մալխազովը 1919 թ. փետրվարի 7-ին «Թիֆլիսի այցի մասին» զեկուցման մեջ տեղեկացնում էր, որ «...անգլիացիները ոչ միայն չեն թաքցնում, այլև հաճախ շեշտում են իրենց հետաքրքրությունը կովկասյան գործերում և ամեն կերպ խոչընդոտում են այստեղ ռուսական ազդեցության ամրապնդումը»[3]:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո Անդրկովկասում լրջորեն բախվեցին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի՝ այսպես կոչված նախկին դաշնակիցների շահերը: Մեծ Բրիտանիան ձգտում էր տարածաշրջանից դուրս մղել Ռուսաստանի հարավի ուժերին և ամրապնդել իր դիրքերը: Այդ պահին Ռուսաստանի հարավը տնօրինում էր գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը», որի հետ լավ հարաբերությունների մեջ էր Հայաստանի Հանրապետու-

[1] ՀԱԱ, ֆ. 198, g. 1, գ. 15, թ. 121:
[2] РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 15, թ. 121.
[3] ՀԱԱ, ֆ. 4033, g. 6, գ. 293, թ. 16:
[4] *Զոհրաբյան Է.*, Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Շարուր-Նախիջևանի հարցում 1919 թ. առաջին ամիսներին, «Բանբեր Երևանի համալսարանի», 2001, N 2, էջ 3:

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 181, մաս I, թ. 35:
[2] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 44, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 39.
[3] ՀԱԱ, ֆ. 223, g. 1, գ. 75, թ. 20:

թյունը: ***Պատահական չէր, որ Մեծ Բրիտանիան չէր հանդուրժում Հայաստանի Հանրապետության բարեկամական կապերը Ռուսաստանի հարավի հետ և նրան համարում էր անուղղելի ռուսասեր, անվստահելի մի տարր Անդրկովկասում***[1]: Իր ռազմավարական նպատակն իրագործելու համար Մեծ Բրիտանիան բնականաբար պետք է ապավիներ տարածաշրջանի ժողովուրդների աջակցությանն ու համակրանքին: Հայերը նրան վստահություն չէին ներշնչում՝ ավանդական ռուսական կողնորոշման պատճառով: Բրիտանական զինվորական հրամանատարությունը Անդրկովկասի մահմեդական բնակչությանը դիտում էր ավելի հավատարիմ, հակառուսական ավելի վստահելի տարր. «Անդրկովկասի թիւրքութիւնը բրիտանական զօրահրամանատարութեան օրով աւելի նպաստավոր պայմանների մեջ է գտնվում,- գրում է Ս. Տիգրանյանը, - քան գերման-օսմանյան հաղթական օկուպացիայի ժամանակ: ...***Անգլիացին չե հավատում հային, ավանտաբար համարելով սրան անուղղելի ռուսասեր, ռուսական օրիենտիցիայի անհողտոտ հետամտող***... Բնորոշ է որ գեներալ Ֆորստիե Ուոկկերի պահանջով կամավորական զորաբանակի ներկայացուցիչը (գնդապետ Լեսլի- Գ.Պ.) հեռացավ Երեվանից դեպի Եկատերինոտար, այդ մի նոր փաստ է ապացուցանելու Անգլիայի ունեցած վերաբերմունքը դեպի Ռուսիայի ներկայությունը Անդրկովկասում: Այն համարումն ու այս վերաբերմունքն է, որ տրամադրում է բրիտանական զորահրամանատարությանը չնպաստել մեր ուժերի կազմակերպմանը ու զորեղացմանը թյուրքության դեմ Անդրկովկասում, որովհետեվ թյուրքն է նրա աչքում ամենավստահելի պատվարը Ռուսիայի դեմ այստեղ»[2] (ընդգծումը մերն է-

[1] Տե՛ս ***Բաբայան Ա.***, էջեր Հայաստանի անկախության պատմությունից, էջ 32:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ. 2-3, տե՛ս նաև ***Վրացյան Ս.***, Հայաստանի Հանրապետություն, էջ 259:

Գ.Պ.): Առաջին աշխարհամարտի նախօրյակին Անգլիայի համայնքների պալատի անդամ Բեքստոնը Հովի. Թումանյանի հետ զրույցի ժամանակ նշել է. «...Դուք պետք է Ռուսաստանի հետ լինեք: Երբեք մի հավատացեք, որ Անգլիան կարող է լինել ձեր պաշտպանը: Նա շատ մեծ հետաքրքրություններ ունի կապված մահմեդական աշխարհի հետ: Մենք, հայ ժողովրդի բարեկամներս, անգլիական պառլամենտում շատ հաճախ երկյուղում ենք հանդես գալ ձեր ժողովրդի պաշտպանությամբ, որպեսզի հայերին պատրանքների առիթ չտանք, որ Անգլիան նրա շահերի պաշտպանն է, պատրանքներ, որոնք շատ թանկ կարող է նստել նրա վրա»[1]:

Անգլիական զինվորական հրամանատարությունը օգտագործում էր բոլոր միջոցները՝ պայքարելու հայերի ռուսամետության դեմ: Գեներալ Ա. Դենիկինը գրում է. «Անգլիական ներկայացուցիչները՝ Ուոքերը, Բիչը և մյուսները, պայքարում էին հայերի ռուսամետության դեմ՝ ճնշելով և վախեցնելով նրանց և մյուս կողմից գայթակղելով Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի հատվածներին Սև ծով ելք ունեցող ինքնուրույն պետության ստեղծման հեռանկարով: Գեներալ Ուոքերը պաշտոնապես խիստ քննադատում էր Հայաստանի կառավարությանը Ռուսաստանի նկատմամբ ձգտում ունենալու, Հայաստանի զինված ուժերում ռուս սպաների ծառայության և մասնավորապես Երևանում Կամավորական բանակի ներկայացուցիչ գտնվելու համար»[2]: Ինչպես նկատում ենք, հայերի ռուսամետության դեմ պայքարելիս անգլիացիները տալիս էին նաև գայթակղիչ խոստումներ՝ ստեղծել հայկական ինքնուրույն մեծ պետություն, որը կմիավորեր Արևելահայաստանի և Արևմտահայաստանի

[1] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 76, թ. 27:
[2] "Вопросы истории", 1994, N 2, с. 103, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 27.

հատվածները և ելք կունենար դեպի Սև ծով: Հայաստանի Հանրապետության պետական, քաղաքական գործիչները դեռևս հավատում էին, որ Փարիզի խաղաղության վեհաժողովում Մեծ Բրիտանիան հավատարիմ կմնա 1917 թ. դեկտեմբերի 21-ին Համայնքների պալատում Լ. Ջորջի արած այն հայտարարությանը, որ «Հայաստանը երբեք այլևս նորից չի դրվի թուրքերի նողկալի տիրապետության տակ»[1]: Այնպես որ, հայ քաղաքական-պետական գործիչների համար չափազանց դժվար էր դիմագրավել անգլիական զինվորական հրամանատարության խարդավանքներին և ճիշտ կողմնորոշվել ստեղծված բարդ քաղաքական կացությունում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Առաջին աշխարհամարտի հոգեբանական ազդեցության տակ դեռ շարունակում էր Ռուսաստանի հարավը համարել համաձայնության պետությունների դաշնակից՝ նրանց բարեկամ: Նա չկարողացավ ժամանակին և ճիշտ գնահատել պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիայի քողարկված, երբեմն բացահայտ հակառուսական զավթողական ձգտումները Անդրկովկասում. «...*չէր գիտակցում կամ չէր կամենում գիտակցել*,- գրում է Ռուբեն Դարբինյանը,- *քաղաքական այն պարզ ճշմարտությունը, թէ ռուսը, որին նա բարեկամ է համարում, անհամեմատ աւելի մեծ թշնամի է դաշնակից պետութեանց համար, քան թուրքը: Հետեւաբար բարեկամությունը ռուսի հետ կասկածելի եւ վտանգաւոր էր դարձնում նաեւ հայի դիրքը եւ քաղաքականութիւնը դաշնակից մեծ տէրութեանց աչքում*»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ռ. Դարբինյանը այնուհետև գրում է, որ այսպիսի ծանր քաղաքական կացության մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունը «...այլեւս ի վիճակի չէր որեւէ ընտրութիւն

[1] *Գալոյան Գ.*, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 57:
[2] *Դարբինեան Ռուբէն*, Ռուսական վտանգը, էջ 76:

անելու նրանց միջեւ, մերժելու մէկի թէկուզ փոքրիկ անմիջական օգնութիւնը՝ ստանալու համար միւսի մեծ, թէեւ ոչ անմիջական աջակցութիւնը»[1]: Ստեղծված քաղաքական բարդ իրադրության մեջ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունից պահանջվում էր աչալուրջ հետևել դեպքերի ընթացքին, առաջին հայացքից հայի համար նպաստավոր պայմանների և տրվող խոստումների խորքում տեսնել այն ծուղակը, որ պատրաստվում էր նրա համար:

Գեներալ Գ. Կորգանովը 1919 թ. հունվարի 20-ին Թիֆլիսից Ս. Տիգրանյանին ուղղած գաղտնի զեկուցագրում գրում էր. «Մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի չափազանց զգուշավոր: Մենք չենք կարող և չպետք է վարենք բացառապես անգլամետ կամ ռուսամետ քաղաքականություն: Մենք պատերազմի հենց սկզբից մեր ճակատագիրը կապել ենք Համաձայնության երկրների հետ և դրանից չենք հրաժարվել մինչև վերջին օրը: Այժմ մենք բոլորին պիտի հասկացնենք, որ մեր հարցերի լուծումը սպասում ենք ոչ թե Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից կամ Ամերիկայից առանձին-առանձին, այլ Համաձայնության երկրներից: Մեր ճակատագիրը պետք է որոշի դաշնակիցների խորհրդաժողովը Փարիզում: Իսկ մինչ այդ որոշումը սխալ կլիներ մեր բարեկեցությունը կապել Համաձայնության անդամ այս կամ այն երկրի հետ, քանի որ հնարավոր չէ կանխատեսել այդ երկրի դիրքորոշումը ապագա խորհրդաժողովում: Հնարավոր է, որ մենք ժամանակավոր հաջողություն ունենանք, սակայն հնարավոր է նաև, շատ բան կորցնենք»[2]:

Փարիզի խաղաղության վեհաժողովը բացվեց 1919 թ. հունվարի 18-ին: Ինչպես արդեն նշել ենք, հայությունը մեծ ակնկալիքներ ուներ, որ վեհաժողովը կհատուցի պատե-

[1] Նույն տեղը:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 35-36:

ռազմի տարիներին իր կրած վիթխարի կորուստները և կնպաստի ազգային իղձերի իրականացմանը: 1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ժամանեց Փարիզ, որտեղ արդեն գտնվում էր Արևմտահայ ազգային պատվիրակությունը եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Սկզբից ևեթ բացառվեց երկու պատվիրակություններից հայության միասնական կամքն արտահայտող միացյալ պատվիրակություն ստեղծելու ջանքերը, քանի որ առանցքային մի շարք հարցերում լուրջ տարաձայնություններ առաջացան, որոնք էլ իրենց բացասական ազդեցությունն ունեցան Հայկական հարցի դրական լուծման ընթացքի վրա: Տևական բանակցություններից հետո՝ 1919 թ. փետրվարի 25-ին, վեհաժողովին ներկայացվեց հայության միասնական պահանջը՝ ճանաչել հայկական պետությունը՝ Կովկասյան Հայաստանը, Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթները, Կիլիկիայի չորս սանջակները ներառող սահմաններով: Առաջարկվում էր Հայաստանը դնել դաշնակիցների հոգածության ներքո և առնվազն քսան տարով պետություններից մեկին հանձնել նրա մանդատը: Հայկական պատվիրակությունները ցանկություն հայտնեցին *միացյալ, անկախ և ազատ Հայաստանի* հովանավորությունը (մանդատը) հանձնել ԱՄՆ-ին կամ էլ նոր կազմվելիք Ազգերի լիգային: Այս առաջարկները ներկայացնելով Փարիզի խաղաղության վեհաժողովին՝ հայությունը մեծ հույսերով սպասում էր նրա վճռին, որը շատ էր ուշանում: Իսկ անգլիական զորքերի առկայությամբ պայմանավորված՝ Անդրկովկասում ստեղծվել էր բարդ ու հակասական իրադրություն, և Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը պետք է կարողանար ժամանակին և ճիշտ կողմնորոշվել քաղաքական վայրիվերումների քաոսում: Թվում էր, թե Փարիզի խաղաղության վեհաժողովում եղանակ ստեղծող Անգլիան, համաձայն իր խոստումների, բարյացակամ վերաբերմունք կդրսևորի Հայաստանի ու հայության նկատմամբ: Մինչդեռ նման բան չէր զգացվում, և ***Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը շփոթված էր Անգլիայի քայլերից, որի նպատակն էր չեզոքացնել հայերի ռուսամետությունը, խափանել Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հարավի հետ.***

1919 թ. փետրվարի 7-ին տեղեկատվական բյուրոյի նախագահ Ա. Մալխազովի գաղտնի զեկույցում նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում «***իշխում է շվարածություն անգլիացիների քաղաքականության կապակցությամբ***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Գնդապետ Մ. Զինկևիչը ևս նույն թվականի հունվարին Կամավորական բանակի շտաբին ուղղած N 4 գաղտնի զեկուցագրում տեղեկացնում էր, որ «***Հայերի մոտ արդեն զգացվում է հիասթափություն անգլիացիների նկատմամբ***»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): «Ռուսները նոնյպես «իրապես շփոթած» էին բրիտանացիներու դիրքորոշումէն,- գրում է Ագապի Նասիպյանը,- եւ զանոնք կը դիտէին բացարձակ անվստահութեամբ»[3]: Գեներալ Ա. Դենիկինը բրիտանական զինվորական հրամանատարությունից պահանջեց պարզաբանել, թէ «***Հանձին անգլիական հրամանատարության ես Անդրկովկասում բարեկամնե՞ր, թէ՞ թշնամիներ ունեմ***»: Ռուսական ազգային խորհուրդը հայտարարեց, որ «Ցավոք, անգլիացի դաշնակիցների ժամանման հետ կապված ռուսների հույսերը և սպասելիքները չիրականացան, քանի որ թվում է՝ նրանք այստեղ են եկել ոչ թե դաշնակցային պարտավորությունները կատարելու և տառապ-

[1] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 75, , թ. 20:
[2] ՀԱԱ, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 51:
[3] ***Նասիպեան Ագապի***, Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923, Պեյրութ, 1994, էջ 162:

յալ Ռուսաստանին օգնելու, այլ միայն սեփական տնտեսական և քաղաքական շահերը հետապնդելու համար»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ինչպես նկատում ենք, դաշնակից պետության զորքերի մուտքն Անդրկովկաս մեծ հույսեր էր ներշնչել նաև Ռուսաստանի հարավի հակախորհրդային քաղաքական ուժերին, որոնք համոզված էին, որ կստանան դաշնակցի համակողմանի աջակցությունը: Սակայն շատ շուտով պարզվեց, որ Անգլիան, թափանցելով նախկին Ռուսական կայսրության տարածք՝ Անդրկովկաս, «մոռացել» է իր դաշնակցային պարտավորությունները և գործնականում հետապնդում է այնտեղ ամրապնդվելու նպատակ: Այդ ամենը, սակայն, իրագործում էր քողարկված՝ հանդես գալով որպես առաջադիմության և խաղաղության երաշխավոր, որը, իբր, նկրտումներ չունի նախկին ռուսական տարածքների նկատմամբ:

1918 թ. նոյեմբերի 17-ին, երբ բրիտանական զորամասերը մտան Բաքու, անգլիական զորքերի հրամանատար գեներալ Վ. Թոմսոնը Համաձայնության պետությունների անունից հրապարակեց մի կոչ, որում ասված էր. «Դաշնակիցները երբէք մտադիր չեն գրաւել իրանց համար Ռուսաստանի նոյնիսկ մի մատնաչափ հող: Թէ ինչ ներքին կառավարութիւն կունենան Ռուսաստանի այլ և այլ մասերը - այս հարցը պիտի վճռեն իրանք Ռուսաստանի ժողովուրդները, առանց դաշնակիցների միջամտութեան: Մենք գալիս ենք միայն կարգ հաստատելու, ջնջելով խառնակութիւնների բոյնը, որոնք ստեղծում են տաճիկները և գերմանացիք, նպատակ ունենալով խանգարել խաղաղութեան և յառաջադիմութեան հաստատմանը»[2]: Անգլիայի արտաքին քաղաքակա-

[1] "Вопросы истории", 1994, N 1, с. 129, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 210.
[2] ՀԱԱ, ֆ. 1022, g. 1, գ. 117, թ. 1:

նության բնորոշ գիծն էր՝ իր իրական նպատակները քողարկել խաղաղասիրության ու մարդասիրության շղարշով: Հիշենք թեկուզ այն փաստը, որ մասնակցելով Առաջին աշխարհամարտին և ունենալով զավթողական նկրտումներ՝ Անգլիայի կառավարող շրջանները հայտարարում էին, թե իրենք պատերազմի մեջ են մտել փոքր ու հալածված ժողովուրդներին, այդ թվում՝ հայերին ազատագրելու համար: Թե իրականում Անգլիան ինչպես վնասեց հայությանը, հայտնի է բոլորին: Շուտով ռուսներին էլ պարզ դարձավ, որ «Անգլիան չունի մշտական բարեկամներ ու մշտական թշնամիներ, այլ ունի մշտական շահեր»: Անգլիան Անդրկովկասում հետապնդում էր միայն սեփական շահերը: 1918 թ. դեկտեմբերի 6-ին գեներալ Վ. Թոմսոնի՝ Մեծ Բրիտանիայի կառավարությանն ուղղված զեկուցագրից հայտնի է դառնում, որ անգլիական զորքերի առջև խնդիր էր դրված վերահսկողություն սահմանել երկրամասի ամբողջ տնտեսական և քաղաքական կյանքի վրա[1]: Հայտնի է, որ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» նույնպես չկարողացան ժամանակին և ճիշտ գնահատել Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը: Հաճախ նրանք դիմում էին բրիտանական զինվորական հրամանատարությանը այնպիսի պահանջներով, որոնք «...ամբողջովին հակասում էին նրանց տրված հրահանգներին,- գրում է գեներալ Ա. Լուկոմսկին: -Դրանց կատարումը անխուսափելիորեն կհանգեցներ հանրապետությունների (Անդրկովկասի- Գ.Պ.) հետ պատերազմի»[2]: Համաձայնության պետությունների ռուսական քաղաքականությունը հենց առաջին օրերից «...երկակի, անորոշ բնույթ ընդունեց,- գրում է գեներալ Ա. Դենիկինը,- և ինձ դրդեց դիմել առանձնակի զգու-

[1] Տես ***Գալոյան Գ.***, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 54-55:
[2] "Революция и гражданская война в описаниях белогвардейцев", с. 92.

շության: Ամեն դեպքում Ռուսաստանի հարավում իմ ղեկավարման և հրամանատարության ողջ ընթացքում ես Համաձայնության երկրներին Ռուսաստանի անունից ոչ մի անգամ ոչ գրավոր, ոչ բանավոր քաղաքական, տարածքային կամ տնտեսական որևէ պարտավորության խոստում չեմ տվել: Նրանց ներկայացուցիչների հետ բոլոր հանդիպումներում ես այն տեսակետն էի առաջ քաշում, որ մեզ օգնելը նրանց բարոյական պարտքն է և բխում է իրենց իսկ շահերից»[1]: ***Գեներալ Ա. Դենիկինը նկատի ուներ այն, որ բոլշևիզմի դեմ Կամավորական բանակի պայքարը արտահայտում է նաև Անգլիայի շահերը: Բայց նա չէր նկատում մեդալի մյուս կողմը. Կամավորական բանակի ձգտումը՝ վերականգնել Ռուսական կայսրությունը նախկին սահմաններով, հակասում էր Անգլիայի շահերին, ուստի նա աշխատում էր Անդրկովկասն ազատել ռուսական ազդեցությունից: Դրա համար էլ անգլիական զինվորական հրամանատարությունը դեմ էր Կամավորական բանակի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններին և ձգտում էր խզել դրանք:***

Հայերի ռուսամետությունը չեզոքացնելու նպատակով նրանք օգտագործում էին պայքարի բոլոր ձևերն ու միջոցները: Այսպես, օրինակ, բանը հասավ այնտեղ, որ անգլիացիք ամեն կերպ արգելակում էին հայկական պատվիրակության մեկնումը Փարիզ՝ գտնելով, որ նրա անդամներն ունեն ռուսական կողմնորոշում և կապի մեջ են Կամավորական բանակի հետ: Հայաստանի Հանրապետության կառավարությանը հայտնի չէր Եվրոպա մեկնող Հայաստանի Հանրապետության պատվիրակության մուտքի արտոնության ձգձգման շարժառիթները, և իշխանական շրջանակներում այդ հարցի շուրջ ձևավորվել էին տարակարծություններ: 1919 թ. հունվարի 13-ին Ա. Ահարոնյանին ուղղված գաղտնի նամակ-հրահանգում Ս. Տիգրանյանը գրում է. «Ինչու մինչև այժմ մնացել եք Թիֆլիսում, արդյոք հնար չեղա՞վ Եվրոպա անցնելու և ինչու: Այստեղ ամենքը շատ անհանգիստ են այդ հապաղման պատճառով և դժգոհում են, մանավանդ երբ լսում են, որ պատվիրակությունների ընտանեկան հանգամանքներն են արգելառիթ լինում»[1]: Սակայն Ա. Ահարոնյանը դեռ հունվարի 8-ին Թիֆլիսից Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի նամակում[2] տեղեկացրել էր, որ «Տարաբախտաբար հայվրացական անակնկալ ռազմադեպը արգելք եղավ մեր պատվիրակության ժամ առաջ մեկնելուն: Անգլիական զին. միսիոնի գլխավոր գեներալ Ռայկրոֆտը հասնելուն պես նախ բերանացի, ապա գրավոր հաղորդեց ինձ. մինչև հայվրացական ռազմադեպը չհարթվի, նա չի կարող թույլ տալ ... հայ պատվիրակությանը Եվրոպա մեկնել: Հունվարի 4-ին միայն Ուոքերը հայտնեց, որ մեր պատվիրակությունը կարող է մեկնել»[3]: Ա. Ահարոնյանն իր քարտուղար Ա. Միրզայանի և գյուղատնտես Հ. Փիրուզյանի հետ Թիֆլիսից մեկնեց հունվարի 9-ին և Փարիզում էր փետրվարի 4-ին[4]: Մինչև Եվրոպա մեկնելու մուտքի արտոնության թույլտվություն ստանալը Մ. Պապաջանյանը հունվարի 3-ին Ա. Ահարոնյանի համաձայնությամբ ընտանեկան խնդրով մեկնեց Բաքու, իսկ նույն ամսի 27-ին վերադարձավ Թիֆլիս՝ գեներալ Գ. Կորգանովի[5] հետ Փարիզ մեկնելու համար[6]: Սակայն բրիտանական զինվորական հրամանատարությունը դարձյալ միտումնավոր ձգձգեց Մ. Պապաջանյանի, գեներալ Գ. Կորգանովի, Հովի.

[1] "Вопросы истории", 1993, N8, с. 100, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 59.

[1] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 27, ց. 2, գ. 65, թ. 4:
[2] Ս. Տիգրանյանը նամակը ստացել էր ուշացումով՝ հունվարի կեսերին:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 29:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 29, 121:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 220:
[6] Տե՛ս՝ ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 29, 75, 89:

Քաջազնունու և Ս. Վրացյանի մուտքի թույլտվությունը Եվրոպա և Ամերիկա: Ս. Վրացյանը ստիպված էր թողնել Թիֆլիսը և վերադառնալ Երևան, որովհետև անգլիացիները նրան արգելել էին մեկնել Եվրոպա: Անգլիական զինվորական առաքելությանը հայտնի էր, որ նա 1918 թ. ամռանը գտնվել է Ռուսաստանի հարավում և շփումներ ունեցել Կամավորական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Մ. Ալեքսևի հետ[1]:

Ա. Ահարոնյանը արտաքին գործերի նախարարին նույն նամակում գրում է. «Կրկնակի հեռագրով խնդրել եմ կառավարությանը թույլ տալ պատվիրակության մեջ առնել որպես զինվորական խորհրդական գեներալ Կորգանովին, տակավին պատասխան չունեմ. վերստին խնդրում եմ չմերժել ինձ: Նրա անելիքը որպես հմուտ ու բարեխիղճ խորհրդական Եվրոպայում ես համարում եմ անգնահատելի: Նորից խնդրում եմ կառավարությանը թույլ տալ գեներալին ընկերանալ պատվիրակությանը: Ձեր համաձայնությունը եղած դեպքում նա կգա Մ. Պապաջանովի հետ»[2]: Հայաստանի Հանրապետության վարչապետը և արտաքին գործերի նախարարը գեներալ Գ. Կորգանովին հունվարի կեսին հավատարմագիր էին տվել «դաշնակից բանակների գլխավոր հրամանատարության մոտ Հայաստանի ընդհանուր դրության մասին բանակցություններ վարելու»[3]: Հայաստանի Հանրապետության պատվիրակության զինվորական խորհրդական, գեներալ Գ. Կորգանովը ի վերջո Փարիզ մեկնեց 1919 թ. ապրիլի 23-ին:

Եվրոպական պատվիրակության ռուսաստանյան առաքելության նախկին անդամ Մ. Արզումանովը (1919 թ. մարտին արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի առաջարկով վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը Մ. Արզումանովին ազատեց Եվրոպական պատվիրակության ռուսաստանյան առաքելության անդամի պարտականությունից: Նա չէր կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության հատուկ հանձնարարականը՝ չէր մեկնել Ռուսաստան և ինքնագլուխ բանակցությունների մեջ էր մտել Թիֆլիսում Բրիտանական զինվորական հրամանատարության ներկայացուցիչների հետ)[1] 1919 թ. մարտի 22-ին արտաքին գործերի նախարարին տեղեկացնում է, որ Մ. Պապաջանյանին և գեներալ Գ. Կորգանովին անգլիացիները չեն թողնում Փարիզ մեկնել, քանի որ նրանց կասկածում են ռուսական կողմնորոշման մեջ[2]: Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբի հետախուզական բաժնի՝ 1919 թ. մարտի 26-ի N 98 ամփոփագրում ասված է. «...Անգլիացիները պատգամավորներին (հայ- Գ.Պ.) Կովկասից դուրս գալու խոչընդոտներ են ստեղծում, հատկապես Փարիզ մեկնող այն անձանց նկատմամբ, որոնք Ռուսաստանի կողմնակիցներ են կամ կապի մեջ են Կամավորական բանակի հետ: Պատգամավորներից մեկին (Կորգանով) թույլ չեն տալիս Եվրոպա մեկնելու միայն այն բանի համար, որ կասկածում են, որ նա շփումների մեջ է Կամավորական բանակի հետ»[3]:

Անգլիական զինվորական հրամանատարությունը խոչընդոտում էր նաև Հ. Քաջազնունու ուղևորությունը Ամերիկա. «Այդ կապակցությամբ ինձ մոտ եկավ,- գրում է Մ. Արզումանովը,- Ուոքերի համհարզը և ասաց. «Դուք՝ հայերդ՝ զարմանալի մարդիկ եք: Երբ մենք Երևանում էինք, ապա

[1] Տե՛ս՝ ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 21, *Վրացեան Ս.*, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 280:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 29:
[3] Նույն տեղում, թ. 18[a]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 110:
[2] Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 86:
[3] РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 44, л. 19.

Քաջազնունին անցագիր էր խնդրում հինգ անձի համար, իսկ հիմա նա եկել է Թիֆլիս և խնդրում է 15 հոգու համար և բոլորին էլ որպես մասնագետներ՝ պարենի, ֆինանսների, գյուղատնտեսական գործիքների գնման գծով և այլն: Ձեր երկիրը լրիվ ավերված է և մարդիկ չկան, իսկ դուք 15 մարդ եք նախարարների և կառավարության նախագահի գլխավորությամբ ուղարկում Ամերիկա: Ձեզ մոտ սով է, իսկ դուք նրանց ծախսերի համար կես միլիոն եք տալիս: Մենք Ձեզ չենք հասկանում: Ինչի՞ համար է այդ ամենը: Վախենամ, որ գեներալ Ուոքերը այդ ուղևորությանը կտա քաղաքական բնույթ: Ամերիկան ձեզ դրամ չի տա, քանի որ ձեր անկախությունը բացի Թուրքիայից դեռ ոչ ոք չի ճանաչել, իսկ գյուղատնտեսական գործիքներ ձեզ համար կարող են գնել ձեր փարիզյան պատգամավորները (այդ ամենի մասին ես հաղորդեցի պարոն Քաջազնունուն և խնդրեցի այդ ամենը հաշվի առնել)»[1]:

Ա. Ահարոնյանը Փարիզից խորը վրդովմունք արտահայտեց Համաձայնության պետությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի հակահայկական քաղաքականության կապակցությամբ: 1919 թ. ապրիլի 24-ին Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի նամակում Ա. Ահարոնյանը գրում է. «Այս պարագան ինձ մեծ ցավ ու ծանր մտահոգություն է պատճառում: Դաշնակիցների անհոգությունն ասեմ, թե նրանց պաշտոնյաների անբարյացակամությունը մեր հարաբերությունների խնդրում ինձ սաստիկ խանգարում է: Նույն վերաբերմունքն եմ նկատում նաև պատվիրակության Թիֆլիս մնացած անդամների և Քաջազնունու ճամբորդության առթիվ: Թէ ես և թե Պողոս փաշան բազմաթիվ բերանացի և գրավոր դիմումներ ենք արել փութացնելու մեզ համար այնքան անհրաժեշտ աշխատակից-ընկերակիցների մեկնումը: Գեներալ Կորգանովի և Պապաջանյանի նամակներից ծանոթ եմ անգլիական զինվորական վարչության հարուցած դժվարություններին նրանց ճամբորդության դեմ»[1]: 1919 թ. հունվարի սկզբին Թիֆլիսում Մ. Արզումանովը անգլիական զինվորական հրամանատարությանը ներկայանում է որպես ռուսական պատվիրակության անդամ և խնդրում հնարավորություն տալ Բաթումով մեկնել Եկատերինոդար: Անգլիական զինվորական հրամանատարությունը հետաքրքրվում է, «...թե ինչու եմ ես մեկնում Ռուսաստան,- գրում է Մ. Արզումանովը,- եթե հայկական հարցը պետք է լուծվի Փարիզում: Նույն բանն է ինձ ասում գնդապետ Շարդինյին, որին ես ճանաչում էի Կովկասյան բանակի շտաբից: Մտերմանալով անգլիական հրամանատարության ներկայացուցիչների ...հետ ...սկսում են ինձ հետ խոսել ավելի անկեղծ, որ անգլիական հրամանատարությունը մեզ չի հավատում, քանի որ նրանց հայտնի է, որ հայերս ունենք ռուսական կողմնորոշում, կապ ենք պահպանում Դենիկինի հետ և բոլոր ռուս սպաներին մեզ ծառայության ենք ընդունում և այլն: Նրանք առաջարկում են հատուկ պատվիրակություն Եկատերինոդար չուղարկել, քանի որ նման ուղևորությունը կարող է մեկնաբանվել մեզ համար բացասական իմաստով, որ նրանք մեզ հաց և դեղորայք կտան և ավելացնում են, որ ահա վրացիները խզեցին իրենց բոլոր կապերը Ռուսաստանի հետ, իսկ հայերս դեռևս ինչոր մի բան սպասում ենք գոյություն չունեցող Ռուսաստանից: Այդ ամենի մասին ես իրազեկ եմ պահում հաշտության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին»[2]: Ինչպես երևում է Մ. Արզումանովի զեկույցից,

[1] ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 963, թ. 86, 97, ֆ. 200, g. 1, գ. 158, թ. 94:

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս II, թ. 423:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 963, թ. 84-85:

նրա համար հստակ չէր Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» հակամարտության դրդապատճառները Անդրկովկասում: Մեծ Բրիտանիան ձգտում էր Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումները դուրս մղել Անդրկովկասից, և դրա համար էլ նա չէր հանդուրժում Հայաստանի Հանրապետության բարեկամությունը ռուսների հետ: Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերությունների հաստատումը թելադրված էր մի շարք քաղաքական, տնտեսական և այլ դրդապատճառներով:

Փաստերը վկայում են, որ բրիտանական զինվորական հրամանատարության հակահայկական քաղաքականությունը կրում էր շարունակական բնույթ: Կարծելով, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակները կապի մեջ են Ռուսաստանի հարավի հետ՝ միտումնավոր ձգձգում էին նրանց՝ Եվրոպա և Ամերիկա մուտքի թույլտվությունը:

Այսպիսով, արխիվային վավերագրերը և նյութերը փաստում են, որ Հայաստանի կառավարությունը քաղաքական նոր պայմաններում չկարողացավ իր արտաքին քաղաքականությանն այնպիսի ճկունություն հաղորդել, որ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերի բախումից հանրապետությունը չտուժեր: Առաջին աշխարհամարտում կրած հարվածների ազդեցությամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունները շարունակում էին Ռուսաստանի հարավը համարել Համաձայնության պետությունների դաշնակից՝ իրենց բարեկամ: Նրանք չկարողացան ժամանակին և ճիշտ գնահատել պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիայի քողարկված, երբեմն բացահայտ հակառուսական քաղաքականությունը Անդրկովկասում: Մեծ Բրիտանիան ձգտում էր տարածաշրջանից

դուրս մղել Ռուսաստանի հարավը տնօրինող ուժերը և այնտեղ ամրապնդել իր դիրքերը: Պատահական չէր, որ նա չէր հանդուրժում Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի հետ և նրան համարում էր անուղղելի ռուսասեր, անվստահելի տարր Անդրկովկասում: Ինչպես նշել ենք, հայերը նրանց վստահություն չէին ներշնչում՝ ավանդական ռուսական կողմնորոշման պատճառով, և բոլոր միջոցները օգտագործում էին պայքարելու հայերի ռուսամետության դեմ: Արխիվային վավերագրերը և նյութերը լույս են սփռում նաև այն իրողության վրա, թե ինչու պաշտոնական Երևանը ձեռնպահ մնաց Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելուց: Եթե Մեծ Բրիտանիան չէր հանդուրժում «դաշնակից» Ռուսաստանի հարավի հետ Հայաստանի Հանրապետության բարեկամությունը, ապա իր պոտենցիալ թշնամու՝ Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու փորձերը կարող էր անկանխատեսելի և ծանր հետևանքներ ունենալ երկրի համար:

4. Վրաստանի վերաբերմունքը հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի հարաբերությունների ընթացքի վրա բացասական ազդեցություն ունեցավ նաև Վրաստանի ու Ադրբեջանի հակառուսական, թշնամական վերաբերմունքը: Դա է՛լ ավելի խորացրեց բրիտանացիների հակահայկական տրամադրությունները: Բանն այն է, որ վրացիները և ադրբեջանցիները գերմանամետ էին և թուրքամետ: Անգլիական զորքերի մուտքը Անդրկովկաս վրացիներին ու ադրբեջանցիներին երկյուղի մատնեց: «Շատերը վերջինների ղեկավարներից մինչև իսկ անգլիացիների գալուց առաջ կապկպել էին իրենց պայուսակները՝ Բագուից հեռանալու նպատակով»[1],- գրում էր Արտ. Աբեղյանը: Իսկ հայերը հանգիստ էին՝ համոզված, որ կվայելեն անգլիացիների բարյացակամ վերաբերմունքը, քանի որ իրենք շոշափելի ավանդ ունեին Համաձայնության պետությունների հաղթանակի գործում: «Սակայն, երբ բրիտանական գրաման բանակները Բագու ոտք դրին, յետոյ նաեւ Թիֆլիս ու Բաթում անցան, եւ երբ գերման զօրավարներին ու դիւանագետներին անգլիականներ փոխարինեցին, պարզւեց շուտով, որ սրանք բնաւ մի առանձին համակրանք չունէին հայերի հանդէպ եւ պատրաստ էլ չեն անգամ Հայաստանի ամենաարդար շահերը պաշտպանելու համար որեւէ գործնական աջակցութիւն ցոյց տալ նրան»[2]: Ավելին, հայերի շրջանում մեծ էր զարմանքը, թե ինչու «դաշնակից» Մեծ Բրիտանիայի զինվորական հրամանատարները «...գերմանասէր եւ տաճկասէր վրացիներին ու ադրբեջանցիներին փայփայում են եւ մեր երկրից (Հայաստանի Հանրապետությունից- Գ.Պ.) կտրում նրանց են տալիս»[1],- գրում է Ա. Բաբայանը*: 1918 թ. դեկտեմբերի 12-ին Բաքվի Հայոց ազգային խորհրդի նիստում այդ կեցվածքի վերաբերյալ իր վրդովմունքը արտահայտեց գեներալ Բագրատունին՝ նշելով, որ «Թոմսոնի բռնած կուրսը բոլորովին անընդունելի է հայերի համար: Չի կարող միատեսակ վերաբերմունք լինել դեպի Ազրբեյջանը, Վրաստանը և Հայաստանը, որովհետև հայերը մինչև վերջը դաշնակիցների օրիենտացիայի տեսակէտի վրայ են կանգնել»[2]: «...Դարձեալ սխալւած էինք,- գրում է Հ. Քաջազնունին,- անգլիացիները չարին այդ տարբերութիւնը: ***Կարծես չըգիտէին կամ մոռացել էին, թէ մենք իրանց դաշնակիցներն ենք, իսկ վրացիների ու ազրբեյջանցիների հանդէպ ցոյց տուին այնպիսի մեծահոգութիւն, որ միանգամայն անսպասելի, մասամբ իսկ անհասկանալի էր մեզ համար***:

Ի հարկե, գանգատեցինք դառնօրէն անգլիացիներից, ասինք, ապերախտ են այս մարդիկ: Դա ամենահեշտ միջոցն էր՝ մեզ անհասկանալի երեւոյթները բացատրելու համար: Ապերախտ են, ասինք ու սրտերս թեթեւացրինք, այլ եւս չը որոնեցինք այդ ապերախտութեան աղբյիւրները»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Արտաշես Բաբայանը տեղեկացնում է. 1918 թ. դեկտեմբերին Հ. Քաջազնունին բրիտանական գեներալ Ֆ. Ուոքերի հետ զրույցի ժամանակ դժգոհել էր Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունից Հայաստանի Հանրապետության նկատմամբ. գեներալն առանց վարանելու վարչապետին պատասխանել էր.«***Ով ասաց, որ դուք մեր դաշնակիցներն էք ...Մենք պիտի ղեկավարուենք մեր շահերի գիտակցութեամբ***»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Իսկ որո՞նք էին անգլիացիների հակահայկական քաղա-

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926, N 12 (48), էջ 86:
[2] Նույն տեղը:

[1] ***Բաբայան Ա.***, էջեր Հայաստանի անկախության պատմությունից, էջ 33:
[2] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 15:
[3] ***Քաջազնունի Հովհ.***, ՀՅԴ դաշնակցությունը անելիք չունի այլևս, էջ 33:
[3] ***Բաբայան Ա.***, էջեր Հայաստանի անկախութեան պատմությունից, էջ 33:

քականության աղբյուրները, պատճառները: Մտնելով Անդրկովկաս՝ անգլիացիները նկատեցին, որ վրացիներն ու ադրբեջանցիները ունեն բացահայտ հակառուսական թշնամական դիրքորոշում, իսկ հայերը կապ են պաշտպանում նրանց պոտենցիալ թշնամու՝ Ռուսաստանի հետ:

1918 թ. դեկտեմբերի 5-ին Թիֆլիսում տեղի ունեցավ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի և Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորիի հանդիպումը՝ երկու հանրապետությունների միջև գոյություն ունեցող արտաքին քաղաքական տարաձայնությունները հարթելու նպատակով: Հանդիպման ժամանակ Ա. Ջամալյանը ուրվագծեց Կովկասի արտաքին քաղաքական հեռանկարի երեք հնարավորություն.

«ա.- Դենիկինը կյաղթի բոլշևիկներին և կգայ տիրելու Անդրկովկասին,

բ.- Բոլշևիկները կյաղթեն Դենիկինին և կգան Անդրկովկասի վրայ,

գ.- Անգլիացիք և դաշնակիցները կգրաւեն Անդրկովկասը և նրա ժողովուրդներին կթելադրեն իրենց կամքը հաշի առնելով, կամ հաշի չառնելով նրանց ցանկութիւններն ու տրամադրութիւնները:

Արդ այս երեք դրութիւններից իւրաքանչիւրի հանդէպ ի՞նչ է Ձեր վերաբերմունքը. այս հարկաւոր է իմանալ, որպեսզի կարելի լինի հայ–վրացական մերձեցման կամ գործակցութեան կոնկրետ խնդիրներին անցնել»[1],- հարցնում է Ա. Ջամալյանը: Ե. Գեգեչկորին պատասխանում է, որ իր կառավարության տեսակետը պարզ է. «Դենիկինը անընդունելի է ...այնպէս, ինչպէս և բոլշևիկները. այդ երկուսի դէմ էլ

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 66, թ. 135-136:

...պէտք է կռիւ մղենք»[1]: Ա. Ջամալյանի այն հարցին, թե ինչպես է Ե. Գեգեչկորին պատկերացնում կռիվը գեներալ Ա.Դենիկինի և բոլշևիկների դեմ, «...նա որոշ պատասխան չտուեց»[2]:

Կարծում ենք՝ պարզ է, որ Վրաստանը որդեգրել էր թե՛ խորհրդային և թե՛ հակախորհրդային Ռուսաստանի նկատմամբ բացահայտ թշնամական դիրքորոշում: ***Վրաստանի կառավարությունը, շահարկելով անգլիացիների հակառուսական դիրքորոշումը և Հայաստանի Հանրապետության կապերը Ռուսաստանի հարավի հետ, օգտագործեց դիվանագիտական հնարավոր բոլոր ձևերն ու միջոցները՝ է՛լ ավելի սրելու ու խորացնելու բրիտանացիների հակահայկական տրամադրությունները:*** Վրացիները աշխատեցին հայերին «...ամէն կերպ վարկաբեկել անգլիացիների աչքում այն իմաստով,- գրում է Ա. Բաբալյանը,- որ իբր թէ հայերը, ռուսասէրներ լինելով և ժամանակաւոր մի երեւոյթ համարելով Հայաստանի Հանրապետութիւնը, ձգտում են բարեացակամ մնալ Ռուսաստանի հանդէպ և անձկօրէն սպասում են այն օրին, երբ ռուսը նորէն կը տիրանայ Անդրկովկասին»[3]: Գեներալ Գ. Կորգանովը 1919 թ. հունվարի 20-ին Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է, որ Վրաստանի կառավարությունն անգլիացիներին համոզում է, որ իբր «...***հայերի միակ երազանքը Ռուսաստանին վերամիավորվելն է***: Երեք օր առաջ Վրաստանի կառավարության անդամներից մեկը ինձ հավատացնում էր, որ Երևանում դաշնակցության ժողովներից մեկում քաղաքական բնույթի որոշում է կայացվել, որը պահանջում է Անդրկովկասյան Հա-

[1] Նույն տեղում, թ. 36:
[2] Նույն տեղում, թ. 136:
[3] ***Բաբալյան Ա.***, էջեր Հայաստանի անկախության պատմութիւնից, էջ 32:

յաստանը միացնել Ռուսաստանին»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Մեկ այլ առիթով Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Միքայել Թումանյանը 1919 թ. փետրվարի 9-ին արտաքին գործերի նախարարին ուղղված N 1321 գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է, որ «...*Վրացական շրջաններն աշխատում են անգլիացիներին համոզել, որ հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և անբաւական են անգլիական քաղաքականութիւնից*»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Այնուհետև Մ. Թումանյանը շարունակում է. «Հաղորդում եմ դորա մասին ի տեղեկութիւն որպէսզի Ձեր տեսակցութեան ժամանակ Կարս գնացած գեն. Ուօկէրի հետ հերքէք այդ բամբասանքները»[3]: Իրոք, հայերի մասին վրացիների տարածած լուրերը իրականությանը չէին համապատասխանում: Որ հայերը ռուսամետ էին և կապ ունեին Կամավորական բանակի հետ, դա հայտնի էր: Բայց նրանք երբեք քայլեր չեն ձեռնարկել Ռուսաստանի կազմի մեջ մտնելու կամ վերամիավորվելու: Դժվար թե անգլիացիները չհասկանային դա: Պարզապես նրանց պետք էր, որ վրացիների հակահայկական տրամադրությունները ծավալվեր, և թշնամությունը խորանար: «Բաժանիր, որ տիրես» - դա Անգլիայի որդեգրած ավանդական քաղաքականությունն էր, որի էությունը չէին ընբռնում վրացիները, որոնք հայերի նկատմամբ ունեին ատելություն և անգլիացիների համար գործակալի դեր էին խաղում:

1919 թ. հունվարի սկզբին Բաքվում Մ. Պապաջանյանի հետ հանդիպման ժամանակ գեներալ Վ. Թոմսոնը խնդրեց

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 35:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 181, մաս I, թ. 35-36:
[3] Նույն տեղում, թ. 36:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը հաղորդել, որ Ն. Ժորդանիան իրեն հայտնել է, թե «Հայերը իրենց զորամասերի հրամանատարությունը հանձնել են ռուս սպաներին: Հայոց բանակի սպաները միաժամանակ համարվում են նաև Կամավորական բանակի ծառայողներ (օրինակ՝ գնդապետ Ձինկևիչը): Հայկական բանակը համարվում է Դենիկինի 9-րդ բանակը: Ապա Թոմսոնը նախազգուշացրեց, որ այդ ամենի մասին նա զեկուցել է Լոնդոնի կառավարությանը և մենք պետք է պատրաստ լինենք Փարիզում կամ Լոնդոնում բացատրություն տալու անգլիական իշխանություններին»[1]: Ն. Ժորդանիայի հայտնածը գեներալ Վ. Թոմսոնին նույնպես բամբասանք էր, բայց անգլիական զինվորական հրամանատարությունն այն օգտագործում էր հայերին հարվածելու և նրանց ռուսամետությունը թուլացնելու համար: Ահա թե ինչու բրիտանական զինվորական հրամանատարությունը ոչ միայն չէր նպաստում հայկական բանակի ուժեղացմանը, այլ, ընդհակառակը, խանգարում էր անհրաժեշտ պարենով, հագուստեղենով, զենքով ու զինամթերքով և այլ անհրաժեշտ պարագաներով նրան օժանդակելուն: Անգլիացիները, առանց հաշվի առնելու Հայաստանի Հանրապետության կառավարության բողոքները, Կարսից անարգել դուրս էին բերում ռուսներից մնացած մեծ քանակությամբ զենք, զինամթերք, հանդերձանք, պարեն և այլ ապրանքներ: Այդ առիթով ապրիլի 30-ին Արևելքում անգլիական գլխավոր հրամանատար գեներալ Գ. Միլնի հետ հանդիպման ժամանակ Ա. Խատիսյանն արտահայտեց իր վրդովմունքը և խնդրեց դադարեցնել զինամթերքի դուրսբերումը Կարսից: Ա. Խատիսյանը նաև խնդրեց գեներալին, որ. «1. Հայաստանի բանակին անհրաժեշտ է մատակարարել պարեն, հա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 78, թ. 101, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 30:

գուստ, կոշկեղեն և մարտական հանդերձանք:

Գեներալ Միլն: Պատերազմն ավարտվել է, կարիք չկա ուժեղացնելու բանակը, 4 տարի պատերազմել են ոչ թե նրա համար, որ ուժեղացնեն բանակը:

Խատիսով: Խաղաղությունը ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ պատրաստի բանակ, թեկուզ երկրում կարգ ու կանոն պահպանելու համար:

Գեներալ Միլն: Բավական է ունենալ ոչ թե բանակ, այլ լավ ժանդարմերիա:

Խատիսով: Անգլիացիները Կարսից տեղափոխում են մարտական հանդերձանք, զենք, հագուստեղեն և այլ ապրանքներ:

Գեներալ Միլն: Կարսում ամեն ինչից շատ կա, հատկապես հագուստ, որ ոչ բոլոր ֆորտերն են այնտեղ նայվել և եթե անգլիացիները այնտեղից դուրս են բերել հրետանին և փամփուշտները, ապա այն ուղարկված է գեներալ Դենիկինի բանակին, քանի որ Դենիկինը կռվում է բոլշևիկների դեմ, իսկ բոլշևիկներին անգլիացիները համարում են լուրջ թշնամիներ»[1]: Հանդիպման վերջում գեներալ Գ. Միլնը Ա. Խատիսյանին հայտնեց նաև, որ իրեն հայտնի է, ***թե իբր «Հայերը ծգտում են միանալ Դենիկինին»***[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Անգլիացիներն այդ զենքը ոչ թե ուղարկում էին գեներալ Ա. Դենիկինին, այլ տրամադրում էին ադրբեջանցիներին ու թուրքերին՝ ուժեղացնելով հայերի թշնամիներին: Այդ մասին գնդապետ Մ. Զինկևիչը գրում է, որ բրիտանացիները զենքի մի զգալի մասը տրամադրում էին ադրբեջանցիներին՝ իբր բոլշևիկներից պաշտպանվելու համար[3]. «Բրիտանական զո-

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 962, թ. 39, 41-42, ֆ. 199, ց. 1, գ. 32, թ. 148-149, ֆ. 276, ց. 1, գ. 101, թ. 47-48:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32, թ. 150, ֆ. 276, ց. 1, գ. 101, թ. 49:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 962, թ. 16:

րահրամանատարությունը արգելեց մեզ գրավել Անդրկովկասում որոշ կարեւոր վայրեր,- գրում է Ս. Տիգրանյանը,- կարեւոր թե ստրատեգիական, թե ռազմամթերքի (Կարսի պահեստները) տեսակետով. այդ բոլորը մնաց թյուրքերի ձեռքին, մեր քայլերն ու ընթացքը կաշկանդված են, թյուրքերինը ազատ. մեզ ոգնող չկա. թյուրքերին աջակից են եվ ղեկավար Թյուրքան իր օֆիցերներով (նույնիսկ բարձր աստիճան), ռազմամթերքով եվ ռազմական ամեն տեսակ գործիքներով»[1]:

1919 թ. մայիսի 6-ին Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին ուղղված գաղտնի նամակ-հրահանգում Ա. Խատիսյանը գրում է. «Անգլիացիք թէև յանձնել են մեզ Ղարսը, բայց դեռ բոլորովին ձեռք չեն քաշում դրանից. յանձնումից վերջը անոնք սկսել են դուրս տանիլ բերդից մեծ քանակութեամբ ռազմամթերք, երկաթուղային և ավտոմոբիլային սարքեր, բամբակ և այլն: Այս մասին մենք քանիցս բողոքեցինք Բրիտանական Հրամանատարութեանը խնդրելով դադարեցնել արտահանումը. գեներալ Միլն Երևանում կառավարութեան այցելելու ժամանակ խոստացաւ Պ. Խատիսեանին դադարեցնել տալ Ղարսից գոյքեր դուրս տանելը, բայց դեռ մինչեւ այժմ արտահանումը շարունակւում է»[2]: Մի քանի օր անց՝ մայիսի 10-ին, դարձյալ Ա. Ահարոնյանին ուղղված մեկ այլ նամակ-հրահանգում արտաքին գործերի նախարարը գրում է. «...Անգլիացիք Կարսից տարել են 60 (եթէ ոչ աւելի) դաշտային թնդանօթներ, փամփուշտներ ...Մեր կրկնակի դիմումները այդ առիթով մնացին անհետեւանք: Գեներալ Միլնը, որ եկաւ Կ. Պոլսից Կարս-Երեւան եւ յետ դարձաւ Կ. Պо-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ. 4:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 131-132, ֆ. 200, ց. 2, գ. 55, թ. 2, ց. 1, գ. 193, մաս I, թ. 222-223:

լիս, յայտնեց, թէ եթէ կարիք լինի, Բրիտանական զօրքերը էլի կերթան Կարս մեզ պաշտպանելու. բայց սրտերս անհանգիստ է: Մենք խնդրեցինք որ գոնէ ռազմամթերքով, զգեստներով օգնեն մեր զորքին: Առանձին ուշադրութիւն չդարձրին եւ շիտակութեամբ յայտնեցին. թէ այդ կասէ Հայաստանի մանդատարին, երբ որոշուի թէ որ պետութիւնն է: Իհարկե, ում պետքն է օգնել եւ ծախս անել մի ժողովրդի համար, որը թերեւս ուրիշի բաժին դառնայ վաղը»[1]:

Կարծում ենք՝ մեկնաբանությունն ավելորդ է, բերված արխիվային վավերագրերը և նյութերը մեկ անգամ ևս հաստատում են, որ բրիտանական զինվորական հրամանատարությունը որդեգրել էր շարունակական հակահայկական քաղաքականություն:

Այսպիսով, արխիվային բազմաթիվ վավերագրերը և նյութերը փաստում են, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի հարաբերությունների ընթացքի վրա բացասական ազդեցություն ունեցավ Վրաստանի հակառուսական, թշնամական վերաբերմունքը: Վրաստանի կառավարությունը, շահարկելով բրիտանացիների հակառուսական դիրքորոշումը և Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի հարավի հետ, օգտագործեց հնարավոր բոլոր ձևերն ու միջոցները՝ է՛լ ավելի սրելու ու խորացնելու անգլիացիների հակահայկական տրամադրությունները: Դրանով Վրաստանի կառավարությունն ակնկալում էր բրիտանական զինվորական հրամանատարության պարտադրանքով հօգուտ իրեն լուծել իր տարածքային ու սահմանային հարցերը Հայաստանի Հանրապետության հաշվին:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, II մաս, թ. 296, ց. 2, գ. 52, թ. 3-4:

5. Հայ-Վրացական պատերազմը. Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի վերաբերմունքը

Ինչպես նշել ենք, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթ ու կարևոր խնդիրներից մեկը անմիջական հարևանների հետ հարաբերությունների կարգավորումն էր, որի լուծումը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Անդրկովկասի նորաստեղծ հարևան հանրապետությունները ձգտում էին լուծել իրենց տարածքային ու սահմանային հարցերը, ընդ որում՝ հարևանների հաշվին, իսկ դա նրանց միջև առաջ էր բերում պայքար, որը վերածվում էր զինված ընդհարումների: Այդ հողի վրա անզիջում պայքար ծավալվեց Հայաստանի Հանրապետության ու Վրաստանի միջև: Վերջինիս աջակցում էր Մեծ Բրիտանիան, իսկ Հայաստանի Հանրապետությանը՝ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը», որոնք հեռահար նպատակներ էին հետապնդում: Նկատենք, որ այդ ժամանակ, կապված թուրքական 1918 թ. արշավանքի և հատկապես Անդրկովկասյան հանրապետության վերջին օրերի իրադարձությունների հետ, հայ քաղաքական շրջանները վրացական կողմին մեղադրում էին հայերի հաշվին վրացական շահերը պաշտպանելու, հայերի թիկունքում գործելու և թշնամու դեմ նրանց միայնակ թողնելու մեջ: Ընդ որում, օգտվելով իր աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքից՝ Վրաստանի ղեկավարությունը փորձում էր Հայաստանի Հանրապետության հաղորդակցության ուղիների արգելափակման միջոցով նաև տարածքային զիջումներ պարտադրել: Ուժի դիրքից խոսելու նման քաղաքականությունը հատկապես կիրառվեց Առաջին աշխարհա-

մարտի ավարտին, երբ Վրաստանը դեռևս օգտվում էր գերմանական հովանավորությունից: Նման պայմաններում երկու երկրների միջև ծագած տարածքային վեճը չհարթվեց խաղաղ ճանապարհով և վերածվեց ռազմական ընդհարման: 1918 թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց հայ-վրացական պատերազմը: Հայաստանի Հանրապետության ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանի բնորոշմամբ. «Հայ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, ժամանակի հայ մամուլը ցավով ընդունեցին եղբայրասպան պատերազմի լուրը: Սակայն միանգամայն արդարացի համարելով հայկական կողմի մոտեցումները՝ հիմնականում հանդես եկան Հայաստանի կառավարության գործողությունների պաշտպանությամբ»[1]:

Չանդրադառնալով հայ-վրացական պատերազմի մանրամասներին՝[2] միայն նշենք, որ այդ կարճատև պատերազմը երկու դարավոր հարևանների համար մեծ չարիք էր, որ պարտադրեց Վրաստանը: Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր զենքի դիմել՝ պաշտպանելու իր երկիրը: Հայաստանի Հանրապետության վրա «ճնշում գործ դնելու նպատակով,- գրում է Հ.Քաջազնունին,- Վրաստանը փաստորեն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր նեղ սահմաններում նոյն իսկ այն հացը, որ ուղարկւում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար - այդ հացն էր հանդիպում՝ Վրաստանում բազմազան արգելքների և ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը: Վրաստանը գրաւել էր Լոռին, փակել երկաթուղին ու պաշարել մեզ. այս էր պատերազմի հիմնական պատճառը»[1]:

Սկսված պատերազմում բախվեցին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» շահերը: Կամավորական բանակը ձգտում էր պատերազմի հարմար առիթը օգտագործել իր ազդեցությունը Անդրկովկասում ընդլայնելու և սևծովյան ափերը գրավելու համար: Իսկ բրիտանական զինվորական հրամանատարությունը գեներալ Ա. Դենիկինի ռազմավարությունը խափանելու և հայերի ռուսամետությունը չեզոքացնելու նպատակով օգնեց Վրաստանին: Սրանով էր պայմանավորված նաև վրացական և անգլիական հետախուզության համատեղ աշխատանքը և նրանց հարաբերությունների էլ ավելի լավացումը[2]:

Գեներալ Ջ. Ուոքերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին հայտնում է, որ «հայ-վրացական պատերազմը հայերը սկսել են Կամավորական բանակի հետ դաշնակցած և նպատակ են ունեցել վերացնել Վրաստանի անկախությունը»: Նա նաև նշել է, որ «...չեմ թույլ տա Վրաստանի դեմ դուրս գալ»[3]: Իսկ գեներալ Վ. Թոմսոնը հունվարի սկզբին Բաքվում Մ. Պապաջանյանի հետ հանդիպման ժամանակ վրդովված ասել էր, որ «հայերն առաջինը սկսեցին պատերազմը, որին նախօրոք պատրաստվել էին և վրացիներին անակնկալի բերեցին ...հայոց բանակի սպաները միաժամանակ համարվում են Կամավորական բանակի ծառայողներ, օրինակ գնդապետ Մ.

---

[1] ***Մելքոնյան Ա.***, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 301:
[2] Մանրամասն տե՛ս ***Վրացյան Ս.***, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, ***Մելքոնյան Ա.***, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, ***Հովհաննիսյան Ռ.***, Հայաստանի Հանրապետություն, Հատոր I, Առաջին Տարին, 1918-1919: ***Սարդարյան Կ.***, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ.:

[1] ***Քաջազնունի Հովհ.***, ՀՅ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, էջ 34:
[2] Տե՛ս ՊԳ ԲԱ, ֆ. 39540, оп. 1, д. 44, л. 19:
[3] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 44-45, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 39-40.

Զինկևիչը: Հայերը ամեն ինչ անում են, որ իրենց դռները փակեմ»[1]: Իսկ գեներալ Մ. Արեշովի հետ դեկտեմբերի 28-ի հանդիպման ժամանակ Զ. Ուոքերը ժպտալով ասել էր. «...շարունակենք պատերազմը ...դա, իհարկե, Հայաստանի ցանկությունը չի լինելու»[2]:

Գեներալ Ա. Դենիկինը, անդրադառնալով հայ-վրացական պատերազմին, գրում է, որ պատերազմի ժամանակ անգլիացիները 2-րդ անգամ վերջնագրով պահանջեցին մինչև դեկտեմբերի 19-ի կեսգիշերը դադարեցնել ռազմական գործողությունները: Այդ օրը կռվող կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր առավել բարենպաստ ռազմավարական իրավիճակ ստեղծել իր համար, և ծանր մարտեր մղեցին[3]: Կեսգիշերին մոտ «...հաջողությունը ակնհայտորեն հայերի կողմն էր,- գրում է գեներալ Ա. Դենիկինը: -Պատերազմող կողմերին թելադրված պայմանները հայերի համար ծանր էին և անարդարացի: Նրանց զորքերը ետ էին քաշվում իրենց նախնական դիրքերը, այնինչ վրացիները մնում էին իրենց դիրքերում: Բորչալուի գավառում պետք է ձևավորվեր հայ-վրացական խառը վարչակազմ, իսկ համարյա ամբողջովին հայաբնակ Ախալքալաքի գավառը պետք է հանձնվեր Վրաստանին, որը նրանք պետք է ղեկավարեին անգլիացիների վերահսկողությամբ: Ասես դիտմամբ ստեղծվում էին թշնամության և դժգոհության օջախներ»[4]: Գնդապետ Մ. Զինկևիչը գրում է. «*Երեք շաբաթ տևած պատերազմը թեև ավարտվեց Հայաստանի ռազմական հաղթանակով՝ տարածքային ձեռքբերումներով, բազմաթիվ զերիներով և ռազմավարով, սակայն ի վերջո այն վերածվեց դիվանագիտական պարտության*»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հայ-վրացական խորհրդաժողովում (հունվարի 9-ից 17-ը[2]) բրիտանական զինվորական հրամանատարության դիվանագիտական ճնշմամբ[3] որոշվեց Բորչալուի գավառի տարածքը հայտարարել «չեզոք գոտի»: Լոռին բաժանվում էր երեք մասի: Հյուսիսային մասը տրվում էր Վրաստանին, հարավայինը՝ Հայաստանի Հանրապետությանը, իսկ միջին մասում հաստատվում էր խառը կառավարում: Ախալքալակի շրջանը հայերը պետք է վերադարձնեին վրացիներին[4]: Հայ-վրացական հիմնահարցը լուծվեց ի օգուտ Վրաստանի: *Հարկ չկա ապացուցելու, որ պատերազմը ավարտվեց Հայաստանի Հանրապետության հաղթանակով՝ տարածքային ձեռքբերումներով, սակայն բրիտանական զինվորական հրամանատարության պարտադրանքով այն վերածվեց դիվանագիտական պարտության: Դրանով անգլիացիները մեկ անգամ ևս շեշտում էին, որ այդ պարտությունը հայերի ռուսամետության հետևանքն է*. Մ. Արզումանովը 1919 թ. մարտի 22-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է, որ անգլիացիները «*բացեիբաց ինձ ասում էին, որ եթե հայ-վրացական խորհրդաժողովի ժամանակ աջակցում էին վրացիներին, ապա միայն այն պատճառով, որ համոզված էին, որ հայերը գործում են գեներալ Ա. Դենիկինի հրամանով*»[5] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Անգլիացիները կրկին քողարկում էին իրենց դիրքորոշման իրական դրդապատճառը՝ թե իբր հայերը գործում են գեներալ Ա. Դենիկինի հրամանով, մի հանգամանք, որ ամենևին չէր համապատասխանում իրականությանը: Պար-

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 75-76:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 962, թ. 2:
[3] Տե՛ս *Деникин А.*, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 221:
[4] Նույն տեղում, էջ 221-222:

[1] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 43, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 38.
[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920, ..., էջ 82-83:
[3] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 75, թ. 20:
[4] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 34, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 29:
[5] ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 963, թ. 85:

զապես վրացիներն անգլիացիների համար վստահելի տարր էին Անդրկովկասում, ունեին խիստ հակառուսական ու հակահայկական դիրքորոշում: Օգտագործելով առիթը՝ անգլիացիները պարբերաբար շեշտում էին հայերի ռուսամետությունը: Չնայած Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հարաբերությունները չէին կարգավորվում, սակայն գեներալ Ջ. Ուոքերը Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին «...*բացահայտ սպառնում էր,- գրում է գեներալ Ա. Դենիկինը,- որ եթե հայերը Կամավորական բանակի հետ հարձակվեն Վրաստանի վրա, ապա նա իր զինական ուժով կպաշտպանի նրան*»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հայկական կողմը ստիպված էր անմիջապես հակահարված տալ անգլիացիների այդ ստահոդ պնդումներին և ապացուցել, որ հայերը չեն համագործակցել գեներալ Ա. Դենիկինի հետ վրացիների դեմ պայքարում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդ կապակցությամբ 1919 թ. հունվարին տվեց հետևյալ բացատրությունը. «*Ի՞նչ է և ի՞նչ պետք է ըլլայ Հայաստանի վերաբերումը դէպի Ռուսաստանը. դէպի այն Ռուսաստանը, որ Տէնիքինի միջոցով կը կազմակերպուի հարաւի մէջ և որ կը ձգտի վերականգնել Ռուսաց նախկին միութիւնը, հաւանօրէն նաև նախկին միապետութիւնը:*

Մեր հակառակորդները և տարաբախտաբար նաեւ մեր դաշնակիցներէն ոմանք այնպէս կը կարծեն, թէ հայ ժողովուրդը տակաւին կապուած է Ռուսաստանի այդ վերականգնումի գործին եւ որ մինչեւ իսկ համաձայնութիւն ունի Տէնիքինի հետ: Արդ, բացարձակապես անտեղի է այդ կարծիքը եւ հիմնուած է ոչ թէ որ եւ է փաստի կամ իրողութեան վրայ, այլ զրպարտութեան ու թշնամութեան վրայ:

...Հայ ժողովուրդը նախանձախնդիր է իր ազատութեան եւ անկախութեան եւ ոչ մէկ կերպ կրնայ զոհել իր անկախութիւնը հիւսիսէն եկող միապետական ժեներալին:

Մեր հակառակորդները եւ ...նաև մէր դաշնակիցներէն ոմանք այնպէս կը կարծէին անհիմնօրէն, թե հայ ժողովուրդը կամ Հայաստանի կառավարութիւնը ցանկացող է Տէնիքինի առաջխաղացութեան եւ թէ իբր ան նախանձախնդիր չէ իր անկախութեան»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ հարաբերություններում Հայաստանի կառավարությունը կրկին դրսևորեց խիստ զգուշավորություն, որն առավելապես դրսևորվեց հայ-վրացական պատերազմի ընթացքում: Գնդապետ Մ. Զինկևիչը 1918 թ. դեկտեմբերին Կամավորական բանակի ռազմածովային բաժնի պետին ուղղված գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծայրահեղ զգուշություն է ցուցաբերում Կամավորական բանակին վերաբերող հարցերում: Նա չի համարձակվում իր ներկայացուցիչն ուղարկել Եկատերինոդար. վախենում է հեղինակազրկվել դաշնակիցների աչքում, մինչև Հայաստանի Հանրապետության հովանավորության հարցը լուծված կլինի կամ հնարավոր կլինի լուծել, և «...դրանով էլ բացատրվում է Կամավորական բանակում ներկայացուցիչ ունենալու վախը»[2]: Գենեալ Ա. Դենիկինը 1918 թ. դեկտեմբերի սկզբին հաղորդեց Հայաստանի կառավարությանը, որ ցանկանում է Հ. Ձավրիևին Եկատերինոդարում տեսնել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ (գեներալ Ա. Դենիկինը հա-

[1] ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 53, "Вопросы истории", 1994, N 1, с. 136. ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 222:

[1] «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 1919, 16 հոկտեմբեր, էջ 481-482:
[2] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 38, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 33.

վանաբար տեղեկացված չէր, որ Հ. Ձավրիևին 1918 թ. օգոստոսին Մոսկվայում խորհրդային իշխանությունը ձերբակալել էր)[1]: Իսկ Հայաստանի կառավարությունը չէր շտապում իր ներկայացուցչին գործուղել Եկատերինոդար, որպեսզի խուսափեր Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ բացահայտ քաղաքական առճակատումից: Դա առավելապես անհրաժեշտ էր հայ-վրացական հակամարտության ընթացքում, երբ Հայաստանի Հանրապետության և Կամավորական բանակի միջև երևան եկան հակասություններ: Բանն այն է, որ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարությունը հայ-վրացական ընդհարման վերաբերյալ իրենց պլաններն ունեին, որոնք հանդիպեցին Հայաստանի Հանրապետության իշխանությունների դիմադրությանը:

Երևանում գործող Ռուսական ազգային խորհուրդը և ռուսական հետախուզական գաղտնի խումբը կանոնավոր տեղեկություններ էին հաղորդում Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը» Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական դրության մասին:

Նրանց քաջ հայտնի էր, որ հայ-վրացական պատերազմն անխուսափելի էր, պարտադրված Վրաստանի իշխանություններից: Նրանց հայտնի էր նաև, որ այդ պատերազմի երկարաձգումը կարող էր լուրջ հետևանքներ ունենալ Հայաստանի Հանրապետության համար: Գ. Չալխուշյանի բնորոշմամբ. «Հաղթական (հայկական- Գ.Պ.) բանակը չուներ թիկունքում ոչ պահեստային ուժեր, ոչ պաշարք, ոչ մի հենարան և ոչ մի կապ մնացած զորքերի հետ: Եթե պատերազմը շարունակվեր, մենք անշուշտ պիտի պարտվեինք»[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 96, թ. 43:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 40:

Սակայն գեներալ Ա. Դենիկինը, «անտեսելով» այդ հանգամանքը, ձգտում էր հայ-վրացական պատերազմի հարմար առիթը օգտագործել իր ռազմավարությունը իրականացնելու համար, որը տանում էր նաև հայ-վրացական թշնամանքի էլ ավելի խորացմանը: Բանն այն էր, որ բրիտանական զինվորական հրամանատարությունը ամեն կերպ խոչընդոտում էր Կամավորական բանակի՝ տարածաշրջանում ռազմական գործողությունների ծավալմանը: Անգլիական զինվորական հրամանատարությունը, քողարկելով իր իրական նպատակը, Կամավորական բանակի ղեկավարությանը և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը» պատճառաբանում էր, որ Մեծ Բրիտանիայի կառավարության նպատակն է մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշում ընդունելը Անդրկովկասում ապահովել ու պահպանել կարգ ու կանոն և աջակցել Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի կառավարություններին՝ հետևելու տարածաշրջանում իրավիճակի կայունացմանը[1]: Ինչպես նկատում ենք՝ Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» համար նպաստավոր էր հայ-վրացական պատերազմը, քանի որ այն հնարավորություն էր ստեղծում սևծովյան շրջաններից[2] վրա-

[1] Տե՛ս Революция и гражданская война в описаниях белогвардейцев, էջ 90, տե՛ս նաև ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- 3/ Т.4, Т. 5. Вооруженные силы Юга России, էջ 203:
[2] 1918 թ. հուլիսին Վրաստանը, օգտվելով Կուբան-Չերնոմորյան Հանրապետության ծանր դրությունից, գրավեց Սոչիի շրջանը, ինչը առաջացրեց Կամավորական բանակի դժգոհությունը: Վրաստանի կառավարությունը համոզված էր, որ Կամավորական բանակի հրամանատարությունը վաղ թե ուշ անդրադառնալու է այդ հիմնահարցին: 1918 թ. սեպտեմբերի կեսերին վրացական կառավարությունը, ընդունելով գեներալ Մ. Ալեքսեևի առաջարկը, Եկատերինոդար գործուղեց արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորու գլխավորած պատվիրակությունը: Ռուս-վրացական բանակցությունները արդյունք չտվեցին և ընդհատվեցին, քանի որ Ե. Գեգեչկորու գլխավորած պատվիրակությունը մերժեց գեներալ Մ. Ալեքսեևի՝ Սոչիի շրջանը վրացական զորքերից մաքրելու պահանջը:
Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 38, л. 21, «Борьба», 11 октября 1918, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 200-2001, ***Деникин А.***, Очерки русской смуты: Белое

ցական զինված զորամիավորումների տեղափոխումը հայ-վրացական ռազմագիծ, որով ազատ ճանապարհ էր բացվում Կամավորական բանակին՝ առանց զինված դիմադրության մտնելու սևծովյան տարածք:

Հայաստանի իշխանությունների համար կար նաև մեկ այլ խիստ մտահոգիչ հանգամանք. պետք էր խուսափել Բրիտանական զինվորական հրամանատարության հետ քաղաքական առճակատումից: Կամավորական բանակի հրամանատարությունը իր ռազմավարական պլանները Անդրկովկասում իրականացնելու համար աշխատում էր կասեցնել անգլիական զինվորների մուտքը տարածաշրջան՝ այդ հարցում ակնկալելով հայերի աջակցությունը: Այսպես, օրինակ, 1918 թ. դեկտեմբերի 19-ին Կովկասում Կամավորական բանակի անլեգալ ներկայացուցիչ գեներալ Տետրուևը Ռուսաստանի հարավ մեկնող հայկական պատվիրակության ղեկավար Մ. Արզումանովին Թիֆլիսում հաղորդել էր, որ «Հատուկ խորհրդակցությունը» որոշել է թույլ չտալ անգլիական զինվորների մուտքը Անդրկովկաս. «...ուստի որոշված է պայթեցնել Սուրամի թունելը, որը միացնում է Սև ծովը Անդրկովկասի հետ: Ի նկատի ունենալով, որ հայերը Կովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցն են՝ կօգնեն իրականացնելու Կամավորական բանակի որոշումը, ինչով և կհաջողվի ջախջախել Վրաստանը և ...կկարողանանք ազատ շարժվել Վլադիկավկազի վրայով Թիֆլիս, որը երկու-երեք շաբաթից կգրավեն գեներալ Դենիկինի զորքերը: Նա խնդրեց ինձ, որ ես երաշխավորեմ 5-6 երիտասարդ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են զոհել իրենց կյանքը:

движение и борьба добровольческой армии, Май-октябрь 1918.- Мн.: Харвест, 2002, ***Деникин А.***, Очерки русской смуты: @ 3 книгах.- Книга 3/Т.4. Т.5. Вооруженные силы Юга России, Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлись, 1919, ***Карпов Н.***, Тратегия белого Юга, 1920 год, Москва, 2005.

Այդ ժամանակ արդեն ժամանում էին անգլիական զինվորները, սակայն փոքր խմբերով»[1]: Մ. Արզումանովը այնուհետև հայտնում է, որ այդ ցնցող նորության մասին ինքը որոշեց զեկուցել ոչ միայն Ա. Ահարոնյանին, այլև տեղի հայ կուսակցական պատասխանատու ընկերներին, որոնք միակարծիք հայտնեցին, որ «ցանկացած գնով պետք է խանգարել նրանց պլանը: ...Դեկտեմբերի 21-ին պատասխանատվություն զգալով հայրենիքիս հանդեպ և չկասկածելով, որ եթե Կամավորական բանակի պլանն իրագործվի, ապա մեր ժողովուրդը կարող է ընկնել անելանելի ու տագնապալի վիճակի մեջ, շուրջ բոլորը շրջապատված թշնամիներով, իսկ գեներալ Դենիկինը կարող է ուշանալ Վլադիկավկազի գրավումով (ինչը և պատահեց) ...և որոշեցի այդ ամենի մասին իրազեկել Ն. Ժորդանիային ...զգուշացնելով, որ Հայաստանի կառավարությունը այդ ամենին բացարձակապես անտեղյակ է...»[2]:

Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար յուրահատուկ բարդ վիճակ էր ստեղծվել: Նրանք պետք է համոզեին թե՛ անգլիացիներին և թե՛ հարևան վրացիներին, որ կապ չունեն Կամավորական բանակի հետ: Մյուս կողմից պետք է աչալուրջ լինեին, որ Կամավորական բանակն իրենց անակնկալներ չմատուցեր, անակնկալ գործողություններ չծավալեր: Այսպես, օրինակ, առանց Հայաստանի Հանրապետության իշխանությունների համաձայնության փոխգնդապետ Վլասևը ինքնագլուխ քայլեր էր ձեռնարկել: Նա Ռոստովում և Եկատերինոդարում հայտարարել էր ընդհանուր զորահավաք[3]: Ստանալով տեղի հայ համայնքների աջակցությունը և Կամավորական բանակի հետ համաձայ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 81:
[2] Նույն տեղում, թ. 82:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 70:

նության գալով՝ հավաքագրված մարդկանցից կազմել էր զինված ջոկատներ՝ իբր Բաթումով Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար[1]: Սակայն դա ժամանակին կանխվեց Հայաստանի կառավարության կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացնում էր, որ ինքը օգնության կարիքը չունի, դա կարող է միայն ավելի բարդացնել Վրաստանի հետ հարաբերությունները[2]: Փոխգնդապետ Վլասևը 1919 թ. հունվարի 5-ին Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմաքաղաքական բաժնի պետին առաջարկել էր իր օգնությունը. «...Անմիջապես զբաղեցնել Սոչին և Սուխումի ուղղությամբ ճնշում բանեցնել վրացիների վրա»[3]: Թիֆլիսում 1919 թ. «հունվարի 20-21-ին,- գրում է Մ. Արզումանովը,- ձեռքս ընկնում է (ինչ ճանապարհով, չեմ կարող նշել) գնդապետ Վլասևի գաղտնի զեկուցագիրը[4] ...և ես մտածեցի, որ անգլիացիները հիրավի իրավունք ունեն մեզ չհավատալ, քանի որ այդ փաստաթղթի պատճենը ...հանձնված էր անգլիական հրամանատարությանը»[5]:

Անգլիացիների ձեռքն էին ընկել նաև Մ. Զինկևիչի, Լեսլիի, Վլասևի, Երևանում Ռուսական ազգային խորհրդի ու ռուսական գաղտնի հետախուզական խմբի և այլ պաշտոնական ու ոչ պաշտոնական նամակներ, զեկուցագրեր՝ ուղղված Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը»:

[1] Տե՛ս ԳԱ ՐՖ, ֆ. 446, օп. 1, д. 9, л. 3, նույնը оп. 2, д. 39, л. 83, ՊԳ ԲԱ, ֆ. 3972, оп. 1, д. 62, л. 3:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 158, թ. 70:
[3] ԳԱ ՐՖ, ֆ. 446, оп. 1, д. 9, л. 5.
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 158, թ. 70-71: Վլասևը հունվարի 5-ի նամակի կրկնօրինակը հունվարի 12-ին ուղղել էր նաև Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանին, որտեղ չկար վերը նշված գաղտնի գործողության պլանը:
[5] ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 963, թ. 85:

Ինչպես նշել ենք, հայ-վրացական պատերազմը անխուսափելի էր, իսկ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» փորձում էին օգտագործել այդ առիթը: Հայաստանի Հանրապետությունում որոշակի ակտիվություն դրսևորեցին հայկական բանակում ծառայող ռուս սպաներն ու զինվորները. Երևանում Ռուսական ազգային խորհուրդը և ռուսական հետախուզական գաղտնի խումբը պահանջում էին օգտագործել ընձեռված հարմար պահը՝ Կովկասը նվաճելու: Գնդապետ Մ. Զինկևիչը նույն զեկուցագրում հայտնում է, որ ***հայ-վրացական պատերազմը հարմար առիթ է «...Կամավորական բանակի՝ Կովկասում հայտնվելու համար»***[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Երևանում Ռուսական ազգային խորհուրդը (նախագահ՝ Մ. Ֆիլատև) գույքի պահպանման պատրվակով անգամ փորձեց ձևավորել 3-րդ ռուսական գունդը, որի համար հավաքագրել էր զգալի թվով սպաներ, սակայն հաջողություն չունեցավ, և այն ցրվեց[2]:

Ինչու՞ Կամավորական բանակին չհաջողվեց իրագործել իր ռազմավարությունը՝ նվաճել Վրաստանը և ամբողջ Անդրկովկասը: Դա գլխավորապես բացատրվում է երկու հանգամանքով. նախ՝ անգլիացիների ներկայությունը տարածաշրջանում և նրա հովանավորչությունը Վրաստանի նկատմամբ: Բացի դրանից՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունները դեմ էին Կամավորական բանակի ռազմավարությանը և աշխատում էին ձախողել նրա պլանները:

Կամավորական բանակն իր դժգոհությունն արտահայտեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որ նա, վարելով խիստ զգուշավոր քաղաքականություն, հայ-վրացական պատերազմի ընթացքում չհամագործակցեց, չօ-

[1] Տե՛ս ԳԱ ՐՖ, ֆ. 446, оп. 1, д. 9, л. 39, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 34:
[2] Տե՛ս ԳԱ ՐՖ, ֆ. 446, оп. 1, д. 9, л. 33:

ժանդակեց Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը»[1]: Գնդապետ Մ. Զինկևիչը 1919 թ. հունվարին «Հայ-ռուսական հարաբերությունները» զեկուցման մեջ նշում է. «...*շատ ցավալի է, որ ռուսները այդպիսի բուռն մասնակցություն են ունենում հայ-վրացական հակամարտությանը: Ռուսները այս միջադեպում օգնեցին հայերին, սակայն նրանք Ռուսաստանին ծառայություն չեն մատուցում: Ռուսաստանի նկատմամբ իրենց հավատարմության մասին ավելի քիչ են խոսում: Բավական է ...հայկական բանակում ծառայող ռուս սպաները մարտում* (հայ-վրացական պատերազմում- Գ.Պ.) *կատարում էին իրենց պարտքը ապաստանած երկրի* (Հայաստանի Հանրապետության- Գ.Պ.) *նկատմամբ առանց գիտակցելու, թե քաղաքականապես դա որքանով է օգտակար Ռուսաստանի և ռուսների համար: Քաղաքականության մեջ ամաչելու կարիք չկա և երբ շահը պահանջում է, ապա պետք է չարակամորեն վերաբերվել մեր հանդեպ մեղավոր ազգին ...Պետք է կարողանալ օգտվել իրավիճակից և ժամանակին հեռանալ բեմից, թողնելով դաշնակցին մենակ, բախտի քմահաճույքին*»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ի՞նչ նկատի ուներ գնդապետ Մ. Զինկևիչը՝ զեկուցագրում շեշտելով, թե «...ռուսները այդպիսի բուռն մասնակցություն են ունենում հայ-վրացական հակամարտությանը: Ռուսները այս միջադեպում օգնեցին հայերին, սակայն նրանք Ռուսաստանին ծառայություն չեն մատուցում»: Իրողությունն այն է, որ հայ-վրացական պատերազմում Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» գործնականում չկարողացան շոշափելի օգնություն ցույց տալ Հայաստանի Հանրապետությանը, այլ փորձում էին միջադեպն օգտագործել ի շահ իրենց

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 50:
[2] Նույն տեղը, թ. 50-51:

ռազմավարության: Իսկ Հայաստանի Հանրապետության իշխանությունները ձախողեցին այդ փորձը: Գնդապետ Մ. Զինկևիչին հայտնի էր, որ 1918 թ. դեկտեմբեր 21-ին գեներալ Մ. Արեշովը Թիֆլիսից գրավոր դիմել էր Կամավորական բանակին՝ օգնել Լոռու և Ախալքալակի հայկական տարածքներից դուրս բերելու վրացական զորքը[1], սակայն Մ. Արեշովի խնդրանքը որևէ արձագանք չէր ունեցել և չէր կարող ունենալ, քանի որ այն հակասում էր գեներալ Ա. Դենիկինի ռազմավարությանը: Ինչպես նկատում ենք, վրացական զորքերի դուրսբերումը ռազմական գծից դժվարացնելու էր Կամավորական բանակի մուտքը սևծովյան ափեր: Գեներալ Ա. Դրագոմիրովի հանձնարարությամբ «Հատուկ խոհրդակցության» դիվանագիտական բաժինը դեկտեմբերի 30-ին «ուշացումով» քննարկել էր, «... թե ինչ կարելի է անել հայերի վիճակը թեթևացնելու համար»[2], սակայն Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը» հայտնի էր, որ դեկտեմբերի 29-ին ստորագրվել էր Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև զինադադարի համաձայնագիր, որն ուժի մեջ էր մտնելու հաջորդ օրը՝ դեկտեմբերի 31-ին: Հայ-վրացական կարճատև պատերազմից հետո երկու դարավոր հարևանների միջև լարվածությունը հետզհետե մեղմացավ, և երկու երկրների միջև 1919 թ. մարտին հաստատվեցին միջպետական հարաբերություններ, ճանաչեցին միմյանց անկախությունը (1919 թ. մարտի 6-ին Լևոն Եվանգուլյանը նշանակվեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ), վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, աշխուժացան տնտեսական կապերը: Սակայն Վրաստանի կառավարությունը, օգտագործելով իր աշխարհաքաղաքական դիրքը, շա-

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 91:
[2] Նույն տեղում:

ունակեց ժամանակ առ ժամանակ շրջափակել մեր երկիրը ու թալանել արտասահմանից Երևան ուղարկվող բեռները:

Այդուհանդերձ, հայ-վրացական պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, խուսափելով Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ քաղաքական շփումներից, այնուամենայնիվ չէր ձգտում կապերը խզել նրանց հետ, այլ փորձում էր իր հարաբերությունները կարգավորել բացառապես տնտեսական, առևտրական և այլ ոլորտներում: Փորձում էր հացահատիկ, սննդամթերք, զենք ու զինամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ ներկրել արտաքին աշխարհից կտրված Հայաստանի Հանրապետություն: Գնդապետ Մ. Զինկևիչին հայտնի էր նաև, որ այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության իշխանությունները երկրում տիրող սովը մեղմելու, հայկական բանակը պարենով ու զինամթերքով ապահովելու նպատակով դիմել էին Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը»: 1918 թ. դեկտեմբերի 12-ին Կամավորական բանակի Գերագույն գլխավոր հրամանատարին ուղղված զեկույցում փոխգնդապետ Վլասևը գրում է. «...Ներկա պահին ռազմական գործողություններ են ընթանում Հայաստանի և Վրաստանի միջև և հայկական բանակին խիստ անհրաժեշտ է մատակարարել 100000 փութ հացահատիկ: Խնդրում եմ Ձեր թույլտվությունը»[1]: Դեկտեմբերի 14-ին պատասխան գաղտնի նամակում Կամավորական բանակի գլխավոր շտաբի քաղաքական գրասենյակի պետ գնդապետ Դ. Չայկովսկին պատասխանեց, որ «Գերագույն գլխավոր հրամանատարը թույլատրել է հայկական բանակին մատակարարել 100 հազար փութ հացահատիկ՝ ուղարկելով Նովոռոսիյսկ-Բաթում-Երևան երթուղիով»[2]: Նույն օրը՝ դեկտեմբերի 14-ին, գեներալ Ա. Դենիկինին[1], Կուբանի երկրամասի նախագահին[2], Եկատերինոդարի Հայոց ազգային խորհրդին[3] և փոխգնդապետ Վլասևին[4] ուղղված նամակներում, ներկայացնելով հանրապետության սոցիալական աղետալի վիճակը, Ա. Ձամալյանը գրում է. «...Խնդրում ենք Ձեր աջակցությունը Հայաստանի զինվորական շտաբի ներկայացուցիչ գնդապետ Վլասևին, որի մոտ ես գործակալներ եմ ուղարկել Կուբանի մարզում սննդամթերք ձեռք բերելու համար: Նրանք պետք է Թիֆլիս բերեն 3000 փութ ալյուր, 50 փութ կենդանական և 100 փութ բուսական յուղ, որոնք Վրաստանի կառավարությունը առաքելության միջնորդությամբ խոստացել է ազատել մաքսավճարներից»[5]: Չնայած գեներալ Ա. Դենիկինի հրամանով փակվել էր ռուս-վրացական սահմանը Կամավորական բանակի և Վրաստանի միջև Սոչիի և Սուխումիի երկրամասերի համար ծավալած պայքարի հետևանքով, սակայն գեներալը թույլատրել էր ապրանքների առաքումը Հայաստանի Հանրապետություն[6]: Սակայն Երևան ուղարկվող բեռները շատ հաճախ ռուս-վրացական սահմանից կրկին վերադարձվում էին Կուբան կամ վրացական սահմանում թալանվում կամ առգրավվում էին, և միայն շատ չնչին մասն էր տեղ հասնում[7]: Այդ օրերին վրացական սահմանին թալանվեցին նաև Ուկրաինայից Երևան եկող բեռները[8]:

Այսպիսով, արխիվային վավերագրերի և նյութերի ուսումնասիրությունից համոզվում ենք, որ Հայաստանի

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 41.
[2] Նույն տեղում, л. 40:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 61, թ. 46:
[2] Տե՛ս Նույն տեղում, թ. 47:
[3] Տե՛ս Նույն տեղում, թ. 49:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 61, թ. 48:
[5] ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 61, թ. 46:
[6] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 61-62, оп. 1, д. 19, л. 28, ф. 5829, оп. 1, д. 7, л. 28, Россия Антибольшевистская из белогвардейских и эмигрантских архивов, М., 1995, էջ 281:
[7] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 19, л. 28, ***Деникин А.***, Очерки русской смуты: В. 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 253:
[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 231, թ. 7:

Հանրապետության կառավարությունը հայ-վրացական պատերազմի ընթացքում փորձում էր օգտագործել դիվանագիտական բոլոր հնարքները՝ խուսափելու Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ Խորհրդակցության» հետ քաղաքական շփումներից, քանի որ դրանք կարող էին ունենալ ծանր հետևանքներ ոչ միայն հանրապետության, այլև հարևանների համար:

Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ Խորհրդակցությունը» ձգտում էին պատերազմի հարմար առիթը օգտագործել իրենց ազդեցությունը տարածաշրջանում հաստատելու համար:

Մեծ Բրիտանիայի զինվորական հրամանատարությունը Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ Խորհրդակցության» ռազմավարական պլանները խափանելու և հայերի ռուսամետությունը չեզոքացնելու նպատակով աջակցեց Վրաստանին:

Թեև հայ-վրացական պատերազմն ավարտվեց Հայաստանի Հանրապետության հաղթանակով՝ տարածքային ձեռքբերումներով, սակայն Բրիտանական զինվորական հրամանատարության պարտադրանքով այն վերածվեց դիվանագիտական պարտության: Դրանով Մեծ Բրիտանիան մեկ անգամ ևս շեշտում էր, որ այդ պարտությունը հայերի ռուսամետության հետևանքն է:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական պարտությունը նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սպասողական, դանդաղկոտ, չհամաձայնեցված և ոչ միասնական գործողությունների արդյունքն էր: Հայաստանի Հանրապետության իշխանությունները չկարողացան ժամանակին և անսխալ գնահատել ստեղծված քաղաքական նոր իրադրությունը, չկարողացան Մեծ Բրիտանիայի և Վրաստանի լարած հակառուսական որոգայթում ճիշտ կողմնորոշվել և ճկուն դիվանագիտութուն վարել:

6. Կարսի խնդիրը և Ռուսաստանի դիրքորոշումը

Հայաստանի անկապտելի մասը կազմող Կարսի մարզի շուրջ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ծավալված պայքարը բացահայտեց, որ այս հարցում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերը հակընդեմ են, իսկ քաղաքականությունը՝ ոչ հայանպաստ: Մուդրոսի զինադադարից հետո թուրքերը պարտավոր էին հետ քաշվել մինչև 1914 թ. օգոստոսի 1-ի սահմանները, բայց ամեն ինչ անում էին ազատվելիք տարածքներն իրենց ազդեցության ներքո պահելու և դրանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքները չեզոքացնելու համար: Մուդրոսի զինադադարի պահանջների իրականացման պարտականությունը դրված էր անգլիական զինվորական հրամանատարության վրա: Ի դեպ, որպես Ռուսաստանի նախկին տարածք՝ Կարսի մարզի նկատմամբ անտարբեր չէր նաև Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը», որի ձգտումներին ու ազդեցության տարածմանը կտրականապես դեմ էր Մեծ Բրիտանիան: Մինչև Անդրկովկասի վերամիավորումը Ռուսաստանի հարավի հետ Կամավորական բանակը ձգտում էր Կարսի մարզը տարածաշրջանում դարձնել «Հատուկ խորհրդակցության» ռազմավարական կարևոր հենակետ: Ձգտում էր տիրել նաև պատերազմից հետո Կարսում մնացած զինամթերքի մեծ պաշարին, որ անխնա թալանվում էր թուրքերի, վրացիների, ադրբեջանցիների և առհասարակ մահմեդականների կողմից:

1919 թ. հունվարի 6-ին Ալեքսանդրապոլում գեներալ Ջ. Ուոքերը իր անձնական գնացքում միքանիժամյա տեսակցություն ունեցավ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի, Վրաստանում Հա-

յաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Զամալյանի և զինվորական նախարարի ներկայացուցիչ Գամազովի հետ[1]: Նույն օրը Զ. Ուոքերը Ս. Տիգրանյանին հանձնեց մի պաշտոնական գրություն՝ ուղղված Հայաստանի Հանրապետության մինիստր-նախագահին: Այդ գրությամբ Զ. Ուոքերը հայտնում է, որ «...ինքը եկել է Անդրկովկաս որպես զորական ներկայացուցիչ Մեծ Բրիտանիայի՝ ենթակայ դաշնակից պետութիւնների բարձր մեծաւորին և անգլիական գլխաւոր հրամանատարին Կ.Պոլսում, որ իրեն հետ անմիջական առնչութիւն ունեն հետևյալ երկրները՝ Հայաստանի, ...Վրաստանի Հանրապետութիւնները, Բաթումի ...և Կարսի նահանգները, որ նման ֆունկցիաներ Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի հանրապետութիւնների վերաբերմամբ ունի գեներալ-մայոր Տոմսոնը, անգլիական զորքերի հրամանատարը Բագուում»[2]: Այնուհետև զրույցի ընթացքում Զ. Ուոքերը հայտնում է, որ իրեն հանձնարարված է ֆրանսիական առաքելության գնդապետ Պ. Շարդինյիի հետ հետամուտ լինել պարտված Թուրքիայի և դաշնակից պետությունների միջև կնքված Մուդրոսի զինադադարի որոշումների կատարման ընթացքին[3]: Ինչպես ասվեց, համաձայն զինադադարի՝ պայմանագրի թուրքական զորքը պետք է հեռանար Կարսի մարզից ռուս-թուրքական մինչպատերազմյան սահմանը: Կարսի մարզի նկատմամբ, որը բաժանված էր Կարսի, Կաղզվանի, Արդահանի և Օլթիի շրջանների, պետք է վերահսկողություն սահմաներ Հայաստանի Հանրապետությունը: Սակայն թուրքական 9-րդ բանակի գլխավոր հրամանատար Յակուբ Շևքեթ փաշան միտումնավոր ձգձգեց մարզի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը և դրանով հնարավորություն

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15 թ. 60:
[2] Նույն տեղում, թ. 60:
[3] Տե՛ս նույն տեղը:

և պայմաններ ստեղծեց 1918 թ. նոյեմբերին Կարսում մահմեդական Ազգային խորհուրդ ձևավորելու համար[1]: Վերջինիս նպատակն էր ամբողջ մարզը պահել թուրքերի ազդեցության ոլորտում և թույլ չտալ թուրքերի հարձակման հետևանքով 1918 թ. սկզբներին Կարսից հարկադրաբար Երևանի և Թիֆլիսի նահանգներ գաղթած ավելի քան 100 հազար հայերի վերադարձը իրենց հայրենի տները[2]:

1919 թ. հունվարի 7-ին Կարսում Զ. Ուոքերը Յ. Շևքեթ փաշային ներկայացրեց իր 8 հրահանգները: Հրահանգի 1-ին կետում նշում էր. «1. Համաձայն դաշնակից պետությունների կողմից ինձ տված իշխանությանը՝ հայտնում եմ նորին գերազանցություն Շևքեթ փաշային, որ ես նպատակ ունեմ մոտ օրերս ստանձնել Ղարսի նահանգի զինվորական ու քաղաքացիական կառավարումը, ինչպես այն կատարեցի Բաթումի վերաբերյալ:

Իմ ներկայացուցիչը, որ Ղարսի զինվորական ղեկավար է կոչվելու, հավանական է հունվարի 12-ին 1919 թ. կլինի Ղարսում, 200 ուղեկիցների հետ միասին: Նրա հետ են գալու Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված անհրաժեշտ քանակությամբ պետական ծառայողներ:

Խնդրում եմ Ձերդ գերազանցությանը, որ այդ ծառայողներն ու վարչությունը նպատակահարմար կերպով տեղավորվելու կտրուկ կարգադրություն անեք»[3]: Զ. Ուոքերը Յ. Շևքեթ փաշայից պահանջեց անմիջապես վերացնել թուրքական զինվորական պահակախմբերը Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ, սահմանը բացել ժողովրդի և գնացքների ազատ երթևեկության համար, արագացնել թուրքական զորքերի

[1] Տե՛ս *Յովհաննիսյան Ռ.*, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 219:
[2] Տե՛ս *Նասիպեան Ազատի*, Բրիտանիա եւ Հայկական Հարցը 1915-1923, էջ 166-167:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 47 a:

դուրսբերումը մարզից ոչ ուշ, քան մինչև հունվարի 25-ը, նահանգից չարտահանել «...անհատական սեփականություն կամ հանդերձանք», բացի այն ռազմական իրերից, որ թուրքական զորքը բերել էր իր հետ: Չէր թույլատրվում նաև մեկնելուց առաջ ոչնչացնել որևէ բան: 3. Շևքեթ փաշային տրվում էր 25000 փութ ցորեն որպես հեռացող զորքին Կարսից էրզրում ճանապարհի սնունդ[1]:

Հրահանգներ տալուց հետո Զ. Ուոքերը հաջորդ օրը՝ հունվարի 8-ին, Կարսից վերադառնալով Ալեքսանդրապոլ, համաձայնագիր ստորագրեց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հետ: Մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի վերջնական որոշում ընդունելը նախատեսվում էր, ըստ համաձայնագրի 1-ին կետի, նահանգապետի ենթակայությամբ ստեղծել Կարսի քաղաքացիական վարչություն՝ կազմված հայերից[2]: «Հայկական կառավարությունը,- ասված է համաձայնագրում,- պատրաստ է ծառայողներ նշանակել Ղարսի նահանգը և քաղաքի քաղաքացիական վարչությունը վարելու համար, սպասելով խաղաղության կոնֆերանսի որոշմանը»[3]: Զ. Ուոքերը Կարսում նշանակելու էր անգլիական զիրվորական կառավարիչ, որին ենթարկվելու էր մարզի հայկական քաղաքացիական վարչությունը: Հայաստանի կառավարությունը հայտնեց իր համաձայնությունը և խնդրեց հետևողականորեն իրականացնել հետևյալ հրահանգները. առաջին՝ ապահովել հայ գաղթականների վերադարձը Կարսի մարզ, երկրորդ՝ ուղարկել ցորեն, հաց ազգաբնակչության համար, երրորդ՝ ապահովել Կարսի մարզում մնացած ունեցվածքը կողոպուտից[4]: Հայաստանի կառավարության նշանակած պաշտոնյաները են-

[1] Տե՛ս ՀԱԱ ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 61, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 47 a, թ. 61:
[2] Տե՛ս «Յառաջ» լրագիր, 3 փետրվարի 1919 թ., Երևան:
[3] ՀԱԱ, ֆ. 200 ց. 1, գ. 92, մաս I, թ. 34 a:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 70:

թարկվելու էին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը և գործելու էին նրա հրահանգների համաձայն: Ներքին գործերի նախարարը Կարսի մարզային քաղաքացիական վարչությանը հրահանգներ էր տալու անգլիական զիվորական կառավարչի համաձայնությամբ: Տարածայնության պարագայում հարցը լուծելու էր Զ. Ուոքերը՝ նախապես բանակցելով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ: Անգլիական զինվորական կառավարիչը և Հայաստանի կառավարության նշանակած պաշտոնյաները մինչև հունվարի կեսը Ալեքսանդրապոլից պետք է մեկնեն Կարս[1]: Գնդապետ Կ. Թեմպերլին նշանակվեց Կարսի մարզի զինվորական կառավարիչ: Հունվարի 5-ին շուրջ 120 անգլիական զինվոր 9 սպայի հետ մեկնեց Կարս[2]: Հունվարի 10-ին Նախարարների խորհրդում Ս. Տիգրանյանը հաղորդեց, որ Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվում երկաթուղին, Կարսի բերդը իր ունեցվածքով, քաղաքում վարչություն ու միլիցիա ստեղծելու գործը: Բոլոր պաշտոնյաները պետք է ենթարկվեն բրիտանական ռազմական նահանգապետին[3]: 1919 թ. հունվարի 14-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց Կարսի մարզը հանրապետությանը միացնելու մասին որոշումը: Ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանի[4] կարգադրությամբ կազմակերպվեց. «ա) նահանգի և շրջանների քաղաքացիական վարչությունը, բ) նահանգի և շրջանների միլիցիա և ժանդարմերիա 400 հոգուց՝ համապատաս-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 62, ֆ. 200 ց. 1, գ. 92, մաս I, թ. 34 a:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 31, ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 71, ֆ. 277 ց. 1, գ. 5, թ. 26:
[3] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов. Под ред. В. А. Микаелян, Ереван, 1992, էջ 65, 69:
[4] 1919 թ. հունվարի 3-ին մինիստր-նախագահի N 18 հրամանով ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի հիվանդության պատճառով նրա պաշտոնը ժամանակավորապես հանձնվեց խնամատարության նախարար Ալեքսանդր Խատիսյանին:

խան սպայական կազմով, գ) երկաթուղու Ղարս-Ալեքսանդրապոլ գծի վարչությունն ու ծառայողների շտաբը:

Ա.Խատիսյանը նշանակեց. ա) հատուկ անձ պարենավորման նյութերի թուրքական պահեստները ի հայտ բերելու և անգլիական գեներալին տեղեկացնելու համար, բ) խնամատարական մինիստրության ներկայացուցիչ՝ գաղթականների դարձն ու տեղափոխումը և նոցա համար սննդատու կացաններ բանալու համար,

գ) Ղարսի անգլիական զինվորական նահանգապետի մոտ, նրա տրամադրության տակ գտնվելու համար 4 սպա, ըստ թույլտվության զինվորական մինիստրի»[1]: Հունվարի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց Կարսի մարզում քաղաքացիական իշխանություն հաստատելու մասին որոշում[2]: Կարսի քաղաքացիական իշխանությունը կազմված էր 41 պաշտոնյաներից: Պետ նշանակվեց Ստ. Ղորղանյանը, ընդհանուր ոստիկանության պետ՝ գնդապետ Շահբազյանը, իսկ երկաթուղու կառավարիչ՝ ինժեներ Փիրումյանը[3]: Հունվարի 17-ին Ա. Խատիսյանը Հայաստանի խորհրդում հայտնեց, որ հունվարի 25-ին Կարսը հանձնելու են Հայաստանի Հանրապետությանը, և իշխանությունը պատրաստ է ընդունելու այն: «Մենք վճռել ենք մտցնել 2 էսկադրոն զինուորութիւն ընտիր մասերից և 400 պահակ իբրև միլիցիա՝ յոյս ենք տալ, որ ոչ մի անպատասխանատու խումբ մուտք չպիտի ունենայ Կարսի նահանգը, թէև դրութիւնը բաւական լարուած է, բայց կամաց-կամաց լաւանում է»[4]:

Կարսի քաղաքացիական իշխանությունը պատրաստ էր

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. ..., էջ 84:
[2] Տե՛ս նույն տեղը:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 71:
[4] Նույն տեղը:

կատարելու իր պարտականությունները մարզում: Սակայն Կարսի թուրքական զինվորական հրամանատարությունը և մահմեդականների Ազգային խորհուրդը հրաժարվում էին ենթարկվել հայկական քաղաքացիական իշխանության կարգադրություններին: Դեռևս 1918 թ. նոյեմբերի 5-ին Կարսում հրավիրված մարզի մահմեդականների առաջնորդների վեհաժողովում, որին մասնակցում էին թուրքական 9-րդ բանակի հրամանատար Յ. Շևքի փաշան և Կարսի սանջակի կառավարիչ Հիլմի բեյը, հայտարարեցին, որ չեն ճանաչում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի իշխանությունները: Դեկտեմբերին Կարսում գումարվեց նոր համաժողով Կարսի և Բաթումի մարզերի ու այլ շրջանների մահմեդականների ներկայացուցիչների մասնակցությամբ, և որոշվեց ստեղծել Ազգային մահմեդական «Շուրա» անունով տեղական կառավարություն՝ օսմանյան բանակի նահանջի ժամանակ «հայրենիքի» պաշտպանության գործն իրականացնելու համար[1]: Ավելին, Թուրքիայի աջակցությամբ հունվարի 17-18-ին հարյուրից ավելի պատվիրակներ հավաքվեցին Կարսում՝ միասնական դիմադրական ծրագիր մշակելու: Արդյունքը եղավ այն, որ միանգամից հռչակեցին «Հարավարևմտյան Կովկասյան Հանրապետություն»՝ Կարս, և Արևելյան կամ «Արաքսյան Հանրապետություն»՝ Նախիջևան կենտրոններով[2], և կազմեցին ժամանակավոր կառավարություն՝ «Շուրա»[3]: Վերջինս բաղկացած էր բացառապես մահմեդականներից և ամբողջովին գտնվում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործիչներ Նուրի (Էնվերի

[1] Տե՛ս *Յովհաննիսյան Ռ.*, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին տարին, 1918-1919, էջ 219:
[2] Մանրամասն տե՛ս *Զոհրաբյան Է.*, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ.-1920 թ. ապրիլ):
[3] Տե՛ս *Յովհաննիսյան Ռ.*, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին տարին, 1918-1919, էջ 223:

եղբայրը) և Խալիլ փաշաների ազդեցության ներքո[1]: Այդ «հանրապետությունը» ընդունեց օսմանյան դրոշը, թուրքերենը հռչակեց պետական լեզու, իսկ պետական տարածք հայտարարեց Աջարիայից, այսինքն Սև ծովից մինչև Պարսկաստանի սահմանը՝ ներառյալ Նախիջևանը, հավակնելով նաև Ախալցխային[2]: Փաստորեն այն վտանգ էր ստեղծում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի համար: Լլոյդ Ջորջին, Պուանկարեին և Վ. Վիլսոնին ուղղված դիմումում Հարավ-արևմտյան Կովկասի մահմեդականները պահանջում էին ճանաչել իրենց իրավունքները Կարսի, Արդահանի, Բաթումի և այլ շրջանների նկատմամբ՝ հայտարարելով, որ այնտեղ իրենց բնակչությունը կազմում է 3 միլիոն, մինչդեռ հայերը և հույները՝ բնակչության ընդամենը 10 տոկոսը[3]:

Կարսի «Հարավ-արևմտյան հանրապետությունը» ուներ իր «զորքը»՝ 5-6 հազար վատ կազմակերպված ավազակախմբեր, որոնց առատորեն թուրքական զենք ու զինամթերք էր մատակարարվում: «Զորքի» կազմում կային թուրքական սպաներ և ոչ քիչ թվով ասկյարներ[4]: Կարսում անգլիական զինվորական կառավարիչ գնդապետ Կ. Թեմպերլին 1919 թ. հունվարի 26-ին Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելության ներկայացուցչին ուղղած հայտագրում ասված է. «Այժմ ես հաստատ տեղեկություն ունեմ, որ Շևքի-փաշան այդ կազմակերպության ոգին է, և Կովկասից մեկնելուց առաջ ինքն է ամենուրեք ստեղծել կենտրոններ, նրանց տրամադրվել է զենք, սպաներ և հրահանգիչներ, ինչպես նաև զինվորներ, իբր թե զորացրված են: 12-րդ դիվիզիայի հրամանատար Ալի Ռիֆատ բեյն մեզ անձամբ հայտնեց, որ թաթարական կազմակերպություններում մեծ քանակությամբ զորացրված թուրք սպաներ կան: Թրքական 9-րդ բանակը, զորացրման ժամանակ՝ թաթարներին շատ զինամթերք և զենք է թողել»[1]: «Շուրային» նյութական օգնություն էր ցույց տալիս նաև Ադրբեջանը, որը նաև ուղղորդում էր նրա գործունեությունը[2]: Կարսում թուրքական իշխանության՝ «Շուրայի» ստեղծումը բացահայտում է Թուրքիայի ձգտումը՝ չազատել հայկական տարածքները և որքան հնարավոր է դրանք պահել իր ազդեցության տակ: Սա միաժամանակ խոսում է անգլիական զինվորական հրամանատարության՝ իր խորքում հակահայկական գործելակերպի մասին, որ իր վրա դրված պարտավորությունները կատարելու հարցում, մեղմ ասած, այնքան էլ հետևողական չէր: Այլապես թուրքերն ինչպե՞ս կարող էին նման քայլի դիմել, եթե համոզված չլինեին, որ անգլիացիները կհանդուրժեն: Նրանց վաղուց էր հայտնի Անգլիայի թուրքամետ կողմնորոշումը և հակահայկական գործելակերպը: Ինչպե՞ս բացատրել, որ Ջ. Ուոքերը օրեր առաջ հրահանգներ էր տվել Մ. Շևքեթ փաշային և Ս. Տիգրանյանին՝ առաջինին Կարսի մարզից հեռանալու, իսկ երկրորդին՝ մարզը Հայաստանին հանձնելու մասին: Սակայն շուտով փոխվեց նրա դիրքորոշումը: Չհարգելով իր իսկ արձակած հրահանգները՝ նա ոչ միայն չսանձեց, չարգելեց Կարսի մարզում «Հարավ-արևմտյան հանրապետություն» անօրինական հռչակումը, այլև, չմոռանալով հայերի ավանդական ռուսամետությունը, փաստացի ճանաչեց նրա կազմավորումը և գաղտնի կամ բացահայտ սատարեց նրան: Այդ կապակցությամբ տեղեկատվական բյուրոյի նախագահ

[1] Տե՛ս "Вопросы истории", 1994, N1, л. 120, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 210:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 21:
[3] Տե՛ս «Յառաջ», 14 փետրվարի 1919 թ., Թիֆլիս:
[4] Տե՛ս "Вопросы истории", 1994, N1, л. 120, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 210:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 88 ճ:
[2] Տե՛ս ***Վրացյան Մ.***, Հայաստանի Հանրապետություն, էջ 309:

Ա.Մալխազովը 1919 թ. փետրվարի 7-ի իր զեկուցագրում Բաքվից հայտնում է. «Հաստատվում է, որ այդ կառավարությանը («Շուրա»- Գ.Պ.) գաղտնի աջակցություն է ցուցաբերում անգլիական կառավարությունը»[1]: Ավելին, Ջ. Ուոքերը հունվարի 21-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին հղած նամակում գրում է. «...*ցավոք սրտի ստիպված եմ չեղյալ հայտարարել մեր միջև կատարված կարգադրությունը*: Ղարսի բրիտանական զինվորական կառավարիչին հրաման տվի ետ ուղարկել այդ ծառայողներին Ալեքսանդրապոլ»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Նույն նամակում Ջ. Ուոքերը ներկայացնում է նաև մերժման դրդապատճառները. «Ղարսի բրիտանական զինվորական կառավարիչից նոր ռապորտ եմ ստացել, որ փորձելով հայ կառավարիչներ մտցնել քաղաքում, որոնք պետք է աշխատեին իր հրամանատարության տակ, ինչպես մենք փոխադարձաբար պայմանավորվել էինք, այժմ նա գտնում է, որ դա անհնար է կատարել:

Դրա պատճառը Ղարսում գտնվող մուսուլմանների խիստ շեշտված հակակրանքն է հայերի նկատմամբ:

Պետք է նաև ասել, որ այդ ադմինիստրատորների կամ նրանցից մի քանիսի վարվելակերպը հաշտվողական բնույթ չէր կրում: Բրիտանական բանակի մի սպա տեղեկացրեց, որ հայ ծառայողները քաղաք մտան ազգային հայկական մի մեծ դրոշակ պարզած, իսկ նրանցից մի քանիսը գնացքի միջից անվայել խոսքեր էին նետում մուսուլմանների հասցեին: Պարզ է, որ նրանք լավ չէին հասկացել իրենց առաքելության նպատակները:

Վստահ եմ, որ Ձերդ գերազանցությունը կհասկանա, որ երկու կողմերի ռասայական հակակրանքի առկայության դեպքում անհնար է նոր փորձ կատարել»[3]: Այսինքն՝ անգլիական զինվորական հրամանատարը հայկական կողմին հասկացնում է, որ հրաժարվեն Կարսից: Այդ առիթով Ս. Տիգրանյանը 1919 թ. մարտի 6-ին Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին ուղղած նամակ-հրահանգում գրում է. «...բրիտանական զորահրամանատարությունը բավական վարանոտ փութկոտությամբ տեղի տվեց տեղական թյուրքության «ճվճվոցների» առաջ: Օսմանյան և ադրբեյջան թյուրք օֆիցերների ու ագիտատորների ձեռքով կազմակերպված տեղական «կառավարությունը» «Շուրա» մի տեսակ գրեթե ճանաչեց բրիտանական զորական նահանգապետը, իսկ մեր քաղաքացիական նահանգապետը իր պաշտոնյաներով ստիպված հեռացավ Կարսից: Ըստ անգլիական բացատրության Թուրքերի հայատյաց գրգռվածությունն էր գլխավոր պատճառը համաձայնության քանդման. բացի այդ առաջ է բերում և մանր պատճառաբանություն՝ իբրեվ թե մեր քաղաքացիական նահանգապետը իր պաշտոնյաներով անտակտ եվ վախկոտ է գտնվել. մի պատճառաբանություն, որը ինքնաարդարացման մի խեղճ ու անվայել փորձ է հզոր պետության պաշտոնիայի բերանում եվ թերթում: Մեր քաղաքացիական նահանգապետը ընդհակառակն զեկուցում է, որ բրիտանական զորական նահանգապետը ոչինչ աջակցություն իրեն ցույց չտվեց եվ ոչ թե ինքը վախից հեռացավ այնտեղից, այլ իրեն հասկացրին, թե լավ կը լինի հեռանա»[1]: Իրենց դժգոհությունն ու զայրույթը հայտնելով անգլիական զինվորական հրամանատարության նոր դիրքորոշման առիթով՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունները նրան հասկացրին, որ չեն հրաժարվում Կարսի մարզի նկատմամբ իրավունքներից, և ստեղծված կացությունը ժամանակավոր է, ու պետք չէ տեղի տալ թուրքերի շինծու և ոչ

[1] ՀԱԱ ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 21:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 77 a:
[3] Նույն տեղը:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ. 1:

լուրջ հակառակությանը[1]:

Բրիտանական զինվորական հրամանատարությունը իր գործելակերպով փաստորեն նպաստում էր Անդրկովկասում թուրքերի հակահայկական գործողություններին: Կարծում ենք՝ ապացուցելու հարկ չկա, որ Զ. Ուոքերի և նրա ներկայացուցիչ գնդապետ Կ. Թեմպերլիի պատճառաբանությունները անհիմն էին, որովհետև մինչև հունվարի 8-ի համաձայնագրի ստորագրումը հայ-մահմեդական թշնամական հարաբերությունների և հավանական բախումների մասին լավատեղյակ էր անգլիական զինվորական հրամանատարությունը: Վերջինս տեղյակ էր նաև, որ Կարսի մարզից թուրքերն արտաքսել էին շուրջ 100 հազար հայերի և մեծ թվով ռուսներ: Անբողջովին փոխվել էր Կարսի մարզի էթնիկ կազմը. բնակչության գերակշիռ մասը մահմեդական տարրն էր, որը տիրել էր մարզի ամբողջ հարստությանը[2]:

Զ. Ուոքերի կողմից համաձայնագիրը չեղյալ հայտարարելու (հունվարի 21-ին) կապակցությամբ հայկական կողմն իր դժգոհությունը հայտնեց նաև Թիֆլիսում «Համաձայնականների բարձր հրամանատարությանը»: Վրաստանում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Մարտիրոս Հարությունյանը* փետրվարի 4-ի իր նամակում հայտնում է. «Հայկական պատվիրակությունը պատիվ ունի բարձր հրամանատարությանը տեղեկացնելու հետևյալում.

Հայկական կառավարությունը նկատում է, որ նորին գերազանցության գեներալ Ուոկերը հրաժարվում է Հայկական վարչություն հաստատելու Ղարսի նահանգում, ինչպես նախապես նրա հետ համաձայնեցված էր:

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] Տե՛ս "Вопросы истории", N1, 1994, л. 130, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 211:

Պատվիրակությունը պատիվ ուներ Ձեզ հայտնելու Հայաստանի Հանրապետության երկյուղը և խնդրելու համաձայնականների բարձր հրամանատարությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելու այս հարցի վրա և հնարավոր միջոցներ ձեռք առնելու՝ նորին գերազանցության, գեներալ Ուոկերի կողմից նախատեսված ծրագիրն իրագործելու համար: Անհրաժեշտ է Ղարսի նահանգում Հայկական վարչություն հաստատել, հակառակ դեպքում, ըստ մեր պատվիրակության կարծիքի՝ մուսուլմանական ժողովրդի կողմից ցավալի հետևանքներ կարող են տեղի ունենալ»[1]:

Կարևոր է նկատել, որ, բացի թուրքամետ ու հակահայկական կողմնորոշումից, բրիտանական զինվորական հրամանատարության դիրքորոշման փոփոխության դրդապատճառ էր նաև Կարսի մարզի նկատմամբ Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակության» հավակնությունը, որը հայտնի դարձավ հունվարի 8-ի համաձայնագրի ստորագրումից հետո: Եվ քանի որ անգլիական զինվորական հրամանատարի աչքում թուրքը ամենավստահելի պատվարն էր Ռուսաստանի դեմ, նա իսկույն շտապեց ուղղել իր թույլ տված «սխալը» և Կարսը տվեց թուրքերին: Ինչպես մարտի 6-ին Ահարոնյանին ուղղած նամակ-հրահանգում նշում է արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը, «...***Անգլիան չի ուզում հենվել որևէ հայ ուժի վրա, որովհետև իր կարծիքով (եվ դժբախտաբար ոչ միայն դրա կարծիքով) հայն ավելի է ռուս, քան ռուսն ինքը, եվ չէ կարելի հենվել հայի վրա, երբ Ռուսիայի դեմ բան է ծրագրվում***»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Հասկանալի է, թե ինչու էր բրիտանական զինվորական նահանգապետ գնդապետ Կ. Թեմպերլին հովանավորում

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 122a, 122, գ. 150, թ. 183 a:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ. 2-3:

Կարսի մարզի «Հարավ-արևմտյան հանրապետության» թուրքական «կառավարչությանը», ավելին՝ նա հրաման էր արձակել առ այն, որ Կարսի մարզ հայ գաղթականների վերադարձի համար պարտադիր պայման է, որ նրանք Ռուսաստանի հետ վերամիավորվելուն ուղղված որևէ քարոզչություն չանեն[1]: Թուրքերը պատրաստվում էին անգամ պատժել այն հայերին, որոնք կհամարձակվեին վերադառնալ Կարս[2]: Հայաստանի խորհրդի հունվարի 25-ի նիստում Արտ. Բաբալյանը հայտնում է, որ «Ալեքսանդրապոլում, Արփաչայի ափերին կուտակված գաղթականութիւնը սովից կոտորւում է: Սակայն նոքա դեռ չեն կարողանում մտնել Ղարսի շրջան: Անգլիացիք պատասխանատու են դրա համար: Ի՞նչ է մտածում այս մասին մեր կառավարութիւնը: Եթե այս դրութիւնը մի քանի օր էլ շարունակւի, այն ժամանակ գաղթականութեան վերադարձի մասին այլևս խոսք չի կարող լինել, քանի որ նրանք բոլորը կոտորված կը լինեն: Պիտի ասել, որ անգլիացւոց վրայ դրած մեր յոսերը չիրականացան»[3]: Իսկ երբ Հայաստանի կառավարությունը խնդրեց օգնել հայ գաղթականներին վերադառնալու հայրենի տները, բրիտանական գեներալ Վ. Բիչը կտրուկ և վճռականորեն պատասխանեց. «...*Կարսի նահանգը Հայաստանին չի պատկանում*»[4] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Կարսի խնդրի վերաբերյալ անգլիական զինվորական հրամանատարության հակահայկական գործելակերպն այնքան ակնհայտ էր, որ անգամ առաջ բերեց Համաձայնության պետություններից Ֆրանսիայի ներկայացուցիչների դժգոհությունն ու կշտամբանքը: 1919 թ. հունվարին Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելությունը գնդապետ Կ. Թեմպերլիին ուղղած նոտայում գրում է, թե բրիտանական զինվորական հրամանատարությունը ինչպիսի անտարբերությամբ է վերաբերվում թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացվող թալանին ու կողոպուտին. «Ալի Ռիֆադ բեյը, Շեֆկի փաշայի հետ միասին մինչև վերջը շարունակեցին Հայաստանի ժողովրդին թալանել, արհամարհելով բացե ի բաց մեր կողմից տված հրամանները: Մեր հեղինակությունը պահանջում է անմիջական հատուցում ստանալ այդ բոլոր գործողությունների դիմաց, որոնցից ամենաքիչ կարևորն՝ այսօրվա ներկայացրածն է: Անհրաժեշտ է անմիջական միջոցներ ձեռք առնել, եթե ոչ համաձայնականների հեղինակությունը շատ է ընկնում Կովկասի այս մասում»[1]: Հայ գաղթականության ծանր վիճակը անշուշտ արդյունք էր նաև Հայաստանի Հանրապետության իշխանությունների դրսևորած դանդաղկոտության ու անվճռականության: Այն չկարողացավ ժամանակին գործուն միջոցներ ձեռնարկել նրանց սովից փրկելու և ներգաղթը կազմակերպելու հարցում:

Կարսի մարզը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու գործում բացասական դերակատարություն ունեցավ նաև հարևան Վրաստանի կառավարությունը, որը մարզի նկատմամբ նկրտումներ ուներ: Հայկական պատմական տարածքների նկատմամբ վրացիների հավակնությունը և դրանք յուրացնելու նրանց ձգտումը նոր չէին: Այս անգամ էլ, օգտվելով ստեղծված խառն իրադրությունից, վրացիները փորձեցին զենքով նվաճել Կարսը: Նրանց այդ փորձը,

[1] Տե՛ս "Вопросы истории", N1, 1994, л. 130, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 211, Революция и гражданская война в описаниях белогвардейцев, М., 1991, с. 91:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 48, թ. 1, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 35:
[3] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 87:
[4] ՀԱԱ, ֆ. 277, ց. 1, գ. 5, թ. 53, "Вопросы истории", N1, 1994, л. 130, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 211:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 91:

իհարկե, ձախողվեց: Երբ վրացական զորքը «սկսեց գբաղեցնել այդ (Կարսի- Գ.Պ.) տարածքը,- գրում է գեներալ Ա. Դենիկինը,- այն հանգեցրեց մահմեդականների զինված դիմադրությանը և Կարսի նահանգապետի հայտարարությանը, որ վրացիների հարձակումը կհամարվի «հարձակում ուղղված Մեծ Բրիտանիայի դեմ»[1]: Մեծ Բրիտանիայի համակրանքը շահելու և իրենց նպատակին հասնելու համար վրացիները կրկին գործի դրեցին փորձված զենքը՝ հայերին զրպարտելով, թե «...Հայաստանի կառավարությունը համաձայնություն ունի գեներալ Դենիկինի հետ»[2], «...հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և դժգոհ են անգլիական քաղաքականությունից»[3], «...հայերի միակ երազանքը Ռուսաստանին վերամիավորվելն է»[4] և այլն: Այս զրպարտությունը *ավելի էր խորացնում Մեծ Բրիտանիայի կառավարության կասկածամտությունը և տարակուսանքը, թե Կարսի մարզի հանձնումը Հայաստանին նշանակում էր այն միացնել Ռուսաստանին:* Այդ մտայնությունը փարատելու համար Ս. Տիգրանյանը Ա. Ահարոնյանին նույն՝ մարտի 6-ի նամակում գրում է. «*Թվում է թե Կարսի շրջանը Հայաստանին կցելու խնդիրը հանգիստ սրտով Անգլիան կլուծի այն ժամանակ, երբ կհավաստիանա, որ այդ Հայաստանը չի կցվելու (կամա թե ակամա) Ռուսաստանին: Մենք պետք է փարատենք անգլիացիների տարակուսանքները և պնդենք, որ Կարսի շրջանը, հատկապես արևելյան մասը (մեր «պերեցելի» գծով) Հայաստանի. անկախ մնալ ցանկացող Հայաստանի, բաժինն է և պիտի ենթարկվի մեր կառավարության*

[1] "Вопросы истории", N1, 1994, л. 130. *Деникин А.*, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т . 5. Вооруженные силы Юга России, с. 211.
[2] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063, ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 23, g. 2, գ. 65, թ. 1:
[3] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 181, մաս I, թ. 36:
[4] Նույն տեղում, գ. 193, մաս I, թ. 35:

սովորական իշխանությանը»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հայտնի է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը ձգտում էր Անդրկովկասը, այդ թվում նաև Կարսի մարզը զերծ պահել դենիկինյան ազդեցությունից և այն ամբողջապես անջատել Ռուսաստանից: Գեներալ Ջ. Ուոքերը համաձայնվեց, որ «Կարսի և Բաթումի նահանգներ ռուս գաղթականների վերադարձի համար պարտադիր պայման է, որ նրանք,- գրում է գեներալ Ա. Դենիկինը,- բոլշևիկյան կամ Ռուսաստանին միավորվելու քարոզչություն չանեն»[2]: Բրիտանական զինվորական հրամանատարությունը կարծում էր, թե Կարսի մարզի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը նշանակում է այն միացնել Ռուսաստանի հարավին: Այդ ընթացքում տեղի ունեցան դրամատիկ իրադարձություններ: Կարսի «Շուրան» և թուրքական 12-րդ բանակը չէին կասկածում, որ վաղ թե ուշ ազատելու են մարզի տարածքը, կատարելու են դաշնակից մեծ տերությունների պահանջը, որը բխում էր Մուդրոսի զինադադարից: Նրանք փորձում էին մարզի նկատմամբ Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ձգտումը հակադրել Մեծ Բրիտանիայի հակառուսական քաղաքականությանը և այն ծառայեցնել իրենց նպատակներին: Որպեսզի խանգարեին Կարսի մարզի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը, թուրքերը դիմեցին խորամանկության և հայտարարեցին. «*Եթե ոչ թուրքական, ապա միայն ռուսական իշխանություն*»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): «Նրանք ցանկություն են հայտնել շուտափույթ միանալու Ռուսաստանին,- գրում է գեներալ Ա. Դենիկինը: - Ռուս նահանգապետի նշանակումը նրանք համարում էին

[1] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063, ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 26-27, g. 2, գ. 65, թ. 3-4:
[2] "Вопросы истории", N1, 1994, л. 130. *Деникин А.*, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 211.
[3] Նույն տեղը:

ստեղծված բարդ էթնիկական կոնֆլիկտի միակ անարյուն լուծումը»[1]: Հունվարի կեսերին թուրքերը նույնիսկ պատվիրակություն ուղարկեցին Համաձայնության պետությունների մոտ՝ խնդրելու Կարսի «նահանգը միացնել Ռուսաստանին»[2]: Հետագայում «Շուրան» նման պահանջով երկու անգամ դիմել է անգլիացիներին և պատվիրակություններ ուղարկել Ամերիկա և Եվրոպա[3]: Մահմեդականների ու ռուսների համերաշխությունը և շահերի ընդհանրությունը պայմանավորված էին անգլիացիների՝ տարածաշրջանը բռնազավթումով: Լուրեր էին տարածվել, որ «անգլիացիները ցանկանում են գրավել ողջ Անդրկովկասը, որին դեմ են ամերիկացիները և ֆրանսիացիները»[4]: Անդրկովկասի բռնազավթմանը դեմ էին նաև Թուրքիան և Ռուսաստանը: ***Փաստորեն տեղի ունեցավ անհավատալին՝ Կարսի խնդրում դրսևորվեցին երկու դարավոր թշնամիների՝ Թուրքիայի և Ռուսաստանի շահերի ընդհանրությունը և նրանց համերաշխ համագործակցությունը:***

«Հատուկ խորհրդակցության» համար «...նախընտրելի էր թաթարների և անգամ թուրքերի իշխանությունը, քան նախատեսվող անգլիական բռնազավթումը,- գրում է Մ. Պապաջանյանը: –Ռուսները մտածում էին, որ Ռուսաստանի հզորանալու դեպքում թաթարական և թուրքական իշխանությունը ավելի հեշտ կլինի տապալել, քան անգլիականը: Եվ դրանից ելնելով ռուսները թուրքերի տիրապետության ընթացքում բարյացակամ վերաբերմունք էին դրսևորում նրանց նկատմամբ»[5]:

[1] Նույն տեղը:
[2] ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 35:
[3] Տես "Вопросы истории", N1, 1994, л. 130, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 211.
[4] ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 35:
[5] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 5, թ. 193 մաս I, թ. 12:

Իրականում Կարսի մարզը Ռուսաստանին հանձնելու նպաստավոր իրավիճակ էր ստեղծվել նաև Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» համար: «Հատուկ խորհրդակցության» հանձնարարականով Հայաստանի կառավարությունում զինվորական և քաղաքական հարցերով ներկայացուցիչ գնդապետ Լեսլին Կարսում սկսեց բանակցել մահմեդական ներկայացուցիչների և թուրքական 12-րդ բանակի հրամանատարության հետ, որպեսզի մինչև մարզից նրանց հեռանալը (հունվարի 25-ին) այն հանձնեն ռուսներին: Գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված 1919 թ. զեկուցագրում (չի հիշատակում ամիսը և օրը) գնդապետ Լեսլին տեղեկացնում է Կարսում առաջին բանակցությունների արդյունքի մասին. «...Կարս-Բաթում շրջանի բնակչությունը հայերի դեմ է տրամադրված, դրա համար ես անգլիացի կապիտան Գրինին առաջարկեցի այդ տարածքում գեներալ-նահանգապետություն ստեղծել՝ ղեկավար նշանակելով գլխավոր շտաբի մեր սպաներից մեկին (օրինակ՝ գնդապետ Զինկևիչին)»[1]: Հունվարի սկզբներին «Հատուկ խորհրդակցությանը» ուղղված մեկ այլ զեկուցագրում գնդապետ Լեսլին գրում է. «Ժամանելով Կարս, պատահաբար հանդիպեցի անգլիացի մայորի, որը այստեղ էր եկել մեր և գեներալ Բիչի միջև կապ հաստատելու համար: Ցավալի է, որ դուք նրա հետ ոչինչ չեք ուղարկել: Նա չգիտի իմ գոյության մասին»[2]: Նույն զեկուցագրում Լեսլին նշում է, որ «***իրավիճակը բավականին տագնապալի է, քանի որ անգլիացիները այստեղ ղեկավարներ են նշանակում հայերին ...Երեկ ինձ մոտ էր եկել մահմեդականների պատվիրակությունը: Նրանք հայտարարեցին, որ կընդունեն միայն ռուս նահանգապետ, ...որ իրենք***

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 9, л. 34, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 30.
[2] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 9, л. 29-30, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 24-25.

ունեն կազմակերպված զորամասեր, մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Եթե ռուս նահանգապետ չնշանակեն, նրանք ոչ ոքի չեն ընդունի և կնախընտրեն բոլորը մեռնել, քան ստրկության մեջ լինել հայերի կամ ա... (անգլիացիների- Գ.Պ.) *մոտ: Թուրքական նադին (ավազը հիմա այստեղ է) նույնպես առաջարկեց ինձ մնալ՝ ասելով, որ միայն ռուսական դրոշով կարող եմ այստեղ կարգ պահպանել: Նա թուրքական հրամանատարության անունից խոստացավ ցույց տալ ամեն հնարավոր օգնություն»*[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հունվարի 13-ին գնդապետ Լեսլին դարձյալ առանց Հայաստանի կառավարության գիտության ու համաձայնության գաղտնի մեկնել էր Կարս, հանդիպել մահմեդական բնակչության, անգլիական զինվորական հրամանատարության, «Շուրայի» և թուրքական հրամանատարության պատվիրակության հետ: Այդ կապակցությամբ հունվարի 27-ին գեներալներ Ա. Դրագոմիրովին և Կյազմիտինովիչին ուղղված զեկույցում Լեսլին գրում է. «...թուրքական հրամանատարությունը ինձ շատ ջերմ ընդունեց և, արտահայտելով իր բարեկամական վերաբերմունքը ռուսների նկատմամբ, ցանկություն հայտնեց կապ հաստատել մեր հրամանատարության հետ:

Նրանք ցանկություն հայտնեցին շուտափույթ կերպով միանալ Ռուսաստանին և առաջարկեցին ինձ մնալ իրենց մոտ որպես նահանգապետ. Անգլիացիներին նրանք ընդունեցին ջերմորեն, բայց, ինչպես իրենք հայտարարեցին, հետևյալ խոսքերով. «Մենք ուրախ ենք ընդունելու Ձեզ որպես դաշնակիցներ, որպես հաղթողներ և որպես ռուսական տարածքում թանկագին հյուրեր»: Նրանք ասում էին, որ իրենք կապ են պահպանում Բաթումում գտնվող մեր գեներալի հետ (ազգանունը պարզել չհաջողվեց) և որ իբր նա հեռագրել է իրենց, որպեսզի նահանգ չթողնեն ոչ անգլիացիներին, ոչ հայերին»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Գնդապետ Լեսլիի գաղտնի գործունեությունը Կարսի մարզում դժգոհության ալիք առաջացրեց հայ պետական, քաղաքական գործիչների, կուսակցությունների և խորհրդարանականների շրջանում: 1919 թ. հունվարի 21-ին Ս. Տիգրանյանը գնդապետ Լեսլիին ուղղված N88 պաշտոնական գրությամբ պահանջեց ներկայացնել բացատրություն, թե արդյոք ճիշտ է, որ նա Կարսի անգլիական զինվորական նահանգապետ Կ. Թեմպերլիի հետ ունեցած բանակցությունների ընթացքում պահանջել է նահանգում «...հաստատել ոչ թե հայկական, այլ մուսուլմանական կառավարում ռուս նահանգապետի գլխավորությամբ»[2]: Հաջորդ օրը՝ հունվարի 22-ին, գնդապետ Լեսլին Ս. Տիգրանյանին ուղղված պատասխան նամակում գրում է, որ «...Կարսում պաշտոնական խոսակցություն քաղաքական խնդիրների շուրջ չեմ ունեցել, սակայն անգլիական զինվորական նահանգապետ գնդապետ Կ. Թեմպերլիին խորհուրդ եմ տվել, որ այդ ծանր վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է նահանգապետ նշանակել ազգությամբ ռուսի, որն անմիջապես կապի մեջ կլինի Հայաստանի կառավարության հետ: Իմ կողմից երբեք չի պահանջվել նահանգում հաստատել մուսուլմանական կառավարում»[3]: Ասվածից ակնհայտ երևում է, որ գնդապետ Լեսլին վարպետորեն թաքցնում է Կարսում իր վարած բանակցությունների իսկությունը: Երևանում լույս տեսնող «Ժողովուրդ» պարբերականը, 1919 թ. N 10-ում մերկացնելով

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 9, л. 29-30, ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 24-25.

[1] ՀԱԱ, ֆ. 277, g. 1, գ. 5, թ. 35-36, տե՛ս նաև "Вопросы истории", N1, 1994, л. 130, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 211:
[2] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 164, թ. 4, 10:
[3] Նույն տեղում, թ. 5, 11:

Լեսլիի գաղտնի գործունեությունը, նշել է, որ «Գեներալ Դենիկինի ներկայացուցիչ գնդապետ Լեսլին ...ինքնագլուխ բանակցությունների մեջ է մտել անգլիական գնդապետ Կ. Թեմպերլիի հետ և հակահայկական պրոպագանդա է վարել Երևանում, էջմիածնում և ձգտում է անգլիացիներին հակադրել մեզ հետ: Նրա նպատակն է Կարսի նահանգում ստեղծել ռուս-թաթարական վարչակազմ»[1]:

Գնալով մեծանում է հետաքրքրությունը գնդապետ Լեսլիի գործունեության նկատմամբ: Հունվարի վերջին ժողովրդական կուսակցության ֆրակցիան դիմել է Հայաստանի խորհրդի նախագահությանը՝ հարցում անելու արտաքին գործերի և զինվորական նախարարներին, թե հայտնի՞ է արդյոք իրենց, որ «...Կամավորական բանակի ներկայացուցիչ գնդ. Լեսլին բացարձակ կերպով ագիտացիա է մղում հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետութեան դէմ և ճիշտ է արդեօք, որ գնդ. Լեսլին առնում է զինվորական մինիստրութիւնից 1000 ռուբլի ռոճիկ ամսական և եթե առնում է, ապա ինչ գումարներից»[2]: Հայաստանի խորհրդի 1919 թ. փետրվարի 11-ի նիստը անդրադարձավ այդ հարցին[3]:

Խորհրդի նիստում մի շարք խորհրդարանականներ ներկայացրին փաստեր Կարսի հարցում գնդապետ Լեսլիի հակահայկական գործունեության մասին: Քանի որ որոշ խորհրդարանականներ չգիտեին Լեսլիի ով լինելը, խորհրդում նրանց կողմից հնչեցին հետևյալ հարցապնդումները. «Գնդապետ Լեսլին որևէ վկայական ունի՞ Դենիկինի կամ Կամավորական բանակի շտաբի կողմից և եթէ ունի, այդ վկայականի մեջ ասա՞ծ է, որ նա քաղաքական հարցերի համար ուղարկում է Հայաստանի կառավարութեան մօտ»[4], «Ի՞նչ պաշտոն

[1] Նույն տեղում, թ. 6, 14:
[2] Նույն տեղում, թ. 17:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 120:
[4] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 133:

ունի Լեսլին»[1] և այլն: Այդ իրողությունը վկայում է այն մասին, որ հանրապետությունում որոշ պետական, հասարակական-քաղաքական կազմակերպություններ, կուսակցություններ և լրատվական միջոցներ լավ տեղեկացված չէին հայ-ռուսական հարաբերությունների մասին: ***Հարկ է նշել, որ կառավարությունը հասկանալի պատճառներով փորձում էր գաղտնի պահել Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների ընթացքը[2], որովհետև այն կարող էր շահարկումների առարկա դառնալ թե Վրաստանի ու Ադրբեջանի և թե անգլիական զինվորական հրամանատարության կողմից.***

Հայաստանի Խորհրդի նիստում արտաքին գործերի և զինվորական նախարարները խիստ զգուշավոր էին: Նրանք փորձում էին համոզել խորհրդարանականներին, որ գնդապետ Լեսլիի գործունեության մեջ վտանգավոր միտում չկա: Հայ ժողովրդական կուսակցության ֆրակցիայի հարցմանը ի պատասխան արտաքին գործերի նախարարը նշեց. «...Պիտի ասեմ, որ հարցման մեջ որոշակի ոչինչ չի ասուած, ինչպես և փաստ չկայ, որ հիմք ծառայի: Ես միայն մի դէպք գիտեմ, որի մասին գրաւոր դիմել եմ Լեսլիին և բացատրութիւն պահանջել: Այդ վերաբերում է Կարսին ...Նա այն միտքն է յայտնել, լավ կը լինէր թէ մի ռուս նահանգապետ լիներ Կարսի շրջանում, որը կարող կը լինէր զսպելու հայ-թաթարական լարուած յարաբերութիւնները: Այդ նահանգապետը համաձայն նրա առաջարկի պիտի ենթարկուի Հայաստանի կառավարութեանը: Ես նրա արածների մէջ դիտաւորիալ ոչինչ չեմ գտնում և յայտնում եմ, որ նա դէպի հայ ժողովուրդը որևէ չարակամութիւն չունի»[3]: Ս. Տիգրանյանի պատասխանից

[1] Նույն տեղում, թ. 132:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 203:
[3] Նույն տեղում, թ. 131:

պարզ երևում է, որ Հայաստանի Խորհրդում կրքեր չբորբոքելու համար նա փորձում է մեղմել գնդապետ Լեսլիի գործունեությունը Կարսում: Այնուհետև հարցի քննարկման ընթացքում եղան բազմաթիվ այլ հարցապնդումներ՝ ուղղված արտաքին գործերի և զինվորական նախարարներին՝ բացահայտելու ճշմարտությունը գնդապետ Լեսլիի ու նրա գործունեության մասին, թե այն արդյոք չի հակասում Հայաստանի Հանրապետության ու նրա անկախության շահերին: Նշված գերատեսչությունների ղեկավարներն իրենց պատասխաններում ցույց տվեցին, որ Կամավորական բանակի գնդապետը չի չարաշահել իր դիրքը և հակահայկական կոնկրետ գործունեություն չի ծավալել: Բոլոր դեպքերում Հայաստանի Հանրապետության Խորհրդում գնդապետ Լեսլիի գործունեության շուրջ ծավալված քննարկումները ցույց տվեցին, որ հանրապետությունն անդրդվելի է իր անկախությունը պահպանելու, տարածքային ամբողջությունը ապահովելու և Կարսի մարզը հայրենիքին վերադարձնելու հարցում:

1919 թ. հունվարի վերջերին Կարսի չարչրկված խնդրում նկատվեց բեկում հօգուտ Հայաստանի Հանրապետության: Նախ անգլիական զինվորական նահանգապետը՝ գնդապետ Կ. Թեմպերլին, համոզվեց, որ շտապել է՝ Կարսը հանձնելով թուրքերին: Նրան հայտնի դարձավ, որ Մեծ Բրիտանիային «վստահելի» մահմեդականները, թուրքական 12-րդ բանակի հրամանատարությունը և «Շուրան», համագործակցելով Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, ձգտում են մարզում ***ռուսական իշխանություն հաստատել***: Մի հանգամանք, որն իրապես հակասում էր Մեծ Բրիտանիայի հակառուսական քաղաքականությանն Անդրկովկասում: Այնուհետև թուրքերն այլևս չէին ենթարկվում բրիտանական զինվորական նահանգապետին, չէին կատարում նրա կարգադրությունները: Հասկանալի է,

թե ինչու բրիտանական զինվորական հրամանատարությունը սկսեց աստիճանաբար փոխել իր վերաբերմունքը «հավատարիմ» մահմեդականների նկատմամբ:

Կարևոր է նշել, որ հարցի լուծումն արագացվեց Ֆրանսիայի միջամտությամբ: Որպես համաձայնության պետություններից մեկը՝ Ֆրանսիան հետևում էր դեպքերի ընթացքին: Ինչպես արդեն նշել ենք, Կարսում անգլիական զինվորական հրամանատարության հակահայկական գործելակերպի առնչությամբ Ֆրանսիայի ներկայացուցիչն արտահայտել էր իր դժգոհությունը: Հունվարի 26-ին Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելությունը գնդապետ Կ. Թեմպերլիին ներկայացրեց նոտա՝ բավական խիստ տոնով. «Ղարսում մենք միայն թաթարական հարցի ծայրն ենք տեսնում, որ ձգվում է Բաքվից մինչև Բաթում, անցնելով Թավրիզից, Երևանի և Ղարսի հարավով: Պետք է Թիֆլիզում մի ընդհանուր քաղաքականություն մշակվի, որպեսզի ընդհանուր միջոցներ ձեռք առնվեն և նույնանման լինեն»[1]: Այնուհետև պահանջվում է շտապ միջոցներ ձեռք առնել: Դաշնակիցների բարձր հրամանատարությունը զորացրված թուրք սպաներին պետք է վտարի թաթարների մոտից, վերացնի թրքական պրոպագանդիստներին, էրզրումում կենտրոնացած 9-րդ բանակի քանակը պակասեցնի: Այդ բանակը, որ լրացվել էր Ելիզավետպոլի բանակի մնացորդներով, սպառնալիք էր Հայաստանի Հանրապետության համար, բացի դրանից՝ այն ազգայնականների ու բաշիբոզուկների օջախ էր՝ ուղղված հայերի դեմ[2]: Նոտայում պահանջվում էր հարցը քննարկել Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ: Երևանին սպառնացող թաթարական ու քրդական շարժման առաջն առնելու համար թաթարների հետ խիստ վարվել և նրանց

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 88 a-88 r:
[2] Տես նույն տեղը:

հետ շփվել միայն հրամաններ արձակելիս[1]: Թաթարները Կովկասի թուրքերն էին, որոնք, թուրքական պետության ուժերի հետ համագործակցած, վարում էին հակահայկական քաղաքականություն, ինչը չէր վրիպել ֆրանսիացիների աչքից: Ինչպես նկատում ենք, ֆրանսիական նոտան գրվել է իրադրության խոր ու համակողմանի ուսումնասիրության հիման վրա, արտահայտում է Մուդրոսի դաշնագրի ոգին ու պահանջները. դրսևորում է օբյեկտիվ մոտեցում խնդրի լուծման հարցում և արտահայտում է հայության շահերը: Ֆրանսիայի նոտայի և այլ գործոնների ազդեցությամբ տարածաշրջանում հետզհետե փոխվում էին անգլիական զինվորական հրամանատարության թուրքամետ հակումները: Անգլո-թուրքական հարաբերությունների սրման հետևանքով փոխվում էր նաև Մեծ Բրիտանիայի մարտավարությունը առհասարակ մահմեդականության նկատմամբ: 1919 թ. ապրիլի 24-ին Փարիզից Ա. Ահարոնյանը Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին ուղղած նամակում ասում է, որ Կարսի մասին «Իմ ունեցած տեղեկությունների հիման վրա անմիջապես դիմեցի անգլիական պատվիրակությանը: Նրանց խուսափողական, հաճախ անորոշ պատասխաններից ես նկատում եմ, որ Ձեր մտածումը ճիշտ է – անգլիացիների Կովկասում ցուցադրած թուլությունը, Կովկասում թաթարներին սիրաշահելը արդյունք է այն ընդհանուր և օրավուր աճող հուզումին, որ տիրում է այսօր համայն մուսուլման արևելքում և մասնավորապես Հնդկաստանում ու Եգիպտոսում: Ամբողջ Եգիպտոսը բացարձակ ապստամբության մեջ է ընդդեմ բրիտանական իշխանության»[2]:

Մարտի վերջերին իրավիճակը կտրուկ փոխվեց. առժամանակ անհետացան անգլիացիների թուրքամետ հակումները[1]: Փոխվեց նաև բրիտանական զինվորական հրամանատարության մարտավարությունը Կարսի մարզի նկատմամբ: Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանը 1919 թ. մայիսի 6-ին Ա. Ահարոնյանին ուղղած N1555 նամակ-հրահանգում գրում է. «Վերջին ապրիլ ամսի ընթացքում Անգլիացիների քաղաքականությունը որոշ կերպով փոխվեցավ դեպի Ղարսի և Նախիջևանի խնդիրները. ի՞նչով բացատրել այդ փոփոխությունը: Բրիտանական հրամանատարությունը զգա՞ց որ սխալ է Կովկասում իր վարած քաղաքականությունը, թէ տեղի տալով բարձրից եկած հրամաններին՝ փոխեց իր տակտիկան. մինչև այժմ այս հարցը մեզ համար պարզ չէ, բայց կարծում ենք, որ վերջինը ավելի հավանական է. թերևս այս խնդրում որոշ կերպով ազդեց նաև թուրքերի ունեցած վերաբերմունքը Անգլիացիների հանդեպ, Ղարսի Թուրքական Շուրան /կառավարությունը/ սկսել էր արհամարհել Բրիտանական հրամանատարության կարգադրությունները, սերտ հարաբերություն էր պահում օսմանյան ագենտների հետ և նրանց ցուցմունքներով շարժվում: Անգլիացիք[2] ստիպվեցան կտրուկ միջոցների դիմել. ձերբակալեցին Շուրայի բոլոր անդամներին և ուղարկեցին Թիֆլիս[3]: Սրանից հետո էր, որ նրանք համաձայնվեցին Ղարսի շրջանը հանձնել հայերին, ապրիլի 23-ին մեր զօրքը խաղաղ կերպով մտավ Ղարս, և հայ ադմինիստրացիան հաջորդ օրը հետևեց զորքին»[4]: Այնուհետև Ա. Խատիսյանը շարունակում է. «Անգլիացիք թէև հանձնել են մեզ Ղարսը, բայց

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 425, ց. 2, գ. 55, թ. 1:

[1] Տե՛ս "Вопросы истории", N1, 1994, л. 130, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 212:
[2] Կարսի անգլիական զինվորական նահանգապետ գնդապետ Կ. Թեմպերլիին փոխարինեց գեներալ Աստերը:
[3] Ձերբակալվածների մեջ էին «Շուրայի» նախագահ Իբրահիմ բեյը և ներքին գործերի, ռազմական, պարենավորման և փոստ-հեռագրի նախարարները: Նրանք ուղարկվեցին Թիֆլիս և աքսորվեցին Կոստանդնուպոլիս և ապա Մալթա կղզի:
[4] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 131, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 222, ց. 2, գ. 55, թ. 1:

դեռ բոլորովին ձեռք չենք քաշում դրանից. հանձնումից վերջը անոնք սկսել են դուրս տանել բերդից մեծ քանակությամբ ռազմամթերք, երկաթուղային և ավտոմոբիլային սարքեր, բամբակ և այլն»[1]: «Հարավ-արևմտյան կառավարությունը» վերացնելուց հետո իշխանությունը անցնում է նահանգապետին ու նրա ձևավորած խառը ազգային խորհրդին: Խորհուրդը գործում է միայն երեք շաբաթ: Օգտվելով այդ իրավիճակից՝ վրացական զորքերը մտնում են «հանրապետության» հյուսիս և գրավում են Ախալցխան ու Արդահանը, բայց անգլիացիների պահանջով ետ են քաշվում[2]: Հայկական զորքերը անգլիացիների համաձայնությամբ զբաղեցնում են ողջ Կարսի մարզը, որը մտնում է Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, և Կարսում նշանակվում է հայ նահանգապետ: Ա. Խատիսյանը 1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի խորհրդում հայտարարեց՝ Կարսի մարզը արդեն մեր ձեռքումն է: Մինչև հունիսի 3-ը Կարս է վերադարձել շուրջ 300 հազար գաղթական[3]:

Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետախուզական բաժնի պետը շտապեց հաղորդել գեներալ Ա. Դենիկինին, որ «...վերջերս անգլիացիները հայերին են հանձնել Կարս քաղաքը և համանուն մարզը (նախկին «Հարավ-արևմտյան կառավարությունը»)»[4]: Կարսի խնդրում անհաջողություն կրելուց հետո Կամավորական բանակը փորձեց Փարիզում ռուսական դեսպանության միջամտությամբ լուծել ռուս գաղթականության վերադարձի հարցը: Այդ նպատակով մայիսի 18-ին Փարիզից Լոնդոն մեկնեց գեներալ Դ. Սազոնովը՝ անգլիական կառավարությանը խնդրելու.

[1] Նույն տեղը:
[2] Տե՛ս "Вопросы истории", N1, 1994, л. 130, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 212:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, գ. 291, մաս III, թ. 461, 88, «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Երևան, 7 հունիսի 1919 թ.:
[4] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 3.

«1) Ռուս փախստականների վերադարձը (Կարսի մարզ- Գ.Պ.), ...4) Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությունը Բաթումի և Կարսի խորհուրդներում»[1]: Կարս վերադարձան շուրջ 9 հազար ռուս գաղթականներ՝ մոլականներ, որոնք դժգոհ էին մարզում հայկական իշխանություն հաստատվելուց: «...Մալոկանները,- գրում է Վահէ Արծրունին,- հոգեպես բացասական և անհաշտ տարրեր էին՝ իրենց սրտի խորերուն անտրամադիր հաշտվելու Հայաստանի վերապետության գաղափարի հետ: Յիշեալ տարրերուն շրջանները կը ներկայացնէին ամենապատրաստի հողեր՝ բոլոր հակահայ պրոպականտին: Հայաստանի կառավարության փորձերը՝ իրականացնելու փոխադարձ վստահություն, անցան ապարդյուն»[2]: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը 1919 թ. օգոստոսի 28-ին հանրապետության ներքին գործերի նախարարին ուղղած գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է. «Այդ նահանգը (Կարսի- Գ.Պ.) մեր ձեռքը անցնելուց հետո, այդ ռուսները, բնականաբար, կորցրեցին իրանց մեծաշնորհ դրությունը և կառավարչական այդ ձևը: Նոքա միանգամայն առանձնացան մեզանից կապեր ստեղծելով միևնույն ժամանակ թուրքերի հետ, զրպարտիչ գանգատներ են ուղղում Դենիկինի բանակին: Նոքա պատգամավորություն են ուղարկել Դենիկինի մոտ հարցնելու, թե ինչ դիրք պետք է բռնեն նոքա դեպի մեր կառավարությունը և թե ինչ քաղաքական պրեսպեկտիվ կարող են սպասել: Իսկ ռուս վերադարձող գաղթականները բերում են իրանց հետ մեծամասնական վարակիչ սերմեր և արդեն սկսել են այդ պրոպագանդը թուրքերի և քրդերի մեջ, տարածելով կառավարությանը անհնազանդվելու և անարխիկ մտքեր»[3]:

Այսպիսով, արխիվային վավերագրերի և նյութերի

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 97, թ. 104:
[2] ***Արծրունի Վահէ***, Տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, էջ 28-29:
[3] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 162, թ. 105:

ուսումնասիրությունից հանգում ենք այն համոզման, որ հայ-ռուսական հարաբերությունների առկայությունը իր որոշակի նշանակությունն ունեցավ Կարսի մարզի հարցում: Այդ հանգամանքը շահարկեցին թե անգլիական զինվորական հրամանատարությունը և թե Հայաստանի Հանրապետության հարևաններ Վրաստանն ու Ադրբեջանը: Այդ խնդրում որոշակի բացասական հետևանք ունեցավ նաև մահմեդականության և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի համագործակցությունը Կարսի մարզում ռուսական իշխանություն հաստատելու գործում:

Ի վերջո, մի շարք դրամատիկ իրադարձություններից հետո ավարտվեց պայքարը Կարսի մարզի շուրջը, և այն վերադարձվեց տիրոջը՝ Հայաստանի Հանրապետությանը: Իսկ թե ինչու վերջինս չկարողացավ պահպանել այն և որոշ ժամանակ հետո նորից կորցրեց, դա արդեն քննության այլ հարց է:

7. Միացյալ Հայաստանի անկախության հռչակագիրը. Ռուսաստանի վերաբերմունքը

Ինչպես նշել ենք, 1918 թ. ապրիլին Թուրքիայի պահանջով Անդրկովկասն անջատեցին Ռուսաստանից, իսկ մայիսի վերջին ձևավորեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ հանրապետությունները: Ենթադրվում էր, որ նորաստեղծ հանրապետությունները պետք է ընդունեին անկախության հռչակագրեր: Վրաստանն ու Ադրբեջանն անմիջապես հայտարարեցին իրենց անկախությունը: Սակայն Հայաստանը ձգձգում էր անկախության հռչակագրի ընդունումը: Այդ հանգամանքը տեղիք տվեց կասկածների, թե Հայաստանը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, չի ուզում կտրվել Ռուսաստանից: Սակայն իրողությունն այլ էր: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի ձգձգումը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, երկրում ստեղծված ներքին ու արտաքին քաղաքական բարդ դրությամբ: 1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսի Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդի նիստում երկար և բուռն քննարկումներից հետո որոշվեց թուրքական վերջնագիրն ընդունել և հաշտության պայմանագիր կնքելու նպատակով Բաթում ուղարկել նոր պատվիրակություն՝ Ա. Խատիսյանին (պատվիրակության ղեկավար), Հ. Քաջազնունուն և Մ. Պապաջանյանին: Հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, պատվիրակությունը մեկնեց Բաթում[1]: Թիֆլիսում գործող Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը մայիսի 30-ին հայտարարեց. ***«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչա-***

[1] Տե՛ս ***Զոհրաբյան Է.***, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., էջ 100, տե՛ս նաև ***Ավետիսյան Հ.***, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 246-247:

կումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային Խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Դժվար չէ նկատել, որ այս հայտարարության մեջ բացակայում են «Հայաստան» և «անկախություն» բառերը: Հայաստանի անկախությունը պարտադրված անկախություն էր: Պատահական չէր, որ Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդի այդ հայտարարությունը հայ ժողովրդի մեջ ոչ մի արձագանք ու ոգևորություն առաջ չբերեց[2]: Այդ առնչությամբ Ա. Զամալյանը գրում է. «Կորցրած իր երկրի լաւագոյն մասերը, հալածական անագորոյն թշնամուց, լքւած իր դաշնակիցներից, որոնք ընդհանուր պատերազմի ամենատագնապալից վայրկեանին ձգեցին նրան մենակ և անօգնական ռազմի դաշտում՝ այդ ժողովուրդը իր ֆիզիկական գոյութիւնը պահպանելու հոգսով այնքան էր կլանված, որ չնկատեց անգամ, թէ ինչ կատարուեց իր հետ մայիսի 28-ի գիշերը...»[3]: Երկրի անկախացումից հետո Արևելյան Հայաստան գրեթե չէր մնացել: Անջատված էին Կարսի մարզը, Ախալքալակը, Սուրմալուն, Շարուր-Նախիջևանը, Գանձակ-Ղարաբաղը, Երևանի ու էջմիածնի գավառների մեծ մասը, հայկական Բորչալուն, Փամբակը, Ալեքսանդրապոլը, Դարալագյազի մեծ մասը և Զանգեզուրը: Հաղորդակցության բոլոր ճանապարհները փակ-

[1] «Զանգ» լրագիր, Երևան, 7 հունիս, 1919 թ.:
[2] Տես *Վրացյան Ս.*, Խարխափումներ Յ. Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս» գրքի առթիվ, էջ 64:
[3] «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, 1928, N 5, մայիս, էջ 132:

ված էին թուրք-թաթարական խմբավորումների կողմից, և երկիրն ամբողջապես կտրված էր արտաքին աշխարհից[1]:

Որպես կանոն, ամեն մի նորաստեղծ պետություն ձգտում է անմիջապես դուրս գալ միջազգային ասպարեզ, կապեր ու դիվանագիտական հարաբերություններ հաստատել տարբեր պետությունների հետ: Ճիշտ է, հուլիսի 13-ին Հայաստանի կառավարությունը (Ավ. Ահարոնյանի, Հովհ. Քաջազնունու, Ա. Խատիսյանի ստորագրությամբ) Թիֆլիսից դիմեց Կ. Պոլսում Պարսկաստանի, Շվեդիայի, Իսպանիայի, Դանիայի, Հոլանդիայի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Բուլղարիայի դեսպանությունների ներկայացուցիչներին[2] և խնդրեց իրենց կառավարություններին հաղորդել «Հայկական դեմոկրատական հանրապետության հռչակման մասին», սակայն դա խնդրի լուծում չէր, քանի որ այդ հարցում Հայաստանի կառավարության առջև ծառացած էին բազում խոչընդոտներ: 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում Թուրքիայի հետ ստորագրված պարտավորագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավոր էր պատերազմի ողջ ընթացքում դիվանագիտական հարաբերություններ չպահպանել Օսմանյան կայսրության հետ պատերազմական վիճակում գտնվող երկրների հետ: Եվ, բնականաբար, Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր կարող այդ խնդրով դիմել, պաշտոնական հայտարարություն անել Համածայնության պետություններին: Ահա թե ինչու այդ և այլ հանգամանքներից դրդված՝ ***1918 թ. օգոստոսի 1-ին Երևանում գումարված Հայաստան Հանրապետության առաջին խորհուրդը (խորհրդարանը) նպատակահարմար չհամարեց Հայաստանը պաշտոնապես հռչակել անկախ հանրապե-***

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 1a, 2 a, 5 a, 7 a, 9 a:

տություն: Նման քայլի չդիմելը ուներ նաև այլ լուրջ դրդապատճառ: Բանն այն է, որ հուսալքության ու անելանելության մթնոլորտ էր համակել հանրապետության ղեկավարությանը: *Դեռ որոշված չէին Հայաստանի սահմանները:* Ճիշտ է, 1918 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի խորհուրդը և կառավարությունը դռնփակ նիստում Հայաստանի Հանրապետության Փարիզ մեկնող պատվիրակությանը հրահանգել էին խաղաղության վեհաժողովին ներկայացնել ու պաշտպանել «Միացյալ և Անկախ Հայաստանի»[1] պահանջները, սակայն նույն խորհուրդը մինչև 1919 թ. առաջին ամիսները լռության մատնեց անկախության պաշտոնական հռչակումը: Անշուշտ դա ունեցավ անցանկալի հետևանքներ Հայաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության համար: Այդ հանգամանքը խոչընդոտ էր նաև մեծ տերությունների և Փարիզի խաղաղության վեհաժողովի առջև իրենց պահանջները ներկայացնելու առումով: Անկախության հռչակագրի պաշտոնապես ձգձգումը պայմանավորված էր նաև սուբյեկտիվ գործոնով՝ Հայաստանի իշխանությունների դրսևորած անորոշ, դանդաղկոտ ու անվճռական կեցվածքով: Բացի այդ, օգտվելով այդ հանգամանքից՝ երկրի մահմեդական տարրերը առիթը բաց չէին թողնում լայն քարոզչություն ծավալելու և Հայաստանի անկախության դեմ շարունակ խռովություններ կազմակերպելու: 1919 թ. առաջին ամիսներին Կարսում, Վեդիում, Շարուրում, Նախիջևանում, Զանգիբասարում ու Սուրմալուում Թուրքիայի և Ադրբեջանի հրահանգներով մահմեդական տարրերը մերժեցին ճանաչել Հայաստանի Հանրապետության իշխանությունը և հայտարարեցին իրենց «անկախության» մասին: Քսանից ավելի մանր ու խոշոր մահմեդական «անկախ իշխանություններ», օգտագործելով հնարավոր բոլոր միջոցները, փորձում էին ներսից քայքայել Հայաստանի Հանրապետությունը[1]: Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին սերտորեն համագործակցում էր Հայաստանի Հանրապետության մահմեդաբնակ շրջանների հետ և հակահայկական ակտիվ գործունեություն էր ծավալում[2]:

[1] Նույն տեղում, գ. 193, թ. 11:

Որոշակի դժվարություն էր ստեղծվել նաև արևմտահայության ներգաղթի կազմակերպման գործում: Համաձայնության պետությունների հետ արևմտահայերի ներգաղթի խնդիրների շուրջ բանակցելիս միշտ հարց էր ծագում, թե ինչ իրավունքով է Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջնորդում արևմտահայերի համար, արդյոք վերջինս վայելում է փախստականների վստահությունը: Նման մոտեցումն անհիմն չէր: Հռչակագրի պաշտոնական հրապարակման ձգձգումը հայության շրջանում առաջ էր բերել տարակարծություններ: Ակնհայտ էր անկախության հարցում արևելահայերի և արևմտահայերի վերաբերմունքի տարբերությունը, որում, անշուշտ, էական դեր էր խաղում *ռուսական գործոնը:* Հայաստանի Հանրապետությունում ապրող արևմտահայերը չէին ցանկանում առնչվել Ռուսաստանի հետ: Եվ քանի որ անկախության հռչակագիրը դեռ չէր հրապարակվել, արևմտահայերը մտավախություն ունեին, որ արևելահայերը չեն ձգտում բաժանվել Ռուսաստանից, և այդ պատճառով էլ իրենք դեմ էին բնակվելու Արևելյան Հայաստանում, եթե այն անկախ պետություն չի հռչակվելու[3]: Հայաստանի Հանրապետությունում արևմտահայ գաղթականությունը իրեն խորթացած էր զգում և գրեթե

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1963 հուլիս, էջ 42:
[2] Մանրամասն տե՛ս *Զոհրաբյան Է.* Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի դաշնակիցները (1918 թ. դեկտ.-1920 թ. ապրիլ), էջ 112-132:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 31, թ. 7:

չէր մասնակցում երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Նրանք կարծում էին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը խտրական վերաբերմունք է դրսևորում արևմտահայ գաղթականության նկատմամբ: Եվ պատահական չէր, որ արևմտահայերը խուսափում էին զինվորագրվելուց, ինչը լուրջ խոչընդոտ էր ուժեղ, միացյալ բանակ ստեղծելու համար[1]:

1919 թ. փետրվարի 4-13-ը Երևանում հրավիրվեց Արևմտահայերի 2-րդ համագումարը, որի օրակարգը հիմնականում նվիրված էր արևմտահայ գաղթականության հետագա խնդիրներին: Համագումարը ընդունեց արևելահայ և արևմտահայ հատվածների միավորմամբ մեկ միասնական պետություն ստեղծելու հայտարարագիր: Ընդունվեց քաղաքական բանաձև *ազատ և միացյալ Հայաստան* ստեղծելու մասին[2] և արևմտահայ երկրորդ համագումարում հանդիսավոր կերպով հայտարարվեց, որ Հայաստանը ճանաչվում է միացյալ և անկախ: Սակայն ընդունված բանաձևը իրավական հիմք չուներ: Անկախության իրողության պաշտոնական հռչակման հապաղումն արևմտահայերի կողմից որակվեց իբրև նորից Ռուսաստանին միանալու միտում: Այս հանգամանքը հայության երկու հատվածների միջև սեպ խրելու, միմյանցից խորթանալու նախադրյալներ էր ստեղծում, որը այսպիսի ճակատագրական պահի անթույլատրելի էր[3]: 1919 թ. ապրիլի 24-ին Ա. Ահարոնյանը Փարիզից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում տեղեկացնում էր, որ Պողոս Նուբար Փաշան և նրա շրջապատը բազմիցս ասել են, որ վախենում են. «...*թե թուրքահայությունը կուլ կերթա ռուսահայերին: Քանի որ վերջիններս ավելի ուժեղ են թվով, տնտեսապես և իմացականությամբ, «վախի» երկրորդ պատճառն այն է, թէ մենք ամբողջապես ընկերավարականներ ենք, թէ դաշնակցությունը, որ իրենց կարծիքով իշխում է, և թէ մեր միակուսակցությունը, ու վերջապես քաղաքական վախ, թէ ռուսները վերջիվերջո կը զորանան կը գան կովկասյան Հայաստանը տիրելու, հետևապես լավ չէ Թուրքահայաստանը գնա նրան միանալու, այլ լավ է նախ կազմակերպել թուրքահայ պետություն, որին և կգա միանալու իր հոժար կամքով կովկասահայ հանրապետությունը*» (ընդգծումը մերն է- Գ.Պ.)[1]: Արևելահայերը, պահելով իրենց անկախությունը, չէին կարող հրաժարվել Ռուսաստանի հովանավորչությունից, նրա տնտեսական, քաղաքական ու ռազմական օգնությունից, որը իրենց ապահովության երաշխիք էին համարում: Իսկ արևմտահայերի անհանդուրժողականությունն այս հարցում ինչ-որ չափով կարելի էր հասկանալ: Նրանք, կորցնելով հայրենիքը և գաղթելով Արևելյան Հայաստան, հանրապետությունը կոչում էին սոսկ «Արարատյան»՝ գտնելով, որ հայրենիքի բուն օրրանը Արևմտյան Հայաստանի տարածքն է: Արևմտահայ գործիչների մեծ մասը ունեին արևմտամետ կողմնորոշում, որոնց վերջնական նպատակը միացյալ, անկախ Հայաստանի գաղափարի իրականացումն էր:

Եվ, վերջապես, անկախության հռչակագրի ընդունման ձգձգումը Համաձայնության պետությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարևանների շրջանում ձևավորել էր այն կարծիքը, թե «հայերը կողմնակից չեն անկախության»[2]: Այդ կարծիքը առանձնապես լայն տարածում էր ստացել և շարունակում էր պահպանվել ռուսական

[1] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Երևան, 9 հունիսի, 1919:
[2] Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 237, թ. 116-126:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 119, թ. 77, ֆ. 200, g. 1, գ. 35, թ. 146, նաև՝ «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 19 հոկտեմբեր 1919, էջ 485:

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս II, թ. 434:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 119, թ. 76, ֆ. 200, g. 1, գ. 35, թ. 146, *Վրացեան Ս.*, Խարխափումներ Յ. Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս» գրքի առթիվ, էջ 64:

շրջաններում և մանավանդ Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումներում: Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» 1919 թ. ապրիլի 30-ի «Քաղաքական տեսության» մեջ ասված էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակում է զսպվածություն և անորոշություն դրսևորել թե՛ Ռուսաստանի հարավի և թե՛ իր անկախության նկատմամբ[1]: Այդ վիճակը, անշուշտ, ձեռնտու էր Ռուսաստանի հարավին, որը շարունակում էր Հայաստանի Հանրապետությունը դիտել իբրև ռուսական նահանգ, իսկ հայկական բանակը՝ Անդրկովկասում Կամավորական բանակի պահեստային ուժ: Մեծ Բրիտանիան և Վրաստանն ու Ադրբեջանը Հայաստանի Հանրապետության կառավարությանը մեղադրում էին «ռուսաֆիլության» մեջ՝ գտնելով, որ հայերի աչքը միշտ դեպի հյուսիս է, չեն ուզում բաժանվել Ռուսաստանից, չեն ուզում անկախ պետություն ստեղծել և դրանով «վտանգավոր» են անկախության ձգտող կովկասյան ժողովուրդների համար[2]: Այդ կապակցությամբ 1919 թ. մայիսի 28-ին արտասահմանյան դիվանագիտական իր ներկայացուցիչներին Հայաստանի Հանրապետության կառավարության շրջաբերական-բացատրագրում ասված է, որ եթե այդ կարծիքն «...այստեղից տարածուեր դեպի դիվանագիտական բարձր շրջանները, կարող էր բացասական վերաբերմունք առաջացնել դեպի մեր ազգային իդեալը, կամ առնվազն բաւական դժուարացներ նրա իրացումը»[3]: Եվ իրոք, այդ պատմական ակտի ընդունման ձգձգումը բավական դժվարացրել էր Հայաստանի Հանրապետության կառավարության դրությունը: 1919 թ. ապրիլի 10-ին Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության խորհրդական Շ. Արզումանյանը Ա.Խատիսյանին հղած նամակում խնդրում էր հրապարակել *միացյալ, անկախ Հայաստանի* հռչակագիրը, որովհետև այն միջազգային իրավունքի տեսանկյունից խիստ կարևոր է: Բացի այդ, նա հայտնում էր, որ Փարիզի խաղաղության վեհաժողովի մարտի վերջի և ապրիլի սկզբի նիստում նկատվում էր բոլշևիկների իշխանությունը ճանաչելու ձգտում: Շ. Արզումանյանը նամակը եզրափակում է զգուշացումով, որ ***թեև Ռուսաստանը քաղաքացիական պատերազմի մեջ է, և ով էլ հաղթի՝ Վ. Լենինը, գեներալ Ա. Դենիկինը կամ ծովակալ Ա. Կոլչակը, միևնույնն է, Ռուսաստանը վերամիավորվելու է: Հայաստանի Հանրապետության համար ընդունելի էր ամեն մի Ռուսաստան, որը կճանաչեր և կհարգեր Հայաստանի անկախությունը***: Հետևաբար, Հայկական հարցը պետք է հանել համառուսական կաթսայից, քանի որ Հայաստանը՝ որպես անկախ պետություն, բաժանվել է Ռուսաստանից և բռնում է ընդհանուր հայրենիքի միավորման ճանապարհը, ուստի անհրաժեշտ է ձևավորել հայկական իշխանություն և հրապարակել միացյալ, անկախ Հայաստանի հռչակագիրը[1]:

Այդ ամենից հետո անցանկալի հետևանքները վերացնելու և ռուսական քաղաքական գործոնի երկյուղը փարատելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհրաժեշտ համարեց «***Խզել միանգամից, ընդմիշտ հայ ժողովրդի կապը Ռուսաստանից, որպես զի նա փոխանակ Ռուսաստանի գալու մասին մտածելու, մտածէ իր անկախութեան մասին»*** [2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Պողոս Նուբար Փաշայի համաձայնությամբ Ա. Ահարոնյանը 1919 թ. փետրվարի 26-ին հինգ մեծ պետությունների (Ֆրանսիա,

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 19, л. 28:
[2] Տե՛ս ***Վրացեան Ս.***, Խարխափումներ Յ. Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս» գրքի առթիվ, էջ 64:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 119, թ. 76, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 146:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 31, թ. 8:
[2] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 119, թ. 77, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 146: «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 19 հոկտեմբեր 1919, էջ 485:

Անգլիա, ԱՄՆ, Իտալիա, Ճապոնիա) ներկայացուցիչներին և խաղաղության վեհաժողովի նախագահ Ժ. Կլեմանսոյին գրավոր խնդրել էր հետևյալը.

«1. Օրինավորապես ճանաչել հանրապետական Հայաստանի անկախությունը որպես մի փաստ, որ արդեն մոտ մի տարի գոյություն ունի:

2. ...*Ռուսական երկրի ամբողջության – intigre - դոգմը չի կարող ներկա դեպքում արգելք հանդիսանալ մեր անկախությանը.*

ա/ որովհետև արդեն ընդունված է Լեհաստանի անկախությունը և ճանաչված Ռումինիայի իրավունքը Բեսարաբիայի վրա.

բ/ Ռուսաստանը թողնելով մեն-մենակ մեր թույլ ուսերի վրա իր սկսած պատերազմը Կովկասյան ճակատում, լքելով մեզ թուրքերի կատաղությանը և որ գլխավորն է, Բրեստ-Լիտովսկի դաշնագրով զիջելով թուրքերին Կովկասյան Հայաստանի մի քանի գավառները՝ Կարս-Արդահան-Կաղզվան, պատճառ դառնալով, որ թուրքերը գրավեն և հիմնահատակ ավերեն մեր հիշյալ և նրանց սահմանակից հայ գավառները. ինքնին արդեն հրաժարվել է մեզնից՝ անկախ մեր կամքից և ինքնին *կամովին* խզել է Հայաստանին Ռուսաստանի հետ կապող բոլոր կապերը ընդմիշտ»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ռուսական հետախուզությունը շտապեց տեղեկացնել գեներալ Ա. Դենիկինին, թե Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է ընդհանրապես կապերը խզել Ռուսաստանի հարավի հետ[2]: Այդ կարևոր քայլը հաճությամբ չընդունվեց Ռուսաստանի հարավի կողմից և ինչ-որ չափով հանկարծակիի բերեց նրան:

Ի դեպ, Առաջին աշխարհամարտի ավարտից կարճ ժամանակ անց Հայաստանի Հանրապետության կառավարությունը դարձյալ ծայրահեղ զգուշավորություն դրսևորեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» նկատմամբ, որպեսզի խուսափի քաղաքական առճակատումներից: *Իսկ 1919 թ. մարտ-հուլիսին որոշակի հանգամանքների ու դրդապատճառների պատճառով նրա հետ Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական շփումները գրեթե սառեցվեցին:* Դա պայմանավորված էր Համաձայնության պետությունների՝ ի դեմս Մեծ Բրիտանիայի և նրա «դաշնակից» Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» միջև Անդրկովկասում առկա շահերի բախումով, անհամաձայնություններով և նրանց հակասական քաղաքականությամբ: Այդ հանգամանքն անցանկալի հետևանքներ ունեցավ Հայաստանի Հանրապետության համար: Մեծ Բրիտանիան ձգտում էր Ռուսաստանը դուրս մղել Անդրկովկասից, ուստի չէր հանդուրժում Հայաստանի Հանրապետության բարեկամական կապերը ռուսների հետ և ձգտում էր ամեն կերպ խզել դրանք:

Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ Հայաստանի Հանրապետության բարեկամությունը անվստահություն էր առաջացնում, հետևաբար բացասաբար անդրադառնում նաև Մեծ Բրիտանիայի վերաբերմունքի վրա երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական մի շարք հարցերի լուծման խնդրում: Հետևապես, բարդ ու անգամ անելանելի վիճակում հայտնված Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջվում էր աչալուրջ հետևել դեպքերի ընթացքին և դրսևորել քաղաքական ճկունություն: *Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության»*

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 152:
[2] Տես ГА РФ, ф. 446, оп. 1, д. 19, л. 29:

հետ պաշտոնական շփումների սառեցումը պայմանավորված էր նաև մեկ այլ կարևոր հանգամանքով: Ռուսաստանի հարավը շարունակում էր Հայաստանի Հանրապետությունը դիտել իբրև ռուսական նահանգ և գործադրում էր բոլոր ջանքերը՝ իրականացնելու «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը և ռուսական նախկին կայսրությունը վերականգնելու 1914 թ. սահմաններով: Ռուսաստանի հարավը թեև ցնցվում էր քաղաքական վայրիվերումներից, բայց չէր հրաժարվում Անդրկովկասից: Դա բխում էր ռուսական պետության արտաքին քաղաքականության տրամաբանությունից՝ անկախ «կարմիրներ-սպիտակներ» հակամարտությունից: Սակայն Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի հանրապետություններն անդրդվելի էին և համառորեն ամեն ջանք գործադրում էին՝ պահպանելու ձեռք բերած անկախությունը և դրա անձեռնմխելիությունը: Հենց սրանք էին այն դրդապատճառները, որոնք մղեցին Հայաստանի Հանրապետության կառավարությանը դիմելու Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ պաշտոնական կապերը խզելու վճռական քայլին: Սակայն կարևոր է նկատի ունենալ մի հանգամանք ևս: Հայաստանի Հանրապետության կառավարությունը այնքան էլ հակված չէր լրիվ խզելու հարաբերությունները Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ՝ նկատի ունենալով նրա կարևոր դերը երկրի անվտանգության և այլ հարցերում: Այդ քայլին նա գնաց քաղաքական իրադրության թելադրանքով: 1919 թ. մարտի 2-ին «Հատուկ խորհրդակցության» նախագահին ուղարկած գաղտնի զեկույց-նամակում Լեսլին նշում է, որ «Հայաստանի կառավարությունը վարում է երկակի քաղաքականություն: Ազգայնամոլ կառավարության մեծամասնությունը հայտարարում է, որ մեր (ռուսների- Գ.Պ.) կողմն են միայն այն պատճառով, որ 1) հայերը չունեն տեխնիկներ, հեռագրողներ, մեքենավարներ, ...արհեստավարժ մարդիկ և աշխատանքների մեջ են ներգրավում ռուսների, քանի որ մյուս ազգություններին նրանք բոլորովին չեն վստահում, 2) երկրի աղետալի վիճակից ելնելով՝ նրանք (հիմնականում հաց ստանալու համար) դիմում են ամենքին»[1]: Այնուհետև Լեսլին հայտնում էր, որ, չնայած այդ ամենին, իրենց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում անհանդուրժողականությունը հասել է այն աստիճանի լարվածության, որ գնդապետ Բեյ-Մելքոնյանը (դաշնակցական) մասնավոր զրույցներից մեկում իրեն լրտես է անվանել[2]:

Բոլոր դեպքերում Ռուսաստանի հարավի հետ պաշտոնական կապերը խզելու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը կարևոր քայլ էր անկախության հռչակագրի ընդունման ուղղությամբ: Դրա համար արդեն ստեղծվել էին նպաստավոր պայմաններ ու շարժառիթներ: Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայաստանի ու Հայկական հարցի նկատմամբ որոշ դրական տրամադրություններ էին նկատվում, և Արևմտյան Հայաստանի ազատագրության, միացյալ, անկախ Հայաստանի ստեղծման հույս էր ծագում:

1919 թ. փետրվարի 12-ին Պողոս Նուբար Փաշան և Ա. Ահարոնյանը Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացրին մի հուշագիր, որով պահանջվում էր ստեղծել *միացյալ, անկախ Հայաստան* մեկ ամբողջական տարածքի վրա: Այդ տարածքի մեջ էր մտնելու Արևմտյան Հայաստանի յոթը նահանգները՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերտի, Սվազի և Տրապիզոնի մի մասը՝ դեպի ծով ելքի համար, Կովկասահայաստանը Արցախի հետ միասին և Կի-

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68.
[2] Տե՛ս նույն տեղը:

լիկիայի չորս սանջակները՝ Սև ծովից մինչև Միջերկրական[1]: Իսկ փետրվարի 26-ին Հայաստանի Հանրապետության և Արևմտահայ Ազգային պատվիրակությունը Տասի խորհրդի նիստին ներկայացրեց վերոհիշյալ տարածքի՝ Մեծ Հայաստանի քարտեզը:

Փետրվարի 12-ին Հայաստանի Հանրապետության և Արևմտահայ Ազգային պատվիրակությունը Փարիզի խաղաղության վեհաժողովին խնդրեցին նաև պետություններից մեկին տալ հատուկ մանդատ՝ անցման շրջանում Հայաստանին օժանդակելու համար[2]: Քանի որ խաղաղության վեհաժողվում Հայաստանի նկատմամբ հատկապես մեծ հետաքրքրություն էր դրսևորում ԱՄՆ-ը, հայկական պատվիրակությունները խնդրեցին միացյալ, անկախ և ազատ Հայաստանի հովանավորության մանդատը հանձնել ԱՄՆ-ին կամ էլ նոր կազմավորվող Ազգերի լիգային: Ապրիլի 17-ին Պողոս Նուբար Փաշային և Ա. Ահարոնյանին ընդունեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը և հայտնեց, «թե երբևէ Ամերիկան որևէ երկրի մանդատ ընդունելու լինի, դա կլինի անպատճառ Հայաստանը»[3]: Ա. Ահարոնյանը ապրիլի 24-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում խնդրում էր ***շտապ հրապարակել միացյալ, անկախ Հայաստանի հռչակագիրը, որով վերջ կտրվի երկու պատվիրակությունների դուալիզմին և հնարավորություն կստեղծի քաղաքական աշխարհի առջև ներկայանալ մեկ ճակատով***[4]: Վերջում Ա. Ահարոնյանը կարևոր էր համարում նշել, որ «Շուտով միջազգային հանձնարարություններ պետք կը լինի անել, պայմանագրեր ստորագրել՝ ֆինանսական ու տնտեսական, փոխառություն կնքել, մանդատ հանձն առնող պետության հետ հարաբերության մեջ մտնել, նույնիսկ մանդատի պայմանները քննության ենթարկել: Այս բոլորի համար անհրաժեշտ է *միացյալ Հայաստանի* միացյալ կառավարություն, որպեսզի կարողանա ջանա համայն հայության իբրև կազմակերպված պետություն գործել, այլապես մանդատատերը մեզ հետ կարող է վարվել իր ուզածի պես և մեր քաղաքական ազատությունն ու անկախությունը կը վտանգվի»[1]: Ինչպես երևում է նամակ-զեկուցագրից, հայկական պատվիրակությունը Հայաստանի երկու մասերի միավորման, մեկ միասնական պետություն ստեղծելու հնարավորության իրական հույսեր էր փայփայում: Մնում էր ապահովել նախատեսվող, սպասվելիք գործառույթների իրավական հիմքը՝ *միացյալ, անկախ Հայաստանի* հռչակագրի ընդունումը:

Այդ պատմական ակտի հռչակման համար ստեղծվել էր նաև մի կարևոր նպաստավոր պայման. հանրապետության տարածքներն ընդարձակվել էին: Մուդրոսի զինադադարի համաձայն՝ թուրքերը Անդրկովկասի գրաված տարածքներից հեռացան 1914 թ. սահմանները, և Հայաստանի «...անկախութեան գլխաւոր խոչընդոտը,-գրում է Ա. Ձամալյանը,- վերացաւ մեջտեղից»[2]: Մինչև ապրիլ-մայիս Հայաստանի Հանրապետությանը միացվեցին Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Սուրմալուն, Կաղզվանը, Շարուրը, Նախիջևանը, և վերադարձան տարբեր վայրեր ապաստանած հայ փախստականները[3]: Հայաստանի Հանրապետության պառլամենտի 1919 թ. օգոստոսի 5-ի նիստում վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանը հայտա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, մաս I, թ. 28:
[2] Տե՛ս նույն տեղը, թ. 68, «Աշխատավոր» լրագիր, 19 մարտի 1919 թ., Թիֆլիս:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 428, 459, գ. 35, թ. 118:
[4] Տե՛ս նույն տեղը, թ. 435:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 435:
[2] «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, 1928, N5, մայիս, էջ 132:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88:

ռարեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքը 40920 քառ. վերստ է, բացի նրա անբաժան մաս կազմող Զանգեզուրից, որը կազմում է 6742 քառ. վերստ[1]: Բոլոր վերամիավորված տարածքներում հաստատվեց հայկական վարչակարգ՝ իր զինական ուժով: Թուրքական վտանգից ազատագրված հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ վերականգնելու իր քայքայված տնտեսությունը. «...Ավերակների ու մոխիրների տակից առասպելական փյունիկի պես հարութիւն էր առնում Հայաստանը»[2],- գրում է Ա. Գուլխանդանյանը:

Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի անկախության հռչակագրի հրապարակմանը դրականորեն արձագանքեց Մեծ Բրիտանիան. Ինչպես արդեն նշել ենք, Մեծ Բրիտանիայի համար անընդունելի էր Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը, որի նպատակն էր նախկին ռուսական կայսրության տարածքների վերականգնումը 1914 թ. սահմաններով: Դրա համար էլ նա ձգտում էր խանգարել ռուսներին՝ Անդրկովկասը մեկուսացնելով Ռուսաստանի հարավից: Հասկանալի է, թե ինչու Մեծ Բրիտանիան դրականորեն արձագանքեց Հայաստանի անկախության հռչակագրի հրապարակմանը: Գեներալ Ա. Դենիկինը գրում է, որ Մեծ Բրիտանիայի «իրական քաղաքականության ձայնը» իրենց հայտնի դարձավ, երբ Լ. Զորջը 1919 թ. նոյեմբերի 17-ին համայնքների պալատում հայտարարեց. «Ծովակալ Կոլչակը և գեներալ Դենիկինը պայքարում են ոչ միայն բոլշևիզմի ոչնչացման, կարգ ու օրինականություն հաստատելու, այլև միացյալ Ռուսաստան ստեղծելու համար... ***Ես չպետք է ասեմ, թե համապատասխանում է արդյոք այդ նշանաբանը Մեծ Բրիտանիայի քաղաքականությանը...*** Մեր մեծ քաղաքական գործիչներից մեկը՝ լորդ Բիկոնսֆիլդը, հանձին հսկա ձնագնդի նման դեպի Պարսկաստան, Աֆղանստան և Հնդկաստան գլորվող մեծ, հզոր և կարող ***Ռուսաստանի՝ տեսնում էր ամենամեծ վտանգը Բրիտանական կայսրության համար»***[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ի դեպ, Լ. Զորջի զգուշացումը անհիմն չէր. գեներալ Ա. Դենիկինը և ծովակալ Ա. Կոլչակը միավորել էին իրենց ուժերը՝ կազմելով պայքարի միասնական ճակատ միացյալ Ռուսաստանի ստեղծման, 1914 թ. սահմանները վերականգնելու համար: 1919 թ. մայիսի 30-ին Եկատերինոդարում գեներալ Ա. Դենիկինը ստորագրեց N1457 հրամանը ծովակալ Ա. Կոլչակին ենթարկվելու մասին: Հրամանում ասված է, որ Ռուսաստանի փրկությունը միակ Գերագույն իշխանությունն է և դրանից անբաժան միակ գերագույն հրամանատարությունը. «Ելակետ ունենալով այդ խորին համոզումը, իմ կյանքը նվիրելով ջերմորեն սիրած հայրենիքի ծառայությանը և ամեն բանից բարձր դասելով նրա երջանկությունը՝ ես ենթարկվում եմ Կոլչակին՝ որպես ռուսական բանակների գերագույն հրամանատարի»[2]: Հուլիսի 24-ին ծովակալ Ա. Կոլչակի հրամանով գեներալ Ա. Դենիկինը նշանակվեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ[3]:

Մեծ Բրիտանիան արտաքուստ արտահայտում էր իր «դաշնակցային հավատարմությունը» Ռուսաստանի հարավի նկատմամբ՝ գեներալ Ա. Դենիկինին օգնելով բոլշևիկներին տապալելու համար, սակայն, միաժամանակ, պաշտպանում էր Անդրկովկասի անկախ հանրապետությունների գո-

[1] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր» լրագիր, 9 օգոստոսի 1919, Երևան:
[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1966, մարտ, N 3, էջ 74:

[1] Вопросы истории", N 2, 1994, л. 108, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 256.
[2] РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 167, л. 12.
[3] Տե՛ս РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 167, л. 17:

յությունը, որը հակասում էր Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի քաղաքական նպատակներին: *Իրականում Մեծ Բրիտանիան Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախ գոյությամբ ձգտում էր Ռուսաստանի հարավը վերջնականապես մեկուսացնել Անդրկովկասից.*

1919 թ. մարտի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարության խորհրդակցությանը մասնակցող գեներալ Վ. Թոմսոնը Համաձայնության պետությունների և Կամավորական բանակի փոխհարաբերություններին անդրադառնալիս հայտնել էր, *որ Ռուսաստանի հարավին օգնում են, քանզի նրան օգտագործում են բոլշևիզմի դեմ մղվող պայքարում, սակայն նրանց երբեք թույլ չեն տա, որ խանգարեն Անդրկովկասի հանրապետությունների անկախությանը, որն իրենք պաշտպանում են.*[1] Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչու Մեծ Բրիտանիան չէր ճանաչում Անդրկովկասի հանրապետությունների անկախությունը: Անգլիական դիվանագիտությունը և՛ նալին էր խփում, և՛ մեխին՝ հայտարարելով իր զորակցությունը Անդրկովկասի հանրապետությունների անկախությանը, սակայն միաժամանակ չէր ուզում բացահայտորեն խախտել դաշնակցային «հավատարմությունը» գեներալ Ա. Դենիկինի նկատմամբ:

Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի անկախության նկատմամբ Անգլիայի դրական վերաբերմունքի մասին Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» 1919 թ. ապրիլ-մայիսի «քաղաքական տեսության» մեջ ասվում է, որ անգլիացիների քաղաքականությունը միտված է անկախություն պետական նոր կազմավորումների ձգտումների իրականացմանը և Ռուսաստանի հարավից

[1] Տե՛ս ֆ. 223, g. 1, գ. 76, թ. 25, ֆ. 199, g. 1, գ. 23, մաս I, թ. 143, 145, գ. 32, թ. 176, ֆ. 200, g. 1, գ. 243, թ. 73, ֆ. 201, g. 1, գ. 42, թ. 16, ֆ. 276, g. 1, գ. 101, թ. 16, գ. 120, թ. 61:

լրիվ անջատվելուն: Այդ մղումը դրսևորվեց անդրկովկասյան բոլոր հանրապետությունների, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետության վարքագծում[1]: Գեներալ Ա. Դենիկինը գրում է, որ անգլիացիներն Անդրկովկասի հանրապետությունների կառավարություններին համոզում էին, որ ուշ թե շուտ ճանաչելու են նրանց անկախությունը, որպեսզի նրանք իրենց օգնեն՝ Կամավորական բանակին դուրս մղելու տարածաշրջանից: Անդրկովկասում կյանքն ընթանում էր անգլիական քաղաքականությանը շաղկապված և նրանից մեծապես կախված[2]:

Փաստորեն Անգլիան Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջում էր արմատապես փոխել վերաբերմունքը Կամավորական բանակի նկատմամբ, որի հետ մինչև այդ նա գտնվել էր սերտ կապերի մեջ: Ավելին, Անգլիան Հայաստանի Հանրապետությանը հորդորում էր ոչ մի կապ չունենալ Ռուսաստանի հարավի, իրեն հակամարտ քաղաքական ուժերի հետ: Գեներալ Վ. Բիչը հայ նախարարներին համոզում էր, որ Ռուսաստանը ոչ միայն Անգլիայի, այլև Հայաստանի Հանրապետության թշնամին է: Այժմ հասել է այն պահը, երբ Մեծ Բրիտանիան կարող է վերջապես կատարել իր վաղեմի մտադրությունը և Ռուսաստանի հարավին դուրս մղել Կովկասից[3]:

Թիֆլիսում Ա. Խատիսյանի և Վ. Թոմսոնի հանդիպման ժամանակ (ապրիլի 4-11) վերջինս բոլշևիկների ու Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հարաբերություններին անդրադառնալիս նշեց, որ երկուսն էլ Հայաստանի համար չար ուժեր են: Բոլշևիկները ոչնչացնում են մտավո-

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 19, л. 28:
[2] Տե՛ս *Деникин А.*, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т.5. Вооруженные силы Юга России, с. 205:
[3] Տե՛ս ГА РФ , ф. 446, оп. 2, д. 39, л. 96:

ականությանը, իսկ Կամավորական բանակը չի ընդունում Անդրկովկասի, ինչպես նաև Հայաստանի անկախությունը:[1] Զրույցի վերջում Վ. Թոմսոնը հաղորդեց, որ բոշևիկներն օր օրի ուժեղանում են: Փարիզի խաղաղության վեհաժողովում փոխվել էր վերաբերմունքը բոլշևիկների նկատմամբ: 1919 թ. ապրիլի 24-ին Ա. Ահարոնյանը Փարիզից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում գրում էր. «...Այստեղ այս օրերս ռուսական պրոբլեման մի լուրջ կրիզ ունեցավ. քիչ էր մնում, որ պետությունները ճանաչէին բոլշիկներին ու հարաբերության մեջ մտնէին: Այս մտքի պաշտպանն էր Ամերիկան՝ հանձին նախագահ Վ. Վիլսոնի: Իսկույն բուռն հակառակություն ցույց տվեցին Անգլիան ու Ֆրանսիան: Անհնարին չէ, որ բոլշևիկ կառավարությունը այսուհետև ևս փաստորեն ճանաչվելու նոր փորձ չը լինի: Առայժմ հաստատը այն է, որ դաշնակիցները որոշել են բանակով չը միջամտել Ռուսաստանի գործերին և բոլշևիկներին պատերազմ չը հայտարարել, անգամ հետ կանչել իրենց զորքերը: Այս մտքով վճռական հայտարարություններ եղան ֆրանսիական պարլամենտում Պիշոնի կողմից և անգլիականում՝ Լոյդ Զորջի: ***Պէտք է ասեմ, որ միջամտությունը Ռուսաստանի գործերում բնավ ժողովրդականություն չունի***»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Այդ տեղեկությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը խիստ մտահոգեց: Թվում էր, թե նոր քաղաքական իրադրություն էր ստեղծվում Ռուսաստանի հարավի հետ ունեցած հարաբերություններում, որը Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջում է նոր վարքագիծ որդեգրել: 1919 թ. ապրիլին Հայաստանի խորհուրդը, ելնելով

[1] Տե՛ս ֆ. 4033, g. 2, գ. 962, թ. 47, ֆ. 199, g. 1, գ. 32, թ. 154, ֆ. 200, g. 1, գ. 243, թ. 75:
[2] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս II, թ. 430:

ստեղծված քաղաքական իրավիճակից, որոշեց ***պահպանել չեզոքություն՝ խզելով շփումները և՛ բոլշևիկների, և՛ Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ***[1]: Բանն այն էր, որ Ռուսաստանի տարբեր քաղաքական ուժերից որևէ մեկի հաղթանակը, միևնույնն է, հանգեցնելու էր ռուսական նախկին կայսրության տարածքների միավորմանը, որի հետևանքով տապալվելու էր Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը: Ռուսաստանի հարավի Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» ապրիլ-մայիսի «քաղաքական տեսության» մեջ ասվում էր, որ Հայաստանի խորհուրդը որոշել է պահպանել չեզոքություն Կամավորական բանակի և բոլշևիկների պայքարում: Կամավորական բանակը դժգոհում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը լայն քարոզչություն է ծավալում Հյուսիսային Կովկասի և Դոնի հայության շրջանում՝ չհարել երկու քաղաքական ուժերից ոչ մեկին, քանի որ մինչ այդ հայերը օգնում էին Կամավորական բանակին բոլշևիկների դեմ մղվող պայքարում[2]: «Քաղաքական տեսության» մեջ նաև ասվում էր, որ ըստ Կամավորական բանակի հատուկ հետախուզության տեղեկությունների՝ ***Հայաստանի Հանրապետության կառավարությունը դժգոհ էր նաև Սև ծովի ափերին բնակվող հայերի վարքագծից, քանի որ նրանք Կամավորական բանակին զենքով աջակցում են վրացիների դեմ մղվող պայքարում***[3]: Զենքի ուժով վրացական զինվորներին սևծովյան շրջաններից դուրս մղելու համար գեներալ Ա. Դենիկինն առիթ դարձրեց հայերի ու աբխազների նկատմամբ վրացա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 120, թ. 117 ե, «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Երևան, օգոստոսի 9, 1919, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 252:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 19, л. 29:
[3] Տե՛ս նույն տեղը:

կան իշխանությունների վայրագությունները: Դեռ 1919 թ. փետրվարի 24-ին (մարտի 9) Գագրայի Հայոց ազգային խորհուրդը խնդրանքով դիմեց գեներալ Ա. Դենիկինին՝ Սուխումի շրջանի հայերին պաշտպանելու վրացական բանակի բռնություններից[1]: Այդ առնչությամբ փետրվարի 26-ին (մարտի 11) գեներալ Ա. Դենիկինն անգլիական զինվորական հրամանատար գեներալ Չ. Բրիգսին դիմեց հետևյալ հայտարարությամբ. «Սոչիի շրջանի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներն ինձ խնդրել են Սուխումի մարզի, մասնավորապես Գուդաուտի գյուղի հայերին պաշտպանել վրացական բանակի բռնություններից:

Սոչիի շրջանի Հայոց ազգային խորհրդի վերոհիշյալ հայտարարությունը հաստատվում է ինձ ենթակա զորամասերի հրամանատարների զեկույցներով, համաձայն որոնց թշնամու թիկունքից Բզիբ գետի այն կողմից անդադար լսվում է թնդանոթային և գնդացրային հրաձգության աղմուկ:

Ձերդ գերազանցությանը խնդրում եմ Անդրկովկասի բրիտանական բարձրագույն զինվորական հրամանատարությանը տեղյակ պահել անզեն հայ բնակչության նկատմամբ իրագործվող բռնությունների դեմ իմ բողոքի մասին, ինչպես նաև բարբարոսությունները դադարեցնելու նպատակով ճնշում բանեցնել վրացական կառավարության վրա»:[2]

Ինչպես նկատում ենք, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ չէին կարգավորվել: Այս փաստաթուղթը նույնպես վկայում է այդ մասին, ինչպես նաև հաստատում այն փաստը, որ հայությունը պաշտպանություն էր գտնում ռուսներից: Չնայած դրան՝ երկրի անկախ պետականության կայացման

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 38, л. 20-21:
[2] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 38, л. 18, տես նաև Революция и гражданская война в описаниях белогвардейцев, с. 95.

նպատակով Հայաստանի Հանրապետության խորհուրդը որոշեց պահպանել չեզոքություն ու չմասնակցել Ռուսաստանի տարբեր քաղաքական ուժերի պայքարին:

Երկար ձգձգումներից հետո՝ 1919 թ. մայիսի 28-ին՝ անկախության առաջին տարեդարձի օրը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Ա. Խատիսյանը) հանդիսավոր պայմաններում ի վերջո հայտարարեց «Միացյալ Հայաստանի անկախության ակտը», որտեղ ասված է. «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն ... Այսպիսով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի պառլամենտն ու կառավարությունը հանդիսանում են *միացյալ Հայաստանի* ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրապարակում է 1919 թ. ապրիլի 27-ի պառլամենտի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա.

Մինիստրների խորհրդի նախագահի և
արտաքին գործերի մինիստրի պաշտոնակատար
Ա. Խատիսյան
Ներքին գործերի մինիստրի պաշտոնակատար
Ս. Մանասյան
Զինվորական մինիստր, գեներալ-մայոր
Ք. Արարատյան*
Արդարադատության մինիստրի պաշտոնակատար
Հ. Չմշկյան

Հանրային կրթության մինիստր Գ. Մելիք-Ղարագեոզյան
Խնամատարության մինիստր Ս. Թորոսյան
Պարենավորման մինիստր Ք. Վերմիշյան
Ֆինանսների մինստրի պաշտոնակատար Գ. Ձաղեթյան
Գործերի կառավարիչ Գ. Խատիսյան

1919 թ. մայիսի 28-ին Երևան քաղաք»[1]:

«Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» ակտի հրապարակումից հետո Ա. Խատիսյանը հրավիրեց արևմտահայ նորընտիր տասներկու պատգամավորներին՝ գրավելու իրենց համար նախատեսված տեղերը խորհրդի (խորհրդարանի) շարքում[2]: Հարց է առաջանում, թե ինչու Հայաստանի Հանրապետության կառավարությունը *միացյալ Հայաստանի* հռչակագիրը ընդունեց մայիսի 28-ին և առանց խորհրդի (խորհրդարանի) որոշման: Ինչպես հայտնի է, խորհուրդը ապրիլի 27-ին մեկ ամսով արձակուրդ էր գնացել և իր լիազորությունները հանձնել էր Հայաստաի Հանրապետության կառավարությանը[3]: Կառավարությունը ժողովրդի գիտակցության մեջ այդ պատմական օրը ամրապնդելու համար հռչակագրի ընդունումը համատեղեց հանրապետության անկախության տարեդարձի՝ մայիսի 28-ի օրը: Հայաստանի խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանը* մայիսի 28-ը ազդարարեց հայկական մեծագույն տոներից: Հանձնարարական տրվեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը Փարիզի խաղաղության վեհաժողովում պաշտպանել *միացյալ, անկախ Հայաստանի* պահանջները:

1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի խորհրդի նիստում

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 84:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 87:
[3] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», լրագիր, Երևան, 7 հունիսի 1919:

Ա. Խատիսյանը հայտարարեց. կատարվածը քաղաքական անհրաժեշտություն էր: Հռչակագրի ընդունումը ընձեռեց այն իրավական դաշտը, որով կառավարությունը հնարավորություն ստացավ լուծելու ազգային, պետական խնդիրներ[1]:

Մայիսի 28-ի հռչակագրի գլխավոր արժեքը նաև այն էր, որ ***անկախության պաշտոնապես ընդունումը վերջ տվեց Հայաստանի անկախության մասին Համաձայնության պետությունների, Անդրկովկասում նրանց ներկայացուցիչների, հարևանների և առավելապես Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների կողմից ստեղծված աննպաստ կարծիքներին:***

* * *

Այժմ տեսնենք, թե ինչպիսին էր Փարիզում գործող «Ռուսական քաղաքական խորհրդակցության» ու նրա դեսպանական խորհրդի և առհասարակ ռուսական քաղաքական շրջանների մոտեցումը միացյալ Հայաստանի ակտի նկատմամբ 1919 թ. մայիսի 28-ի անկախության պաշտոնական հռչակման նախօրյակին և դրանից հետո:

1919 թ. հունվարից Փարիզում գործում էին Ռուսաստանի հակախորհրդային կառավարությունների ներկայացուցիչների «Ռուսական քաղաքական խորհրդակցությունը» և նրա դեսպանական խորհուրդը: «Ռուսական քաղաքական խորհրդակցության» նախագահն էր իշխան Գ. Լվովը (ռուսական ժամանակավոր կառավարության վարչապետ), անդամներ՝ Ն. Չայկովսկի (Արխանգելսկի կառավարության ղեկավար), Ս. Սազոնով (Եկատերինոդարի և Օմսկի արտա-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 88:

քին գործերի նախարար, Ռուսաստանի արտաքին գործերի նախկին նախարար, դեսպանական խորհրդի անդամներ՝ Վ. Մակլակով (Ֆրանսիայում Ռուսաստանի դեսպան), Բ. Բախմետով, Մ. Ստոխովիչ, Մ. Գիրս[1] (Կոստանդնուպոլսում ռուսական նախկին դեսպան):

«Ռուսական քաղաքական խորհրդակցության» և նրա դեսպանական խորհրդի նպատակն էր Փարիզի խաղաղության վեհաժողովում պաշտպանել նախկին Ռուսական կայսրության տարածքների վերականգնումը 1914 թ. սահմաններով: 1919 թ. մարտի 9-ին Փարիզի խաղաղության վեհաժողովին ուղղված դիմումով նրանք պահանջում էին, որ 1914 թ. սահմաններում ռուսական տարածքներին վերաբերող բոլոր հարցերը, բացառությամբ Լեհաստանի, ինչպես նաև այս սահմաններում ապրող ազգությունների ապագա կացությանը վերաբերող հարցերը չեն կարող լուծվել առանց ռուս ժողովրդի համաձայնության և նրա կամքից անկախ[2]:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության և «Ռուսական քաղաքական խորհրդակցության» ու նրա դեսպանական խորհրդի միջև Փարիզում հաստատվել էին բարեկամական հարաբերություններ: Նրանց հետ «...տեսակցություններն ու զրույցները,- գրում է Ա. Ահարոնյանը,- բարեկամական են»[3]: Մարտի 9-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանն արտաքին գործերի նախարարին ուղղված նամակ-զեկույցում տեղեկացնում է, որ ըստ Փարիզում ռուսական դեսպան Վ. Մակլակովի՝ գեներալ Ա. Դենիկինը. «Կովկասեան ու թիւրքաց Հայաստանի միացումի խնդրում – միանգամայն բարեացկամ դիրք է բռնել: Կովկասեան Հայաստանը կարող է ազատօրէն կցւել թիւրքաց Մեծ Հայաստանին: Անկասկած մեզ համար շատ ախորժելի չէ հրաժարուել հայերից, որոնց արժեքը մենք լավ ենք գիտակցում Կովկասի զարգացման համար, բայց մերժել հայերին այդ ազգային միությանն ու անկախութեանը մենք չենք կարող, մանաւանդ, որ Լեհաստանինն ընդունել ենք»[1]:

Մայիսի 19-ին Փարզում տեղի ունեցավ հանդիպում Ա. Ահարոնյանի, Պողոս Նուբար Փաշայի, Հ. Օհանջանյանի, Մ. Աճեմյանի, Գ. Փաստրմաճյանի և ռուսական դեսպանական խորհրդի անդամ Մ. Գիրսի ու նրա խորհրդական, մեծ հայասեր Ա. Մանդելշտամի հետ: Հանդիպման ընթացքում Մ. Գիրսը, անդրադառնալով միացյալ Հայաստանի անկախության հարցին, դարձյալ հավաստեց նույն քաղաքական մոտեցումը. «...Հայերի հաւատարմութիւնը մեզ համար կը մնայ անմոռանալի եւ դա, հաւատացել ենք, կարտայայտւի քաղաքականապէս: Կարող եմ Ձեզ վստահեցնել, որ մենք բնաւ հակառակ չենք Միացեալ, Անկախ Հայաստանին, որովհետև նախ՝ հայերը դրան արժանի են իրենց խոր զգացումով դէպի իրենց հայրենիքը, եւ երկրորդ՝ դա նաեւ մեր շահն է. նախ՝ մանդատի խնդիրը.- մենք բոլորովին համամիտ ենք ձեզ, որ Ամերիկան լաւագոյն մանդատէրն է: Անկեղծ եմ ասում. եւ այդ նրա համար, որ նա նուաճողական քաղաքականութիւն չունի Արևելքում եւ վերջ ի վերջոյ հեռանալու է: Եւ մենք յոյս ունենք, ***կը մնանք դաշնակիցներ***»[2]: Բոլոր հեռատես ռուսները, հայտարարեցին նրանք, պետք է նպաստեն Նոր Հայաստանի և Նոր Ռուսաստանի միջև բարեկամական հաստա-

[1] Տե՛ս "Единая Россія", N 108 от 4 июня 119: ***Трукан Г.***, Антибольшевистские правительства России, էջ 183-194:

[2] Մանրամասն տե՛ս ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах. – Книга 3/ Т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, էջ 340-352, տե՛ս նաև ***Հովհաննիսյան Ռ.***, Հայաստանի Հանրապետություն, էջ 408 - 414:

[3] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 290, թ. 17:

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 247:

[2] ***Ահարոնեան Ա.***, Սարդարապատից մինչև Սևր և Լօզան, Պոսթըն, 1943, էջ 21-22:

տուն կապերի ամրապնդմանը[1]: Սակայն մի քանի օր անց այդ հարցում ռուսական կողմի տրամադրության մեջ փոփոխություն նկատվեց:

Մայիսի 22-ին Ա. Ահարոնյանի, Մ. Աճեմյանի, Վ. Մակլակովի և Բ. Բախմետովի հանդիպման ժամանակ դարձյալ շոշափվեց միացյալ Հայաստանի խնդիրը: Այդ անգամ ռուս դեսպանները ձևական պատճառաբանություններով ու դիվանագիտական խաղերով փորձեցին հայկական պատվիրակության անդամներին հասկացնել իրենց անհամաձայնությունը *միացյալ, անկախ Հայաստանի* ստեղծմանը: Բանն այն էր, որ «Ռուսական քաղաքական խորհրդակցությունը» և նրա դեսպանական խորհուրդը Փարիզում տեղեկացվել էին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը մայիսի վերջին պաշտոնապես հռչակելու է *միացյալ, անկախ Հայաստանի* անկախության ակտը: Այդ հանգամանքը լուրջ անհանգստություն պատճառեց ոչ միայն Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը», այլև Փարիզում «Ռուսական քաղաքական խորհրդակցությանը», նրա դեսպանական խորհրդին և առհասարակ ռուսական քաղաքական լայն շրջաններին: Հանդիպման ժամանակ երկու ռուս դեսպանները հայտնեցին, որ դեմ չեն միացյալ Հայաստանի ստեղծմանը, սակայն ստիպված են ձևականորեն բողոքել, եթե Փարիզի խաղաղության վեհաժողովը լուծում տա այդ խնդրին առանց նոր Ռուսաստանի կազմակերպման և նրա կառավարության համաձայնության: Դեսպանները հաղորդեցին նաև, թե իբր «...Ստիպուած են այդ ձեւական բողոքն անել, որպէսզի միւս ժողովուրդները (Ռուսիայի) Հայաստանի խնդիրը հիմք չծառայեցնեն պահանջելու իրենց անջատումը Ռուսաստանից»[2]:

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] ***Ահարոնեան Ա.***, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, էջ 21-22:

Քանի դեռ չէր հրապարակվել *միացյալ, անկախ Հայաստանի* անկախության հռչակագիրը, և այդ հարցը սոսկ խոսակցությունների առարկա էր, թվում էր, թե ռուսական կողմը դեմ չէ այդ ակտի ընդունմանը: Բայց երբ հռչակագիրը պաշտոնապես հրապարակվեց, ռուսական կողմն այլևս չթաքցրեց իր բացասական վերաբերմունքը՝ ցուցաբերելով կոշտ քաղաքական մոտեցում: Հուլիսի 5-ին «Ռուսական քաղաքական խորհրդակցությունը» Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացրեց հուշագիր, որում Հայաստանին վերաբերող մասում ասվում է. «...Ինչ վերաբերում է Հայաստանի ապագային, այդ երկիրը մտնում է այն կատեգորիայի մեջ, որ «որոշ հասարակություններ, որոնք պատկանում էին երբեմնի օսմանյան կայսրությանը, որի մասին խոսում է «Միավորված ազգերի» դաշնագիրը, և որոնք այնպիսի զարգացման աստիճանի են հասել, որ կարող են անկախ ազգ դառնալ, դրանք կարող են ճանաչվել ժամանակավորապես, այն պայմանով, որ մանդատատեր պետության խորհուրդները և օգնությունը ղեկավարեն նրանց վարչությունը, մինչև որ նրանք ի վիճակի կլինեն իրենք իրենց ղեկավարելու:

Ուրիշ պարագաներում Ռուսաստանը այդ ժամանակավոր աշխատանքը հաճույքով իր վրա կվերցներ: Ամեն դեպքում պետք է, որ միավորված ազգերի կողմից որևէ պետության հանձնարարված մանդատը երաշխավորված լինի: Մանդատատեր պետությունը չպետք է քաղաքական և առևտրական շահեր հետապնդի, այլ անշահախնդիր օգնություն ցույց տա Հայաստանում ապրող հայերին և այլազգիներին: Պետք է նաև, միավորված ազգերի դաշնագրի ոգուն համաձայն, ապահովել Հայաստանին՝ արագորեն անցնելու լրիվ անկախության վիճակի»[1]: Հուշագրից երևում է, որ թեև

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, մաս I, թ. 69 թ., 71, 78:

«Ռուսական քաղաքական խորհրդակցությունը» անուղղակի հրաժարվում է Արևմտյան Հայաստանից, հետևապես չեղյալ է հայտարարում 1916 թ. Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը[1], բայց վերհիշեցնելով անցյալում Ռուսաստանի խաղացած դերը Հայաստանում՝ ցավ է հայտնում, որ ինքը անկարող է Հայաստանի մանդատն ստանձնել, և կարծես վերապահումներ են անում ապագայի նկատմամբ, և այդ նպատակով պահանջում է, որ Հայաստանի մանդատատերը շուտ հեռանա Հայաստանից: Ինչպես երևում է, հուշագրում զգուշացել են անգամ խոսք արտահայտել Արևելյան Հայաստանի մասին[2]: Իրականում հուշագրում չէր խոսվում *միացյալ, անկախ Հայաստանի* անկախության ապագայի մասին:

Հուլիսի 10-ին Փարիզում Ա. Ահարոնյանի, Հ. Քաջազնունու և Վ. Մակլակովի հանդիպման ժամանակ վերջինս, անդրադառնալով *միացյալ, անկախ Հայաստանի* խնդրին, դիվանագիտորեն մանրամասնեց ռուսական քաղաքական շրջանների հայեցակետն այդ հարցի վերաբերյալ, որը, անշուշտ, պայմանավորված էր Եկատերինոդարից տրված նոր ցուցումներով: 1919 թ. հուլիսի 28-ին արտաքին գործերի նախարարին ուղղված նամակ-զեկույցում Ա.Ահարոնյանը տեղեկացնում էր այդ հանդիպման արդյունքի մասին. «Մակլակովը ասաց հետևյալը. «Ժողովուրդների իրաւունքը՝ ինքնորինաբար տնօրինել իրենց բախտը, մենք բացարձակ չենք համարում: Անհնարին է թոյլատրել, որ իւրաքանչիւր ժողովուրդ, իր ուզած ժամին զատուի այս կամ այն պետութիւնից: Բայց մենք ընդունում ենք, որ կան հանգամանքներ, երբ այդ-

[1] 1916 թ. Անգլիայի և Ֆրանսիայի միջև ստորագրված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով Ռուսաստանին էր անցնելու Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի շրջանները: Մանրամասն տե՛ս ***Բայբուրդյան Վ.***, Քրդերը, հայկական հարցը և հայ-քաղաքական հարաբերությունները պատմության լույսի ներքո, էջ 237-329:
[2] Տե՛ս ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 20:

պիսի անջատումը անխուսափելի է եւ ընդունելի: Այսպէս, մինչդեռ մենք ո՛չ մի պայմանով չենք համաձայնի, օրինակ մի Ադրբէյջանի կամ մի Վրաստանի անջատումին մեզնից, մենք ընդառաջ կերթանք հաճութեամբ կովկասեան հայերի վճռական ցանկութեան՝ միանալ Թիւրքաց Հայաստանին ու այսպէս թէ այնպէս անկախ է լինելու, մանաւանդ որ մենք հաւատացած ենք, որ այսպիսով ստեղծուած Միացեալ Հայաստանը լինելու է Ռուսաստանի բարեկամը եւ գուցէ դաշնակիցը արեւելքում: Մեր հարցին թե ի՞նչն է արգելակում, որ այս հայտարարությունն արվի այժմ, թեկուզ կիսապաշտոնապես, քանի որ դա այնքան անհրաժեշտ է մեր խնդրի շուտափույթ լուծման տեսակետից, Մակլակովը պատասխանեց, որ իրենք՝ Փարիզում նստած ռուս Conference Politique անդամները, ո՛չ այլ ինչ են, եթե ոչ պահապաններ ռուսական ժառանգության, որի միակ տերն ու տնօրենը լինելու է ռուսական Սահմանադիր ժողովը:

Մեր առարկութեան, թէ մենք անվերջ չենք կարող սպասել, մինչեւ որ Ռուս Սահմանադիր ժողովը հաւաքուի, որը շատ պրոբլեմատիկ է, նա պատասխանեց թէ՝ պէտք է մի ժամանակաւոր ֆորմուլա, մի կոմպրոմիս գտնել, որ անհնարին չէ: Օրինակ, մօտաւորապէս այսպիսի ձեւ թէ՝ «վստահ լինելով որ ռուս Սահմանադիր ժողովը, եթէ նա լինէր այսօր, չէր հակառակի մեր արդար իրաւունքին, մենք, կովկասեան հայերս, յայտարարում ենք մեզ միացած Թիւրքաց Հայաստանին»:

Սա մի ձեւ է, շարունակեց Մակլակով, որ մեզ բնաւ չի վիրաւորի եւ ընդունելի կը լինի, միւս կողմից մեր իրաւունքը չի արհամարհուի: Նկատի առէք, խնդրեմ, որ Եւրոպան մեզ շատ է վիաւորել եւ վիրաւորում է. գուցէ կը գայ մի օր, երբ մենք հաշիւ կը պահանջենք, բայց կ՛ուզէինք որ մեր բարեկամ, մեզ միշտ հաւատարիմ հայերը մեզ չվիրաւորէին,

միանգամայն անգիտանալով մեր իրաւունքը:

Ես ու Քաջազնունին դուրս եկանք այն համոզումով, որ սա վերջին խօսքն է ռուսների»[1]: Այսինքն՝ ռուսները, փաստորեն, դեմ էին Ռուսաստանից Հայաստանի անջատմանը: Դա է հաստատում նաև 1919 թ. հուլիսի 2-ին Փարիզում «Ռուսական քաղաքական խորհրդակցությանը» և նրա դեսպանական խորհրդին ուղարկված գաղտնի հեռագիրը, ըստ որի՝ գեներալ *Ա. Դենիկինը նորանկախ հանրապետությունները՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը, պաշտոնապես ճանաչել է որպես Ռուսաստանի հարավի անբաժանելի մաս և ընդունում է դրանց անկախ գոյությունը մինչև միացյալ Ռուսաստանի վերաստեղծումը*[2]: *Դա էր պատճառը, որ Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարությունը Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի հետ հարաբերություններն իրականացնում էր ոչ թե «Հատուկ խորհրդակցության» արտաքին գործերի վարչության, այլ դրա քաղաքական գրասենյակի միջոցով*[3]: Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը», Անդրկովկասի անկախության գործընթացից անհանգստացած, *փոխեց իր մարտավարությունը՝ նպատակ ունենալով անհրաժեշտության դեպքում ուժով իրականացնել «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը*, և փորձեց Անդրկովկասյան կորպուս ստեղծել: Սակայն անգլիական զինվորական հրամանատարությունն արգելում էր Կամավորական բանակին Անդրկովկասի տարածքում ձևավորելու ռուսական ռազմական ջոկատներ կամ խմբեր: Հուլիսի 11-ին «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովը Փարիզում «Ռուսական քաղաքական խորհրդակցության» անդամ, Եկատերինոդարի և Օմսկի կառավարության արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին հղած գաղտնի հեռագրով տեղեկացնում է, որ. «Հայաստանը միշտ ձգտել է դեպի Ռուսաստանը, սակայն վերջին ժամանակներս հույսը դրել է բացառապես օտարերկրյա աջակցության վրա և դադարեցրել է հարաբերությունները գլխավոր հրամանատարության հետ»[1]:

Իրավիճակի փոփոխությունն օբյեկտիվ հիմք ուներ: Փարիզի խաղաղության վեհաժողովի հետ հայության կապած հույսերը՝ *միացյալ, անկախ Հայաստանի* ստեղծման հնարավորությունը, իրատեսական էր դառնում, որն էլ հանգեցնում էր Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հետ պաշտոնական հարաբերությունների սառեցման: Այդ առումով տեղին ու ժամանակին էր միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի հրապարակումը, որը, իհարկե, մեծ անհանգստություն և դժգոհություն առաջ բերեց ռուսական քաղաքական շրջաններում: Գնդապետ Մ. Զինկևիչը 1919 թ. օգոստոսի 17-ին Ռոստովից Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր շտաբի պետին ուղղված զեկույցում տեղեկացնում էր, որ միացյալ Հայաստանի հռչակագրի հրապարակումից հետո Երևանի կառավարող շրջանները անբարյացակամ են դարձել Ռուսաստանի հարավի նկատմամբ[2]:

Նույն զեկույցում գնդապետը նաև դժգոհում էր, որ անկախության ակտի հրապարակումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը շատ զգուշորեն սկսել է ազգայնացման և հայացման քաղաքականության իրականացումը: Հանրապետության տարբեր բնագավառների

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 17-19, գ. 355, թ. 8-12:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 67, л. 256-257:
[3] Տե՛ս նույն տեղը:

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 67, л. 213:
[2] Տե՛ս նույն տեղը, д. 34, л. 78:

բարձր պաշտոններում որոշված էր ռուսների չնշանակել. «...Ինձ հանդիմանեցին,- գրում է գնդապետ Մ. Զինկևիչը,- որ հայկական բանակի գլխավոր շտաբում ես շատ ռուսներ եմ հավաքագրել և ընդհանրապես հրամանատարական պաշտոններում ընտրել եմ իմ կողմնակիցներին»[1]: Գնդապետը դժգոհում էր նաև, որ Երևանում սկսել են գրագրությունը վարել հայերեն: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձգտում էր պետական և հասարակական հիմնարկներում հայերենի պարտադիր գործածության: Հայաստանի Հանրապետություն եկող ռուսներին դժկամությամբ էին դիմավորում՝ նրանց համարելով Կամավորական բանակի գործակալներ: Գնդապետ Մ. Զինկևիչը Կամավորական բանակի հրամանատարությանը զգուշացնում էր, որ եթե ամեն ինչ հաջող ընթանա, ապա Հայաստանի Հանրապետության կառավարությունը կկարողանա ժողովրդին ընտելացնել անկախության, ինչպես դա տեղի է ունենում Վրաստանում[2] ռուսների աչքի առաջ:

Հիրավի, դեռ անկախության ակտի պաշտոնական հրապարակման նախապատրաստությանը զուգահեռ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ջանք չէր խնայում հայկական բանակում թուլացնելու ռուսական ազդեցությունը, մերժելու «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական գաղափարը, որը հակասում էր Հայաստանի Հանրապետության շահերին: 1919 թ. հունիսի 17-ին «Աշխատավոր» լրագիրը «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն» հոդվածում գրում է. «Բաւական է, որքան մենք եղանք ռուսահայեր, տաճկահայեր: Ժամանակն է, վերջապէս որ լինենք ուղղակի հայեր: Այս բանը պէտք է հասկանան մեր ռուսախօս պաշտօնեաները, բայց եթե նրանք չուզենան սո-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղը:

վորել Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն, ապա ուրեմն թող կառավարութիւնը նշանակէ ժամանակամիջոց, որից յետոյ լեզու չգիտցողները պէտք է հեռանան գործերից»[1]:

Անկախության գործընթացից բխող կարևոր խնդիր էին հայկական նորաստեղծ բանակը ռուսական ազդեցությունից ազատելը, ինչպես նաև հայ զինվորների մուտքը Կամավորական բանակ կանխելը: Ի դեպ, գեներալ Ա. Դենիկինը և նրա շրջապատը ձգտում էին իրենց ազդեցության տակ պահել Անդրկովկասի զինված ուժերը:

Նրանք կարծում էին, որ այդ ճանապարհով չեն կորցնի Անդրկովկասը, և հնարավոր կլինի կոտրել վերջինիս անկախությունը[2]: Հայկական բանակի սպաների կեսից ավելին ռուսներ էին[3], որոնք պատրաստ էին կատարելու Կամավորական բանակի հրամանները[4]: 1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի խորհրդի նիստում Ա. Խատիսյանը հայտարարեց, որ կառավարության որոշման համաձայն Կամավորական բանակի հետ առնչություն ունեցող կամ նրանց գաղափարախոսությունը կրող սպաները, պաշտոնյաները և զինվորները ազատ են Ռուսաստանի հարավ գնալու, իսկ մնացողները պարտավոր են ճանաչել միմիայն Հայաստանի Հանրապետության իշխանությունը[5]: Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ կազմվեց հանձնաժողով գործերի կառավարիչ Գևորգ Խատիսյանի նախագահությամբ՝ ***հայացման օրինագիծ մշակելու համար***[6]:

[1] «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 17 հունիսի 1919:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 964, թ. 82, ֆ. 200, g. 1, գ. 158, թ. 91:
[3] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68:
[4] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 39, л. 33, РГ АСПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 205-206:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 35, թ. 88, ֆ. 201, g. 1, գ. 43, թ. 38:
[6] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Երևան, 11 հունիսի 1919:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայկական բանակի հայացման քաղաքականությունն իրականացնելիս դրսևորեց որոշ շտապողականություն և անհանդուրժողականություն, որն ունեցավ անցանկալի հետևանքներ: Հայկական բանակում չիրականացվեց նախապատրաստական լուրջ աշխատանք, չապահովվեց քարոզչություն հատկապես ռուսախոս հայ սպաների շրջանում: Նրանցից շատերը, հեռանալով հայկական բանակից, համալրում էին Կամավորական բանակի շարքերը: Այդ հանգամանքը Վրաստանում քաղաքական շահարկումների առիթ տվեց: Վրացական մամուլը, մասնավորապես «Грузия» լրագիրը, 1919 թ. N136 համարում փորձում էր իր ընթերցողին համոզել, թե իբր հայ սպաները և զինվորները դենիկինյան բանակ են մտնում միայն այն պատճառով, որ դեմ են Վրաստանի անկախությանը[1]:

Հուլիսի 3-ին Բաթումում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գ. Եդիգարյանը արտաքին գործերի նախարարին ուղղած նամակում հաղորդում է. «...Վերջերս նկատելի է հայ սպաների Կամաւորական բանակ մտնելու զգալի թիւ: Նոքա ազատ լինելով, թե արձակուած հայկական բանակից՝ միանգամայն աննպաստ դեր են խաղում նոր ծառայութեան դէպի մեր հայրենիքը թէ կառավարութիւնը եւ թէ մեր զինուորական մարմնի վերաբերեալ ամենուր չէն զլանում վարկաբէկելու վերոյիշեալները, թեր ևս իրենց ավելի ի կարող կամ ձեռնահաս ցոյց տալու դիտաւորութեամբ: Կը խնդրէի Ձեր համապատասխան տնօրինութիւնը, որ միջոցներ ձեռք առնւին չեզօքացուելու նրանց վարկաբէկիչ գործունեութիւնը. Մի կողմից, որպէս միջոցներից մէկը, կառաջարկէի կազմել բոլոր հեռացրուած սպաների ցուցակը և ամեն մէկի վերաբերեալ բացատրական տեղեկութեամբ, այդ ցուցակը ուղարկել կամաւորական շտաբ, որով կպարզւէ թէ ինչն է պատճառը նրանց դուրսը մնալու և որն է այն «քաջերի» իսկական պատկերը»[1]:

Ռուսաստանի հարավի քաղաքական շրջաններում տեղեկություններ էին տարածվել այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոխել է իր վերաբերմունքը ռուսների, առանձնապես այն ռուս պաշտոնյաների ու սպաների նկատմամբ, որոնք պետական ծառայության մեջ են հանրապետությունում: Այդ առիթով 1919 թ. մայիսի 30-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանն արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում տեղեկացնում էր, որ ըստ տարածվող լուրերի՝ «Հայաստանի կառավարութեան վերաբերմունքը դեպի ռուսները ընդհանրապէս եւ մասնաւորապէս դէպի ռուս պաշտօնեաները եւ օֆիցերները, որոնք Հայաստանում պետական ծառայութեան մէջ են, զգալի չափով փոխուել է:

Ռուս գիւղացիներին հաճութեամբ չեն վերադարձնում իրենց տեղերը, ռուս օֆիցերներին համարեայ թէ քշում են զօրքից յաջող ազգայնացման դրօշի տակ, քաղաքացիական հաստատութիւններում գտնվող ռուս պաշտօնեաներին փոխարինում են հայերով, որ նոյնիսկ Երեւանում կազմուել է մի ընկերութիւն, որի նպատակն է ազգայնացման ճանապարհով երկրում արմատախիլ անել ռուսական ոգին»[2]: Նամակ-զեկույցի վերջում Լ. Եվանգուլյանը զգուշացնում էր, որ ռուսների մասին եղած լուրերը չափազանցված են հասնում Կամավորական բանակի ղեկավարությանը, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունն էլ չպետք է մոռա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 134:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 254, թ. 143, գ. 151, թ. 25:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 51-52, ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 74-75:

նա, որ Կուբանի, Թերեքի երկրամասերում թուրքական արշավանքի ժամանակներից կուտակվել են տասնյակհազարավոր հայ գաղթականներ: Շարունակվում էր նաև տարբեր շրջաններից հայ գաղթականների ներհոսքը Ռուսաստանի հարավ. «Այս դժբախտների դրութիւնը սոսկալի է Կամավորական բանակի նոյնիսկ սրտագին վերաբերմունքի օրով, իսկ մեր յարաբերութիւնները վատթարանալով այս գաղթականների դրութիւնը կմօտենայ վերջնական բնաջնջման: Անհրաժեշտ է բարեկամական յարաբերութիւններ պահպանել թէ Հայաստանում բնակող եւ ծառայող ռուսների հետ եւ թէ նրանց միջոցով այն «Ռօսիա»ների հետ, որոնք ներկայումս գոյութիւն ունին»[1],- եզրափակում էր Լ. Եվանգուլյանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պաշտոնական շփումներ չուներ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հետ, սակայն առանձին հարցերի շուրջ նրանց միջև գոյություն ուներ ներքին անհամաձայնություն: Նրանք շարունակում էին փոխադարձ զգուշություն դրսևորել: «Հատուկ խորհրդակցությունը», ելնելով Հայաստանի Հանրապետությունում ընթացող անկախության գործընթացից, զուր էր համարում միջամտել նրա ներքին գործերին, սակայն հետևում էր իրադարձությունների ընթացքին ու զարգացմանը: ***1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի խորհրդում Ա. Խատիսյանը հաղորդեց, որ Կամավորական բանակը Հայաստանի Հանրապետությանը ոչ մի պաշտոնական կամ ոչ պաշտոնական պահանջ կամ էլ առաջարկություն չի ներկայացրել***[2]: Հասկանալի է, որ «Հատուկ խորհրդակցությունը» դրսևորում էր զգուշավորություն, որպեսզի չկորցներ Անդրկովկասում իր միակ բարեկամ Հայաստանի Հանրապետությունը: Չնայած դրան՝ Հայաստանի Հանրապետության

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 52, ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 74-75:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88:

անկախության գործընթացը խիստ անհանգստություն էր պատճառել Ռուսաստանի հարավի Կամավորական բանակին: Այդ օրերին «Հատուկ խորհրդակցությանը» կից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Սաղաթելյանը Եկատերինոդարից հաղորդում էր, որ դենիկինյան ռուսական շրջանները շատ դյուրազգաց են դարձել և լսել չեն ուզում Ռուսաստանի որևէ տարածքի անջատման մասին ու ձգտում են Ռուսաստանը վերականգնել 1914 թ. ամբողջական սահմաններում[1]: Այդ խնդիրն իրականացնելու նպատակով Կամավորական բանակը ձգտում էր ստեղծել Անդրկովկասյան կորպուս:

«Հատուկ խորհրդակցությանը» հայտնի էր դարձել, որ 1919 թ. մարտի 24-ին Փարիզում Անգլիայի և Իտալիայի գլխավոր շտաբների միջև համաձայնություն էր կնքվել անգլիական զորքն իտալականով փոխարինելու մասին՝ կառավարումը թողնելով անգլիական զինվորական հրամանատարությանը[2]: Ապրիլի 9-ին Անգլիայի ռազմական խորհուրդը հավանություն տվեց այդ համաձայնությանը: Մայիսի 10-ին Վ. Թոմսոնը Անգլիա մեկնելու նախօրյակին այդ որոշման մասին Թիֆլիսում պաշտոնապես տեղեկացրեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորիի և բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին, իսկ երկու օր անց Անդրկովկաս ժամանեց իտալական առաքելությունը 18 սպաներով՝ գնդապետ Գաբբայի գլխավորությամբ[3]: Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարությունը գտնում էր, որ Անդրկովկասում անգլիական զորքերի ներկայությունն անհրաժեշտություն է: ***Գեներալ Ա. Դենիկինը Մեծ Բրիտանիայի կառավարությանը խնդրեց անգլիական***

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 19, գ. 355, մաս I, թ. 12:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 2:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս II, թ. 361:

զինվորներին դուրս չբերել Անդրկովկասից, քանզի մտավախություն կար, որ դրանից հետո տարածաշրջանում բոլշևիզմը կարող էր արագորեն տարածվել[1]:

Օգտագործելով անգլիական զինվորների դուրսբերման առիթը՝ գեներալ Ա. Դենիկինը ձգտում էր ձևավորել Անդրկովկասյան կորպուս: Մինչ այդ՝ 1919 թ. հունիսին, դիմելով երեք հանրապետություններին, նա փորձում էր համոզել, որ Կամավորական բանակը պատերազմ է մղում բացառապես բոլշևիկների դեմ և Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ զավթողական նկրտումներ չի ունեցել ու չունի, և որ իրենց «նպատակն է կարճ ժամկետում երկիրը հասցնել մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողով, և թող նա որոշի հետագա պետական կյանքի հարցերը և կարգը՝ ժողովրդական կյանքի ներքին լայն ինքնավարության հիման վրա»[2]: Գեներալ Ա. Դենիկինը դիմումը եզրափակում է հետևյալ կերպ. «Հույս ունեմ, որ Անդրկովկասի ժողովորդների պետական բանականությունը նրանց ցույց կտա միակ ճիշտ ուղին, որը նրանց դուրս կբերի լուսավոր ապագա, և նրանք մեզ հետ միասին, ձեռք ձեռքի տված կգնան ընդհանուր պետական շինարարության ճանապարհով՝ ուշադրություն չդարձնելով թշնամիների նենգ չարախոսություններին»[3]:

Համոզվելով, որ Անդրկովկասյան հանրապետությունների անկախության գործընթացն անդառնալի է, գեներալ Ա. Դենիկինը փոխում է իր գործելակերպը, փորձում նրանց համոզել՝ մնալու Ռուսաստանի հարավի կազմում: Հունիսին «Հատուկ խորհրդակցության» պրոպագանդայի բաժինը որոշեց Կամավորական բանակի խնդիրների ու նպատակների մասին գեներալ Ա. Դենիկինի դիմումը լայն քարոզչությամբ հասցնել Անդրկովկասի ժողովուրդներին: Այդ նպատակով Կամավորական բանակի գլխավոր շտաբում ստեղծվեց պրոպագանդայի հատուկ բաժին, որը ղեկավարում էր պրոֆեսոր Սոկոլովը[1]: Դրան զուգահեռ՝ Կամավորական բանակի հրամանատարությունը փորձեց ձևավորել Անդրկովկասյան կորպուս, սակայն. «...*Կամաւորական զօրքի գործակալներին,- տեղեկացնում է Լ. Թումանյանը,- անգլիացիները ոչ միայն աջակցութիւն չեն ցոյց տալիս այլ և արգելում են*»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Սակայն խորհրդային իշխանության դեմ կռվելու նպատակով անգլիացիները թույլատրեցին Ա.Դենիկինի ներկայացուցիչներին Կամավորական բանակը համալրելու համար *Բաթումում հավաքագրման գործակալություն ստեղծել*[3]: Գեներալ Ա. Դենիկինը և Բաթումի Ռուսական ազգային խորհուրդը հայտարարեցին, որ ռուսների հույսերը և սպասելիքները չիրականացան, քանի որ անգլիացիները եկել են ոչ թե դաշնակցային պարտավորություններ կատարելու, այն է՝ Ռուսաստանի հարավին օգնելու, այլ Անդրկովկասում իրենց քաղաքական ու տնտեսական շահերը հետապնդելու համար[4]:

Հունիսի 12-ին Բաթումում սկսեց գործել Կամավորական բանակի հավաքագրման գործակալությունը, որը ղեկավարում էր գեներալ Նատիևը (շտաբի պետն էր գնդապետ Դիտենկոն)[5]: Իրականում այդ գործակալությունը Կամավորական բանակի բաժանմունք էր, որով փորձում էին Անդրկովկասյան գաղտնի կորպուս ձևավորել: Սակայն դա լուրջ դիմադրության հանդիպեց անգլիական զինվորական հրամա-

[1] Տե՛ս Революция и гражданская война в описаниях белогвардейцев, с. 93:
[2] ГА РФ, ф. 5827, оп. 1, д. 118, л. 198:
[3] Նույն տեղում:

[1] Տե՛ս ГА РФ, ф. 440, оп. 1, д. 34[a], л. 59:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 35:
[3] Տե՛ս *Деникин А.*, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 209:
[4] Տե՛ս նույն տեղը, էջ 210:
[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 53, թ. 170, գ. 254, թ. 143, ֆ. 276, ց. 1, գ. 65, թ. 52,53:

նատարության և Վրաստանի կառավարող շրջանների կողմից, որոնք հայտարարում էին, թե Կամավորական բանակը ձգտում է Անդրկովկասյան կորպուսի միջոցով նվաճել Վրաստանը[1]:

Հունիս 16-ին Բաթումում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գ. Եդիգարյանը Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղղված նամակում տեղեկացնում էր, որ մի քանի օրվա ընթացքում Բաթումի Կամավորական բանակի բաժանմունքում ցուցակագրվել են մի քանի հարյուր ախալքալակցիներ և մասամբ ախալցխացիներ. «...Ցուցակագրող կամաւորներին,- նշում էր նա,- առաջարկւում է հաց, հագուստ և 600ռ. ամսական: Վրաց շրջաններում դժգոհութիւն կայ այդ առթիւ. Նախ՝ որ Բաթումում է կազմակերպւում, երկրորդ՝ որ պետը վրացի է և երրորդ՝ որ հայեր են ցուցակագրւում»[2]: Գ. Եդիգարյանը նկատում է, որ անախորժություններից խուսափելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ժամանակավորապես արգելելու Հյուսիսային Կովկասից հայ գաղթականների վերադարձը Բաթում[3]: Բանն այն էր, որ մայիս-հունիսին գեներալ Ա. Դենիկինի թույլտվությամբ հյուպատոսարանի և Հայկական կամիր խաչի ջանքերով շուրջ 50 հազար հայ գաղթականներ, որոնցից յուրաքանչյուրին «Հատուկ խորհրդակցության» մատակարարման բաժինը տրամադրել էր հինգ կիլոգրամ ալյուր, Հյուսիսային Կովկասից անվճար տեղափոխվել էին Բաթում՝ Հայաստան մեկնելու նպատակով[4]: Դրանք հիմնականում հայկական ջարդերի և տեղահանության առաջին զոհերից էին՝ պատսպարված Ռուսաստանի

[1] Տե՛ս *Деникин А.*, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 209:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 53, թ. 170, ֆ. 276, ց. 1, գ. 65, թ. 52, 53:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 7:

տարբեր քաղաքներում և ավաններում: Նրանք հույս էին տածում, որ Երևանից մեկնելու են Արևմտյան Հայաստան:

Անգլիական զինվորական առաքելությունն արգելեց Բաթումի Կամավորական բանակի բաժանմունքի գործունեությունը, իսկ հունիսի 15-ին գեներալ Նատիևը և նրա համիարզը սպանվեցին վրացիների կողմից: Այդ լուրը մեծ վրդովմունք առաջ բերեց ռուսական քաղաքական շրջաններում: Գեներալ Ա. Դենիկինը գրում է, որ իր բողոքին անգլիական զինվորական հրամանատարությունը խուսափողական պատասխան տվեց և հանցագործներին բացահայտելու փորձ անգամ չարեց[1]:

Այսպիսով, միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի պաշտոնական հրապարակումը Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների մեջ առաջ բերեց Հայաստանի նկատմամբ քաղաքական տրամադրությունների որոշակի փոփոխություն, բացասական վերաբերմունք անկախության գործընթացի նկատմամբ, բայց աշխարհաքաղաքական նոր իրադարձությունները այլևս չէին կարող կասեցնել հայկական անկախ պետության հաստատման գործընթացը: Դա նշանավորում էր նաև հայ-ռուսական հարաբերությունների նոր փուլ:

[1] Տե՛ս *Деникин А.*, Очерки русской смуты: В.3 книгах.- Книга 3/Т. 4, Т.5. Вооруженные силы Юга России, с. 209:

8. Վրաց-ադրբեջանական հակառուսական ռազմական դաշինքը և Հայաստանի դիրքորոշումը

Անդրկովկասի նորաստեղծ հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, ձեռք էին բերել իրենց անկախությունն ու ինքնուրույնությունը, սակայն նրանց միջազգային դրությունը անկայուն էր ու փխրուն: Այդ առումով հատկապես ծանր ու անորոշ վիճակում էր գտնվում Հայաստանի Հանրապետությունը, որի կրծքին չոքել էր Թուրքիան և ձգտում էր խեղդել ու վերացնել դեռ սաղմնային այդ պետությունը, ավարտին հասցնել հայության բռնաջնջումը: Այդ հարցում նրան փաստորեն աջակցում էր հատկապես Ադրբեջանը, որը թշնամաբար էր տրամադրված Հայաստանի Հանրապետության նկատմամբ և փորձում էր որքան հնարավոր է շատ տարածքներ պոկել նրանից:

Անդրկովկասում ստեղծվել էր բավական բարդ իրավիճակ: Անգլիան այստեղ վարում էր իր շահերից բխող երկդիմի քաղաքականություն: Թուրքիան շարունակում էր իր զավթողական քաղաքականությունը: Ռուսաստանի հարավում գտնվող գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակը, ծովակալ Ա. Կոլչակի հետ միասնական ճակատ կազմած, պայքարում էր բոլշևիզմի դեմ՝ ձգտելով վերակագնել ռուսական նախկին կայսրությունը 1914 թ. սահմաններով: Դա սպառնում էր Անդրկովկասի հանրապետությունների անկախությանը: Այդ առնչությամբ հատկապես խիստ անհանգստանում էին Վրաստանն ու Ադրբեջանը և ձգտում էին ստեղծել ռազմական դաշինք ակնկալվող ռուսական վտանգի դեմ: Գեներալ Ա. Դենիկինը փորձում էր հանգստացնել այդ հանրապետությունների իշխանություններին՝ հայտարարելով, որ իր գլխավոր նպատակը պայքարն է բոլշևիզմի դեմ:

1919 թ. ապրիլին գեներալ Ա. Դենիկինն իր ռազմավարությունը իրականացնելու համար հասկացնել տվեց անգլիական զինվորական հրամանատարությանը, որ ***Հյուսիսային Կովկասում բոլշևիզմի տապալման, դրա տարածումը կանխելու և խորհրդային Ռուսաստանին Բաքվի վառելանյութից օգտվելու հնարավորությունից զրկելու համար Կամավորական բանակին անհրաժեշտ է հաստատվել Անդրկովկասի սահմանների երկայնքով***: Անգլիական զինվորական հրամանատարությունը համաձայնեց, որ Կամավորական բանակը բոլշևիկների դեմ պայքարելու համար մտնի Դաղստան՝ միաժամանակ գեներալ Ա. Դենիկինին հավաստիացնելով, թե կջանա, որ կովկասցիները չեզոքություն պահպանեն Կամավորական բանակի նկատմամբ: ***Անգլիական զինվորական հրամանատարությունը գեներալ Ա. Դենիկինին զգուշացրեց նաև, որ Մեծ Բրիտանիայի պահանջները խախտելու դեպքում իրենց կառավարությունը հարկադրված կլինի ոչ միայն հրաժարվելու նրան աջակցելուց, այլև ընդհանրապես կդադարեցնի բոլոր տեսակի նյութական աջակցությունը***[1]: Ճիշտ է, Բրիտանական զինվորական հրամանատարությունը ընդունեց գեներալ Ա. Դենիկինի պայմանները, սակայն երբեք չէր հանդուրժի վերջինիսի ներխուժումը հարավ:

Հայաստանի կառավարությունը, հանրապետության անվտանգության շահերից ելնելով, ընդունելի էր համարում Կամավորական բանակի հաստատվելը Հյուսիսային Կովկասի, Վրաստանի ու Ադրբեջանի սահմանների երկայնքով: Հայաստանի Հանրապետության կառավարությանը հայտնի էր, որ Լեռնականների Հանրապետությանն օգնում են Թուրքիան, Ադրբեջանը և անգամ Վրաստանը՝ այն համարելով

[1] Տես Революция и гражданская война в описаниях белогвардейцев, М., 1991, с. 91:

Թուրքիայի և համաիսլամական, համաթուրանական ու բոլշևիկյան ուժերի հավաքագրման կարևոր կենտրոն: 1919 թ. մայիսի կեսին Կամավորական բանակը գրավեց Լեռնականների Հանրապետությունը, ամբողջ Դաղստանը՝ Պետրովսկը, Թեմիր Խան Շուրան ու Դերբենդը՝ ռազմավարական նշանակության նավահանգստով հանդերձ[1]: Լեռնականների Հանրապետության կառավարությունը հրաժարվեց իր լիազորություններից, և Կամավորական բանակի համաձայնությամբ իշխանությունը անցավ գեներալ Խալիլովին, որին հանձնարարվեց կազմել նոր կառավարություն[2]: Անգլիական զինվորական հրամանատարությունը տհաճությամբ ընդունեց Դաղստանում ռուսական գեներալի նշանակումը: Գեներալ Ա. Դենիկինը Ադրբեջանի կառավարությունից պահանջեց Կամավորական բանակի տնօրինությանը հանձնել երկաթուղագիծը Բալաջար կայարանով, և չխոչընդոտել 80 հազար ռուսական զինվորների անցումը Բաքվի վրայով դեպի Անդրկասպյան երկրներ բոլշևիկների դեմ կռվելու համար[3]:

Որպեսզի տպավորություն չստեղծվի, թե նվաճողական քաղաքականություն են վարում, գեներալ Ա. Դենիկինը մայիսի 18-ին Եկատերինոդարում անգլիական զինվորական առաքելության (հետո պարզվեց, որ Դաղստանի մի մասը անգլիացիները համարում էին իրենց ազդեցության գոտի) հրամանատար գեներալ Չ. Բրիգսին հղեց հետևյալ հեռագիրը. «Վստահեցնում եմ, որ Պետրովսկի ու Դերբենդի գրավումը բացառապես ուղղված է բոլշևիկների դեմ: Կամավորական բանակն առաջ չի շարժվի, եթե Ադրբեջանի կառավարության կողմից թշնամական գործողություններ չնկատվեն»[1]: Սակայն Ադրբեջանի կառավարությանը և քաղաքական շրջաններին գեներալ Ա. Դենիկինի հավաստիացումը հավատ չէր ներշնչում, և նրանք կարծում էին, որ այդ ամենը Բաքուն գրավելու պատրվակ է միայն: Ադրբեջանական մամուլում հրապարակվեցին նյութեր Կամավորական բանակի գործողությունների դեմ: Այսպես, «Азербайджань» լրագիրը մայիսի վերջերին, դժգոհելով անգլիական զինվորական հրամանատարության անտարբերությունից, գրում է, որ երկու հարց է դրված՝ ազգակից ու հոգեհարազատ լեռնականների ճակատագիրը և Կամավորական բանակի կողմից Ադրբեջանի բռնազավթումը[2]: Այնուհետև լրագիրը գտնում է, որ անդրկովկասյան երեք հանրապետությունները Կամավորական բանակին դիմակայելու համար պետք է միացյալ ուժերով հանդես գան:

Մայիսի 30-ին ռուսական հետախուզությունը Պյատիգորսկից «Հատուկ խորհրդակցության» քաղաքական գրասենյակի պետ գնդապետ Դ. Չայկովսկուն տեղեկացրեց, որ Բաքվում հրավիրվել է Ադրբեջանի պառլամենտի արտակարգ նիստ, որտեղ քննարկվել է Վրաստանի հետ հակառուսական ռազմական պայմանագիր կնքելու հարցը: Պառլամենտը որոշել է, որ Դաղստանի սահմաններից Կամավորական բանակը հետ մղելու համար առաջինը հարձակվելու էր Վրաստանը, այնուհետև՝ Ադրբեջանը: Ռուսաստանի հարավի հետախուզությունը նաև տեղեկացնում էր, որ թեև Թուրքիայից հրավիրել են սպաներ, սակայն Ադրբեջանում զորահավաքը շատ դանդաղ և անկազմակերպ է ընթանում[3]:

Գեներալ Ա. Դենիկինը ձգտում էր խուսափել Հյուսիսային

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 362, թ. 10:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, մաս II, թ. 398:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 126, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88, գ. 291, մաս II, թ. 399, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 36, «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 14 օգոստոսի 1919, էջ 341-342:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, մաս II, թ. 399:
[3] Տե՛ս РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 12, л. 95:

Կովկասի և Անդրկովկասի գրավված սահմանների երկարությամբ ռազմական նոր օջախներ ստեղծելուց, որովհետև պատրաստվում էր Մոսկվայի դեմ վճռական հարվածի: Նա միաժամանակ համոզված էր, որ անգլիական զինվորական հրամանատարությունը կարգելի ռազմական ուժի կիրառումը Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ, թույլ չի տա սպառնալիք ստեղծել նրանց անկախությանը: Նույն օրը՝ մայիսի 30-ին, գեներալը դարձյալ հեռագիր հղեց Եկատերինոդարում անգլիական զինվորական առաքելության հրամանատար գեներալ Չ. Բրիգսին՝ հավաստելով, որ իր բանակը չի անցնի Դաղստանի արևելյան սահմանը, եթե Ադրբեջանի կողմից չձեռնարկվեն թշնամական գործողություններ[1]:

Հունիսի 5-ին Ադրբեջանի պառլամենտում վարչապետ Ն. Ուսուբբեկովն ընթերցեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության ռազմածովային բաժնի պետ գեներալ Ա. Լուկոմսկու հեռագիրը. «Պատիվ ունեմ պաշտոնապես հայտնելու, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը ընդունում է Ադրբեջանի՝ որպես Ռուսաստանի մի մասի անկախ գոյությունը մինչև հարցի լուծումը Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի կողմից»[2]: Սակայն նույն նիստում Ադրբեջանի պառլամենտը, երկյուղելով և չհավատալով Կամավորական բանակի հավաստիացումներին, ստեղծեց պաշտպանության պետական կոմիտե, որին տրվեցին արտակարգ լիազորություններ՝ օրենքների գործողության դադարեցում, ֆինանսների անսահմանափակ տնօրինում, կամավորական ջոկատների կազմավորում[3], իսկ հունիսի 11-ին Ադրբեջանում հայտարարվեց ռազմական դրություն[1]:

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 42:
[3] Տե՛ս *Հովհաննիսյան Ռ.*, Հայաստանի Հանրապետություն: Առաջին տարին, 1918-1919, Հատոր I, էջ 416:

Հենց այդ ժամանակ էլ Ադրբեջանի իշխանությունները դրսևորեցին խիստ թշնամական ու ագրեսիվ վերաբերմունք Հայաստանի Հանրապետության ու հայության նկատմամբ. արյուն թափվեց Շարուր-Նախիջևանում[2] և Ղարաբաղում[3]: Ադրբեջանի կառավարությունը, օգտագործելով ռուսական վտանգի առիթը, փորձեց ներսից կործանել Անդրկովկասում Ռուսաստանի հարավի միակ բարեկամ Հայաստանի Հանրապետությունը: 1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի Հանրապետությունում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ն. Խան-Թեքինսկին Երևանից իր կառավարությանը հեռագրում է, որ հայերն ուրախությամբ կընդունեն, եթե Կամավորական բանակը գրավի Բաքուն, հետևապես. «***Կամավորական բանակի հետ բարդությունների դեպքում Հայաստանը մեր նկատմամբ թշնամական դիրք կբռնի, ուստի Շարուր-Նախիջևանի շրջանից պետք է վտանգ ստեղծել Հայաստանի համար***»[4] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հունիսի 8-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Մ. Զաֆարովը Ն. Խան-Թեքինսկուն պատասխանեց, որ հավանություն է տալիս Շարուր-Նախիջևանի հետ կապ հաստատելու նպատակով նրա ձեռնարկած քայլերին և համաձայն է դրամ տրամադրել «...զինվորական կազմակերպութեան համար»[5]: Հունիս-հուլիսին Շարուր-Նախիջևանում բռնկված հակահայկական ապստամբությունը վերածվեց Հայաստանի Հանրապե-

[1] Տե՛ս ***Кадишев А.***, Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960, էջ 198:
[2] Մանրամասն տես ***Զոհրաբյան Է.***, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտ.-1920 թ. ապրիլ), էջ 126-184:
[3] Մանրամասն տես ***Հարությունյան Հ.***, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., էջ 122-185:
[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 26, տես նաև ***Стеклов А.***, Армия мусаватского Азербайджана, Баку, 1928, с. 34-35:
[5] «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, 1931, N 9, սեպտեմբեր, էջ 197:

տության արևելյան, հարավային և արևմտյան սահմանների վրա համաիսլամական շարժման[1]: Միայն հայկական բանակի ու ժողովրդի հերոսության շնորհիվ չկործանվեց Հայաստանի Հանրապետությունը:

Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը հակահայկական նույնպիսի գործողություններ կիրառեց արցախահայության նկատմամբ[2]: Նրա հրամանով 1919 թ. ամռանը մահմեդական հրոսակներն ավերեցին Ղարաբաղի հայկական 6 գյուղ և սրի քաշեցին մոտ 600 գյուղացիների[3]:

Այդ ժամանակ Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական շրջաններում տարածվել էր այն կեղծ լուրը, թե իբր Հայաստանի Հանրապետությունը գաղտնի ռազմական դաշինքի մեջ է Կամավորական բանակի հետ, և վերջինիս հարձակման դեպքում իրենց թիկունքն անպաշտպան կմնա հայկական բանակի հնարավոր հարձակումներից: Այդ կեղծ լուրը տարածելուն նպաստել էին նաև Անդրկովկասի բոլշևիկ գործիչները՝ Հայաստանի Հանրապետությանը ստահոդ մեղադրանքներ վերագրելով: 1919 թ. մայիսի 22-ին Ա. Միկոյանը ՌԿ(բ)Կ կենտկոմին հասցեագրած նամակում գրում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն «ուղղակի գաղտնի ռազմական դաշինքի մեջ է Ա. Դենիկինի հետ, իսկ հայկական 2-րդ դիվիզիան համարվում է նրա պահեստային ուժը և ցանկացած ժամանակ պատրաստ է հարձակման»[4]: Ավելի ուշ՝ հունիսի կեսերին, Ս. Օրջոնոկիձեն ժողովրդական կոմիսարների խորհրդին, ՌԿ(բ)Կ կենտկոմին և 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդին ուղղած

[1] Տե՛ս *Զոհրաբյան Է.*, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտ.-1920 թ. ապրիլ), էջ 183:
[2] Տե՛ս *Հարությունյան Հ.*, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., 1996, էջ 167:
[3] Տե՛ս «Դրոշակ» ամսագիր, Բոստոն, 1931, N 9, սեպտեմբեր, էջ 198:
[4] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 318, թ. 3:

զեկույցում գրում է, որ «Հայաստանը գաղտնի ռազմաքաղաքական դաշինք ունի Ա. Դենիկինի հետ և կարող է թիկունքից հարվածել Վրաստանին ու Ադրբեջանին՝ Բորչալուի գավառը և Ղարաբաղը Հայաստանին միացնելու համար»[1]: Հունիսին նույն կարծիքը կրկնեց նաև Վրաստանի զինվորական նախարարի օգնական Գեդևանովը Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի հետ հանդիպման ժամանակ: Նախարարի օգնականը հաղորդեց, թե իրենց հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունը գաղտնի ռազմական դաշինք է կնքել գեներալ Ա. Դենիկինի և ծովակալ Ա. Կոլչակի հետ: Վրացական կողմի այդ պնդման դրդապատճառն ու նպատակը հասկանալի են: Անհասկանալի է, թե բոլշևիկ գործիչներն ինչո՞ւ էին այդպիսի կեղծ լուրեր տարածում, ո՞րն էր նրանց իրական նպատակը: Գաղտնիք չէր, որ Հայաստանի Հանրապետությունը կապերի մեջ էր Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ: Ուստի, Անդրկովկասի բոլշևիկներն այդ ճանապարհով հարվածում էին իրենց դեմ պայքարող ուժերի թվացյալ դաշնակցին՝ Հայաստանի Հանրապետությանը, որն իրականում ***ռազմական ոչ մի դաշինք էլ չուներ ոչ գեներալ Ա. Դենիկինի և ոչ էլ ծովակալ Ա. Կոլչակի հետ, ոչ էլ մասնակցում էր բոլշևիզմի դեմ մղվող պայքարին.*** Ավելին, ինչպես նշել ենք, դեռ 1919 թ. փետրվար-մարտից Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հետ Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական շփումները սառել էին: Այդ է վկայում նաև գեներալ Ա. Դենիկինը. «...Մարտից մինչև օգոստոս,- գրում է նա,- Հայաստանի և Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության միջև պաշտոնական շփումներ չեն եղել, չնայած

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 362, թ. 2-3:

Եկատերինոդարում էր գտնվում Կուբանի կառավարությունում Հայաստանի դեսպան Հ. Սաղաթելյանը: Վերջինս գաղտնի այցելում էր ինձ ու գեներալ Դրոզդովին և խնդրում էր չմեղադրել իր կառավարությանը այն դիրքորոշման համար, որը նա որդեգրել էր Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության հանդեպ, քանի որ լրիվ կախման մեջ էր արտաքին ուժերից և չէր ցանկանում գրգռել առանց այդ էլ հայերի «կոկորդից բռնած» Վրաստանին: Ես պատասխանեցի, որ ցավակցում եմ դժբախտ հայ ժողովրդին, հասկանում եմ կառավարության ծանր վիճակը և նշանակություն չեմ տալիս մեզ առնչվող հայտարարություններին»[1]: Այդ հարաբերությունների սառեցումն ուներ ավելի լուրջ պատճառներ, քան ներկայացնում է գեներալ Ա. Դենիկինը:

Իրականում գոյություն չունեցող «ռազմական գաղտնի դաշինքի» մասին Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների հասարակական, քաղաքական շրջաններում ձևավորված կարծիքը անցանկալի հետևանքներ ունեցավ Հայաստանի Հանրապետության համար: Ավելի սրվեցին առանց այն էլ լարված Երևան-Թիֆլիս, Երևան-Բաքու հարաբերությունները: Սակայն այդ հանգամանքը գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակի համար նպաստավոր եղավ: Փաստորեն դա մի գործիք էր գեներալի ձեռքին՝ զսպելու Վրաստանի ու Ադրբեջանի ռազմատենչ նկրտումները Կամավորական բանակի նկատմամբ: Գեներալ Ա. Դենիկինը գրում է. «***«Հայաստանի հետ մեր դաշինքը», որն այնպես վախեցնում էր վրացիներին և դուր չէր գալիս անգլիացիներին, վրացական առասպելներից մեկն է: Սակայն, անկասկած, այն մեզ մեծ ծառայություն մատուցեց՝ ցրելով Ադրբեջանի ու Վրաստանի ուժերը և բավականին սահմանափակելով նրանց ռազմատենչ տրամադրությունները: Նրանք կարծում էին, որ դեպի հյուսիս հարձակման դեպքում իրենց թիկունքն անպաշտպան կմնա հայկական բանակի հնարավոր հարձակումներից»***[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ավելին, Վրաստանն ու Ադրբեջանը անգամ չէին համարձակվում ռազմական գործողություններ սկսել Կամավորական բանակի դեմ և կամ իրենց զորքը կենտրոնացնել Հյուսիսային Կովկասի սահմանների երկայնքով:

Թիֆլիսում Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» և Վրաստանի կառավարության միջև մայիսի 23-ի բանակցություններն անարդյունք էին, և որևէ համաձայնություն չէր հաստատվել[2]: Կամավորական բանակը, Վրաստանի համար սպառնալիք ստեղծելով, փորձում էր թուլացնել ու սահմանափակել նրա ռազմատենչ տրամադրությունները և հարկադրել սևծովյան շրջաններից դուրս հանելու վրացական զինված ուժերը: Ստեղծված իրադրության վերաբերյալ վրացական «Борьба» լրագիրը մայիսի 28-ի համարում այն միտքն էր արտահայտում, որ անհրաժեշտ է Վրաստանի ու Ադրբեջանի սահմանները պաշտպանել զենքի ուժով[3]:

1919 թ. հունիսի 1-ին Թիֆլիսում հրավիրվեց Վրաստանի Սահմանադիր ժողովի արտահերթ նիստ, որտեղ քննարկվեց Ադրբեջանի հետ հակառուսական դաշինք կնքելու հարցը: Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորին նիստում հայտարարեց, որ գեներալ Ա. Դենիկինի մութ ուժերն օղակում են Անդրկովկասը և տարածվել են մինչև Ադրբեջանի ու Վրաստանի սահմանները: Հնարավոր

---

[1] ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ т. 4, т. 5. Вооруженные силы Юга России, М., 2003, с. 253.

[1] Նույն տեղը:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 291, մաս III, թ. 398, 427:
[3] Տե՛ս «Борьба», газета, Тифлис, 28 мая 1919:

է, որ մի քանի օրից Վրաստանը ընդհարվի նաև Կամավորական բանակի հետ Սոչիի ճակատում[1]: Բաթումի նահանգապետ էր նշանակվել գեներալ Ի. Ռոմանովսկին, որն ուներ կամավորական փոքր զորախումբ: Ե. Գեգեչկորին հայտնեց, որ Ադրբեջանը համախոհ է Վրաստանին, և նրա կառավարությունն արդեն զորք է ուղարկել՝ սահմանները պաշտպանելու: Այնուհետև նախարարը նշեց, որ վտանգը ոչ թե գեներալ Ա. Դենիկինի կողմից է, այլ իրենց մեջ է, և «...եթե մեր մեջ կրկին սկսվեն խոսակցությունները չեզոքության մասին և այն մասին, որ տվյալ դեպքում մենք չենք գործում ընդհանուր թշնամու դեմ, ապա այդ ժամանակ հնարավոր է աղետը»[2]: Նա ակնարկում էր Հայաստանի Հանրապետության կառավարության չեզոք վերաբերմունքը Ադրբեջանի և Վրաստանի նկատմամբ: Ելույթի վերջում նախարարը կասկած հայտնեց, որ Հայաստանի Հանրապետությունը չի միանա գեներալ Ա. Դենիկինի դեմ ձևավորվող դաշինքին[3]: Այդ ենթադրությունն անհիմն չէր, թեև այդ ժամանակ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հետ Հայաստանի Հանրապետության կառավարության հարաբերությունները անորոշ էին:

1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի խորհրդում Ա.Խատիսյանը հայտնեց, որ մինչև այդ օրը Կամավորական բանակից Հայաստանի Հանրապետությանը որևէ պաշտոնական կամ ոչ պաշտոնական պահանջ կամ առաջարկություն չի ներկայացվել[4]: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հունիսի 7-ին Թիֆլիսում դի-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 26, ֆ. 200, ց. 1, գ. 291, մաս III, թ. 398, 427: «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 3 հունիս 1919: «Վերածնունդ» շաբաթաթերթ, 7 օգոստոսի 1919, Փարիզ, էջ 326-327:
[2] «Борьба», газета, Тифлис, 20 июня 1919:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, մաս III, թ. 427:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 36, «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Երևան, 6 հունիսի 1919:

վանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանից շտապ պահանջեց օգտագործել հնարավոր բոլոր միջոցները՝ ճշտելու, թե ինչպիսին է Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ[1]:

Անշուշտ Կամավորական բանակից Հայաստանի Հանրապետությանը անմիջական վտանգ չէր սպառնում, քանզի չկար շփման ընդհանուր գիծ, բայց եթե գեներալ Ա. Դենիկինն իր բանակով մտներ Անդրկովկաս, ապա լուրջ վտանգ կսպառնար ոչ միայն Վրաստանի ու Ադրբեջանի, այլև Հայաստանի Հանրապետության անկախությանը: Առաջ էր գալիս միացյալ ուժերով գեներալ Ա. Դենիկինի դեմ պայքարելու խնդիրը: Այն քննարկվեց Անդրկովկասյան հանրապետությունների՝ Թիֆլիսում հրավիրված համաժողովում, որին մասնակցում էր նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի գլխավորությամբ (անդամներ՝ Ս. Հարությունյան, Ս. Մամիկոնյան, խորհրդականներ՝ Ն. Աղբալյան, Խ. Վերմիշյան, Լ. Եվանգուլյան): Որոշված էր համաժողովին մասնակցել անդրկովկասյան յուրաքանչյուր հանրապետությունից երեք ներկայացուցիչ, որից մեկը անպատճառ պետք է լիներ արտաքին գործերի նախարարը[2]:

Վրաստանն ու Ադրբեջանը համատեղ դիվանագիտական ճնշում գործադրեցին հայկական պատվիրակության վրա՝ միանալու ձևավորվող հակառուսական ռազմական դաշինքին, սակայն Հայաստանի Հանրապետության պատվիրակության դիրքորոշումը անփոփոխ էր: Վրացական և ադրբեջանական պատվիրակությունները փոխեցին իրենց մարտավարությունը և հարցը տեղափոխեցին քննարկելու

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 41, գ. 211, թ. 153, ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 80:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 111, թ. 46:

Անդրկովկասյան համաժողովի լիագումար նիստում: Հունիսի 9-ի համաժողովի վերջին նիստում Վրաստանի պատվիրակությունը առաջարկեց քննարկել և ընդունել բանաձև գեներալ Ա. Դենիկինի դեմ ռազմական դաշինք ստեղծելու մասին[1]: Ադրբեջանական կողմը պաշտպանեց այդ առաջարկը: Հայաստանի Հանրապետության պատվիրակության համար ստեղծվեց բարդ իրավիճակ. կամ պետք էր միանալ առաջարկվող հակառուսական ռազմական դաշինքին, կամ հրաժարվել: Թեև Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև փետրվար-մարտ ամիսներից պաշտոնական շփումները սառել էին, սակայն Հայաստանի Հանրապետությունը չէր կարող միանալ այն դաշինքին, որն ուղղված էր գեներալ Ա. Դենիկինի դեմ: Դեռ մայիսի վերջին Վրաստանի ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամների հետ առանձնազրույցի ժամանակ տեղեկացել էր, որ հայկական կողմը տրամադիր չէ միանալու այդ զինակցությանը[2]: Դա, ինչպես վերևում ասվեց, ուներ իր լուրջ պատճառները: Բանն այն էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարության համար օրակարգի հարց էր Ռուսաստանի հարավում ապաստանած տասնյակհազարավոր հայ գաղթականների կենսական խնդիրների լուծումը, որն առանց Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» աջակցության հնարավոր չէր: Հայաստանի Հանրապետությունը նաև ակնկալում էր այդ երկրամասերից ներկրել հացահատիկ, զենք, զինամթերք և կենսականորեն անհրաժեշտ այլ նյութեր ու ապրանքներ: Բացի

[1] Տե՛ս «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 13 հունիսի 1919:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 111, թ. 65: «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, փետրվար, 1968, էջ 6:

այդ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձգտում էր իր առջև ծառացած մի շարք ծայրահեղ խնդիրներ լուծելու գործում ստանալ գեներալ Ա. Դենիկինի բարյացակամ վերաբերմունքն ու աջակցությունը: Ուստի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր կարող հրաժարվել Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» քաղաքական, տնտեսական ու ռազմավարական հովանուց: Սակայն դաշինքից հրաժարվելը ավելի էր խորացնելու անջրպետը Հայաստանի Հանրապետության երկու հարևան պետությունների միջև: Կասկածից վեր է, որ երկու տարբերակներից յուրաքանչյուրի ընտրությանը հետևելու էին անցանկալի հետևանքներ Հայաստանի Հանրապետության համար: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության պատվիրակության առանցքային խնդիրն էր խորապես քննարկել յուրաքանչյուր տարբերակ և կառավարության համաձայնությամբ ընդունել ավելի իրատեսական որոշում և ներկայացնել համաժողովին:

Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակները համաժողովում հայտարարեցին, որ իրենց կառավարությունները հանգել են լիակատար համաձայնության և սպասում են Հայաստանի Հանրապետության մասնակցությանը ձևավորվող ռազմական դաշինքին[1]: Ս. Տիգրանյանը պատասխանեց, որ այդ խնդրի շուրջ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը իր կառավարությունից ունի հրահանգ՝ այդ հարցին անցնել միայն սահմանավեճերը փոխադարձ համաձայնությամբ լուծելուց հետո, ինչը, սակայն, չհաջողվեց համաժողովի նիստերի ընթացքում: Ս.Տիգրանյանը հայտարարեց, որ կխորհրդակցի իր կառավարության հետ և փոխանցի

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 111, թ. 65: «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, փետրվար, 1968, էջ 6:

նրա պատասխանը: Այնուհետեև, դիմելով Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակներին, նա խնդրեց պատասխանել. «Այդ վտանգը միայն հիւսիսից է սպառնում, թէ հարաւից էլ, որովհետև մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն մենք կանգնած ենք էրզրումում կենտրոնացուած տաճկական զօրքի արշաւանքի վտանգի առաջ: Կուզեմ հարցնել, առհասարակ, բոլոր վտանգների հանդէպ պետք է միջոցներ ձեռք առնել, թէ որոշապես Դենիկինի Կամաւորական բանակի դէմ»[1]: Անդրկովկասի հանրապետությունների ռազմական դաշինքի նպատակն էր միացյալ ուժերով պայքարել իրենց սպառնացող ցանկացած արտաքին վտանգի դեմ: ***Սակայն Վրաստանն ու Ադրբեջանը խնդրին մոտենում էին խիստ միակողմանի՝ ելնելով միայն իրենց շահերից, անտեսելով Թուրքիայից Հայաստանին սպառնացող վտանգը***: Անշուշտ, եթե Հայաստանի Հանրապետությունն իր հարևաններին առաջարկեր միացյալ ուժերով պայքարել թուրքական վտանգի դեմ, նրանք չէին համաձայնի: Խորապես համոզված լինելով դրանում՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն ընդունեց միանգամայն ճիշտ դիրքորոշում: Ս. Տիգրանյանը հայտարարեց, որ Թուրքիայից հնարավոր վտանգի պատճառով Հայաստանի Հանրապետությունը չի կարող իր ուժերը մասնատել, թուլացնել, քանի որ Թուրքիայից սպասվող վտանգը Հայաստանի Հանրապետության համար ավելի մեծ սպառնալիք է, քան գեներալ Ա. Դենիկինի արշավանքը: Ուստի Հայաստանի Հանրապետությունն այդ խնդրում գերադասում է ***միայն չեզոքություն պահպանել***[2]:

Առաջ անցնելով նշենք, որ հունիսի 26-ին Թիֆլիսում Լ. Եվանգուլյանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարար

[1] «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 14 հունիսի 1919:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 93, թ. 213: «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 23 օգոստոսի 1919, էջ 376:

Մ. Ձաֆարովի հանդիպման ժամանակ վերջինս դժգոհեց, որ Հայաստանի Հանրապետությունը չզինակցեց այդ դաշինքին: Լ. Եվանգուլյանի այն հարցին, թե հարավից թուրքերի հարձակման դեպքում ինչպիսին է լինելու նրանց կառավարության դիրքորոշումը, Մ. Ձաֆարովն առանց թաքցնելու պատասխանեց՝ համենայնդեպս Ադրբեջանը չի օգնի Հայաստանին[1]:

Առաջարկվող դաշինքին միանալուց Հայաստանի Հանրապետությանը հետ էր պահում նաև Վրաստանի ու Ադրբեջանի բացահայտ անբարյացկամ ու թշնամական վերաբերմունքը իր նկատմամբ: Այդ իրողությունն արձանագրվեց նաև հունիսի 14-ին Թիֆլիսում «Աշխատավոր», «Ժողովրդի ձայն», «Кавказское слово», «The Tranckaucasian Post» լրագիրների խմբագիրների և Լ. Եվանգուլյանի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ: Քննարկելով «Կամավորական բանակի շարժման մասին դէպի Անդրկովկաս եւ Հայաստանի բռնելիք դիրքի մասին» հարցը՝ խորհրդակցությունը նշեց, որ «հայ ժողովուրդը հոգեբանօրէն չի կարող անցնել առաջարկուող պաշտպանողական դաշնակցութեան կողմը ի նկատի ունենալով Վրաստանի եւ Ադրբէջանի անփոփոխ թշնամական քաղաքականութիւնը դէպի այդ հանրապետութիւններում բնակեցուած հայերը և նրանց ագրեսիւ դիտումները Հայաստանի տերիտորիայի վերաբերեալ, մասնաւորապէս Լոռու եւ Ղարաբաղի: Դրա համար էլ մամուլը կոչ պիտի անի, որ Վրաց եւ Ադրբէջանի կառավարութիւնները աւելի ուշադիր վերաբերմունք ունենան դէպի Հայաստանի կարիքները եւ դէպի կարիքները Վրաստանում եւ Ադրբէջանում բնակւող հայերը, լիկվիդացիայի ենթարկելով հայ-վրացական միջադէպքից շարունակ-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս II, թ. 425:

ւող խստութիւնները (ռեպրեսիաները)... Սօչու, Ախալքալաքի և Բորչալուի շրջաններում»[1]:

Մերժելով հանդերձ հակառուսական ռազմական դաշինքին միանալու հարևան հանրապետությունների առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավոր էր հավասարակշռված քաղաքականություն վարել՝ չխզելով կապերը նրա հետ: Եվ պատահական չէր, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակության մեջ առկա էր երկու կարծիք: Մի մասը (Ս. Տիգրանյան, Ս. Հարությունյան, Ն. Աղբալյան, Լ. Եվանգուլյան) ձգտում էր առաջնորդվել այն սկզբունքով, որ հնարավորինս ապահովվի համերաշխությունը հարևան հանրապետությունների հետ, և պետք չէ խզել եղած կապերը: Վրացիների և ադրբեջանցիների ոչ բոլոր առաջարկներն են ընդունելի, սակայն պետք է շփումները շարունակել և նրանց բացատրել Հայաստանի Հանրապետության պատվիրակության տեսակետները[2]: Նրանք գտնում էին, որ «Դաշնակիցները, ինչպես եվ Ռուսիան, գալիս են, գնում են, մենք երեք հարեվաններ ենք, որ շարունակ մնում ենք եվ մնալու ենք միատեղ. ինչպես ռուսների, այնպես էլ անգլիացիների ու դաշնակիցների վերաբերմունքը երբեք մշտական եվ անփոփոխ չէ դեպի մեզ, մեր հարեվանները. չի կարելի երաշխավորել, թե արդյոք Անգլիացիք Դենիկինի կողմն են, թե Ադրբեջանի ու Վրաստանի. հենց այս կես տարվա ընթացքում քանի անգամ փոփոխվեց այդ վերաբերմունքը, փոփոխելով եվ գլխավոր դերակատարներին (գեն. Ուոկեր, Թոմսոն): Այսօր ըստ երեվույթին Դենիկինին թույլ են տալիս գալ մինչև Բագու, վաղը կարող են թույլ չտալ, իսկ վաղը չէ մյուս օրը էլի մի նոր բան: Համերաշխություն ուզեն չպետք է թողնենք, որչափ էլ դժվար է վրացիների ու թաթարների հետ ընդհանուր գործ բռնելը, բայց պետք է հնար եղածի չափ աշխատել այդ ուղղությամբ: ***Ռազմական գործակցությունից ի հարկե հրաժարվելու ենք, բայց քաղաքական դիվանագիտական գործակցությունից ոչ, միայն չպետք է խույս տանք, այլ նույնիսկ աշխատենք ակտիվ դեր կատարել***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Այդ կարծիքի կողմնակիցները գտնում էին, որ պետք է դիմել Փարիզի խաղաղության վեհաժողովին, որպեսզի վերջինս հայտարարի Անդրկովկասյան հանրապետությունների անկախության անձեռնմխելիությունն ամեն մի բռնի ոտնձգությունից: Ձգուշացնում էին, որ «Չպետք է մոռանանք, որ երբ Դենիկինը գա Բագու, Թիֆլիս, Յերեվան, Ալեքսանդրապոլ - Ղարսն էլ այլ յեվ Հայաստան չի լինի»[2]:

Ըստ մյուս կարծիքի (Ս. Մամիկոնյան, Խ. Վերմիշյան)՝ չպետք է կաշկանդել որևէ միասնական քայլի խոստումով և ազատ գործելու իրավունք վերապահել, քանի որ Վրաստանի ու Ադրբեջանի հանդեպ գեներալ Ա. Դենիկինի և դաշնակիցների վերաբերմունքը կարող է ուրիշ կերպ լինել, իսկ Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ մեկ այլ: Նրանց կարծիքով, առանց Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունից տեղեկություն ունենալու չպետք է որոշումներ ընդունել կամ հրահանգներ տալ. «Ռուսաստանը,- գտնում էին նրանք,- երբեք չի ների մեզ մեր այդպիսի բողոքական դիրքը դեպի Դենիկինը»[3]:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հայտնեց իր միասնական դիրքորոշումը Անդրկովկասյան

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 103:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 59, ց. 2, գ. 52, թ. 5, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 139:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 59-60, ց. 2, գ. 52, թ. 5-6, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 139-140:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 60, ց. 2, գ. 52, թ. 6, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 140:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 61, ց. 2, գ. 52, թ. 7, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 141:

համաժողովին՝ զինակցություն հանձն չեն առնում: Հայաստանը պարտավորություն էր ստանձնում Անդրկովկասի իր հարևանների առջև հետևյալ դեպքերում.

- Եթե Վրաստանն ու Ադրբեջանը կռվի բռնվեն գեներալ Ա. Դենիկինի դեմ, թիկունքի ապահովությունը Հայաստանի կառավարությունը երաշխավորում է:

- Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է համաձայնեցրած և միախորհուրդ դիվանագիտական քայլերով պաշտպանել Վրաստանի և Ադրբեջանի անկախության անձեռնմխելիությունը:

- Անհրաժեշտ է, որ Վրաստանն ու Ադրբեջանը հրաժարվեն Հայաստանի Հանրապետության և իրենց տարածքում բնակվող հայության նկատմամբ հալածական գործողություններից, որպեսզի հնարավոր լինի իրականացնել վերը նշված կետերը[1]:

Ինչպես նկատում ենք, հիմնավոր պատճառով չմիանալով հակառուսական ռազմական դաշինքին, նաև Վրաստանի և Ադրբեջանի անբարյացակամ ու թշնամական վերաբերմունքին հակառակ՝ ***Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր հարևաններին աջակցել իր չեզոքությամբ*** նրանց համար ծանր կացության դեպքում, մի բան, որ նրանք դժվար թե անեին: Բոլոր դեպքերում, ի տարբերություն հարևանների, այդ ճակատագրական պահին հայ ժողովուրդը ցուցաբերում էր իր բարոյական ու մարդկային բարձր նկարագիրը՝ համոզված լինելով, որ հարևանները ոչ միայն իրեն չեն աջակցի թուրքական հարձակման դեպքում, այլև ինչ-որ տեղ անգամ կնպաստեն թշնամու ագրեսիվ գործողություններին: Ուստի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծված արտաքին բարդ քաղաքական

[1] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 62, ց. 2, գ. 52, թ. 7, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 142:

իրադրության պայմաններում պարտավոր էր առաջին հերթին մտահոգվել իր երկրի պաշտպանությամբ: Այդ իրավիճակը ճիշտ էր ներկայացնում «Վերածնունդ» շաբաթաթերթը, որը գրում էր. «Մեր հարցը բոլորովին այլ կերպով է դրված միջազգային քաղաքական սեղանի վրա, մեր Հանրապետությունը միայն Կովկասի հայութեան Հանրապետությունը չէ, մեր բանակները երկար օսմանեան ճակատ մը ունին իրենց առջեւը պաշտպանելու, և թշնամին այս վայրկեանիս նորէն յարձակուելու կը պատրաստուի մեր վրայ նոյնիսկ հակառակ միջազգային զինադադարին, մենք մեր մէջը և մեր ետին բազմաթիւ թուրք ու թաթար ունինք, որոնք մինչեւ հիմա դուրսէն եկող թշնամու թեւն ու թիկունքն են եղած. ***այս պայմաններում մէջ մենք ոչ հնարաւորութիւն, ոչ ալ իրաւունք ունինք խրելու ուրիշ ռազմական դաշինքներու մէջ եթե նոյնիսկ ուզելու ըլլայինք»***[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ): Շաբաթաթերթը ակնարկում էր, թե ինչ երաշխիքներ ունի Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որ Վրաստանը վճռական պահին դարձյալ մենակ չի թողնի հայերին, ինչպես վարվեցին «ամենէն նեղ վայրկեանին թուրքերուն հետ միս-միանակ ու իրենք ետ քաշուեցան յանձնելով Բաթումն ու Կարսը, յայտարարելով թէ անօգուտ էր այդ դիմադրութիւնը և իրենց համար հաշիւ չէր»[2]: Վերջում շաբաթաթերթը եզրափակում էր. «Քաղաքական, զինուորական ու տնտեսական պատճառներով մենք ոչ կարող ենք, ոչ ալ կը ցանկանք մտնել ռազմական դաշինքի մը մէջ դուրս գալու համար կռիւ մղելու ըլլայ Դենիկինի, ըլլայ ուրիշ դաշնակից բանակներու: ***Մեզի կը վայլէ միայն մէկ դիրք մը. այս ծանր հարցի մէջ շիտակ ու բացարձակ չէզոքութիւն»***[3] (ընդգծու-

[1] «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 23 օգոստոսի 1919, էջ 325:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

մը մերն է- Գ.Պ): Որպեսզի Հայաստանի Հանրապետության չեզոքությունը վստահություն ներշնչեր Վրաստանին ու Ադրբեջանին, շաբաթաթերթն անհրաժեշտ է համարում փոխադարձ համաձայնության գալ նրանց հետ հետևյալ հիմնական հարցերի շուրջ. 1) հայկական զորքը Վրաստանի և Ադրբեջանի սահմաններից ամբողջովին փոխադրվի Թուրքիայի սահմանները, 2) անգլիական զինվորական հրամանատարության որոշած չեզոք գոտիները իրականում պահպանվեն, 3) Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները հեռանան Ղարաբաղի ու Զանգեզուրի շրջաններից՝ դրանց կառավարումը թողնելով տեղական ազգային խորհուրդներին՝ անգլիական զինվորական հրամանատարության հսկողությամբ, մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի ընդունվելիք որոշումը, 4) վերջ տրվի հայ ժողովրդի ու Հայաստանի կառավարության դեմ Վրաստանի ու Ադրբեջանի անհանդուրժողականությանն ու տնտեսական շրջափակման քաղաքականությանը և այլն[1]:

Անդրկովկասյան համաժողովի հունիսի 9-ի երեկոյան նիստում հայտարարվեց մեկշաբաթյա դադար: Իրականում կողմերի միջև անհամաձայնության հետևանքով համաժողովը դատապարտված էր տապալման: Վրաստանը և Ադրբեջանը նախապատրաստվեցին երկկողմ ռազմական դաշինք կնքել ընդդեմ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի: Նրանք մերձենում էին՝ բոլորովին հաշվի չառնելով Հայաստանի Հանրապետության շահերը, որին մշտապես վտանգ էր սպասվում Թուրքիայից: Հայաստանի Հանրապետությունը ի վերջո տարածաշրջանում դարձյալ մնաց մեկուսացված ու անօգնական:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը

[1] Տե՛ս «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 7 օգոստոսի 1919, էջ 325-326:

հուսալքված վերադառնում էր Երևան[1], իսկ այդ նույն ժամանակ Վրաստանի բարձրաստիճան պաշտոնյաները կայարանում պատվո պահակով, մեծ շուքով ու հանդիսավորությամբ դիմավորում էին Ադրբեջանի զինվորական նախարար Ս. Մեհմանդարովին[2], որի այցի նպատակն էր ավարտել վրաց-ադրբեջանական հակառուսական ռազմական դաշինքի ստորագրման նախապատրաստական փուլը: Ռուսաստանի հարավի հետախուզությունը գեներալ Ա. Դենիկինին տեղեկացրել էր, որ Անդրկովկասի հանրապետությունների համաժողովն ավարտվել էր անարդյունք, դադարեցրել էր իր աշխատանքը, Հայաստանի Հանրապետությունը վերջնականապես հրաժարվել էր դաշինքին միանալուց, իսկ Թիֆլիսում պատրաստվում էին ստորագրելու վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքը[3]: Տեղեկացվում էր նաև, որ Վրաստանն ու Ադրբեջանը սկսել են լուրջ ռազմական նախապատրաստություն տեսնել Կամավորական բանակի դեմ՝ 1) Վրաստանում ու Ադրբեջանում արագ ընթանում է զորահավաք, 2) զինվորներ, զենք, զինամթերք և այլ ռազմական հանդերձանք են տեղափոխվում Թերեք-Դաղստանյան սահմանների երկարությամբ, 3) բոլշևիկները լեռնականներին և այլ դժգոհ տարրերի մեծ գումար են հատկացրել Կամավորական բանակի դեմ թշնամական գործողություններ ծավալելու համար, 4) վրաց-ադրբեջանական մամուլը հակադենիկինյան հիստերիա է սկսել և այլն[4]: Գեներալ Ա. Դե-

[1] 1919 թ. հունիսի 9-ին արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Թիֆլիսից վերադարձավ Երևան և զբաղեցրեց հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնը, իսկ օգոստոսի սկզբին ընտրվեց Հայաստանի Հանրապետության Պառլամենտի փոխնախագահ:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 111, թ. 66: «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, փետրվար, 1968, էջ 7:
[3] Տե՛ս РГ АСПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 205, ГА РФ, ф. 446, оп. 2, д. 132, л. 61:
[4] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 36, л. 58:

նիկինը, իրավիճակից թելադրված, հունիսի 13-ին Եկատերինոդարում անգլիական զինվորական հրամանատարությանն ուղղած նամակում հայտնում էր, որ եթե Ադրբեջանից թշնամական գործողություններ նկատվեն Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի դեմ, ապա ինքը հարկադրված կլինի վարվել համաձայն ստեղծված հանգամանքների:

Նամակը եզրափակվում էր այն հավաստիացումով, որ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» Ադրբեջանի նկատմամբ որևէ թշնամական մտադրություն չի ունեցել և չունի: Համարում է նրան որպես Ռուսաստանի մաս և ճանաչում է նրա ինքնուրույն գոյությունը մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի կողմից հարցի լուծումը[1]: Նկատենք, որ այդ ժամանակ Կամավորական բանակը խուսափում էր ռազմական բախումից և ինչ-որ չափով հարթեց հասունացող հակամարտությունը: Թիֆլիսում նա համաձայնության եկավ թե՛ Ադրբեջանի և թե՛ Վրաստանի ներկայացուցիչների հետ: Այդ համաձայնությամբ Կամավորական բանակն իր իրավասության տակ էր վերցնում Պետրովսկը, Թեմիր Խան Շուրան (Դաղստանի վարչական կենտրոնը) ու հեռանում էր Դերբենդից: Դրա փոխարեն Ադրբեջանը պարտավորվում էր Կամավորական բանակին մատակարարել անհրաժեշտ քանակությամբ նավթ ու այլ մթերքներ և չխանգարել Կամավորական բանակին զորահավաք կազմակերպելիս: Ինչ վերաբերում էր Վրաստանին, Կամավորական բանակը Գագրայից հարավ ընկած տարածքը թողնում էր Վրաստանին և առաջ չէր շարժվում[2]:

Անդրկովկասում անգլիական զինվորական առաքելության հրամանատար գեներալ Ջ. Կորրին Վրաստանի կառավարության նախագահին ուղղած նամակում վերոհիշյալ սահմանազատման գծի մասին գրում էր. «***Անդրկովկասեան պետութիւնները պէտք է զգուշանան Դենիկինի դէմ ագրեսիւ գործողութիւններից եւ աջակցեն նրան*** գէթ նաւթ և այլ նիւթեր տրամադրելով և թույլ չտան, որ այդ նիւթերը արտահանուեն բոլշևիկների համար:

Այս պայմանների չիրագործումը այն հետևանքը կունենայ, որ ***կատարելապէս կը փոխւի Բրիտանական բարեհաջեաց տրամադրութիւնը*** և նորին մեծութեան կառավարութիւնը կը դրուի այնպիսի պայմաններում, որոնք ***անհնարին կը դարձնեն արգելելու Դենիկինի այդ գծից հարաւ անցնելը***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Հունիսի 27-ին Լ. Եվանգուլյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին տեղեկացնում էր, որ Ադրբեջանի կառավարությունը Կամավորական բանակին տրամադրեց կերոսին, մազութ և անհրաժեշտ քանակությամբ վառելանյութ[2]:

Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորին, համաձայնվելով գեներալ Ջ. Կորրիի առաջարկներին, «պնդում է, թե այդ որոշումն իրականացվի այնպիսի պայմաններում, որ խաղաղութիւնը ապահովվի, որին ուղղված է բրիտանական կառավարութեան հաստատուն կամքը»[3]: Ճիշտ է, Կամավորական բանակի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ձեռք էր բերվել համաձայնություն, սակայն վերջիններս չվստահեցին գեներալ Ա. Դենիկինի հավաստիացումներին և ***հունիսի 16-ին ստորագրեցին վրաց-ադրբեջանական «պաշտ-***

[1] Տե՛ս РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 12, л. 110:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 33, 116, 117, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 59, «Ժողովուրդ» լրագիր, 25 հունիսի 1919, Երևան:

[1] «Աշխատավոր» լրագիր, 1 հուլիսի 1919, Թիֆլիս:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս II, թ. 425:
[3] «Աշխատավոր» լրագիր, 1 հուլիսի 1919, Թիֆլիս:

պանական դաշինք»[1]: Վրաստանը և Ադրբեջանը հակառուսական դաշինքի ստորագրումը պատճառաբանում էին նաև այն բանով, որ Անդրկովկասից անգլիական զորքի հեռանալու դեպքում կարողանան կանխել գեներալ Ա. Դենիկինի հնարավոր հարձակումները:

Դաշինքի 1-ին հոդվածով կողմերը պարտավորվում էին իրենց զինված ուժերով և զինական բոլոր միջոցներով հետ մղելու ամեն մի հարձակում և պաշտպանելու միմյանց անկախությունն ու տարածքային ամբողջականությունը: Դա, անտարակույս, ուղղված էր նաև Հայաստանի Հանրապետության դեմ, քանի որ թե՛ Ադրբեջանը և թե՛ Վրաստանն իրենց «տարածքային ամբողջականության» մասեր էին համարում նաև զուտ հայկական տարածքների մի մասը:

2-րդ հոդվածով պայմանավորվում էր՝ եթե կողմերից մեկն իր նախաձեռնությամբ, առանց նախնական համաձայնության, պատերազմ է հայտարարում երրորդ երկրի, ապա մյուս կողմը պարտավոր չէ մասնակցելու դրան:

5-րդ հոդվածով կողմերը պարտավորվում էին այլ պետությունների հետ ռազմական պայմանագիր չկնքել՝ առանց մյուս կողմի համաձայնության:

6-րդ հոդվածով կողմերը պարտավորվում էին դիվանագիտական ոլորտում ձգտել նպատակների միասնականության և առկա տարաձայնությունները կարգավորել երկկողմ համաձայնության կամ միջնորդ դատարանի միջոցով:

10-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությանը իրավունք էր վերապահվում պաշտոնական հրապարակումից հետո երկու շաբաթվա ընթացքում հայտնելու իր՝ հակառուսական դաշինքին միանալու ցանկությունը: Դա վկայում

[1] Տե՛ս ԳԱ ՐՓ, ֆ. 446, օп. 2, д. 36, л. 59, д. 34, л. 15, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 112, թ. 24, գ. 119, թ. 178: «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 23 օգոստոսի 1919, էջ 373-375: «Աշխատավոր» լրագիր, 22 հուլիսի 1919, Թիֆլիս:

է, որ նրանք չէին բացառում Հայաստանի Հանրապետության միանալն այդ դաշինքին:

Հունիսի 22-ին Վրաստանի Սահմանադիր ժողովը[1] և նույն ամսի 27-ին Ադրբեջանի պառլամենտը փակ նիստերում[2] վավերացրին վրաց-ադրբեջանական «պաշտպանական դաշինքը»: Հուլիսի 24-ին Փարիզում Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների նախագահները (Ղ. Չխեիձե, Ա. Թոփչիբաև) վրաց-ադրբեջանական դաշինքի կնքման մասին հայտագիր հղեցին խաղաղության վեհաժողովի նախագահ Ժ. Կլեմանսոյին[3]:

Հունիսի 28-ին, համաձայն 10-րդ հոդվածի, լրանում էր հակառուսական դաշինքին միանալու՝ Հայաստանի Հանրապետությանը վերապահված իրավունքի ժամկետը: Նույն օրը Ա. Խատիսյանը հեռագիր հղեց Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն՝ պահանջելով հաղորդել Վրաստանի կառավարությանը, որ ***Կամավորական բանակի և Վրաստանի Հանրապետության միջև հնարավոր բախման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է պաշտպանել խիստ չեզոքություն:*** Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավոր է համարում խաղաղության վեհաժողովի աջակցությունը՝ Անդրկովկասյան հանրապետությունների քաղաքական, տարածքային հարցերը լուծելու ոչ թե զենքի միջոցով, այլ դիվանագիտական ճանապարհով, մինչև խաղաղության վեհաժողովի կողմից հարցի շուրջ վերջնական որոշում ընդունելը: Ա. Խատիսյանը հեռագրի վերջում նշում էր, որ ***Հայաստանի Հանրապետության կառա-***

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 93, թ. 213: «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 23 օգոստոսի, էջ 376:
[2] Տե՛ս ԳԱ ՐՓ, ֆ. 440, օп. 1, д. 34а, л. 106: ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 198, թ. 165:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 119, թ. 156:

վարությունը նպատակահարմար չի համարում գտնվելու վրաց-ադրբեջանական «պաշտպանական դաշինքում»[1]:

Այսպիսով, արխիվային վավերագրերի և նյութերի ուսումնասիրությամբ հանգում ենք այն համոզման, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ճիշտ որոշում ընդունեց՝ չմիանալով վրաց-ադրբեջանական հակառուսական դաշինքին: Դա բացատրվում է հետևյալով.

1) Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» համար օրակարգի խնդիր չէր Անդրկովկասի հանրապետությունները տիրել ուժի միջոցով, որովհետև պատրաստվում էր Մոսկվայի վրա վճռական հարձակման: 2) Եթե Կամավորական բանակը մտադրություն ունենար անգամ զենքի ուժ գործադրել Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ, միևնույնն է, անգլիական զինվորական հրամանատաարությունը դա թույլ չէր տա: 3) Եթե Կամավորական բանակը գրավեր Վրաստանն ու Ադրբեջանը, վերանալու էր նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը: 4) Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» Ադրբեջանի և Վրաստանի նկատմամբ ուներ իր հստակ ռազմավարությունը: 5) Կամավորական բանակի մոտենալը Թերեք-Դաղստանյան սահմաններին որոշակի նպատակ էր հետապնդում՝ փակել բոլշևիկների ճանապարհը, նրանց թույլ չտալ օգտվելու Բաքվի նավթից և մատակարարումներից, դրանք տրամադրել Ռուսաստանի հարավին, մի հագամանք, որն ընդունելի էր անգլիական զինվորական հրամանատարության համար, որովհետև ընդլայնվում էին բոլշևիկների դեմ պայքարի հնարավորությունները: 6) Գեներալ Ա. Դենիկինը, սպառնալիք ստեղծելով Վրաստանի համար, փորձում էր թուլացնել ու սահմանափակել նրա ռազմատենչ տրամադրությունները և հարկադրել սևծովյան շրջաններից հանելու վրացական զինված ուժերը: 7) Եթե Վրաստանին ու Ադրբեջանին վտանգ էր սպառնում հյուսիսից, ապա Հայաստանին արևմուտքից՝ Թուրքիայից: 8) Հայաստանի Հանրապետության նկատմամբ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» որևէ քայլ կամ առաջարկ չի արել՝ չնայած փետրվար-մարտ ամիսներից մինչև հուլիս Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա գլխավոր հրամանատարության միջև պաշտոնական շփումները սառել էին: 9) Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր կարող անուշադրության մատնել Ռուսաստանի հարավում կուտակված տասնյակհազարավոր հայ գաղթականների կենսական խնդիրները և ներգաղթի կազմակերպումը, շրջափակման պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ակնկալում էր Ռուսաստանի հարավից ներկրել հաց, զենք, զինամթերք և այլ կենսականորեն անհրաժեշտ ապրանքներ: Վերջապես, Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր կարող հրաժարվել Ռուսաստանի հարավի տնտեսական, քաղաքական ու ռազմավարական հովանուց: 10) Գեներալ Ա. Դենիկինից սպառնացող վտանգը զսպում էր Վրաստանի ու Ադրբեջանի զավթողական ձգտումները հայկական տարածքների նկատմամբ, մանավանդ որ նրանք հրաժարվում էին երաշխիքներ տալ, որ ձեռնպահ կմնան դրանից:

Սակայն անժխտելի է նաև, որ դաշինքից Հայաստանի Հանրապետության հրաժարումը ունեցավ բացասական հետևանքներ. ավելի խորացան առանց այն էլ լարված հարաբերությունները Թիֆլիսի և Բաքվի հետ:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, թ. 175, ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 44, 124, գ. 119, թ. 31, 32, 72, 125, 131:

* * *

Գեներալ Ա. Դենիկինը համոզվեց, որ այդ բարդ ու խճճված քաղաքական իրադրության պայմաններում սպառնալիքի կամ ռազմական ուժի միջոցով Ռուսաստանի հարավի հետ Անդրկովկասի վերամիավորումը քիչ հավանական է: Մեծ Բրիտանիան բացահայտ խոչընդոտում էր Կամավորական բանակի նվաճողական ձգտումները և փորձում էր նրան ամբողջովին մեկուսացնել Անդրկովկասից: Անգլիական զինվորական հրամանատարության կողմից Անդրկովկասում չեզոք գոտիների ստեղծումը, ինչպես նաև սևծովյան շրջանների և Դաղստանի սահմանների երկարությամբ Կամավորական բանակի հետ Վրաստանի ու Ադրբեջանի վերջին բախումները մեկ անգամ ևս գեներալ Ա. Դենիկինին համոզեցին, որ ***անհրաժեշտ է ամբողջ ռազմավարությունը ուղղել «Անդրկովկասն Ռուսաստանի հարավին առանց ցնցումների վերամիավորելուն»***[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.)*: «Հատուկ խորհրդակցությունը» իր առաջնահերթ խնդիրը համարեց ուղղել քաղաքական, ֆինանսական, առևտրատնտեսական համագործակցության ճանապարհով տիրելու և կախվածության մեջ գցելու Անդրկովկասի հանրապետությունների ռազմավարական նշանակության օբյեկտները*:

1919 թ. հուլիսի 2-ին Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ռազմական վարչության պետ գեներալ Ա. Լուկոմսկին Ա. Դենիկինի վավերացմանը ներկայացրեց ***գաղտնի հրահանգ***[2], որի իրականացումը հանձնարարվեց Անդրկովկասում Ա. Դենիկինի գլխավոր

[1] ՊԳ ԱՍՊԻ, ֆ. 71, օп. 35, д. 195, л. 171:
[2] Տե՛ս ՊԳ ВА, ф. 39540, оп. 1, д. 18, л. 33-34, ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 19-20, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 196-200:

ներկայացուցիչ գեներալ Ն. Բարաթովին: Վերջինիս առաքելության շտաբը տեղակայված էր Թիֆլիսում: Գեներալ Ա. Դենիկինը հաղորդում էր, որ այդ գաղտնի հրահանգը ներկայացնում է Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցության» անդրկովկասյան քաղաքականության իրական պատկերը և իրադարձությունների մեկնաբանության բանալին: Հրահանգի «Քաղաքական մասում» ասվում էր, որ ***ամբողջ Անդրկովկասը պետք է դիտել ռուսական պետության անքակտելի մաս և նախապատրաստել Ռուսաստանի հարավի հետ այդ շրջանների վերամիավորումը համառուսական պետական իշխանության տնօրինության ներքո***[1]:

Հրահանգում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ասվում էր. կատարելապես համակրելով հայ ժողովրդի ձգտումները՝ միավորվել ազգային սահմանների մեջ, և համարելով, որ հայերը իրենց պատմական ու տնտեսական շահերով սերտորեն կապված են միասնական ու անբաժանելի Ռուսաստանի հետ, որի սահմանների մեջ մտնում է Հայաստանի ամենից ավելի ծաղկուն մասը՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը, ինչպես և Վրաստանի ու Ադրբեջանի վերաբերմամբ, ***ընդունում է հայկական շրջանների ինքնուրույն կառավարությունը, մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի վերջնական որոշումը՝ առանց ունենալու որևէ հարձակողական դիտավորություն Հայաստանի Հանրապետության նկատմամբ, բայց մնալով հավատարիմ ռուսական պետականության միասնականության տեսակետին***[2]:

[1] Տե՛ս ՊԳ ВА, ф. 39540, оп. 1, д. 18, л. 34, ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 19, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5. Вооруженные силы Юга России, с. 197:
[2] Տե՛ս ՊԳ ВА, ф. 39540, оп. 1, д. 18, л. 34, ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 20, ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/ Т. 4, Т. 5.

Գեներալ Ն. Բարաթովի Անդրկովկաս այցի մասին Հայաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացավ հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբին Բաթումում գլխավոր հյուպատոս Գ. Եդիգարյանի, Թիֆլիսից դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի և զինվորական կցորդ գեներալ Քիշմիշևի[1] պաշտոնական գաղտնի հաղորդագրություններից: Օգոստոսի 2-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին հղած գաղտնի նամակ-զեկույցում Լ. Եվանգուլյանը տեղեկացնում էր, որ Ն. Բարաթովի այցի նպատակը Կամավորական բանակի և Անդրկովկասյան հանրապետությունների փոխհարաբերությունների կանոնավորումն է[2]:

Հուլիսին կատարվեցին առաջին քայլերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության միջև հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ: Դա երկուստեք պայմանավորված էր քաղաքական ու տնտեսական որոշակի դրդապատճառներով: Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթ խնդիրը երկրի անվտանգության ու անկախության ապահովումն էր. երկրին վտանգ էր սպառնում Թուրքիայից և, ինչու չէ, նաև վրաց - ադրբեջանական հակառուսական ռազմական դաշինքից:

Вооруженные силы Юга России, с. 198, *Կրաչյան Ս.*, Հայաստանի Հանրապետություն, էջ 381-382.

[1] Տես Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 272-273:

[2] Տես ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 60:

Արամ Մանուկյան



Հովհաննես Քաջազնունի

Ալեքսանդր Խատիսյան

Սիմոն Վրացյան

Խաչատուր Կարճիկյան

Հակոբ Ջավրիև

Լիպարիտ Նազարյան

Արշակ Ջամալյան

Գեորգ Խատիսյան

Ա. Դենիկին

Դիանա Արզար

Ավետիս Ահարոնյան

Հովհաննես Սաղաթելյան

Նիկոլ Աղբալյան

Համո Օհանջանյան

Ավետիք Սահակյան

Ռուբեն Տեր-Մինասյան

Քրիստափոր Արարատյան

Դրո (Դրաստամատ Կանայան)

Արտաշես Բաբայան

Վահան Մինախորյան

Սարգիս Արարատյան

Սամսոն Հարությունյան

Աբրահամ Գյուլխանդանյան

Կարո Սասոն

Պողոս Նուբար փաշա

Միրական Տիգրանյան

Տիգրան Բեկզադյան

Մարտիրոս Հարությունյան

Մ. Ալոբսեն

Ծովակալ Ա.Կոլչակ

Լ. Կորնիլով

Ա. Լուկոմսկի

Ի. Ռոմանովսկի

Ա. Դրագոմիրով

Ս. Սագոնով

«Հատուկ խորհրդակցություն»

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻԲԻՐԻ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՀԵՏ (1919 թ. օգոստոս - 1920 թ. ապրիլ)

1. Հարաբերությունները Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ

Այս ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը տակավին շարունակում էր մնալ բարդ ու հակասական, իսկ նրա անվտանգությունը հարևանների ոտնձգություններից ու զավթողական մտադրություններից ապահովված չէր: Քաղաքական ասպարեզ էր իջել Օսմանյան կայսրության հետնորդ քեմալական Թուրքիան, որը հայության նկատմամբ վերաբերմունքով չէր տարբերվում իր նախորդներից, քանի որ նրանցից ժառանգել էր հայ ժողովրդին բնաջնջելու քաղաքականությունը:

Փարիզի խաղաղության վեհաժողովը հույսեր էր ներշնչում հայությանը. դեռ օրակարգում էր Հայկական հարցը՝ Արևմտյան Հայաստանն ազատագրել Թուրքիայի տիրապետությունից և նրա տարածքում ստեղծել հայկական պետություն: Սակայն, ինչպես պարզվեց հետագայում, դրանք սին հույսեր էին: Հայությունը պատերազմի ժամանակ աջակցել էր Համաձայնության պետություններին՝ հաղթանակի հասնելու, և նրանցից սպասում էր իր կենսական հարցերի լուծումը:

Սակայն Համաձայնության պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, լրջորեն տրամադրված չէին լուծելու հայության կնճռոտ խնդիրները: Հայաստանի Հանրապետությունը չուներ անկեղծ բարեկամ պետություն, որի վրա հենվեր: Այս պարագայում նորաստեղծ հանրապետությունը դարձյալ իր հայացքն ուղղում էր դեպի Ռուսաստան՝ նրանից ակնկալելով աջակցություն: Սակայն այդ ժամանակ կար երկու Ռուսաստան՝ խորհրդային, որի հետ Հայաստանի Հանրապետությունը հարաբերություններ չուներ, և ոչ խորհրդային պետական կազմավորումներ, որոնցից Հայաստանի Հանրապետությունը փորձում էր աջակցություն ստանալ:

Ինչպես վերը նշեցինք, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, երկրում ստեղծված քաղաքական բարդ իրադրությունից ելնելով, ձգտում էր մերձենալ Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումներին և ճանաչել տալ սեփական պետության անկախությունը, հաստատել բարեկամական հարաբերություններ:

Դեռ 1919 թ. հունվարից Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր ոչ պաշտոնական ներկայացուցիչն ուներ Եկատերինոդարում՝ Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությունում» և Կուբանի կառավարությունում՝ հանձին Հովհաննես Սաղաթելյանի: Սակայն Նախարարների խորհուրդը, քաղաքական որոշակի պատճառներից դրդված, 1919 թ. մարտի վերջին Հ. Սաղաթելյանին ուշացումով նշանակեց Կուբանի կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ: Իսկ Կուբանի կառավարությունում դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու մասին օրենքը Հայաստանի Հանրապետության խորհուրդը (խորհրդարանը) ընդունեց ապրիլի 11-ին[1]: Մայիսի 23-ին Նախարարների

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 202, ց. 1, գ. 41, թ. 33:

խորհուրդը Հ. Սաղաթելյանին նշանակեց նաև Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցությանը» կից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ: Նույն օրը Դոնի շրջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվեց Գ. Չալխոշյանը, իսկ Թերեքում՝ Ա. Ասրիբեկյանը[1]:

Անհրաժեշտ էր ունենալ դիվանագիտական ներկայացուցիչ նաև Սիբիրի կառավարությունում: 1919 թ. ամռանը Վոլգայից մինչև Վլադիվոստոկ ընկած ամբողջ անծայրածիր տարածքում պատկառելի ուժ էր ներկայացնում ծովակալ Ա.Կոլչակի կառավարությունը: Ենթադրվում էր, որ այն պետք է լիներ ապագա Ռուսաստանի իշխանության հիմքը[2]: Հայաստանի Հանրապետությունը ծովակալ Ա. Կոլչակի կառավարությունից մեծ սպասելիքներ չուներ, որովհետև այն կտրված էր Հայաստանի Հանրապետությունից վիթխարի տարածությամբ, բազմաթիվ մանր ու խոշոր իշխանություններով: Այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշեց իր դիվանագիտական ներկայացուցիչն ունենալ նաև ծովակալ Ա. Կոլչակի կառավարությունում, որպեսզի այնտեղ նույնպես ճանաչել տար Հայաստանի Հանրապետության անկախությունը: Ակնկալում էր Փարիզի խաղաղության վեհաժողովում Օմսկի և Եկատերինոդարի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովի, ռուսական «Հատուկ քաղաքական խորհրդակցության» և նրա դեսպանական խորհրդի միջոցով ստանալ աջակցություն Հայկական հարցի լուծման գործում: Կարևորվում էին նաև Սիբիրի

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս I, թ. 109:

[2] 1918 թ. նոյեմբերի 18-ին նախկին ցարական ծովակալ Ա. Կոլչակը իրեն հռչակեց Ռուսաստանի գերագույն տիրակալ: Նրա գլխավոր նպատակը «Միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերակերտումն էր:

և Հեռավոր Արևելքի տարբեր երկրամասերում ապաստանած հազարավոր հայ գաղթականների կենսական խնդիրների լուծումը և ներգաղթի կազմակերպումը:

1919 թ. հունիսի 30-ին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը ընդունեց որոշում Սիբիրի կառավարությանը կից Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու մասին: Նույն որոշմամբ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվեց Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության նախկին ներկայացուցիչ Գրիգոր Ջամոևը (Ջամոյան)[1]: Հուլիս 1-ին Ա. Խատիսյանը նրան հանձնց հավատարմագիր, որում ասվում էր. «Սույն հավատարմագիրը կրող պարոն Գրիգոր Սերգոյի Ջամոյանը նշանակված է որպես Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Սիբիրի կառավարության մոտ Հայաստանի Հանրապետությանն առնչվող բոլոր հարցերով զբաղվելու համար: Խնդրում ենք բարեկամ բոլոր պետությունների զինվորական և քաղաքացիական իշխանություններին օգնություն ցուցաբերել պարոն Գ. Ջամոյանին իր առաքելությունը իրականացնելու համար»[2]:

Շուրջ երկու ամիս տևած ուղևորությունից հետո Գ. Ջամոյանը Օմսկ հասավ սեպտեմբերի սկզբին[3]: «Մեկնեցի Օմսկ,- տեղեկացնում է Գ. Ջամոյանը,- ընդհանուր ռուսական կառավարութեան առաջ ճանաչել տալու Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը և պաշտպանելու Սիբիրի և Հեռաւոր Արևելքի ընդարձակ հողամասերում ապրող հայերի շահերը: Իմ գործունէութիւնը Սիբիրում և Հեռաւոր Արևելքում, ինչպես և Մանջուրիայում բխում էր բացառապես Հայաստանի Հանրապետութեան անկախութեան անժխտելի պահանջներից»[1]: Սեպտեմբերի 24-ին Գ. Ջամոյանին ջերմորեն ընդունեց ծովակալ Ա. Կոլչակը[2], որին հանձնվեցին հուշագրեր Հայաստանի Հանրապետության ստեղծման պատմության, նրա խնդիրների ու նպատակների, ինչպես նաև Հայաստանում ապրող ռուս բնակչության նկատմամբ կառավարության բարյացակամ վերաբերմունքի մասին: Ծովակալ Ա. Կոլչակը խնդրեց հաղորդել Հայաստանի իշխանությանը հայության նկատմամբ իր ջերմ վերաբերմունքի մասին և ավելացրեց, որ իր կառավարությունը ցանկալի է համարում կապեր հաստատել Հայաստանի Հանրապետության հետ: Ծովակալը խոստացավ մեծապես աջակցել նաև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությանը Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ բնակչության ու գաղթականության իրավունքների պաշտպանության գործում և լուծում տալ նրանց հուզող բազմաթիվ հարցերին[3]: Օմսկում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության շենքի վրա բարձրացվեց եռագույն դրոշը:

Ուկրաինայում դիվանագիտական աշխատանքի փորձ ձեռք բերած Գ. Ջամոյանը[4] իր առաքելությունը եռանդով սկսեց Սիբիրում և Հեռավոր Արևելքում: Սակայն այդ առաքելությունը երկար չտևեց: Սիբիրի կառավարությունն աստիճանաբար կորցնում էր իր ազդեցությունը տարածաշրջանում: 1919 թ. նոյեմբերի 12-ին խորհրդային բանակը գրավեց Սիբիրի կառավարության վարչական կենտրոնը՝ Օմսկը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 57, թ. 1, գ. 335, թ. 32, գ. 22, մաս II, թ. 151, ֆ. 202, ց. 1, գ. 292, թ. 95, 96, ֆ. 206, ց. 1, գ. 112, թ. 43, 218:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, թ. 1,2,3,4,5, ց. 2, գ. 44, թ. 5:
[3] Տե՛ս «Յառաջ» լրագիր, 31 օգոստոսի 1920, Երևան:

[1] «Նոր աշխատավոր» լրագիր, 7 օգոստոսի 1920, Թիֆլիս:
[2] Տե՛ս «Յառաջ» լրագիր, 31 օգոստոսի 1920, Երևան:
[3] Տե՛ս «Слово», 15 ноября, 1919, նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, թ. 13, գ. 385, թ. 38, 62, 63, 83, գ. 473, թ. 9:
[4] Մանրամասն տե՛ս *Պետրոսյան Գ.*, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թ.), Երևան, 2002:

Ծովակալ Ա. Կոլչակը իր կառավարության հետ նահանջեց Իրկուտսկ՝ հույս ունենալով ուժերը վերամիավորել և նոր պայքար սկսել բոլշևիկների դեմ: Նույն ամսին օտար ներկայացուցչությունների հետ Իրկուտսկ տեղափոխվեց նաև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունը[1]: Դեկտեմբերին ծովակալ Ա. Կոլչակի բանակը վերջնականապես պարտություն կրեց: 1920 թ. փետրվարի 7-ին Իրկուտսկում ռազմահեղափոխական դատարանը ծովակալ Ա. Կոլչակին դատապարտեց մահվան[2]:

Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ հաղորդակցության բացակայության պատճառով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը և կառավարությունը ժամանակին չէին իրազեկվում այդ երկրամասերի անցուդարձերի և Գ. Ջամոյանի դիվանագիտական առաքելության ընթացքի մասին: Գ. Ջամոյանն էլ չստացավ հրահանգներ իր հետագա անելիքների մասին: Թվում էր, թե ծովակալ Ա. Կոլչակի կառավարության պարտությունից հետո նրա հետ կապ ունեցող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը պետք է դադարեցներ իր գործունեությունը Սիբիրում: Սակայն Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունն անմիջապես հարաբերությունների մեջ մտավ և իր գործունեությունը շարունակեց Սիբիրի և Հեռավոր Արևելքի նորաստեղծ ***խորհրդային չորս երկրամասերի կառավարությունների հետ*** (Օմսկ-Իրկուտսկ, Վերին Ուգինսկ, Չիտա, Վլադիվոստոկ): Գ. Ջամոյանը տեղեկացնում է. «Հիշյալ չորս (երկրամասերի- Գ.Պ.) հետ հարաբերության մեջ մտա և գոհ եմ ասելու, որ բոլորն էլ հատուկ ուշադրություն դարձրին իմ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 610, թ. 8:
[2] Տե՛ս ***Трукан Г.***, նշվ. աշխատ., էջ 253:

դիմումներիս և ուրախությամբ ընդունեցին ինձ որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ: Իմ դիմումներիս հետևանքով այժմ այս կողմերում ցրված փոքրաթիվ հայերը վայելում են նույն իրավունքները, ինչ որ ունեն օտար պետությունների հպատակները»[1]: Գ. Ջամոյանը տեղեկացնում է նաև, որ ***դիվանագիտական ներկայացուցչությունը Վլադիվոստոկի խորհրդային կառավարությունից ստացել է մի փաստաթուղթ այն մասին, որ այն պաշտոնապես ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը և հայերին վերաբերվում է որպես անկախ, ազատ պետության քաղաքացիների***[2]: «Պարտքս եմ համարում ընդգծել,- գրում է Գ. Ջամոյանը,- որ մեր ազգային դրոշին խորհրդային իշխանությունները մեծ հարգանքով են վերաբերվում»[3]: Երևույթը հետաքրքիր է այն առումով, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունն անմիջական հարաբերության մեջ էր մտնում Վլադիվոստոկի խորհրդային իշխանության հետ ու արժանանում նրա բարյացակամ վերաբերմունքին:

Գ. Ջամոյանը լայն գործունեություն ծավալեց հայ համայնքի կազմակերպման ու աշխուժացման ուղղությամբ: Սիբիրի և Հեռավոր Արևելքի լայնածավալ տարածքներում ապրում էին մոտ 6000 հայեր, որոնք պատմական հանգամանքների բերումով վաղ ժամանակներից հարկադրված թողել էին իրենց հայրենիքը և հաստատվել հիմնականում խոշոր քաղաքներում ու բնակավայրերում: Մի մասը Սիբիրի հայ բնիկներն էին՝ նախկին տաժանակիր աքսորականներ, մյուսները՝ ռուս-ճապոնական պատերազմից հետո ծանր նյութական պայմանների հետևանքով այստեղ հաստատ-

[1] «Յառաջ» լրագիր, 31 օգոստոսի 1920, Երևան:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 610, թ. 8:
[3] Նույն տեղում, թ. 9:

ված հայեր, իսկ մի հատվածն էլ գաղթել էր Առաջին աշխարհամարտի տարիներին՝ հայոց ցեղասպանության հետևանքով: Գաղթականներից զատ կային ռուսական բանակներից զորացրված զինվորներ ու սպաներ, որոնք այդտեղ էին հայտնվել 1918 թ. մարտից[1]: Գոյացել էր հայկական մի համայնք, որը, սակայն, անկազմակերպ էր, ցաքուցրիվ՝ տարածված Օմսկից մինչև Վլադիվոստոկ: Այս կերպ գոյատևելը զգալիորեն դժվար էր, և միավորվելու, կազմակերպվելու անհրաժեշտություն էր առաջանում: Աստիճանաբար ստեղծվում էին միմյանցից անկախ զանազան ազգային մարմիններ՝ հայոց ազգային խորհուրդներ, միություններ ու կազմակերպություններ, որոնք, անշուշտ, որոշակի դեր կատարեցին հայ գաղութի շահերի և իրավունքների պաշտպանության գործում: Հայոց ազգային խորհուրդներ ստեղծվեցին Օմսկում (նախագահ՝ Ադամ Ալեքսանյան), Տոմսկում (նախագահ՝ բժիշկ Միրզախանյան), Իրկուտսկում (նախագահ՝ Վարդան Ղարիբյան), Չիտայում (նախագահ՝ Վահրամ Նալբանդյան), Վլադիվոստոկում (նախագահ՝ ինժեներ Սաֆարյան)[2] և այլուր:

Դեռևս 1917 թ. հոկտեմբերին Իրկուտսկում հիմնվել էր հյուպատոսություն՝ Արկադի Յաղուբովի (Յաղուբյան) գլխավորությամբ, որի հիմնական նպատակն էր հավաքագրել զինակոչի ենթակա հայ երիտասարդների և ուղարկել հայրենիք: 1918 թ. ապրիլի 16-ին և 17-ին Ա. Յաղուբյանը Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայոց ազգային խորհուրդներին և Մոսկվայում գործող «Հայաստանի պաշտպանության խորհրդին» հղած նամակներում տեղեկացնում էր այդ ուղղությամբ հյուպատոսության ծավալած աշխատանքների և ծառացած դժվարությունների՝ պարենի հայթայթման, հանդերձանքի

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 263:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 618, թ. 175-178:

ձեռքբերման և հայ երիտասարդներին հայրենիք ճանապարհելու մասին: Հայկական հյուպատոսությունը հավաքագրված հայ զինակոչիկներին ժամանակին չկարողացավ հասցնել հայրենիք, որովհետև Բաքու-Ելիզավետապոլ-Թիֆլիս-Երևան միակ երկաթուղագիծը գտնվում էր մահմեդականների հսկողության տակ[1]:

1919 թ. հունիսին Խարբինում տեղի և Վլադիվոստոկի Հայոց ազգային խորհուրդների նախաձեռնությամբ գումարվեց Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ ներկայացուցիչների համագումար, որը տևեց մեկ ամիս: Համագումարի նպատակն էր ստեղծել Հայոց ազգային կենտրոնական խորհուրդ, որը պետք է համակարգեր և միավորեր Սիբիրի ու Հեռավոր Արևելքի տարբեր քաղաքներում միմյանցից անջատ գործող ազգային խորհուրդների, տարբեր կազմակերպությունների ու միությունների գործունեությունը և միասնական ուժերով օգներ նորանկախ մայր հայրենիքին: 1919 թ. հունիսի 25-ին Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղած նամակում համագումարի նախագահ Վասակ Տեր-Պողոսյանը տեղեկացնում է. «Մենք ձեռնարկեցինք համագումարի մը կազմութեան, ուր հաւաքաբար մտածէինք մեր ընելիքը ու միացած ուժով օգնութեան հասնէինք մեր սիրելի հայրենիքի անյետաձգելի կարիքներուն»[2]:

Համագումարի օրակարգի հարցերն էին՝

1. Սիբիրի և Հեռավոր Արևելքի Հայոց ազգային Կենտրոնական խորհրդի ստեղծումը:
2. Նյութական օգնությունը վերածնվող Հայաստանին:
3. Գաղթականների և բոլոր հայերի վերադարձը հայրենիք:

[1] Տե՛ս *Հարությունյան Ա.*, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 104-105:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, թ. 14: «Վերածնունդ» շաբաթաթերթ, 16 հոկտեմբերի 1919 թ. Փարիզ, էջ 488:

4. Ազգային զորագնդերի կազմակերպումը[1]:

Համագումարը Սիբիրի և Հեռավոր Արևելքի Հայոց ազգային Կենտրոնական խորհրդի նախագահ ընտրեց Տարաս Սուրինովին: Նա խոշոր ձեռնարկատեր էր և պատրաստվում էր կազմակերպել Հայկական ազգային բանկ՝ Հայաստանի Հանրապետությանը օգնելու համար: Համագումարը որոշեց երեք տարի ժամանակով մեկուկես միլիոն ռուբլու փոխառություն տրամադրել (առանց տոկոսի)՝ առաջին անհրաժեշտության ապրանքներ գնելու և Հայաստանի Հանրապետություն ուղարկելու: Որոշվեց նաև մեկ միլիոն ռուբլու հանգանակություն անել Հայաստանի Հանրապետության սովյալներին բաժանելու համար: Համագումարը որոշեց դիմել Սիբիրի և Հեռավոր Արևելքի ռուսական իշխանություններին՝ ազատել զորակոչի ենթակա հայ երիտասարդներին՝ Հայաստանի Հանրապետություն ուղարկելու համար: Այդ նպատակով ստեղծվեց հատուկ հանձնախումբ, որը հանգանակությունների միջոցով հավաքեց 5 միլիոն ռուբլի՝ գնելու հայկական բանակին անհրաժեշտ հանդերձանք[2]: Վասակ Տեր-Պողոսյանը տեղեկացնում է նաև, որ Սիբիրում և Հեռավոր Արևելքում բոլոր հայերը «հարուստ և բարեկեցիկ են, որոնց համար Համագումարը մշակեց ծրագիր և ստեղծեց յաջող կենտրոնական վարչութիւն, որուն վրայ Համագումարը սրբազան պարտք դրաւ ամէն կարելի միջոցներով զանոնք կապել Հայրենիքի հետ»[3]: Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ կապեր հաստատելու և հայ գաղութին վերաբերող բազմազան հարցեր լուծելու նպատակով 1919 թ. հուլիսի 26-ին Պրիմորսկի (Վլադիվոստոկի) Հայոց ազգային խորհուրդը

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 264, գ. 210, թ. 15: «Վերածնունդ» շաբաթաթերթ, 16 հոկտեմբերի 1919 թ., Փարիզ, էջ 489:
[2] Տե՛ս «Նոր աշխատավոր» լրագիր, 8 օգոստոսի 1920, Թիֆլիս:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, թ. 15-16: «Վերածնունդ» շաբաթաթերթ, 16 հոկտեմբերի 1919 թ., էջ 489-190:

լիազորել էր Հովհաննես Արոյանին՝ նամակով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և խնդրել 1. Սիբիրի և Հեռավոր Արևելքի համար նշանակել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ կամ հյուպատոս: 2. Նշված վայրերի բոլոր հայերին՝ անկախ նրանց հպատակությունից, հանձնել միանման անձնագրեր և ուղարկել Հայաստանի Հանրապետություն: 3. Դիմել ռուսական իշխանություններին՝ ազատելու հայ երիտասարդներին զինվորական ծառայությունից և ուղարկելու Հայաստանի Հանրապետություն[1]: 1919 թ. սեպտեմբերից այդ խնդրի լուծման ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալեց Գ. Ջամոյանի դիվանագիտական ներկայացուցչությունը: Նա Խարբինում Հայաստանի Հանրապետության հյուպատոս նշանակեց Սիբիրում և Հեռավոր Արևելքում մեծ հեղինակություն վայելող ինժեներ Լևոն Սուրինյանին: Խարբինում Գ. Ջամոյանի նախաձեռնությամբ Հայոց ազգային Կենտրոնական խորհուրդը հիմնեց «Երկիր» բաժնետիրական ընկերությունը, որի նպատակն էր առևտրական կապեր հաստատել Հայաստանի Հանրապետության և Հեռավոր Արևելքի, Չինաստանի, Ճապոնիայի հետ: Այդ բաժնետիրական ընկերությունը փորձեց թեյ, շաքար, հագուստեղեն և այլ անհրաժեշտ ապրանքներ հասցնել Հայաստան: Ունևոր շատ հայեր ցանկություն հայտնեցին Հայաստանի Հանրապետությանը նվիրել իրենց ունեցվածքը: Խարբինում ախլցխացի Կ. Ասպետյանը կես միլիոն ռուբլի արժողությամբ իր երկու բնակարանը կտակեց Հայաստանի Հանրապետությանը՝ Երևանում դպրոցներ բացելու նպատակով:

1919 թ. հոկտեմբերից Գ. Ջամոյանի ջանքերով Իրկուտսկում սկսեց լույս տեսնել «Вестник Армении» («Բամ-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, թ. 264:

բեր Հայաստանի») շաբաթաթերթը, որի նպատակն էր հայությանը իրազեկել Հայաստանի Հանրապետության ընդհանուր վիճակի և ռուս ու օտար հասարակայնությանը տեղեկություններ տալ հանրապետության իրադարձությունների, Հայկական հարցի մասին: Սակայն Երևանի հետ կապերի անկայունության պատճառով շաբաթաթերթում միշտ չէ որ ճշգրիտ տեղեկություն էր տրվում Հայաստանի Հանրապետության անցուդարձից:

Չունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության հրահանգը՝ Գ. Ջամոյանը 1920 թ. սկզբներին այլ օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների հետ հեռացավ Իրկուտսկից: Օգոստոսի 3-ին Թիֆլիսից Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանին ուղղած նամակ-զեկույցում նա տեղեկացնում է, որ կատարելով կառավարության «հանձնարարած խնդիրը, ետ վերադարձա՝ անցնելով Չինաստանով, Ճապոնիայով, Ինդոնեզիայով, բազմաթիվ ծովերով ու Հնդկական օվկիանոսով»[1]: Հասնելով Երևան՝ 1920 թ. օգոստոսի 18-ին Նախարարների խորհրդում Գ. Ջամոյանը զեկուցեց Սիբիրում և Հեռավոր Արևելքում իր դիվանագիտական ներկայացուցչության կատարած աշխատանքների մասին: Ներկայացրեց նաև վերադարձի ճանապարհին իր հանդիպումները տարբեր երկրների հայ համայնքների հետ, որոնք ցանկություն էին հայտնել կապեր հաստատել և օգնել մայր հայրենիքին[2]:

Չինաստանի խոշոր նավահանգստային քաղաք Շանհայում Գ. Ջամոյանը հանդիպեց թեյի և շաքարի խոշոր առևտրով զբաղվող հայազգի ներկայացուցիչներ Ազատյանին և Գագալյանին, որոնք ցանկություն հայտնեցին օգնելու

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 610, թ. 8-10:
[2] Տե՛ս նույն տեղը, թ. 14:

Հայաստանին: Պարսկահայ Սեդը, որ զբաղեցնում էր Հոնկոնգի դատավորի և նահանգապետի պաշտոնը, նույնպես ցանկություն հայտնեց ամուր կապ հաստատել մայր հայրենիքի հետ:

Ճապոնիայի Տոկիո, Իոկահամա, Կոբե, Նոկոհամա և այլ քաղաքներում Գ. Ջամոյանը հանդիպել էր մեծահարուստ հայ գործարարների: Նա առավել բարձր գնահատեց Իոկահամա քաղաքում մեծահարուստ հնդկահայուհի Դիաննա Աբգարին (Աբգարյան), որը հայտնի հասարակական գործիչ էր, մեծ ճանաչում ուներ Ճապոնիայում: Այդ երկրի մամուլում նա պարբերաբար տպագրում էր հոդվածներ Հայաստանի, նրա անկախության, Հայկական հարցի մասին: «Արևելքում Դիաննա Աբգարը հայանպաստ մեծ գործ է անում: ...Նրա անհատականությունն արժանի է մեր ամենալուրջ ուշադրությանը»[1]: Դ. Աբգարը խնդրել էր Գ. Ջամոյանին՝ Հայաստանի կառավարությանը հանձնել հանրապետության 300 եռագույն մետաքսյա փոքրիկ դրոշակ:

1920 թ. հուլիսի 21-ին վարչապետ և արտաքին գործերի նախարար Հ.Օհանջանյանը Դիաննա Աղաբեկի Աբգարյանին նշանակեց Ճապոնիայում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս: Հուլիսի վերջին դիվանագիտական առաքելությամբ Ճապոնիա մեկնող Գորոյանին հանձնարարվեց Դ. Աբգարին հանձնել Հ. Օհանջանյանի նամակը և հուլիսի 23-ին ստորագրված հավատարմագիրը: Վարչապետը Դ. Աբգարին գրում է. «Ինձ լաւ յայտնի է, որ ծայրագոյն Արեւելքում ոչ ոք չի գործել այնքան, որքան Դուք, մեր նորածին Հայրենիքի շահերը պաշտպանելու եւ մեր հայրենակիցների ծանր վիճակը թեթեւացնելու համար: Նոյնպէս ինձ յայտնի է որ այդ հեռու վայրերում ոչ մի հայ չունի այն-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 618, թ. 177:

քան մեծ հեղինակութիւն տեղացիների եւ մեր հայրենակիցների մօտ, ինչպէս Դուք, ուստի ես Ձեզ նշանակում եմ Հայաստանի պատուաւոր Հիւպատոս Ճապօնում եւ յուսով եմ, որ չէք մերժիլ ստանձնել այդ ծանր պաշտօնը յօգուտ մեր երիտասարդ Հայրենիքին:

Սրա հետ միասին ուղարկւում է Ձեզ համապատասխան հաւատարմագիր. վստահ եմ որ Ճապօնական Կառավարութեան կողմից ոչ մի արգելք չէք հանդիպիլ ստանալու անհրաժեշտ «exeguatur»»[1]: Նշենք, որ Ճապոնիան առաջին պետություններից մեկն էր, որ ճանաչել էր Հայաստանի անկախությունը:

Վերադարձի ճանապարհին Գ. Ջամոյանը Ճավա (Ինդոնեզիա) կղզու Ջակարդա մայրաքաղաքում հանդիպումներ ունեցավ մեծահարուստ Գևորգ Աբգարի (Աբգարյան) և Գևորգյանի հետ, որոնք ցանկություն հայտնեցին առևտրական կապեր հաստատել Հայաստանի Հանրապետության հետ և իրենց միջոցների մի մասը տրամադրել հայրենիքին: Կղզում նրանք ունեին 40 հազար դեսյատին գյուղատնտեսական ցանքսեր, հսկա ալրաղաց, շաքարի մեծ գործարան և 120 կիլոմետր երկարությամբ երկաթուղագիծ[2]:

Արխիվային վավերագրերի և նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ առնչություններն օբյեկտիվ պատճառներով չտվեցին անհրաժեշտ արդյունքներ, սակայն կարևոր էր հայ գաղութի հետ կապերի հաստատումը և նրա աշխուժացումը:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 610, թ. 2-3:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 618, թ. 177:

2. Հարաբերությունների վերականգնումը Ռուսաստանի հարավի հետ

Ինչպես արդեն նշել ենք, *միացյալ Հայաստանի* անկախության հռչակագիրն ընդունելուց առաջ և հետո սառել էին պաշտոնական հարաբերությունները Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, քանի որ գեներալ Ա. Դենիկինը չէր ցանկանում ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը, որը հակասում էր ռուսական կայսրությունը վերականգնելու նրա ռազմավարությանը: Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետությունը ինչ-որ չափով ազատ էր գործում արտաքին քաղաքականության բնագավառում: Սակայն 1919 թ. կեսերին բավական սրվեց հանրապետության միջազգային դրությունը, լուրջ սպառնալիքներ ստեղծվեցին նրա անվտանգության համար, որը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետության նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի զավթողական նոր նկրտումներով, ինչպես նաև՝ հարևան Վրաստանի թուրքամետ դիրքորոշումով: Արդեն բազմիցս նշել ենք, որ հենց որ Անդրկովկասում բարդ իրադրություն էր ստեղծվում, Վրաստանն անմիջապես կողմնորոշվում էր դեպի Թուրքիան՝ ի վնաս Հայաստանի: Այդպես եղավ նաև այս անգամ: Ինչպես նշել ենք, ընկնելով «երկաթե օղակի» մեջ՝ Հայաստանի Հանրապետությունն աջակցություն էր փնտրում դրսում՝ ձգտելով կենտրոնացնել դիվանագիտական ջանքերը՝ վերականգնելու հարաբերությունները Ռուսաստանի հարավի հետ: Այդ առնչությամբ գեներալ Ա. Դենիկինը գրում է, որ աշնանը Հայաստանի Հանրապետության կողմնորոշումը կրկին փոխվեց, և դրանով պայմանավորված՝ փոխվեց նաև վերաբերմունքը Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հա-

տուկ խորհրդակցության» նկատմամբ:[1]:

Հրաժարվելով զենքի ուժով Անդրկովկասն իր ազդեցության տակ պահելու մարտավարությունից՝ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» 1919 թ. հուլիսի 2-ի գաղտնի հրահանգով ***իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին ամբողջ մարտավարությունը ուղղել առևտրատնտեսական, ֆինանսական համագործակցությանը՝ տիրելու Անդրկովկասի տնտեսական լծակները, ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտները և դրանով քաղաքական կախվածության մեջ գցել Անդրկովկասի հանրապետությունները:*** Անդրկովկասում ի դեմս Հայաստանի Հանրապետության հենարան ստեղծելու նպատակով «Հատուկ խորհրդակցությունը» ձգտում էր վերականգնել պաշտոնական հարաբերությունները: Ըստ ռուսական քաղաքական գործիչների՝ անհրաժեշտ էր գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի այդ վերամիավորումը որքան հնարավոր է խաղաղ և առանց ցնցումների իրականացվեր[2]: Փաստորեն երկուստեք՝ թե՛ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և թե՛ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» ձգտում էին վերականգնել պաշտոնական շփումները՝ յուրաքանչյուրը առաջնորդվելով քաղաքական տարբեր նկատառումներով, սեփական շահերով:

1919 թ. հուլիսին առաջին քայլերը կատարվեցին «հաշտության» ուղղությամբ: Հուլիսի 5-ին Օմսկ ուղևորվելու ճանապարհին Գ. Ջամոյանը Եկատերինոդարում հանդիպումներ ունեցավ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչների հետ: Հուլիս 6-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանին ուղղած նամակ-զեկույցում Գ. Ջամոյանը տեղեկացնում է. «...Ինձ ընդունեց գլխավոր հրամանատարի օգնական և «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Լուկոմսկին: Ընդունելությունը կրում է շատ սիրալիր և նախազգուշական բնույթ:

Գեներալ Ա. Լուկոմսկին ողջունեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ընդգծելով, որ իրեն հայտնի է այն բոլոր ծանր փորձությունների մասին, որ ստիպված կրում է մեր կառավարությունը: Հիշատակեց մեր նկատմամբ Ադրբեջանի և Վրաստանի թշնամական հարաբերությունների մասին: Հասկացրեցի գեներալ Ա. Լուկոմսկուն, որ Երևանից եկել է մեր կառավարության լիազորված անձը՝ պարզելու Կամավորական բանակի և Հայաստանի հարաբերությունների որոշ հարցեր: Ռոստովից ժամանելուց հետո Մարտիրոս Հարությունյանը* կստանձնի իր պատասխանատու և ծանր առաքելությունը»[1]: Գ. Ջամոյանը նամակը ավարտում է կարծիքով, որ ժամանակն է Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ վերականգնել պաշտոնական հարաբերությունները[2]:

1919 թ. հուլիս-օգոստոսին Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը ավելի բարդացավ: Ադրբեջանի բացահայտ զավթողական նկրտումների առիթով հուլիսի 18-ին արտաքին գործերի նախարարին ուղղած գաղտնի նամակ-զեկույցում Ադրբեջանում Հայաս-

[1] Տե՛ս ***Деникин А.***, Очерки русской смуты. В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, էջ 253:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 97:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, թ. 6:
[2] Տե՛ս նույն տեղը, թ. 8:

տանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը* տեղեկացնում է, որ Ադրբեջանի իշխանությունները լայն նախապատրաստություն են տեսնում, օգտագործում են հնարավոր բոլոր միջոցները իրենց ազդեցությունը Զանգեզուրի և Նախիջևանի վրա տարածելու համար: Ղարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանում մահմեդական ապստամբությունները սերտորեն փոխկապակցված են և ընթանում են ադրբեջանական իշխանությունների նախապես մշակած ծրագրով[1]: Թուրք-ադրբեջանական գաղտնի կազմակերպություններն իրենց գործակալների միջոցով աշխատում էին Հայաստանի Հանրապետության տարածքում խորացնել մահմեդականների թշնամանքը, նրանց մատակարարում էին թե՛ դրամական միջոցներ, թե՛ զենք ու զինամթերք: Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում, այլ նաև Բաքվում հակահայկական լայն քարոզչություն էին ծավալում՝ հայկական կոտորած կազմակերպելու սպառնալիքով: Ադրբեջանի ղեկավար շրջանների նպատակն էր իրենց գերիշխանությունը հաստատել «մինչև նախկին ռուսական սահմանները և միանալ Տաճկաստանի հետ»[2]: Թուրք-ադրբեջանական ղեկավար շրջանները իրենց նպատակին հասնելու համար ծրագրում են Արաքսի հովտով, Օրդուբադի վրայով անցնել Նախիջևան: Այդ ծրագիրը իրագործելու համար նրանց միակ խոչընդոտը Մեղրին էր՝ շրջակա հայկական գյուղերով: Ի դեպ, այն ժամանակից առ այսօր հայկական այդ հնագույն բնակավայրը թուրք-ադրբեջանական իշխանությունների աչքի փուշն է, մեծ ոսկոր նրանց կոկորդում՝ իրագործելու ռազմատենչ, վայրենաբարո երկու ժողովուրդների ցամաքային անմիջական կապն ու միավորումը: Այդ արգելքը հաղթահարելու համար ադրբեջանական իշխանությունները այն ժամանակ բանակցություններ էին վարում պարսկական մի քանի «աւազակաբարոյ խաների հետ, որպեսզի յարձակումը սկսելու դեպքում նոքա աջակցեն իրենց զինակցութեամբ, կրակ բանալով Մեղրու վրայ դիմացի պարսկական բարձրութիւններից»[1]: Ադրբեջանի կառավարությունը Պարսկաստանի վրայով Նախիջևանի շրջան էր ուղարկել երկու հարյուր հազար փամփուշտ և Սուլթանովի միջոցով երեք միլիոն ռուբլի: Այդ ծրագիրն իրագործելու նպատակով Ադրբեջան էր ուղարկվել նաև 15 թուրքական սպա[2]:

Օգոստոսի սկզբին մահմեդականներին հաջողվեց լարված վիճակ ստեղծել նաև Օլթիի, Սուրմալուի, Կարսի շրջաններում: Մեր երկրում ստեղծված ներքին ու արտաքին ծանր դրության մասին գեներալ Ա. Դենիկինը հաղորդում է, որ հուլիս-օգոստոսյան «իրադարձությունները հայկական բանակին դրեցին անօգնական վիճակում: Պահեստային հրացանների բացակայությունը և ընդամենը 300 հազար փամփուշտի պաշարը սահմանափակում էին նրա մարտունակությունը և իմաստից զրկում զորահավաքը: Այնինչ երկրի ամբողջ հարավը և հարավ-արևելքը բռնկված էին մահմեդականների ապստամբությամբ: Այն հարավից տարածվում էր դեպի Երևան, սպառնում էր Կարսին և Ալեքսանդրապոլին, իսկ չեզոք գոտում՝ Սադախլուի մոտ, ձգտում էր փակել երկիր անցնող միակ զարկերակը»[3]:

Փաստորեն մահմեդականները Հայաստանի Հանրապետությունը շրջափակել էին «երկաթե օղակով»՝ մեծ սպառնալիք ստեղծելով մայրաքաղաք Երևանին: Իսկ Հայաստանի Հանրապետության այդ շրջանների վերահսկողությունը

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 12:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 13:
[3] ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, էջ 251:

իրականացնող անգլիական զինվորական հրամանատարությունը օգոստոսի 15-ին հեռանալու էր Անդրկովկասից: Ինչպես արդեն նշել ենք, անգլիական զորքերը ներկայացնում էին Համաձայնության պետությունները Անդրկովկասում, և նրանց խնդիրն էր ապահովել խաղաղությունը երկրամասում: Այս առումով թուրքերի կողմից Հայաստանի Հանրապետությանը սպառնացող վտանգի պայմաններում անգլիական զորքերի ներկայությունը ձեռնտու էր Հայաստանի Հանրապետությանը: Ահա թե ինչու անգլիական զինվորների հեռանալը Անդրկովկասից մեծ անհանգստություն և մտահոգություն պատճառեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը: 1919 թ. հուլիսի 28-ին Փարիզից Ա. Ահարոնյանը արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում հաղորդում է. «Հասկանում եմ Ձեր անհանգստությունը անգլիական զորքերի Կովկասից քաշվելու լուրերի առթիվ, խնդրում եմ հավատալ, որ նույնիսկ խռովքը մեզ էլ պաշարել և շարունակ և յուրաքանչյուր հեռագիրը մեզ նոր և նոր և հաճախակի դիմումների նյութ են ծառայել»[1]: Անգլիական զինվորական առաքելության դուրսբերումը անհանգստություն պատճառեց նաև Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը: Գեներալ Ա. Լուկոմսկին հաղորդում է, որ անգլիական զինվորների ներկայությունը Անդրկովկասում անհրաժեշտություն է: 1919 թ. օգոստոսի սկզբին, երբ տեղեկություններ ստացվեցին անգլիական զինվորների հեռանալու հավանականության մասին, գեներալ Ա. Դենիկինը խնդրեց նրանց չգնալ այդ քայլին, ***քանզի մտավախություն կար, որ դրանից հետո Անդրկովկասում բոլշևիզմը կարող է տարածվել***[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 21, գ. 355, մաս I, թ. 16:
[2] Տե՛ս ***Лукомский А.***, Деникин и Антанта. Революция и гражданская война в описаниях белогвардейцев, М., 1991, с. 93:

Չգտելով ինչ-որ կերպ կանխել անգլիական զորքերի հեռանալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Փարիզում իր պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանից պահանջեց բանակցություններ վարել բրիտանական կառավարության ներկայացուցիչների հետ՝ հետաձգելու անգլիական զորքերի դուրսբերումը Անդրկովկասից, ինչպես նաև տեղեկացնել խաղաղության վեհաժողովին թուրք-թաթարական զավթիչների կողմից Հայաստանի Հանրապետությունը օգակելու ու այնտեղ ծանր կացություն ստեղծելու մասին: 1919 թ. օգոստոսի 6-ին Ա.Խատիսյանին ուղղած նամակ-զեկույցում Ա. Ահարոնյանը տեղեկացնում է. «Գրում եմ Ձեզ Պ. նախարարապետ, որպեսզի դաշնակիցների վրա շատ մեծ հույսեր չդնեք Ձեր որոշումների և գործողությունների ժամանակ և հաշվի առնեք տեղական ուժերի և պայմանների փոխհարաբերությունը: Դաշնակիցների և կոնֆերենցիայի այս թույլությունը լավ ծանոթ է թուրքերին և մանավանդ Ադրբեջանին, որի պատվիրակությունը այստեղից անկասկած իրազեկ է պահում և՛ թուրք և՛ Ադրբեջանի կառավարությանը և անշուշտ այդ տեղի նրանց բոլոր շարժումները դրա արդյունքն են: ...Մեր ճիգերը անգլիական կառավարության (մոտ- Գ.Պ.) դատապարտված են ձախողանքի»[1]: Նամակ-զեկույցի վերջում Ա. Ահարոնյանը ավելացնում է, որ կառավարությունը նկատի ունենա, որ ա) դաշնակիցները և Փարիզի խաղաղության վեհաժողովը երբեմն անզոր են կոնկրետ քայլեր կատարելու հատկապես հեռավոր վայրերում, բ) թուրք-թաթարները խաղաղության վեհաժողովի այդ անզորության մասին լավ գիտեն, գ) Մեծ Բրիտանիան Կովկասում մտադիր չէ հրաժարվելու իր մուսուլմանական քաղաքականությունից և միշտ պետք է պաշտպանի թուրքերին

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 33-34:

ու թաթարներին[1]: Օգոստոսի 8-ին Ա. Ահարոնյանը դարձյալ Ա. Խատիսյանին ուղղած մեկ այլ նամակ-զեկույցում տեղեկացնում է. «Երեք օրից ի վեր ծեծում եմ բոլոր դռները, սեղմում եմ բոլոր ձեռքերը, որ կարող է որևէ օգնություն հասցնել մեզ: Դժբախտությունն այն է, որ անմիջական օգնություն է հարկավոր և կարող են անել միայն անգլիացիք: Անգլիայի բանվորական կուսակցությունը գրեթե բռնադատեց կառավարությանը ետ քաշել իր ձեռքերը Ռուսիայից և մենք դրա զոհերն ենք: Ընդամենը երկու շաբաթ առաջ ընդունեց մեզ, հաղորդեցին, որ անգլիական կառավարության հայտարարության համաձայն համայնքների պալատում նրանց զորքերը Կովկասից չպիտի քաշվեն, և հանկարծ այս փոփոխությունը, որ մեզ հանկարծակիի բերեց, այնուամենայնիվ միայն նրանք կարող են մեզ օգնել, այս պատճառով անմիջապես հեռագրեցի Լոնդոն Լոյդ Ջորջին, մեզ բոլոր բարեկամ անգլիացիներին, Համայնքների պալատի անդամներին և անգլիական բանվոր կուսակցության շեֆ Անդամոլնին, խնդրելով թե հնար է, առժամապես անգլիական զորքերը չքաշել Կովկասից և վերջ դնել թուրք-թաթարական սպառնալի վտանգին: Միաժամանակ հեռագրեցի Լյուցեռն, ուր այժմ գումարված է Ինտերնացիոնալը, խնդրելով անգլիական բանվորների ներկայացուցիչներին՝ Անդերսոնին և Մաքդոնալդին[2], ազդել իրենց կառավարության վրա և թողնել բրիտանական զորքերը Կովկասում: Հեռագրեցի Հռոմ նախարարապետ Նիդտիին և Ամերիկա՝ Վիլսոնին: Անցա անգլիական պատվիրակություն, տեսակցեցի մեր գործերի բաժինը վարող Վանզիտարի հետ, որ հայտնեց նույնպես թե իրենք իրազեկ են թե այս բոլորը Արդրբեջանի գործն է և թուրքերի և թե տարաբախտաբար իր ճիգերը անգլիական զորքերը պահելու Կովկասում մնացին ապարդյուն, այլ միայն հաջողվեց հեռագրել անգլիական բարձր հրամանատարությանը, որ եթե հնար է, զենք ու ռազմամթերք տան հայերին: Գեթ այս չնչին օգնությունը կհասնի ձեզ թե ոչ, չգիտեմ»[1]:

Իրականում Հայաստանի Հանրապետության կառավարության դիմումը Փարիզի խաղաղության վեհաժողովին և պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի ջանքերը որևէ դրական արդյունք չտվեցին՝ կասեցնելու անգլիական զորքերի դուրսբերումը Անդրկովկասից, որովհետև դա նույն խաղաղության վեհաժողովի որոշման կատարումն էր: Դրա փոխարեն Հայաստանի Հանրապետություն ուղարկվեց ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելը՝ որպես Հայաստանի գերագույն հանձնակատար: Գեներալ Ա. Դենիկինը գրում է, որ Հայաստանի արյունալի իրադարձությունների ընթացքում հայ ժողովրդին աջակցելուց կտրականապես հրաժարվելը և հայտարարելը, որ իրենք ռազմական օգնություն ցույց չեն տա, այլ «միայն կօգտագործեն իրենց հեղինակությունը», վեջնականապես խաթարեցին հայերի վստահությունը և համակրանքը անգլիացիների նկատմամբ[2]:

1919 թ. օգոստոսի 15-ին կառավարության հանձնարարությամբ փոխվարչապետ Ա. Սահակյանը Հայաստանի Հանրապետության պառլամենտի[3] 5-րդ նիստում ներկայաց-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 34:
[2] Տե՛ս ԳԱԹ, ՀՀՌ արխիվ, Բոստոն, N 1687-23:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, մաս I, թ. 134-135:
[2] Տե՛ս ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, էջ 249:
[3] 1919 թ. օգոստոսի 1-ին՝ նորընտիր Հայաստանի Խորհրդի (խորհրդարանի) բացման օրը, վերջինս վերանվանվեց Հայաստանի Հանրապետության պառլամենտ: Օգոստոսի 5-ի նիստում Հայաստանի Հանրապետության պառլամենտի նախագահ ընտրեց Ավետիս Ահարոնյանին, փոխնախագահներ՝ Լևոն Շանթին*, Սարգիս Արարատյանին, ավագ քարտուղար՝ Հակոբ Տեր-Հակոբյանին, կրտսեր քարտուղար՝ Արամ Սաֆրաստյանին*: Հետագայում պառլամենտի ղեկավարների կազմում կատարվել են փոփոխություններ: Ա. Ահարոնյանը Փարիզից չվերադարձավ Երևան: Ս. Արարատյանը ընտրվում է նախարար և ազատվում փոխնախագահի պարտականությունից: Հետագայում պառլամենտի փոխ-

ռեց երկրի ռազմաքաղաքական ծանր դրությունը և այդ վիճակը շտկելու միջոցառումները: «Մեր դարավոր թշնամի Թուրքիան երկրի ներսում և դրսում նորանոր ռազմաճակատներ է ստեղծում,- ասված է զեկուցման մեջ: - Մի նոր ռազմաճակատ ստեղծվում է էրզրումից՝ տաճկական զորքերի դեպի Սարիղամիշ շարժվելով: Մի ուրիշ ռազմաճակատ Սուրմալուի շրջանում, որը մինչև այժմ տեղական ընդհարումների բնույթ էր կրում, իսկ այժմ լայնածավալ ճակատ է ստեղծել Կարակալայի մոտ: Մյուս կողմից էլ տաճիկ կառավարության ... զորքերը քրդական հրոսակախմբերի հետ, թնդանոթներով զինված, գալիս են Արաքսի ուղղությամբ: Չորրորդ ռազմաճակատը Ղամարլուինն է: Հինգերորդ դեռ չորոշված ռազմաճակատը Դարալագյազն է: Մենք հետզհետե շրջապատվում ենք երկաթե օղակով: Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը»[1]:

Հանրապետությունում ստեղծված ռազմաքաղաքական ծանր դրությունը պառլամենտում քննարկելիս պատգամավորներն իրենց ելույթներում նշեցին, որ կառավարությունը օգնության հույսեր չունի Փարիզի խաղաղության վեհաժողովից, իսկ անգլիական զորքը սկսել է հեռանալ Անդրկովկասից, որն ավելի է սեղմում մահմեդականների կողմից Հայաստանի Հանրապետության օղակումը: Պառլամենտը որոշեց հայտարարել՝ հայրենիքը վտանգի մեջ է, և դիմել ոչ միայն դաշնակից երկրների, այլ նաև մի շարք այլ պետությունների պառլամենտներին: Սակայն պառլամենտի այդ հայտարա-

նախագահի պարտականություններ են կատարել պատգամավորներ Հովսեփ Արղությանը*, Սիրական Տիգրանյանը (սեպտեմբերի 16-ից), Ավետիք Սահակյանը (նոյեմբերի 6-ից) և Հովհաննես Քաջազնունին: Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 116, տե՛ս նաև ***Հակոբյան Ա.***, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 191-195:

[1] «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Երևան, 20 օգոստոսի 1919:

ությունները չունեցան որևէ դրական նշանակություն: Առանձին պատգամավորներ առաջարկեցին փոխել Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքական կուրսը: Պատգամավոր Ս. Թորոսյանը նշեց. «Մի տարի սրանից առաջ ջախջախված Հայաստանը կանգնած էր Տաճկաստանի առաջ, բայց մի հույս ուներ, թե կռվում է դաշնակիցների համար և այդ հույսով էլ սպասում էր իր փրկության: Նրա հույսերն ի դերև անցան: ...Անգլիայի ներկայացուցիչները շատ անտարբեր են այս խնդրում, հետևաբար անհրաժեշտ է հիմնովին փոխել կառավարության ներկա քաղաքականությունը: Կառավարությունը պետք է շարունակի դիվանագիտական հարաբերությունները արտաքին աշխարհի հետ: Նա պետք է համաձայնության գա Հայաստանի հարևանների հետ»[1]: Պատգամավոր Ա. Խոնդկարյանը (սոցիալիստ-հեղափոխական) իր ելույթում նշեց, որ Հայաստանի իշխանությունները հիմնավորապես պետք է փոխեն իրենց քաղաքականությունը. «Սեփական օրիենտացիան մեզ դեպի կործանում է տանում: ***Մեր քաղաքական գաղափարները պիտի ուղղենք դեպի հյուսիս և ապավինենք միայն Ռուսաստանին:***

...Մինչ այժմ Ամերիկան չկա, իսկ անգլիացիներն էլ չեն ապահովում մեզ, ուստի մեզ մնում է ավելի շուտ առավելություն տալ Ռուսաստանին: Հայաստանը պետք է դաշնակցային կապերով կապվի Ռուսաստանի հետ»[2] (ընդգծումը մերն է,- *Գ. Պ.*):

Փաստորեն պառլամենտում դրսևորվեց պատգամավորների հիասթափությունը Փարիզի խաղաղության վեհաժողովի և Համաձայնության պետությունների նկատմամբ: ***Երկրի անվտանգության շահերից ելնելով՝ պառլամենտում***

[1] Նույն տեղում:

[2] «Հայաստանի աշխատավոր» լրագիր, Երևան, 21 օգոստոսի 1919:

առաջարկ եղավ վերականգնել պաշտոնական հարաբերությունները Ռուսաստանի հարավի հետ և փոխել Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքական կուրսը.

Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» ուշիուշով հետևում էին Հայաստանի Հանրապետությունում ծավալվող իրադարձությունների ընթացքին: 1919 թ. օգոստոսի 17-ին Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության շտաբի պետին ուղղած գաղտնի նամակ-զեկույցում գնդապետ Մ. Զինկևիչը տեղեկացնում է, որ մահմեդականները համատարած շրջափակել են Հայաստան Հանրապետությունը, և միակ ելքը Բելի Կյուչն է: Հայկական բանակը երկար դիմադրել չի կարող, քանի որ չունի անհրաժեշտ քանակությամբ զենք, իսկ պահեստներում գրեթե բացակայում է փամփուշտի պաշարը, և հնարավորություն չկա հայկական բանակում նոր զորակոչվածներին զինել ու հանդերձավորել: Պառլամենտը և կառավարությունը գիտակցում են, որ այդ ծանր ռազմաքաղաքական իրավիճակում Հայաստանի Հանրապետությանը կարող է սատարել Ռուսաստանի հարավը. «Այսպիսով ... հայ քաղաքական գործիչները թեքվում են դեպի Ռուսաստան: Սակայն դեպի Ռուսաստան քաղաքական փոխակերպումը շատ դժվար ու դանդաղ է ընթանում և ինչ ռեալ արդյունք կունենա, դժվար է ասել»[1]: Այնուհետև գնդապետ Մ. Զինկևիչը խորհուրդ է տալիս Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարությանը, որ «Հայկական հարցը ապագայում Ռուսաստանի համար ունենալու է կարևոր նշանակություն, ինչպես նախկինում էր: Պետք է հայերի հետ հաշվի նստել որպես ամենաչեզոք տարրի, ուստի ներկա պահին անհրաժեշտ եմ համարում հայերին ցուցաբերել բարոյական, իսկ ավելի լավ է նյութական օգնություն: Ընդ որում, անհրաժեշտ է գործել՝ չգրգռելով մահմեդականներին, առանձնապես՝ թուրքերին»[1]: Նամակ-զեկույցի վերջում գնդապետ Մ. Զինկևիչը գտնում է, որ անհրաժեշտ է կարճ ժամկետում Հայաստանի Հանրապետությանը տրամադրել մեկ միլիոն փամփուշտ, վարկ հատկացնել, թույլատրել հաց գնելու և այլն. դա մեծ լծակ կլինի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ձեռքում Հայաստանի Հանրապետության իշխանությունների վրա քաղաքական ազդեցություն ունենալու համար[2]:

Գեներալ Ա. Դենիկինը տեղեկացնում է, որ ժամանակին կատարվեց գնդապետ Մ. Զինկևիչի պահանջը և օգոստոսի վերջին՝ ամենածանր պահին, մեծ դժվարություններով հաջողվեց Բաթումից ցամաքային ճանապարհով Արդահան, ապա այնտեղից Երևան ուղարկել երեք միլիոն փամփուշտ[3]: Առաջ անցնելով նշենք, որ երկրի համար այդ ծանր օրերին Կամավորական բանակից ստացված փամփուշտների քանակությունը թեև մեծ չէր, բայց շոշափելի օգնություն էր: Ռուբենը գրում է. «...Փամփուշտ եւ այլ իրեղէններ, որ մեզ հասան ամենադժնդակ պայմաններում. առանց դրան, գուցէ մի տարի առաջ Հայաստանը կործանման ենթարկուէր: ... Հայաստանը անմիջականօրեն խիստ օգտուած է միմիայն Ռուսաստանից եկած ռազմամթերքից»[4]:

Ի դեպ, Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» իրենց հերթին ամեն կերպ ձգտում էին վերականգնել պաշ-

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 79.

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 79.
[2] Նույն տեղում:
[3] Տես ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, էջ 253:
[4] ***Ռուբէն***, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 167-168:

տոնական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության կառավարության հետ: Օգտագործելով ռազմական ու տնտեսական օգնության ձևերը՝ հրամանատարությունը Հայաստանի Հանրապետության վրա քաղաքական ազդեցություն էր ձեռք բերում՝ շեշտելով հարաբերությունների վերականգնման անհրաժեշտությունը:

1919 թ. օգոստոսի 30-ին «Հատուկ խորհրդակցության» քաղաքական գրասենյակի պետ գնդապետ Դ. Չայկովսկուն ուղղած նամակում գնդապետ Մ. Զինկևիչը դժգոհում էր, որ գեներալ Պարախոնսկին ժամանակին հրահանգ չստացավ փամփուշտների մի մասը Բաթումում պահելու վերաբերյալ: ***Դա կարող էր հետագայում ծառայել որպես գրավ՝ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության վրա քաղաքական ճնշումը պահպանելու համար***[1]: «Այնուամենայնիվ,- հաղորդում է գնդապետ Մ. Զինկևիչը,- ես դեռևս ունեմ բավական ազդեցիկ միջոցներ: Ինչ վերաբերում է ֆինանսականին, ապա ես մոտ ապագայում կներկայացնեմ Ռոստովի պետական բանկից Հայաստանին հատկացվելիք երաշխավորված փոխառության նախագիծ: Դա մեզ համար շատ օգտակար կլինի: Բացել Հայաստանում ռուսական պետական բանկի մասնաճյուղ, որը կկրի ռուսական դրոշը և մեզ համար կունենա քաղաքական մեծ նշանակություն»[2]:

Սակայն, հակառակ ռուսական քաղաքական շրջանների սպասումների, Հայաստանի Հանրապետության իշխանությունները չէին դրսևորում շտապողականություն Ռուսաստանի հարավի հետ հարաբերություններ վերականգնելու խնդրում: Դա, անշուշտ, ուներ իր որոշակի պատճառները: Ճիշտ է, պառլամենտի և կառավարության հայտարարությունները չունեցան շոշափելի նշանակություն «երկաթե օղակում» հայտնված Հայաստանին սատարելու համար, բայցևայնպես հանրապետության ղեկավարությունը շարունակում էր հույսեր փայփայել, օգնություն ակնկալել Փարիզի խաղաղության վեհաժողովից, Համաձայնության և այլ պետություններից: Հույսեր էին կապում նաև վերջերս Հայաստանի Հանրապետություն ժամանած գնդապետ Ու. Հասկելի ու Հայաստանի մանդատ Ամերիկային տալու հետ:

1919 թ. օգոստոսի 3-ին ֆրանսիական զինվորական հրամանատարությունը Անդրկովկասի անգլիական զինվորական առաքելությանը և Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Դենիկինին հեռագրով տեղեկացրեց, որ ամսի 13-ին Բաթում է ժամանելու ամերիկյան գնդապետ Ու. Հասկելը: Հեռագրից երևում էր, որ միջդաշնակցային գլխավոր խորհուրդը որոշել է Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի կառավարությունների անունից գնդապետ Ու. Հասկելին նշանակել գերագույն հանձնակատար Հայաստանի Հանրապետությունում: Նրան միաժամանակ հանձնարարված էր ձեռնարկել բոլոր միջոցները՝ Հայաստանի Հանրապետությանն անհրաժեշտ օգնություն կազմակերպելու համար: Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում գործող Դաշնակցային կառավարությունների և զինվորական հրամանատարությունների բոլոր ներկայացուցիչները պարտավոր էին ամեն կարգի աջակցություն ցույց տալ գնդապետ Ու. Հասկելին: Հեռագրի վերջում ասվում էր, որ Կիլիկիան չի մտնում այն տարածքների ցուցակի մեջ, որոնց վրա տարածվում է գնդապետ Ու. Հասկելի լիազորությունները[1]: 1919 թ. օգոստոսի 14-ին Բաթումում գնդապետ Ու. Հասկե-

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 104:
[2] Նույն տեղում:

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 90:

լին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գ. Եդիգարյանը և Հայոց ազգային խորհրդի նախագահ Աշոտ Մնդոյանցը: Հյուպատոսը, Հայաստանի Հանրապետության կառավարության անունից բարի գալուստ մաղթելով գնդապետ Ու. Հասկելին, «...ցանկութիւն յայտնեց որպէսզի կտրուկ միջոցներ ձեռք առնուին վերջ տալու հայերին և Հայաստանին սպառնող վտանգին»[1]: Գնդապետ Ու. Հասկելը պատասխանեց, որ բոլոր միջոցները կգործադրի խաղաղ ճանապարհով կարգավորելու Հայաստանի Հանրապետության ծանր վիճակը և կաջակցի արագացնելու Հայաստանի մանդատը Ամերիկային տալու գործընթացը[2]: Օգոստոսի 21-ին Երևանում գնդապետ Ու. Հասկելին մեծ շուքով ու հանդիսավորությամբ դիմավորեցին Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, պառլամենտականները և քաղաքացիները: Նա իր առաջին տեսակցության ժամանակ վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանին[3] հաղորդեց, որ Փարիզի խաղաղության վեհաժողովը նրան հանձնարարել է ստանձնել հայ ժողովրդի ներքին ու արտաքին ապահովությունը, պարենավորումը, ապահով ներգաղթը և այլն: Այնուհետև հայտնում է, որ երեք օր կմնա Երևանում՝ հանգամանորեն ծանոթանալու

[1] «Նոր աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 21 օգոստոսի 1919:
[2] Տե՛ս նույն տեղը:
[3] 1919 թ. օգոստոսի 7-ի պառլամենտի նիստում Ալեքսանդր Խատիսյանը ընտրվեց Հայաստանի Հանրապետության նախարար-նախագահ, և նրան հանձնարարվեց կազմել հանրապետության կառավարությունը: Օգոստոսի 10-ի նիստում պառլամենտը հաստատեց նախարար-նախագահ Ա. Խատիսյանի ներկայացրած Հայաստանի Հանրապետության կառավարության հետևյալ կազմը.
Նախարար-նախագահ և արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան
Ներքին գործերի և արդարադատության՝ Աբրահամ Գյուլխանդանյան*,
Ֆինանսների և պարենավորման՝ Սարգիս Արարատյան,
Աշխատանքի և խնամատարության՝ Ավետիք Սահակյան,
Հանրային կրթության և արվեստի՝ Նիկոլ Աղբալյան,
Զորական գեներալ՝ Խաչատուր Արարատյան:

երկրի ներքին և արտաքին դրությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության պահանջներին, այնուհետև հավաքած տեղեկությունների ու եզրակացությունների մասին կհեռագրի Փարիզի խաղաղության վեհաժողովին և հույս ունի, որ մինչև մանդատի հարցի լուծումը կկարողանա ապահովել Հայաստանի Հանրապետության անվտանգությունը: Նա Ա. Խատիսյանին տեղեկացրեց նաև, որ տասն օրից Հայաստանի Հանրապետություն է գալու ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդը՝ հանրապետության ընդհանուր վիճակը ուսումնասիրելու և պարզելու, թե որքան ամերիկյան զորք է հարկավոր ամբողջ Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելու համար և այլն: Հաղորդեց նաև, որ Ամերիկայում քննարկվում է Հայաստանի մանդատի խնդիրը[1]: Զրույցի ընթացքում Ա. Խատիսյանը գնդապետ Ու. Հասկելին հանգամանորեն ներկայացրեց հանրապետության ներքին և արտաքին ծանր վիճակը, փաստեց, թե ինչպես թուրք զավթիչները երկու ամիս է՝ տենդագին նախապատրաստվում են նոր աղետներ բերելու Հայաստանի Հանրապետության նեղ սահմաններում կուտակված հայության գլխին՝ ոտքի հանելով նաև տեղի մահմեդական տարրերին: Զրույցի վերջում Ա. Խատիսյանը նշեց, որ այդ պատճառով Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր հայացքը սևեռել է դեպի Փարիզի խաղաղության վեհաժողովը և մասնավորապես՝ Ամերիկան, որի ներկայացուցիչն է գնդապետ Ու. Հասկելը: Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ին, Հայաստանի Հանրապետության պառլամենտի 6-րդ նիստում նախագահի ողջույնի խոսքից հետո ելույթ ունեցավ գնդապետ Ու. Հասկելը: Օգոստոսի 27-ին Թիֆլիսում լույս տեսնող «Նոր աշխատավոր» լրագիրը տեղեկացնում է, որ պառլամենտի անդամները և ժողո-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 1:

վուրդը «խանդավառ և երկարատև օվացիա սարքեցին գերագույն կոմիսարին»[1]: Գնդապետը Ու. Հասկելը պառլամենտում մանրամասն խոսեց իր իրավունքների, լիազորությունների և իրականացվող խնդիրների մասին: Հավաստեց նաև, որ կանի ամեն ինչ՝ Հայաստանի Հանրապետությանն օգնելու և նրա անվտանգությունը ապահովելու համար: Նա իր ելույթում կարևորեց նաև Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ զինական օգնությունը. «...Ես խնդրել եմ անգլիական ուժերին, որ ժամանակավորապես անգլիական զինվորները մնան մինչև փոխարինվելը, որպեսզի մանր ազգությունների միջև տեղի ունեցող մանր ընդհարումները հարթվեն: Երբ Պոլսում իմացա նրանց վերադառնալու կարգադրությունը, ես խնդրեցի անգլիական հրամանատարությանը և Կլեմանսոյին, առժամապես դադարեցնել: Այս րոպեին այդ հարցը հավանաբար քննվում է Փարիզում, և ես մեծ հույս ունեմ, որ իմ խնդիրը կհարգվի, իսկ նրանց հեռանալու դեպքում էլ մեզ է մնում մտածել որեվէ զորքով փոխարինելու նրանց»[2]: Գնդապետ Ու. Հասկելը նշեց, որ կասկած չկա. Ադրբեջանը խախտել է անգլիական զինվորական հրամանատարության որոշած սահմանները: Պառլամենտին հավաստիացրեց, որ կմեկնի Բաքու և վերջ կտա նրանց ռազմական գործողություններին, իսկ եթե նրանք փորձեն չենթարկվել, ապա կդիմի կտրուկ միջոցների և անձնական պատասխանատվության կենթարկի կազմակերպիչներին ու ղեկավարներին[3]:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները համոզվեցին, որ գնդապետ Ու. Հասկելին ուղարկել են լայն

[1] «Նոր աշխատավոր» լրագիր, 27 օգոստոսի 1919, Թիֆլիս:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 7: Տե՛ս նաև «Նոր աշխատավոր» լրագիր, 27 օգոստոսի 1919, Թիֆլիս:
[3] Տե՛ս նույն տեղը:

իրավասություններով, սակայն առանց որևէ լծակի, որ կարողանար կասեցնել ադրբեջանցիների և թուրքերի ռազմական գործողությունները: Ա. Խատիսյանը գրում է. «Անգլիացիների գնալուց յետո մենք գտնուում ենք ամերիկացիների հովանաւորության տակ, բայց այդ հովանաւորութիւնը կրում է միայն պլատոնական բնաւորութիւն, որովհետև ամերիկացիք զրկուած լինելով զինուորական ոյժից՝ ոչ մի հնարաւորութիւն չունեն ստիպելու թաթարներին և տաճիկներին կատարել իրենց կարգադրութիւնները»[1]: Չնայած դրան՝ Հայաստանի Հանրապետության ղեկավար շրջանները մեծ ոգևորությամբ ընդունեցին գնդապետ Ու. Հասկելին՝ նրա հետ կապելով որոշ հույսեր: Ծանր կացության մեջ գտնվողը միշտ էլ կառչում է ամենաչնչին հույսից: Նկատի ունենալով ամերիկյան հանձնակատարին ցույց տրված ջերմ ընդունելությունը՝ Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարությունը կատարեց շտապ եզրակացություն. Հայաստանի Հանրապետությունը ամերիկյան կողմնորոշում ունի:

Գնդապետ Մ. Զինկևիչը օգոստոսի վերջին տեղեկացրեց Ռուսաստանի հարավի «Հատուկ խորհրդակցության» քաղաքական գրասենյակի պետ Դ. Չայկովսկուն, որ ժամանակն է զգուշությամբ առաջ քաշել ռուսական կողմնորոշման հարցը՝ ի հակադրություն ամերիկյանի, քանի որ այն խոչընդոտ է Ռուսաստանի հարավին: Գնդապետ Մ. Զինկևիչը խորհուրդ է տալիս օգտագործել ամերիկացիների սխալները և Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը ապացուցել, որ Ռուսաստանի հարավը գործնականում կարող է օգնել նրան նյութապես (հաց, դրամ, փամփուշտ և այլն) և ճնշում գործադրել հայերի թշնամիների վրա: Որոշ ժամանակ անց գնդապետ Մ. Զինկևիչը տեղեկացնում է, որ Հա-

[1] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063:

յաստանի կառավարության հետ Ռուսաստանի հարավի պաշտոնական շփումների վերականգնման խնդրում որոշակի դեր ունեցան հանրապետության քաղաքական լայն շրջաններում առաջացած խոր հուսախաբությունը, հիասթափությունը ամերիկյան քաղաքականության նկատմամբ: Նման տրամադրության առիթ էր դարձել Հայաստանի գերագույն հանձնակատար գնդապետ Ու. Հասկելի աննրբանկատությունը, որը ցավակցական միանման ճառեր էր արտասանել Հայաստանի և Ադրբեջանի օրենսդիր մարմիններում[1]: Այդ առթիվ «Նոր աշխատավոր» լրագիրը տեղեկացնում է, որ գնդապետ Ու. Հասկելը Ադրբեջանում «...հերքեց այն կարծիքը, թե ինքը հայերի «փաստաբանն» է: Ես (Ու. Հասկելը- Գ.Պ.) բոլորովին մի տեսակ եմ վերաբերվում բոլոր հանրապետութիւններին»[2]: Լրագիրը այնուհետև հաղորդում է, որ գնդապետ Ու. Հասկելը շատ գոհ է մնացել Ադրբեջանի կառավարությունից: Նա հերքել է այն տեղեկությունները, որոնք հրապարակվել են Հայաստանի Հանրապետության պառլամենտում: Բնութագրական է Ռոստովում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գրիգոր Չալխուշյանի գնահատականը գնդապետ Ու. Հասկելի երկդիմի գործունեությանը. «Հասկելը քաղաքագետ չէր: Նրանից սպասվեց շիտակ խոսք: Եվ նա խոսեց: ***Խոսեց Թիֆլիսում, խոսեց Բաքվում, վերջապես Երևանում. նրա երեք ճառերը անլուծելի հանելուկներ էին: Կարծես երեք օտար անձեր արտասանած լինեին: Մեկին մեջ նա վրացասեր էր, մյուսին՝ թրքասեր, երրորդին մեջ՝ հայասեր: Մենք ընկճված էինք: Եվ ահա գնդապետ Հասկելը սկսում է հերքել իր ասած ճառերը մեկը մյուսի հետևից՝ Բաքվի ճառը հերքում է Երևանում, Երևանը՝ Բաքվում, վերջ ի վերջո գնդապետ Հասկելը սիրեց Բաքուն, ուր նրան տալիս էին շարունակ խնջույքներ, երեկույթներ, պարահանդեսներ: Հետզհետե Հասկելը դարձնում է իր երեսը մեզանից, հետզհետե գովում է մուսավաթականներին և չի հավանում միշտ անբավական, միշտ բողոքող ...հային***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Գ. Չալխուշյանը, իր դժգոհությունը հայտնելով Անդրկովկասում Համաձայնության պետությունների ներկայացուցիչների նկատմամբ, հաղորդում է, որ նրանք ապրում էին շեն և հարուստ Թիֆլիսում. աղքատ, համեստ Երևանում նստել էին նրանց երկրորդ և երրորդ կարգի կցորդները: Կիրակի և տոն օրերին նրանց միշտ կարելի էր տեսնել Երևանի հրապարակում՝ շուկայում, ուր էժան գներով գորգեր էին գնում աղքատ մարդկանցից և արտահանում առանց մաքսի՝ իրենց արտոնված ներկայացուցչական դիրքից օգտվելով[2]:

Գնդապետ Մ. Զինկևիչը օգոստոսի վերջին գնդապետ Դ. Չայկովսկուն տեղեկացնում է, որ Ամերիկան շարունակում է Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի հարավից մեկուսացնելու Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: ***Գնդապետ Ու. Հասկելը Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջել է առանց իր գիտության հարաբերություններ չհաստատել գեներալ Ա. Դենիկինի հետ***. «...Երբ ամերիկացիները տեսնում են, որ Հայաստանը համակրանքով է վերաբերվում Ռուսաստանին,- գրում է գնդապետ Մ. Զինկևիչը,- հայերին համոզում են, որ այլևս Ռուսաստանը մեծ տերություն չի լինի, և պետք չէ նրա օգնության վրա հույս դնել»[3]: Գնդապետ Ու. Հասկելի առաջին քայլերը ցույց էին տալիս, որ մուտք

---

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 104:
[2] «Նոր աշխատավոր» լրագիր, 7 սեպտեմբերի 1919, Թիֆլիս:

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 43:
[2] Տե՛ս նույն տեղը, թ. 41:
[3] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 104.

գործելով Անդրկովկաս՝ Ամերիկան ձգտում էր կանխել Ռուսաստանի հարավի հաստատվելը երկրամասում: Ամերիկայի այդ ավանդական քաղաքականությունը շարունակվում է առ այսօր:

Թեև գնդապետ Ու. Հասկելը դեմ էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարաբերությունների մեջ մտնի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, սակայն խորհուրդ էր տալիս Ա. Խատիսյանին օգտվել Ռուսաստանի հարավի օգնությունից[1]:

1919 թ. օգոստոսի վերջին Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը էլ ավելի բարդացավ: Սեպտեմբերի 2-ին պառլամենտի 11-րդ նիստում վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը հաղորդեց. «Հայրենիքը վտանգի մեջ է, ...անգլիական զինվորները հեռացել են»[2]: Օգոստոսի 28-ին Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի պատվիրակությունների նախագահները դիմել էին Դաշնակից պետությունների գերագույն խորհրդի նախագահ Ժ. Կլեմանսոյին՝ նշելով, որ անգլիական զինվորական առաքելության դուրսբերումը կարող է տխուր հետևանքներ ունենալ Անդրկովկասի հանրապետությունների համար[3]: Այդ դիմումը չունեցավ որևէ դրական հետևանք: Մինչև սեպտեմբերի սկիզբը Անդրկովկասից հեռացավ անգլիական զինվորական առաքելությունը: Բաթումում կենտրոնացվեց միայն 10 հազար անգլիական զինվոր[4]:

Գնդապետ Ու. Հասկելի խոստումը՝ հետաձգել անգլիական զինվորների դուրսբերումը Անդրկովկասից, նույնպես

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 101, թ. 90, գ. 183, թ. 39:
[2] «Նոր աշխատավոր» լրագիր, 7 սեպտեմբերի 1919, Թիֆլիս:
[3] Տե՛ս «Յառաջ» լրագիր, 23 հոկտեմբերի 1919, Երևան:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 101, թ. 92, գ. 183, թ. 36:

արդյունք չունեցավ, որը, անշուշտ, Հայաստանի Հանրապետության քաղաքական շրջաններում անվստահության մթնոլորտ ստեղծեց նրա նկատմամբ[1]: Ճիշտ է, նա ուներ մեծ լիազորություններ, սակայն չուներ ուժ, որ կարողանար կանգնեցնել թաթարներին և թուրքերին:

Ռուսաստանի հարավի հետ պաշտոնական հարաբերությունների կարգավորման գործում որոշակի դեր խաղաց նաև Ամերիկայի կողմից հայկական մանդատն ընդունելու ձգձգումը, որը Հայաստանի քաղաքական շրջաններում Ամերիկայի նկատմամբ ավելի մեծ հիասթափություն առաջացրեց: Գեներալ Ա. Դենիկինը տեղեկացնում է. հայերին կոտորում են ողջ Անդրկովկասում, Անատոլիայում և Կիլիկիայում, իսկ գերագույն հանձնակատար գնդապետ Ու. Հասկելը իրեն դիմած հայերին պատասխանում է, որ «Հայաստանի մանդատի հարցը դեռևս լուծված չէ»[2]:

1919 թ. մարտի 20-ի Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշմամբ գեներալ Ջ. Հարբորդի գլխավորությամբ ամերիկյան նոր հանձնախումբը, որի կազմում կար 50 մարդ, ճանապարհորդեց Դիարբեքիր-Էրզրում-Մուշ-Կարս-Երևան-Թիֆլիս երթուղիով՝ Հայկական հարցը էթնիկական, տնտեսական, ֆինանսական, ռազմական և այլ առումներով ուսումնասիրելու: Սեպտեմբերի 25-ին գեներալ Ջ. Հարբորդը ժամանեց Երևան: Այդ կապակցությամբ Գ. Չալխուշյանը գրում է, որ պաշտոնական Ամերիկան գեներալ Ջ. Հարբորդին ուղարկել է Հայաստանի Հանրապետություն՝ ուսումնասիրելու, հետազոտելու, որպեսզի որոշեր մանդատի հարցը: Այդ հարցը «...առաջուց արդեն որոշված էր բացասական կեր-

[1] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 79:
[2] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 104: Տե՛ս նաև ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, с. 251.

պով Ամերիկայի կողմից: Զորավարի հանձնարարությունը մի խաղ էր, կեղծիք, միանգամայն անպատվաբեր մեծ պետության համար: Երեք-չորս շաբաթվա մեջ զորավարը սլաքի պես ծայրից ծայր անցավ ամբողջ Անատոլիան, և մանդատի հարցը ջուրը ընկավ: Այսպես պաշտոնական Ամերիկան միայն վնասեց գործին: Նա գրգռեց միայն մեր ճաշակը: Տվեց մեզ հույսեր: Ավելի օգտակար էր մեզ համար, եթե ունայն սին հույսերով չտարվեինք և չօրորվեինք»[1]: Այսքանից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության շրջանակներում, բնականաբար, ուժեղացավ Ռուսաստանի հարավի հետ պաշտոնական հարաբերությունները վերականգնելու ձգտումը:

1919 թ. սեպտեմբերի 17-ին Անդրկովկասի դաշնակցային բարձրագույն հրամանատարությանը կից Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարի ներկայացուցիչը Կամավորական բանակի վարչության պետին ուղղած հույժ գաղտնի նամակ-զեկույցում հաղորդում էր, որ Հայաստանի Հանրապետությունում նկատվում է ռուսական կողմնորոշման ուժեղացում: Հայաստանի Հանրապետության քաղաքական շրջանները գիտակցում են երկրի անվտանգության, անկախության գործընթացի իրականացման դժվարությունը, բարդությունը և հարկադրաբար դիմում են այս կամ այն եվրոպական հզոր տերության, Ամերիկային՝ ակնկալելով նրանց օգնությունը: Սակայն Հայաստանի Հանրապետության իշխանությունները ակնհայտորեն արտահայտեցին իրենց հիասթափությունը նրանց նկատմամբ և հակվեցին դեպի «...Ամենահավատարիմ հովանավորն ու պաշտպանը[2] (*Ռուսաստանը*)»: Եկել է հայերի համակրանքը

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 43-44:
[2] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 96-98.

շահելու պահը: Պետք է այն օգտագործել նրանց հասկացնելու, որ Ռուսաստանը միշտ եղել է հայերի միակ անշահախնդիր պաշտպանը և այդպիսին կլինի նաև ապագայում»[1]:

1919 թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ Եկատերինոդար մեկնեց հայկական բանակի գլխավոր շտաբի պետ գնդապետ Մ. Զինկևիչը՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և «Հատուկ խորհրդակցության» հետ հարաբերությունները կարգավորելու խնդրով[2]: Ինչպես հայտնի է, գնդապետ Մ. Զինկևիչը ռուսական բարձրաստիճան սպա էր, որ դարձել էր Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Հանրապետության ղեկավար շրջանները դիմել էին այդ դիվանագիտական քայլին. նրան էին ուղարկել՝ նկատի ունենալով, որ գնդապետն ուներ մեծ փորձ ու հարուստ գիտելիքներ, որոնք կարող էին օգտակար լինել հայկական բանակին: Բացի դրանից, այդ քայլով ամրապնդվում էր կապը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ: Փաստորեն, գնդապետ Մ. Զինկևիչը հանդես էր գալիս որպես դենիկինյան բանակի ոչ պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետությունում:

Քաղաքական նոր պայմաններում, օգտվելով Հայաստանի Հանրապետությունում իրենց համար բարենպաստ իրավիճակից, ռուսական կողմը գնդապետին նշանակեց Հանրապետության կառավարությանը կից իր պաշտոնական ներկայացուցիչը: Գեներալ Ա. Դենիկինը տեղեկացնում է, որ օգոստոսին Եկատերինոդար ժամանեց հայկական բանակի

[1] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 96.
[2] Տե՛ս РГ АСПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 205-206:

գլխավոր շտաբի պետ գնդապետ Մ. Զինկևիչը: Նա Երևան վերադարձավ որպես Ռուսաստանի հարավի զինված ուժերի ներկայացուցիչ[1]: Վահե Արծրունին գրում է, որ «Կսպասուէր, որ ան գար (Մ. Զինկևիչ- Գ.Պ.) եւ նորէն շարունակէր իր ծառայութիւնը Հայաստանի Հանրապետութեան: Եկաւ, բայց ոչ ակնկալուած նպատակովը: Խորհրդարանի շենքին մէկ սենեակէն ծայր տուաւ խլացուցիչ երգ մը: Խորհրդարանի փոխնախագահ Ս.Տիգրանեան եւ քանի մը ուրիշները աճապարեցին դէպի հոն, ստուգելու համար, թէ ինչ էր պատահած: Հասնելով դրան վրայ՝ շփոթուած տեսան ահագին թուով սպաներ, որոնք ոգեշունչ կերպով կերգէին «Բոժէ, ցարեա խրանի» («Տէր, պահէ Արքան») ցարի երգը: Ի զուր Ս. Տիգրանեանը սաստեց եւ Խորհրդարանի անունով սպառնաց հայ սպաներուն: Ընդհակառակն, քանի ան աւելի լուրջ բնոյթ տուաւ իր սպառնալիքին, սպաներն աւելի ոգեւորուած երգեցին ցարական պաշտօնական երգը: Ինչ էր պատահած: Զինգեւիչ այն օրը կսպասուէր Երեւանում: Հայ սպաները գիտէին, որ ան պիտի գար, ան ալ ոչ որպէս իր մասնաւոր առաքելութիւնը կատարած, իր գործին վերադարձող հայկական պաշտօնեայ մը: Մեր կառավարութենէն անկախ, անոնք գիտէին, որ ան կուգար որպէս զօրավար Դէնիքինի դիւանագիտական ներկայացուցիչը Հայաստանի կառավարութեան մօտ: Հայ կառավարութիւնը անտեղեակ էր այն բանէն, մինչդեռ հայ սպայութիւնը գիտակցօրէն անոր առաքելութիւնը կը տօնէր՝ դեռ ան չժամանած»[2]:

1919 թ. օգոստոսի 28-ին Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարի օգնական և

[1] Տե՛ս ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, էջ 253:
[2] ***Վահէ Արծրունի***, նշված. աշխատ., էջ 370:

ռազմական վարչության պետ գեներալ Ա. Լուկոմսկու ստորագրությամբ գնդապետ Մ. Զինկևիչին հանձնվել էր N 3703 վկայականը, որում ասվում էր, որ նա գործուղվում է Երևան որպես ***Հայաստանի Հանրապետության կառավարությանը կից Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարի զինվորական ներկայացուցիչ***: Նա լիազորված է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ բանակցություններ վարելու բոլոր հարցերով[1]: Սեպտեմբերի 26-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը Նախարարների խորհուրդին հանձնեց գնդապետ Մ. Զինկևիչի վկայականը[2]: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 27-ին, Նախարարների խորհուրդը տվեց իր համաձայնությունը[3]: Այդ մասին տեղեկացվեց նաև գեներալ Ա. Դենիկինը[4]: Հոկտեմբերի սկզբներին գնդապետ Մ. Զինկևիչը իրեն ուղեկցող հինգ սպաների և ենթասպաների հետ վերադարձավ Երևան[5]: Գեներալ Ա. Դենիկինն իր շնորհակալությունը հայտնեց Հայաստանի Հանրապետության իշխանություններին Ռուսաստանի հարավի ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկևիչին ընդգծված հանդիսավորությամբ դիմավորելու համար[6]:

Ա. Խատիսյանին իր վկայականը հանձնելու ժամանակ գնդապետ Մ. Զինկևիչը հայտնեց, որ

1. Գեներալ Ա. Դենիկինը հարգանքով է վերաբերվում հայությանը, որը բարյացակամ վերաբերմունք ունի ռուսների և Ռուսաստանի նկատմամբ:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 54, ֆ. 276, ց. 1, գ. 188, թ. 1, 3:
[2] Տե՛ս նույն տեղը, թ. 2:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 72, գ. 43, թ. 215, ֆ. 200, ց. 1, գ. 22, թ. 227:
[4] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 96:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 53, ֆ. 276, ց. 1, գ. 188, թ. 2:
[6] Տե՛ս ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, էջ 253:

2. Գլխավոր հրամանատարին հայտնի են հայերի ներդրումը 1918 թ. Կովկասյան ռազմաճակատից ռուս զինվորների՝ ապահով հայրենիք հեռանալու ժամանակ:

3. Գեներալ Ա. Դենիկինին հայտնի է նաև Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին ծանր իրավիճակը[1]:

Ռուսաստանի հարավի զինվորական ներկայացուցիչը իր վկայականը հանձնեց այն ժամանակ, երբ Երևանում ընթանում էր Հայ հեղափոխական դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովը (27 սեպտեմբեր – 2 նոյեմբեր): Հանրապետության արտաքին քաղաքական խնդիրներին անդրադառնալիս ընդհանուր ժողովը որոշեց. «Ա. Հայաստանի արտաքին քաղաքականութեան առանցքը պիտի կազմէ միացեալ Հայաստանի անկախութիւնը օտար պետութիւններին ճանաչել տալու եւ ապահովելու մտահոգութիւնը: Գ. Դաշնակից պետութիւններու հանդէպ պէտք է պահել մինչև այժմ եղած բարեկամական հարաբերութիւնը: Դ. Ներկա քաղաքական - տնտեսական - քաղաքակրթական յանգամանքներուն մէջ Ընդհ. ժողովը ցանկալի կհամարէ որ դաշնակից պետութիւններու յատուկ մանդաթով ժամանակաւորապէս հոգատարութեան տակ առնուի Հայաստանը»[2]:

Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցը քննարկելիս ընդհանուր ժողովը կարևորեց բարեկամական հարաբերությունների պահպանումը Ռուսաստանի հետ: 1919 թ. հոկտեմբերին գնդապետ Մ. Զինկևիչը Անդրկովկասում գլխավոր հրամանատարի ներկայացուցչին ուղղած զեկուցագրում տեղեկացնում է, որ երկու ամիս առաջ Հայ հեղափոխական դաշնակցությունը գրեթե միաբան էր Ամերիկայի հովանավորությունը ընդունելուն, իսկ այժմ հիասթափված է,

[1] Տե՛ս ԳԱ ՐՓ, ֆ. 446, օп. 2, д. 39, л. 95-96:
[2] Քաղվածքներ ՀՅԴ. 9-րդ ընդհանուր ժողովի որոշումներից, Երևան, 1920 թ., էջ 5-6:

և դա մեծ հեռանկարներ է խոստանում Ռուսաստանին[1]: Ժողովը որոշեց. «Ե. *Լիակատար բարեացակամ վերաբերում ունենալով հանդերձ դեպի ռուս ժողովուրդն ու Ռուսաստանի քաղաքական վերածնութիւնը, մեր դիւանագիտութիւնը պետք է դիմադրէ Ռուսաստանում գոյութիւն ունեցող կառավարութիւններու փորձերուն՝ տարածելու Ռուսական իշխանութիւնը նախկին Ռուսահայաստանի վրա, և այդպէսով անհնարին դարձնելու Հայաստանի ամբողջացման գործը*»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Ռուսաստանի հարավի հետ պաշտոնական հարաբերությունների վերականգնումը նոր թափ հաղորդեց հայ գաղթականության, Կամավորական բանակում ծառայող հայ զինվորների հայրենադարձության կազմակերպմանը, հայկական բանակին զենքի, զինամթերքի մատակարարմանը, ինչպես նաև առևտրատնտեսական հարաբերությունների հաստատմանը:

Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ պաշտոնական հարաբերությունները վերականգնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը դարձյալ նրա նկատմամբ որդեգրեց խիստ զգուշավոր քաղաքականություն. փորձում էր դիվանագիտական հնարքներով խուսափել Կամավորական բանակի հետ քաղաքական առճակատումներից և վերջինիս օգնությամբ ապահովել երկրի անվտանգությունը: Բանն այն էր, որ գեներալ Ա. Դենիկինը, հավատարիմ «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» իր քաղաքական ծրագրին, պայքարում էր վերականգնել նախկին Ռուսական կայսրության տարածքները 1914 թ. սահմաններով, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ ան-

[1] Տե՛ս ԳԱ ՐՓ, ֆ. 446, оп. 2, д. 39, л. 95:
[2] Քաղվածքներ ՀՅԴ. 9-րդ ընդհանուր ժողովի որոշումներից, Երևան, 1920 թ., էջ 5-6:

դրդվելի էր իր անկախությունը պահպանելու հարցում:

1919 թ. դեկտեմբերի 6-ին Փարիզում ռուսական «Հատուկ քաղաքական խորհրդակցության» և նրա դեսպանական խորհրդի հրավերով տեղի ունեցավ Ա. Ահարոնյանի և Հ. Օհանջանյանի հանդիպումը Ս. Չայկովսկու հետ: Հանդիպման նպատակը դարձյալ «ռուսներին միանալ ցանկացող ազգերի» ժողովներին մասնակցության հարցն էր: Ա. Ահարոնյանը նրան պատասխանեց, որ անկախ Հայաստանը «...Թուրանական ծովի մէջ միայն եւ միայն Ռուսաստանն ունի որպէս յենարան: Բայց եւ ստիպուած ենք չմասնակցել «ռուսներին միանալ ցանկացող ազգերի» ժողովներին, քանի որ մենք այսուհետեւ անկարող ենք Ռուսաստանին միանալ այն պարզ պատճառով, որ մենք արդէն իսկ միացած ենք Թիւրքաց Հայաստանին եւ այդ հիմքով է որ պաշտպանել ենք ու պաշտպանում ենք մեր դատը Conference-ի առաջ: Գրեթէ ամբողջ մի տարի մեզ Թիւրքաց Հայաստանին միացած յայտարարելուց յետո, այժմ գալ եւ մենակ մասնակցել այդպիսի ժողովի, դա կը լինէր համազօր վերջին պահուն մեր հայրենիքի խոշոր մասից, Թիւրքաց Հայաստանից հրաժարելուն, ինչ որ դուք, Պ. Չայկովսկին, մեզնից չէք պահանջի եւ մենք էլ յանձն առնել չենք կարող: Մենք այսուհետեւ կարող ենք եւ պէտք ենք դաշնակից լինել Ռուսաստանին, բայց ոչ թէ միանալ նրան»[1]:

Խնդրի շուրջ ռուսական քաղաքական շրջաններում գոյություն ունեին տարակարծություններ: 1919 թ. դեկտեմբերի 13-ին Փարիզից ռուսական դեսպանական խորհրդի անդամ Բ. Սավինկովը գեներալ Ա. Դենիկինին ուղղած նամակում գրում է, որ Կովկասի «...նշանակությունը մեզ համար պարզ է, այն հատկապես մեծ է, քանի դեռ բոլշևիկների հետ պայքարի մեջ ենք, և Կամավորական բանակին անհրաժեշտ է թիկունքն ապահովել: Մենք Կովկասում դեռևս հավատարիմ բարեկամներ ունենք հանձինս հայերի, որոնցից, սակայն, մենք օգտվել չկարողացանք, և որոնց մենք աստիճանաբար կորցնում ենք: Հայաստանի հետ (որին աջակցում է Ամերիկան) անհրաժեշտ է բանակցությունների մեջ մտնել և հասնել համաձայնության՝ խոստանալով լայն ինքնավարություն. Հայաստանի հետ համաձայնությունը կհանգեցնի համաձայնության Ադրբեջանի հետ, իսկ Վրաստանը, որը նույն դերն է խաղում, ինչ էստոնիան Հյուսիսում, վերջինիս նման չի կարող մեզ միայնակ դիմագրավել»[1]:

Այսպիսով, հանգում ենք այն համոզման, որ թե՛ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և թե՛ Ռուսաստանի հարավը, հետապնդելով տարբեր նպատակներ, այնուամենայնիվ ձգտում էին վերականգնել պաշտոնական հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հանուն «երկաթե օղակում» հայտնված երկրի անվտանգության և այլ դրդապատճառներով պայմանավորված, 1919 թ. օգոստոսին վերականգնեց պաշտոնական հարաբերությունները Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ: Ինչպես նշել ենք, 1919 թ. հունվարին Եկատերինոդարում էր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ, Ռուսաստանի նախկին պետական դումայի անդամ Հովհաննես Սաղաթելյանը, որը, սակայն, լիազորված չէր Ռուսաստանի հարավի հետ քննարկելու քաղաքական հարցեր:

Ռուսաստանի հարավն էլ, «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» ստեղծելու հեռահար նպատակներ հետա-

[1] ***Ահարոնյան Ա.***, նշվ. աշխ., էջ 32:

[1] ГА РФ, ф. 5827, оп. 1, д. 160, л. 1-2, տես նաև Россия антибольшевитская из белогвардейских и эмигрантских архивов, с. 353.

պնդելով, ձգտում էր վերականգնել պաշտոնական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ՝ իրագործելու Անդրկովկասի վերամիավորումը Ռուսաստանի հարավին: Գնդապետ Մ. Զինկևիչին Ռուսաստանի հարավի զինվորական ներկայացուցիչ, իսկ Հ. Սաղաթելյանին Եկատերինոդարում՝ Կուբանի կառավարությանը և Կամավորական բանակի և «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչ նշանակելը արդեն նշանակում էր նրանց միջև պաշտոնական հարաբերությունների վերականգնում:

3. Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը: Ռազմական գաղտնի դաշինքները և Հայաստանը: Կոնֆեդերացիայի (համադաշնության) ստեղծման հարցում հանրապետության դիրքորոշումը

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի միջև նոր էին վերականգնվել պաշտոնական հարաբերությունները, երբ աշնանը էլ ավելի ծանրացավ հանրապետության ռազմաքաղաքական դրությունը, որ բացատրվում է Հայաստանի Հանրապետության նկատմամբ հարևանների զավթողական ձգտումների ուժեղացմամբ և այդ ուղղությամբ նրանց գործնական քայլերով: Մենք արդեն խոսել ենք Ադրբեջանի և Վրաստանի անբարյացակամ, անգամ թշնամական վերաբերմունքի մասին, որը 1919 թ. աշնանը ավելի խստացավ և վերածվեց սպառնալիքի: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այստեղ կատարվեցին խոշոր տեղաշարժեր, որոնք սկզբում հուսադրող էին, բայց կարճ ժամանակ հետո Հայաստանի Հանրապետության համար դարձան մեծ վտանգ: Փարիզի խաղաղության վեհաժողովն Օսմանյան կայսրությունը լուծարելու խնդիր առաջադրեց, որը իրական հնարավորություն էր Հայկական հարցը լուծելու համար: Սակայն Մուստաֆա Քեմալի գլխավորած Միլլի շարժումը խափանեց Թուրքիայի կործանումը ու միաժամանակ Հայկական հարցի լուծման՝ Համաձայնության պետությունների քաղաքական նպատակների իրագործումը: Պատմական ասպարեզ մտավ քեմալական Թուրքիան, որը ձգտում էր ավարտին հասցնել հայության ոչնչացման գործընթացը: 1919 թ. օգոստոսին՝ Անդրկովկասից անգլիական զինվորների հեռանալուց հետո, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին քեմա-

լական Թուրքիայի և Ադրբեջանի համար՝ Հայաստանը վերջնականապես կործանելու և սահմանները Ադրբեջանին մոտեցնելու: 1919 թ. հուլիսի 10-ից օգոստոսի 6-ը Էրզրումում գումարված համաժողովում թուրք ազգայնականները պաշտոնապես հայտարարեցին իրենց մշակած հակահայկական անզիջում քաղաքականության մասին: Համաժողովում ընդունված Մանիֆեստի առաջին կետում արձանագրված է, որ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության անբաժանելի մասն է. «Տրապիզոնի վիլայեթը, Զանիկի սանջակը, ինչպես նաև Էրզրումի, Սվազի, Դիարբեքիրի, Վանի, Բիթլիսի վիլայեթները և այդ վիլայեթների մեջ մտնող վարչական շրջանները կազմում են միասնական ամբողջություն և ոչ մի պատրվակով չեն կարող անջատվել Օսմանյան կայսրությունից»[1]: Ավելի ուշ՝ նոյմեբերի 17-ին, Մ. Քեմալը Մահմեդ փաշային հեռագրել է. «Ոչ մի թիզ հող Հայաստանին չենք զիջի»[2]: Ադրբեջանն ու Վրաստանը, ոգևորված քեմալական Թուրքիայի ակտիվ աջակցությունից, ձգտում էին Հայաստանի Հանրապետության հետ տարածքային վեճերը լուծել ռազմական ճանապարհով: 1919 թ. սեպտեմբերի 25-ին Ա. Խատիսյանը Փարիզում Հայաստանի Հանրապետության և հայկական ազգային պատվիրակությունների նախագահներ Ա. Ահարոնյանին ու Պողոս Նուբար փաշային ուղղած հեռագրով տեղեկացնում է, որ Ադրբեջանի ճնշմամբ օգոստոսի 22-ին Շուշիում Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես՝ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովում հարցի վերջնական լուծումը, ճանաչում է Ադրբեջանի գերիշխանությունը: Ադրբեջանը իր իշխանությունը տարածեց նաև Շուշիի, Զհանշիրի և Կարյագինի գավառների նկատմամբ, և Զանգեզուրը երկու կողմից հայտնվեց օղակի մեջ: Այժմ Ադրբեջանը տենդագին «Պատերազմի նախապատրաստություն է տեսնում,- ասվում է հեռագրում,- Զանգեզուրը գրավելու համար: Թուրքիայի և Ադրբեջանի ակենդները շարունակում են դավեր նյութել Հայաստանի դեմ»[1]: Ադրբեջանը ձգտում է գավթել Զանգեզուրը և իր հսկողությունը տարածել Աղդամից մինչև Ղամարլու, այնուհետև միանալ Արաքսի մահմեդականներին և նրանց միջոցով կապվել Թուրքիայի հետ: Իրենց ռազմական ծրագրերն իրականացնելու նպատակով Թուրքիայի անմիջական թելադրանքով կնքվեցին ռազմական գաղտնի դաշինքներ, որոնք ուղղված էին ինչպես Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության դեմ:

1919 թ. Սվազի (Սեբաստիայի) համաժողովում (սեպտեմբերի 5-ից 11-ը) պաշտոնապես վերահաստատվեցին Էրզրումում քեմալականների ընդունած բոլոր որոշումները, նրանց քաղաքականությունը Թուրքիայի ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ[2], որն իր ողջ սրությամբ ուղղված էր Հայաստանի դեմ: Սվազի համաժողովում ընդունված հատուկ որոշման մեջ քեմալականները հայտարարում էին, որ իրենք վճռական կռիվ կմղեն ամեն մի շարժման դեմ, որն իր առջև խնդիր կդնի ստեղծել անկախ Հայաստան[3]: ***Այդ քաղաքականության ջատագովներ էին նաև համաժողովին մասնակից Խորհրդային Ռուսաստանի, Ադրբեջանի և Վրաստա-***

[1] ***Мустафа Кемаль,*** Путь новой Турции, т. II,, М., 1929, էջ 381:
[2] ***Мустафа Кемаль,*** Путь новой Турции, Подготовка Ангорской базы 1919-1920, т. II, М., 1932, էջ 120, տե՛ս նաև ***Սիմոնյան Հր.***, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը, Երևան, 1986, էջ 502:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, մաս I, թ. 206[a]:
[2] ***Кемаль Ататюрк,*** Избранные речи и выступления, М., 1966, с. 49:
[3] Տե՛ս ***Սիմոնյան Հր.***, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 366:

նի ներկայացուցիչները[1]:

Կարևոր է նկատել, որ Մուստաֆա Քեմալի գլխավորած Միլլի շարժումը հաջողություն չէր ունենա, եթե չստանար որևէ խոշոր տերության աջակցությունը: Իսկ այդ տերությունը եղավ ***Խորհրդային Ռուսաստանը***, որն այդ ժամանակ կենաց ու մահու կռիվ էր մղում միջազգային «իմպերիալիզմի» դեմ: Մ. Քեմալը կարողացավ դիվանագիտորեն օգտագործել այդ հանգամանքը և իր ղեկավարած շարժումը նույնպես ներկայացնել «իմպերիալիզմի» դեմ ուղղված հեղափոխական պայքար, որն անգամ ունի համայնավարական կարգեր հաստատելու միտում: Այդ խայծը կուլ տվեցին Խորհրդային Ռուսաստանի ղեկավարները և Մ. Քեմալի հետ դաշինք կազմեցին՝ համակողմանի օգնություն ցույց տալով նրան[2]: Կարո Սասունին* տեղեկացնում է, որ դեռ 1918 թ. հոկտեմբերի 30-ին՝ Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո, «Իթթիհատի կուսակցութեան ղեկավարները անմիջապես անցան Գերմանիա և Ռուսաստան ու քաղաքական հարաբերություններու մեջ մտան անոնց հետ»[3]: Իսկ 1919 թվականին Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հարաբերությունները մտել էին բարեկամական հունի մեջ գաղտնի կամ բացահայտ դաշնագրերով: Կարո Սասունին գրում է նաև. «Բացահայտ էին բոլշևիկեան Ռուսաստանի ձգտումները, որոնք ըստ ամենայնի կը զուգադիպէին թրքական շահերուն, և Հայաստանի ու հայ ժողովրդի գոյությունն իսկ կը դառնար չնչին արժեք մը Ռուսաստանի աչքին»[4]: Խորհրդային Ռուսաստանը «Բոլորովին կասկածելի առաւելութիւններու համար,- գրում է Զարեվանդը,- կը զոհէր Թրքահայաստանի բնիկ ժողովրդին դարաւոր իրաւունքը իր հայրերու հողին վրայ»[1]: Փաստորեն, Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի դաշինքն առաջին հերթին ոտնահարում էր Հայաստանի ու հայության շահերը: Արդեն նշել ենք, որ Հայաստանի Հանրապետության դրությունն ավելի էր ծանրանում, քանի որ նրա անմիջական հարևանները՝ Վրաստանն ու Ադրբեջանը, դեռ 1919 թ. հունիսի 16-ին կնքել էին հակառուսական ռազմական գաղտնի դաշինք, որն ուղղված էր նաև Հայաստանի Հանրապետության դեմ: Այդ բարդ իրավիճակից դուրս գալու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը շտապեց մերձեցման ուղիներ որոնել Վրաստանի հետ՝ խափանելու Ադրբեջանի հետ նրա ռազմական դաշինքից բխող գործողությունները: Սվազի համաժողովում հասկացել էին Հայաստանի Հանրապետության կառավարության դիվանագիտական քայլի նպատակը և արագ դիմեցին կտրուկ քայլերի՝ խափանելու հայ-վրացական հնարավոր մերձեցումը: Անշուշտ պատահականություն չէր, երբ համաժողովի ավարտից հետո քեմալականներն անմիջապես բանակցություններ սկսեցին Վրաստանի իշխանությունների հետ, և 1919 թ. ***սեպտեմբերի վերջերին ստորագրվեց վրաց-ադրբեջանական ռազմական հակառուսական երկրորդ գաղտնի դաշինքը***: Այն իր բովանդակությամբ նախորդի համեմատ ավելի հարձակողական ու ավելի ռազմատենչ էր: Դաշինքը բխում էր թե՛ քեմալական Թուրքիայի և թե՛ վերջինիս «բարեկամ» Խորհրդային Ռուսաստանի ռազմավարական շահերից: Դրանով հնարավորություն էր ստեղծվում հարվածելու թե՛ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակին և թե՛ նրա բարեկամ Հայաստանի Հանրապետությանը: 1919 թ. դեկտեմբերի 12-ին Երևանում լույս տեսնող

[1] Տե՛ս «Յառաջ» լրագիր, 12 դեկտեմբերի 1919, Երևան:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926 թ. մարտ, էջ 70, նույնը, 1940 թ. դեկտեմբեր, էջ 143:
[3] Նույն տեղում:
[4] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, N 3, էջ 109:

[1] ***Զարեվանդ***, Ինչ կը ծրագրեն թուրքերը Միացեալ անկախ Թուրանիա, 1926, էջ 167-169:

«Յառաջ» լրագիրը «Տաճկաստան և Անդրկովկաս» առաջնորդողում հաստատում է Կուբանում լույս տեսնող «Կուբանսկայա զեմլյա» լրագրի հետևյալ տեղեկությունը. «Բոլշևիկները ձգտում են դժվարացնել Կամավորական բանակի դրութիւնը, աջակցում են Վրաստանի և Ադրբեջանի անջատ հակումներին: ***Երիտասարդ թիւրքերը, որոնք մտել են ազգային խորհուրդների կազմակերպութիւնների մեջ՝ ամեն կերպ աջակցում են Ադրբէջանին և Վրաստանին, որպեսզի իրենց համար դաշնակիցներ ձեռք բերեն Հայաստանի դէմ, որի գոյութեան հետ չեն կարող հաշտել***:

Բոլշևիկներին եռանդուն կերպով օգնում են թուրքերը, որպէսզի դժուարացնեն դաշնակիցների դրութիւնը Տաճկաստանում: Այս բոլորը հաստատվում են հետևյալ փաստերով:

Կ. Պոլսի Վրաստանի ներկայացուցիչ Գելիլաձէն շատ մօտ յարաբերութեան մէջ է Չիւրուք-Սուլի-Մահմէդ փաշային և բանակցում է երիտասարդ թուրքերի հետ միասին գործողութիւնների դիմելու Հայաստանի Հանրապետութեան, կամաւորական բանակի և դաշնակիցների դէմ: Բագում և Բաթումում տեղի են ունեցել բանակցութիւններ Վրաստանի և Ադրբէջանի, երիտասարդ թուրքերի և բոլշևիկների ներկայացուցիչների միջև: Թուրքերը բոլշևիկներից ստացել են մեծ գումար»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Որ վրաց-ադրբեջանական ռազմական երկրորդ գաղտնի դաշինքը հիմնականում ուղղված էր Կամավորական բանակի և Հայաստանի Հանրապետության դեմ, վկայում է նրա բովանդակությունը.

1. Ռուսներին թույլ չտալ մտնել Անդրկովկաս:

2. Ադրբեջանն ու Վրաստանը բոլշևիկների հետ միասին պետք է կռվեն դաշնակիցների դեմ՝ նրանց Անդրկովկասից հեռացնելու համար:

[1] «Յառաջ» լրագիր, 12 դեկտեմբերի 1919 թ., Երևան:

3. Հայերին համարել թշնամի:

4. Ադրբեջանը Հայաստանի Հանրապետությանը պատերազմ հայտարարելու դեպքում Վրաստանը պարտավոր է շրջափակել Հայաստանի Հանրապետության հաղորդակցության բոլոր ճանապարհները:

5. Վրացիները պարտավորվում են երկու զորամաս (դիվիզիա) զորք հանել գեներալ Ա.Դենիկինի դեմ Պետրովսկի ուղղությամբ:

6. Ադրբեջանը գեներալ Ա.Դենիկինի դեմ գործելու համար պարտավոր է մի զորամաս հանել Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան սահմանների երկայնքով:

7. Թուրքերի գործողությունների կենտրոն պետք է լինի Անդրկովկասը, Տրապիզոնը, Ռիզեն և Բաթումը:

8. Թուրքերը պարտավոր են 15000 ասկյար ուղարկել Ադրբեջան և Վրաստան՝ օգնության, ինչպես և Հայաստանի Հանրապետություն՝ այնտեղ մուսուլման ազգաբնակչության ապստամբություն բարձրացնելու նպատակով[1]:

Ռազմական այդ դաշինքն անմիջապես գործողության մեջ դրվեց: Սեպտեմբերի վերջին Վրաստանի կառավարությունը, հավատարիմ իր դաշնակցային պարտավորությանը, գնացքով Բաքու ուղարկեց 400 բոլշևիկ՝ գեներալ Ա. Դենիկինի հարձակման ժամանակ նրա դեմ կռվելու համար[2]: Իսկ 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Ադրբեջանի պաշտպանությունը ամրապնդելու նպատակով Բաքու ուղարկեց ութ գնդացիր, 3 վագոն արկ, տարբեր տրամաչափի փամփուշտներ, հրացաններ, մեկ գումարտակի համար անհրաժեշտ զինամթերք և 48 սպա՝ ադրբեջանական զորամասերում ծառայելու համար[3]:

[1] Տե՛ս «Յառաջ» լրագիր, 12 դեկտեմբերի 1919, Երևան:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 197, թ. 1:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 33, ֆ. 204, ց. 1, գ. 133, թ. 30, 33, 38, ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 122:

1919 թ. սեպտեմբերի 20-ին, երբ Ադրբեջանը Զանգեզուրի վրա իր առաջին արշավանքը սկսեց Զեբրայիլի գավառից[1], նույն ամսվա վերջին Վրաստանի կառավարությունը տնտեսական շրջափակման ենթարկեց Հայաստանի Հանրապետությունը: Փարիզում լույս տեսնող «Վերածնունդ» շաբաթաթերթը հոկտեմբերի 30-ին հաղորդում է, որ Հայաստանի Հանրապետություն առաքվող ապրանքները «Բաթումի մէջ կը մնան մինչեւ որ պետութիւնները հարկ եղած ճնշումը գործ դնեն Վրաստանի կառավարության վրայ:

Հայաստանի պաշարումը Վրաստանի կողմէ, որով անհրաժեշտ եղած ռազմամթերքը և այլ զանազան ապրանքներու մուտքը կարգիլուի Հայաստան և որով այդ երկիրը սովամահի կենթարկուի, կը հաստատէ շատ տեղերէ արտայայտուած այն կարծիքը, թէ որոշ համաձայնութիւն կայ Վրաստանի և թուրքական նասիոնալիստների միջեւ»[2]:

Սվազի համաժողովում ուրվագծվեց նաև թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի ստեղծման գաղափարը, որն ուղղվելու էր նաև Հայաստանի Հանրապետության դեմ: 1919 թ. հոկտեմբերի 29-ին[3] Կ. Պոլսում Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Զևադ փաշան և Ադրբեջանի ներկայացուցիչ Քերիմովը ստորագրեցին թուրք-ադրբեջանական ռազմական գաղտնի դաշնագիր, որի 1-ին կետով երկու կողմերը պարտավորվում էին պահպանել միմյանց տարածքային ամբողջականությունը: Եթե կողմերից մեկը ենթարկվի հարձակման, մյուսը պարտավորվում է ռազմական օգնություն ցույց տալ: Դաշինքի 9-րդ կետով Թուրքիան պարտավորվում է ադրբեջանական բանակի համար պատրաստել հրահանգիչներ, սպաներ, ասկյարներ ու միաժամանակ վերապատրաստել, հարստացնել ադրբեջանական սպաների ռազմական գիտելիքները: 10-րդ կետով Թուրքիան պարտավորվում է ադրբեջանական բանակին տրամադրել հրանոթներ, հրացաններ, հանդերձանք և այլ ռազմամթերք: 11-րդ կետով Ադրբեջանի կառավարությունը պարտավորվում է չկնքել որևէ համաձայնագիր այլ պետությունների հետ առանց Թուրքիայի գիտության ու համաձայնության[1]:

Թուրք-վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցությունը Կամավորական բանակի առջև դրեց նոր խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր նոր մոտեցումներ փոփոխվող քաղաքական իրադրության պայմաններում: Գեներալ Ա.Դենիկինն անմիջապես տեղեկացվել էր Անդրկովկասի անցուդարձերի, քաղաքական տեղաշարժերի և ռազմական գաղտնի դաշինքների մասին: 1919 թ. հոկտեմբերի վերջին Անդրկովկասի ռուսական հետախուզությունը Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության վարչության պետին ուղղած զեկուցագրում հաղորդում է, որ վրացիների և մահմեդականների հարաբերությունները ամրապնդվում են Ադրբեջանի հետ ստորագրած երկրորդ ռազմական գաղտնի դաշնագրով (1919 թ. սեպտեմբեր), որն ուղղված է Ռուսաստանի հարավի դեմ[2]: Գեներալ Ա. Դենիկինը տեղեկացված էր նաև թուրք-ադրբեջանական ռազմական գաղտնի դաշինքի (29-ը հոկտեմբերի, 1919 թ.) գոյության մասին: Այդպիսի բարդ ռազմաքաղաքական իրավիճակում գեներալ Ա.Դենիկինը չէր կարող ռազմական գործողու-

[1] Մանրամասն տե՛ս ***Հարությունյան Հ.***, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., էջ 186-199:
[2] «Վերածնունդ» շաբաթաթերթ, 30 հոկտեմբերի 1919 թ., Փարիզ, էջ 342:
[3] Ս. Վրացյանը իր հուշերում դաշինքի ստորագրումը սխալմամբ հիշատակել է 1919 թ. նոյեմբերի 29-ը, և այդպես շրջանառվել է հայ պատմագիտության մեջ (տե՛ս ***Վրացյան Ս.***, Ինչու և ինչպես խորհրդայնացավ Հայաստան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940 դեկտեմբեր, էջ 144, նույնի, «Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև», Պեյրութ, 1953, էջ 41): Հայաստանի Ազգային արխիվում պահպանվող թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի կրկնօրինակը վկայում է, որ այն ստորագրվել է ոչ թե նոյեմբերի, այլ հոկտեմբերի 29-ին:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 184, թ. 67-68:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 96-97:

թյուններ ծավալել Ադրբեջանի և Վրաստանի դեմ, երբ Անդրկովկասից անգամ հեռացել էր Կամավորական բանակին խոչընդոտող անգլիական զորքը: Գեներալ Ա. Դենիկինը այդ քայլը չէր ձեռնարկի գլխավորապես այն պատճառով, որ նա իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր Մոսկվայի մեծակայքում բոլշևիզմի դեմ ծավալվող ռազմական գործողություններում:

1919 թ. (սեպտեմբերի 6-14) Թիֆլիսում գեներալ Ն. Բարաթովը Ա. Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ հայտնել էր, որ մինչև Մոսկվայի գրավումը Կամավորական բանակը Ադրբեջանի և Վրաստանի դեմ ոչ մի ռազմական գործողություն չի նախատեսում: Կամավորականներն ասում էին, որ տվյալ պահին իրենց ուժերը պետք են բոլշևիկների դեմ պայքարելու համար[1]: Ադրբեջանը և Վրաստանը գրավելու համար յուրաքանչյուրի դեմ անհրաժեշտ էր ուղղել հինգ զորամաս, սակայն գեներալ Ա. Դենիկինը ռազմաճակատներից չէր կարող հանել այդքան ուժ, որովհետև շարունակվում էին վճռական ռազմական գործողությունները Մոսկվայի համար[2]: Կար նաև մեկ ուրիշ կարևոր հանգամանք. Վրաստանի և Ադրբեջանի անկախության դեմ ռազմական ուժ կիրառելու դեպքում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը կզրկվեր Համաձայնության պետությունների օգնությունից: Սակայն անժխտելի իրողություն է, որ գեներալ Ա. Դենիկինը չէր կարող հրաժարվել նաև նավթամթերքով հարուստ Բաքվից, որովհետև վերջինս Ռուսաստանի հարավի համար կարևոր ռազմավարական և տնտեսական նշանակություն ուներ: Բաքուն իրեն ենթարկելով՝ նախ նա ապահովելու էր իր թիկունքը բոլշևիկյան հնարավոր հարձակումներից և ազդեցության տակ էր վերցնելու ամբողջ Կասպից ծովը, միաժամանակ բարելավելու էր իր տնտեսական և ֆինանսական

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 293, թ. 21:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 16:

վիճակը: Ուստի գեներալ Ա. Դենիկինը ձգտում էր խնդրի լուծումն իրականացնել ոչ թե ռազմական ուժի միջոցով, այլ դիվանագիտական ճանապարհով՝ Ադրբեջանին ու Վրաստանին մշտապես պահելով ռազմական հարձակման սպառնալիքի տակ:

1919 թ. սեպտեմբերին գեներալ Ա. Դենիկինը նոտա հղեց Ադրբեջանի կառավարությանը՝ պահանջելով Ռուսաստանի հարավին մատակարարել ոչ միայն անհրաժեշտ քանակությամբ նավթ և նավթամթերք, այլև կասպիական նավատորմի միակ արհեստանոցում հնարավորություն ստեղծել հիմնովին վերանորոգելու Կամավորական բանակի ռազմանավերը[1]: Խնդրի շուրջ Ադրբեջանի կառավարությունում գոյություն ունեին իրարամերժ մոտեցումներ: Զինվորական նախարար Ն. Մեհմանդարովի կարծիքով, Կամավորական բանակից սպասվող անախորժություններից խուսափելու համար անհրաժեշտ էր ընդունել գեներալ Ա. Դենիկինի նոտան, սակայն Ադրբեջանի կառավարությունը միտումնավոր ձգձգում էր պատասխանը[2]: Հոկտեմբերին հետևեց Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հաջորդ նոտան՝ արդեն բավական խիստ տոնով: Բաքվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ Ատամանովը (Ատամանյանը) հաղորդում է, որ գեներալ Ա. Դենիկինը Ադրբեջանի կառավարությունից պահանջեց դադարեցնել ռուսական մշակութային կենտրոնների, դպրոցների փակումը, ռուս քաղաքացիների իրավունքների ոտնահարումը և հալածանքները[3]: Այնուհետև Բաքվից հետ կանչվեց Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 101, թ. 92, գ. 183, թ. 36:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 122:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 10, թ. 15:

ներկայացուցիչ գնդապետ Կ. Պալիցինին[1]: Դա արդեն նշանակում էր հարաբերությունների խզում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և Ադրբեջանի միջև: Ադրբեջանում և Վրաստանում լայնորեն տարածվեց այն լուրը, թե Կամավորական բանակը պատրաստվում է և շուտով կսկսի ռազմական գործողությունները Բաքուն գրավելու համար[2]:

Ադրբեջանը նախապատրաստվում էր դիմագրավել գեներալ Ա. Դենիկինին ու միաժամանակ ռազմական գործողություններ սկսել Հայաստանի Հանրապետության դեմ: Ռուսական հետախուզությունը հաղորդեց գեներալ Ա. Դենիկինին, որ նոյեմբերի 1-ին ադրբեջանական զորքերը գեներալ Ալի Աղա Շիխլինսկու հրամանատարությամբ երեք ուղղություններով (Շուշի, Զեբրայիլ և Նախիջևան) ընդհանուր հարձակում են սկսել Զանգեզուրի վրա և նոյեմբերի 5-ին գրավել են Խոզնավար և Բայանդուր գյուղերը[3]: Զանգեզուրի վրա հարձակվելով՝ Ադրբեջանը նպատակադրվել էր գրավել Շարուր-Նախիջևանը և սահմանակից դառնալ Թուրքիային: Դրանով նա լայն հնարավորություն էր ստանալու Թուրքիայից անընդմեջ, ազատ և անարգել ներկրել անհրաժեշտ քանակությամբ զենք, զինամթերք և անգամ զինվորական ուժ: 1919 թ. նոյեմբերի 4-ի «Ընդհանուր տեսություն Ադրբեջանի մասին» ռուսական հետախուզական ամփոփագրում ասված է. «Կասկած չկա, եթե Ադրբեջանին հաջողվի իրականացնել Զանգեզուրյան օպերացիան, ապա Ադրբեջանը մեծ հնարավորություն կունենա լայն ռազմական գործողություններ ծավալել հարևան հանրապետության (Հայաստանի Հանրապետության- Գ.Պ.) և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի դեմ»[1]: Հայաստանի Հանրապետությանը և հարավից Ռուսաստանին սպասվող վտանգը կանխելու նպատակով գեներալ Ա. Դենիկինը նոյեմբերի 9-ին Տագանրոգում ստորագրեց հետևյալ հրամանը. «***Ռուսական բանակի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքի և Հայաստանի տարածքների վրա ադրբեջանական զորքերի ուխտադրուժ հարձակման կապակցությամբ հրամայում եմ նրանց զորքերում ծառայող բոլոր ռուս սպաներին թողնել զինվորական շարքերը***»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 1919 թ. նոյմեբերի 20-ին Բաքվում կայանալու էր հայ-ադրբեջանական համաժողով՝ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար: Այդ մասին Ա. Խատիսյանը հայտնում է Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությանը և առաջարկում հարկադրել Ադրբեջանի կառավարությանը՝ անմիջապես դադարեցնելու ռազմական գործողությունները Զանգեզուրում, այլապես այն կարող է հանգեցնել հրդեհի բորբոքման Ադրկովկասի ամբողջ տարածաշրջանում[3]: Ա. Խատիսյանը նույն բովանդակությամբ հեռագրեր հղեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հայաստանի գերագույն հանձնակատարի[4] տեղապահ գնդապետ Ջ. Ռեյին[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղը, թ. 18:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 183, թ. 122:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 227, թ. 1-13, մանրամասն տե՛ս նաև ***Հարությունյան Հ.***, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., էջ 186-201, ***Սիմոնյան Ա.***, 1919 թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2004, 2 (113), էջ 19-32, նույնի, «Արցախն ու Զանգեզուրը նվաճելու անգլո-ադրբեջանական գործողությունները 1919 թ. գարնանը», 2005, 1 (115), էջ 39-48:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 183, թ. 53:
[2] "Азербайджань", газета, 6 декабря, 1919, Баку: «Յառաջ» լրագիր, 10 դեկտեմբերի 1919, Երևան: ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 131, թ. 127, գ. 164, թ. 58, 71, 256, ֆ. 276, g. 1, գ. 183, թ. 123:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 164, թ. 67, 95-96:
[4] 1919 թ. դեկտեմբերի 3-ին Փարիզից Թիֆլիս վերադարձավ գնդապետ Ու. Հասկելը, որը մեկնել էր Փարիզի խաղաղության վեհաժողովին զեկուցելու Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի Հանրապետության դրության մասին:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 179, թ. 268:

Ինչպես երևում է, գեներալ Ա. Դենիկինը իր ստորագրած հրամանում կոշտ վերաբերմունք էր դրսևորել Ադրբեջանի կառավարության նկատմամբ նաև Զանգեզուրի վրա ռազմական ներխուժման առիթով: Այդ մասին գեներալը հեռագրել էր նաև Փարիզ՝ ռուսական դեսպանական խորհրդի «Հատուկ քաղաքական խորհրդակցության» ներկայացուցիչ Ս. Սազոնովին՝ հրահանգելով. «...Խնդրել Գերագույն խորհրդին միջոցներ ձեռք առնել, որպէսզի Կովկասում կարգն այլեւս չը խանգարուի ու անակնկալ յարձակումների հնարաւորութիւնը վերացվի»[1]:

Օգտվելով Հայաստանի Հանրապետության ծանր դրությունից՝ Ադրբեջանը փորձեց իրագործել իր ռազմավարական նպատակը՝ Զանգեզուրով կապվել Թուրքիայի հետ: Սակայն նրա այդ փորձը ձախողվեց: Կարճատև կատաղի մարտերում հայկական ռազմական ուժերը արժանի հակահարված տվեցին հակառակորդին և նրան հետ շպրտեցին ելման դիրքերը: 1919 թ. նոյեմբերի 18-ին Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին ուղղած նամակում Ա.Խատիսյանը տեղեկացնում է, որ. «...Կատաղի կռիւներից յետոյ, Գորիսից ոչ հեռու Խօզնավար և Բայանդուր գիւղերի մոտ մեծ ջարդ են տուել թաթարներին և յետ մղել դէպի Ղարաբաղ, թուրքերը թողել են 14 գնդացիր, 150 գերի, ահագին քանակութեամբ մթերք, փամփուշտ, վրաններ և այլն»[2]:

Մեծ է Զանգեզուրի հերոսամարտի նշանակությունը: Ադրբեջանը իր այդ փորձով ստուգում էր նաև հայկական ուժերի մարտունակության աստիճանը՝ ենթադրելով, որ չի հանդիպի լուրջ դիմադրության: Սակայն չարաչար սխալվում

[1] ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 196, թ. 120:
[2] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, N 4063, Բոստոն:

էր: 1919 թ. դեկտեմբերի 10-ին գնդապետ Արսեն Շահմազյանին ուղղած նամակում Ա. Խատիսյանը գրում է. «Զանգեզուրի վերջին հերոսամարտը, այդ երկրի ժողովուրդի ռազմական ոգին և աննկուն նկարագիրը մի աւելորդ անգամ ևս ապացուցանելով՝ ի յայտ բերեց նաև Ձեր անխոնջ ջանքերը և կազմակերպչական տաղանդը: Կառավարութեան անունից սրտագին ողջունելով Ձեզ և շնորհաւորելով մեր ժողովուրդին փայլուն յաղթանակը, ես հաստատ համոզուած եմ, որ նա, ինչպէս մինչև այժմ, սրանից յետո ալ կը պաշտպանի իր անկախութիւնը և ազատութիւնը»[1]:

Գնդապետ Զ. Ռեյի, գեներալ Ա. Դենիկինի, Անդրկովկասում դաշնակիցների գերագույն կոմիսար Մ. Ուորդրոպի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահները 1919 թ. նոյեմբերի 19-ին մեկնեցին Թիֆլիս: Նոյեմբերի 20-22-ը գնդապետ Զ. Ռեյի և Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորիի մասնակցությամբ ընթացան երկու վարչապետների բանակցությունները Զանգեզուրի հարցի շուրջ[2]: Արդյունքը եղավ այն, որ չորս մասնակիցները նոյեմբերի 23-ին ստորագրեցին հինգ կետից բաղկացած համաձայնագիր[3]: Ըստ համաձայնագրի 1-ին կետի՝ պետք է դադարեցվեին ռազմական գործողությունները: Նույն օրը՝ նոյեմբերի 23-ին, Թիֆլիսից Ա. Խատիսյանը հեռագիր հղեց արտաքին գործերի նախարարություն և զինվորական նախարար գեներալ Ք. Արարատյանին՝ ռազմական գործողությունները դադարեցնելու մասին[4]: 2-րդ կետով համաձայնվում էին բացել ճանա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 50, թ. 372:
[2] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 67, л. 287, մանրամասն տե՛ս բանակցությունների արձանագրությունները, ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 131, թ. 98-100, 88-91:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 50, թ. 318, ֆ. 276, g. 1, գ. 227, թ. 6-7:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 110, թ. 26:

պարհները Զանգեզուրի միջով խաղաղ անցորդների համար, 3-րդ կետով բոլոր վիճելի հարցերը, ներառյալ սահմանային, պետք է լուծվեն խաղաղ համաձայնությամբ, և կամ, եթե դա ձախողվի, պետք է թողնեն չեզոք կողմի՝ իբրև հաշտարարի հայեցողությանը, իսկ հիշյալ կողմը պետք է լինի գերագույն կոմիսարը: Համաձայնագրի 4-րդ կետով դեկտեմբերի 4-ին Բաքվում կայանալու էր հայ-ադրբեջանական համաժողով, որը նույն ամսի 10-ին շարունակվելու էր Թիֆլիսում՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների մասնակցությամբ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց տարածքային վիճելի հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով[1]: Ճիշտ է, հակառակորդին չհաջողվեց Զանգեզուրը միացնել Ադրբեջանին, բայցևայնպես նա չհրաժարվեց նրա նկատմամբ իր զավթողական նկրտումներից:

1919 թ. դեկտեմբերի 6-ին Բաքվում լույս տեսնող «Азербайджань» լրագրից հայտնի դարձավ գեներալ Ա. Դենիկինի նոյեմեբերի 9-ի հրամանը, որը մեծ լարվածություն ստեղծեց Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական շրջաններում: «Азербайджань» և վրացական «Борьба» լրագրերը հատուկ խմբագրականներով գեներալ Ա. Դենիկինի այդ քայլը որակեցին պրովոկացիա՝ ուղղված Անդրկովկասյան հանրապետությունների անկախության դեմ: 1919 թ. դեկտեմբերի 9-ին Ա. Խատիսյանը Լ. Եվանգուլյանին ուղղած նամակում հաղորդում է, որ Ա. Դենիկինի հրամանը Երևանում մեծ տպավորություն է գործել, և բոլորն այն զգացումն ունեն, թե Հայաստանը կարծես սկսում է ճանաչվել[2]: Դեկտեմբերի 13-ին

[1] Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 50, թ. 318, ֆ. 276, g. 1, գ. 227, թ. 67, նաև «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերը (1828-1923)», պրոֆեսոր Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, էջ 599:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 211, թ. 6:

Երևանում լույս տեսնող «Յառաջ» լրագիրը «Գէն. Դենիկինի հրամանի առթիւ» հատուկ խմբագրականում ճիշտ գնահատեց նրա բովանդակությունը (դեկտեմբերի 19-ին նույնը արտատպվեց Թիֆլիսում լույս տեսնող «Աշխատավոր» լրագրում). «Ինչ էլ լինի մեր վերաբերումը դեպի Կամավորական բանակի քաղաքական ու սոցիալական էութիւնը, անկարելի է չընդունել, որ նա, իբրև կազմակերպուած ու որոշ քաղաքական նպատակների հետամուտ եղող մի ուժ, չի կարող հաշուի չառնել, թէ ինչ վիճակի մեջ է գտնուում իր թիկունքը, ինչպիսի հարաբերութիւններ են ստեղծում իր կողքի երկրներում: Այս տեսակետից Դենիկինն, ի հարկէ, չէր կարող ուշադրութիւն չդարձնել այն քայլերի վրա, որոնք վերջերս տաճիկների կողմից ձեռնարկուում են Կովկասում և, մասնավորապէս, Ադրբեջանում ու Դաղստանում»[1]: Այնուհետև խոսելով տաճիկ ազգայնականների ու բոլշևիկների կապի մասին՝ լրագիրը ներկայացնում է թուրք փաշաների գործողությունները Հայաստանի Հանրապետության ու Կամավորական բանակի դեմ, որը, բնականաբար, չէր կարող անտարբեր դիտել այդ ամենը և պետք է դիմեր գործնական քայլերի:

Լրագիրը վերջում այն համոզմունքն է հայտնում, որ «...Եթէ խոցելի է Դենիկինի միջամտութիւնը Ադրբեջանի գործերին, ավելի ևս դատապարտելի է Նուրի փաշաների միջամտութիւնը: Եվ քանի տաճիկ ազգայնականներն Անդրկովկասը պիտի նկատեն թատերաբեմ իրենց դավադրութիւնների համար, քանի որ էնվերների ու Մուստաֆա Քեմալների գործակալները հովանավորութիւն կգտնեն այստեղ, կամավորականների վարմունքի դէմ զայրանալը միանգամայն անտեղի կլինի: Նա, ով հովանաւորում է Նուրի փաշա-

[1] «Յառաջ» լրագիր, 13 դեկտեմբերի, 1919, Երևան: «Աշխատավոր» լրագիր, 19 դեկտեմբերի 1919, Թիֆլիս:

ներին ու Քեմալ բեյերին ու Խալիլ բեյերին, նա, ով ամէն որ-պէ կանչում է Անդրկովասի գործերին միջամտելու Պոլսի ու Սըվազի փաշաներին, ի հարկէ պետք է ենթակա լինի այդ-պիսի անակնկալների: Անդրկովկասն ազատ պիտի լինի, այո՛, ***Անդրկովկասեան հանրապետութիւններն զերծ պէտք է լինեն որևէ միջամտութիւնից, բայց ոչ միայն հիւսիսի միջամտութիւնից, այլ և հարաւի, որովհետև քանի կա հարաւը, հիւսիսը կլինի ու կլինի***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Գեներալ Ա. Դենիկինի նոյեմբերի 9-ի հրամանը ինչ-որ ձևով կանխում էր Ռուսաստանի հարավին և Հայաստանի Հանրապետությանը սպառնացող վտանգը: Հրամանի հրապարակումը անշուշտ ունեցավ նաև որոշակի հետևանքներ. նոր ուժով և լայնորեն շրջանառվեց Կամավորական բանակի և Հայաստանի Հանրապետության միջև իբր գոյություն ունեցող ռազմական գաղտնի դաշինքի առասպելը, նաև այն համոզմունքը, թե իբր Կամավորական բանակը և Հայաստանի Հանրապետությունը նախապատրաստվում են հարձակման Ադրբեջանի վրա: Փաստորեն այդ կեղծ լուրը գեներալ Ա. Դենիկինի ձեռքում դարձավ մի զսպող գործոն՝ ցրելու Ադրբեջանի և նրա դաշնակիցների ռազմատենչ տրամադրությունները. Ադրբեջանը չհամարձակվեց ռազմական գործողություններ սկսել Կամավորական բանակի դեմ:

Այսպես կոչված «հայ-ռուսական ռազմական գաղտնի դաշինքի» լուրը միտումնավոր տարածում էին նաև բոլշևիկյան առանձին գործիչներ: Այդ օրերին Ս. Կիրովը հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ունի իր տարածքները ընդարձակելու մեծ պլաններ և լայնորեն օգտվում է Համաձայնության պետությունների ու Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի համակրանքից ու պաշտպանությունից, որ գեներալ Ա. Դենիկինի և Հայաստանի Հանրապետության միջև գոյություն ունի գաղտնի ռազմական դաշինք[1]: Դրանով բոլշևիկները փորձում էին հարվածել իրենց դեմ պայքարող ուժերի թվացյալ դաշնակցին՝ Հայաստանի Հանրապետությանը, այն դեպքում, ***երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պահպանում էր չեզոքություն՝ չմիջամտելով ոչ խորհրդային Ռուսաստանի և ոչ էլ գեներալ Ա. Դենիկինի պայքարին:***

1919 թ. նոյմեբերի 9-ի հրամանի զսպող գործությունը արտահայտվեց նաև Հայաստանի Հանրապետության հակառակորդների նկատմամբ: Ադրբեջանի վարքագծում. վարչապետ Ն. Ուսուբբեկովը հայտարարեց, որ Ադրբեջանը ամենից քիչ է շահարգրգռված զենքի ուժով լուծելու սահմանային հարցերը Հայաստանի Հանրապետության հետ, քանի որ մեծ վտանգ է սպառնում հյուսիսից[2]: Ա. Խատիսյանը այդ օրերին տեղեկացնում էր, որ գեներալ Ա. Դենիկինի հրամանը հայտնի դառնալուց հետո թաթարական հարձակումների սրությունը մեղմացավ[3]:

Փարիզից Վրաստանի պատվիրակության անդամները, անհանգստացած գեներալ Ա. Դենիկինի հրամանից, անմիջապես հրահանգեցին իրենց կառավարությանը՝ լավ հարաբերությունների մեջ լինեն Հայաստանի Հանրապետության հետ: Պահանջեցին նաև ներկայացուցիչ ուղարկել Եկատերինոդար՝ գեներալի հետ բանակցելու[4]: Լ. Եվանգուլյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հղած հեռագրում տեղեկացնում էր, որ դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած հայ-վրացական խորհրդակցու-

[1] Նույն տեղը:

[1] Տես ***Киров С.***, Статьи, речи, документы, т. 1, 1912-1921, М., 1936, էջ 143:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 78:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 211, թ. 7:
[4] Տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 6:

թյան ժամանակ Ե. Գեգեչկորին առաջարկել է վերականգնել Անդրկովկասի երեք հանրապետությունների բարիդրացիական հարաբերությունները: Նա զգուշացնում էր նաև, որ մեր պատգամավորները պետք է զգոն լինեն, որովհետև չի բացառվում, որ նրանք դարձյալ առաջարկեն միասնական ճակատ ստեղծել գեներալ Ա. Դենիկինի դեմ: Հեռագրի վերջում նորից զգուշացնում էր, որ հնարավոր է՝ ձախողվի Բաքվում հրավիրվող վեհաժողովը[1]:

Այդ օրերի իրավիճակից անհանգստացած Ադրբեջանի կառավարությունը առաջարկում էր զիջումներ անել Հայաստանի Հանրապետությանը, եթե նա անմիջապես սկսի բանակցությունները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավոր համարեց բանակցել. «...Խօսիլ և իմանալ թէ ինչ զիջումներ են անում տաճիկները»[2]:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության համար այդ ծանր ժամանակահատվածում նրան աջակցեց գեներալ Ա. Դենիկինը: Դրա վկայությունն է վերոհիշյալ հրամանը, որը տրվել էր Հայաստանի Հանրապետության տարածքների վրա ադրբեջանական ուժերի ուխտադրուժ հարձակման կապակցությամբ՝ հարկադրելով դադարեցնել ագրեսիան: Գեներալ Ա. Դենիկինի հրամանը զգալի չափով մեղմեց Հայաստանի Հանրապետության նկատմամբ հարևանների անբարյացակամ վերաբերմունքը: Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության՝ Հայաստանի Հանրապետությանը աջակցող այդ քայլը պատահական չէր: Վրաստանն ու Ադրբեջանը ռուսական բանակի նկատմամբ թշնամական դիրք էին բռնել. նրա հենարանն Անդրկովկասում Հայաստանի Հանրապետությունն էր, որին անհրաժեշտ էր աջակցել: Սակայն դա բացասաբար ընդունվեց Համաձայնության պետությունների կողմից, քանի որ նրանց նպատակն էր Անդրկովկասից դուրս մղել Ռուսաստանին, մի քաղաքականություն, որն իր արդիականությունը չի կորցրել առ այսօր:

Դեկտեմբերի 9-ին Լ. Եվանգուլյանին ուղղած մեկ այլ նամակում Ա. Խատիսյանը հաղորդում է. «Ինձ թվում է այդ հրամանը Հայաստանի կիսաճանաչումն է ռուսական Կամավորական բանակի կողմից: Ես նկատի ունեմ, որ Անգլիան և Ամերիկան չեն ողջունում մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ և կարծում եմ, որ նրան ու Ուորդրոպին այդ հրամանը դուր չի գա: ***Ահա թե ինչու այժմ նորից դրվում է երեք հանրապետությունների միջև կոնֆեդերացիայի հարցը: Այն սուր ծայրով ուղղված է Ռուսաստանի դեմ»***[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Ռուսական ազդեցության տարածման դեմ նորից առաջադրվեց Անդրկովկասի հանրապետությունների միավորման խնդիրը, որը պետք է լուծվեր կոնֆեդերացիայի (համադաշնության) ստեղծմամբ: Առաջ էր գալիս նոր քաղաքական իրադրություն, որը Հայաստանի Հանրապետության ղեկավարությունից պահանջում էր ողջամիտ քայլեր: Լավ ըմբռնելով նոր իրադրությունը՝ Ա. Խատիսյանը գրում է. «Անհրաժեշտ է զգուշությամբ խուսանավել Անտանտի, Դենիկինի և Կովկասյան համադաշնության միջև: Դրա համար ես պետք է իմանամ յուրաքանչյուր մանրամասնություն Թիֆլիսում տիրող տրամադրությունների վերաբերյալ»[2]:

Ա. Խատիսյանը Բաքվում կայանալիք հայ-ադրբեջանական համաժողովին մասնակցող Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը (Տ. Բեկզադյան[3], Վ. Փափազ-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 196, թ. 46, գ. 179, թ. 279:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 5:

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 211, թ. 9:
[2] Նույն տեղը:
[3] 1920 թ. փետրվարի 2-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության՝ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի փոխարեն նշանակեց Մարտիրոս Հարությունյանին:

յան, Մ. Հարությունյան և Հ. Արղության) հանձնարարեց. «Եթէ կոնֆերանսում Ադրբեջանի կողմից դրի կօնֆեդերացիայի հարցը, մեր պատուիրակները այս հարցի շուրջը խօսելու են, բայց մի եզրակացութեան չեն գալու»[1]: Դեկտեմբերի 9-ին Բաքվում Մ. Հարությունյանի, Հ. Արղությանի և վարչապետ Ն. Ուսուբբեկովի հանդիպման ժամանակ վերջինիս առաջին հարցը եղավ. «Կօնֆեդերացիայի մասին պատասխան բերե՞լ էք, թե չէ»[2]: Բաքվում ընդունելություն չգտան Հայաստանի Հանրապետության պատվիրակության առաջ քաշած հարցերը՝ դեմարկացիոն գծի ժամանակավոր հաստատում, գաղթականների ընդունում, տեղավորում և առևտրի ու երկաթուղային պայմանագրերի կնքում և այլն: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հեռագրեց Երևան՝ արտաքին գործերի նախարարություն՝ տեղեկացնելով, որ ադրբեջանցիները առայժմ ոչ մի բանի մասին խոսել չեն ուզում. «...Նրանք առաջ են տանում միայն ու միայն կօնֆեդերացիայի հարցը»[3]:

Նույն օրը՝ դեկտեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը քննարկեց Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների առաջարկը՝ Անդրկովկասյան կոնֆեդերացիա կազմելու մասին: Խորհրդի նիստը արձանագրեց, որ. «...Դենիկինի վերաբերմունքը դէպի հայերը լավ է ընդհանրապէս. այդ բանը նկատում են և գիտեն մեր հարևանները: Մանաւանդ մեծ տպաւորութիւն է թողել Ադրբայդջանի վրայ Դենիկինի այն կարգադրութիւնը, որով նա արգելում է ռուս սպաներին ծառայել Ադրբայդջանի զօրքի մեջ: ... Կառավարութիւնը կարծում է, որ հնարաւոր է

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 116:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 365, թ. 24:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 3:

Ադրբայդջանի հետ յարաբերության մէջ մտնիլ և կապիլ զանազան դաշնագրեր, բացի զինվորականից, օրինակ՝ մաքսային, սահմանային, երկաթուղային և այլն»[1]:

Կոնֆեդերացիայի հարցում Հայաստանի Հանրապետության մոտեցումը որոշակի էր ու միանգամայն ճիշտ: Բացահայտելով հարևանների իրական նպատակը՝ ռազմական դաշինք ստեղծել գեներալ Ա. Դենիկինի դեմ, Հայաստանի Հանրապետությունը համաձայն էր նրանց հետ բազմակողմանի դաշնակցային հարաբերություններ հաստատել՝ բացառությամբ ռազմական դաշինքի:

Ի դեպ, Ա. Խատիսյանի հետ զրույցի ժամանակ գնդապետ Ու. Հասկելը նույնպես խորհուրդ էր տվել կոնֆեդերացիայի առաջարկն ընդունելու դեպքում խուսափել ռազմական դաշինք կնքելուց, այն վնասակար կլինի Հայաստանի Հանրապետության համար, որովհետև Ռուսաստանի հարավից ներկրվում է 240 հազար փութ հաց և սերմացու: Դեռ Թիֆլիսում գնդապետ Ու. Հասկելը Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամներին առաջարկել էր ժամանակավորապես որոշել սահմանները, առևտրական և այլ տեսակի պայմանագրեր կնքել, սակայն. «Ոչ մի դէպքում չը միանալ նոցա հետ Դենիկինի դեմ»[2]: Բանն այն էր, որ Համաձայնության պետությունները դեմ էին բոլշևիզմի դեմ պայքարող գեներալ Ա. Դենիկինի ուժերի ջլատմանը և պահանջում էին չխանգարել նրան՝ բոլշևիզմի հետ հաշիվները մաքրելու: Ահա թե ինչու գնդապետ Ու. Հասկելը և Մ. Ուորդրոպը, կողմ լինելով Անդրկովկասյան հանրապետությունների միություն ստեղծելուն, գտնում էին, որ նրանք ռազմական

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 3, տե՛ս նաև «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.)», Երևան, 1999, էջ 203:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 365, թ. 24:

դաշինք չպետք է կնքեն, այլ գլխավորապես ծանրանան տնտեսական, երկաթուղային, փոստ-հեռագրական և տրանզիտային պայմանագրերի վրա[1]: Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը, հաշվի առնելով այդ ամենը, որոշեց. ***«...Այժմ անհնար է կոնֆեդերացիա կնքել Վրաստանի և Ադրբեջանի հետ, քանի որ մեր սահմանները վերջնականապես հայտնի չեն: Կոնֆեդերացիա կնքել այն պայմաններով, ինչ պայմաններ առաջարկված են, կը նշանակէ նաև զինուորական դաշն կնքել ընդդէմ Ռուսաստանի, որ դորանով մենք թույլ տուած կը լինենք թուրքական զօրքերին անցնել մեր երկրով ընդդեմ Դենիկինի և այլն»***[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավոր էր համարում ընդունել կոնֆեդերացիայի գաղափարը, եթե արդարացի լուծվեին տարածքային հարցերը Ադրբեջանի ու Վրաստանի հետ, և, երկրորդ, եթե պայմանագրի մեջ մտցվեր այնպիսի մի կետ, որ դաշինքն ուղղված չէ Ռուսաստանի դեմ[3]:

Գոյություն ուներ նաև մեկ այլ կարևոր հանգամանք. ***Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր կարող մտնել կոնֆեդերացիայի մեջ առանց Արևմտյան Հայաստանի հարցի լուծման:*** «Դրօշակ» հանդեսը այդ առիթով գրում է. «Մեր հարևանների համար Կովկասը վերջանում էր լաւագոյն դէպքում 1914 թ. սահմանով, իսկ առհասարակ, նրանք (Ադրբեջան, Վրաստան- Գ.Պ.) մեկնում էին սահմանային այն փաստից, որ ստեղծել էին թիւրքերը: Հայերը չէին հաշտւում այդ փաստի հետ. նրանց քաղաքական գիտակցութեան մէջ Հայաստանը միայն Մասսի մի կողմը չէր, այլ և միւս կողմը: Այսպիսի հոգեբանական ու փաստական պայմաններում –

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 5:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 2005, թ. 3:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 6, ց. 2, գ. 56, թ. 16, ֆ. 276, ց. 1, գ. 116, թ. 129:

ի՞նչ կոնֆեդերացիա»[1]:

Անդրկովկասյան կոնֆեդերացիան վրացիների և ադրբեջանցիների պատկերացմամբ մի դաշինք է, որը պետք է միայն ուղղված լինի Ռուսաստանի դեմ՝ հենվելով Թուրքիայի վրա, այսինքն՝ «...Թիւրքի հետ ռուսի դէմ»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Ադրբեջանի և Վրաստանի կողմից կոնֆեդերացիայի առաջարկը նորություն չէր, որը նրանք հիշում էին միայն այն ժամանակ, երբ վտանգ էր սպասվում Հյուսիսից: Նման առաջարկ արվել էր Վրաստանի և Ադրբեջանի կողմից դեռևս 1919 թ. ապրիլ-մայիս ամիսներին, երբ սպառնալիք էր ստեղծվել գեներալ Ա. Դենիկինի կողմից: 1919 թ. մայիսի 31-ին Փարիզում Ադրբեջանի պատվիրակության նախագահ Ա.Թոփչիբաշևի հետ հանդիպման ժամանակ Ա. Ահարոնյանը և Հ. Օհաջանյանը նշել էին, որ դեմ չեն եղել և այժմ էլ դեմ չեն լինի «...Կովկասեան ժողովուրդների միութեան, բայց նախ պէտք է որ դրանցից իւրաքանչիւրը իր պետութիւնն ունենայ: Մեզ համար առ այժմ խնդիրը բարդանում է Թիւրքաց Հայաստանով, որին մենք պիտի միանանք. բայց այդ հարցը դեռ պաշտօնապես որոշուած չլինելով, մենք անկարող ենք նոր կոմբինացիաներ անել քաղաքական՝ առանց թիւրքահայերի: Իսկ մինակ Կովկասեան Հայաստանը երբեք չի յանձն առնի այլեւս առանձին ներկայանալ»[3]:

«Դրօշակ» հանդեսը իրավացիորեն հիշեցնում էր Հայաստանի Հանրապետության հարևաններին, որ եթե Անդրկովկասյան երեք հանրապետությունների միությունը խիստ անհրաժեշտություն է, ապա ինչու 1918 թ. մայիսի վերջին քանդեցին «...Կովկասի միութիւնը, Սէյմի շրջանում, քանդ-

[1] «Դրօշակ» ամսագիր, սեպտեմբեր 1931, Բոստոն, էջ 198:
[2] Նույն տեղում, էջ 200:
[3] ***Ահարոնյան Ա.***, նշվ. աշխ., էջ 23-24:

ւեց, ինչպես յայտնի է, կովկասեան ժողովուրդների ներքին հակամարտութիւնների և, մեծ մասամբ, թիւրքական ճնշումի հետևանքով: Վրացիները, ժորդանիայի գլխաւորութեամբ, նախօրոք գաղտնաբար համաձայնելով Գերմանիայի հետ, լքեցին համակովկասեան դիրքերը: Հրապուրուած թիւրքերից՝ ադրբէջանցիները Կովկաս բերին Վէհիբ և Նուրի փաշաների զօրքերը: Թիւրքերի անմիջական բռունցքի տակ էր, որ տեղի ունեցաւ Կովկասի բաժանում: ...Վեհիբ փաշան սրով գծեց այն սահմանագիծը, որ պահանջում էին ադրբեջանցիները՝ ողորմածաբար հայերին թողնելով Երևանը: Հետագային էլ, մինչև թիւրքերի պարտութիւնն ու հեռանալը, Ադրբէջանի ղեկավարները ոչ մի փոփոխութիւն չմտցրին իրենց մտայնութեան ու գործնական քաղաքականութեան մեջ: ...Այսպիսի պայմաններում ուզում էին ադրբեջանցի գործիչները կօնֆեդերացիա ստեղծել»[1]: Բնական է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը չգնաց նման գործարքի, որովհետև չէր վստահում Անդրկովկասյան կոնֆեդերացիայի առաջարկի հեղինակների անկեղծությանը:

1920 թ. հունվարի 4-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը դարձյալ անդրադարձավ կոնֆեդերացիայի հարցին: Խորհրդում լսվեց Բաքվում Հայաստանի Հանրապետության պատվիրակության զեկույցը: Պատգամավոր Մ.Հարությունյանը հաղորդեց, որ Ադրբեջանը ձախողեց համաժողովի աշխատանքը (դեկտեմբերի 14-ին սկսված հայ-ադրբեջանական համաժողովը նույն ամսի 21-ին ընդհատվեց). «...Այդ բոլորը ինչ որ մի խաղեր էին ուրիշ նպատակների հասնելու համար»[2]: Հայաստանի Հանրապետության կառավարությանը հայտնի էր, որ 1919 թ. նոյեմբերի 27-ին

[1] «Դրօշակ» ամսագիր, սեպտեմբեր 1931, Բոստոն, էջ 196-197:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 365, թ. 25:

Բաքվում բոլշևիկների և թուրքերի միջև կայացել էր մի համաձայնություն, որով տաճկական զորքերը Հայաստանի վրայով պետք է անցնեն «...Դենիկինի թիկունքը բռնելու համար»[1]:

1920 թ. հունվարին փոխվեց քաղաքական իրադրությունը: Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը պարտություն կրեց բոլշևիկների դեմ մղվող արյունալի քաղաքացիական պատերազմում: 1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդային բանակը գրավել էր Ռոստովը, իսկ 1920 թ. մարտի վերջին՝ Դաղստանը և ամբողջ Հյուսիսային Կովկասը: 1920 թ. հունվարի 21-ին Ա. Ահարոնյանը Փարիզից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում հաղորդում է. «...Բոլշևիկների առաջխաղացումը և Դենիկինի անհոյս պարտութիւնը ընդհանուր անհանգստութիւն է պատճառում քաղաքական շրջաններին: Աշխատում են բոլշևիկների առաջը փակել գեթ Կովկասեան լեռներում: Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչները – Թոփչիբաշև և ինչպէս Չխեիձէ, Ծերեթելի և Ավալով,երեք օր առաջ հանդիսաւոր խոստումն արին (վեհաժողովին- Գ.Պ.) կռվել բոլշևիկների դէմ իրենց բանակներով, թէ նրանց զէնք ու ռազմամթերք մատակարարվի: Մի բան որ ինձ համար հաստատ է, այդ այն է, որ հայերը ոչ թէ պետք է բոլշևիկների դէմ կռվեն, այլ միայն ու միայն իրենց սահմանները պաշտպանեն թյուրքերից»[2]:

Ճիշտ է, գեներալ Ա. Դենիկինի պարտության հետևանքով Անդրկովկասյան կոնֆեդերացիայի գաղափարը կորցնում էր իր նշանակությունը, սակայն Ադրբեջանի և Վրաստանի դիվանագիտությունը փորձում էր Հայաստանի Հանրապե-

[1] «Յառաջ» լրագիր, 25, 26 փետրվարի 1920, Երևան:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 63:

տությանը դարձյալ ներքաշել կոնֆեդերացիայի մեջ՝ այս անգամ առաջարկելով *միասնական ռազմական ճակատ ստեղծել խորհրդային Ռուսաստանի դեմ, որին սկզբունքորեն դեմ էր Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

1920 թ. փետրվարի 13-ին Բաքվից Երևան ժամանեց անգլիական գլխավոր հանձնակատար Մ. Ուորդրոպը, որի նպատակն էր ազդել Հայաստանի Հանրապետության կառավարության վրա, որ Վրաստանի և Ադրբեջանի հետ միություն ստեղծեն ու հնարավոր բոլոր միջոցներով կասեցնեն բոլշևիկների ներխուժումը: Մ. Ուորդրոպը իր մտահոգությունները ներկայացնելու համար խնդրեց մասնակցել Նախարարների խորհրդի նիստին: Փետրվարի 14-ին հրավիրված խորհրդի նիստում նա բացորոշ ներկայացրեց Անգլիայի դիրքորոշումը. «Ես անձամբ, ինչպէս նաեւ անգլիական կառավարութիւնը, ռուսատեաց ենք: Մեր շահերը Արեւելքի մէջ ամենուրեք հակառակ են Ռուսաստանին: Ով ռուսասէր է, ան կասկածելի բարեկամ է մեզ համար: Ով Ռուսաստանին հակառակ քաղաքականութեան կը հետեւի, ան մեր իսկական բարեկամն է, միշտ արժանի մեր օգնութեան: Մեր բոլոր քայլերը պէտք է մեկնաբանէք այս տեսակէտէն: ...Անդրկովկասի բոլոր հանրապետութիւններն այժմ ունին մէկ մեծ ու վտանգաւոր թշնամի, եւ այդ թշնամին Ռուսաստանն է: Այդ թշնամուն դէմ է, որ դուք պէտք է ուղղէք ձեր բոլոր ոյժերը՝ ստեղծելով ընդհանուր ճակատ մը ձեր հարեւաններուն հետ միասին: *Դուք պէտք է սպառազինուիք եւ միանաք Հիւսիսի դէմ: Ատոր համար անհրաժեշտ է, որ օր առաջ քաղաքական եւ ռազմական դաշինք կնքէք Վրաստանի եւ Ատրպէյջանի հետ՝ կոնֆեդերէյշըն մը կազմելով*»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Կառավարության անդամները, հակադրվելով Մ. Ուորդրոպին, պատասխանեցին, թե նա մոռացության է տալիս, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր վտանգը Թուրքիան է, քան Հյուսիսը. «...Ազատեցէք մեզ այդ մահացու վտանգէն, եւ այն ժամանակ մենք համաձայն կըլլանք ձեզ հետ: Այն ժամանակ շատ հեշտ կըլլայ մեզ համար ընդհանուր լեզու գտնել մեր հարեւաններուն հետ, որոնք ձեզ նման չեն ուզեր այժմ ճանչընալ Հարաւի վտանգը: Բացի այդ, մեր հարեւաններուն հետ մենք ունինք սահմանային կարեւոր վէճեր, որոնց գոհացուցիչ լուծումը միայն կարող է ճանապարհ հարթել մեզ բոլորիս բաղձալի քոնֆեդերէյշընին համար»[1]: Գլխավոր հանձնակատարը կառավարության հիմնավորված բացատրություններին պատասխանեց. «...*Ձեր սահմանային վէճերը ձեր հարեւաններուն հետ երկրորդական նշանակութիւն ունին: Գլխաւորը ձեր միութիւնն է ընդհանուր թշնամիի՝ Հիւսիսի դէմ*»[2] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

1920 թ. ապրիլին Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասյան երեք հանրապետությունների վեհաժողովի օրակարգում դրված կոնֆեդերացիայի հարցի քննարկումը մնաց անավարտ Ադրբեջանի խորհրդայնացման պատճառով:

Այսպիսով, 1919 թ. աշնանը Հայաստանի ռազմաքաղաքական ծանր դրությունը հանրապետության ղեկավարության առջև դրեց դժվարին խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր վարել չափազանց զգույշ ու շրջահայաց քաղաքականություն: Անհրաժեշտ էր բացահայտել հարևանների քաղաքական խաղերի իրական նպատակները, խափանել նրանց զավթողական գործողությունները: Այդ գործում Հայաստանի Հանրապետությանը աջակցեց Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը: Գեներալ Ա. Դենիկինի նո-

[1] «Հայրենիք» ամսագիր, հունիս 1950, Բոստոն, էջ 29:

[1] Նույն տեղը:
[2] Նույն տեղում, էջ 30:

յեմբերի 9-ի հրամանը խառնեց Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիայի հաշիվները Հայաստանի Հանրապետության հարցում, թուլացրեց նրա շուրջը ստեղծված լարվածությունը: Ապարդյուն անցան Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի դեմ ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու և նրա մեջ Հայաստանի Հանրապետությանը ներքաշելու հարևանների փորձերը:

Կոնֆեդերացիայի գաղափարը ձախողվեց՝ չնայած նրա իրագործման համար մեծ ջանքեր գործադրեցին Վրաստանը, Ադրբեջանը և Համաձայնության պետությունները. նրանց չհաջողվեց Հայաստանի Հանրապետությանը հրել հակառուսական դիրքեր, և ղեկավարությունը այդ պահին գտնվեց իր բարձրության վրա:

4. Ռուսաստանի հարավի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության փաստական ճանաչման հարցում: Կոզակային նոր կառավարության (Верховный Круг) պատվիրակությունը Երևանում

Ինչպես նշեցինք, խորհրդային բանակի ռազմական հաջողությունները փոխեցին քաղաքական իրադրությունը Անդրկովկասում. այստեղ վստահաբար մուտք էր գործում Խորհրդային Ռուսաստանը: Այդ հանգամանքը մեծ մտավախություն առաջացրեց Համաձայնության պետությունների կառավարական շրջաններում: Ս. Մանսուրյանը գրում է. «...Սպիտակ շարժման անզօրութիւնը բացում էր կարմիր բանակի առջեւ ազատ ճանապարհ դէպի երեք նոր հանրապետութիւնները: Այդ արդէն նրանց ներքին՝ իրենց անկախութեան պահպանութեան վերաբերուող հարց չէր, այլ ամբողջ Եվրոպային եւ, մանաւանդ, Անգլիային սպառնացող վտանգի հարց էր յաղթականօրէն Ասիայի սահմաններին մօտեցող Խորհրդային իշխանութիւնից: Այդ, միւս կողմից, հարցի տակ էր դնում եւ Դաշնակից զօրքերի մնալը Անդրկովկասում, զօրքեր, որոնք բաւականաչափ ուժեղ չէին, որպէսզի բացայայտ կռուի բռնուէին կարմիր զօրքերի հետ»[1]: 1920 թ. հունվարին Համաձայնության պետությունների Գերագույն խորհուրդը ռազմական շտաբների ներկայացուցիչների հետ միասին քննարկեց Անդրկովկասի հանրապետություններին օգնություն ցույց տալու միջոցառումները: Անգլիական հուշագրում ասվում է. ներկայիս ստեղծված կացությունը արդյունք է ինչպես ծովակալ Ա. Կոլչակի, այնպես էլ գեներալ Ա. Դենիկինի պարտության: Կովկասի վրա խորհրդային բանակի անխուսափելի հարձակման հետևանքով դրությունը հատկապես Վրաստանում բարդացել է: Առանց լուրջ օգ-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1927 հոկտեմբեր, Բոստոն, էջ 78:

նության՝ տնտեսական չգնաժամ ապրող Վրաստանն ի վիճակի չի լինի դիմադրելու հյուսիսի և հարավի միաժամանակյա հարձակմանը, իսկ Վրաստանի ծախողումը լուրջ հետևանքներ կունենա դաշնակիցների համար[1]:

Որպես հրատապ միջոց բրիտանական կողմը առաջարկում էր հետևյալը.

«1. Դաշնակիցների կողմից Վրաստանի և Ադրբեջանի ճանաչում ...

2. Դենիկինի համար որպես օգնություն ուղարկված ամբողջ պաշարը, որը գտնվում է ճանապարհին, ուղղել դեպի այդ հանրապետությունները:

3. Դաշնակիցների կողմից լրացուցիչ օգնություն Վրաստանին, Ադրբեջանին և Հայաստանին:

4. Մեծ օգնություն հատկացնել՝ Բաքուն և Բաթումը պաշտպանելու համար:

5. Բոլշևիկներին թույլ չտալ մտնել Կասպից ծով»[2]:

Համաձայնության պետությունների գերագույն խորհրդին ներկայացրած մարշալ Ֆոշի, ֆելդմարշալ Վուդրո Վիլսոնի, Ուինստոն Չերչիլի, ծովակալ Բիտտի և մյուսների համատեղ զեկուցագրում ասվում է. «Եթե հնարավոր չէ բոլշևիզմին հաղթել նրա սեփական տարածքի վրա, ապա պետք է հնարավորն անել նրան կանգնեցնելու մի քանի վտանգավոր ճանապարհների, ինչպես օրինակ՝ Կովկասում: Այդ նպատակով պետք է քննել Կովկասում ռազմական արգելափակոցներ կազմելու հարցը: Նկատի ունենալով տեղական կառավարությունների անկայուն դրությունը, նրանց ռազմական ուժերի թուլությունը՝ այդ արգելափակոցները պետք է կազմեն ամենից առաջ եվրոպական զորքերի օգնությամբ»[3]:

[1] Տե՛ս ***Штейн Б.***, Русский вопрос на Парижской конференции (1919-1920 гг.), էջ 348:
[2] Նույն տեղում, էջ 348-349:
[3] Նույն տեղում, էջ 350:

Ինչպես երևում է, իրենց սպառնացող վտանգը կանխազգալով՝ Համաձայնության պետությունների կառավարությունները հանկարծ «հիշեցին», որ Անդրկովկասյան հանրապետությունները իրենցից վաղուց խնդրում են պաշտոնական ճանաչում: Այս հարցում Արևմտյան Եվրոպայում հայկական պատվիրակությունների դիվանագիտական ջանքերը շուրջ մեկ տարի որևէ արդյունք չտվեցին: Փաստ է, որ Համաձայնության պետությունների կառավարությունները երկյուղում էին, որ Անդրկովկասը ենթակա է բոլշևիկների ներխուժման վտանգին, որը կարող է ճանապարհ հարթել բոլշևիզմի լայն տարածմանը դեպի Պարսկաստան և Առաջավոր Ասիայի երկրներ: Ահա թե ինչու Անդրկովասյան հանրապետությունների de facto ճանաչումը դարձավ հրատապ խնդիր Համաձայնության պետությունների համար, որը կարող էր դիվանագիտական նախադրյալ ստեղծել ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի: Նրանց պաշտոնապես ճանաչելու և հայտարարելու ակտը սոսկ մի քաղաքական խաղ էր, որով նպատակ էին հետապնդում «***օղակել բոլշևիկյան շարժումը***»[1] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Համաձայնության պետությունների Գերագույն խորհուրդը, Անդրկովկասյան հանրապետությունները ճանաչելով, փաստորեն հնարավորություն էր ստեղծում պաշտպանվելու բոլշևիկյան վտանգից: Այն հանգամանքը, որ Վրաստանն ու Ադրբեջանն ունեին հակառուսական դիրքորոշում, նրանք շատ արագ հայտնվեցին ուշադրության կենտրոնում:

1920 թ. հունվարի 12-ին Համաձայնության պետությունների Գերագույն խորհուրդը de facto ճանաչեց Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունները[2], «չհիշելով» Հայաստա-

[1] ՀԱԱ, ֆ. 278, g. 1, գ. 10, թ. 36:
[2] ՀԱԱ, ֆ. 43, g. 1, գ. 124, թ. 19, տե՛ս նաև ***Борьян Б.***, Армения международная дипломатия и СССР, часть II, Москва-Ленинград, 1929, էջ 65:

նի Հանրապետությունը: Դա բնականաբար խոր վրդովմունք և դժգոհություն առաջացրեց հանրապետության քաղաքական, դիվանագիտական և առհասարակ հայության լայն շրջաններում, թե ինչու՞ «Դաշնակիցները ...միաժամանակ չեն հռչակել նաեւ Հայաստանի տէ ֆաքթօ ճանաչումը»[1]: Ա. Խատիսյանը նամակով իր վրդովմունքը հայտնեց Անգլիայի գերագույն հանձնակատար Մ. Ուորդրոպին և խնդրեց այդ մասին տեղեկացնել Գերագույն խորհրդին[2]: Հունվարի 15-ին Մ. Ուորդրոպն Ա. Խատիսյանին ուղղած պատասխան նամակում գրում է. «Ես շատ մտահոգեցի, լսելով ձեզնից, որ ձեր հայրենակիցները անհանգստացած են ներկայումս de facto միայն Վրաստանի և Ադրբեջանի ճանաչմամբ: Ըստ իս այդ լուրը պետք է հակառակ տպաւորութիւն գործէր: ***Հայկական հարցը կապված է տաճկականի հետ և շուտով կը լուծուի Տաճկաստանի հետ կնքուելիք հաշտութեան պայմանագրով***, իսկ մինչ այդ ես լիազօրուած չեմ որևէ պաշտոնական յայտարարութիւն անելու Հայաստանի ճանաչման խնդրի մասին: Իսկ այն փաստը, որ Վրաստանն ու Ադրբեջանը de facto պաշտօնապէս ճանաչուել են, ինձ թւում է թէ համոզիչ ապացոյց է, որ Հայ ժողովուրդը ոչ մի հիմք չունի անհանգստանալու: ...Գործը կարելի է թողնել դաշնակիցների ձեռքում, լիապէս հաւատացած լինելով, որ հայ ժողովրդի հետ արդարացի կը լինեն»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.):

Պատճառաբանությունն առաջին հայացքից թվում է հիմնավոր. իրոք, Հայկական հարցը քննարկվում էր Փարիզի խաղաղության վեհաժողովում, և պատրաստվում էր Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագիրը, որը պետք է լուծեր

[1] «Հայրենիք» ամսագիր, 1926 հոկտեմբեր, Բոստոն, էջ 92:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 555, մաս I, թ. 40, 56, նաև՝ «Աշխատավոր» լրագիր, 17 հունվարի 1920, Թիֆլիս:
[3] Տե՛ս ***Խատիսյան Ա.***, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 196:

Արևմտյան Հայաստանի խնդիրը: Սակայն դա չէր խանգարում, որ Գերագույն խորհուրդը ճանաչեր արդեն կայացած Արևելյան Հայաստանի հանրապետությունը: Պարզապես դեր խաղաց վերջինիս բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի հարավի հետ: Համաձայնության պետությունների կառավարությունները համոզվել էին, որ Հայաստանի Հանրապետությունը հանդես չի գա Ռուսաստանի դեմ, ինչպիսին էլ նա լինի՝ սպիտակ թե կարմիր, բայց քանի որ Հայաստանի Հանրապետության նկատմամբ Գերագույն խորհրդի վերաբերմունքը բացահայտ անբարյացակամ էր, վերջինս շտապեց ուղղել թույլ տրված սխալը: ***Մի քանի օր անց՝ հունվարի 19-ին, de facto ճանաչվեց նաև Հայաստանի Հանրապետությունը***[1]: Ենթադրվում էր, որ Անդրկովկասյան երեք հանրապետությունների կառավարությունների միջազգային-իրավական այդ ճանաչումը նպատակ ուներ դիվանագիտական և միջազգային իրավական հիմք ստեղծելու Խորհրդային Ռուսաստանի դեմ նրանց ուժերը միավորելու համար:

Հունվարի 23-ին Համաձայնության պետությունների Գերագույն խորհրդի որոշման մասին Լ. Քերզոնը հեռագիր հղեց Թիֆլիս Մ. Ուորդրոպին[2], իսկ վերջինիս փոխանորդ Գրանդը նույն օրը հաղորդեց Ա. Խատիսյանին հետևյալը. «Գերագույն խորհուրդը Փարիզում որոշեց, որ Հայաստանի կառավորութիւնը պիտի ճանաչուի իբրեւ կառավարութիւն de facto, այն պայմանով, որ այս ճանաչումը ոչ մի դէպքում չի կանխորոշում սահմանների խնդրի վերջնական լուծումը: Այս ճանաչումը ապայմանօրէն վերաբերում է Հայաստանի՝ նրա այժմեան վիճակին, Երևան մայրաքաղաքով, սակայն ոչ մի

[1] Տե՛ս ГА РФ, ф.446, оп.2, д.36, л.98, նաև՝ «Յառաջ» լրագիր, 3 փետրվարի, 1920, Երևան, Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг. / Ред.: А. Киракосян / Ереван, 2010,էջ 18:
[2] Այդ օրերին նա գտնվում էր Բաքվում:

կերպ չի վերաբերում՝ Թիւրքաց Հայաստանին»[1]: Հաջորդ օրը՝ հունվարի 24-ին, Ա. Խատիսյանը հեռագրի բովանդակությունը հրապարակեց Հայաստանի Հանրապետության պառլամենտի արտակարգ նիստում[2]:

Ինչ վերաբերում է այդ հարցում Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» դիրքորոշմանը, կրկին նշենք, որ այն պայմանավորված էր գեներալ Ա. Դենիկինի ծավալած ռազմաքաղաքական պայքարի գերագույն նպատակով՝ վերականգնել Ռուսական կայսրությունը 1914 թ. սահմաններով: Իսկ դա նշանակում է, որ գեներալ Ա. Դենիկինը չէր ընդունում Անդրկովկասյան հանրապետությունների, այդ թվում և՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը: Եվ նա մինչև վերջ մնաց այդ դիրքորոշմանը՝ չնայած հայ դիվանագիտության գործադրած ջանքերին: 1920 թ. հունվարի 20-ին Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հ. Սաղաթելյանը արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում տեղեկացնում է, որ. «...*Ներկա պահին գրեթե կանխորոշված է Կամավորական բանակի մոտալուտ պարտությունը, սակայն գեներալ Ա. Դենիկինը իր հայրենասիրության և գործունեության գերագույն նպատակը համարելով «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան»-ի կերտումը՝ շարունակում է չճանաչել Հայաստանի անկախությունը: ... Ահա թե ինչու այս պահին նպատակահարմար չեմ համարում բարձրացնել այդ հարցը: Անհրաժեշտ եմ համարում սպասել ևս մի քանի օր և հայտնի կդառնա Կամավորական բանակի դրությունը*»[3] (ընդգծումը մերն է- Գ.Պ.): Այդ հարցը մեկ անգամ չէ, որ բարձրացվել է գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» առջև, շարունակում է Հ. Սաղաթելյանը, սակայն միշտ էլ հետևել է այն պատասխանը, որ պետք է սպասել Համառուսաստանյան Սահմանադիր ժողովին. նա կտա հարցի վերջնական պատասխանը[1]:

Ահա թե ինչու Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» ցավագին վրդովմունքով ընդունեց Համաձայնության պետությունների Գերագույն խորհրդի որոշումը ճանաչել Անդրկովկասյան երեք հանրապետությունների կառավարությունները de facto, կարծելով, թե ճանաչվում է նրանց անկախությունը: Թեև դա այդպես էր: 1920 թ. հունվարին Եկատերինոդարում, Դոնի, Կուբանի և Թերեքի գերագույն կրուգում գեներալ Ա. Դենիկինը արտահայտեց իր վերաբերմունքը այդ կառավարությունները de facto ճանաչելու մասին: Գեներալը նշեց, որ Համաձայնության պետությունների Գերագույն խորհրդի կողմից «...Հայտարարված վերաբերմունքը դեպի Ադրբեջանն ու Վրաստանը առիթ տվեց կարծելու, թե դա նորակազմ պետությունների անկախության հայտարարությունն է, ես դիմեցի բողոքով, բայց այսօր պաշտոնական պարզաբանում եմ ստացել, որ տերությունները de facto են ճանաչել կառավարությունների ինքնուրույնությունը, այլ ոչ թե ծայրամասային պետությունների անկախությունը հենց իմ առաջարկության իմաստով: Դա անհանդուրժողականություն չէ, այլ ռուսական պետության գերագույն շահերի պահպանություն է, և այդ առարկությունները բոլորովին չեն բացառում բարեկամական ու բարիդրացիական հարաբերությունների հնարավորությունը այդ հիման վրա»[2]: Այնուհետև

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 53, թ. 8, ֆ.. 200, ց. 1, գ. 555, մաս I, թ.36, 56:
[2] Տե՛ս «Յառաջ» լրագիր, 3 փետրվարի 1920, Երևան:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 385, թ. 30:

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] ***Деникин А.***, Очерки русской смуты: В 3 книгах. – Книга 3/ т.4, т.5. Вооруженные силы Юга Россиu, էջ 735:

գեներալ Ա. Դենիկինը նշեց. «Դաշնակիցների այն առաջարկին, որ որոշեմ իմ վերաբերմունքը ծայրամասերի նկատմամբ, ես տվեցի որոշակի և պարզ պատասխան:

Ընդսմին՝ ես ճանաչում եմ բոլշևիկների դեմ կռվող ծայրամասերի իրական կառավարությունների գոյության փաստը:

Երկրորդ՝ ծայրամասերի նկատմամբ Ռուսաստանի ապագա հարաբերությունները սահմանվելու են համառուսական կառավարության և ծայրամասերի կառավարությունների միջև կնքվելիք պայմանագրով. ընդսմին՝ թույլատրվում է դաշնակից պետությունների միջնորդությունը»[1]:

Համաձայնության պետությունների Գերագույն խորհրդի հանձնարարությամբ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» նույնպես ճանաչեց Անդրկովկասյան երեք հանրապետությունների կառավարությունների գոյության փաստը: 1920 թ. հունվարի 21-ին (փետրվարի 3-ին) գեներալ Ա. Դենիկինը հեռագիր հղեց Թիֆլիսում իր ներկայացուցիչ գնդապետ Դենին՝ հանձնարարելով տեղեկացնել Անդրկովկասյան երեք հանրապետությունների իշխանություններին, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» ճանաչում է Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների փաստական գոյությունը[2]: Փետրվարի 10-ին Հայաստանի Հանրապետությունում գլխավոր հրամանատարի զինվորական ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկևիչը Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղած պաշտոնական ուղերձում հաղորդեց. «Պատիվ ունեմ ներկայացնելու Հայաստանի կառավարությանը Մեծ Բրիտանիայի Անդրկովկասյան գերագույն հանձնակատարի և Թիֆլիսի մեր ներկայացուցչի միջոցով հին տոմարով հունվարի 21-ին (նոր տոմարով փետրվարի 3-ին) ինձ ուղարկված մի հեռագրական հաղորդագրություն, որով հայտնվում է, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը ճանաչում է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի փաստական գոյությունը»:

Ըստ էության տեղի էր ունենում Անդրկովկասյան հանրապետությունների փաստական ճանաչում: Ի՞նչ էր նշանակում ընդունել նրանց կառավարությունների փաստական գոյությունը: Դա նույնն էր, թե ճանաչել այդ հանրապետությունների անկախությունը: Պարզապես կարելի է ասել, որ դա բառախաղ էր, որը գեներալ Ա. Դենիկինի մոտ պատրանք էր ստեղծում, թե Անդրկովկասյան հանրապետությունների անկախությունը չի ճանաչում, այլ ընդունում է սոսկ նրանց կառավարությունների փաստացի գոյությունը: Ի դեպ, գեներալը ավելի շուտ էր ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, երբ 1919 թ. օգոստոսի 20-ին նրա կառավարությանը կից զինվորական և քաղաքական իր ներկայացուցիչն էր նշանակում[1]:

Անհերքելի իրողություն է, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» կողմից Անդրկովկասյան հանրապետությունների փաստական ճանաչումը կատարվեց այն ժամանակ, երբ Կամավորական բանակը գտնվում էր փլուզման եզրին, սակայն գեներալ Ա. Դենիկինը չէր հրաժարվում «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրից: Բանն այն է, որ Ռուսական նախկին կայսրությունից անջատված ոչ խորհրդային պետական կազմավո-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս РГ ВА, ф., 35540, оп.1, д. 44, л.74-75: ГА РФ, ф.446, оп.2, д.36, л.95, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ.14:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 99, ց. 1, գ. 198, մաս I, թ. 32, 34, 35, 36: ***Վրացյան Ս.***, Հայաստանի Հանրապետություն, էջ 381:

ռումների միացյալ ճակատ ստեղծելը Խորհրդային Ռուսաստանի դեմ իրատեսական չէր, որովհետև վտանգելու էր այդ կազմավորումների անկախ գոյությունը:

Կովկասի ժողովուրդների համար ստեղծվեց յուրօրինակ, բարդ և հակասություններով լի մի նոր իրավիճակ: Մի կողմից՝ Վրաստանն ու Ադրբեջանը ուրախությամբ ընդունեցին գեներալ Ա. Դենիկինի մոտալուտ պարտությունը, սակայն մյուս կողմից՝ լուրջ անհանգստացան, քանի որ նրանց անկախությանը նոր վտանգ էր սպառնում Խորհրդային բանակի կողմից: 1920 թ. մարտի 25-ին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնակատար Լ. Թումանյանը Թիֆլիսից հաղորդում է, որ վրաց ղեկավարները համոզված են, թե «...Բոլշեւիզմի հաստատումը Վրաստանի սահմաններում առաջ կբերի անկախութեան գաղափարի խորտակում, որովհետեւ յայտնի է, որ Վրաստանի կօմունիստները ձգտում են դէպի ֆեդերատիվ միացում Ռուսաստանի հետ»[1]:

Քաղաքական այդպիսի բարդ իրավիճակում հայ դիվանագիտությունը շարունակեց պահպանել չեզոքությունը թե՛ Կամավորական բանակի և թե՛ Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ՝ չխառնվելով նրանց պայքարին: Բոլոր դեպքերում, ելնելով հանրապետության շահերից, Հայաստանի կառավարությունը շարունակեց պահպանել բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետ մինչև նրա վերջնական պարտությունը: Հանրապետության ղեկավարությունը ձգտում էր օգտվել Ռուսաստանի հարավի քաղաքական, ռազմական և տնտեսական հնարավորություններից: Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր թուրք-ադրբեջանական հրոսակների

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ.15:

«երկաթե օղակում»: Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ էր Դոնի, Կուբանի և Թերեքի երկրամասերից ներկրել զենք, զինամթերք, հաց, պարեն և այլ անհրաժեշտ ապրանքներ: Կամավորական բանակի ենթակայության տակ գտնվող շրջաններում որոշվում էր նաև տասնյակ հազարավոր հայ գաղթականների ճակատագիրը:

Հայաստանի Հանրապետության հետ իր բարեկամական հարաբերությունները շարունակեց պահպանել նաև Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը»: Փետրվարի կեսերին Հ. Սաղաթելյանի հետ հանդիպման ժամանակ գեներալ Ա. Դենիկինը մեկ անգամ ևս նշեց, որ իր վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ շարունակում է մնալ բարյացակամ և չի դադարի օգնել նրան թշնամիների դեմ մղվող պայքարում[1]: Չնայած Կամավորական բանակը գտնվում էր պարենային խոր ճգնաժամի մեջ, սակայն գեներալ Ա. Դենիկինը խոստացավ շարունակել Հայաստանի Հանրապետությանը մատակարարել սերմացու, պարեն, զենք և անհրաժեշտ այլ ապրանքներ: Գեներալը Հ. Սաղաթելյանին հայտնեց նաև, որ Բաթումում ստեղծվում են Կամավորական բանակի զենք - զինամթերքի պահեստներ. անհրաժեշտ է մտածել Հայաստան ապրանքներ և զինամթերք առաքելու ապահով ճանապարհների ճիշտ ընտրության մասին: Հայաստանի Հանրապետությունը Կամավորական բանակից ստացավ վերջին օգնությունը՝ մեկ միլիոն 200 հազար փամփուշտ և որոշ քանակությամբ զինամթերք[2]: Հայ դիվանագիտությանը հայտնի էր, որ Կամավորական բանակի ճգնաժամային օրերին այդ օգնությունը պատահական չէր. նպատակը պարզ էր՝ այն

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 562, թ. 20:
[2] Տե՛ս նույն տեղը:

ուղղել խորհրդային բանակի դեմ: Սակայն ռազմաքաղաքական բարդ իրավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության իշխանությունների հիմնական խնդիրը սահմանները և շրջափակված հանրապետությունը թշնամիներից պաշտպանելն էր:

1920 թ. փետրվարին Կամավորական բանակի օգնությամբ հազարավոր հայեր Կուբանի և Թերեքի երկրամասերից ներգաղթեցին հայրենիք: Գեներալ Ա. Դենիկինը թույլատրեց այդ երկրամասերի տարբեր քաղաքներում հիմնել հայկական հյուպատոսական նոր մարմիններ՝ տեղի հայության և գաղթականության խնդիրները հոգալու համար: Նա թույլատրեց նաև, որ այնտեղ, որտեղ չկան հայկական հյուպատոսական մարմիններ, հայերը կապ հաստատեն Հայոց ազգային խորհուրդների և այլ կազմակերպությունների հետ:

Այդ աշխատանքների կազմակերպման գործում մեծ է հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և Կուբանի կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթելյանի գործունեությունը: Դիվանագիտական ներկայացուցչությունը իր ստեղծման առաջին օրերից անմիջապես ձեռնամուխ եղավ իր խնդիրների իրագործմանը՝ Ռուսաստանի հարավում հայ քաղաքացիների, գաղթականների, ռազմագերիների իրավունքների ու շահերի պաշտպանության և ներգաղթի կազմակերպմանը, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի միջև բարեկամական, քաղաքական, առևտրատնտեսական հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը: Դիվանագիտական ներկայացուցչությունը ցուցաբերում է մեծ ակտիվություն ու ձգտում իրագործել իր առջև դրված խնդիրները: Սակայն այդ գործունեությունը ընթանում էր Ռուսաստանի հարավի ներքին և արտաքին լարված ու

ծանր կացության պայմաններում: Իսկ դա չէր կարող իր աննպաստ ազդեցությունը չթողնել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատանքի վրա:

***

1919 թ. դեկտեմբերի 16-ին գեներալ Ա. Դենիկինը լուծարեց գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցությունը», իսկ 1920 թ. հունվարի 23-ին ճանաչեց Դոնի, Կուբանի և Թերեքի երկրամասերի անկախ գոյությունը: Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և երեք երկրամասերի համաձայնությամբ ստեղծվեց կոզակային նոր կառավարություն՝ Դոնի, Կուբանի, Թերեքի Գերագույն կրուգը (Верховный Круг)՝ գեներալ Ա. Դենիկինի նախագահությամբ: Գերագույն կրուգը միաժամանակ ստանձնեց օրենսդիր մարմնի և գործադիր իշխանության գործառույթներ: Գեներալ Ա. Դենիկինի հանձնարարությամբ Ն. Մելնիկովը (Դոնի կառավարության ներկայացուցիչ) հունվար-փետրվարին ձևավորեց նոր կառավարություն (արտաքին գործերի նախարար՝ գեներալ Ն. Բարատով, ֆինանսների նախարար՝ Մ. Բեռնացկի, նախարար առանց պորտֆելի՝ Ն. Չայկովսկի, որը նոր էր վերադարձել Փարիզից և այլն[1]), որը գրեթե չգործեց, մնաց թղթի վրա՝ գլխավոր հրամանատարության և գերագույն խորհրդի միջև առկա հակասությունների և անհամաձայնությունների, ինչպես նաև Կամավորական բանակի վերջնական պարտու-

[1] Տես *Соколов К.*, Правление генерала Деникина: из воспоминаний. София, 1921, էջ 248:

թյան պատճառով[1]:

Նորաստեղծ Գերագույն կրուգի առաջնահերթ խնդիրներն էին կասեցնել խորհրդային բանակի առաջխաղացումը և պահպանել այդ երկամասերի անկախ գոյությունը: Գերագույն կրուգի նախագահի որոշմամբ ստեղծվեց Դոնի (Պ. Կովալև), Կուբանի (գնդապետ Մ. Զազուլյա), Թերեքի (գնդապետ Ն. Բիգաև) պատվիրակություն՝ բանակցելու Անդրկովկասյան երեք հանրապետությունների կառավարությունների հետ՝ պարզելու, թե նրանք բոլշևիկների դեմ մղվող պայքարում ինչ հնարավոր ձևերով ու միջոցներով կարող են օգնել Կամավորական բանակին:

1920 թ. փետրվարի 28-ին Լ.Եվանգուլյանը[2] Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցով[3] և մարտի 4-ի հեռագրով[4] տեղեկացրեց, որ փետրվարի 24-ին Թիֆլիս է ժամանել Գերագույն կրուգի պատվիրակությունը: Փետրվարի 24-ին Թիֆլիսում ջերմ ընդունելություն կազմակերպվեց Գերագույն կրուգի պատվիրակությանը: Փետրվարի 27-ին Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան և արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորին նրանց ընդունեցին կառավարությունում: Բանակցությունների ժամանակ Ն. Ժորդանիան նշեց, որ «Վրաստանը միշտ էլ ձգտել է բարեկամական հարաբերություններ հաստատել կոզակների, ինչպես նաև գեներալ Ա. Դենիկինի հետ, սակայն դա իրեն չի հաջողվել: Այժմ վրաց ժողովուրդը Գերագույն

[1] Մանրամասն տե՛ս ***Трукан Г.***, նշվ. աշխ. էջ 175-178:
[2] 1920 թ. մարտի 3-ին Լ.Եվանգուլյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակով հայտնեց, որ հիվանդության պատճառով հրաժարվում է Վրաստանում դիվանագիտական ներկայացուցչի պարտականություններից՝ այն հանձնելով Մ. Թումանյանին, որը 1918-ի սեպտեմբերի 14-ից զբաղեցնում էր դիվանագիտական ներկայացուցչության խորհրդականի պաշտոնը և ղեկավարում էր գրասենյակի գործավարությունը:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 7; 43:
[4] Տե՛ս նույն տեղը, թ. 12:

կրուգի պատվիրակությանը դիմավորում է բավարարության մեծ զգացումով: Վրաստանը չի կարող մոռանալ հարյուրամյա իր կյանքը Ռուսաստանի դրոշի ներքո, կյանք, որը բացասականից զատ ունեցել է նաև դրական կողմեր: Նա չի կարող մոռանալ նրա մշակույթը, որով վրաց ժողովուրդը դաստիարակվել է»[1]: Այնուհետև Ն. Ժորդանիան պատասխանեց Գերագույն կրուգի առաջադրած հարցերին. «Վրաստանը կոզակներին զինված օգնություն ցույց տալ չի կարող, քանի որ դրա համար իր երկիրը ուժ չունի: Ինչ վերաբերում է նյութական և բարոյական օգնությանը, ապա Վրաստանի կառավարությունը պատրաստ է ընդառաջել կազակներին»[2]:

Մարտի 7-ին Գերագույն կրուգի պատվիրակությունը Թիֆլիսից ժամանեց Երևան[3]: Կայարանում կոզակների պատվիրակությանը մեծ հանդիսավորությամբ ընդունեցին զինվորական նախարար, գեներալ Ք. Արարատյանը (Արարատով), արտաքին և ներքին գործերի նախարարների տեղակալները, Երևանի պարետ կապիտան Պ. Շահխաթունին, գեներալ Ա. Դենիկինի ներկայացուցիչ, գնդապետ Մ. Զինկևիչը և այլ պաշտոնյաներ[4]: Հաջորդ օրը՝ մարտի 8-ին, Նախարարների խորհրդում նրանց ընդունեց Ա. Խատիսյանը: Բանակցությունների ժամանակ կոզակների պատվիրակությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացրեց հետևյալ խնդիրները.

1. Հայաստանի Հանրապետությունը ի՞նչ կերպ կարող է մասնակցել բոլշևիկների դեմ մղվող պայքարին:

2. Սպառազինության փոխանակում:

3. Հայաստանի Հանրապետությունում Կամավորական

[1] ГА РФ, Ф.5881, оп.2, д.250, л.9:
[2] Նույն տեղում:
[3] Նույն պատվիրակության հետ Երևան ժամանեց նաև Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ Համո Օհանջանյանը:
[4] Տե՛ս ГА РФ, Ф. 5881, оп. 2, д. 250, л. 22:

բանակի համալրման հնարավորությունը և Հայաստանի կառավարության վերաբերմունքը դրա նկատմամբ:

4. Կամավորական բանակի նահանջի դեպքում ռուս զինվորները և փախստականները արդյոք կարո՞ղ են կացարան գտնել Հայաստանի Հանրապետությունում:

5. Ինչպիսի՞ն է ռուսների դրությունը Հայաստանի Հանրապետությունում:

6. Գերագույն կրուգը քաղաքական, տնտեսական և ռազմական բնագավառներում ի՞նչ օգնություն կարող է ցույց տալ Հայաստանի Հանրապետությանը:

7. Ռուսաստանի հարավի հետ փոստ-հեռագրական կապի հաստատում[1]:

Ա. Խատիսյանը կառավարության, պառլամենտի և հայ ժողովրդի անունից շնորհակալություն հայտնեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գլխավոր հրամանատարությանը, գեներալ Ա. Դենիկինին՝ Հայաստանի Հանրապետությանը քաղաքական, տնտեսական, զինական օգնություն ցույց տալու և հայ գաղթականների ներգաղթի կազմակերպմանը աջակցելու համար: Այնուհետև վարչապետը հրապարակեց կառավարության ընդունած որոշումը պատվիրակության առաջադրած հարցերի շուրջ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավորություն չունի իր ուժերն ուղարկելու բոլշևիկների դեմ պայքարին: Չի կարող կազակությանը զինված ջոկատներ տրամադրել, քանի որ ինքը շրջապատված է թուրք-ադրբեջանական օղակով, և իր բոլոր ուժերը բաշխված են տարբեր ճակատներում:

2. Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է սպառազինության փոխանակում կազմակերպել:

[1] Տե՛ս նույն տեղը, թ. 21-22, РГ АСПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 207: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 8:

3. Հանրապետության կառավարությունը գտնում է, որ Հայաստանում չկա մի այնպիսի խմբաքանակ, որից կարելի լիներ ձևավորել կամավորական զորաջոկատներ:

Միակ տարրը մոլականերն են, սակայն նրանք էլ վարակված են բոլշևիզմով: Կամավորական զորաջոկատների կազմավորման մասին պաշտոնական հայտարարությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության քաղաքական շահերին: Սակայն կառավարությունը չի խոչընդոտի, եթե գտնվեն անձինք, որոնք որպես անհատներ ցանկություն հայտնեն մտնելու Կամավորական բանակ:

4. Կամավորական բանակի նահանջի դեպքում Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է հյուրընկալել ռուսական բանակի զինվորներին և փախստականներին, սակայն պարենի ճգնաժամի պատճառով ժամանողները պետք է իրենց հետ ունենան սննդի անհրաժեշտ պաշար:

5. Հայաստանի Հանրապետությունում ռուսների դրությունը բարվոք է, նույնիսկ՝ արտոնյալ: Նրանք զինապարտ չեն. ոչ մի ռուս Հայաստանի Հանրապետությունից չի արտաքսվել, հակառակը՝ այլ վայրերից եկածները Հայաստանում կացարան և աշխատանք են գտնել: Բանակում շատ են ռուս սպաները, զինվորները. ազգայնացման հետևանքով լիկվիդացվածները ստանում են փոխհատուցում:

6. Ռուսաստանի հարավը կարող է Հայաստանի Հանրապետությանը օգնել տնտեսական, քաղաքական և ռազմական ոլորտներում: Տնտեսական օգնությունը կարող է արտահայտվել Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ հացամթերք, յուղ, սերմ ուղարկելով: Քաղաքական օգնությունը *միացյալ Հայաստանի* իրավական ճանաչումն է: Ռազմական օգնությունը կարող է արտահայտվել սպառազինության փոխանակման տեսքով:

7. Ա. Խատիսյանը ցանկություն հայտնեց, որ Գերագույն կրուգը կոնկրետ քայլեր ձեռնարկի Ռուսաստանի հարավի և

Հայաստանի Հանրապետության միջև փոստ-հեռագրական կապ հաստատելու ուղղությամբ, քանի որ դրա բացակայությունը շատ ծանր հետևանքներ է ունենում[1]:

Ինչպես երևում է Ա. Խատիսյանի պատասխանից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որևէ պարտավորություն չի ստանձնում: Գերագույն կրուգի պատվիրակությանը չբավարարեց վարչապետի դիվանագիտական պատասխանը: Թերեքի պատվիրակության ներկայացուցիչ գնդապետ Ն. Բիգաևը իր հուշերում գրում է. «...Թիֆլիսում լրագրողները չէին հեռանում պատվիրակությունից, իսկ Երևանում անգամ պաշտոնաթերթից ոչ ոք չմոտեցավ մեզ»[2]: Այս անգամ էլ քաղաքական բարդ իրադրության մեջ հանրապետության ղեկավարությունը ճիշտ կողմնորոշվեց և չընդունեց գեներալ Ա. Դենիկինի առաջարկը աջակցելու նրան բոլշևիզմի դեմ պայքարում. շարունակեց պահպանել իր չեզոքությունը, որը տվյալ պատմական պահին միակ ճիշտ քաղաքականությունն էր:

Կոզակների պատվիրակությունը մարտի 11-ին ուղևորվեց Թիֆլիս: Մարտի 15-ին շարունակվեց վերջին եզրափակիչ բանակցությունների փուլը Վրաստանի արտաքին գործերի նախարարությունում: Այս անգամ կտրուկ փոխվել էր Վրաստանի իշխանությունների վերաբերմունքը պատվիրակության նկատմամբ, և բանակցություններն ավարտվեցին առաջադրած բոլոր հարցերի վերջնական մերժումով: Պատճառը պարզ էր. վերջին օրերին Կամավորական բանակը պարտվել էր բոլոր գլխավոր ճակատներում, և խորհրդային բանակը մոտենում էր Անդրկովկասի սահմաններին: Գնդապետ Մ. Բիգաևը հիշեցնում էր վրաց ղեկավարներին, որ նրանք «մոռացել» են երեք շաբաթ առաջ իրենց զգացմունքային ճառերը Ռուսաստանի և ռուս ժողովրդի մասին[1]:

Մարտի 17-ին, առանց վրաց պաշտոնյաների ուղեկցության, կոզակների պատվիրակությունը մեկնեց Բաքու՝ նույն խնդրով բանակցելու ադրբեջանի իշխանությունների հետ: Կայարանում պաշտոնական ընդունելություն տեղի չունեցավ: Հաջորդ օրը Ադրբեջանի վարչապետ Ն. Ուսուբբեկովի բնակարանից ոչ հեռու մահափորձ կազմակերպվեց կոզակների պատվիրակների դեմ, և նրանք հարկադրված հեռացան Բաքվից[2]: Կուբանի պատվիրակ գնդապետ Մ. Զազուլյան հրաժարվեց իր լիազորություններից:

1920 թ. փետրվարի 29-ին Խորհրդային բանակը գրավեց Ստավրոպոլը, մարտի 17-ին՝ Եկատերինոդարը, մարտի 22-ին՝ Վլադիկավկազը, մարտի 23-ին՝ Ղզլարը, մարտի 24-ին՝ Գրոզնին, իսկ մարտի 30-ին՝ Պետրովսկը: Հյուսիսային Կովկասի գրեթե ողջ տարածքում հաստատվեց խորհրդային իշխանություն:

Այսպիսով, 1920 թ. մարտի վերջին վերջնականապես պարտվեց գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակը: Մարտի 20-ին իր իսկ հրամանով գեներալ Ա. Դենիկինը ազատվեց գլխավոր հրամանատարի պարտականություններից՝ փոխարենը նշանակելով գեներալ Պ. Վրանգելին[3]:

Ապրիլի 18-ին լուծարվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը կից Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» զինվորական ներկայացուցչությունը Երևանում[4]:

Փակվեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևոր էջը, ավարտվեց Ռուսաստանի

[1] Տե՛ս ГА РФ, ф. 5881, оп. 2, д. 250, л. 24-25: ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 33, թ. 8-9:
[2] ГА РФ, ф. 5881, оп. 2, д. 250, л. 25:

[1] Տե՛ս նույն տեղը, թ. 27:
[2] Տե՛ս նույն տեղը, թ. 31-32:
[3] Տե՛ս РГ ВА, ф. 39540, оп. 1, д. 187, л. 2:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 529, թ. 18:

խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ նրա հարաբերությունների երկամյա գործընթացը: Գալիս էր նոր պատմական ժամանակաշրջան, որը պահանջում էր արտաքին քաղաքական նոր կողմնորոշում, նոր մոտեցումներ, որոնք կբխեին հայ ժողովրդի անվտանգության ապահովման, նրա հետագա գոյատևման շահերից: Բնականաբար պահանջվում էր փոխել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական ուղղվածությունը, այսինքն՝ բանակցություններ սկսել Խորհրդային Ռուսաստանի հետ: Անգամ խոշոր տերությունները, որոնք փորձեցին խեղդել Խորհրդային Ռուսաստանը, ստիպված էին հաշտվել այդ գոտեմարտում իրենց պարտությանը և ուղիներ որոնել նրա հետ հարաբերություններ հաստատելու համար: Խոսելով այդ մասին՝ Ա. Ահարոնյանը Փարիզից 1920 թ. ապրիլի 12-ին Ա. Խատիսյանին ուղղած նամակ-զեկույցում գրում է. «Ոչ ցաւելու, ոչ ուրախանալու պատճառ ունինք: Ծանրակշիռ քաղաքական փաստ է այս, որ պիտի հաշւի առնինք եւ յարմարւինք ստեղծւելիք նոր պայմաններին: Բոլոր պետութիւնները - եւ առաջին հերթին Անգլիան-տնտեսութեան անհրաժեշտութեան պատրւակի տակ սկսել են սովետների հետ գրէթէ քաղաքական յարաբերութիւններ: ... Մեծ պետութիւնների օրինակին հետեւելով Ռուսաստանից անջատւած մանր պետութիւնները նոյնպէս աշխատում են բոլշեւիկների հետ բանակցութեան մէջ մտնել: Այս է դրութիւնը. մեզ թւում է, որ ներկայ պայմաններում Դուք եւս, ինչպէս ամենքը, ստիպւած պիտի լինիք բոլշեւիկների հետ զրոյց սկսել, որպէսզի Կովկաս մտնելիս գէթ մեր վերաբերմամբ բարեացակամ լինին: Ֆորմուլան պարզ է - մենք ոչ բոլշեւիկ ենք եւ ոչ հակաբոլշեւիկ: Մեր թափած ահագին արիւնը եւ մեր անխախտ բարեացակամութիւնը դէպի Ռուսիա պետք է, որ արժէցնել սովետների առաջ: Նկատի պիտի առնեն նաեւ որ իրենք արդէն ճանաչել են Թուրքահայաստանը, մեծդի կարեւորութիւն չէ ճանաչել Անդրկովկասեան փոքրիկ

հայ հողամասի միացումը առաջինին: Այսպէս թէ այնպէս սովետների հետ զրոյցը պէտք է սկսել գաղտնի կերպով»[1]:

Քաղաքական նոր պայմաններում Ա. Խատիսյանի առաջարկով 1920 թ. վերջին փոփոխություն կատարվեց նաև կառավարության կազմում: Մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետության պառլամենտը հաստատեց կառավարության նոր կազմը.

Նախարարապետ և արտաքին գործերի նախարար՝
Հ. Օհանջանյան
Ներքին գործերի և զինվորական նախարար՝
Ռուբեն Տեր-Մինասյան
Ֆինանսների և արդարադատության՝
Աբր. Գյուլխանդանյան
Գյուղատնտեսության և աշխատանքի՝ Ս. Վրացյան
Հանրային կրթության և արվեստի՝ Գևորգ Ղազարյան
Խնամատարության և վերաշինության նախարար՝
Ս. Արարատյան
Հաղորդակցության նախարար՝ Ա. Ձամալյան

Նույն նիստում ընդունվեց և հաստատավեց պառլամենտը մեկ ամսով դադար տալու ու նրա բոլոր լիազորությունները կառավարությանը հանձնելու օրինագիծ[2]:

Այսպիսով, ապարդյուն անցան և՛ Համաձայնության պետությունների Գերագույն խորհրդի, և՛ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության ջանքերը՝ Անդրկովկասյան հանրապետությունների ճանաչման միջոցով նրանց միավորելով բոլշևիկյան շարժումը կասեցնելու ուղղությամբ: Խորհրդային բանակի հաղթանակով և ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումով նոր ժամանակներ սկսվեցին Անդրկովկասի ժողովուրդների համար:

---

[1] Նույն տեղում, գ. 290, թ. 107-180:
[2] Տե՛ս «Հայաստանի հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 184:

ՎԵՐՋԱԲԱՆ

1918 թ. մայիսի վերջին՝ ավելի քան 600-ամյա ընդմիջումից հետո, վերականգնվեց հայկական անկախ պետականությունը: Հայաստանի առաջին Հանրապետությունը ծնունդ առավ ներքին և արտաքին չափազանց ծանր ու հակասություններով լի պայմաններում: Նորանկախ պետության կառավարությունը ձգտում էր մտնել միջազգային ասպարեզ և դիվանագիտական հարաբերություններ հաստատել ինչպես հարևան, այնպես էլ այլ պետությունների հետ: Սակայն այդ խնդիրը իրագործելու համար անհրաժեշտ էր լուրջ դժվարություններ հաղթահարել:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը իր արտաքին քաղաքական գործունեության հենց սկզբից քայլեր է ձեռնարկում հարաբերություններ հաստատելու Խորհրդային Ռուսաստանի և Ռուսական նախկին կայսրության տարածքում ծնունդ առած տարբեր քաղաքական կողմնորոշում ունեցող ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ՝ անկախ այդ երկում ընթացող քաղաքացիական արյունալի պատերազմի: Հայաստանի Հանրապետության համար էական չէր Ռուսաստանի քաղաքական կարգավիճակը՝ խորհրդային, կամավորական և կոլչակյան, կարևորն այն էր, որ նա ճանաչեր և հարգեր Հայաստանի անկախությունը:

1918 թ. հունիս–1920 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ ընթանում էին վիթխարի դժվարությունների հաղթահարման ճանապարհով, որոնք պայմանավորված էին ինչպես ժամանակաշրջանի բարդությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանում ընթացող քաղաքական լուրջ գործընթացներով: Այդ հարաբերությունների հիմքում ընկած էին ոչ միայն երկու ժողովուրդների դարավոր բարեկամության անվանդույթները, այլև քաղաքական և տնտեսական մի շարք փոխադարձ շահեր:

Արտաքին աշխարհից ամբողջապես մեկուսացված, ներքին ու արտաքին քաղաքական լարված ու աննպաստ վիճակում հայտնված նորանկախ Հայաստանի Հանրապետությունը երկիրը օրհասական դրությունից դուրս բերելու և հարևանների ճնշումը թուլացնելու ելքը տեսնում էր Ռուսաստանի հետ կապերի ամրապնդման ու հարաբերությունների հաստատման մեջ անկախ վերջինիս տարածքում ծնունդ առած խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների քաղաքական ուղղվածության ու տարբեր վարչաձևերի:

Հերքվում է խորհրդային պատմագրության մեջ իշխող այն սխալ տեսակետը, թե իբր Հայաստանի առաջին Հանրապետությունը գործնական քայլեր չի ձեռնարկել հարաբերություններ հաստատելու Խորհրդային Ռուսաստանի հետ և իբր մասնակցել է նրա դեմ մղվող պայքարին:

Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժերի համար բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սակայն նրանք ձգտում էին բարեկամական, բնականոն դիվանագիտական հարաբերություններ հաստատել ոչ միայն ոչ խորհրդային պետական կազմավորումների, այլև Խորհրդային Ռուսաստանի հետ անկախ նրանց քաղաքական կառուցվածքից: Սակայն Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս – նոյեմբեր) Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության դիվանագիտական ջանքերը հաջողություն չունեցան:

Հանրապետության գոյության երկրորդ շրջանում (1918 թ. – դեկտեմբեր – 1920 թ. ապրիլ) քաղաքական նոր պայմանե-

ռում պաշտոնական Երևանը, հանուն երկրի արտաքին քաղաքական շահերի, ձեռնպահ մնաց Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելուց: Եթե Անգլիան չէր հանդուրժում անգամ իր «բարեկամ» Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության բարեկամությունը, ապա իր պոտենցիալ թշնամու՝ Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություն հաստատելու փորձերը կարող էին ծանր հետևանքներ ունենալ երկրի համար: Գոյություն ուներ նաև մեկ այլ կարևոր հանգամանք. խորհրդաթուրքական մերձեցման պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, մեղմ ասած, բարյացկամ չէր:

Հայաստանի Հանրապետությունը ձեռնարկեց նախկին Ռուսական կայսրության տարածքում ձևավորված ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատել՝ զսպելու հարևանների զավթողական ձգտումները, դրա միջոցով ապահովելու իր անվտանգությունը, ինչպես նաև դուրս գալու ելք գտնել ստեղծված ներքին ու արտաքին ծանր կացությունից: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ Հայաստանի Հանրապետությունը կարողացավ որոշակի շրջանակներում օգտագործել այդ գործոնը, նշանակալի չափով ամրապնդել իր դիրքերը՝ ստիպելով հարևաններին ու միջազգային հանրությանը հաշվի նստել իր հետ:

Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» շարունակում էին Հայաստանի Հանրապետությունը դիտել իբրև ռուսական նահանգ և գործադրում էին բոլոր ջանքերը՝ իրականացնելու «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը՝ վերականգնել նախկին ռուսական կայսրությունը 1914 թ. սահմաններով:

Ռուսաստանը թեև ցնցվում էր քաղաքական վայրիվերումներից, բայց չէր հրաժարվում Անդրկովկասից: Դա բխում էր ռուսական պետության արտաքին քաղաքականության տրամաբանությունից՝ անկախ «կարմիներ – սպիտակներ» հակամարտությունից: Սակայն Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունն անդրդվելի էին և համառորեն ամեն ջանք գործադրում էին պահպանելու ձեռք բերած անկախությունը և անվտանգությունը:

Անշուշտ, դա ձեռք բերվեց վիթխարի ջանքեր գործադրելու, բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելու, շրջահայաց ու ճկուն արտաքին քաղաքականության իրականացնելու շնորհիվ: Հակառակ ռուսական ոչ խորհրդային պետական կազմավորումների համառ պահանջի՝ չձգտել անկախության՝ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն պահպանեց իր անկախությունը, այլև այն ամրապնդեց՝ ընդունելով «Միացյալ և անկախ Հայաստանի» մասին հռչակագիրը:

Իրականացնելով զգույշ ու հավասարակշռված արտաքին քաղաքականություն՝ Հայաստանի Հանրապետությունը դաշինքի մեջ չմտավ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետ և չնայած նրա հետ ունեցած երկամյա բարեկամական հարաբերություններին՝ սահմանափակվեց ռազմատեխնիկական ու առևտրատնտեսական կապերի շրջանակներով՝ նպատակ ունենալով առաջին հերթին ապահովել ծանր վիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, առաջին անհրաժեշտության ապրանքների ներկրումը, ինչպես նաև հայ ռազմագերիներին ու գաղթականներին հայրենիք տեղափոխելը:

Բացահայտելով Հայաստանի Հանրապետության հարևանների՝ իր դեմ լարած որոգայթներն ու դավերը՝ Հայաստանի Հանրապետությունը, հանուն երկրի անվտանգության, հրաժարվեց միանալ Վրաստանի և Ադրբեջանի հակառուսական

ռազմական դաշինքներին ու քաղաքական այլ խաղերին, որոնք ուղղված էին ոչ միայն Կամավորական բանակի և ընդհանրապես Ռուսաստանի, այլև, փաստորեն, Հայաստանի Հանրապետության դեմ: Ստեղծված պայմաններում միանգամայն արդարացված էր արդեն քննություն բռնած չեզոքության քաղաքականությունը:

Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո Անդրկովկասում լրջորեն բախվեցին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի՝ այսպես կոչված նախկին դաշնակիցների շահերը: Մեծ Բրիտանիան ձգտում էր տարածաշրջանից դուրս մղել Ռուսաստանի հարավի ուժերը և ամրապնդել իր դիրքերը: Այդ պահին Ռուսաստանի հարավի հետ լավ հարաբերությունների մեջ էր Հայաստանի Հանրապետությունը: Պատահական չէր, որ Մեծ Բրիտանիան չէր հանդուրժում Հայաստանի Հանրապետության բարեկամական կապերը Ռուսաստանի հետ և նրան համարում էր անուղղելի ռուսասեր, անվստահելի մի տարր Անդրկովկասում: Անգլիական զինվորական հրամանատարությունը օգտագործում էր պայքարի բոլոր ձևերն ու միջոցները՝ չեզոքացնելու հայերի ռուսամետությունը, խափանելու Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Խորապես ըմբռնելով Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի շահերը, որը ձգտում էր թույլ չտալ Ռուսաստանին վերահաստատվելու Անդրկովկասում, Հայաստանի Հանրապետությունը տեղի չտվեց Կամավորական բանակի հետ հարաբերությունները խզելու նրա պահանջին, դրանք պահպանեց դիվանագիտորեն առերևույթ սառեցրած, մասամբ գաղտնի բրիտանական զորքերի Անդրկովկասում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում:

Ղեկավարվելով ակտիվ չեզոքության քաղաքականությամբ՝ Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց Խորհրդային Ռուսաստանի դեմ միասնական ճակատ կազմելու նպատակով Համաձայնության պետությունների ու հակաբոլշևիկյան ուժերի հրավիրած խորհրդաժողովներին մասնակցելուց:

Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակության» հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները միշտ չէ, որ վերընթաց ունեցան: Ելնելով քաղաքական որոշակի պայմաններից՝ դրանք անհրաժեշտության դեպքում սառեցվում էին և կրկին վերականգնվում՝ պայմանավորված Թուրքիայի ու Ադրբեջանի զավթողական նոր ձգտումների հետևանքով Հայաստանի միջազգային դրության վատթարացմամբ կամ կայունացմամբ:

Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ առնչությունները ծովակալ Ա. Կոլչակի պարտության պատճառով (1919 թ. դեկտեմբերի վերջին) չունեցան շոշափելի արդյունք, սակայն դրանք անհրաժեշտ էին հայ գաղութի հետ կապեր հաստատելու ու ամրապնդելու առումով:

РЕЗЮМЕ

Гегам Петросян

Отношения Республики Армения с Россией (1918-1920 гг.)

Новосозданная Республика Армения в своей внешней деятельности с самого начала предпринимала шаги для установления взаимоотношений с Советской Россией и возникшими на территории бывшей царской России несоветскими государственными образованиями, которые имели разную политическую ориентацию. В период с июня 1918 года до апреля 1920г. взаимоотношения Республики Армения с Югом России шли по пути преодоления огромных трудностей, которые были обусловлены как сложностью времени, так и происходившими в Республике Армения и России серьезными политическими процессами. В основе этих взаимоотношений лежали не только традиции вековой дружбы двух народов, но также политические и экономические взаимные интересы.

Фактически полностью изолированная от внешнего мира, находящаяся во внешней и внутренней политической напряженности, Республика Армения видела выход из своего критического положения и ослабления давления соседей в установлении взаимоотношений с Россией – независимо от политической направленности возникших на ее территории разных государственных образований. Для политических сил Армении, безусловно, была неприемлема коммунистическая идеология, но она старалась установить нормальные взаимоотношения не только с несоветскими государственными образованиями, как и с Советской Россией. Но в первые месяцы независимости Армении все дипломатические попытки установления взаимоотношений с Советской Россией не увенчались успехом.

Республика Армения предприняла попытку установления взаимоотношений с возникшими на территории России несоветскими государственными образованиями. Установление взаимоотношений с несоветскими государственными образованиями Юга России было обусловлено рядом политических, экономических и других предпосылок. Надеясь на доброжелательное отношение возникших на территории России несоветских государственных образований, правительство Армении стремилось к “de jure” признанию своей государственной независимости и обеспечению дружеских отношений между ними.

Посредством установления дружеских отношений с Югом России и при ее помощи ликвидировать или хотя бы облегчить постоянную вражду со стороны Азербайджана и Грузии.

Тем же путем нейтрализовать постоянную угрозу со стороны Турции.

Из несоветских государственных образований ввозить пшеницу, вооружение и другие жизненно важные товары и предметы.

Скопившихся на юге России несколько тысяч армянских офицеров и солдат вернувшихся из германского и австро-венгерского плена перевезти в Армению.

Решить вопрос с более чем 200000 армянскими беженцами, нашедшими приют на Юге России и, в частности, на Северном Кавказе.

Производить товарооборот между Республикой Армения и Кубанью, “Особым совещанием” Добровольческой армии.

В первый период независимости Армении, до окончания Первой мировой войны, взаимоотношения с несоветскими образованиями Юга России носили секретный характер. Республика Армения следовала договоренностям от 3-го июня 1918г. Было еще одно обстоятельство, которое заставляло правительство Армении держать в тайне свои отношения с Югом России. Занявшие антирусскую позицию соседи Армении – Грузия и Азербайджан с сомнением и неприязнью смотрели на формирование связей Ереван- Екатеринодар, препятствовали отношениям Армении с внешним миром, особенно с югом России. Находящаяся между Арменией и Добровольческой армией Грузия не разрешала провоз помощи в Армению. В изолированный период правительство Армении старалось установить взаимоотношения с руководством вооруженных сил Юга России и с "Особым совещанием" при них, но вместе с тем по отношению к ним вело очень осторожную политику, в результате чего эти взаимоотношения носили ограниченный характер. Это было обусловлено стратегией "Особого совещания", главной целью которого было объединение несоветских сил, а политическим девизом восстановление "Единой, неделимой России" в границах от 1-го августа 1914-го года. Добровольческая армия не признавала независимость новоявленных государств, в том числе и Республики Армения, и их существование рассматривало как временное явление – до окончательной победы генерала А.Деникина над советской властью.

Правительство Армении, исходя из тактики Деникина, избегало заключения какого-нибудь союза с Добровольческой армией или с "Особым совещанием" и старалось ограничить взаимоотношения военно-техническими и военноэкономическими связями, делая особый упор на

ввоз товаров первой необходимости и возвращение армян – военнопленных и беженцев.

Надеясь на решения Парижского конгресса, Республика Армения выказывала западную ориентацию и одновременно продолжала сохранять дружественные отношения с несоветскими государственными образованиями России. Предпосылки для сохранения нормальных отношений с Россией сохранились также во время второго периода существования республики.

Руководители Добровольческой армии и "Особого совещания" решительно не хотели признавать независимость Армении. Отрицая политические программы несоветских государственных образований Юга России и Сибири (адмирал А.Колчак), правительство Армении хотело просто быть признанным с их стороны как независимое государство, иметь с ними дружеские отношения и использовать их возможности для решения насущных задач.

После появления британских военных частей в Закавказье, здесь сложилась новая политическая ситуация, и отношения с Добровольческой армией перешли в новую стадию. Выявилась серьезная преграда для их развития. Сразу после Первой мировой войны в Закавказье серьезно столкнулись интересы Великобритании и несоветских государственных образований Юга России. Великобритания старалась вытеснить Россию из региона и упрочить свои позиции. Для осуществления своей стратегии Великобритания, естественно должна была опираться на поддержку и симпатии народов региона. Армяне им не внушали доверия из-за традиционной пророссийской ориентации и взаимоотношений с Добровольческой армией.

На взаимоотношения Республики Армения и Юга России негативное влияние имело также враждебное отношение Грузии и Азербайджана к России. Правительство

Грузии, исходя из антирусской позиции англичан и наличия связей Армении с Югом России, использовало все возможные дипломатические средства, чтобы еще более углубить антиармянские настроения англичан. Это проявилось во время армяно-грузинской войны, когда Великобритания поддержала Грузию.

Задержка официальной публикации Декларации о независимости Армении вызвало недоумение у армян. Подход к независимости у западных и восточных армян был существенно разным, в чем существенную роль играл русский фактор. Восточные армяне, будучи независимыми, одновременно не хотели отказываться от экономической, политической и военной поддержки последней. Западные армяне подозревали, что восточные армяне не желают отделяться от России, и поэтому сами не желали жить вместе с восточными армянами. Для ликвидации нежелательных последствий и нейтрализации опасности российского политического фактора правительство Республики Армения посчитало необходимым опубликовать Декларацию о независимости Единой Армении. Это, по понятным соображениям, вызвало некоторое изменение политических настроений Юга России, негативное отношение к независимости Армении, что, однако, не могло приостановить установление независимой армянской государственности. С марта 1919г. взаимоотношения между правительством Армении и командованием Добровольческой армии и "Особого совещания" были прерваны. Это было обусловлено политическими противоречиями в Закавказье между Великобританией и ее союзником - Добровольческой армией Юга России. Это обстоятельство имело нежелательные последствия для Республики Армения. Стремясь вытеснить Россию из Закавказья, Великобритания не была намерена

терпеть дружественные отношения Армении с государственными образованиями России и стремилась пресечь их. Следовательно, дружба между Добровольческой армией и Арменией была подозрительной и опасной для Великобритании. Для находящейся в безвыходном положении Армении требовалось внимательно следить за развитием событий и выказывать политическую гибкость. Охлаждение отношений с командованием Добровольческой армии было обусловлено еще одним обстоятельством. Добровольческая армия продолжала рассматривать Республику Армения как российскую губернию и прилагала все усилия для осуществления политической программы под девизом "Объединенная, неделимая Россия". Юг России все время бурлил от политических дрязг, но никогда не отказывался от Закавказья. Это исходило из логики внешней политики России, независимо от противостояния "красные-белые". Но закавказские республики, в том числе Армения, были непоколебимы и проявляли твердую волю в деле сохранения независимости. Об этом свидетельствует решение правительства Армении об охлаждении отношений с командованием Добровольческой армии. Но надо иметь в виду еще одно обстоятельство. Правительство Армении, исходя из прямых политических интересов, не желало полностью разрывать отношения с командованием Добровольческой армии, исходя из его важной роли в деле безопасности, торгово-экономических и иных вопросах. На этот шаг оно пошло лишь из-за диктата политической ситуации. Формировалась новая политическая ситуация в отношениях с Югом России, что заставило правительство Армении применить новую тактику. В апреле 1919 года Совет Армении решил сохранить нейтралитет и не вмешиваться в борьбу между большевиками и несоветскими

государственными образованиями Юга России. Дело в том, что победа любой политической силы России свелась бы к стремлению объединения всех бывших царских земель, что подразумевало ликвидацию закавказских республик, в том числе и Армении.

Правительство Республики Армения приняло правильное решение – не присоединяться к антиденикинскому военному грузино-азербайджанскому союзу от 16-го июня 1919 года, который был направлен не только против Добровольческой армии и России в целом, но и против Республики Армения.

В создавшихся условиях политика нейтралитета была оправданной.

Взаимоотношения с Сибирью и Дальним Востоком из-за поражения адмирала Колчака в конце декабря 1919 г. не дали ожидаемых результатов, но было важным установление связей с армянскими колониями и их активизация.

И правительство Республики Армения и Юг России, исходя из разных соображений и предпосылок, июле-августе 1919г. восстановили свои отношения. В это время довольно обострилась ситуация вокруг Армении, возникли серьезные угрозы для ее безопасности, что было обусловлено агрессивными устремлениями Турции и Азербайджана по отношению к Армении, а также тюркофильством Грузии. Попав в "железное" кольцо, Республика Армения искала поддержку извне – старалась дипломатическими усилиями восстановить отношения с командованием вооруженных сил Юга России и "Особого совещания".

Отказавшись от тактики завоевания Закавказья военным путем, командование Добровольческой армии Юга России и "Особого совещания" при ней 2-го июня 1919г. секретным циркуляром решили в первую очередь

все силы направить на путь торговокономического, финансового сотрудничества, чтобы завоевать экономические рычаги Закавказья, стратегические важные объекты и этим бросить республики Закавказья в политическую зависимость.

Только восстановились взаимоотношения между Арменией и Добровольческой армией, когда осенью 1919 г. еще более усугубилось военнополитическое положение Республики. После августа 1919г., когда английские войска покинули Закавказье, создались благоприятные условия для Кемалистской Турции – полностью завоевать Армению и приблизить свои границы к Азербайджану. Воодушевленные вмешательством Кемалистской Турции, Азербайджан и Грузия старались военным путем решить свои территориальные вопросы с Арменией. Для осуществления своих военных программ они под диктовку Турции заключили секретные военные союзы (сентябрь 1919 – грузино-азербайджанский, 29-ое октября – турецко-азербайджанский), которые были направлены как против Добровольческой армии Юга России, так и против Республики Армения. После того как 1 ноября азербайджанские войска напали на Зангезур, 9-го ноября последовал известный приказ А.Деникина, который уменьшил угрозу для Армении.

В дипломатическом плане приказ А.Деникина возымел определенные последствия – снова в обиход вошел миф о якобы существующем военном союзе между Добровольческой армией и Арменией. Это смешало планы Азербайджана, Грузии и Турции по отношению к Армении, ослабило напряженность вокруг нее. Тщетными были усилия по созданию военно-политического союза против Добровольческой армии и вовлечения в него Армении. Идея так называемой конфедерации сорвалась, хотя для

ее осуществления большие усилия применили Грузия, Азербайджан и государства Согласия, но им не удалось толкнуть Армению на антирусские позиции.

Успехи Советской армии в конце 1919г. изменили политическую ситуацию в Закавказье, куда решительно и уверенно входила Россия. Это обстоятельство обеспокоило правительственные круги стран Согласия. Они боялись, что Закавказье подвержено угрозе нападения большевиков, что могло открыть широкую дорогу большевизму в Персию и страны Передовой Азии. Для нейтрализации большевистского движения Верховный совет стран Согласия 12-го и 19-го января 1920г. de facto признали Правительства Грузии, Азербайджана и Армении. 21-го января независимость Республики Армения признал также А.Деникин.

В этой сложной политической ситуации, до окончательного поражения А.Деникина, армянская дипломатия продолжала сохранять нейтралитет и по отношению к Добровольческой армии, и по отношению к Советской России, не вмешиваясь в их борьбу. Во всяком случае, исходя из интересов Республики, правительство Армении продолжало сохранять дружественные отношения с Добровольческой армией Юга России до ее окончательного поражения, тем самым пользуясь политическими, военными и экономическими возможностями Юга России.

Тщетными были также усилия Верховного Совета стран Согласия и командования военными силами Юга России путем признания Закавказских республик объединить их для пресечения большевистского движения. Победа Советской армии и ее вступление в Кавказ создали новую политическую ситуацию для республик Закавказья.

ABSTRACT

Gegham Petrossyan

"Relationship between the Republic of Armenia and Non-Soviet State Formations of Russia (1918-1920)"

From the very beginning of its creation, the newly-formed Republic of Armenia engaged in foreign policy action to establish a relationship with Soviet Russia and various non-Soviet state formations that had emerged in the territory of the former Russian Empire.

During the lifetime of the first Republic of Armenia (from June 1918 to April 1920), onerous difficulties had to be overcome in the relationship with the South of Russia due to the difficulties of the time and the serious political processes underway in both the Republic of Armenia and Russia. This relationship was based on the centuries' tradition of friendship between the two peoples, as well as a number of common political and economic interests.

The newly-formed Republic of Armenia, in virtually complete isolation from the external world, affected by domestic and external political tension, and a broadly unfavorable situation, considered the establishment of a relationship with Russia a means of saving the country from the crisis and mitigating pressure from neighbors, without taking into account the political orientation and administrative practices of various state formations that had emerged in the territory of Russia. For the political forces in the Republic of Armenia, the Bolshevik ideology was definitely unacceptable;

however, the Republic of Armenia was trying to establish a friendly normal relationship with not only non-Soviet state formations, but also Soviet Russia, regardless of their political structure. Nevertheless, the diplomatic efforts of the Republic of Armenia to establish a relationship with Soviet Russia failed during the first months of Armenia's independence.

The Republic of Armenia undertook to establish a relationship with the non-Soviet state formations that had emerged in the territory of the former Russian Empire. The establishment of a relationship with such formations in the South of Russia was motivated by a number of political, economic, and other reasons.

With the anticipation of a friendly attitude on the part of non-Soviet state formations that had emerged in the territory of the former Russian Empire, the Armenian Government was trying to get such formations to recognize the de-jure independence of the Armenian state and, by doing so, to ensure a friendly relationship between the two countries.

In this way, the Armenian Government was also expecting to solicit direct or indirect assistance from the South of Russia in order to:

- eliminate or at least minimize the permanent obstacles and hostility posed by Azerbaijan and Georgia;
- Neutralize the permanent threat to the Republic of Armenia from the side of Turkey;
- Import grains, arms, ammunition, and other essential supplies and commodities from the non-Soviet state formations in the South of Russia;
- Transport to Armenia the several thousand Armenian officers and soldiers of the former Tsar army, that had been accumulating in the South of Russia upon return from German and Austro-Prussian imprisonment;
- Address the vital issues faced by over 200,000 Armenian migrants that had found shelter in different oblasts of the South of Russia, especially in the North Caucasus; and
- Barter commodities between the Republic of Armenia, the Kuban Oblast, and the "Special Conference" attached to the Volunteer Army.

The first period after Armenia's becoming independent—until the end of World War One, the relationship with the non-Soviet state formations in the South of Russia were confidential. The Republic of Armenia was still bound by the Memorandum of June 3, 1918 and the Treaty of June 4, 1918. There was yet another concern that forced The Armenian Government to maintain the confidential nature of its relationship with the South of Russia: the then anti-Russian neighbors of Armenia, i.e. Georgia and Azerbaijan, which were suspicious and irritated by the formation of a relationship between Yerevan and Yekaterinodar, were doing everything in their power to obstruct Armenia's contact with the external world, especially with the South of Russia. Georgia, which lay between Armenia and the Volunteer Army, did not allow delivering any aid to be delivered to the Republic of Armenia through Georgian territory.

During the period in question, the Republic of Armenia Government was, on the one hand, trying to establish links with the Chief Command of the armed forces in the South of Russia and the attached "Special Conference," and, on the other, was very cautious about them, which to a degree limited the depth of the relationship. This was due to the strategy adopted by the Special Conference. The main goal of the Special Conference was to unite non-Soviet forces, its political slogan being about the revival of "United Russia" with the borders it had as of August 1, 1914. The Volunteer Army did not recognize the independence of states that had spinned off from the former Russian Empire, including the Republic of

Armenia, and considered their existence a temporary phenomenon that would come to an end when General A. Denikin took final victory over the Soviet power.

The Armenian Government, in view of General Denikin's strategy, avoided entering into any alliance with the Volunteer Army and the Special Conference, and was instead trying to limit the relationship to military-technical and commercial links, with an emphasis on importing the most basic commodities needed for the security of Armenia and transporting Armenian prisoners of war and migrants back to their homeland.

With great expectations of the Paris Summit, Republic of Armenia adopted a pro-Western orientation and retained friendly terms with the non-Soviet state formations of the former Russian Empire. The need for retaining a relationship with Russia became even more apparent during the second phase of the existence of the Republic of Armenia.

The leaders of the Volunteer Army and the Special Conference were completely reluctant to recognize the independence of Armenia. By rejecting the political programs of non-Soviet state formations in the South of Russia and in Siberia (Admiral A. Kolchak), the Armenian Government simply aspired to have its independence recognized by them, to be in friendly terms with them, and to use their capacity to address many urgent issues.

The appearance of British detachments in the South Caucasus created a new political situation, and the relationship with the Volunteer Army embarked on a new stage. A new serious obstacle to the development of this relationship emerged: immediately after World War One, the interests of Great Britain and non-Soviet state formations of the South of Russia seriously clashed in the South Caucasus. Great Britain was trying to minimize the influence of the Russian South over the region and to fortify its positions. To

achieve its strategic goal, Great Britain certainly needed the support and sympathy of the peoples of the region. Armenians, however, did not seem credible to Great Britain in view of their traditional pro-Russian orientation and ties to the Volunteer Army.

The relationship between the Republic of Armenia and the Russian South was negatively affected by the hostile anti-Russian stance adopted by Georgia and Azerbaijan. The Georgian Government, abusing the anti-Russian stand of the British and the existence of ties between the Republic of Armenia and the Russian South, used all possible diplomatic means to further intensify the anti-Armenian mood of the British, which became apparent during the Armenian-Georgian War (Great Britain supported Georgia).

The delay in officially promulgating the Declaration of Independence of United Armenia had raised some skepticism among Armenians. There was a clear difference between the positions of East and West Armenians regarding the issue of independence (clearly, influenced a great deal by the Russian factor). Russian Armenians wanted to retain their independence, yet not lose the economic, political, and military patronage of Russia. West Armenians doubted that East Armenians did not want to part with Russia, and, for that reason they did not wish to live together with East Armenians. To address the undesirable consequences and the fear of the Russian political factor, the Republic of Armenia Government found it necessary to promulgate the Declaration of Independence of United Armenia.

For understandable reasons, the promulgation of the Declaration caused a shift in the political stands of the non-Soviet state formations of the Russian-South towards the Republic of Armenia, including a negative attitude to the independence process, which, however, could not stop the

establishment of independent Armenian statehood by virtue of new geopolitical events.

From March 1919, the Armenian Government's contacts with the Chief Command of the Volunteer Army and the Special Conference started to freeze. It was due to the divergent policies of Great Britain and its ally—the Volunteer Army of the Russian South, in the South Caucasus. This circumstance had negative consequences for the Republic of Armenia. In its attempts to squeeze Russia out of the South Caucasus, Great Britain would not tolerate and was fueling a failure of the friendly relationship between the Republic of Armenia and Russia's state formations. Therefore, the friendship between the Volunteer Army and the Republic of Armenia cast doubt and danger on the British position regarding many issues of domestic and foreign policy. The Armenian Government, which had found itself in a difficult, if not insurmountable situation, had to watch developments closely and display political flexibility. The freezing of ties with the Chief Command of the Volunteer Army was also due to another circumstance: the Volunteer Army continued to look at Armenia as a Russian province and exert all efforts at realizing the "United Russia" political plan and restoring the former Russian Empire with its 1914 borders. Despite political turmoil, the Russian South never gave up on the South Caucasus. It was in line with the foreign policy agenda of the Russian State, regardless of the "red-white" confrontation. However, the South Caucasus republics, including the Republic of Armenia, remained just as firmly committed to the goal of maintaining newly-acquired independence, as witnessed by the Armenian Government's initiative to freeze the relationship with the Chief Command of the Volunteer Army. There is another important circumstance: in light of explicit political interest, the Republic of Armenia did not wish to fully break all ties with the Chief

Command of the Volunteer Army, in view of its important role in a security, trade, and other matters concerning Armenia. This initiative, however, was imposed by the political situation.

A new political situation was emerging in a relationship with the Russian South, which required the Armenian Government to adopt a new behavior. In April 1919, the Council of Armenia, considering the political situation, decided to remain neutral, i.e. to not interfere with the struggle between the Bolsheviks and the non-Soviet state formations of the Russian South. Victory of any those political forces in Russia would, in any of event, give rise to an aspiration to unite the territories of the former Russian Empire, which would mean the end of independence for all the South Caucasus republics, including the Republic of Armenia.

Republic of Armenia Government took the right decision by not joining the June 16, 1919 Georgian-Azerbaijani anti-Denikin military alliance and other political games aimed against not only the Volunteer Army and Russia, but also the Republic of Armenia. The experience tested neutrality policy was rather justified given the circumstances.

As a consequence of Admiral Kolchak's defeat in late December 1919, ties with Siberia and the Far East remained futile, though it was important to establish and intensify links with the Armenian Diaspora.

Due to various reasons and interests, both the Republic of Armenia Government and the Russian South chose to reinstate their relationship in July-August 1919. At that time, the international position of the Republic of Armenia exacerbated; serious threats hung over its security due to the new aggressive aspiration of Turkey and Azerbaijan against Armenia, as well as the pro-Turkish stance of neighboring Georgia. Once in this "iron ring," the Republic of Armenia started to seek assistance abroad, trying to concentrate

diplomatic efforts on restoring the relationship with the Chief Command of the armed forces of the Russian South and their Special Conference.

Having given up on the strategy of keeping the South Caucasus under their influence by threat of force, the Chief Command of the Volunteer Army of the Russian South and its Special Conference issued a secret order on July 2, 1919, which prioritized commercial and financial cooperation as the main tool for gaining economic leverage over the South Caucasus, including strategic facilities therein, which would create political dependency on the South Caucasus republics.

The Republic of Armenia had just revived the relationship with the Volunteer Army and the Special Conference, when the military-political situation of Armenia grew even worse in the fall. After the English soldiers left the South Caucasus in 1919, a favorable situation emerged for Kemal's Turkey to finally destroy Armenia and bring its borders closer to Azerbaijan. Azerbaijan and Georgia, inspired by the active support of Kemal's Turkey, tried to solve their territorial issues with Armenia by means of military force. To carry out their military plans, they entered into secret military alliances at the instruction of Turkey (a Georgian-Azeri alliance in September 1919, and a Turkish-Azeri one on October 29, 1919), which were aimed against the Volunteer Army of the Russian South and, even more so, against the Republic of Armenia. After the attack of the Azeri forces on Zangezour on November 1, General Denikin issued his famous order on November 9, which somewhat mitigated the threat to Armenia.

Denikin's order, as a diplomatic step, had certain consequences: it reinvigorated the myth about an alleged military alliance between the Volunteer Army and the Republic of Armenia. It also confused the plans of Azerbaijan, Georgia, and Turkey regarding the Republic of Armenia, and mitigated

the tension around it. The attempts of neighbors to create a military-political alliance against the Volunteer Army of the Russian South and to engage Armenia in such an alliance failed, as well. The idea of the so-called "confederation" failed despite the large efforts exerted by Georgia, Azerbaijan, and the Treaty states: they did not succeed to push Armenia to anti-Russian ground.

The success of the Soviet army in late 1919 changed the political situation in the South Caucasus, where Russia was making a definite and firm entry. This circumstance created serious fear among the governmental circles of the Treaty states. They were afraid of the South Caucasus being prone to Bolshevik invasion, which could lay the groundwork for further dissemination of Bolshevism to Iran and Near Asia. To entrap the Bolshevik movement, the Supreme Council of the Treaty states de facto recognized the governments of Georgia, Azerbaijan, and Armenia on January 12, 1920. On January 21, Denikin also recognized the independence of the Republic of Armenia. In such a difficult political situation, pending Denikin's final defeat, Armenian diplomacy remained neutral towards both the Volunteer Army and Soviet Russia. In any case, in view of the interests of the nation, the Armenian Government retained friendly ties with the Volunteer Army of the Russian South until its final defeat, which enabled Armenia to use the political, military, and economic potential of the Russian South.

The efforts of the Treaty states and the Chief Command of the armed forces of the Russian South at stopping the progress of the Bolshevik movements by means of recognizing the South Caucasus Republic failed. The victory of the Soviet Army and its entry into the Caucasus created a new political situation for the South Caucasus republics.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալեքսեև Միխայիլ Վասիլևիչ (1857 - 1918) - ցարական բանակի զորավար, գեներալ-ադյուտանտ: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո անցել է Ռուսաստանի հարավ: Ձբաղեցրել է զինվորական մի շարք բարձր պաշտոններ՝ ընդհուպ Գերագույն գլխավոր հրամանատար (1917 մարտ-մայիս): Կամավորական բանակի կազմակերպիչներից, 1918թ. օգոստոսից Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ:

Սիարոնյան Ավետիս Առաքելի (1866-1948) - հասարակական-քաղաքական գործիչ, գրող, ՀՅԴ կուսակցության անդամ: 1917 թ. հոկտեմբերին ընտրվել է Հայոց Ազգային խորհրդի նախագահ: Գլխավորել է Ազգային խորհրդի՝ Կոստանդնուպոլիս մեկնած պատվիրակությունը: 1919 թ. ղեկավարել է Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Փարիզի խաղաղության վեհաժողովում: 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրել է Սևրի պայմանագիրը:

Աղբալյան Նիկոլ Պողոսի (1875-1947) - հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ: ՀՅԴ կուսակցության և Կենտկոմի անդամ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Ուսանել է Մոսկվայի, Լոզանի, Սորբոնի համալսարաններում: Հայաստանի Հանրապետությունում եղել է խորհրդարանի երկու գումարումների անդամ: 1919 թ. նշանակվել է Հայաստանի Հանրապետության կրթության նախարար: Ն. Աղբալյանի ջանքերով 1919 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում բացվեց Հայաստանի Հանրապետության պետական համալսարանը: 1921 թ. փետրվարյան իրադարձություններին մասակցելու համար Ն. Աղբալյանը փետրվարի 9-ին բանտարկվել է, շուտով ազատվել բանտից և հեռացել Պարսկաստան, այնտեղից՝ Եգիպտոս, իսկ 1930 թ. մինչև մահը ապրել է Բեյրութում:

Ասրիբեկյան Ալեքսանդր - մենշևիկ, 1919 թ. մայիսի 23-ին Նախարարների խորհուրդը Ա. Ասրիբեկյանին նշանակել է Թերեքի շրջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ: 1920 թ. մայիսին ձևավորված Հայ անկուսակցականների միության վարչության փոխնախագահն էր (նախագահ՝ Գրիգոր Չալխուշյան):

Արարատով Քրիստոփոր Գերասիմի (***Արարատյան Խաչատուրի***) (1876-1937) - ռազմական գործիչ, ռուս-ճապոնական և Առաջին աշխարհամարտի մասնակից: 1918 թ. Հայկական առանձին կորպուսի հրետանային հրամանատար: 1918 թ. մասնակցել է Սարդարապատի, Էջմիածնի ու Բաշ-Ապարանի մարտերին: 1918 թ. հոկտեմբերին ղեկավարել է Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև սահմանագծի հաստատման հանձնաժողովը: 1919 թ. մարտին նրան շնորհվել է հրետանային զորքերի գեներալ-մայորի կոչում, և նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար (մինչև 1920 թ. ապրիլը): 1920 թ. հոկտեմբերին՝ հայ-թուրքական պատերազմի ժամանակ, Արարատյանը Կարսում գերվել է թուրքերի կողմից: 1921 թ. վերջին Խորհրդային կառավարության միջնորդությամբ ազատվել է գերությունից և վերադարձել Հայաստան: 1923-1925 թթ. Արարատյանը Հայկական հրածգային դիվիզիայի հրամանատարն էր: 1937 թ. ենթարկվել է բռնադատության և գնդակահարվել:

Արեշով (Արեշև) Միխայիլ Վասիլի - գեներալ-մայոր, 1917-1918 թթ. եղել է Հայկական կորպուսի 1-ին դիվիզիայի հրամանատար, 1918 թ. մարտին նշանակվել է Սարիղամիշի ջոկատի պետ: 1918 թ. հունվարին նշանակվել է Փարիզի խաղաղարար վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության զինվորական խորհրդական, 1920 թ. աշնանը՝ Ղարաքիլիսայի շրջանի զորաջոկատի պետ:

Արղության Հովսեփ, Իշխան, Խանասորի իշխան (1863-1925) - ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՅԴ կուսակցության հիմնադիրներից: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Աշխատել է Ջալալօղլիի, Թիֆլիսի դպրոցներում: Մասնակցել է 1897 թ. Խանասորի արշավանքին: Հայաստանի Հանրապետության շրջանում՝ Վիրահայոց Ազգային խորհրդի նախագահ: Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամ, 1919 թ. սեպտեմբերին՝ փոխնախագահ, այնուհետև նշանակվել է Պարսկաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ: 1922 թ. հեռացել է Փարիզ:

Բաբալյան Արտաշես Ադամի (1887) - բժիշկ, Հայաստանի Հանրապետության առաջին և երկրորդ խորհրդի (խորհրդարանների) անդամ, խնամատարության և աշխատանքի նախարար (1919-1920 թթ.):

Գյուլխանդանյան Աբրահամ Իսահակի (1875-1946) - հասարակական-քաղաքական գործիչ: ՀՅԴ կուսակցության անդամ: Ավարտել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1914 թ.՝ Յարոսլավլի Դևիդովյան բարձրագույն վարժարանի իրավաբանական բաժինը: 1916 թ.՝ Բաքվի Հայոց Ազգային խորհրդի նախագահ, իսկ 1918 թ.՝ Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդի անդամ: 1918 թ. Ա. Գյուլխանդանյանը մասնակցել է Բաքվի ինքնապաշտպանությանը: 1919 թ. հունիսին ընտրվել է Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) անդամ: Աշխատել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և արդարադատության, ապա ֆինանսների նախարար: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ա. Խատիսյանի հետ ստորագրել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայաստանի խորհրդայնացումից հետո հեռացել է Թիֆլիս, Կ. Պոլիս, ապա հաստատվել Փարիզում:

Դարբինյան Ռուբեն (Չիլինգարյան Արտաշես Ստեփանի, 1883՝ Ախալքալաք – 1968՝ Բոստոն) - հասարակական քաղաքական գործիչ: ՀՅԴ կուսակցության անդամ: 1906 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: 1917 թ. Բաքվում հրատարակել է «Գործ» ամսագիրը: 1917 թ.՝ Բաքվի Հայոց Ազգային խորհրդի քարտուղար: 1920 թ.՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար: 1921 թ. անցել է Թեհրան, ապա՝ ԱՄՆ (Բոստոն), ուր խմբագրել է «Հայրենիք» օրաթերթը և ամսագիրը:

Դենիկին Անտոն Իվանովիչ (1872 - 1947) - ցարական բանակի զորավար, գեներալ-լեյտենանտ: 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո գործուն մասնակցություն է ունեցել հակախորհրդային Կամավորական բանակի կազմակերպմանը, 1918թ. ապրիլի 13 -ից այդ բանակի հրամանատարն էր, 1918թ. սեպտեմբերի 28 -ից՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարը: 1920 թ. ապրիլին անցել է արտասահման: Ապրել է Անգլիայում, Հունգարիայում, Բելգիայում, Ֆրանսիայում: Մահացել է ԱՄՆ-ում: Հեղինակ է հինգհատորանոց հուշագրության՝ "Очерки русской смуты":

Դրագոմիրով Աբրահամ Միխայլովիչ (1868 - 1955) - ցարական բանակի զորավար, հեծելազորի գեներալ, վարել է զինվորական բարձր պաշտոններ: «Հատուկ խորհրդակցության» առաջին նախագահ մինչև 1919 թ. օգոստոսը:

Դրո (Կանայան Դրաստամատ Մարտիրոսի) (1884-1956) - հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ:

Առաջին աշխարհամարտի տարիներին Դրոն գլխավորել է հայ կամավորական 2-րդ ջոկատը, 1917 թ. դեկտեմբերին նշանակվել է Հայկական Ազգային կորպուսի կոմիսար: 1918

թ. մայիսին գնդապետ Դրոն ղեկավարել է Բաշ-Ապարանի հեռոսամարտը: 1920 թ. նոյեմբերին նա նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի խորհրդայնացումից հետո որպես անցման շրջանի զինված ուժերի հրամանատար ղեկավարել է իշխանությունը մինչև Հեղկոմի Երևան ժամանելը: 1923 թ. հեռացել է արտասահման:

Զավրիև (Զավարյան) Հակոբ (1866՝ Թիֆլիս – 1920՝ Մոսկվա) - ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՅԴ կուսակցության անդամ: 1892 թ. ավարտել է Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան: 1902 թ. աշխատել է Բաքվում Բալախանիի շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ: Առաջին աշխարհամարտի տարիներին մասնակցել է հայկական կամավորական շարժմանը, կռվել է Անդրանիկի ջոկատում: 1917 թ. եղել է ռուսական զորքերի կողմից գրավված տարածքների (Վան, Խնուս, Էրզրում, Տրապիզոն) կոմիսար Ավերյանովի տեղակալը: Մոսկվայում էր 1918 թ. մայիսի 27-ին: Ձերբակալվել է օգոստոսին:

Էնֆիաճյան Արտաշես (-1924) - հասարակական-քաղաքական գործիչ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար՝ 1918-1919 թթ.: Հ. Քաջազնունու պատվիրակության կազմում 1919 թ. մեկնել է ԱՄՆ, ապա հաստատվել է Բելգիայում, դարձել է ծխախոտի գործարանատեր:

Թորոսյան Սահակ Դավթի (1885) - 1917 թվականից Երևանի քաղաքագլուխ, Հայաստանի Հանրապետության առաջին և երկրորդ խորհուրդների (խորհրդարանի) անդամ, 1919 թ. փետրվար-հունիսին հանրային խնամատարության նախարար:

Իոֆֆե Ադոլֆ Աբրամովիչ (1883 - 1927 թթ.) - խորհրդային պետական, կուսակցական գործիչ, Բրեստի բանակցություններում խորհրդային պատվիրակության անդամ, Գերմանիայում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ:

Լուկոմսկի Ալեքսանդր Սերգեևիչ (1868 - 1939) - ցարական բանակի զորավար, գեներալ-լեյտենանտ (1914թ.), վարել է զինվորական բարձր պաշտոններ: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո փախել է մայրաքաղաքից. գործուն մասնակցություն է ունեցել Կամավորական բանակի կազմավորմանը, եղել է «Հատուկ խորհրդակցության» նախագահի տեղակալ (1918թ. օգոստոս - հոկտեմբեր), Ռազմական վարչության պետ (1918թ. հոկտեմբեր - 1919թ. մարտ), մինչև Ռուսաստանից գնալը՝ «Հատուկ խորհրդակցության» կառավարության նախագահ (1918թ. սեպտեմբեր - 1920թ. մարտ):

Խատիսյան Ալեքսանդր Հովհաննեսի (1874 -1945) - քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ, բժիշկ: 1910-1917 թթ.՝ Թիֆլիսի քաղաքագլուխ, 1914 թվականից «Կովկասի քաղաքների միության» (44 քաղաքներ) կովկասյան կոմիտեի նախագահ: 1915-1917 թթ. ընտրվել է Հայոց Ազգային բյուրոյի փոխնախագահ, 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ ՀՅԴ անդամ: 1917 թ. Խատիսյանը գլխավորել է Հայոց Ազգային բյուրոն (մինչև հոկտեմբեր), նախագահել է 1917 թ. մարտ-ապրիլ ամիսներին կայացած հայ քաղաքական կուսակցությունների խորհրդակցությունը, 1917 թ. հունիսին մասնակցել է Անդրկովկասյան գյուղացիական համագումարի աշխատանքներին, սեպտեմբեր-հոկտեմբերին՝ Հայոց Ազգային համախորհրդակցություն (Հայոց Ազգային համագումար) հրավիրելուն և Հայոց Ազգային խորհրդի ստեղծելուն: 1918 թ., Ա. Խատիսյանը Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության ֆինանսների և պարենի, ապա Խնամատարության նախարարն էր: Մասնակցել է Տրապիզոնի, Բաթումի բանակցություններին: Հունիսի 3-ին Խատիսյանը ստորագրել է Բաթումի պարտավորագիրը,

իսկ հունիսի 4-ին՝ հաշտության պայմանագիրը: 1918 թ. հունիսին Խատիսյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, այնուհետև՝ ներքին գործերի նախարար (1919 թ.), իսկ փետրվարի 13-ից՝ վարչապետի և արտաքին գործերի պաշտոնակատար, իսկ օգոստոսից մինչև 1920 թ. մայիսը՝ վարչապետ և արտաքին գործերի նախարար: 1920 թ. ամռանը բյուրո-կառավարության կողմից գործուղվել է արտասահման՝ Հայաստանի Հանրապետության համար ներքին փոխառություն և «Ոսկու ֆոնդ» կազմակերպելու նպատակով: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ա. Խատիսյանը ստորագրել է Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը, որից հետո մեկնել է Փարիզ՝ այնտեղ շարունակելով գործունեությունը Հայկական Ազգային պատվիրակության կազմում՝ սկզբում որպես փոխնախագահ, հետո՝ նախագահ: Մասնակցել է Լոզանի վեհաժողովին:

Խոնդկարյան Արշամ Թևոսի (1883) - իրավաբան, էսեռական կուսակցության անդրկովկասյան գործիչ, 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) երկու գումարումների անդամ: 1921 թ. մեկնել է արտասահման:

Կարճիկյան Խաչատուր (1882-1918) - քաղաքական, պետական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: 1914-1918 թթ. Հայոց Ազգային բյուրոյի կազմում մասնակցել է հայ կամավորական շարժման կազմակերպմանը: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարություն ստեղծած Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության կոմիսարի առաջին տեղակալ Հ. Ջավրիևի խորհրդականն էր, Հայոց Ազգային խորհրդի անդամ: Անդրկովկասյան կոմիսարիատում զբաղեցրել է ֆինանսաների նախարարի պաշտոնը (1917 թ. նոյեմբեր): 1918 թ. հունիսին նշանակվել է Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության ֆինանսների նախարար, իսկ նոյեմբերին

ձևավորված կոալիցիոն կառավարությունում զբաղեցրել է հանրային խնամատարության նախարարի պաշտոնը: Խ. Կարճիկյանը սպանվել է իր աշխատասենյակում դաշնակցական ահաբեկչի կողմից 1918 թ. նոյեմբերին:

Կոլչակ Ալեքսանդր Վասիլևիչ (1874-1920) - ադմիրալ, Առաջին համաշխարհային պատերազմում Սևծովյան նավատորմի հրամանատար: Պատերազմը շարունակելու և օգնություն ստանալու նպատակով մեկնել է Անգլիա, ԱՄՆ: Այնուհետև Պեկինով վերադարձել է Մանջուրիա, Սիբիր (Օմսկ): Ուֆայի դիրեկտորիայի ռազմական նախարար (1917-1918): Իրեն հռչակել է Ռուսաստանի Գերագույն հրամանատար ու կառավարիչ (1918-1920): Իր բանակի ջախջախումից հետո իշխանությունը Արևմուտքում հանձնել է Դենիկինին, Արևելքում (Սիբիրում)՝ Սեմյոնովին: Ձերբակալվել է չեխոսլովակյան կորպուսի կողմից Իրկուտսկի մերձակայքում և հանձնվել խորհրդային իշխանություններին: Իրկուտսկի ռազմահեղափոխական դատարանը նրան դատապարտել է մահվան:

Հախվերդյան Հովհաննես Բարսեղի (Ախվերդով), (1873) - անկուսակցական, ռազմական գործիչ, գեներալ-մայոր, ռուս-ճապոնական և Առաջին համաշխարհային պատերազմների մասնակից: 1914 թ. նշանակվել է ռուսական բանակի՝ Տրապիզոնի 127-րդ հետևակային շտաբի պետ, Կովկասյան երկրորդ հեծյալ կորպուսի հրամանատար Պարսկաստանում: 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից և կովկասյան բանակի քայքայումից հետո Հախվերդյանը թողել է ծառայությունը և մեկնել թիկունք՝ զբաղեցնելով Անդրկովկասյան բանակի շտաբի հրամանատարի պաշտոնը: 1918 թ. հունիսի 15-ից մինչև 1919 թ. մարտը Հ. Հախվերդյանը Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարն էր:

Հարությունյան Մարտիրոս Հարությունի (1875) - տնտեսագետ, ՀՅԴ կուսակցության անդամ, Հայաստանի Հանրա-

պետության խորհրդի երկրորդ (խորհրդարանի) անդամ, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանում 1920 թ. փետրվարից:

Հարությունյան Սամսոն Ստեփանի (1875-1941) - իրավաբան, հասարակական գործիչ, հայ ժողովրդական կուսակցության ղեկավարներից: 1917 թ. Ս. Հարությունյանը Թիֆլիսի քաղաքային դումայի անդամ էր, 1918-1919 թթ.՝ Հայաստանի հանրապետության կոալիցիոն կառավարությունում արդարադատության նախարար:

Մամիկոնյան Ստեփան Գրիգորի (1859-1923) - իրավաբան, Կարմիր խաչի Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ, Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի և Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարան) անդամ:

Մանուկյան Արամ (Հովհաննիսյան Սարգիս), Արամ փաշա (1879-1919) - ազգային-ազատագրական շարժման նվիրյալ, քաղաքական ու պետական գործիչ: ՀՅԴ կուսակցության անդամ: 1901-1903 թթ. գործել է Բաքվում, Գանձակում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում: 1903 թ. զբաղվել է Արևմտյան Հայաստան զենք, զինամթերք և կամավորական խմբեր փոխադրելով: Կազմակերպել և ղեկավարել է 1915 թ. Վանի հերոսամարտը: Եղել է Վանի նահանգապետ: 1916-1917 թթ. աշխատել է Թիֆլիսի Հայոց Ազգային բյուրոյում: 1917 թ. որպես Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդի լիազոր-ներկայացուցիչ ժամանել է Երևան: 1918 թ. մարտին Երևանի տարբեր խավերի ներկայացուցիչների ժողովում ընտրվել է դիկտատոր: Ստեղծեց կառավարման պետական կառույց: Կառավարության դերը կատարում էր վարիչների մարմինը, որի նախագահը և զինվորական գործերի վարիչն էր: Հ. Քաջազնունու կառավարությունում զբաղեցրեց ներքին գործերի նախարարի պաշտոնը մինչև մահը:

Մելիք-Ղարագոզյան Գևորգ Պողոսի (1873-1940) - հասարակական-քաղաքական գործիչ, 1918 թ. նոյեմբերի 16-ին նշանակվեց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի օգնական, լուսավորության նախարար՝ 1918-1919 թթ., Հայ ժողովրդական կուսակցության անդամ: 1918 թ. Բաթումի հայ-թուրքական բանակցությունների կապակցությամբ Գերմանիա մեկնած Հայոց Ազգային պատվիրակության անդամ:

Մելիքյան Արշավիր Միքայելի (1879-1937) - պրոֆեսիոնալ հեղափոխական, հրապարակախոս, 1906 թ. Կոմունիստական կուսակցության անդամ: 1913 թ. նրա ջանքերով Երևանում լույս է տեսել «Խոսք» թերթը: 1918 թ. Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) անդամ: 1920 թ. մեկնել է Մոսկվա, նշանակվել ժողկոմխորհի արտասահմանյան մամուլի ռեֆերենտ: 1924-1932 թթ. դասախոսել է Թիֆլիսի 26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարանում (1932 թ.-ից՝ պրոֆեսոր):

Միլյուկով Պավել Նիկոլաևիչ (1859-1946) - նշանավոր քաղաքական գործիչ, պատմաբան, Կադետական կուսակցության նախագահ, III և IV Դումայի պատգամավոր, ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարար: 1920 թ. անցել է արտասահման՝ Փարիզ: Մահացել է Փարիզում:

Մինախորյան Վահան Սեմյոնի - էսէռական կուսակցության անդրկովկասյան գործիչ: 1918-1920 թթ. եղել է Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) անդամ: 1921 թ. մեկնել է արտասահման:

Շահումյան Ստեփան Գևորգի (1878-1918) - հասարակական-քաղաքական գործիչ, քաղաքագետ, հրապարակախոս, ՌՍԴԲԿ անդամ 1898 թ.-ից: 1886-88 թթ. սովորել է Թիֆլիսի Օր-

բելյանի գիշերօթիկ և Քաթանյանի մասնավոր դպրոցներում: 1898-1901 թթ. ընդհատումներով սովորել է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական բաժնում: 1902-1907 թթ. սովորել է Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի պետական իրավունքի բաժնում, իսկ 1911 թ. էքստեռն քննություններ է հանձնել և ավարտել Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ուսումնառությանը զուգընթաց աշխատանք է կատարել ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպություններում (Բեռլին, Մյունխեն, Ժնև), գործնական կապեր է հաստատել Կ. Կաուցկու, Ա. Բեբելի, Ֆ. Մերինգի, Ռ. Լյուքսեմբուրգի, Կ. Լիբկնեխտի և այլոց հետ: Ստ. Շահումյանը զբաղվել է ազգային հարցի տեսության խնդիրներով: Գործուն մասնակցություն է ունեցել ռուսաստանյան երեք հեղափոխություններին, հիմնադրել և խմբագրել է բոլշևիկյան տասնյակ թերթեր: Մշտապես հետապնդվել է ցարական իշխանությունների կողմից, քանիցս ձերբակալվել և աքսորվել է Կովկասի սահմաններից: 1917 թ. հոկտեմբերի 2-7-ը Թիֆլիսում Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ գումարվել է ՌՍԴ(բ)Կ Կովկասյան կազմակերպությունների առաջին համագումարը, որտեղ առաջարկվել է Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը լուծել ինքնորոշման սկզբունքով: 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ՌՖՍՖՀ ժողկոմխորհի կողմից Ստ. Շահումյանը նշանակվել է Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար: Ժողկոմխորհը 1917 թ. վերջին ընդունել է Դեկրետ «Թուրքահայաստանի մասին», որի նախապատրաստմանը մասնակցել է Ստ. Շահումյանը: 1918 թ. գարնանը, երբ Բաքվում հաստատվել է խորհրդային իշխանություն՝ Կոմունա, Ստ. Շահումյանը ընտրվել է Բաքվի ժողկոմխորհի նախագահ և արտաքին գործերի ժողկոմ: Վեցամսյա գործունեությունից հետո Բաքվի կոմունան ընկավ: Սեպտեմբերի 20-ի գիշերը Անդրկասպյան ավազուտներում անգլիացիները գնդակահարեցին Ստ. Շահումյանին և նրա 25 ընկերներին՝ Բաքվի 26 կոմիսարներին:

Շանթ Լևոն (Սեղբոսյան Լևոն) (1869-1951) - հայ ակադեմիկոս, հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: Կրթությունը ստացել է Կ. Պոլսում, ապա՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարաններում: Այնուհետև ուսանել է Ենայի, Լայպցիգի և Մյունխենի համալսարաններում՝ մասնագիտանալով մանկավարժության և հոգեբանության բնագավառում: 1919 թ. Փարիզում մասնակցել է Հայ ազգային համագումարի աշխատանքներին: Նույն թվականին ընտրվել է Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) անդամ և փոխնախագահ: 1920 թ. գլխավորել է Մոսկվայում և Երևանում կայացած հայ-ռուսական հաշտության բանակցությունների՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը: Ստորագրել է այդ բանակցությունների՝ հոկտեմբերի 28-ի եզրափակիչ որոշման արձանագրությունը: Խորհրդային իշխանության հաստատումից հետո բանտարկվել է և ազատվել 1921 թ.: Անցել է Պարսկաստան, ապա Եգիպտոս, Ֆրանսիա: 1929 թ. տեղափոխվել է Բեյրութ:

Շուլգին Վասիլի Վիտալևիչ (1878 - 1976) - հրապարակախոս, ռուսական ազգայնականության առաջնորդներից: Մասնակցել է Կամավորական բանակի կազմակերպմանը, խմբագրել «Великая Россия» թերթը: Գլխավորել է «Ազգային գործերի հանձնաժողովը» (հունվար 1919 թ.): 1937 թ. հեռացել է քաղաքական գործունեությունից: 1944 թ. Հարավսլավիայում ձերբակալվելով՝ հանձնվել ԽՍՀՄ-ին ու դատապարտվել է բանտարկության: 1956 թ. ազատվել է:

Չալխուշյան Գրիգոր Քրիստաֆորի (1861-1931) - հասարակական գործիչ, իրավաբան: Գործել է Նոր Նախիջևանում: Աշխատությունների մեծ մասը նվիրված է Հայկական հարցին: 1919-1920 թթ. եղել է Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսը Դոնի Ռոստովում: 1920 թ. մայիսից

գլխավորել է Հայ անկուսակցականների միությունը, ընտրվել է նրա վարչության նախագահ:

Պապաջանյան Միքայել Հովհաննեսի (Պապաջանով) (1868-1929) - հասարակական, քաղաքական գործիչ, Հայ ժողովրդական կուսակցության անդամ: Ավարտել է Նովոռոսիյսկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Պետերբուրգում աշխատել է փաստաբանական գրասենյակում: 1893-1899 թթ. աշխատել է Ալեքսանդրապոլում: 1897 թ. ընտրվել է Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի անդամ: Այնուհետև տեղափոխվել է Բաքու՝ մշտական բնակության: 1907 թ. ընտրվում է Բաքվի փաստաբանական գրասենյակի նախագահ: 1912 թ. հոկտեմբերի 20-ին Մ. Պապաջանյանը ընտրվել է IV պետական դումայի պատգամավոր: 1917 թ. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՕՄ) անդամ էր: Մասնակցել է Բաքումի բանակցություններին: Եղել է Փարիզի Խաղաղության վեհաժողովի՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ: Ա. Ահարոնյանի հետ ունենալով լուրջ տարաձայնություններ՝ հրաժարվել է պատվիրակության անդամությունից և համագործակցել է Ազգային պատվիրակության հետ: 1926-1928 թթ. եղել է ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչության նախագահ:

Պողոս Նուբար փաշա (1851-1930) - հասարակական-քաղաքական գործիչ, Հայկական ընդհանուր բարեգործական միության հիմնադիրն ու ղեկավարը մինչև մահը, Արևմտահայ ազգային պատվիրակության նախագահ 1913 թվականից: Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ միասին 1919 թ. պատրաստեց և Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացրեց հայկական պահաջները Անկախ և *միացյալ Հայաստանի* սահմանների՝ հայկական հարցի լուծման մասին: Պողոս Նուբար փաշայի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1919-1920 թթ. Փարիզում կայացան Հայ ազգային 1-ին և 2-րդ համագումարները, որտեղ նա վերընտրվեց արևմտահայերի Ազգային պատվիրակության նախագահ:

Ջաղեթյան Գրիգոր Ալեքսանդրի - 1919 թ. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի պաշտոնակատար, պետական վերահսկիչ՝ 1919-1920 թթ.:

Ջամալյան Արշակ Ջամալի (Իսահակյան, Արիսյան) (1882-1940) - հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: 1917 թ. հոկտեմբերին ընտրվել է Հայոց Ազգային խորհրդի անդամ, դեկտեմբերին Անդրկովկասյան կոմիսարիատի պատվիրակության կազմում ստորագրել է Երզնկայի զինադադարի պայմանագիրը: Հայաստանի անկախությունից հետո նա Վրաստանում Հայաստանի Հանրապետության առաջին դիվանագիտական ներկայացուցիչն էր (1918թ. հուլիսի 22)՝ միաժամանակ ներկայացնելով Հայաստանը Կովկասի գերմանական հրամանատարության մոտ: Որպես Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարան) անդամ տեղափոխվել է Երևան, մասնակցել է ՀՅԴ 9-րդ համագումարին, ընտրվել է Բյուրոյի անդամ: 1920 թ. մայիս-նոյեմբերին Հայաստանի Հանրապետության հաղորդակցության նախարարն էր: Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում մասնակցել է Թիֆլիսում կայացած հայ-ռուսական բանակցություններին և ստորագրել ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված համաձայնագիրը:

Ռուբեն (Ռուբեն Կարապետի Տեր-Մինասյան, Ռուբեն Փաշա) (1882-1951) - 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ընտրվել է Հայոց Ազգային (կենտրոնական) խորհուրդի անդամ: 1917-1918 թթ. գործուն աջակցություն է ցույց տվել Կովկասում ապաստանած արևմտահայ փախստականներին: 1919 թ. ՀՅԴ Բյուրոյի, 1918 թ. հունիսից Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) անդամ է: 1920

թ. զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և զինվորական նախարարի պաշտոնները, ղեկավարել է բոլշևիկյան Մայիսյան զինված ապստամբության ճնշումը:

Սահակյան Ավետիք Հովհաննեսի (1864) - ՀՅԴ կուսակցության անդամ, հասարակական-քաղաքական գործիչ: 1893 թ. ավարտել է Պետրովսկի ակադեմիան, երկար տարիներ եղել է հայոց «Գյուղատնտեսական ընկերության» նախագահ և «Գյուղատնտես» թերթի խմբագիր: Եղել է Անդրկովկասյան Սեյմի անդամ և Անդրկովկասյան կառավարության մեջ ստանձնել է Անդրկովկասի պարենավորման նախարարի պորտֆելը: Ընտրվել է Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի նախագահ: Հայաստանի Հանրապետության (խորհրդի) նախագահ՝ 1918-1919 թթ., պառլամենտի փոխնախագահ՝ 1919 թ., հանրային խնամատարության նախարար՝ 1919 թ.:

Սաղաթելյան Հովհաննես Հակոբի (1862-1936) - հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբան, ՀՅԴ կուսակցության անդամ: Ծնվել է Ապարանի շրջանի Քուչակ գյուղում: Նախնական կրթությունը գյուղում ստանալուց հետո ուսումը շարունակում է Երևանի արական գիմնազիայում: Այնուհետև գերազանց գնահատականներով ավարտում է Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի երաշխավորությամբ աշխատանքի է անցնում Էջմիածնում: 1887-1892 թթ. Հ. Սաղաթելյանը զբաղվում է մանկավարժական գործունեությամբ: Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդել է ռուսաց լեզու, գրականություն և պատմություն: Հ. Սաղաթելյանի սիրելի սաներից է եղել մեծն Կոմիտասը: Խոշոր նավթարդյունահանող Ալեքսանդր Մանթաշյանի (Մանթաշովի) հրավերով մեկնում է Բաքու՝ որպես նավթահանքերի իրավախորհրդատու: Ականատեսն է լինում Բաքվում հայկական ջարդերին: Հ. Սաղաթելյանը ընթանում է այդ վայրագություններն իրականացնողների դեմ և Ա. Մանթաշյանի խորհրդով և աջակցությամբ մեկնում է Պետերբուրգ՝ հայ ժողովրդի բողոքը Նիկոլայ Երկրորդ ցարին ներկայացնելու համար: 1907 թ. Հ. Սաղաթելյանն ընտրվում է Ռուսաստանի Պետական Դումայի անդամ: Պետական Դումայի ամբիոնը նա օգտագործում է հայության հիմնախնդիրները բարձրացնելու և նրա կենսական պահանջները բավարարելու համար: 1912 թ. նա տեղեկացվում է, որ Ապարանում սով է սկսվել և հայթայթում է մի քանի վագոն ալյուր ու այլ սննդամթերք, ուղարկում Հայաստան՝ հայրենի գյուղ Քուչակին: 1914 թ. մարտի 6-ին վերադառնում է Աշտարակ և աշխատում որպես հաշտարար դատավոր: 1919 թ. հունվարից Հ. Սաղաթելյանը Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և Կուբանի կառավարությունում Հայաստանի Հանրապետության ոչ պաշտոնական ներկայացուցիչն էր: Նույն թվականի մարտի վերջին Նախարարների խորհուրդը Հ. Սաղաթելյանին նշանակեց Կուբանի կառավարության, իսկ մայիսի 23-ին Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ: Ներկայացուցչությունը գտնվում էր Եկատերինոդարի (Կրասնոդարի) լավագույն հրապարակում՝ Եկատերինա կայսրուհու արձանի դիմաց. «Գեղեցիկ տան մը մէջ, որ իր ոճով կը յիշեցնէր արեւմտեան եւրոպական գողտրիկ վիլլաները: Շէնքի ճակատին հպարտօրէն կը ծածանէր հայկական եռագույն դրօշակը»,- գրում է Ռ. Դարբինյանը: Մեծ է Հ. Սաղաթելյանի ներդրումը հայ-ռուսական հարաբերությունների կարգավորման գործում: Ռուսաստանի հարավի հայ բնակչության, գաղթականության, ռազմագերիների կյանքի բոլոր հարցերի տնօրինությունը անցավ դիվանագիտական ներկայացուցչությանը: Հայության իրական վիճակը ու նրա կենսական խնդիրները պարզե-

լու նպատակով դիվանագիտական ներկայացուցչությունը ամրապնդեց կապը երկրամասի բոլոր քաղաքների հայոց ազգային խորհուրդների, ազգային զանազան միությունների, կազմակերպությունների հետ, նրանց համախմբեց իր շուրջը: Միաժամանակ հյուպատոսական հիմնարկներ, ազգային մարմիններ ստեղծվեցին այն հայաբնակ քաղաքներում, որտեղ զգացվում էր դրանց անհրաժեշտությունը: Հ. Սաղաթելյանի անմիջական ջանքերով Ռուսաստանի հայությունը ունեցավ իր «Հայ համայնք» հայերեն և ռուսերեն գրական, ազգային - մշակութային շաբաթաթերթը Եկատերինոդարում: 1920 թ. մարտին՝ գեներալ Ա. Դենիկինի պարտությունից հետո, նախարարների խորհուրդը Հ. Սաղաթելյանին նշանակեց Ղրիմում գեներալ Պ. Վրանգելի բանակում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ: Ղրիմի խորհրդայնացումից հետո Հ. Սաղաթելյանը մեկնում է Փարիզ, ապա հաստատվում Վիեննայում: Այստեղ նա զբաղվում է գիտական աշխատանքով և հրապարակում «Բնության աղտոտումը Անդրկովկասում, հատկապես Հայաստանում» աշխատությունը, որը մեծ ընդունելության է արժանանանում: Գրքի արձագանքները հասնում են նաև Խորհրդային Հայաստան: 1928 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղար Աղասի Խանջյանի միջնորդությամբ Հ. Սաղաթելյանը վերադառնում է հայրենիք և զբաղվում գիտական ու հրապարակախոսական աշխատանքով: Հ. Սաղաթելյանը կյանքից հեռացել է բնական մահով. թաղված է Երևանում:

Սասունի Կարո Ղազարի (1888-1977) - հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ, պատմաբան: 1906 թ. ավարտել է Մուշի Մխիթարյան վարժարանը, 1912 թ.՝ Կ. Պոլսի իրավաբանական համալսարանը: Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական կամավորական շարժման ակտիվ մասնակից: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Հայոց ազգային բյուրոյի

որոշմամբ Կ. Սասունին մեկնել է Պետրոգրադ, մասնակցել Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքացիական վերակառուցման և հայկական հարցի լուծման գործերին: Կ. Սասունին 1918 թ. հոկտեմբերից հետո եղել է Կ. Պոլսում, Իզմիրում, ԱՄՆ-ում, վարել բանակցություններ Հայկական հարցի շուրջ: 1919 թ. հունիսին վերադարձել է Երևան, ընտրվել է Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) անդամ: 1920 թ. մայիսին նշանակվել է Ալեքսանդրապոլի նահանգապետ, մասնակցել տեղում մայիսյան ապստամբության ճնշմանը: 1921 թ. Փետրվարյան իրադարձությունների ժամանակ եղել է «Հայրենիքի փրկության կոմիտեի» անդամ, զբաղեցրել է ներքին գործերի նախարարի պաշտոնը:

Վրանգել Պյոտր Նիկոլաևիչ (1878-1928) - գեներալ-լեյտենանտ, ավարտել է Լեռնային ինստիտուտը, Գլխավոր շտաբի ակադեմիան, սպայական հեծելազորի սպայական դասընթացը: Մասնակցել է ռուս-ճապոնական, Առաջին համաշխարհային պատերազմներին, վարել է մի շարք հրամանատարական պատասխանատու պաշտոններ: 1918 թ. Սպիտակ շարժման մասնակից: Ռուսաստանի հարավի զինված ուժերի միավորման կազմակերպիչ՝ գեներալ Ա. Դենիկինի գլխավոր հրամանատարությամբ (1918): Այդ պաշտոնում 1920 թ. փոխարինել է գեներալ Ա. Դենիկինին: Արտասահման է մեկնել 1920 թ. նոյեմբերին: Ապրել է Թուրքիայում, Հարավսլավիայում, Բելգիայում: Մահացել է թունավորումից:

Վրացյան Սիմոն Ղազարի (1882-1969) - քաղաքական-պետական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: 1914 թ. ընտրվել է ՀՅԴ բյուրոյի և Կամավորական շարժման կազմակերպական կոմիտեի անդամ: 1917 թ. մարտին նշանակվել է ՀՅԴ օրգան «Հորիզոնի» խմբագիր: 1917 թ. հոկտեմբերին ընտրվել է Հայոց Ազգային խորհրդի, 1918 թ.՝ Անդրկովկասյան սեյմի անդամ, մասնակցել է Բաքումի թուրք-անդրկովկասյան բանակցություններին: 1919 թ. ՀՅԴ 9-րդ համագումարում

ընտրվել է կուսակցության բյուրոյի անդամ: 1920 թ. մայիս-նոյեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատանքի և գյուղատնտեսության նախարարն էր, 1920 թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 2-ը՝ Հայաստանի վարչապետ: Եղել է «Հառաջ» թերթի խմբագիր: 1921 թ. գլխավորել է փետրվարյան հակաբոլշևիկյան ելույթները և «Հայրենիքի փրկության կոմիտեն»: Օգոստոսին մեկնել է արտասահման:

Տեր-Հակոբյան Ալեքսանդր Հակոբի (1883) - հասարակական- քաղաքական գործիչ: Ծնվել է Երևանում: Սովորել է Բաքվի գիմնազիայում: 1902-1908 թթ. սովորել և ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Մեկնել է Շվեյցարիա, ապա Կ. Պոլիս: Այնուհետև վերադարձել է Երևան և զբաղվել իրավաբանական աշխատանքով: 1913 թ. մեկնել է Պարսկաստան՝ Թավրիզ, ուր աշխատել է որպես իրավաբան: Այնուհետև երկու տարի եղել է Թավրիզի քաղաքագլուխը և մտցրել է քաղաքային ինքնավարության ինստիտուտը: 1918 թ. հոկտեմբերի 15-ին վերադարձել է Երևան և նշանակվել Խնամատարության նախարարի տեղակալ: 1918 թ. դեկտեմբերի 24-ին Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի հրամանով նշանակվում է թուրքական 9-րդ բանակի գլխավոր հրամանատար Յ. Շևքեթ փաշայի մոտ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ: 1919 թ. փետրվարի 28-ին Ա. Տեր-Հակոբյանը նշանակվում է Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության ընդհանուր (գլխավոր) քարտուղար:

Տիգրանյան Սիրական (1875-1947) - հասարակական քաղաքական գործիչ, Ռուսաստանի Պետդումայի անդամ, Անդրկովկասյան Սեյմի փոխնախագահ, ՀՅԴ կուսակցության անդամ, իրավաբան: 1918-1919 թթ. Հայաստանի արտաքին գործերի, ապա լուսավորության, այնուհետև լուսավորության և արվեստի նախարար: Երևանի համալսարանի կազմակերպման հանձնաժողովի անդամ (1919 թ.), համալսարանի

պրոֆեսոր: 1919 թ. սեպտեմբերի 16-ին ընտրվել է Հայաստանի պառլամենտի նախագահի տեղակալ:

Քաջազնունի Հովհաննես Մաքսիմի (Իգիթխանյան, Հովհաննիսյան Ռուբեն) (1868-1937) - պետական, քաղաքական գործիչ, նշանավոր ճարտարապետ, ՀՅԴ կուսակցության անդամ: 1917 թ. հոկտեմբերին ընտրվել է Հայոց Ազգային խորհրդի անդամ, 1918 թ. մայիսին Չխենկելու ղեկավարած Անդրկովկասյան կառավարությունում զբաղեցնում էր խնամատարության նախարարի պաշտոնը: Մասնակցել է 1918 թ. Տրապիզոնի և Բաթումի բանակցություններին, ստորագրել է Բաթումի պայմանագիրը: Հունիսին Հայոց Ազգային խորհրդի կողմից նշանակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ, ձևավորել է հանրապետության առաջին կառավարությունը: 1919 թ. փետրվարին Հ. Քաջազնունին Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) որոշմամբ մեկնեց Եվրոպա և ԱՄՆ՝ Հայաստանի տնտեսական օգնության գործը կազմակերպելու հանձնարարականով: 1920 թ. վերջերին ընտրվել է Հայաստանի Հանրապետության պառլամենտի նախագահի տեղակալ և ապա՝ նախագահ:

Օհանջանյան Համազասպ Հովհաննեսի (Համո Մհերյան) (1873-1947) - պետական, քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ, բժիշկ: 1918 թ. ընտրվել է Անդրկովկասյան սեյմի անդամ: 1918 թ. Հայոց Ազգային խորհրդի կողմից ուղարկվել է Բեռլին՝ թուրքական հարձակման դեմ Գերմանիայի օգնությունը ստանալու նպատակով: Նոյեմբերին մեկնել է Փարիզ և Հայկական Ազգային պատվիրակության նախագահ Պողոս-Նուբարի հետ Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացրել «Հայկական պահանջների հուշագիրը»: 1920 թ. մարտի 7-ին վերադարձել է Հայաստանի Հանրապետություն և նշանակվել արտաքին գործերի նախարար: Մայիս-նոյեմբերին գլխավորել է բյուրո-կառավարությունը՝ պահպանելով արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5
ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ 11

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ
/1918 թ. հունիս – նոյեմբեր/
1. Հովհաննես Քաջազնունու կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական դրությունը 20
2. Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու պատմական անհրաժեշտությունը 47
3. Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության փորձերը 61
4. Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու առաջին քայլերը: Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչը Երևանում 72

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ
(1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. հուլիս)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ: ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ 101

1. Արևմտյան կողմնորոշումը. Փարիզի խաղաղության վեհաժողովում հանրապետության պատվիրակության ռազմավարական հիմնական խնդիրները 101
2. Հանրապետության դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ 111
3. Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ 117
4. Վրաստանի վերաբերմունքը հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ 142
5. Հայ-վրացական պատերազմը. Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի վերաբերմունքը 151
6. Կարսի խնդիրը և Ռուսաստանի դիրքորոշումը 169
7. Միացյալ Հայաստանի անկախության հռչակագիրը. Ռուսաստանի վերաբերմունքը 199
8. Վրաց-ադրբեջանական հակառուսական ռազմական դաշինքը և Հայաստանի դիրքորոշումը 242

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻԲԻՐԻ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՀԵՏ (1919 թ. օգոստոս – 1920 թ. ապրիլ)
1. Հարաբերությունները Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ 273
2. Հարաբերությունների վերականգնումը Ռուսաստանի հարավի հետ 287
3. Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը: Ռազմական գաղտնի դաշինքները և Հայաստանը: Կոնֆեդերացիայի (համադաշնության) ստեղծման հարցում հանրապետության դիրքորոշումը 319
4. Ռուսաստանի հարավի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության փաստական ճանաչման հարցում: Կոզակային նոր կառավարության (Верховный кругъ) պատվիրակությունը Երևանում 349

ՎԵՐՋԱԲԱՆ 370
РЕЗЮМЕ 376
ABSTRACT 385
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 394

Պետրոսյան Գեղամ Հարությունի

Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918 -1920 թթ.)

Петросян Гегам Арутюнович

Отношения Республики Армения с Россией (1918 -1920 гг.)

Gegham Petrossyan

Relationship between the Republic of Armenia and Russia (1918 -1920)

Հրատ. խմբագիր՝ Լ. Վ. Ավետիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Հ. Ռ. Փիլոյանի

Ստորագրված է տպագրության 24.03.2011թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 26: Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Պուշկին 40, տարածք 76, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am